

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճեննել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


Լ Ե Ս

ԳՐԱԳՈՐ ԱՐՅՈՒՆԻ


2

891.99.092Արթ.

L.-38



ԳՐԻԳՈՐ ԱՅԵՐԻԿԻ



ՀԱՅՈՅ ԵՐԿՐՈՒԹ

ԹԻՖԼԻՍ

1903

0 MAY 2013

69.144

Дозволено цензурою. Тифлисъ,
13 Декабря, 1902 г.



3680
47

Արագածոտնից Մա. Մայտիլուսեանցի:



Մասն.

www.english-test.net

卷之三十一

1872. March 20. - The following morning I took a boat
out to the small island of S. Pedro which is situated in the
center of the harbor. I found it to be a rocky island with
some low scrubby vegetation.

11. The author is not sure if it is true or not that
a person can only change his/her behavior by applying
the principles of psychology.

12. Yes, it is possible to change one's behavior
by understanding the principles of psychology.

It is also worth pointing out the significant progress being made in the development of new technologies for the detection and identification of microorganisms.

Mr. B. was writing upon his book. Gossamer
was full of pride at having obtained Gossamer
as a pet, and was very fond of it.

W. Lightfoot.

VII. $\{x \in A \mid x \neq p \} = \{x \in A \mid x \neq q\} \cup \{x \in A \mid x = p \}$

Il s'agit de la partie de l'opérateur qui dépend de la forme de la courbe.

Бюджет аграрного сектора показал, что из-за нехватки земельных участков и высоких цен на землю производство зерновых культур в сельском хозяйстве сократилось.



ՄԵՍԻԿ

CEPES

REFERENCES AND NOTES

Դաշտ 1872 թվի յանվեր ամենց խոնակ հայոց ըստ առաջիկ պատմութեան և գործութեան ԱՊՀ առաջիկ պատմութեան և գործութեան ԱՊՀ

— St. Paul [d. k. w. h. — b. d. n. q. p. u. f. b. u. b. — b. p. n. —

17. 1. 19. 20. 21. 22. 23. 24. 25. 26. 27. 28. 29. 30. 31. 32. 33. 34. 35. 36. 37. 38. 39. 40. 41. 42. 43. 44. 45. 46. 47. 48. 49. 50. 51. 52. 53. 54. 55. 56. 57. 58. 59. 60. 61. 62. 63. 64. 65. 66. 67. 68. 69. 70. 71. 72. 73. 74. 75. 76. 77. 78. 79. 80. 81. 82. 83. 84. 85. 86. 87. 88. 89. 90. 91. 92. 93. 94. 95. 96. 97. 98. 99. 100. 101. 102. 103. 104. 105. 106. 107. 108. 109. 110. 111. 112. 113. 114. 115. 116. 117. 118. 119. 120. 121. 122. 123. 124. 125. 126. 127. 128. 129. 130. 131. 132. 133. 134. 135. 136. 137. 138. 139. 140. 141. 142. 143. 144. 145. 146. 147. 148. 149. 150. 151. 152. 153. 154. 155. 156. 157. 158. 159. 160. 161. 162. 163. 164. 165. 166. 167. 168. 169. 170. 171. 172. 173. 174. 175. 176. 177. 178. 179. 180. 181. 182. 183. 184. 185. 186. 187. 188. 189. 190. 191. 192. 193. 194. 195. 196. 197. 198. 199. 200.

Enfin, nous ne sommes pas dans le schéma que j'appelle l'U.P.C. (un peu plus précisément, je dirais U.P.C. à la française) qui donne des franchises aux étudiants.

VI. 31st December.

$$\text{VIII. } f(a, b, c, d) = ab + bc + cd - ad = \frac{1}{2} \left((a+d)(b+c) - (a+b)(d+c) \right)$$

III. $\{ \beta_{\alpha} \mid \alpha \in \omega \}$ is a β -pointwise convergent filter base.

1. *Adyala* 2. *Adyala* 3. *Adyala* 4. *Adyala* 5. *Adyala* 6. *Adyala*

— — — — —

2. 2. 200
2. 200
2. 200
2. 200
2. 200
2. 200
2. 200
2. 200

Worgerfe infchunglickeit sind diejenigen, die aus der Schule für alle, schulische und häusliche Erziehung, erzeugt werden. Diese Erziehung ist sehr wichtig, um den Kindern die gesuchten Fertigkeiten zu vermitteln. Sie kann jedoch nicht allein auf die schulische Erziehung beschränkt werden, sondern muss auch auf die häusliche Erziehung und auf die gesamte Lebenssituation des Kindes ausgerichtet sein.

၁၆၁၃ ၁၆၁၄ ၁၆၁၅ ၁၆၁၆ ၁၆၁၇ ၁၆၁၈ ၁၆၁၉ ၁၆၂၀ ၁၆၂၁ ၁၆၂၂ ၁၆၂၃ ၁၆၂၄ ၁၆၂၅ ၁၆၂၆ ၁၆၂၇ ၁၆၂၈ ၁၆၂၉ ၁၆၂၁၀

1. Գլուխացած հայոց գործիքները:
2. Երանցած կայսեր Հայոց պատմութեանը կամաց
3. Կայուն առաջ ի հայոց զարդ ու ուղարկութեանը

3. *Proposed*

11

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽԸ ԱՌԱՋԻՆ

I

Նախապատրաստութիւններ:—Խմբագրութիւն եւրօպական մտքով. ժողովներ:—Քրիդոր Արծրունու յիշողութիւններից. Յակոր Մէլիք-Յակոբեան:—Դրական երեկոներ. դիակոմաւորներ և «ձկնորսնելր»:—Բաֆֆիի յիշողութիւններից:—«Մշակի» առաջին յայտարարութիւնը:—Ի՞նչ է մշակը:—Աշխատանքի վարչանութիւն: 1—24

II

Հայոց մամուլը 1871-ին. «Մեղու», «Արարատ»:—«Մեղուի» օրհասը. նրա խոստովանութիւնը, հառաջանքները:—«Մշակը» դարագլուխ մեր մամուլի պատմութեան մէջ:—Միջավայր:—Նազարեանց և Արծրունի. մի փոքրիկ համեմատութիւն:—Ապահովված խմբագիր:—Երեմիա Արծրունու վերաբերմունքը իր որդու գործին. «Հայերէն դադէթ»:—Լաբարի նիւթական ապահովութեան հարցը:—Աշխատանքի բաժանում. թղթակցութիւններ:—Խմբագրի վետոն: 24—58



III

Առաջին համարները:—Առաջնորդող յօդուած:—«Երէկ», Այսօր և Եղուցք:—Կոյւ հայինտելիգենցիայի գէմ:—Անխնայ քննադատութիւնն. ո՞ն է մեր իդէալը:—Անընդունակութեան հերոսները:—Պէտք է մտրակելի:—Ծրշաւանք հին սերունդի գէմ:—Ո՞վ մնաց:—Ժողովուրդը:—Ցարձակողական ուղղութեան առաջին պտուղները.—զտում «Մշակի» խմբագրական կազմի մէջ:—«Մեղուի» վերակենդանութիւնը:— Առաջին պօլէմիկա:— ներսիսեան դպրոց, հոդարարձական ընտրութիւն:—Կուսակցական պայքար և յաղթութիւն:—Արտասահմանի և Ռուսաստանի ուսանողները:—«Մեղուի» յարձակումները. «կօսմօվօլիտներ»: . 58—160

IV

Ոչ միայն քանդել, այլ և շինել:—Ի՞նչ է խմբագերը:—Հետազօտութիւն և ոչ քարոզ:— ներդործական լրագիր:—Մայրենի լեզուի հարցեր:—Մի ուսերէն բաժիրը մեծ և փոփրագղերի մասին:—Արծրունու պատասխանը:—Բանակուլ ուսւ լրագիրների գէմ:—Հայի թշնամին:—ինքնապննութեան մեծ սկզբունքը:—Հայկինը:—Անհատի զարգացման օրէնքը:—Թատրօն:—Ինքնուրոյն գրականութեան պահանջ:—Պահակական և ըէալական ուսում:—«Մերտնութեան ապական պահանջ:—Պահապարձ ինքնօգնութեան գերը:—Փախադարձ ինքնօգնութեան

սկզբունքը:—Գիւղացին, վաշխառութիւն, սպառողական ընկերութիւններ, փոխատու-խնայողական դանձարաններ: — անելքին տեսութիւն» բաժինը:—Վաճառականութիւն, գործարանական կեանք, մանը արդիւնարերութիւն, պրոլէտարիատ, օտար ղբամազլուխներ, մըցութեան ուժը: 160—247

V

Հայերը և նրանց հարևան աղքերը:—Հայվրացական յարաբերութիւններ:—Գիօրգի ծերեթելիի ճառը:—«Մշակ» և «Գրօէրա»:—Արտաքին տեսութիւն:—Թիւրքահայեր. զաւառ և Կ. Պօլիսը. կըթական պակասութիւն:—Պարսկաստան. Բաֆֆիի նամակները:—Թըղթակցութիւններ Քերմանիալից, Անդրէաս Արծրունի:—Գրական բաժին:—Մեր վէպիկներն ու պատմուածքները:—Մէլիքրզաղէի առաջին փորձերը:—Եղրակացութիւններ «Մշակի» առաջին տարվայ մասին:—Հրաշք և աշխատանք: 247—282

VI

Երկրորդ և հետեւալ արբիները:—Բաժանորդագրութիւն առանց գործականների:—Մինոր ոյժ «Մշակի» մէջ—Ասիացին իր ֆելիտօններով:—Քաղաքային տնտեսութեան հարցեր. զինակցութիւն «Գրօէրայի» և «Տիփլիսցի» Բնետնիկքի հետ:—Գիւղատնտեսական լրագիր ժողովրդի համար:—Արծրու-

նին և թուրքերը. «Եքինչի» լրագիրը:—Դաւառական մամուլ:—Եկեղեցի և հոգևորականութիւն:—Վերադարձ դէպի նախնական եկեղեցին:—Միսիօնարութիւն:—Կրօն և աղդութիւն:—«Երաբատը» և «Մեղուն» «Մշակի» դէմ:—Տեսական հարց ներսիսեան դարոցւմ:—Անդրէաս Արծրունու ընտրութիւնը:—Կղերական կամայականութիւններ:—Պայքարը աերափուսում է Կ. Պոլիս:—Դասախոսութիւններ Թիֆլիսում:—Սուաջին գրական դաս:—Արծրունի և երիցեան:—«Կավկազъ»:—Արծրունու առաջին գասախօսութիւնը:—Կտակներ:—Ծխարհական արեդայութիւն:—Նոր աշխատակիցներ:—«Դադինք, միշտ դադթենք: 282—388

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
Ն Ը Ն Ա Ի Ո Բ Ը Բ Ա Ն

I

Հասարակական շարժում Ռուսաստանում:—Սլաւնական երկիրներ և ազատարար հոսանք:—Նոր շրջան մեր կեանքի մէջ:—Բալկանեան դէպքերը:—Արծրունին թիւրքահայերի դրութեան մասին:—Սմենքը յարձակվում են Արծրունու վրա:—Պատմական տեսութիւն. դաւառների ձգտումը դէպի Ռուսաստան:—Պատրիարքարանի եւ ազգային ժողովի գոր-

ծերը:—Արծրունու նշանարանը:—Ցոյս միտյն մուսաստանի վրա:—«Մեղուն» հակառակութիւնը:—«Փորձ» հանդէսի դատողութիւնները:—Ի՞նչ է կղերականութիւնը:—Կ. Պոլսի մամուլը Արծրունու դէմ:—Դադիթականութեան հարց. «Մենք էլ հրէաներ ենք:—Ներսէս պատրիարքի շրջարերականը, Արծրունու առաջին յարձակումը ներսէսի դէմ:—Կ. Պոլսում առքիված առասպել Կովկասի մասին:—«Մասիփ» յօդուածը:—Այժմ կամ երթքա:—Յօդուածը Թիֆլիսի հայերի ուղերձը:—Դեսպանաժողով:—«Աղջասիրական խարերայութիւն:—Վանի հրդեհը:—Հայի հոգերանութիւն:—Վանի հրդեհը: 388—490

II

Ջարաթը երկու անգամ հրատարակելու նշանակութիւնը:—Նոր աշխատակիցներ:—Թուրքանայ զրոյներ «Մշակում»:—Ընդհանուր հարցեր. «Ամեն ինչ փողի համար», ստրուկներ ենք, հասարակական սիրու բացակայութիւն, հայ լնտանիք, կենդանի լիզու:—Արեւելիեան հարցը:—Վանի հրկիղեալների համար:—Երկրորդ յարձակում ներսէս պատրիարքի դէմ:—Ռուս-Շուլցական պատերազմ.՝ Ի՞նչ է պատերազմի խորհուրդը:—Սախացու ֆելիքտոնից:—Հայաստանի ապագան՝ կախուած Թուսաստանից:—Անգլիական խարդախ քաղաքականութիւն:—Պատերազմը երևան է հանում

հայ աղքի հանճարը:—Արծրունին և մեր աղ-
պային պակասութիւնները:—Պէտք է հայերին
ծանօթացնել օտարների հետ:—Ալաշկերտի
գաղթականութիւնը:—Բարեգործական ընկե-
րութեան միտք:—Թիվլիսի մասնաժողովը:—
Գէպքերը Կ. Պօլսում:—Ներսէսը և ութան Համի
լու մօտ:—Թիւզքական պարտութիւններ. քըլս-
տանեաններից զինուոր հաւաքելու հարցը:—Հայ-
երի դիմադրութիւնը:—Եփէնդիներ և ժողո-
վուրդ:—Ռուսափրական սաստիկ շաբժում Կ.
Պօլսի հայերի մէջ:—Ներսէսի տատանումները,
փոխվելլ:—Արծրունու մտքի յաղթանակը . . . 490—551

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ա. Ռ. Ա. Զ. Ի. Ն. Տ. Ա. Ր. Ի. Ն. Ե. Բ.

I

Նախապատրասուրիւններ:—Խմբագրութիւն եւրօպա-
կան մտնով. ժողովներ:—Դրիզոր Արծրունու յիշողու-
թիւններից. Յակոբ Մկիլի-Յակոբեան:—Գրական երե-
կոններ. դիմումաւորներ եւ «ձկնորսներ»:—Բաթիի յի-
շողուրիւններից:—«Մշակի» առաջին յայտարուրիւ-
նը:—Ի՞նչ և մշակը:—Ծխաւանի փառաբանուրիւն:

Վճռելով իրագործել իր վաղեմի միտ-
քը, հիմնել իր սեփական լրագիրը, Գրիգոր
Արծրունին նախ և առաջ շրջան ստեղծելու
մասին էր մտածում: Նա չէր ուզում և չէր
էլ կարող մենակ գործել: Պէտք էր նախ և
առաջ խմբագրութիւն, այս բառի եւրօպա-
կան նշանակութեամբ: Բայց ինչպէս կաղ-
մել խմբագրութիւն, ուր էին պատրաստի,
որոշ գոյն ունեցող գործիչներ, Արծրունին դի-
մեց իր ծանօթ երիտասարդներին. դրանցից

սլիտի առաջ գային աշխատողներ, ուրիշ ոչ
մի յոյս լինել չէր կարող: Այդ ծանօթներից
երկուսի հետ, որոնք էին Վասիլ Շահվեր-
դեան և Պօղոս Իզմայիլեան, Արծրունին
պատրաստեց իր լրագրի ծրագիրը և ներ-
կայացրեց կառավարութեան:

«Շահվերդեանի և Պօղոս Իզմայլովի հետ
ծանօթանալով—գրում է Արծրունին *)—
նրանք ինձ օգնեցին լրագրի պրոցրամը մը-
շակելու և զրելու, քանի որ ես տարիներով
արտասահմանում ապրած լինելով առ շուր-
բար չէր ոռւս լրագիրների պրոցրամների
և մասամբ յետ էի սովորել և ոռւսաց լե-
զումից, որպէս զի գրեմ լրագրի պաշտօնա-
կան պրոցրամը և պաշտօնական խնդիրքը»:

Այստեղ ճիշտ տեղն է, որ մենք դնենք
այն հարցը՝ թէ ինչը հարկադրեց Արծրու-
նին զրել այդ տողերը:

1890 թւականն էր. հայ հասարակու-
թիւնը պատրաստվում էր տօնել Արծրունու-
գրական գործունէութեան ըսան և հինգա-
մեակը: Այդ պատրաստաւթիւնների ժամա-
նակ քնած չէին Արծրունու բազմաթիւ թըշ-
նաւիները և նրանցից երկուսը, որոնք 1872
թւին Արծրունու հետ աշխատողներից էին,

լրագրութեան մէջ աշխատում էին հաւա-
տացնել թէ «Մշակի» հիմնագիրը Գրիգոր
Արծրունին չէ, այլ այն խումբը, որի հետ
էր նա և Արծրունին միայն պատահաբար է
առաջարկվել լրագրի խմբագիր: Այդքանը
բաւական չէր: Այդ պարոններից մէկը իր
յիշովութիւնների մէջ դուրս էր բերում Արծ-
րունուն իրրե մի անյայտ երիտասարդի,
որ չը գիտէր հայերէն, չէր իմանում թէ
ինչ պիտի անէ Թիֆլիսում:

Մենք այժմ հեշտ կարող ենք գնահա-
տել թէ ինչ արձեն այդ թէնամական յիշու-
զութիւնները: Հարկաւոր էլ չէ որ յիշե-
ցնենք ընթերցողին թէ Արծրունին դեռ 1865
թւականից էր մտքում զրել հայերէն լրագիր
հրատարակել: Արծրունու նախընթաց գրա-
կան գործունէութիւնը, որ երեաց «Հայկա-
կան Աշխարհ» և «Մեղուի» մէջ և որի հետ
մենք մանրամասն ծանօթացանք մեր գործի
առաջին հատորում, ամենալաւ ապացոյն է
որ Արծրունին 1871 թւականին մի բոլորու-
վին անյայտ երիտասարդ չէր, միանդամայն
սանծանօթ իր ազգի կեանքին ու լեզուին:
Ընդհակառակն, այն ժամանակվայ գրողնե-
րից ոչ մէկն էլ Արծրունու չափ յայտնի չէր
ընթերցող հասարակութեան, ոչ մէկն էլ չէր
զրել այնքան շատ ու այնքան լաւ, ինչպէս

*) «Մշակ» 1890, № 45.

Արծրունին Եւ եթէ կար մեկը, որ լաւ-
պատրաստված լինէր մի հասարակական օր-
դան զեկավարելու, դա հէնց Արծրունին էր:
Նոր չը պէտք է սովորէր նա գրելը, նոր չը



Խոյրակ Տ. Տ.

պէտք է սովորէր վերլուծել հայկական կեան-
քի երևոյթները, և բարկացնել տակասութիւն-
ների արժամաները: Ո՞վ էր որ նրա պէս հաս-

կացած ու բացատրած լինէր մեր գրակա-
նութեան ողորմելի գրութիւնը: Թշնամու-
թիւնը կարող է կոյր լինել, որքան կամե-
նում է, բայց փաստերը երբէք չեն կորչի
պատմութեան մէջ:

Զը գիտենք նրբ Արծրունին ներկայա-
ցրեց իր խնդիրքը կառավարութեան: Յայտնի
է միայն, որ 1871-ի ամառվայ վերջում նա
ստացել էր թոյլաւութիւնը և սեպտեմբերին
յայտարարեց թէ նկող տարվանից պիտի հը-
րատարակէ «Մշակ» դրականական և քաղա-
քական լրագիրը:

Թիֆլիս գալուց, տեղն ու տեղը մեր գը-
րականութեան և նրա մէջ գործողների հետ
ծանօթանալուց յետոյ, Արծրունին, ինչպէս
զիտենք, խօսեց գանդասների դէմ: Գան-
գասպողներ մենք շատ ունէինք. ընթերցողը
գրողից էր գանդասլում, գրողը ընթերցո-
ղից Եւ երկու կողմերն էլ դրանով բաւա-
կանանում էին: Արծրունին ասում էր, բա-
ւական է որքան մեղադրեցինք միմեանց:
Գործ է հարկաւոր: Միթէ չեն գանվի մե-
զանում աղնիւ, եռանդուա մարզիկ, որոնք
մի գումար կարողանան հաւաքել՝ մայրենի
դրականութեան ծառայեցնելու համար. մի-
թէ չի գտնվի մեղանում աշխատողների մի

խումբ, որ զրքեր հրատարակէր, մի օրինաւոր լրադիր հիմնէր:

Գումար հաւաքելը լոկմի առաջարկութիւն էր, մի բարի ցանկութիւն երատէս կը հաւաքիլը նա: Նատ և չատ կասկածելի, անհաւատալի բան էր դա: Եւ Արծրունին, չը մոռանալով իր այն խօսքերը թէ ինքնօգնութեան գաղափարից զուրկ ազգերի մէջ անհատները պիտի գործեն, չէ սպասում թէ երբ հայ հասարակութիւնը գումար կը հաւաքէ զրական գործերի համար և ինքը, իրքի անհատ, հիմնարկում է իր լրագիրը: Մը նում էր միւս հարցը, կը լինի աշխատողների մի խումբ:

Այդ հարցը լուծելու համար նա գեռ մինչև թոյլտութիւն ստանալը սկսում է պատրաստութիւններ տեսնել, որոնց նպաստակն էր հաւաքել ապագայ լրադիրի շուրջը աշխատողների աջքի ընկնող թիւ: Հաւաքական ոյժերով, վոխագարձ ձեռնտւութեամբ գործելու գաղափարը մեզանում նոր կերպաւրանք էր ընդունում: «Հիւսիսափայլը», «Կըռունիկը», «Մեղուն», ճիշտ է, ունէին մշտական աշխատակիցներ, բայց իսկական խըմբագրութիւն կազմելու առաջին պատիւը միայն Արծրունուն է պատկանում: Դա այն խմբագրական կաղմակերպութիւնն է, որ

հաւաքվում է, կանոնաւոր ժողովներ կազմում և քննութիւնների միջոցով տնօրինում է տպագրելի նիւթերի վիճակը:

Սկզբում, նախ քան թոյլտութիւն ստանալը, Արծրունին շաբաթը մի անգամ իր մօտ զրական երեկոներ էր կազմում: Թիֆլիսը երեկոներ շատ ունէր, մարդիկ միմնանց մօտ հաւաքվել, ի հարկէ, զիտէին. բայց այդ համախմբումները ուրիշ նպաստակ ունենալ չէին կարող բացի թուղթ խաղալուց, կերու խումբից: Արծրունու երեկոները թարմ նորութիւն էին. հաւաքիլում էին զրական-հասարակական հարցեր արծարծելու և քննելու համար, այն էլ, որ կարող էր երեսակացել, հայերէն լեզուով: «Մշակի» թոյլտութիւնը ստանալուց յետոյ այդ հաւաքումները ընդունեցին աւելի կանոնաւոր կերպարանք, աւելի որոշ կազմակերպութիւն: Նրանք գարձան խմբագրական ժողովներ:

Ո՞վքեր էին հաւաքիլում Արծրունու մօտ: —Այն բոլոր երիտասարդները, որոնք սէր ունէին գէպի հասարակական գործունէութիւնը, գէպի իրանց մայրենի, զրականութիւնը: Խարստթիւն չը կար, ուսման աստիճաններ, դիրք, պաշտօն չէին հարցնում: Կային համալսարանական կրթութիւնն ստացածներ, գերասաններ, ուսուցիչներ, ցնով-

նիկներ, աղքատ երիտասարդներ։ Ամենքը իբրև ընկերներ մտնում էին գեներալ Արծուրունու տունը, ամենքը իրաւունք ունեխա խօսերու, վիճելու, նոյն իսկ կուելու։ Ամենքը չը պիտի միշտ լինէին Գրիգոր Արծունու հետ Շատերը շտառվ պիտի հեռանացին այդ հիւրընկալ յարկի տակից և երիտասարդ տանտիրոջ կատաղի հակառակութները դառնացին։ Բայց ընտրողը, պահողն ահռացնողը՝ գործը պիտի լինէր Գործը զեռչէր սկսված, սկսելուց յետոյ էլ զեռ մի առժամանակ անորոշութիւն, տասանում էր պահպանում այդ ժողովների մէջ։ Դեռ կարծիքների, հայեացքների, ուղղութիւնների խուլ ընդհարման ժամանակ էր։

Գրական փոքր ի շատէ յայտնի անուն ունեցողներ շատ չէին։ Մատներով կարելի էր համրել այդպիսիներին։ Առաջինն էր Գարսիիկ Սունդուկեան, որ արդէն «Պէտօի» հեղինակն էր, Ստեփանոս Պալասանեան, լեզուագէտ և գրականագէտ, Պերճ Պոչեան, որ ունէր «Սօս և Վարդիթեր» ազգային վիպասանութիւնը և «Աղասի» նոյնպէս աղդային ողբերգութիւնը։ Գրական մարդկանց շարքում կարելի էր դնել և Մարտիրոս Սիմէօնեանցին, որ ուսուցիչ էր և թարգմանել էր Եղիշէն։ Այնուհետև դալիս

բոլորովին անյայտ մարդիկ՝ Պօղոս Իզմայիլշեան (վերջում Թիֆլիսի քաղաքապուխ), Վասիլ Շահվերդեան, Սենեքերիմ Արծրունի, Գէորգ Եւանդուլեան, Արդար Յովհաննիսեան, Գրիգոր Խզմիրեան, Ալէքսանդր Քիշմիշեան, հայոց բեմի վրա անուն համաձ գերատաններ Միհրդատ Ամերիկեան և Գէորգ Զմշկեան։

Ուզում ենք առանձին յիշատակել մէկին —մի պարսկաստանցի համեստ, սակաւախօս մարդուն, որ հանդարտ նստում էր մի անկիւնում և լսում։ Այդ մարդը հաշւապահ էր Թիֆլիսի մի հայ վաճառականի խանութում։ Բայց հարցնողին նա կարող էր հսկարտութեամբ ասել թէ ինքը «Հիւսիսափայլի» մարդկանցից է։ Նրա գրական անցեալը «Հիւսիսափայլում» տպված երկու յօդուածից էր կազմված, իսկ ներկան... բայց ներկան ոչ ոք չէր ճանաչում։ Կար միայն այն, որ այդ պարսկաստանցին զրուածքներ շատ ունի։ Ժողովրդի մէջ թագնված մի ոյժ։ Նրան առաջ քաշեցին, նրան ասալարէզ տուին Արծրունու գրական երեկոները և նա, Յակոբ Մէլիք-Յակոբեանը, գարձաւ Բագֆի։ Արծրունին նկարագրել է թէ ինչպէս ինքը ծանօթացաւ Մէլիք-Յակոբեանի հետ։ Այդ նընկարագրութիւնը միենայն ժամանակ լաւ

պատկերացնում է «Մշակի» նշանաւոր խրմագրական ժողովները:

1871 թւին—զրում է Արծրունին—*) և արդէն Թոյլտութիւն էի ստացել «Մշակը» հրատակակերպում էի խմբագրութիւնը, աշդգրականութեան մէջ զեռ եւս անյայտ երիտասարդութեական կողմը խմբելու ընդունակ, Թէև ներին: Շաբաթը մի անգամ լինում էին ինձ մօտ խմբագրական երեկոներ: Այդ ժամանակ այդ երեկոներին լինում էր ուրիշների թւում եւ ապ. Սիներիմ Արծրունի: Մի օր պարոնը հրաւիրում է ինձ իր տունը, որտեղ նոյնպէս գրական երեկոյ պէտք մի մարզու հետ, որին ինըն կարճ կերպով անուակրեանն էր: Դա պարսկաստանցի Մէլիք-Յասում, վիճում էին, պարսկաստանցի երիտասարդը, իոռ այն ժամանակ իմ կարծիքով 30—35 տարեկան կը լինէր, լուռ նստած էր սենեակի մի անսակցութեանը: Այդ ժամանակ նա աննշան ոռնիկով նընդհանութում:

«Ընդհանուր տպաւորութիւնը, որ առաջին անոր զգալով ուրիշների, ինտելիգենտ, համալսարաբաշվում էր մեր հասարակութեան մէջ որեւէ վի-

բողջ պատկերը, մեր շրջանում իրան հետ քաշված, լուռ պահելու կերպը՝ ցոյց էր տալիս, որ նա իրան պատահական հիւր էր համարում համալսարանականների շրջանում: այդ թուլիս, շատ թուլիս դէմքով, սեւ միրուքով, սեւ զանգուր մազերով, կապոյտ ակնոցների միջից կարմրած, հիւանդուր յոդնած աչքերով մեզ վրա խորհրդաւոր լայն նակատի տակից նայող մարդը՝ կարծես մեզ ամենքիս դիտում էր, մեզ ուսումնափրում էր, զեռ եւս իր ոյժերին ընծայելով իրանից բարձր ուսումնացածների հետ որեւէ բանակուր մտնելու: Պ. Սիներիմ Արծրունին ներկայացրեց ինձ Մէլիք-Յակոբեանին, աւելացնելով, որ մարդը բազմաթիւ անտիպ գրուածքներ ունի եւ կարող է պիտանի լինել նոր ծնվող «Մշակի» խմբագրութիւնը:

«Մէլիք-Յակոբեան սկսեց յանախել եւ իմ խրմագրական ժողովները: Ննչակէս ես նրան առաջին անգամ տեսայ, նա շարունակից երկար ժամանակ նոյն ծեւով պահել իրան եւ իմ խմբագրական ժողովներում: զիվանի մի անկիւնում լուռ նստած, նա մի զլում պապիրոսներ էր ժխում, լսում էր ուրիշների խօսակցաւութիւնն ու վիճաբանութիւնները եւ զրեթէ էր մասնակցում այդ վիճաբանութիւններին: Մի օր նա բերեց իր անտիպ գրուածքներից մէկը, որքան յիշում եմ դա վէպ էր եւ կրում էր «Նարվիլիկ» գերնագիրը: Ես բացարձակ յայտնեցի միտքս, վէպի նկարագրական տեղերը աննըման էին, բայց ամբողջ վէպի հիւառածքը ես չը հաւանեցի: ես անյարմար գտայ այդ վէպը մի լրագրի, այն էլ շաբաթը մի անգամ հրատարակվող լրագրի մէջ տպագրելու համար:

Այնուհետեւ Մէլիք-Յակոբեան սկսեց ինձ յանա-

*) «Մշակ», 1888, № 48.

Խմբագրական ժողովներից դուրս օրերին, Մեր խօսակցութիւնների ժամանակ ես աշխատում էի բացատրել նրան իմ ուղղութիւնը, իմ պրօդրամը։ Ես 26 տարեկան երիտասարդ էի, ես եւրոպական ուսում էի ստացել, բայց ես չէի ճանաչում արեւելքը։



Դ. Շահում պրայտ չառ
Տեղական շահում շառ
Դ Իւնի թիւ: 1874 թ.
1873

—Դուք աշխարհ տեսած մարդ էք, դուք ինք-
ներդ պարսկաստանցի, բուն արեւելցի էք, պտտել-

էք եւ Թիւրքաց Հայաստանում, տուեցէք մեզ տե-
ղեկութիւններ այդ երկիրների մասին, տուեցէք մեզ
հում նիւթեր, անդադար ասում էի ես նրան, Թողե-
ցէք երեւակայականը եւ հաղորդեցէք մեզ իրակա-
նը, այն ինչ որ կայ, ինչ որ ինքներդ զիտէք, ինչ
որ տիսել էք։ Նկարագրեցէք կեանքը Պարսկաստա-
նում ինչպէս որ կայ...»

Այդ մասնաւոր խօսակցութիւնների ժամանակ մշակվեցաւ «Պարսկաստանի նամակների» պրօգրա-
մը, այդտեղից էլ ծնունդ առաւ Ռաֆֆի կեղծ ա-
նունը, որով Մէլիք-Յակոբեան այնուհետեւ յայտն-
վեցաւ մեր գրական ասպարիզում։

Այն րօպէից սկսած Բաժֆիի վիճակը կապվե-
ցաւ «Մշակի» վիճակի հետ։

Ահա ինչ էին անում Գրիգոր Արծրունու
գրական երեկոները։ Սյամ տեսնենք թէ ինչ
էր զգում այդ ժողովներին նոյն այդ լուս,
թխաղէմ պարսկաստանցին Բաֆֆին էլ նը-
կարագրել է «Մշակի» խմբագրական ժողով-
ները իր «Հայ երիտասարդութիւնը» աշխա-
տութեան մէջ *) և նկարագրել է իրան յատուկ
վառ ոգեսրութեամբ։

Ես երբէք մոռանալ չեմ կարող 72 Թւականը,
երբ սկսվեցաւ հրատարակվել «Մշակ» լրագիրը, —
գրում է նա: —Ի՞նչ կեանք էք տիրում այն ժամա-
նակ Թիֆլիսում։ ինչ դրութեան մէջ էք գաւառնե-

*) «Մշակ» 1879, № 205.

թի վիճակը:—Ամեն տեղ տիրում էր մի տեսակ անշարժութիւն, մի տեսակ թմրութիւն, մի տեսակ մեռելութիւն: Յանկարծ, կարծես մի դիւթական գաւազնի հարուածքից, զարթեցաւ կեանքը: Ոչ ոք չէր հաւատում, թէ այսպէս կարող էր լինել: Հաւատում էր միայն երիտասարդների մի փոքրիկ խումբ: Ես յիշում եմ այն գեղեցիկ տարիները, այն հրաշալի գիշերները, երբ այդ խումբը հաւաքած խմբագրատան մէջ, կարգում էին, ծխում էին եւ վիճում էին: Մեզանից շատերը հագներին շապիկ չունէին, մտնում էին այնտեղ բոլորովին պատառուած կօշիկներով: այնուամենայնիւ, մենք ամենքս էլ ֆատալիստի յոյսով հաւատում էինք, թէ կը տիրապետենք մի մեծ ապագայի:

Սկզբում այս լրագրի շուրջը խմբվեցաւ համալսարանական դիպլոմա և ուր երիտասարդութիւնը: Բայց նրանք շուտով ցրուեցան. կարծես թէ, գործը խորթ թւեցաւ իրանց: Նրանք չը հաւատացին այս լրագրի ճակատագրին: Մնացին դիպլոմից զուրկ ինքնուսները,—ինքնակրթութեամբ զարգացած մանկութին,—անազողութիւնների տակ ճնշված, ամեն տեղից հալածված, բայց դարձեալ իր վեճութիւնը պահպանած մանկատին: Անա այդ ուժերը իրանց ուսերի վրայ բարձրացրին «Մշակի» դրոշակը:

...Եւ այսպէս, համալսարանականները հեռանալով «Մշակից», ասսպարէզը մնաց ինքնուսներին: Այդ լրագրի խմբագիրը խիստ ճիշտ համեմատութիւն արեց, թէ նա Խողեց զպիրներին եւ փարիսեցիներին, եւ իրան շրջապատեց հասարակ ծկնորսներով,—ժողովրդի չը փչացած զաւակներով: Բայց պէտք էր ցոյց տալ հասարակութեանը, թէ այդ դիպլոմից զուրկ ուժերով կարելի էր կազմել մի նոր

շկօլա: Գործիչների առջեւ դրած էին ահազին դըժուարութիւններ ահազին պարտականութիւնների հետ: Հողը միանգամայն խոպանացած էր: Աշխատանքի բաժանութիւն չը կար: Ուզում եմ ասել, չը կային ուրիշ օրգաններ, որոնց իւրաքանչիւրը յանձն առնելով մշակութեան մի ծիւղը, սկսէին աշխատել:... Եւ այս պատճառով «Մշակը» ստիպված էր իր թերթերը բեռնաւորել ամեն տեսակ նիւթերով: Պուրլիցիստիկան եւ բենետրիստիկան ծեռք ծեռքի տված էին ընթանում: Վկասանը նկարում էր պատկերները ժողովրդի կեանքից, ցոյց տալով նրա տգեղ այլանդակութիւնները: Տնտեսագիտը հարուածում էր անխիղմ վաշխառուի եւ հարստանարձ կապիտալիստի յարաքերութիւնները մշակ դասի հետ: Մօրավաստը խորտակում էր այն սեւ նախապաշարմունքները, որ ծանրացած էին ամբոխի հոգու վրա, եւ մատուցանում էր բարոյական նոր սննունդ: Առողջ խօսքը բղխում էր կենդանի աղբիւրից եւ տարածում էր զէպի ամեն կողմ նոր մտքեր: Կրիտիկական ոգին ժողոծում էր իր անխնայ անգթութեամբ: Նա մոնում էր նեղինակի կաբինետը, վաճառականի խանութը, արհեստուորի գործարանը, ծառայողի ատեանը, դիւլացու խրճիթը, մեծատան սալօնը, վարժապետի դպրոցը, կղերի մնարանը,—մի խօսքով, կեանքի բոլոր ծալքերում պտտվում էր նա, եւ խաւարի միջից զուրս էր բաշում, մերկացնում էր այն ամենը, ինչ որ տգեղ էր, ինչ որ անարժան էր: Այդ բոլորը գործվում էր այն շկօլայի մէջ, որ հիմնեց «Մշակը», ուր երիտասարդութիւնը ուսանում էր եւ ուսուցանում էր:

Ես երեք չիմ կարող մոռանալ այն աղմկալից ժողովները, որ կազմվում էին այդ լրագրի խմբա-

գրատան մէջ մի քանի տարի առաջ, Եթէ ես ունեցել եմ մի քանի ոսկի բռպէներ, — զրանք պատկանում են այն ժամանակին: Ժողովների մէջ ոգեւորված եւ բորբոքված վիճաքանութիւնները տեսում էին շատ անգամ մինչեւ զիշերվայ ժամի երկուրը: Փոքրիկ, բոլոր նիմուշներից զրւուրը, քայլ քարոյապէս հարուստ խումբը ծրագրում էր հսկայական պրօերտներ: Այդ զօն-բիշուութիւնը, երեւակայութեան այդ տենդային բորբոքումը, թէեւ մասմբ ծիծաղելի էր, քայլ զեղեցիկ էր, որպէս մանուկի ժպիտը, որ արտայայտութիւն է նոր՝ սկսվող կեանքի: Նոյէաների խորին արբեցութեան մէջ, ամեն մի երիտասարդ մոռանում էր իր վիճակի տաժանութիւնը, եւ մտածում էր, վիճում էր հասարակաց բարօրութեան մասին: Կէս զիշերից յետոյ նիստը վերջանում էր: Խումբը ցրիւ էր զալիս բուլվարների վրա, երբ բոլոր հիւրանոցները փակված էին լինում: Բայց զարձեալ խուլ եւ անսպատացած փողոցների մէջ շարունակվում էր ընդհատված վիճաքանութիւնը: Այն ժամին, երբ բախտաւոր թիֆլիսցին հանգստանում էր իր փառաւոր քնարանի մէջ, մեր կիսամերկ շրջմոլիկները Գօլովինսկի Պրօսպեկտի սաւերը դորզելով, բննադատում էին մի նշանաւոր հասարակական հարց: Զիւնը, անձրեւը, սառը քամին չէր քշում նրանց դէպի իրանց ողորմելի բնակարանները, այլ աւելի զովացնում էր եւ աւելի կազդուրում էր տաքացած զլուխները: Նրանք բաժանվում էին մինենցից, երբ զարկում էր առաւելան անգամը. այն ժամանակ զնում էին հանգստանալու, որ միւս օրը նոր ուժով սկսեն աշխատել:

Հարկ կայ աւելիցնելու, որ մեր մեռած ու տիսուր իրակութեան միանդամայն խորթէր այսպիսի գաղափարական ոգեսորութիւնը: Ի՞նչպէս ծնվեց այս հրաշալի երևոյթը մեղանում: Որտեղից յանկարծ դուրս եկան այդ արբեցած երիտասարդները:

Հաւատը ծնեց, դուրս բերեց այդ ամենը, անսահման հաւատը գէպի գաղափարի յաղթանակը, գէպի առաջադիմութիւնը, վերածնութիւնը: Մենք զիտէինք միայն լաց լինելու Գրիգոր Արծրունին ծաղրեց մեր լալկանութիւնը, գործ, աշխատանք պահանջեց, ինքը առաջին աշխատաւորը գարձաւ: Եւ ահա նրա եռանդի, նրա ներքին կրակի գործը մի կարճ միջոցում: Նա էր այդ ինքնամոռացութեան հասած, հսկայական ծրագիրներ կաղմող, հասարակական ցաւերով տոչորվող խմբի հոգին: Նա էր հրդեհում այդ անսահման ոգեւորութիւնը աղքատ ու անյայտ իր գործակիցների մէջ: Թիվլիսում հողը պատրաստված էր, Արծրունին ունէր աշխատողների մի խումբ: Կարելի էր և գործը սկսել: Եւ կարող էր մեռած լինել այդ գործը: Դուք տեսնում էք թէ նրան կենդանութիւն, նրաքան ոյժ ու կրակ կար հաւաքված՝ այդ գործի շուրջը նախ քան նրա ծնվելը, լոյս աշխարհ գալը:

Եւ ահա գաղափարների, ոգևորութեան այդ կրակված օջախից 1871 թւականի սեպտեմբերին դուրս է գալիս մի անշուք յայտարութիւն, տաղված հնաձև տառերով։ Դա «Մշակ» լրագրի առաջին յայտարարութիւնը էր։

Հարկաւոր է—ասված է այդտեղ— նախ եւ առաջ մեկնել ճշտութեամբ մենք ինչ ենք հասկանում «Մշակ» բառով։ Առհասարակ անվանում են այդ անունվ արհեստաւորներին, բայց այդ անունի միշտ նշանակութիւնը վերաբերում է այն ամեն անձերին, որոնք աշխատում են հասարակութեան օգտի համար, եւ ոչ մէ միայն ֆիզիկապէս (մարմնապէս) բայց եւ մտաւորապէս, որովհետեւ մտաւոր գործունէութիւնը մարդիկների արդիւնաբերութեան գործի մէջ զիսաւոր դեր է խաղում։

Մարդի տիրապետութիւնը բնութեան վերայ հիմնված է զիտութեան եւ արհեստների վերայ, որովհետեւ հանաչելով բնութիւնը, մարդս հասնում է է նորա տիրապետութեանը։ Բնական գիտութիւնների նոցա տեխնիկական (արվեստական) գործադրութեան առաջադիմութեանն է պարտական մարդկային հասարակութիւնը, որ մարդիկ մերենաների միշնորդութեամբ ենթարկել են իրանց քնութեան օրէնքներն անվամ։

Աշխատանքը մենք երեք տեսակ ենք բաժանում։
1. Գիտական հետազոտութիւն։

2. Նորանից յայտնած նշամարտութիւնների կետների մէջ գործադրութիւնը քանի մի արդիւնաբերող անձերի միշնորդութեամբ։

3. Խնքը աշխատանքի գործադրութիւնը արվեստաւորների միշնորդութեամբ։

Բացատրելով այդ երեք ճիշդերի էութիւնը, յայտարարութիւնը շարունակում էր։

Ուստի ուսումնականները, արդիւնագէտները եւ արուեստաւորները,—ամենը մշակութեամբ են այդ բարեկեցութիւնը առաջադիմութիւնը եւ բարեկեցութիւնը ծագում է կամ պայմանաւորվում է այդ զանազան գործիչների մէջ փոխադարձ յարաբերութեան արդարութեամբ են ից Առաջնորդել այդ հասարակական գործիչներին իրանց ծգտումների մէջ դէպի փոխադարձ հաւաքար արդարութեամբ իւնը եւ արդարութիւնը,—մտաւոր աշխատանքի գործն է, ուրեմն գրականութեամբ եւ ան որագրութեամբ գործն է։

Ապա բերվում են մի քանի խրատներ էղմօնդ Սբուի ասածներից, որոնց Արծրունին հաւաքել եւ տպել էր «Հայկական Աշխարհի» մէջ 1867 թւին՝ «Աշխատենք» վերնապրի տակ։

Մեզանից չեն պահանջում հրաշքներ կատարել աշխատելու ժամանակ, բայց ինչ եւ իցէ լաւութիւն թողնել, ինչ եւ իցէ գործ թողնել ապազյ սերունդներին։ Եւ այն մարդիկներին, որոնք իրանցից յետոյ ինչ եւ իցէ աշխատանք կամ լաւութիւն են թողել,

մենք անվանում ենք առաջադիմութեան մըրշակներ: Այն մարզը, որը աշխատում է առաջադիմութեան համար, անշուշտ մի բան լաւացնելու նպատակ ունի կեանքումը:

Քանի լրւաւորփում է մարդկութիւնը, այնքան պէտք է շատանան աշխատողները, կամ ինչպէս մենք նոցա անուանեցինք, առաջադիմութեան մշակները:

Քանի կշատանան մարդկութեան մէջ ուսումնականները եւ աշխատող մարդիկ, այնքան յանախ կհնարին նոր օգտաւէտ բաներ, եւ նոր գիւտի փառքը չի պատկանի մէկին, այլ շատերին:

Եւ աշխատող մարդիկների անունները մեծ թուով լինելով, մեղ անկարելի կլինի այդ բոլոր անունները պահել եւ իմանալ: Ինչ մնաս? Թող յայտնի ցինին ապահայ սերունդներին մեր անունները: Մեզ բաւական է, եթէ մեր աշխատած գործը օգուտ կրերէ: Հասարակութեանը:

Թող կորչի անունը,—բարի գործը չի կորչի... աշխատենիր:

Հին հայկական մշակ բառը իսկապէս նշանանակում է երկրագործ: Մշակել կամ վարել երկիրը, ասվում է օրինակ: Բայց ժամանակով սկսեցին յատկացնել այդ անունը առնասարակ ժողովրդի ստորին դասի աշխատողներին:

Փոխաբերական կերպով ասվում է մշակել լեզու, կամ մինչեւ անգամ մշակել միտք: Մեր «Մշակը» պիտի նմանապէս մշակի... —Ի՞նչ?

Նախ նա պիտի մշակի միտք, թէ տեսական թէ գործնական:

Երկրորդ նա պիտի մշակի լեզու:

«Մշակը» չպէտք է բաւականանայ մեքենայական կերպով լոկ լուրերը հաղորդելով:

«Մշակը» կաշխատէ մի կողմից ընթերցողի ընթերցափութիւնը զրաւել թէ մեր ժողովրդական, թէ օտար կեանքից վիպասանութիւնները առաջարկելով:

«Մշակը» կաշխատէ առողջ դատողութեան վերայ հիմնած կենսական ինդիքների քննադատութիւնները առաջարկել:

«Մշակը» պէտք է տեսաբար առաջարկի եւրօպական գիտութենից մշակված ուսման ամեն ճիւղերից առած մորքերը:

«Մշակը» կառաջարկէ: ընթերցողին գիտութեան ամեն ճիւղերից, թէ առողջապահութենից, թէ մանկավարժութենից, թէ բազմարվեստեան գիտութիւններից, թէ ազգային եւ թէ գլուղային տնտեսութենից, թէ վաճառականութենից, եւ այլն... այնպիսի գործնական մտքերը, որոնք կարողանային նպաստել ժողովրդական կեանքի պայմանների բարելաւացնելուն...

Մի խօսքով «Մշակի» ինդիքն է թէ զուարձութիւն պատճառել, թէ օգուտ բերել ընթերցողին... Գութ կիարդար թէ ոչ?

Նոր լրագրի ծրագիրը, ինչպէս տեմնում էք, անորոշութիւններ չէ պարունակում իր մէջ, ճառական ոճ չունի, համեստ աշխատաւորի պարտաւորութիւններն է վերցրել: Բոլորովին բացակայում է աղջապիրական շեշտը, առանց որի ոչ մի խմբագիր չէր կարողանում դիմել հայ: Հասարակութեան: «Զուարձութիւն պատճառել և օգուտ բերել

ժամանակագրութիւն» 9) «Յայտաբարութիւններ»:
Նախ քան նոր լրագրին դիմելը պարզենք
մի քանի հարցեր էր

Ընթերցողին»—այս խօսքերի մէջ էր նոր լրագրը խտացնում իր ամբողջ ձգտումը: Ընթերցողը այստեղից չէր կարող ևզրակացնել թէ դա լինելու է մի մարտնչող լրագիր, հիմքեր տապալող մի օրգան: Բայց այդ յայտարարութեան արժանաւորութիւնը հէնց այն է, որ մեծամեծ խոստումներ չը կան նրա մէջ: Մենք առաջապիմութեան մշակներ ենք, առում էր Արծրունու խումբը: Իւրաքանչյուր մշակ պարտաւոր է որևէ օգուտ բերել հասարակութեան: Ուրեմն աշխատենք:

«Մշակը» պիտի հրատարակվէր շաբաթը մի անգամ. բաժանորդագինն էր տարեկան 7 բուրլի: Հաստատված ծրագրը ունէր հետեւալ բաժինները. 1) «Տէրութեան կանոնագրութիւնները», 2) «Դատաստանական ժամանակագրութիւն», 3) «Ներքին տեսութիւն —ամենանշանաւոր ժամանակակից երեսյթներ մեր հայրենիքի կեանքում», 4) «Արտասահմանեան տեսութիւն», 5) «Բանասիրական և զանազան յօդուածները (ինքնուրոյն և թարգմանական) գիտութիւնների զանազան ճիւղերից», 6) «Մատենագրութիւն. հայկական, ուստական և քանի մի օապար լեզուներով հրատարակող գրքերի քննադատութիւնները», 7) «Ֆէլիէտօն», 8) «Առեսարական

II

Հայոց մամուլը 1871-ին. «Մեղու», «Արարատ»:—«Մեղուիս օրհասը. նրա խոստվանուրիւնը, հառաջանները:—«Մշակը» դարագուիս մեր մամուլի պատմութեան մէջ:—Միջավայր:—Նազարեանց եւ Արծունի. մի փոքրիկ համեմատուրիւն:—Սպահովված խմբագիր:—Երեմիա Արծունու վերաբերմունիլը եւ որդու գործին. «հայերէն գագկը».—Լրագրի նիւրական ապահովութեան՝ հարցը:—Շշատանի բաժանում. բղրակցուրիւններ:—Խմբագրի վեօն:

Գրիգոր Արծրունին իր գործունէութեան ընթացքում չատ անզամ է կրկնել որ 1872 թւականից ոռւսահայ մամուլի համար բացվեց մի նոր շրջան և «Մշակը» այդ շրջանի դարագութին է կազմում: Այս խօսքերը զայրացնում էին նրա հակառակորդներին, որոնք ուրիշ քան չունէին պատասխաննելու, բայց միայն թէ Արծրունին փառասէր է, ինքնազովութեան համար է իրան յատկացնում այզպիսի մի մեծ զեր: Տեսնենք ինչ են ասում փաստերը:

Ի՞նչպէս գիտենք, 1871 թւականի մայիս

ամսին դադարեց «Հայկական Աշխարհ» ամսագիրը: Մեր խղճուկ մամուլի համար դամիակ փոքր ի շատէ կենդանի քննադատող պարբերական օրգանի մահ էր, մի մահ, սակայն, որ սովորական էր մեղանում: Ստեփանէն չը տեսաւ ընթերցողների մի մեծ թիւ. վերջին տարում, 1871-ին, նրա ամսագիրը ներկայացնում է կատարեալ ուժասպասութեան պատկերը. նիհար ամսատեսուրակների ազգատութիւնը զարմանալի է, խմբագիրը ուշադրութիւն էլ չէ դարձնում իր գործի վրա. նրան ուրիշ միտք է կլանել, և վերջ տալով «Հայկական Աշխարհին», նա զնում է էջմիածին՝ վարդապետ ձեռնադրվելու:

Թիֆլիսում մնաց միայն «Մեղուն»: Իսկապէս դա էր ոռւսահայ մամուլի միակ ներկայացուցիչը, որովհետեւ թէն էջմիածնում 1868-ից հրատարակվում էր «Արարատ» պաշտօնական ամսագիրը, բայց նա դրական և հրապարակախոսական արժանաւորութիւններից գուրկ մի հրատարակութիւն էր և առանձին, նոյն իսկ աչքի ընկնող զեր կատարել մեր մամուլի մէջ չէր կարող: Տարօրինակ հանդամանք, «Արարատը» իր հիմնարկութեան սկզբից հանդիսացաւ մեղանում իրեւ ամենից շատ տարածված և ամենից լաւ-

սպահովված պարբերական։ Նրան ստանալը պարտադիր էր բոլոր հայ հոգմորականների համար և 70-ական թւականների սկզբում նա ուներ 2000 բաժանորդ, մի թիւ, որ մեր բոլոր խմբագիրներին կարող էր միայն հառաջանք պատճառել... Բայց բաժանորդների, թէ ակրամայ բաժանորդների այդ ահազին թիւը զեռ ապացոյց չէր թէ ամսագիրը կարդացում է, թէ էջմիածինը իր արեղաններով կարող է մի երեսյթ դառնալ մեր պարբերական մամուլի մէջ։ «Արարատը» բաւական յայտնի է ամեն մէկին և հարկ չը կայ ապացուցանկութ թէ նրա վերաբերմամբ չէր էլ կարելի կրկնել յայտնի ասացուածքը թէ «մի ծաղկով գարուն չի լինի»։ Էջմիածինը իր կրօնական-բարոյական, հնախօսական և ներքողական ժողովածուով չը պիտի զեկավարէր ընթերցող հասարակութեան միավոր։ Դա անհնարին բան էր Ռւելեմն ոչ մի կերպով մեղանչած չենք լինի մեր մամուլի պատմութեան դէմ, եթէ «Արարատ» գոյութիւնը միանգամայն աննկատելի թողնենք։

Մնում էր, այն, «Մեղուն» միայն։ Բայց ի՞նչ էր այս շաբաթաթերթի գրութիւնը։ 1863 թւականից, այսինքն այն ժամանակից, երբ նա Մանդինեան քահանայից անցաւ Պետրոս Սիմէօննեանցին, շարունակվեց միենոյն անմիտ-

թար, օրհասական դրութիւնը։ Տարիների ընթացքում «Մեղուն» չունեցաւ մի փայլուն ըլրացան, չը կարողացաւ տիրել մարդկանց մաքին, 100—150 բաժանորդից աւել չը կարողացաւ դրաւել, կիսակենդան գոյութիւն էր քարշակիա։ Մենք տեսանք «Մեղուն» խմբագրական հաշիւները առաջին տարիներում։ Ահա եկել է, անցնում է 1869 թւականը և դարձեալ նոյն յուսահատական գրութիւնն է, որ տեսնում ենք այդ տարկայ հաշւի մէջ։ Մենք կարգում ենք հետեւեալը։

Մեղուի հաշիւ... ինչ հաշիւ, ում եւ ինչու համար, միթէ ծիծաղիլու համար զրենք մեր հաշիւը։ Հաշիւը այնտեղ կլինի, որտեղ գումար է շարժում եւ ծախք է լինում, բայց ուր մարդիկ ստիպված են առանց դրամի գործ կատարելու, էլ ինչ հաշիւ կմնայ անելու։ Կարծեօք ոչինչ։ Իրաւ է միայն ծախքը կարելի է ցոյց տալ, բայց ոչ արդիւնքը, որ իւրաքանչիւր տարի մօտ 1200—1300 յայտնի է, որ իւրաքանչիւր տարի մօտ 1200—1300 րուրի է եւ կարծում ենք, որ սրանով Մեղուի այս բուրքը կերչարինք, իսկ արդիւնքը շատ հեշտ է որոշել, հարկաւոր է միայն վերոյիշեալ ծախուց գումարի առաջ դնել մի—*) եւ կանել—1200։ Ան այս է մեր մի ազգային լրազրի վիճակը այսօր։ անշուշտ նոյնն է եւ այլ հայ լրազրների հւօր։ օրադիրների վիճակը ըստ մեծի մասին։ Կ'նչ արած։

*.) Մինուս։

—կլինի մեր պատախանը, այդ մեր ճակատագիրն է։ Աստուծոյ կամքն է մեղ համար այսպէս։

Եւ հնազանդվելով այդ ճակատագրին, այդ աստուծային կամքին, Պ. Սիմէօնեանցը վաղուց մտքում դրել էր բոլորովին փակել «Մեղուն»։ Ոչինչ չէ լինում, ազգասիրութիւնը պիտի պահպանէր հայոց միակ լրագիրը, ինչ էլ լինէր վերջինս, բայց ազգասիրութիւնը չը կայ հայերի մէջ։ Եւ ահա ինչ էր յայտարարում խմբագիրը 1869 թւականի վերջում «Մեղութիւն» մի քանի համարների մէջ։

Անա մերձենում է տարուայ վերջը եւ Մեղուի համար կակտուի նոր տարեղարձ, որ մեր խմբագրութեամբ ութերորդն է կատարում։ Խնչպէս շարունակ մի քանի տարի, այնպէս եւ այս տարի մտադիր էինք դադարեցնել նորա հրատարակութիւնը, միայն քանի մի բարեկամաց եւ հասկացող բարեմիտների ցանկութեամը հիտեւելով յանձնառու եղանք շարունակելու նորա հրատարակութիւնը առաջիկայ 1870 թւականին եւս։

Մի քանի բարեկամներ, մի քանի բարեմիտներ ազգասիրական զոհ էին պահանջում խմբագրից։ և խեղճ խմբագիրը առաջ է տանում իր հոգեւվարք լրագիրը, ի՞նչպէս Երեխիր անձնական միջոցները ծախսելով։ Բայց ինչ դուրս կը դար այդպիսի գործավարութիւնից՝

1870 թւականի առաջին համարը հրատարակվեց միայն մարտի 7-ին և այդ տարին «Մեղուն» ունէր 150 բաժանորդ։ 1863 թւականից ոչ մի քայլ դէպի առաջ, ընդհակառակն աւելի ևս անկում։ Եկաւ 1871 թւականը, բայց նա էլ ցոյց տուեց խեղճ խմբագրին, որ իզուր են ազգասիրական գանդամաները, անձնազոհութիւնը։ Հասարակութիւնը սառույց էր կարել «Մեղութիւն» վերաբերմամբ։ օրհասը աւելի քան ակներե էր։ «Մեղութիւն» 1871 թւականի № 48-ը դուրս եկաւ 1872-ի յունվարի սկզբում, № 49-ը յունվարի 15-ին, իսկ № 50-ը—յունվարի վերջին։ Այդ ժամանակ արդէն կանոնաւոր կերպով հրատարակվում էր «Մշակը»։ Եւ իր թերթի № 49-ի մէջ Սիմէօնեանցը յայտարարում էր։

Յայտնի է մեր բոլոր ընթերցողներին, որ վերջին տարիները միշտ տարուան վերջին վեռած ենք եղել զադարեցնել Մեղուի հրատարակութիւնը։ Եւ սորա պատճառը եղած է աշխատանաց ծանրութիւնը... Նոյնը պատահելու էր եւ այս տարի, մանաւանդ որ Մշակի երեւելովը Հայկական գրականութեան հօրիզոնը Թափուր մնալու չէր գոնէ մի հայ հրատարակութիւնից։

Խեղճ խմբագիր։ Նրա ջանքն էր գոնէ մի հատ հայերէն հրատարակութիւն պահպանել ուր դրական հօրիզոնում, պահպանել թէկուզ

ուժապառ մի դիակ, պահպաննել մի կերպ, չունենալով ոչինչ միջոց՝ «Մշակի» երևալը արդէն մի նշան էր որ նա կարող է ազատվել իր ազգասիրական ծանր պարտականութիւնից: Բայց նրան էլի թոյլ չը տուեցին հեռանալ: «Մեր վճիռը էլի սախալվեցանք փոխելու», ասում է նա: Ստիպողը գարձեալ հասարակութիւնը չէր, այլ մի քանի անհատներ (Մարտիրոս Սիմջօնեան, Զաքար Գրիգորեան, Արշակ Նահապետեան, Գէորգ Տէր-Աղքասանդրեան): Այս անդամ սախալողները համեմատաբար աւելի մեծ թիւ էին կազմում. կային և այնպիսիները, որոնց անունները չէին յիշատակված: Եւ այս անդամ «Մեղուն» պիտի ապրէր, որովհետեւ այդպէս էր պահանջում «Մշակը»: Գրիգոր Արծրունու լրագիրը միշտ անխուսափելի անհրաժեշտութիւն է գարձրել հակառակ լրագրի դոյլութիւնը: Եւ «Մեղուն» առաջինն էր, որ սկսեց ապրել այդ պահանջի պատճառով: 1872 թւականը նա սկսեց մարտ ամսից: Դա մի նոր շրջան էր «Մեղուն» համար, մի շրջան, որի ընթացքում նա պիտի կամայ սկամայ առաջ դնար, նմանվէր «Մշակին», մրցէր նրա հետ: Այդ շրջանը մենք գեռ կը աեսնենք:

Իրողութիւնն այն է, որ 1872-ի սկզբում,

այն ժամանակ, երբ սկսվեց «Մշակի» հրատարակութիւնը, պարբերական մամուլ մեղանում համարեա չը կար. չէ կարելի մամուլի կենդանի օրդան համարել օր օրի վրա վերջին չունչին մօտեցող «Մեղուն», իսկ «Արարատի» դոյլութիւնը չէր փոփխում իրողութիւնը: Թափփին իր «Հայ երիտասարդութեան մէջ» ասում է. «Հին «Մեղուն» այն ժամանակ նմանվում էր մի մաշված և ջարդված սայլակի, որին ճռնչելով քարշ է տալիս մի ուժաթափ ձի: Սայլալարը բոլորովին յուսահատված, մոլորված, և կէս ճանապարհի վրա կանդնած, մտածում էր. «Հիմա դէպի որ կողմը քշեմ»: Եւ չը գտնելով ոչինչ պատասխան, մենակ, անօգնական, գըլուխ կորցրած սայլավարը փրկութիւն որունում էր սայլակը մի կողմ գցելու, յաւիտեան նըանից բաժանվելու, յաւիտեան լոելու մէջ: Նա արդէն այդպէս էլ արել էր, նա այլ ևս դոյլութիւն չունէր. բայց երեաց «Մշակը», կենդանութիւն բերեց ոչ միայն իր համար, այլ և այդ ջարդված սայլակի համար...

Սհա թէ ինչու 1872 թւականը, չիշա որ մի շատ նշանաւոր տարի էր մեր մամուլի համար: Ճիշտ որ այդ ժամանակից սկսվում է մեղանում մի նոր շրջան, նոր դարավլուխ: Եւ այս պատմական փաստը անուշանալի:

դարձնողը միայն այն հանդամանքը չէ, որ «Մշակի» սկզբնաւորութիւնն ժամանակ գոյութիւն չունէր հայոց մամուլ Ռ'չ. երևյթը դրանից աւելի խոչոր էր, աւելի նշանաւոր յատկութիւններ ունէր:

Դա այն էր, որ 1872 թւականից իսկական հրապարակախօսութիւնը իր անխնայ քննադատող, մերկացնող, մարտակող խօսքով հաստատվում էր հայկական իրականութեան սրտում: «Հիւսիսափայլը» պատմութիւնը մի կենդանի վկայ է թէ որքան դժուար էր այդ գործը «Հիւսիսափայլը», մեր հրապարակախօսութեան անդրանիկ, փայլուն օրինակը, ցայց առեց որ մերկացնող ուղղաւթիւնը մի ճշմարիտ բարիք է հայ ազգի համար. նա արթնացնում, յուղում էր մտքերը, զիտակցութեան, ինքնամանակաչութեան սերմեր էր սփոսում, հերոսացնում էր զրոյին, բայց միևնույն ժամանակ յարուցանում էր սաստիկ ընդդիմադրութիւն, ահեղ պատերազմ: Այդ գաղափարական մարտը մղվում էր հայութիւնից հեռու մի տեղից. բայց մեր իրականութիւնը այդքան հեռաւորութեան վրա էլ կարողացաւ իր սպանիչ ազգեցութիւնը գործադրել, կարողացաւ զլորել «Հիւսիսափայլը» անժամանակ գերեզմանի մէջ: «Հիւսիսափայլից» յետոյ «Հայկական Աշխարհը» ծնվեց

Թիֆլիսում և իր ծրագրի հիմք ընդունեց Նազարեանցի գաւանութիւնները: Բայց մենք տեսանք թէ որքան թոյց էր արտայացտվում նրա մէջ գաղափարական լայն պատերազմը, որքան քիչ բան էր կարողանում կատարել նրա խմբագիրը:

Թէ որքան աննպաստ ու ճնշող էր մեր իրականութիւնը եւրօպական ազատ մաքի համար, այդ ցոյց է տալիս Նազարեանցի կարծառե պաշտօնավարութիւնը Թիֆլիսի Ներսիսեան գպրոցում: Թիֆլիսի միթնոլորտը յուսահատեցրեց նրան մի շատ կարճ միջոցում. նա շատ շուտ զգաց որ ասիսականութեան մէջ ովնչ գործ կատարել չէ կարելի. ամրող երկու տարի նա ողբում և հառաչում էր, զգալով իր կատարեալ անկարողութիւնը մրցելու շրջապատող անշարժութեան, իսաւարի դէմ: Ի՞նքը քաղաքը իր եսամոլ, անառնական հականմերին նուիրված, օսարացող հասարակութեամբ յուսահատութիւն էր պատճառում նրան և հարկադրում էր որքան կարելի է շուտ հեռանալ այդտեղից, փախչել, աղատովել՝ հոգու հանգստութիւն գտնելու համար...

Այսպէս էր այն միջավայրը, ուր գործունէութիւն սկսեց նոյնպէս եւրօպական մաքերող տոգորված, նոյնպէս զերմանական լուրջ

ուսում առացած, նոյնպէս առաջադէմ, քննութատող ոգուն երկրպագող միայլ հայ—Գրիգոր Արծրունին: Եթէ Նազարեանցը հայկական ճահճային անշարժութիւնը վրդովում էր հեռաւոր Մօսկվայից, Արծրունուն վիճակված էր գործել հէնց այդ ճահճների մէջ, ճակատ առ ճակատ ընդհարվել այն խաւար, յետագէմ ոյժերի հետ, որոնց հալածանքը, կատաղութիւնը այնքան զգալի կերպով թունաւորում էին Նազարեանցին հեռաւից: Պատերազմը այստեղ, հայկական իրականութեան սրաւում, ի հարկէ, աւելի կատաղի, աւելի անողորմ պիտի լինէր, մանաւանդ որ Գրիգոր Արծրունին Նազարեանց չէր: «Հիւսիսափայլի» խմբագիրը մի մեզմ ու հեզ, կրօնասէր, խազաղութիւն ու ընդհանուր համաձայնութիւն երազող քարոզիչ էր, մինչդեռ Արծրունին մի կրակոտ ընաւորութիւն էր, մի ըմբոստ ոյժ, ազնիւ կրքերով լի մի մարդ, որ կուի մէջ ցայց էր տալիս անհուն եռանդ, չէր վախենում ոյժերի անհաւասարութիւնից, մենակ էր գուրս զալիս ամբողջ հասարակութեան դէմ: Նազարեանցը բացարձակ, հրապարակական կուի մէջ էր զըլիսաւորագէս «Հիւսիսափայլի» հրատարակութեան ընթացքում, այսինքն խկապէս վեց տարի, մինչդեռ Արծրունին ամբողջ քսան

տարի էր կուռում և միայն մահը խլեց նրա ձեռքից զրիչը և պատերազմի զաշար: Նազարեանցը իր ամենախիստ յարձակումները զնում էր նամակների մէջ. Արծրունին նամակներ չունի, ինչ զրել է, ինչ մտածել է, այդ բոլորը տպել է իր լրագրում...

Արծրունին մինչև կեանքի վերջը մեծարում էր Նազարեանցին. նրա անրիծ յիշատակի, նրա զեղեցիկ անուան հզօր պաշտպանն էր: Նա իրան և առհասարակ առաջադիմական ամեն մի գործիչին համարում էր Նազարեանցի աշակերտ: Եւ զա ճիշտ է: Նազարեանցի շարունակութիւնը, անմիջական յաջորդը Արծրունին է. Նազարեանցի հիմնական գաղափարները, պաշտպանած գատը ամբողջապէս մտաւ Արծրունու ծրագրի մէջ: Բայց և այնպէս, Նազարեանցը և Արծրունին հաւասար ոյժեր չեն, միանման մեծութիւններ չեն:

Դրանք սերունդներ են—հայր և որդի: Հայրը արիշ անսակ ժամանակների արդիւնք էր, որդին—բոլորովին ուրիշ: Հայրը ճառական ուղղաթեան ներկայացուցիչն էր, աղդասիրութեան անունով էր պահանջում զրական և կրթական վերածնութիւն. որդին աւելի մեծ պաշտրի, աւելի խոշոր տաղանդի տէր էր, ճառակի ու քարոզների անդ նա

գործ էր պահանջում, մայրենի լևուն ու դրականութիւնը ազգասիրութիւն չէր համարում, այլ անհրաժեշտ պահանջ, բէալական գործ։ Հայրը իդէալիստ էր և մի սահմանափակ չըջանում մի քանի հարցերի շուրջն էր պատում. որդին բէալիստ էր, գործում էր ոչ թէ հեռուից, այլ կեանքի մէջ, անհամեմատ չառ հարցեր էր մշակում, անհամեմատ մեծ չարժումներ էր առաջացնում։ Բաֆֆին իր վերոյիշեալ աշխատութեան մէջ այսպէս է ընորոշում այդ երկու սերունդները.

ՆԹԷ ընդունենք այն ընդհանուր պայմանը, թէ իրաքանչիւր 25 տարուց յետոյ ամեն մի երկրի երիտասարդութիւնը փոխվում է, այն ժամանակ 58 եւ 72 թւականները խորհրդաւոր նշանակութիւն կը ստանան մեզ համար։ Երկու որոշ ժամանակամիջոցներ ներկայացնում են երկու որոշ երիտասարդութիւն, մէկը իդէալական, միւսը բէալական։ Առաջինը ծնունդ է «Հիւսիսափայլ», իսկ երկրորդը ծնունդ է «Մշակի»։ Ես յիշում իմ երկու պիքիոդներն եւս, որովհետեւ երկուսի մէջ էլ զործել եմ։ «Հիւսիսափայլ» ժամանակ յայտնեցան բանաստեղծներ, իսկ «Մշակի» ժամանակ պուբլիցիստներ, բացառութիւնները շատ աննշան են։

Քսան և հինգ տարին իբրեւ մի անփոփոխ չըջան, որ անսխալ կրկնվում է, բերելով երիտասարդութեան փոխուսութիւն, մենք ընդունել չենք կարող. մարդկային կեանքի

զարգացման մէջ չէ կարելի որոշ չըջաններ, թւանշանների մի անփոփոխ պատկեր կրող ժամանակամիջոցներ սահմանել։ 58-ից մինչեւ 72 թւականները միայն 15 տարի էր անցել։ Այն էլ կայ, որ Արծրունին 65—67 թւականներում արդէն միանդամայն կազմակերպված էր իբրեւ որոշ աշխարհայեցողութիւնների տէր զրոյ, Ո՛չ, քանորդ դար չէր բաժանում այդ երկու սերունդները, և մենք չը դիտենք թէ ինչպէս է հաշւել մեր առաջանդաւոր վիճակի արդիողը, որ ստացվել է 25 տարվայ չըջան։ Կարենրը, անկայն, այդ չէ. Բաֆֆին ինչպէս 58-ի և 72-ի ականատես և զործիչ, ձիչո է անուանում երկու սերունդները. «Հիւսիսափայլ» բանաստեղծների ծնող, «Մշակ»—հրապարակախօսների ծնող, Բայց չը պէտք է կարծենք թէ մեր զրականութեան մէջ այդ երկու անունները շատ են տարբերվում իրարից։ Ամեններն այցպէս չէ. թէ «Հիւսիսափայլ» բանաստեղծին և թէ «Մշակի» պուբլիցիստին ողերում էր միենայնը—առաջադիմութիւն, վերածնութիւն։ «Հիւսիսափայլ» բանաստեղծը հօ իր ձիւղը միայն ձանաչող թռչուն չէր, մի երդիչ, որի համար միմայն էր թէ ինչ կայ չորս կողմում, ինչ է կատարվում և ինչ սկիսի կատարվի. դա այն երդիչը չէ, որ սիրոյ և

վայելչութեան ձայն է հնչեցնում ամառ և
ձմեռ։ Ահա այդ բանաստեղծների մէջ ամե-
նից շատ աչքի ընկնողը, ամենից նշանաւորը
Ա. Շահազդիզն է, և նա ասում է. «Նախ քա-
ղաքացի և ապա պօչտ»։

Զանազանութիւնը երկու սերունդների
մէջ, ուրեմն, ձեն է և ոչ գաղափարը. «Հիւսի-
սափացի» բանաստեղծը բայցօնական մե-
լամազձուութեամբ առկորդած ստանաւորով
էր յայտնում որ հայ հոգեսրականը անկիրթ
է, պարտաճանանչ չէ, ժողովրդի խեկական
հովիր չէ. իսկ «Մշակե» խեկական բէալիսար
այդ միենոյն միտքը արծարծում էր ոչ իբրև
բանաստեղծութիւն, այլ իբրև կեանփի երե-
ւոյթ, որը պէտք էր լուսաբանել հրապարա-
կախօսական յօդուածի մէջ՝ զնողի, վեր-
լուծողի սառնարատութեամբ։ Այնադեւ էլ
այստեղ էլ նոյն հրապարակախօսութիւնն է,
կամ աւելի լաւ սասած նոյն տենչանփը լու-
սաւորելու հայրենի խաւար իրականութիւնը,
բուժելու մեր չափականց հնացած և չափա-
կանց վտանգաւոր գարձած վէրբերը։

Սարեր ու ծորեր, այն, չը կային մեր
առաջադիմական բանակի սերունդների մէջ,
չը կար սառնութիւն, ոչ էլ արհամարհական
վերաբերմունք նոր սերունդի և անցածի մէջ,
ինչպէս այդ նկատվում էր, որինակ, ոռուաց

կեանփի մէջ։ Եւ պատճառը շատ հասկանալի
է։ Մեր կեանփը շարժվում է կրիայի քայլե-
րով. մենք այնքան գանգաղկու ենք, այն-
քան ծոյլ ենք ինքնաքննութեան մէջ, այն-
քան գժուար ենք խրացնում վերանորսու-
թեան անհրաժեշտութիւնը, որ մեզանում
նոյն խակ ամենասարրական, ամենապարզ
ովահանջները անկատար են մնում տամնեակ
տարիների ընթացքում։ Մերունդը յաջոր-
դում է սերունդին և ինչ է տեսնում։—Պա-
տերազմ գաղափարների համար, բայց ոչ մի
առաջադիմութիւն, ոչ մի կատարված ան-
հրաժեշտ պահանջ։ Հասկանալի է, որ նորը
պիտի շարունակէ անցեալի գործը, պիտի
նորից մացնէ իր ծրագրի մէջ այն, ինչ քա-
րողում էր նախորդ սերունդը։ Բայց այս հան-
գամանփը, կրկնում ենք, ապացոյց չէթէ հայ-
րերն ու որդիները բոլորովին միենոյն են։
Աշխարհայեցաղութիւնների մէջ նրանք հա-
րազաներ են, իրար շատ են մօտենում,
շատ յաձախ են իրար հետ ձուլվում. բայց
էվլոլիսցիայի օրէնքը միշտ կայ և որդիներին
մենք տեսնում ենք շատ հեռու զնացած։
Գրիգոր Արծրունու գործունէութիւնը այն-
քան լայն է, այնքան ընդարձակ, որ նա-
խորդ սերունդի գործունէութիւնը միայն
սաղմնային գրութիւն, միայն սկիզբ, կամ

ինչպէս առում է Նազարեանցը՝ առաջարան կարող ենք ընդունել:

Անկասկած, Արծրունու կատարած գործի մէջ առաջին, զիխաւոր զերակատարը նրա խոչսր տաղանդն է, նրա պողվատէ բնաւորութիւնը, անխորտակելի և ուանդը: Բայց այստեղ պէտք է յիշատակենք և այն բախտաւոր հանգամանքները, որոնք թէն առաջնակարգ նշանակութիւն չունեն, բայց գոնէ մի յայտնի չափով շատ նպաստաւոր ներգործութիւն ունէին:

Իրեւ խմբագիր, Գրիգոր Արծրունին խիստ զանազանվում է իր նախորդներից նախ և առաջ նրանով, որ նիւթապէս անկախ զիբք ունէր, ստիլված չէր ապրուստի միջոցների մասին մտածել: Չենք առում թէ նա այդպէս էր իր կեանքի ամրող ընթացքում, ոչ, ում չէ յայտնի որ նա իր կեանքի վերջին տարիներում ապրում էր իր զրչով: Վերջին տարիներում, այն. իսկ սկզբի տարիներում, այն երկար շրջանում, երբ նա հզօրապէս կռւում էր, քայլ առ քայլ նուաճումներ էր անում,—այդ ժամանակամիջոցում, գոնէ մինչեւ 80-ական թուականների սկիզբը, նա բոլորովին ապահովված և անկախ գործիչ էր: Գրիգոր Արծրունին առաջին հայ խմբագիրն էր մեղանում, որ հնարաւորութիւն ունէր

սկզբից և եթ ամբողջովին նուիրվելու. իր գործին: Այդ չը տեսնված զիրքը նրա համար ստեղծել էր այն հանգամանքը, որ նա հարուստ մարդու որդի էր, կարող էր գոնէ անձնական առլրուստի մասին չը մտածել: Կողմնակի պարապմունքների և տեխից չընկնել: Սա շատ մեծ նշանակութիւն ունէր, սրա չնորհիւ էր որ Գրիգոր Արծրունին միայն զրոյ էր, միայն զրականութեան մէջ էր գտնում գործելու ասպարէզ:

Ուշագրաւթիւն գարձրէք և մի հետաքրք քրական հանգամանքի վրա: Նայենք մեր պարբերական հրատարակութիւնների ցուցակին. կը տեսնենք որ սկզբից, «Կովկասից» և «Արարատից» մեր խմբագրները, աշխարհական թէ հոգեսրական, ուսուցիչներ էին: Գրական գործունէութիւնը երկրորդական բան էր նրանց համար. զիխաւոր պարապմոնքը, ուսուցչութիւնը, ազգում էր նրանց մտածողութեան վրա և նրանք իրանց հրատարակութիւնների մէջ միակողմանիութիւն էին մացնում, զիխաւոր ուշագրաւթիւնը նուիրելով գպրոցական հարցերին:

Այսպէս, մենք տեսնում ենք որ «Հիւսիսակայլյի» հրատարակախօսութեան միջուկը, էութիւնը գպրոցն է և մնացած հարցերը պտտում են նրա շուրջը: Նազարեանցը այն

աստիճանն ուսուցիչ էր իր հայեացքների մէջ, որ հասաւ այն մաքին թէ լրապրութիւն, զրականութիւն չէ կարող լինել հայերի մէջ, պէտք է նախ և առաջ դպրոցներ բաց անել, զրագիտութիւն տարածել, ընթերցողներ պատրաստել: Որ դպրոցը ընթերցողներ է պատրաստում, այդ, ի հարկէ, անուրանալի է. բայց որ զրականութիւնն էլ պիտի զուգընթացաբար զնայ դպրոցի հետ, որ նա էլ, նոյն խոկ դպրոցից անկախ, ընթերցող հասարակութիւն է պատրաստում, այս կարծեմ մոռացվում էր և առացուցվեց Գրիգոր Արծրունու ձեռքով: Մանկավարժ-խմբագրի միակողմանիութեան ամենալաւ օրինակը Ստեփանէն էր: Դպրոցներից գուրս նրա համար գրեթէ այլ ևս հարց չը կար: Գրիգոր Արծրունին մանկավարժ չէր ^{*)}, տասի իր նախորդների միակողմանիութիւնից ազատ մնաց և դաստիարակութեան հարցի չափ նրա համար կարենոր էին և կեանքի բազմակողմանի պահանջներն ու հարցերը:

Արծրունին, ասացինք, ապահոված մարդ էր, ուրեմն և միանգամայն անկախ խմբա-

^{*)} Միքանի ամիս Գալիքանեան և Մարիամեան դըպրոցների տեսուշ լինելը, ի հարկէ, առանձին նշանակութիւն չունի:

դիր: Հարց է առաջ դաշիս թէ այդ ապահով զրութիւնը որպան էր նպաստում «Մշակի» գործին: Զը մոռանանք որ Արծրունին, խօսելով մեր մամուլի ընկած զրութեան մասին, չարիքներից զլխաւողը այն էր համարում, որ զրողները վարձատրութիւն չեն ստանում: Եւ շատ լաւ խմանալով, որ հայերի մէջ լրագիրը կամ ամսագիրը չէ կարող օրինաւոր գոյութիւն պահպանել ընթերցողների տուած վճարով, առաջարկում էր ընկերութիւն կազմել, զրամագլուխ հաւաքել՝ զրգեր և լրացիր հրաարակելու համար: Այժմ սկսելով լրագրի գործը մենակ, կարող էր նա յոյս ունենալ թէ կը վարձատրէ աշխատակիցներին և եթէ սնէր, որն էր այդ յոյսը—իր անձնական հարստութիւնը: Անձնական հարըստութեան հանդամանքը իմանալու համար մենք գեռ պիտի դիմենք գեներալ Արծրունուն, որին թողեցինք Թիֆլիսի իր փառանեղ առանձնութեան մէջ:

Գեներալը, ի հարկէ, հետեւում էր իր որդիների կրթութեան, հետաքրքրվում էր նըրանց ցոյց տուած առաջադիմութեամբ: Մենք գիտենք որ իր հայրական պարաւորութիւնները նա կատարում էր ամենայն լարեկալցութեամբ: Անկասկած, նա դիտէր որ

Գրիգորն ու Անդրեասը զրում են հայոց մամուլի մէջ, կարգում էր նրանց զրուածքները: Բայց ինչ էր մտածում այդ մասին:— Դժբախտանքար, այս չը դիտենք մենք. իր որդիներին զրած նամակներից մի հատն էլ չէ մնացել:

Բայց ահա Գրիգորը վերադառնում է հայրենիք: Եօթը տարի սովորել է նա Ռուսաստանում և արտասահմանում, աշխարհ է տեսել և առաջինն է հայերի մէջ, որ ստացել է փիլիսոփայութեան դօկտօրի դիտնական ստաճանը գերմանական համարարանից: Այդ բոլորը շատ լաւ Բայց գեներալ Երեմիքի համար փիլիսոփայութեան դօկտօրը նոյն «Գրիշան» է, որ զանգում էր հօր խրնամասարութեան տակ, քանի չէր հեռացել թիֆիլսից: Նա սովոր չէր իր որդիներից որեւէ մէկի վերաբերմանը լրնդունել թէ նա այնքան արդէն դարգացել է, չափահաս մարդ է դարձել, որ կարող է ասլրել իրրե անկախ մարդ: Ինչ էլ եղած լինի, Գրիգորը պէտք է շարունակեր մնալ իր հօր մօտ նախկին փոքրիկ «Գրիշան» և հայրը պիտի շարունակէր աւելի խելօք, աւելի: Լաւ հասկացող, ուղղութիւն ցոյց տուող դեկավարող լինել: Երեմիա Արծրունին, ինչպէս հայր, ուրիշ կերպ լինել չէր կարող: Եւ նրա մեծ որդին,

Գէորգը, մինչև կեանկի վերջը անպայման հպատակված էր հօր կամքին ու կարգադրութեանը:

Սակայն Գրիգորը այդպէս չը դուրս եկաւ: Նա ժառանգել էր տոհմային յատկութիւններից շատերը—շտակութիւն, յամառութիւն, անկախութեան զգացմունք: Եւ հօր ու որդու մէջ առաջանում են ընդհարումներ: Երեմիան ուղում է հպատակիցնել, խրնամակալ լինել, Գրիգորը բացարձակապէս մերգում է հպատակութիւնն էլ, խնամակալութիւնն էլ: Եւ ինչ է տեսնում այն հայրը, որ իր ընտանիքի մէջ անսահման հրամանատարի գեր էր կատարում: Նրա որդին չորհիւ իր դիրքի, իր կապերի, իր ստացած կրթութեան, կարող էր փայլուն ասպարէդ ընտրել իր համար, զրաւել հասարակութեան մէջ բարձր դիրք: Բայց նա այդ մասին չէ էլ մտածում, նրա միտքն է լրազիր հրատարակել:

Դա մի այնպիսի անակնկալութիւն էր, որին ազա Երեմիան—հատատ կարելի է ասել—ամեներին չէր ել սպասում: Ի՞նչպէս, զեներալ Արծրունու որդին դադէթ հրատարակէ, այն էլ հայերէն գաղէթ: Պէտք է կարգալ Երեմիայի նամակները, զրած Գէորգին, պէտք է տեսնել թէ որպիսի ոգեսրու-

թեամբ ու ակնածոթեամբ է նա խօսում
պետական ծառայութեան, ասալիճանների
մասին, որպէս զի հասկանալի լինի թէ որ-
քան ապշած պիտի լինէր այդ բարձրասատի-
ճան գինուորականը իր որդու հաստատ
վճոփց: Մեղադրել գեներալ Երեմիային չենք
կարող ի՞նչպէս մեղադրենք, երբ նոյն այդ
հայեացքը յասաւկ էր Թիֆլիսի ամրակջ
բարձր գասակարգին: Հայ լրագիր... Դա
մեծամասնութեան անյայտ մի բան էր, դա
այնպիսի մի խոցուկ հասկացողաթիւն էր,
որ նրա վրա սիրահարված մարդուն Թիֆ-
լիսի բուրժուա դասակարգը միայն խղճալ
կարող էր: Հայերէն լրագրի պահանջ չը կար-
—իշենք «Մեղան» իր 150 բաժանորդներով:
Եւ Գրիգոր Արծրունին Թիֆլիսի իր առա-
ջին ապաւորաթիւնների մէջ («Հայկական
Աշխարհում» ապկած) պատմում է որ կրթ-
ված մարդկել իրան ասում էին. Հայերէն լր-
րագիր հրատարակելը միտք չունի. կրթված
դասակարգը օտար լեզուներով է կարդում,
իսկ ժողովուրդը հայերէն կարդալ չը գիտէ:
Պատմում են, ասում է Գրիգոր Արծրունու-
մասին գրողներից մէկը *), —որ բարձր շր-

*.) Խ. Մալումեան, «Մաքի Մշակը», Թիֆլիս, 1900,
հլ. 49:

ջանի մի ոռու կին, լսելով որ Արծրունին
լրագիր է ուզում հրատարակել, ասել է.
«Բայց ասում էին, որ զեներալ Արծրունու
որդին խելօք երիտասարդ է, մինչդեռ նա
ուզում է լրագիր հրատարակել»...

Եւ զեներալը փորձեց զիմագրել իր որ-
դուն. նա պահանջեց որ Գրիգորը թողնէ իր
մտադրութիւնը: Բայց որդին չը զիջեց: Եւ
երկուսի յարաբերութիւնները լարվեցին,
բնդունեցին պաշտօնական կերպարանք *):
Բանը այն աեզր հասաւ որ Երեմիան նշա-

*) Պատմում են հօլ և որդու յարաբերութիւնների
մասին շատ բան: Երեմիան յաճախ վէճի էր ըռնվում
Գրիգորի հետ զանազան հասարակական և քաղաքական
հարցերի առիթով. երբէք չը համաձայնվելով որդու
հետ, նա, այնուամենայնի, «Մշակի» ընթերցողն էր և
բաժանորդ էր գրպում ամեն տարի: Առում են որ մի
տարի նա ուշացցեց իր բաժանորդագինը հասցնելը, և
տարի նա ուշացցեց իր բաժանորդագինը հասցնելը, և
«Մշակ» չէր ուղարկում նրան, մինչև որ փողը լիովին
չը ստացվեց խմբագրութեան մէջ: Եւ պէտք է ասել որ
հայր ու որդի խոռվ չէին միմեանցից, ընդհակառակն,
միասին էին ճաշում: Գրիգորը գումայի ձայնաւոր էր.
քաղաքագլուխ ընտրելու համար երկու կանդիդատներ
կային—զեներալ Արծրունի և Ղիփիանի: Գրիգորը, չը
համակըլելով իր հօք ուղղութեան, զիմագիր կուսակցու-
թիւն կազմեց, ձայնաւորների նախապատրաստական
թողովներ գումարեց՝ Ղիփիանի թեկնածութիւնը աջո-
ժողովներ համար: Եւ այդպէս էլ եղաւ. քաղաքագլուխ
ընտրվեց Ղիփիանին:

նակեց Գրիգորին ամսական ոռնիկ, որ շատ
էլ մեծ չէր, ընդամենը հարիւր բուքի; Ահա
այս էր Գրիգորի ամբողջ հարստութիւնը
տարիների ընթացքում. հայրական այդ ոռ-
նիկից էր նա ծածկում իր լրազրի դէֆի-
յիտը:

Մի կանօնաւոր շաբաթաթերթ հրատա-
րակելու համար, չը հաշւած աշխատակիցնե-
րի վարձարութիւնը, հարկաւոր էին աւելի
մեծ միջոցներ, քան որքան ունէր Գրիգոր
Արծրունին: Ճիշտ է, «Մշակը» առաջին իսկ
տարվանից մի անօրինակ աջողութիւն ունե-
ցաւ, ճիշտ է այդ առաջին տարում լրազիրը
արդէն 500 բաժանորդ ունէր, բայց տպա-
րանական ծախսերը շատ էին, ապառիկներ
մնացին, այնպէս որ առաջին տարվանից
Գրիգոր Արծրունին հարկադրված էր իր զբո-
պանից լրացնել եկամուտի պակասը: Այս
հանդամանքների մէջ նա ստիպված էր մի
կողմ թունել աշխատակիցներին վարձատրե-
լը, մի սկզբունք, որը նա շարունակ պաշտ-
պանել էր թէ «Հայկական Աշխարհի» և թէ
«Մեղուի» մէջ: Այս ցաւալի հանդամանքը
իրականութեան անողորմ պահանջներից էր
բղխում: Եւ եթէ «Մշակի» շուրջը միշտ
խմբված չը լինէր ոգերգված երիտասարդու-
թիւնը, անվարձ աշխատութիւնը կարող էր

շատ վատ աղղել լրազրի վրա: Երիտասար-
դութիւնը այնքան սիրում էր Արծրունու
գործը, այնքան սովոր էր իր սեփական գոր-
ծը համարել նրան, որ ձրի աշխատելը զըր-
կանք չէր համարում և Արծրունին մինչեւ իր
կեանքի վերջը շրջապատված էր այզպէս աշ-
խատելու պատրաստականութիւն ունեցող-
ներով:

Եւ այսպէս, նիւթական միջոցների հար-
ցը, որ այնքան մեծ կարենորութիւն ունի
պարբերական մամուլի առաջադիմութեան
գործում, վճռվում էր մասամբ միայն: Լրա-
գիրը կը պահպանվէր, բայց զրա համար հար-
կաւոր էր անվարձ աշխատութեան սկզբունքն
ընդունել: Գրիգոր Արծրունին իր նախորդ
խմբագիրների զրութեան մէջ չէր: Նա ստիպ-
ված չէր շարունակ գանգատվել նիւթական
միջոցների պակասութեան վրա: Բաժանորդ-
ների թւի կողմից «Մշակը» առաջադիմական
մի սկզբ քայլ էր ներկայացնում: սկակասը
լրացնելու համար պատրաստ էր խմբագրի
համեստ ամսականը: Միւս կողմից էլ դա-
ղափարական ոգերութիւնը, կատարեալ յա-
վըշտակութիւնը, որ բանկվել էր մեր երի-
տասարդութեան մէջ, ձրի նիւթ էր տալիս
«Մշակին»:

Այժմ մի քանի խօսք խմբագրական կազ-

մի մասին: Արծրունուն աջողվեց կազմակերպել խմբագրութիւն, հիմնել գործը աշխատանքի բաժանման սկզբունքի վրա: Դա առաջին օրինակն էր մեղանում: Լրադրի սըրբագրողն էր տաղանդաւոր դերասան Միհըրդատ Ամերիկեանը: Միայն սա էր, որ իր ալս աշխատութեան համար ստանում էր Արծրունուց մի շատ չափաւոր ոսճիկ: Բայց Ամերիկեանն էլ, ուրիշների նման, ունէր իր ձրի աշխատութիւնը: Նա զրում էր սուր և վասվուն ֆելիքտօններ, սրոնց տակ դնում: Էր Զաքուճ կեղծ անունը: Ներքին տեսութեան համար յօդուածներ զրում էր Վասիլ Շահվերդեանը, համալսարանի առաջին կուրսում եղած և ուսումը կիսատ թողած ոի երիտասարդ: Արտաքին տեսութեան մէջ աշխատում էր Շահվերդեանի ընկեր, նոյնպէս համալսարանի առաջին կուրսից հետացած Պօղոս Իզմայիլեանը: Սա մի տաղանդաւոր, շատ զարգացած երիտասարդ էր, «մեացուծներից աւելի եւրօպացի», ինչպէս վկայում է Արծրունին: Դժբախտաբար, Իզմայիլեանը հայերէն չը դիտէր և հայ լրագրի մէջ կարսղ էր աշխատել միայն թարգմանի միջոցով: Եւ նրա թարգմանը մեծ մասամբ Արծրունին էր, որ հայերէնի էր վերածում նրա գրուածքները:

Աւելի գժուար էր թղթակցութիւնների հարցը: Մի օրինաւոր հասարակական օրգան չէր կարող զոյտթիւն ունենալ առանց պատրաստված, որոշ ուղղութեան և ծրագրի հետեւող թղթակիցների: Անցեալում այդպիսի թղթակիցներ պատրաստելու շատ փորձեր չեն եղել: Մենք տեսանք, որ «Մեղուի» խմբագրին առաջարկում էին զարգացնել թղթակցութիւնների բաժինը, իսկ նա, անկարող լինելով կատարել այդ պահանջը, պատասխանում էր թէ Աստուած ողորմած է: Տեսանք նոյնպէս որ այդ գործում աւելի բախտաւոր եղաւ «Հայկական Աշխարհ»: Նա առաջարկեց ծրագիր, ամեն միջոց զործ զրեց թղթակիցներ զրաւելու համար և մասսամբ հասաւ իր նպատակին: Թղթակցութիւններ էր ստանում զանազան քաղաքներից:

Գրիգոր Արծրունին չէր կարող սպասել, որ «Հայկական Աշխարհ» թղթակիցները իրան նիւթեր աւղարկեն: Նախ որ զրանց մեծ մասը պատահական թղթակիցներ էին, երկրորդ որ «Հայկական Աշխարհ» ծրագիրը աւելի նեղ էր, սահմանափակ, աւելի գործոցական գործն ունէր ի նկատի, մինչդեռ գաւառական թղթակցութիւնների մէջ, «Մշակի» պահանջների համաձայն, պիտի արտապայտ-

վէր ժողովրդի կեանքը իր բոլոր կողմերով՝
ի՞նչ անել վճռում են առժամանակ խըս-
րագրութեան մէջ կազմել թղթակցութիւն-
ներ։ Դրանով օրինակ և ուղեցոյց կը տրվէր
դաւառներից գրել դանկացողներին։ Այդ աշ-
խատանքն էլ բաժանվեց այսպէս. Վասիլ
Շահվերդեանը կազմում էր թղթակցութիւն-
ներ Թէլաւից, Սղնախիդ և առհասարակ
Վրաստանի զանազան կողմերից. Պերճ Պոօշ-
եան—Երևանից, Յակոբ Մէլիք-Յակոբեան—
Պարսկաստանից, Մաժակ—Գանձակից, Թըղ-
թակցութիւնները, ի հարկէ, չէին նամակում,
նրանք կազմվում էին մասնաւոր նամակնե-
րից։ Ինքը, Արծրունին, կազմում էր թըղ-
թակցութիւններ կ. Պօլսից, հիմնվելով լրա-
գիրների և մասնաւոր նամակների վրա։ Վա-
զուց էր մեր մամուլը ձգտում մօտենալ թիւր-
քահայերին, արձանագրել նրանց կեանքի
երեսյթները։ Առաջին խոշոր քայլը այս գոր-
ծում պատկանում է «Կոռունկին»։ Նրա խըս-
րագիրը թիւրքահայ էր և նրա համար շատ
գժուար չէր գրաւել իր հայրենակից գրող-
ներին, ստանալ սեփական թղթակցութիւն-
ներ կ. Պօլսից։ «Կոռունկից» յետոյ «Մեղուն»
և «Հայկական Աշխարհը» շարունակեցին նոյ-
նը, բայց սեփական թղթակիցներ չունենա-
լով, տալիս էին մեծ-մեծ արտատպութիւն-

ներ կ. Պօլսի լրագիրներից։ Արծրունին հէնց
սկզբից ըմբռնեց թէ նրբան մեծ կարևորու-
թիւն ունի կ. Պօլսի հետ մշտական կապ
հաստատելը լրագրի միջոցով։ Մինչև կ.
Պօլսում մշտական թղթակից ունենալը նա
ինքն էր կազմում թղթակցութիւններ։ Սա
սկիզբն էր. թիւրքահայերի մօտենալու գոր-
ծում ոչ ոք մեղանում չէ կարողացել անել
այն, ինչ արաւ Արծրունին։

Մեղ մնում է խօսել «Մշակի» մի այլ աշ-
խատակցի մասին։ Դա Ստեփանոս Պալա-
սանեանն էր, բումինացի հայ, որ ուսում էր
առել Պարփի Հայկագեան դպրոցում և ու-
սուցչութիւն էր անում Թիֆլիսում։ Պալա-
սանեան արդէն յայտնի էր իր աշխատու-
թիւններովիրքն հայերէնագէտ։ Նրան յանձն-
վեց «Մշակի» բանասիրական բաժինը.
բացի գրանից վճռված էր, որ նոր հսկէ «Մը-
շակի» լեզուի վրա և ուղղէ թէ Արծրունու-
և թէ ուրիշների ուը։ Բայց Պալասանեան
երկար չը մնաց «Մշակի» խմբագրութեան
մէջ և իրքի աշխատակից մի առանձին բեղմ-
նաւորութիւն ցոյց չը տուեց։ Առաջին տար-
վայ ընթացքում նա գրեց մի քանի յօդուած-
ներ, որոնց երկուսը ասաջնորդողներ էին,
մէկը ներքին տեսութեան յօդուած, մէկն էլ
մատենագրութիւն։ Ինչ վերաբերում է լե-

դու ուղղելուն, նա աւելորդ էր համարում այդ բանը մանաւանդ Արծրունու նկատմամբ: Արծրունու ոճը նա գտնում էր այնքան շատ ինքնուրոյն, առանձնայատուկ, որ հարկաւոր չէր համարում որևէ սրբազրութեան ենթարկել նրան և Պոօշեանին էլ չէր թոյլ տալիս ուղղել:



Գ. Շահվերդեան

Սյսպէս էր բաժանված աշխատանքը «Մը-
շակի» խմբագրութեան մէջ: Իսկ ի՞նչն էր

մնում խմբագրին:—Ամենագլխաւորը՝ ամենակարևորը—լրագրի հողին: Արծրունին զըրում էր զիսաւորապէս առաջնորդողներ և հսկում էր լրագրի բոլոր բաժինների վրա: Աշխատանքի բաժանումը չէր նշանակում առանձին, միանդամայն ինքնազլուխ տէրերի յանձնել լրագրը: Արծրունին յաւ նկատել էր որ խմբագրական յարկի տակ հաւաքվածները ուղղութեամբ, աշխարհայեցողութիւններով միմեանց նման մարդիկ չեն: Պէտք էր այնպէս տանել գործը, որ լրագրիրը իր բաժինների մէջ ուղղութեան մի ամբողջութիւն ներկայացնէր: Աշխատակիցներից ոչչ մէկին—ասում է Արծրունին—ես երբէք չեմ թոյլ տուել երեակայելու թէ նա կատարեալ տէր է նոյն իսկ իր բաժնում: ապացոյց այն կըսփուը, որ ունէի Շահվերդեանի հետ, երբ նա ուղեց մացնել ներքին տեսութեան մէջ մի յօդուած, որի ուղղութեան հետ ես համաձայն չէի: և ես ամբողջ խմբագրական ժողովի առջև պատասխանեցի նրան, թէ զուր է նա կարծում որ կատարեալ տէր է ներքին տեսութեան բաժնում, և թէ այնպիսի յօդուած, որի ուղղութեան հետ ես համաձայն չեմ, ես երբէք չեմ տպագրի: Այս, լինում էին անդայն յօդուածներ, բայց վատահ կարող եմ ասել, որ իմ ուղղութեան դէմ հչ

մէկը երբէք չէ տպվել «Մշակի» մէջ, խմբագրական ժողովների ամբողջ տեսողութեան ժամանակ:

Խմբագրի veto-ին ենթարկված աշխատակիցների մի խումբ—ահա «Մշակի» խըմբագրական կազմուածքի կերպարանքը, ի՞նչ տեսակ մարդկանց համար այդ veto-ն կա-



Պ. Իզմայիլեան

բող էր համարեա գոյութիւն չունենալ: Այդպիսի մի մարդ եղել է «Մշակի» խըմբագրատանը և դա Պօղոս Իզմայիլեանն էր:

Արծրունին հաւասարիացնում է որ իզմայիլեանը «գուցէ միակն էր որ լիազօր տէր էր իր բաժնից: Ինչու: «Եթէ խմբագրական ժողովներում ես մեծ մասամբ միշտ աւելի համաձայն էի իզմալլօվին, քան ուրիշների հետ, այդ այն հասարակ պատճառով էր, որ նա բոլոր մնացածներից աւելի եւրօպացի էր, ազատ նախապաշտրմունքներից, մտաւորապէս աւելի գարգացած»: Ահա խմբագրի veto-ից չը վախելու ամբողջ գաղտնիքը, ահա ինչու էր Արծրունին խիստ հսկում լրագրի բոլոր բաժինների վրա:

Այսպիսի կազմակերպութեամբ, գործելու այսպիսի ծրագրով Արծրունին մտաւ 1872 թւականը:

III

Առաջին համարները:—Առաջնորդող յօդուած:—«Երեկ, Այսօր եւ կեռոց»:—Կոյս հայ իմասելիզենցիայի դեմ—Անխնայ ընեադասուրիւն. ո՞րն է մեր իդեալը:—Անընդունակուրեան հերոսներ:—Պէտք է մշրակել:—Արշաւանի հիմ սերունդի դեմ:—Ո՞վ մնաց. —Ֆողովուրդը:—Յարձակողական ուղղուրեան առաջին պառութերը.—զում «Մշակի» խմբագրական կազմի մեջ:—«Մեղուրի» վերակենդանուրիւնը:—Առաջին պօյկմիկա:—Ներսիսեան դպրոց, հոգարարձական ընթրուրիւն:—Կուսակցական պայման եւ յաղուրիւն:—Արտասահմանի եւ Ռուսասահմանի ուսանողներ:—«Մեղուրի» յարձակումները. «կոսմոպօլիսներ»:

—∞—

«Մշակի» առաջին համարը հրատարվեց 1872-ի յունվարի 1-ին, շաբաթ օր: Խմբագրութիւնը յայտնում էր որ այս համարը բացառութիւն է, «Մշակը» պիտի լոյս տեսնէ հինգշաբթի օրերը:

Նախ նոր լրագրի աեսքի մասին: Դա փոքր գիրգով մի թերթ էր, իւրաքանչյուր երեսը չորս սիւնակից: «Մեղուն» Մանդինան քահանայի ժամանակ միայն մի տարի

(1862-ին) էր ընդունել այդպիսի զուտ լրագրական կերպարանը. մնացած տարիները թէ նրա և թէ Սիմէօնեանցի օրով շաբաթաթերթը հրատարակվում էր մեծ քառածալ թերթի գիրգով: Առհասարակ Արծրունին իր լրագրի արտաքին ձիի, յօդուածները գասաւորելու մէջ օրինակ ունէր ֆրանսիական լրագրիները: Մի անգամ ընտրած գիրգը, տառերի ձեր նա անփոփոխ պահպանեց մինչեւ իր կեանքի վերջը բացի միայն վերնագրից, որ վագիտութեան ենթարկվեց 1874 թւին և այնուհետեւ մնաց անփոփոխ: «Մշակը» ունէր մի գրական-քաղաքական լրագրի բոլոր բաժինները, բացի հեռագիրներից, առաջնորդող յօդուած, ներքին տեսութիւն, բազկացած ինքնուրոյն յօդուածներից, թղթակցութիւններից և լուրերից, արտաքին տեսութիւն, որ նոյնպիսի կազմուածք ունէր, բանասիրական (չորրորդ երեսի վրա), խառն լուրեր, ֆելիէտոնն:

Աւելուրդ չը պէտք է համարվի յիշատակել այստեղ և այն, որ Արծրունին, ինչպէս և ուրիշ գրողներն ու հրատարակիչները, նեղվում էր տպարանական անյարմարութիւններից, որոնք այն ժամանակներում ուղղակի անտառնելի էին: Թիֆլիսը գեռ նոյն իսկ տեխնիկական յարմարութիւններ չէր տալիս հայե-

րէն զիրք ու լրագիր տպողներին: Ապացոյց
այն տանջանքները, որ կրում էր Ստեփանէն
«Հայկական Աշխարհի» հրատարակութեան
ամբողջ ընթացքում. այդ տանջանքների ման-
րամասն նկարագրութիւնը Ստեփանէն դարձ-
րել էր իր ամսագրի ներքին տեսութեան մի
համարեա մշտական բաժինը: Միակ փոքր
ի շատէ օրինաւոր, հայերէն տառերով հա-
րուստ տպարանը կնքիածնանցինն էր, այն-
տեղից դուրս, ուրիշ տպարանում գործ ու-
նեցողը պիտի տանջվեր անկարգութիւնների
ձեռքին: Արծրունին ընտրեց վրացի Շերե-
թելիի տպարանը, որ մի շատ խղճուկ հիմ-
նարկութիւն էր. չը խնայելով ոչ աշխատանք
և ոչ աւելորդ ծախսեր, նա կարողացաւ այդ
աղքատ տպարանում կանոնաւոր հրատարա-
կել շարաթաթերթը և բաւական մաքուր
տպագրութեամբ, խնամքով սրբագրված: Այդ
յատկութիւնները «Մշակին» յատուկ մնացին
մինչև վերջ:

Ի՞նչ էր բերում նոր լրագիրը:

Մի շաբթ թարս ու սրբուն նորութիւն-
ներ միմեանց ետեղից վերցնենք հէնց առա-
ջին հինգ համարները, աչքի անցկացնենք
նրանց սիւնակները և ահա ի՞նչ հետաքրքրա-
կան ցուցակ կը ստանանք:

Ահա մոռաջին համարում, դժի տակ, Զա-



Միհրդատ Ամնըիկեան
(Զաքում)

քուճը կը է իր անզրանիկ ֆելիէտոնը,
քուճը կը նոր տարուն: Ներքին տեսութեան
նուիրված նոր տարուն: Ներքին տեսութեան
մէջ Վ. Շ.-ի (Վասիլ Շահվերդեանի) մի ծրա-
պիր-յօդուածն է, որ բացտարում է թէ ինչ
նիւթեր ու հարցեր են հարկաւոր այդ բաժնի
համար. զրան նետուում է Պահլաւունու (Պերճ
համար) նամակը Երևանից: Արտաքին տե-
սութիւնը բազկացած է «Հայմայնքը Թրանսիալի-
մէջ» ինքնուրոյն լոդուածից: Բանասիրա-

կան բաժինը չորրորդ երեսի վրա է և այնտեղ տպված է «Կալատաղ Սահակ» անունով բաւական միամիտ պատկերը, հեղինակութիւն Գ. Զ.-ի (երեխ Գէորգ Զմշկեանի):

Երկրորդ համար: Այսուեղ ֆելիքտօնի բաժնում արդէն ուրիշ աշխատակից է—Հա-



H. H. Կևորկյան

մալը, որ ընարել է իր գրուածքների համար «Համալի մասլահալ» ընդհանուր վերնագի-

րը: Համալը Գարբիէլ Սունդուկեանցն է, Թիֆլիսի բարբառով Թիֆլիսի բարոյական այլանդակութիւնները մերկացնողը: «Պէտօի» հեղինակը միայն բեմի վրա չէր հանում անխիզն գաղանային հարստահարութիւնների պատկերներ: Նոյնը նա անում էր իր ֆելիքտօնների մէջ էլ և այս առաջին գրուածքում Համալը պատմում էր իր «Մշակ ախագօրը» մի հարստահարութեան դէպք, որին ենթարկվում է համալը, այդ բեռնակիր երկոտանի գրաստը: Կոկ ու գեղեցիկ է գրուածքը, մշակված՝ Սունդուկեանցին յատուկ հմտութեամբ:—Ներքին տեսութիւնը մի ընդգարձակ յօդուած ունի «Առևտրական խընդիր Թիֆլիսում» վերնագրով. նա շարունակվում է և երրորդ համարում և թէն սառը առաջդրութիւն չունի, բայց պարզ է որ պատկանում է Արծրունու դրչին: Յօդուածը արծարծում է տնտեսական ծանրակշիռ հարցեր: «Վրաց թատրօն» վերնագրի տակ գլուխած է մի բեցենզիա վրացերէն մի ներկայացման մասին. մի բան, որ չը տեսնված նորութիւն էր հայոց մամուլի մէջ: Արտաքին տեսութեան բաժնում այս անգամ երեւան է եկել «Մշակի» անդրանիկ և բեղմնաւոր թղթակիցը արտասահմանից, Անդրէաս Արծրունին:

Երրորդ համար:—Ընդարձակ մատենագրութիւն Ս. Պ.-ի (Սահիփան Պալասանեան). «Հայկական թատրօն ի Բաղուց՝ Վահան Խորխոռունի ստորագրութեամբ. Առաջին նամակ Պարոն Իափփիի ուղևորութիւնից Պարսկաստանում: Թէ ինչպէս առաջ եկան այդ շատ հետաքրքրական նամակները, այդ արդէն իմացանք Արծրունու պատմածից: Պարսկաստանի նամակները քսանից աւել էին. նրանք տպվեցան 1872 և 1873 թւականների համարներում: Առաջին նամակի տակ դրված էր ստորագրութիւն՝ «Յո Ալբանդը Իափփի» *):

Չորրորդ համար: Դարձեալ Զարուճը իր կծու Փելիէտօնով: Պալասանեանի մի Ընդարձակ յօդուածը, որի մէջ յարձակվում է մեր զրականութեան մէջ տիրող ճառական ուղղութեան դէմ և յայտարարում է թէ «Մշակը» ամեն ջանք գործ պիտի դնէ ժողովրդի կեանքից վերցրած վէպերով ընթերցանութեան սէր տարածելու: Ներքին տեսութեան մէջ—«Ղղարի այցելու»: Դատաս-

*) Ասում են որ իր կեղծ անունը Իափփին վերցել է արաբական լեզուից: Դուզէ աւելորդ չը լինի յիշատակն որ 60-ական թականներին Թիֆլիսի իտալական օպերայի գերասանուհիներից մէկի աղջանունն էր

տանկական ժամանակադրութիւն—«Իշխան Մէլքոնի գործը»: Արտաքին տեսութիւն—Մատենագրութիւն—«Ամենահին արձանները Հայաստանի մէջ»: Բանասիրական—նոր սրամուածք Գ. Շ.-ի «Մազթաղի հարանիքը»:

Հինգերորդ համար: «Հայկական թատրօն»: «Հայկական արհեստը Տփխմում:—Նրա անցեալը և ներկայն» Վ. Շ.-ի:—«Թափփիի երկրորդ նամակ»:

Այս փոքրիկ պատկերը ցոյց է տալիս որ «Մշակը» բոլորովին նոր բան էր մեզանում: Եւ այդ նորութեան արժէքը հասկանալու համար բաւական է համեմատել նրան «Մեղութիւն» մի քանի ամսվայ համարների հետ: Բայց սա այն բոլորը չէ, ինչ տալիս էր «Մշակը»: Ամենագլխաւորը մենք թողեցինք. Արագրի հոգին ու շունչը, նրա առաջնորդողները: «Մշակը» իւրաքանչյւր համարում տալիս էր առաջնորդող յօդուած, ուր քննվում էին հասարակական զանազան հարցեր: Մեր մամուլի պատմութեան մէջ «Մշակից» առաջ դուք չէք դանի զեկավարող յօդուածների այսպիսի առատութիւն, այսքան կանօնաւորութիւն: Առաջնորդողները, ինչպէս զիտենք, շատ չնշին բացառութիւններով, Արծրունին էր զրում: Նա չէր դնում ստորագրութիւն

այդ յօղուածների տակ, մինչդեռ ուրիշների գրած առաջնորդողները համարեա միշտ ուսնէին ստորագրութիւն։ «Մշակը» առաջին իսկ քայլից պարզում է իր գոյնը, առաջին իսկ քայլից ցոյց է տալիս որ ինքը մի պատերազմող, յարձակվող, տապալող օրդան է։ Ահա մեր առջև է «Մշակի» անդրանիկ առաջնորդողը. Նա ունի վերնադիք—«Երէկ», Այսօր և էգուց։ Ի՞նչ էր մեր երէկը, ի՞նչ է այսօրը և ի՞նչ պիտի լինի էգուցը։

I

Կար ժամանակ, երբ մենք Հայերս բաւականացնում էինք մեր ազգային փառասիրութեան ըզդացմունքը, յիշելով մեր փառաւոր անցեալը, մեր առասպելական սւանդութիւնները... Մեր ազգի վերաբերայ ուսումնասիրութեանը լրումն էինք տալիս ժամանակ առ ժամանակ կարդալով կամ Թերթելով մեր հին կեանքի մասին պատմական հետազոտութիւնները։

Հասարակութեան բարձր դասին պատկանող մանձից (մարդ Թէ կին) այսքան էլ չէր պահանջվում... նորանից պահանջվում էր միայն մեր հին պատմութիւնից քանի մի նշանաւոր անուններ գիտենալ, որ նա ժամանակ առ ժամանակ ուրիշների առաջ անգիր էր ասում, պահանջվում էր որ նա գուցէ լեզուն էլ շիմանալով, տարվայ այն ինչ տօններին եկեղեցի գնար... Նա պարծենում էր իր ազգի պատմութեամբ, բայց աշխատում էր իր երեխաների հետ

երբէք մայրենի լեզուով շխօսել, նա հպարտ էր իր հայրենիքի անցեալը յիշելով, բայց յանցանք էր համարում ժամանակակից հայրենակիցներին մտաւոր կամ նիւթական որեւէ; օգնութիւն հասցնելու... Նա ատում էր իր հայրենակիցները, նոցա մէջ մեծ պակասութիւններ զտնելով, եւ իրան բարոյապէս իր հայրենակիցներից բարձր զգալով, չէր կամնում մտածել նոցա այդ պակասութիւններից թժկելու միջոցների վերայ։

Ժողովուրդը տղէտ եւ մոլեռանդ էր։ Նա հայերէն զիտէր, բայց եկեղեցի յաճախելով շերմեռանդ աղօթում էր։ Նա հայ էր ասում իրան, բայց կօպէլը անզամ ինայում էր իր երեխայի համար հայերէն մի գիրք առնելու։

Նա ոչինչ չէր արդիւնաբերում Հայութեան համար, չէր հոգում Հայութեան մասին, բայց վրդովված հալածում էր այն երիտասարդին, որը... հեռանում էր հայութեան աւանդութիւններից... Նա ալս բաշելով ամեն օր զանգատվում էր իր հայրենակիցների պակասութիւնների վերայ, բայց միեւնոյն ժամանակ անզոյշ եւ վնասակար անձ էր համարում նորան, ով օրագրական կամ բեմական դրվագումը այդ պակասութիւնները ներկայացնում էր... Նա անզոն էր իր դրութեամբ, բայց անձնական Թշնամի էր համարում նոցա, որոնք վերանորդութիւն էին առաջարկում։

II

Երեկվայ օրը անցաւ։

Այսօր ամեն տեղ սկսում են փոքր ի շատէ հայերէն սովորել։

Հիմնվում են տարբական ուսումնարաններ, ժողովուրդը իր երեխանները ուսումնարան է ուղարկում, բարձր դասը ուղարկում է իր որդինները համալսարան... Գրաքառորդ եւ հնութեան յիշատակները երկրորդական դեր են խաղում,—այսօր մենք ունենք կենդանի լեզվով դրած օրագիրներ եւ գրքեր։ Ամեն մի հայ երեւում է իրք ազգասիրական ոգլով վառված։

Մի կողմից երեւեցան ազգասիրական բանաստեղծութիւններ, միևս կողմից հայրենական պատմութիւնից առած բեմական դրվագներ։

Բարձր ուսում առած երիտասարդները չափազանց բազմացան... Ազգասիրական ոգլով վառված, նոքա այնպիսի ուսման նիւղ են ընտրում իրանց համար, որ առանց ծանր աշխատանքի կարողանային ապահովել իրանց ապրուստը։

Էլի ինչ...»

Մենք վերջապէս սկսում ենք ըմբռնիլ ժամանակի պահանջմունքը, սկսում ենք թէ մեր ամեն գրվածներում եւ թէ բեմի վրայ ցոյց աալ ուրիշների (մանաւանդ առեւտրական դասի) պակասութիւնները... Մենք յափշտակմամբ յարձակվում ենք ծերերի դէմ, նոցա միակողմանի զարգացման, հասարակական անընդունակութեան եւ տգիտութեան պատճառով։ Մենք հասկացանք մեր դաստիարակութեան թերութիւնները, եւ ամենքս սկսեցինք (գոնէ այսպէս ենք կարծում) մանկավարժութեամբ պարապել...»

III

Բայց էպուցվայ օրը մօտենում է։
Այն երիտասարդները, որոնք բարձր ուսումնական յետոյ վերադարձան իրանց հայրենիքը,

որոնք մեր հնացած հասարակութեան մէջ լուսաւորութեան ներկայացուցիչներ են համարվում,—կատարեցին արդիօր իրանց պարտաւորութիւնը։

Նոցա դրօշակի վերայ գրած է լուսաւորութիւն իւն խօսքը, բայց զժբաղապէս մենք պէտք է խոստովաննենք որ նոցա պակաս է լուսաւորութեան առաքելութեան համար ամենանշաւոր գործիչ,—այն է աշխատանքը։

Նոքա բննադատում էին ժողովրդի առեւտրական դասը, բայց իրանց գործունէութիւնը եւ վարժունքը ոչ ոք մինչեւ այժմ չըննադատեց։ Նոքա յարձակվում էին ծերերի դէմ,—բայց նոցանից ոչ մէկը չը մտածեց որոշել հասարակութեան մէջ նորերի պարտաւորութիւնները։

Ես ասեցի, ԽIX դարի լուսաւորութեան գործը աշխատանքն է։ Այդ զաղափարը ժողովուրդը չէ ըմբռնում, իսկ լուսաւորութեան ներկայացուցիչները, մեզ մօտ օգուտ քաղելով նորա տղիտութենից հաւատացնում են նորան որ լուսաւորութիւնը նորա համար անմատչելի, անըմբռնելի զաղափար է... որ իր էութեամբ նա վերացական զաղափար է, իսկ արտաքին կեանքումը նա արտայայտվում է գեղեցիկ հագուստով եւ թղթի վերայ գրած վկայագրով... Ո՛չ, ասում ես ժողովրդին, լուսաւորութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ աշխատանք, եւ նոքա, որոնք լուսաւորութիւն են քարոզում քեզ, բայց իրանք չին ընտելացել աշխատանքին, մեղաւոր են իրանց խորմտանքի առաջ...»

Կզայ ժամանակ, երբ նոքա, որոնք պարտաւորութիւններ ունին, բայց չին կատարել այդ պարտաւորութիւնները, կինթարկվեն ապագայ սերունդի հասարակական դատաստանին։

Էզրուցվայ օրը պահանջում է փոքր սերունդի համար տարրական ուսում, ժողովրդի համար ժողովրդական գիտութիւն, ուսում առածների համար նիշդ գիտութեան ծանօթութիւն, հասարակութեան համար նիշդ գիտութիւնների վերայ հիմնած մտախորհութեան եղանակ,—ամենի համար աշխատանք:

Էզրուցվայ օրը պահանջում է բարձր ուսում ստացածներից ոչ թէ միայն ժողովրդի ամեն դասերի կենսական երեւոյթների խորը քննադատութիւն, այլ եւ իրանց սեփական անձի խղճմտարար անխոնչ անձնաբննութիւնը:

IV

Երէկ մենք կտակարանական ազդ էինք.
Այսօր մենք ազգասէրներ ենք.
Էզրուց մենք պէտք է աշխատողներ դառնանք:

Անդադար աշխատանք, ժողովրդի համար օգտաւէտ գործ պահանջող Արծրունին մեզ արդէն վաղուց ծանօթ է «Հայկական Աշխարհից»: Այդ աշխոյժ յօդուածը, որ այնքան գեղեցիկ կերպով պատկերացնում էր մեր անցեալի ևներկայի աղդասիրութիւնը, ինչպէս տեսնում էր, գրված է նոյն ոճով և ազդու, եռանդու շեշտով, ինչպէս Արծրունու նախկին շատ յօդուածները, իրեւ հրապարակախօսական ծրագիր բացարող մի յօդուած, այդ անդրանիկ առաջնորդողը բաւական պակասուոր է, քանի որ որոշ ու բացարձակ կեր-

պով չէ յայտնում թէ ինչ ուղղութեան պիտի հետեւէ «Մշակր», ինչ հարցերի պիտի ուշադրութիւն նուիրէ: Բայց այս պակասութիւնը—եթէ, ի հարկէ, համաձայն էք որ պակասութիւն է դա—առանձին մեծ նշանակութիւն չունի: Արծրունին սովորութիւն չունէր ասելու թէ ինչ պիտի անէ, բայց բայց միշտ պատմում էր թէ ինչ է արել: Սակայն այս առաջնորդողը ունի իր նորութիւնը, իր յատուկ նշանակութիւնը: Արծրունին այլ ևս ընդհանուր գատողութիւններով չէ բաւականանում, այժմ նա որոշում էր յարձակման կէտերը: Եւ առաջին կէտը անպարտածանաչ ինտելիգենցիան էր:

Ամենից առաջ Արծրունին կուր էր յայտարարում հայ ինտելիգենցիայի դէմ: Եւ այդ կուրը ընդունում է երկարատես, սիստեմական հալածանքի կերպարանք: Ինչու էր նա այդպէս վաղ և այդպէս սաստիկ թշնամութիւն մղում կրթված երիտասարդութեան դէմ: Պատճառները մասսամբ տեսանք վերեւում բերած յօդուածում: Բայց ահա երկրորդ համարի առաջնորդողն էլ, «Դուք և Մենք» վերնագրով, նոյն հարցյին է նուիրված և Արծրունին այսպէս է ամբողջացնում հակակրելի հայ ինտելիգենտի տիպը:

Շատ տնգամ, ասում է նա, պատահել

Է մեղ խօսել ձեզ հետ հասարակական պատկանութիւնների մասին: Մենք յարձակվում էինք, դատավիետում էինք, խոկ դուք, մի թեթև ժայռ պահելով ձեր դէմքի վրա, վերջ էիք տալիս մեր երկարաբանութեան, ասելով թէ մեր խօսակցութեան մէջ նորութիւն չը կայ, թէ դուք ինքններդ էլ լաւ զիտէք այդ բոլորը: Եւ գուք սկսում էիք ձեր սեփական նկարագրութիւնները, որոնք դերազանցում էին մեր ասածները: Կարծում էինք թէ մի նոր միտք էինք յայտնում ձեզ, բայց աեսնում էինք որ ձեզ համար դա հին իրողութիւն է: Կարծում էինք թէ ձեր ուշադրութիւնը դարձնում ենք ձեզ անյայտ մի հասարական պակասութեան վրա և յանհարծ դուքս էր դալիս որ գուք ձեր ապացուցներով և ունեցած փաստերով աւելի լուգարձակում էիք մեր աեսութիւնը, աւելի խառնում էիք մեր առւած դոյնները:

Մենք հակակրութիւն էինք յայտնում դէպի այն ազգը, որ կամակորութեամբ աշխատում է մոռանալ իր մայրենի լեզուն—դուք համաձայն էիք: Մենք դպուանք էինք ուղղում դէպի այն ընտանիքը, որ կարծես դիտմամբ արդելում է մայրենի լեզուն իր ընտանիքի մէջ, —և գուք արդարացի էիք դտնում մեր դպուանիքը: Ասում էինք ընթեր-

ցասիրութիւնը և ուսումնասիրութիւնը պակասում են մեզանում—համաձայն էիք: Հայ ընտանիքում տիրող ըննակալութեան դէմ էինք խօսում,—գուք հաստատում էիք: Հասարակութեան մէջ անսարքերութիւն է տիրում դէպի ամեն մի բարի սկզբնաւորութիւն: Դուք արդարացնում էիք մեր յուսահասական բողոքները այս առիթով: Հասարակական կեանք չը կայ մեզանում: Այսատանքի չէ ընտելացել հայը: Կրթութիւնից գուրի է նա: Սնչարժ ու հնամոլ է նա: Դուք ոչ մէկը չէիք հերքում, գուք ամեն բանի մէջ համաձայն էիք մեղ հետ:

Եւ մենք կարմրում էինք, մենք ամաչում էինք: Ո՞րքան միամիտն ենք եզել, ասում էինք, որ խօսում էինք ձեզ հետ այնպիսի բանների մասին, որոնք ձեզ էլ շատրայացնի էին: Ի՞նչ յանդգնութիւն մեր կողյայանի էին: Ի՞նչ յանդգնութիւն մեր կողմից սովորեցնելու ձեզ այն, ինչ դուք էլ զիտէք: Մի կողմից ամաչում էինք որ այսքան միամիտ ենք, միւս կողմից ուրախ էինք որ կան մեր հասարակութեան պակասութիւնները ճանաչողներ, որ մենք համախոհներ ունենք, որ կեանքի մէջ դոյնութիւն ունի ըողոք:

Մեր ուրախութիւնը այնքան անսահման էր, մենք անքան երջանիկ էինք, որ մի կողմ

թողնելով ամօթի զգացմունքը, մենք մեկնեցինք ձեզ մեր ձեռքը և ձեզ մեր ընկերակիցը համարելով, առաջարկում էինք միասին դործել, այս ինչ միջոցները դործադրել տըշփառութեան և անշարժութեան դէմ:

Այսուղ ահա մեզ սպասում էր մի ուրիշ աեսակ անակնկալութիւն: Դուք գանգատվում էիք թէ ձեր երեխաները չը գիտեն մայրենի լեզուն:—Յանձնեցէք նրանց կըրթութիւնը հայ ծխական դպրոցներին, ասացինք մենք: Դուք ժպտում էիք: Դուք ասում էիք, որ հայը, այն, առատաձեռն է, երբ պիտի գոհացում տայ իր փառամիրութեան, իսկ այնուղ, ուր նա պէտք է իր հայրենակիցների մատոր առաջադիմութեան օգնութիւն հասցնէ, նա սաստիկ ժլատ է: Մենք համարեցինք ձեր անձը մի բացառութիւն, յանդկնեցինք ձեզանից օգնութիւն խնդրել մի ծխական զպրոցի համար... Բայց դուք հեռացաք մեզանից և նատեցիք թուղթ խաղալու, ուր մեր պահանջած օժանդակութիւնից աւելի պիտի տանուլ տայիք: Շատ լաւ դիտէք, այն, որ հասարակական կեանք չը կայ մեղանում: Ուրեմն գործենք, ասում ենք մենք, զարթեցնենք հասարակական կարծիքը, տապենք գրքեր, հրատարակենք լըրադիր: Բայց դուք յայտնում էիք մեզ որ ու-

չինչ չէք կարող անել:—Լուսաւորութիւն չը կայ, —ուսումնարաններ հիմնենք: Իզուր է... պատասխանում էք դուք:—Հասարակական ընդհանուր շահեր չը կան, ուրեմն զարթեցնենք հասարակական պահանջները, որ թուղթ խազալու և բամբասելու տեղ հասարակական հարցերով զբազվենք: Բայց դուք թերահաւատութեամբ վեր էք քաշում ձեր ուսերը և հեռանում:—Ընթերցասիրութիւն չը կայ, ասում էք դուք, որովհետեւ մի կողմից հայը դեռ չէ ընտելացել մտաւոր աշխատանքին, իսկ միւս կողմից՝ կարդալու բան չը կայ: Ճիշտ է, ասում ենք մենք, ուրեմն եկէք զրենք, հիմնենք մի պարբերական թերթ, որ հայը սովորէ մտածել, աշխատել: Բայց դուք ծիծադրում էք և քիչ է մնում որ մեզ խելազար համարէք...

Եւ այսպէս մենք և դուք հասկանում ենք որ հասարակութիւնը պակասութիւններ ունի: Մենք փաստեր ենք ըերում, դուք մեզանից շատ փաստեր ունիք: Մենք գանգատվում ենք որ հասարակութիւնը մեռած է. դուք էլ էք գանգասավում այդ միենոյն առիթով:

Բայց մենք և դուք—միենոյն ենք: Մենք գանգատաներով չենք ուզում բաւականանալ կասենում ենք օգնութեան համեմ ժողո-

վրդին: Մեր պակասութիւնները տեսնելով, մենք ուզում ենք գործել նրանց դէմ. իսկ դուք, որ նոյնպէս տեսնում էք այդ միենոյն պակասութիւնները, թերահաւատութեամբ վեր էք քաշում ձեր ուսերը: Մենք ձեր բողոքները լսելով, ձեզանից օդնութիւն ենք խնդրում հասարակական կեանքի մէջ օգտաւէտ աշխատանքը առաջ տանելու համար. իսկ դուք, պատասխան չը տալով մեզ, նրատում էք թուզի խաղալու: Մենք չենք բաւականանում գանգատներով, մենք ուզում ենք և գործել դուք միանգամայն բաւական էք համարում գանգատվելը:

«Դուք խելագարված էք համարում նոցա, որոնք ներգործել են կամենում պակասութիւնների դէմ,—մենք մեր կողմից հասարակութեան անպէտք անդամներ ենք համարում նոցա, որոնք իրանց պարտաւորութիւն չեն համարում ներգործելու»:

Եւ մեր անպարտաճանաչ, թոյլ ու ահեկարող ինտելիգենցիայի այս հիանալի բնուրուշը Արծրունին վերջացնում էր հետեւեալ երկառզով.

Մենք զիտենք ով ենք մենք:
Գիտէք արդիօք ով էք դուքք:

Բայց այս գեռ բոլորը չէ: Արծրունին

շուտ-շնւտ վերադառնում էր այս տիպին և մերկացնում էր նրան զանազան կողմերից: Հետեւնք այդ մերկացնումներին:

№ 5-ի առաջնորդողը «Անինք թէ լինենք» վերնագիրն ունի. «Զգարգացած մարդիկներին յատուկ է—ասում է նա—նախըմբոնել իրաւունքները,—և ապա հասնել և պարաւառութիւնների հասկականալուն, այն էլ մի որեէ արտաքին հարուածի ազգեցութեան տակ»: Փոքրիկ տըղան, փողոցում տեսնելով զինորականին, մտածում է, երբ ես կը մեծանամ, զինուրական կը դառնամ: Փոքրիկ աղջիկը, նայելով փողոցով անցնող իր ամուսնու հետ թե թեր տուած ամենոջը, ասում է. երբ ես կը մեծանամ, նոյնպէս իմ ամուսնու հետ թե թեր տուած կանցնեմ փողոցով: Երեխանները ըմբռնում են որ պէտք է մի բան դառնան. նրանք հասկանում են որ իրանց իրաւունքն է մի բան դառնալ, իսկ թէ կան և պարտաւորութիւններ նրանց համար,—այդ անհասկանալի, անմատչելի է մնում:

Եւ երեխանների ծնողները միայն իրաւունքների զիտակցութիւնն են զարգացընում նրանց մէջ: Ե՞րբ էք տեսել որ մի հայր կամ մայր խօսէր իր երեխայի հետ ապադայուարտաւորութիւնների, կեանքի ծանր պարտ-

խայութիւնից մեղ տուած ուղղութիւնը սովորեցնում է մեղ ոչ թէ գործեր, այլ մինել: Մէկի հետ ծանօթանալով, մենք չենք ուղում իմանալ ինչ է անում նա, այլ հետաքրքրվում ենք թէ ինչ է նա: Հասարակութեան անդամները մեղ համար մարդիկ չեն, քաղաքացիներ չեն, այլ կանդիդատներ, ուսանողներ, աստիճանաւորներ, քահանաներ, զինուորականներ... Երեխայութիւնից մեղանում կազմվում, հասունանում է մի կատարելատիպ, մի իդէալ, այն է՝ դառնալ իսկ անելը եւ երեխայութիւնից այդ ուղղութիւնը արմատանում է մեր մէջ:

—Դուք սովորնում էք, հարցնում ես մի երիտասարդից:

—Այն, ես զիմնազիստ եմ, պատասխանում է նա:

—Դուք ուսանում էք, հարցնում ես ուրիշից:

—Այն, ես ուսանող եմ...

—Դուք ծառայնում էք:

—Այն, ես այս ինչ երկրորդ, կամ չորրորդ աստիճանի պաշտօնեայ եմ...

—Դուք ուսումը աւարտել էք:

—Այն, ես կանոնիդատ եմ,

եւ այլն...

Մեղ այնքան չէ հետաքրքրում մի բան անելը, որքան մի բան լինելը: Երե-

Երիտասարդը զնում է համալսարան: Նորածգողութիւնը մի բառով է նկարագրվում—դառնալ կանդիդատ:

Նորածնչացած զաղափարն է—աւարտելորդ դառնալ:

Եւ ոչ թէ սովորել որ իմանայ:

Հիմա երեակայեցէք այդպիսի մի աւարտած և մի բան գարձած երիտասարդին: Նա չէր ուղում սովորել որ միշտ սովորէ, իր ամբողջ կեանքում ձգտէ կատարելագործիվելու: Ոչ նա ուղում էր միայն աւարտել, որ մի բան գառնայ: Եւ ահա զարձաւ: Նա հասել է իր նպատակին: Նա դարձաւ—և այլ-

ևս կատարելագործվելու հարկաւորութիւնն չունի. նա դարձաւ—և տենչացած նպատակին հասել է: Հասել է, ուրեմն և կարող է անշարժ մնալ Եւ ահա հասարակութեան մէջ երեւում են երկու տեսակի մարզիկ. նրանք, որոնք մի բան դարձան և նրանք, որոնք չը դարձան: Փորձեցէք զործ ունենալ այդ երկուսի հետ:

Դուք, օրինակ, կառավարում էք մի զբարցոց, ուր ուսուցչութիւն են անում դարձածները: Դուք նկատում էք այդպիսիներից մէկին, որ նրա ընտրած մեթօդը մի քիչ հնացել է, որ պէտք է հետեւել այս ինչ նոր ուղղութեան: «Դարձած երիտասարդը չէ կարող, իրաւոնք չունի ձեզանից խրատ ընդունելու... նա իր ուսումը վերջացրած է, ուրեմն մտաւոր կատարելագործութեան նշանակիված տիպին հասած է: Նա չէ կարող փոխվել, նա իրաւոնք չունի... նա պարտաւոր է անշարժ մնալ, որովհետև նշանակված կատարելագործութեան հասել է»:

Ուրիշ օրինակ: Դուք խմբագիր էք. բերում են յօդուած, դուք առաջարկում էք փոփոխութիւններ, Բայց բերողը դարձածներից է: Նա չէ կարող փոխվել, ուրեմն և չէ կարող փոխել իր սանդագործութիւնը:

Բոլորովին ուրիշ բան է չը դարձա-

ծ ը: Նա լսում է, նա անում է, ռորովհետեւ նա ոչինչ չը դարձած, և ոչինչ չը դառնալով, սահման, չափ չունի իր մտաւոր առաջադիմութեան և կատարելագործութեան մէջ: Թէ զպրոցում և թէ զրականութեան մէջ նա պատրաստ է առաջ գնալ, կատարելագործվել անդադար...

Եւ ահա Արծրունու եղբակացութիւնները.

Մէկը ոչինչ չէ դառնել կեանքի մէջ...

Միւսը դառնել է:

Առաջինի իրաւունքն է կատարելագործվել... Երկրորդի զիսաւոր պարտաւորութիւնն է: միշտ անշարժ մնալ:

Եարժումը մեր պարտաւորութիւնն է:

Անշարժութիւնը մեր իրաւունքն է:

Մի ուրիշ տեղ, «Անընդունակութեան հերոսներ» առաջնորդողում (№ 9), Արծրունին դործ է ածում «մեր բարձր ուսում» ստացած աղէտ երիտասարդութիւնը» բառերը: Բայց այդպիսի երիտասարդութեան դէմ ուղղած աւելի սուր հետանք մենք կարդում ենք «երիտասարդներին խրատ» յօդուածում (№ 20): Այդ խրատը նա ուղղում է այն երիտասարդներին, որոնք վերջացրել են միջնակարգ զպրոցը և գնում են շարունակելու իրանց ուսումը բարձրագոյն զպրոցներում:

Դա ճանապարհ զնելու, ողջերթի խօսք է,
բայց որքան դառն ու կծու:

«Եթէ դուք, սիրելի երիտասարդներ, ուսում առ-
նելուց յիտոյ զիտաւորութիւնը չունէք վերադառնալ
ձեր հայրենիքը,—ես գործ չունիմ ձեզ հետ... ա-
սում եմ գործ չունիմ ձեզ հետ, որովհետեւ այդ դէպ-
րումը հասարակութեանը փոյթ չէ զուք ինչ ուղղու-
թիւն էք ընտրելու։ Խսկ նրանք, որոնք պիտի զառ-
նան հայրենիք, պարտաւոր են պատրաստվել այն-
պէս, ինչպէս հասարակութիւնն է պահանջում։

Բայց ինչ է պահանջում հասարակու-
թիւնը։ Ահա ծնողները ճանապարհ են դը-
նում իրանց որդիներին։ «Եթէ դուք հասա-
րակութեան ստորին կամ միջին դասին էք
պատկանում, ձեր հայրը ձեզ ճանապարհ
դցելով ասում է ձեզ. «Պնա լաւ ուսում առ,
աշխատիր, ատեսատատ ստացիր, որ մարդ
դառնաս, պատիւ ունենաս մարդիկների մէջ»։
—Եթէ դուք հասարակութեան բարձր դա-
սին էք պատկանում, ձեր հայրը ձեր հասցէին
միենոյնը ասելով, կարելի է փոքր ինչ աւել-
ի ծաղկած ոճով, աւելացնում է մէկ երկու
խօսք հասարակութեան մէջ նշանակու-
թեանը հասնելու պարտաւորութեան մա-
սին։

Եւ ահա այդ պահանջները կատարելու
իրաւունքը Սշխատեցէք ծանօթանալ ծոյլ

ու անդործ ուսանողների հետ։ Ամենեին
հարկաւոր չէ զիտութեամբ պարապել, բա-
ւական է քննութիւնից առաջ մի երկու ա-
միս դասեր սերտել, և հիանալի կերպով
քննութիւն կը տաք։ Ուրախ անցկացրէք ձեր
ժամանակը։ Դուք ձեր խղճմանքի առաջ էլ
արդար կը լինէք, մանաւանդ որ ձեր ստա-
ցած վկայագիրը լիովին բաւականացնում է
ձեր ծնողներին։ Սշխատեցէք հետո մնալ
օտար շրջանից, որպէս զի այստեղ չը ծանօ-
թանաք նոր մաքերի հետ և ստիպված չը լի-
նէք ձեր հետ տարած հրեշտաւոր նախապա-
շարմունքով լի ուղղութիւնը փոխել։ Մնա-
ցէք ձեր հայրենակիցների նեղ, սահմանա-
փակ շրջանում, այդպիսով գուք ապահով կը
լինէք որ հայրենիք վերադառնալով, գուք
ձեզ հետ կը բերէք միենոյն նախապաշար-
մանքը, միենոյն պակասութիւնները, միե-
նոյն կրքերը, հակումն դէպի ինարիգները,
ասելութիւն առաջագիմութեան, ամեն բա-
րի սկզբունքի գէմ։ Մտածեցէք զիսաւորա-
պէս ձեր նիւթական ապահովութեան մասին,
զատարկախօս համարելով նրանց, որոնք հա-
ւասացնում են ձեզ թէ ամեն մարդ իր հա-
սարակական սուրբ պարտաւորութիւնը պի-
տի, համարէ մարդկութեան օգուտ բերելը,
ապագային որեէ յեշատակ թողնելը։

Դուք վերադարձաք հայրենիք։ Այստեղ
աշխատեցէք հեռու պահել ձեզ ձեր հայրենիքներից ոչինչ գործ չը բռնէք նրանց հետ։ Բայց եթէ կամենում էք որեէ գործով կարվել նրանց հետ, մի վճռական քայլ անելուց առաջ լաւ մտածեցէք որ յարմարվէք նրանց ընաւորութեանը։ Անա հին սերունդը Նա անսխալական է իրան համարում. Նա ասում է որ մարդը այն ժամանակ միայն կարող է օգտական լինել հասարակութեան, եթր նրա ուղեղը ծերութիւնից այլ ևս ընդունակ չէ մի նոր միտք ըմբռնելու, մի նոր, անսովոր գործողութեան ենթարկվելու։ Նա ասում է. «Ամեն մարդ խելօք է իր որդուց, եթէ մինչև անդամ հայրը տղէտ լինէք, իսկ որդին դիտնական ու տշխատասէր։ Ուրեմն իզուր է գիտութեանը ծանօթանալ, իզուր է աշխատել, —որովհետեւ ինչքան և աշխատէք, ինչքան և թափէք ձեր ճիգն մտաւորապէս զարգանալու, —դուք դարձեալ ոչ թէ միայն ձեր հօրից խելօք չէք կարող լինել, բայց և նորան հաւասար չէք կարող լինել, —միայն այն պատճառով, որ նա ձեր հայրն է, իսկ դուք նորա որդին։»

Թողնենք, սակայն, հին սերունդը, գանք այժմ բարձր ուսում ստացած երիտասարդութեան։

Ճշմարիտ է, որ նորա մեր ծերերից աւելի զիտութիւն ունին — բայց նոցա բնաւորութիւնը շատ չէ զամազանվում հին սերունդից... այդպէս հեշտ չէ դարեւոր յատկութիւնները ջնջել, Եւ ինչի ջնջել... երբ հասարակութիւնը բաւական է իր նոր, առաջադիմ սերունդի մտաւոր դրութեամբ։

Մեր երիտասարդներից իւրաքանչիւրը իրան անսխալական է կարծում, ինչպէս եւ մեր ծերերը, միայն այն զամազանութեամբ, որ ծերը բացի իր անձից ուրիշ հեղինակութիւն չէ ճանաչում, — իսկ անձից ուրիշ հեղինակութիւնն է, անպայման ենթարկվում է մի որեւէ դիտնական հեղինակութեանը։

Հայրենիք վերադառնալուց յետոյ աշխատեցէք որքան կարելի է անմատչելի երեալ, աշխատեցէք աշքին թող փչել «Եթէ զիտութեան նշոյլ էլ չունէք, պիտի չափազանց դիտնական ձևացնէք ձեզ, եթէ փոքր ինչ հմտութիւն ունէք, ձևոք վիրցրէք համեստ ութիւնից։ Եթէ համեստ կը լինէք, ձեզ անպատճառ տղէտ կը կարծեն։ Համեստութիւնը պակասութիւն է։ Համեստութիւնը տպիտութեան նշան է։ Աւելորդ է որ դուք նուիրէք ձեզ անխոնջ աշխատանքին։ Սակայն ցոյց տուէք որ իրը թէ անդադար աշխատում էք։ Եթէ իսկապէս աշխատէք, — ձեզ չեն գնահատի։ Գնահատել ուրիշի ամենափոքր աշխատանքն անդամ կարող են մի-

այն նրանք, որոնք սովոր են իրանք աշխատելու:

Վերջապէս—ասում է Արծրունին—եթէ ճշմարիտ կամենում էք օգուտ թիրել ծեր հայրենակիցներին, աշխատեցէք նոցա համար հեռուկից... Այդպէս բումը աւելի նշանակութիւն կը ստանաք:

Իսկ ամենից շատ նոցա աչքում նշանակութիւն կը ստանաք եւ տաղանդաւոր մարդ անդամ կը հոչչակիցը,—երբ կը մտոնէք...

Դիմննք այժմ Արծրունու մի այլ յօդուածին—«Լսել են թէ Ալին մեռել է, բայց չն իմացել որ Ալին...» (№ 30): Ի՞նչ են լսել:—Լսել են որ ռամեն երկրի, ամեն հասարամում մէջ երիտասարդութիւնն է կազկան ոյժը: Այն, դա միանդամայն ճիշտ է: Մարդը երիտասարդութեան հասակում է գործում, պայզարերում. այդպէս են ցոյց տալիս նոյն իսկ նշանաւոր մարդկանց կենհասակը մարդու կեանքի առաջաբանն է, երիտասարդութիւնից յետոյ եկող հասակը—կեանքի վերջաբանն է: Ուրեմն իսկական, շատ է առած և նրանից շատ էլ պիտի պահանջմի:

Եւ ահա մեր երիտասարդութիւնը պիտէ որ ամեն տեղ երիտասարդութիւնը աղզի բարոյական և մտաւոր ոյժն է, բայց չը զիտէ որ այս բնական արտօնութեան հետ ոկապված են և անձնական պարտաւորութիւնները,—աշխատանք, գիտութիւն, աշխատասիրութեան մէջ յաջորդութիւն և տեսողութիւն: Դուք կամենում էք որ ձեզ պատուեն իբրև ոյժ,—աշխատեցէք ուրեմն:

«Աշխատեցէք մեփականացնել ձեզ երիտասարդութեան յափշտակիչ կողմերը, աշխատանք, մէր դէպի գիտութիւն,—թողեցէք ինտրիգաներ, ամեն լուսաւոր երեսյթի առջև սե, կեղտոտ նախանձ, ձեր խորին տըղիտութիւնից առաջ եկած ինքնահաւանութիւնը, դատարկախօսութիւն և գարտակագրութիւն:»

Բայց պահելով այդ անպիտան յատկութիւնները, դուք պահանջում էք որ ձեզ պատուեն, —զարմանափ պահանջողութիւն:

Ես ասացի, երիտասարդութիւնը միակ հասակ է, երբ մարդս գործող է: Բայց եթէ երիտասարդութիւնը հասարակութեան համար ապարդիւն կերպով, անդործութեան մէջ է անցնում իր ժամանակը, իրաւունք ունի նա վերաբերել իրան այն յատկութիւնը, որ ինքն չունի, պարծենալ ուրիշների արձանաւորութեամբ:

Ամեն տեղ երիտասարդներն են եղիլ առաջնոր-

դող մաս հասարակութեան, ասում էք դուք, ուստի
նոցա պիտի պատուել...

Բայց դուք ինչի չը կարողացաք դառնալ հա-
սարակութեան առաջնորդող ոյժ,—ուրիշն կարծեմ
այ առ նառ չը կայ ձեզ պատուելու:

Այսպիսի լեզու գեռ ոչ ոք չէր դործ ածել
մեր մասնութի մէջ, այսքան խոր, բազմակող-
մանի մերկացումներ ոչ ոք չէր արել: Ար-
շաւանքը երիտասարդութեան դէմ այնքան
խիստ է, այնքան անողորմ, որ գոք առա-
ջին անգամից կարծում էք թէ Արծրունին
չէր կամենայ որ երիտասարդութիւն լինի
հայերի մէջ, Բայց դա, ի հարկէ, սխալ տպա-
ւորութիւն կը լինէր: Կարեք չը կայ որ մենք
նորից բացատրենք թէ ինչո՞ւ էր Արծրու-
նին յարձակվում երիտասարդութեան դէմ.
մեր բերած կրակուտ յօդուածների իւրաքան-
չիւր տողը շատ պարզ ցոյց է տալիս թէ
ինչ էր պահանջում Արծրունին: Իրական
ապշեցնող ճշմարտութիւններ են նստած
նրա այդ համարձակ, աներկիւղ տողերի մէջ,
այն անհաւատ պատերազմի մէջ, որ նա յայ-
տարարեց քարձք ուսում ստացած, բայց
տպէտա իստելիւնցից դէմ: Եւ յարձակու-
ղական այդ խստութիւնը, չը ինայելու այդ
ահապին եռանդը բգլում էին Արծրունու

այն խոր համոզմունքից թէ՝ «Մարակով չը
խփես,—բան չի դուրս գայ»:

Այդ խօսքերը նրա մի առաջնորդողի վեր-
նազիրն են կազմում (№ 16): Այդտեղ Արծ-
րունին բացատրում է թէ ինչ է մարակողա-
կան ուղղութիւնը, թէ ինչ օգուաններ է բե-
րում յարձակողական, անինայ մերկացնող,
հարուածող հրապարակախօսութիւնը:

Անզլիացի երկելի գիտնական Զօն Սախ-
արտ Միլլը—այսպէս է նա սկսում այդ յօդ-
ուածը—իր գրուածներից մէկի մէջ ասում է.
«Կենսատիան միջոցների հեշտութիւնը չէ, որ
ծնում է չարժում, այլ կեանքի դժուարու-
թիւնները, կեանքի մէջ պատահող արգելք-
ները առաջացնում են ինքնուրոցնութիւն և
հնաբազիատութիւն»: Այս խօսքերը ճշմարտու-
թիւն են թէ անհատի և թէ ամբողջ հասա-
րակութիւնների վերաբերմամբ: Եւ Արծրու-
նին մի չարք աղացոյցներ է բերում Եւրօ-
պայի և Ամերիկայի քաղաքական կեանքից:
Աւստրիան մի բռնակալ պետութիւն էր:
1859 և 1866 թւականների պատերազմները,
որոնց մէջ նա յաղթվեց, այն հարուածներն
էին, որոնք ուշքի բերին այդ բանակալու-
թիւնը և նա դարձաւ աղատամիտ, սահմա-
նադրական պետութիւն: Հիւսիսային Ամե-
րիկան պատերազմ սկսեց Հարաւայինի դէմ,

որովհեան վերջինս չէր ուղում լսել անդամ նեղների աղատութեան մասին։ Պատերազմը ահաւոր էր, յամառ, արիւնահեղ։ Հարաւը սաստիկ պարառութիւն կրեց և այդ ահեղ հարուածի աղքեցութեան տակ յայտարարեց հաւասարութիւն նեղների և սպիտակների իրաւունքների մէջ։ Բայց աւելի խրատականը նորագոյն, թարմ օրինակն էր Մինչև պրուսական պատերազմը Թրանսիան իրան անսիալական էր համարում քաղաքական գործերի մէջ, իր գորքը, իր զօրավարներին անյաղթելի էր կարծում։ Աղդային սնափառութիւնը այն աստիճան զարդացած էր, որ ամեն բանի մէջ Թրանսիան բոլոր աղքերից բարձր էր համարում իրան. նրա համար կատարեալ էր իր ժողովրդական դարոցը, գրականութեան մէջ նա միայն իրան էր ճանաչում, իր երկրի երեսյթներն էր ուսումնասիրում, ասպարգիւն և ամօթ համարելով ուրիշ երկիրների զիստութիւնից և գրականութիւնից, ուրիշ աղքերի փորձից օգուտ քաղելը։ Եկաւ սարսափելի պատերազմը, Թրանսիան շարաչար յաղթվեց, սոսկալի ցընցումների ենթարկվեց։ Այդ հարուածից նա սկսեց կերպարանափոխվել. մացրեց հանրապետութիւն, սկսեց գասեր առնել ուրիշ աղքերից, բուժել իր ներքին ցաւերը։

Աղքերի վերաբերմամբ այս անսխալ օրէնքը անսխալ է հասարակութեան առանձին գասերի վերաբերմամբ։ «Ի՞նչպէս մի տէրութիւն դառնում է առաջազէմ, վերանորոգում է իրան, աղատում է սարուկներին, — երբ պատերազմի մէջ յաղթված է լինում, երբ սաստիկ հարուած է սասնում, այնպէս էլ ժողովրդի մի ամբողջ դաս դառնում է աղատամիտ, դիմում է անկախ աշխատանքին, — երբ կորցնում է իր հնագարեան իրաւունքները»։

Թողնելով ընդհանուր մաքերը, մի հայեցք զցենք մեր հայ կեանքին ներքին գործերի վրա, այսուեղ էլ միևնոյն երեսյթը կը տեսնենք։ «Ամեն բան անշարժ է մեղանում, մեր օրագրութիւնը ննջում է քաղցր քնով, ուսումնը հին, փտած մեթօդով է դաս տվյլում, բարձր ուսման երիտասարդները քանի մի տարի է որ վերադարձել են հայրենիքը, բայց չեն մտածում ժողովիել, մի խումբ կազմել, օրագիր հրատարակել, Մի տարի առաջ յայտնում են թէ խմբագրութիւն են կազմել — բայց ոչ մի խթան չունենալով, — կրկին խմբագրութիւնը քանդվում է հնոքա, որոնք խօսացել են ժողովրդին լուսաւորել, իրանց համար հանգիստ նստում են պանդոկներում և սկսում են թուղթ խաղալ»։

Խթան չը կայ, սթափեցնող հարուած չը կայ: Եւ Արծրունին շարունակում է.

Ինձ թւում է թէ մի տեսակ մարդիկներից յետագայ խօսքեր եմ լուում. «Մենք անշարժ ենք, մենք հանդիստ ենք, որովհետև մեզ հանդիստ են թողնում: Բայց լինէք խ թ ան մեզ համար, յարձակվեցէք մեզ վերա, հայհոյեցէք մեզ,— եւ մենք զործ կը շինենք: Հայհոյեցէք մեզ,— մենք ուսումնարան կը հիմնենք, յարձակվեցէք մեր պակասութիւնների վերա, — եւ մենք խմբագրութիւն կը կազմենք, եւ լրագիր կը հրատարակենք»:

Մեր հասարակութեան մէջ երկու անշարժ տարրեր կան, որոնք պահանջում են խթան. մեր ծերեր, եւ մեր պառաւ երիտասարդութեանը:

Ցաւալի է խոստովանել, որ մարդկային հասարակութեան մէջ կան երեւոյթներ, որոնց մէջ շարժում առաջացնել կարելի է միայն բարոյական մտքակի ազդեցութեամբ:

Մի հիմնարկութիւն կալ միայն աշխարհիս երեսին, որի դէմ անզօր են ամեն տեսակ բարոյական մտքականը, — այդ շուօմի անսխալական պապի իշխանութիւնն է:

Աշխատենք երբէք չնմանիլ նորան:

Ցաւալի է խոստովանել որ բարոյական մտքակի ազդեցութեամբ է շարժում առաջանում: Եւ Գրիգոր Արծրունին երկու համարից յետոյ սախակված էր մի այդպիսի ցաւալի խոստովանութիւն անել: «Ի՞նչ անենք»

(№ 18) հարցնում է նա: — Յարձակվում ենք երիտասարդութեան վրա, ասում են թէ բաւական է որքան յարձակվեցաք, գրում ենք ուրիշ նիւթերի վրա, — չեն կարդում:

Նա բերում է «Մշակի» պատմութիւնը, իր պատմութիւնը: «Հայկական Աշխարհի» մէջ 1870-ին տպված իր ասպաւորութիւնները, ինչպէս զիտենք, ունեին մի կէտա բարձր ուսում ստացածներից մէկը ասել էր Արծրունուն. «Փա՞ռ նորակով էք դուք հայերէն զրում. ստորին ժողովուրդը հայերէն չը զիտէ, իսկ մենք, բարձր ուսում ստացածներս, հարկաւորութիւն չունենք ձեր զրուածքները կարգալու, որովհետեւ ինչ որ դուք զիտէք, մենք էլ զիտենք, գուք մեզ նոր բան սովորեցնել չեք կարող: Բայց եթէ մենք նոր բան սովորել կը կամենանք, — կը զիմնենք ուրիշ լեզուներով հրատարակվող զրքերին և լրագիրներին»:

Հայ զրովը, ասում է Արծրունին, յուսահատվեց, կամենում էր թողնել զրելը, ոկտեգ համոզվել թէ ինքը խելազարված է: Միւս կողմից էլ հայ խմբագիրներն ասում էին. «Դու իզուր նեղութիւն ես քաշում յօդուածներ զրելու, որովհետեւ նոր բան ասել չես կարող բոլորը արդէն ասվեցաւ. «Հիւսիսափայլ», «Կոռունկ» և «Մեղուն» ամեն բան

ասացին, ամեն բան զրեցին. ուրեմն քո
զբաժները կրկնութիւն կը լինեն:

Հայ զրողը սպասեց, ծանօթացաւ հասարակու-
թեան հետ, մտածեց: Եւ հասկացաւ որ գուցէ նա
խելափարփած չէ, որ գուցէ նոր բաներ էլ ասել կարելի
է. նա իմացաւ որ երիտասարդութիւնը, որը պար-
ծենում է թէ ամեն բան զիտէ, ոչ թէ միայն հայե-
րէն չէ կարդում, բայց եւ առհասարակ չէ կարդում:
Եւրոպական լիզուները նորա մեծ մասին այնքան
ծանօթ են, որքան մեզ ցինական լիզուն. միակ լի-
զուն, որին նա հմուտ է,—ուստի կը լիզով էլ բան
չեն կարդում...

Սպասեցէք... ասաց զրողը, որի զիմումը յան-
կարծ ծնվեցաւ մինոր միտք: Դուք ասում էք թէ հար-
կաւորութիւն չունէք կարդալու, որովհետեւ ամեն բան
զիտէք, եւ այդ նշաբարութեան մէջ համոզփած լի-
նելով, բոլորովին ոչինչ եւ ոչ մի լիզով չէք կար-
դում... սպասեցէք, ես ձեզ կը ստիպեմ կարդալ...
Ես ձեզ կը նկարազեմ յօդուածներիս մէջ, ձեզ, որ
երեւում էք անսատչիլի, անսիսալական, որ ձեր ան-
շարժութեան մէջ մնալով ձեր սեփական աչքի եւ
հասարակութեան առաջ կատարեալ էք երեւում...
Ես ձեզ կը ստիպեմ կարդալ...:

Գրողը սկսեց նկարագրել երիտասարդու-
թիւնը, և սկսեցին կարդալ այդ յօդուածնե-
րը: Բայց գտնվեցան մարդիկ, որոնք ասա-
ցին. «բաւական է յարձակվել երիտասար-
դութեան վրա. դրեցք ուրիշ բաների մա-

սին»: Գրողը թողեց իր յարձակումները,
սկսեց զրել անտեսական հարցերի մասին:
Բայց երիտասարդութիւնը հասկանում է իր
պարտաւորութիւնները: «Կարելի՞ է յուսակ-
որ նա կը կարդայ այնպիսի յօդուածներ, որ-
տեղեց իր մասաւոր զարդացման համար օ-
գուտ քաղելով, նա կը բաւականանայ սառն
զատողութիւններով, և երեխայի պէս չի ըս-
պասի մի այնպիսի զրված, որ մինէր խթան՝
ընթերցասիրելու համար»:

«Մշակը» արդէն տուել էր՝ մի շարք յօ-
դուածներ, ուր արձարծվում էին անտեսա-
կան, զպրոցական և այլ հարցեր: Կարդա-
ցին այդ յօդուածները:—Ոչ: «Ուրեմն զրողը
չէ սիսալվել... Մինչի որ նոցա վերա չը յար-
ձակվէք, —նոքա չեն կարդայ: Ստեղծվում է
մի զրութիւն, որ այսպէս է ձևակերպում
Արծրունին:

Գրենք նոցա դէմ,—աղաղակում են...
Զը զրենք նոցա դէմ, այլ ուրիշ նիւթի վերա
խօսենք, —չեն կարդում:
Հիմի ինչ անենք:

Մոռում էր անել երկուսն էլ. թէ յարձակ-
վել և թէ զրել ուրիշ նիւթերի վրա: Մենք
առ այժմ յարձակումներին ենք հետեւում,
ուստի զեռ թողնենք ուրիշ նիւթերը: Յար-

ձակվել և շարունակ մի կէտի, մի դասակարգի, միայն երիտասարդութեան վրա յարձակվուլ, արգեօք միակողմանիութիւն չէր սա, անարդարութիւն չէր: Արծրունին, ի հարկէ, այդպիսի բան չէր անի: Նրա յարձակումների առարկան միայն երիտասարդութիւնը չէր: Ահա ինչպէս է նա սկսում «Ո՞վ մնաց» առաջնորդողը (№ 24).

Երբ «Մշակի» մէջ հրատարակվեցաւ յօդփածների մի շարք, որտեղ ըննութեան տակ էր ծզվում մեր ուսեալ երիտասարդութիւնը, —գուցէ շատերը ուրախացան, մանաւանդ նորա, որոնք պատկանում էին հին սերունդին...»

Երիտասարդները աղաղակեցին, իսկ ծերերը անչափ բաւական էին, որովհետեւ չէին սպասում, որ կը գայ նոցա հերթը:

Հերթը հասաւ եւ նոցա:

Եւ իրաւ, հին սերունդը պակաս չէր հայածվում Արծրունու զրցից: Այն իսկ յօդուածներում, որոնք ուղղված էին անպատճառաւ երիտասարդութեան դէմ, հին սերունդն էլ ենթարկվում էր նոյնքան անողորմ գատապարտութեան (օրինակ, «Երիտասարդներին խրառ յօդուածում»): Բայց կան յատկապէս այդ սերունդի համար զրկած յօդուածներ էին Այսպէս, «Նոքա» յօդուածում (№ 12) նա նուրից յարձակվում է ծնողական բոնութեան

վրա, որի մասին այնքան շատ զրել էր և «Հայկական Աշխարհում»: Գրաւառապէս ի նկատի են առնվում այդաեղ այն ծնողները, որոնք բարձր ուսում են տալիս իրանց որդիներին և յետոյ զարմանում են, վրգովզում են որ որդիները իրանց պէս չեն մտածում:

«Ի՞նչ... ես քեզ դաստիարակեցի, ես քեզ կրթութիւն տուեցի, ասում են նոքա, ես քեզ համար չխնայեցի իմ գրամը, ես կարելի է զրկիցայ իմ անձի համար անհրաժեշտ միջոցներից, — և զու համարձակվում ես իմ պէս չմտածել, իմ պէս չխօսել, աշխարհի բուլոր երեսյթների վերա ինձ նման հայեացքներ չտնենալ... ես քեզ օտար երկիրներ ուղարկեցի իմ փողովս, իսկ զու իմ գաղափարները չես հաւանում, ինձ հակառակում ես...»:

Տարօրինակ երեսյթ: Նրանք պատճառ են զարձել, որ իրանց որդիները կրթվեն օտար, հեռու տեղերում, աղատամիտ շրջաններում գաստիարակվեն և ապա զարմանում են որ իրանց որդիները աղատամիտ, առաջապէս զրցուրս նկան: Նրանք վրգովզում են որ երիտասարդը լուսաւորվեց, սկսում են հալածել նրան, աշխատում են ոչնչացնել նրա մէջ ամեն մի լուսաւոր միտք: Եթէ այդպէս է, էլ ինչու են ուղարկում իրանց որդիներին

լուսաւորվելու։ Աւելի լաւ չէր լինի, աւելի հետեւղական չէր լինի դրկել նրանց ուսումքը, թողնել անշարժ ու անկիրթ։

Ոչ, այդպէս էլ չեն կարող անել ծնողները Ես ուրիշների առաջ պիտի ցոյց տամ թէ սիրում եմ լուսաւորութիւնը, թէ հաւկանում եմ ուսման կարեւորութիւնը, պատռում եմ գիտութիւնը, առաջադէմ եմ, ուստի և ուզարկում եմ իմ որդիներին արտասահման կամ Ռուսաստան։ Իսկ տան մէջ ինձ տեսնող չը կայ, այնտեղ ես կեղծելու կարիք չունեմ, հարկաւոր չէ որ ես երեամ այն, ինչ որ չեմ... ես կարող եմ այնտեղ բռնաւոր լինել, հալածել, ճնշել, ատել նորութիւնը։

Դուքսը ես ազատամիտ եմ,—տանը բռնաւոր, դուքսը առաջադէմ եմ,—տանը հնամոլ, դուքսը ես բողոքում եմ լստ սկզբին ամէն բռնաւորութեան դէմ, —տանը ճնշում եմ, հալածում եմ, ոչնչացնում եմ, մեղնում եմ ինձ շրջապատող կեանքը։ Դուքսը ես համբերող եմ դէպի ամեն համոզմունք—տանը միայն համոզմունքը, որ ճանաչում եմ, —իմ սեպիական համոզմունքս է... Տանը ոչ որ չէ տեսնում, մեզ... ուրիմն հտածենք, ճնշենք, բռնադատենք, հայ-հոյենք, անձնապաշտ լինենք մինչեւ խելազարութիւն, հոռմէական պապի պէս տանը մեր ոտները պաչ անելու... ամեն անհատական միտք ոտնակոխ անենք... մեզ ոչ որ չէ տեսնում, —մենք տանն ենք։

Բայց ահա հին սերունդը ասում է. Պուհերքեցիր ամեն բան, զո՞նէ պատուիր մի բան, այն է անցեալը։

Դուք մեզանից պահանջում էք պատիւ դէպի անցեալը, պատասխանում եմ ես... Նատ գեղեցիկ... Ուրիմն տուեցէք մեզ իրաւունք ձեզանից պահանցել պատիւ դէպի ապա գ ա ն։

Անցեալը նոցա էք պատկանում, նորա էին կառավարում հասարակութիւնը, նորա էին ուղղութիւն տալիս հասարակական կարծիքին, նորա էին խաղում զիմաւոր դիր, նորա էին գործող անձինք։ Բայց անցեալը անցաւ։ Ապագան մեզ է պատկանում... Նորա պատիւ են պահանջում իրանց համար, —որովհետեւ նորա անց եւ ալ են. —իսկ մինք պատիւ ենք պահանջում մեզ համար, —որովհետեւ մինք ապա գ ա յ ենք։

Ինչ կամենան ասեն, ինչ կամենան անեն, —պապան մեզ է պատկանում։ Նորա մեր ծեռքերից չեն կարող լիւել նորան. Նա մեզ է պատկանում իր բոլոր առաջադէմ գպումներով, իր իրաւունքներով...։

Այդ իրաւունքներից մինը պիտի լինի եւ այն, որ մենք նոցա ամեն արած գործերը պիտի քննադատենք, օգուտ քաղելով թէ նոցա պակասութիւններից, թէ արած սխալներից, որ կարողանանք նոցա ենթարկելու ապագայ սերունդների հասարակական դատաստանին։

Ահա մի քանի գծեր էլ հայի բնաւորութիւնից, նկարագրված «Սնընդունակութեան Հերոսներ» առաջնորդողում։ Այստեղ Արծ-

բունին մտրակում է մի իսկ որ անձունի աշխարհայեցողաթիւն։ Գրովը քննում է զանազան հարցեր, այսօր նա մի մանկավարժական պահանջ է առաջարկում, վազը քաղաքական գրութիւնն է քննադատում կամ մի տնտեսական-առևտորական հարց է գնում։ Միթէ կարնի է ասել թէ գրովը գրանով նպատակ ունի մանկավարժ դառնալ, քաղաքական գիրք բռնել կամ պաշտօն ստանալ։ Մեզանում այդպէս են դատում։ Բայց միթէ մերը է որ մի մարդ, ընդունակութիւն ցոյց տալով մի բանի մէջ, առաջանայ, ստանձնէ այդ գործի վեկավարութիւնը։ Այդ էլ չի լինի մեր մէջ։ Իւրաքանչիւր ազգ իր յատկութիւնն ունի. բայց կայ մի ընդհանուր յատկութիւնն ունի, որ բոլոր ազգերն ունեն, այն է՝ պարծենալ իրանց փոքր ի շատէ յայտնի մարդիկներով, ուրախանալ իրանց հասարակութեան մէջ յայտնվող առաջադիմութեան նըշոյներով։ Միայն մի ազգ կայ, որ այդ յատկութիւնից զուրկ է և դա հայ ազդն է։

Մեր ազգի մէջ մի որեւէ քանով յայտնվել, նշանակում է անհաճելի լինել իր հայրենակիցներին։ Իւրաքանչիւր հայը իր անձնական թշնամի է համար ու մ այն հայրենակցին, որը հասարակական գործունեութեան ասպարէզի մի որեւէ նիւղի մէջ յայտնվում է։

Ինչու է այսպէս։ Ամեն էակ, տպէտ թէ լուսաւորված, գոյութեան կոփւ է մղում։ Լուսաւորվածը կուռում է կատարելազործելով իր անձը, յարմարվելով ժամանակի պահանջին և առաջադիմութեան ընթացքին։ Տղէտը այդպէս չէ կարող անել, մինչև որ չը լուսաւորվի։ Իսկ մնալով տղէտ, նա միայն մի կերպով կարող է գոյութեան կոփւ մղել, այն է արգելելով ուրիշներին առաջ գնալու։

Եթէ ես ինքս միջոց եւ ընդունակութիւն չունիմ առաջ գնալու, — ես գոնէ կարգելիմ ուրիշի առաջադիմութիւնը։ Սա ինձ համար կինսական խնդիրն է։

Ես ընդունակ չեմ սռաջ գնալու, փոխվելու, կատարելազործվելու, — բայց ինձ հարկաւոր է դարձեալ ապրել, ինձ հարկաւոր է ուտել, խմել... Թուղթ խաղալ... Խոկ այժմեան ժամանակը պահանջում է, որ ես միայն այն պայմանով ապրեմ, որ կարողանամ փոխվել, կատարելազործվել, աշխատել։

Բայց այս բոլորը ես չեմ կարող անել, — ուրիմն պիտի գրկվեմ ապրելու իրաւունքից, կտոր հացից... Թուղթ խաղալու սովորութիւնից...»

Հետեւապէս ես պիտի ատեմ այն մարդին, որը ինձ առաջարկում է վերանորոգութիւն, գէպի կատարելազործութեան ծգուումը, — կամ այն մարդին, որը ինձ առաջարկում է մի նոր միտք։ Այսպիսի մարդին ես պիտի համարեմ իմ անձնական թշնամի։

Ինձ առաջարկում էք փոխվել, իսկ ես չեմ կարող փոխվել։ Ուրեմն, եթէ չը փոխվեմ, պիտի ծնդ տամ իմ տեղը հասարակութեան մէջ, պիտի զրկվեմ ապրելու իրաւունքից...»

Բայց բնութեան օրէնքի համեմատ, իս պիտի կուեմ գոյութեանս համար... Ուրիշ միջոց չը կայ... Ես ոչ թէ միայն պիտի ատեմ,—այլ եւ պիտի վնասեմ առաջադիմութիւն բարողող մարդին, այն ատելի առաջադիմութիւնը... որը ինձ համար անհասանելի է...

Այդ դիմադրութեան, այդ ատելութեան մէջ հայը հերոսութեան կարող է հասնել: Բայց ի՞նչ տեսակ հերոս է նա:—Անրնդունակութեան հերոս:

Այդպէս ահա, Արծրունին միայն երիտասարդութեան դէմ չէր արշաւանք սկսել: Նա հարուածում էր և միւս գասակարդերը: Ի՞նչ էր դուրս դաշխա:—Դուրս էր գալիս որ նա հայութեան մէջ ոչինչ լաւ բան չէր գանում: Այդ հարցովն է նա զբաղվում վերոցիշեալ «Ո՞վ մնաց» յօդուածում, յօդուած, որ Արծրունու լաւագոյն զրուածներից մէկն է և որի հետ արժէ շատ մօափկուց ծանօթանալ:

Երբ հարուածում էինք երիտասարդութիւնը—ասում է նա, —ուրախանում էր հին սերունդը: Բայց երբ հերթը հասաւ և հին սերունդին, երբ նրա պակասութիւններն էլ անողորմ կերպով սկսեցինք մերկացնել, լսվեցին նրա կողմից ձայներ. «Երիտասարդութեան վրա յարձակվել շատ բնական է, որովհետեւ նա մի բան չէ. բայց նրա վրա յար-

ձակվելուց յետոյ մեզ վրա էլ յարձակվել, ոչինչ չը ճանաչել, ամեն բան հերքել... թէ հներին և թէ նորերին քննադատել... Էլ ով մնաց: Միենոյն կերպով գատում է և երիտասարդութիւնը ցոյց տալ,—այդ հասկանալի է, բայց մեզ էլ բանի տեղ չը դնել... Էլ ով մնաց», ասում է նա:

Ո՞վ մնաց Ահա այս հարցը փայլուն կերպով վերլուծում է Արծրունին, բացատրելով նախ և առաջ թէ ովքեր են այդպէս ասող ներբւ:

Երբ իր պատմական ընթացքում հայը զանազան անաջողութիւնները եւ չաշչարանքները կրելուց յետոյ, մանմետական տարրի անողորմ եւ բարբարս բռնաւորութեան ծեռքից վերջին հարուածը ստանալուց յետոյ կորցրեց մինչեւ անգամ իր մայրէնի հողու կերա ապրելու իրաւունքը, —նա սկսեց խմբովին զաղթել զանազան ուրիշ երկրները: Հա, որ մնում էր իր հայրենիքում, ստրկանում էր եւ քթամտանում էր մանմետական ազգեցութեան տակ, —նա որ զաղթում էր թոյլ եւ անպաշտպան օտարութեան մէջ, բնականապէս ընտելանում էր այն ոգուն, որ յատկանիշ է զժբախտութեան մէջ միծացած եւ զանազան հալածմունքներին ենթարկված զաղթական մարդիկներին:

Հայրենիքում մնացողները, ճիշտ է, մահմեղական լուծի տակ ճնշված էին, բայց

դարձեալ իրանց մայրենի հողի վրա և իրանց հասարակութեան մէջ էին ապրում, ուստի պահեցին մի թանկագին յատկութիւն—հ առարակական ողի: Նրանք ստրկանում էին, այդ ճշմարիտ է, բայց վիճակը ամենքի համար մի էր. Նրանք իրանց հայրենիքի և հայրենակիցների հետ կապված մնալով, բաժանում էին ընդհանուր վիճակը, ընդհանուր գժբախտութիւնը:

Իսկ զաղթականը, որ փախչում է ստրկութիւնից եւ հալածանքներից, բնականապէս կռւում է իր դոյցութեան համար: Նա մտածում է միայն իր անձի վերա, նա հոգում է միայն իր մասին: Նորան պակաս է ուրեմն քաղաքացու զիխաւոր յատկութիւնը—հասարակական առարկանը: Նա դառնում է եսական, փոյթ չէ նորա համար իր նմանների դրութիւնը, իր հայրենակիցների վիճակը: Նա նոցանից փախչում է, որ փրկէ իր անձը: Նա իր հայրենիքից միայն իր ընտանիքը իր հետ է առնում: Այդ է պատճառ, որ հրէսների, հայերի, յօյների եւ ապա նման զաղթականների մօտ հայր են ի քը նշանակութիւն չունի, իսկ ընտանիքը մեծ դեր է խաղում:

Դէափի իր հայրենակիցները նա բնականապէս դառնում է անտարեր, նա կորցնում է հասարակական ողի: Դէափի օտարները, որոնք արհամարհում են նորան, նա դառնում է խոնարհ, պահելով հայրենիքից իր հետ դուրս քերած ստրկային յատկութիւնը եւ իրան անպաշտպան գտնելով օտարութեան մէջ: Նորան ամեն տեղ արհամարհում են, — նա էլ

փոքր առ փոքր ընտելանում է այն համոզմունքին թէ նա արհամարհեի է... նա սկսում է իրան արհամարհել: Նա սկսում է հասկանալ թէ նշանակութեանը հասնելու համար մի միջոց կայ միայն,— այն է փող, հարստութիւն հաւաքելը: Հետեւապէս նորան ամեն միջոցները ներելի են հարստութեանը հասնելու համար:

Լաւ հասկանալով, որ նա արհամարհելի է, նա սկսում է արհամարհել, ատել այն մնացած երեւոյթները, որոնք չեն տանում գէափի հարստութիւնն: Նա արհամարհելի է, նա այդ գիտէ, բայց նորա պատմութիւնն էլ, նորա մայրենի լեզուն էլ արհամարհելի են օտարների համար,— եւ նա ինքն սկսում է իր բոլոր աւանդութիւնները, իր բարոյական գանձը ատելով ատել...

Միակ բան, որին նա հաւատարիմ է մնում, այդ կրօնական-եկեղեցական աւանդութիւններն են եւ այն էլ ոչ թէ հասկանալով կրօնի նշանակութիւնը, ոչ թէ գնահատելով աստուածաշտութիւնը,— այլ այն պատճառով, որ նորան տիրում է դժոխքի երկիւղը, յաւիտենական պատիժների սարսափը...

Ոտքից մինչեւ զլուխը նա դառնում է ստրուկ, բոլոր ստրկային յատկութիւններով, նա զառնում է, ինչպէս ամեն ստրուկները, բոնաւոր տան մէջ, ճընշում է կնոջը, սպանում է բարոյապէս երեխաններին:

Երեխանները միծանում են միեւնոյն ազդեցութեան տակ: Իրանց ծնողների մէջ նորա տիսնում են յետազայ օրինակ. խոնարհ զօրեղների առաջ, յանդուգն ստորագրեալների հետ: Նոքա նկատում են որ հայրը եւ մայրը արհամարհում են այն ամեն բանները, որոնց արհամարհում են եւ օտարները... հայրը եւ մայրը ամօթ են համարում, հալածում են

անդամ երեխաններին, եթէ սոքա իրանց մայրենի լեզ-
վով են խօսում իրանց մէջ եւ երեխանները ընտե-
լանում են այդ արհամարհական զգացմունքներին
դէպի իրանց մայրենի լեզուն։ Ծնողները ատում են
եւ ցնորը են համարում ամեն հասարակական յատ-
կութիւն, ամեն աշխատանք, որ նպատակ չունի ան-
միջապէս նիւթական հարստութեան հասնելու, —եւ
երեխանները դառնում են եսական։ Ծնողները ինքնա-
սէր են, անձնապաշտ են, բռնաւոր են, անհամբի-
րող են, մոլեռանդ են, —եւ երեխանները միեւնոյն են
դառնում...

Առաջ առանելով այդ նմանութեան կէտե-
րի քննութիւնը, Սրծրունին համարենա ոչինչ
զանազանութիւն չէ դանում ծնողների և որ-
պիների, նոյն իսկ բարձր ուսում ստացած որ-
պիների մէջ։ Նոյն անհամբերուղութիւնը դէպի
ուրիշների անհատական համոզմունքը, նոյն
ստրկական յատկութիւնը —խոնարհ լինել զօ-
րութեան առաջ և յանգտուղն՝ ստորագրեալ-
ների հետ։ «Ճշմարիտ է, —ասում է նա, —
կարծես թէ որդիները այնքան չեն ամաչում
իրանց ազգութիւնից, իրանց մայրենի լե-
զութից, որքան ծնողները. —բայց այդ զգաց-
մունքը անցաւոր է և ժամանակաւոր։ Այդ
լինում է մինչեւ այն ժամունակ, երբ երիտա-
սարդը կարողանում է հասնել նիւթական
ապահովութեանը կամ պաշտօնին։ Մի ան-
դամ հասած լինելով, —նա ուսում է հալա-

ծել իր ընտանիքի մէջ իր մայրենի լեզուն,
—սարկային զգացմունքը իրն է առնում։

Եւ այս բոլորից յետոյ եզրակացութիւնը
ինքն ըստ ինքեւան է զալիս։ Ահա ինչ եզրա-
կացութիւն.

Ինչի այդ կեղծաւոր թշնամութիւնը, ում էք խա-
րում։ Դուք երիտասարդները եւ դուք ծերերը մի
էք... ինչ իրաւոնքով ծերերը արհամարհանքով
խօսում են երիտասարդների մասին, կամ ինչի երի-
տասարդները յարձակվում են ծերերի վերա։ Դուք
մի տարր էք։ Հաշտվեցէք միմեանց հետ, զրկեցէք
սիրով միմիանց։ Զեք ուղղութիւնը մի է, ձեր նպա-
տակները մի պիտի լինին։ Զեռք ձեռքին տուեցէք,
եւ փոխադարձ օգնութեամբ հալածեցէք ամեն նոր,
լուսաւոր անհատական, ազատ երեւոյթ...

Բայց այս վճիռը յուղիչ է։ Ամեն կողմից
աղաղակ, բողոք է բավում։ «Դուք ինքներդ
ով էք... դուք, որ հերքում էք ամեն բան։
Հիները ոչինչ, նորերը ոչինչ... էլ ով մնաց»։
Ո՞վ մնաց։ Եւ Սրծրունին պատասխա-
նում է.

—Մնաց ժողովուրդը։

—Միթէ մենք ժողովուրդ չենք, բողոքում
են երկու կողմից ծերերը և երիտասարդնե-
րը։ —Միթէ մենք նոյն ժողովրդի կազմող
մասերը չենք. միթէ մեզանից, այսինքն ծե-

գերից և երիտասարդներից գուրս կայ դարձեալ ժողովուրդ։
—Ոչ թէ միայն ձեզանից գուրս կայ ժողովուրդ, բայց դաք, որ ձեզ ժողովրդի կաղմող մասեր էք անուանում, մեր ժողովրդի թէ պատմական ընթացքին, թէ նորա արդեան պահանջներին նայելով, արուեստական, խորթ արդիւնք էք, օտարութի ծնունդ էք։
Անա մի ամբողջական աշխարհայեցովութիւն, անա Արծրունու համակրութիւնների և հակակրութիւնների խառացումը։ Իդուր էին կարծում թէ այդ նոր, անհանդիսա, կրակու մարդը մեր կեանքի մէջ միայն հերքողի միայն ոչնչացնողի գեր է ուղում կատարել։ Ո՛չ, նա ունէր մի անչափ մեծ, բարձր ու վեհ պաշտամունք—ժողովուրդը։ Այս անունը չը կար մեզանում, ժողովուրդը մոռացլած էր, կորած էր։ Եւ Արծրունին գէն է քշում «արուեստական, խորթ արդիւնքները», «օտարութի ծնունդները», որպէս զի առաջ զնայ այդ մոռացլած, մութի մէջ նստած մեծութիւնը։ Դեռ իր ուսանողութեան ժամանակ նա անդադար կրկնում էր, ժողովուրդ, ժողովրդի օդուաւ։ Այժմ, հասարակական կարծիքի ղեկավարը հանդիսանալով, նա իր առաջին քայլերից անողորմ պատերազմ է հրատարակում այն դասակար-

րերից և երիտասարդներից գուրս կայ դարձեալ ժողովուրդ։

—Ոչ թէ միայն ձեզանից գուրս կայ ժողովուրդ, բայց դաք, որ ձեզ ժողովրդի կաղմող մասեր էք անուանում, մեր ժողովրդի թէ պատմական ընթացքին, թէ նորա արդեան պահանջներին նայելով, արուեստական, խորթ արդիւնք էք, օտարութի ծնունդ էք։

Անա մի ամբողջական աշխարհայեցովութիւն, անա Արծրունու համակրութիւնների և հակակրութիւնների խառացումը։ Իդուր էին կարծում թէ այդ նոր, անհանդիսա, կրակու մարդը մեր կեանքի մէջ միայն հերքողի միայն ոչնչացնողի գեր է ուղում կատարել։ Ո՛չ, նա ունէր մի անչափ մեծ, բարձր ու վեհ պաշտամունք—ժողովուրդը։ Այս անունը չը կար մեզանում, ժողովուրդը մոռացլած էր, կորած էր։ Եւ Արծրունին գէն է քշում «արուեստական, խորթ արդիւնքները», «օտարութի ծնունդները», որպէս զի առաջ զնայ այդ մոռացլած, մութի մէջ նստած մեծութիւնը։ Դեռ իր ուսանողութեան ժամանակ նա անդադար կրկնում էր, ժողովուրդ, ժողովրդի օդուաւ։ Այժմ, հասարակական կարծիքի ղեկավարը հանդիսանալով, նա իր առաջին քայլերից անողորմ է հրատարակում այն դասակար-

Այս խիստ արշաւանքը պիսի առաջ բերէր զիմազրութիւն։ Կանօնաւոր կերպով, անդինդատ ամբակոծութեան ենթարկվող ռանդունակութեան հերոսները, այդ «պատաւերիտարդութիւնը» և հին սերունդը կամ պիսի ծածկվէին ծաղրի, սուր սլաքների տա-

բարի տակ, կամ պիտի ցոյց տային որ իրանք էլ զիտեն խօսել, հերքել, ծաղրել, իւռու ու անապարեր չը մնացին ծեծվողները: Նրանք հրապարակ դուրս եկան և Արծրունու առաջը աւելի ևս պայծառացաւ. երիտասարդ հրապարակախօսը այլ ևս անապատում ձայնող չէր: Ինչի նման կը լինէր, եթէ նա արպագրական խօսքի մենաշնորհը վայելէր, եթէ նա շարունակ յարձակվէր, չունենալով իր առջեր դիմագրողներ, հարուածները յետ զարձնողներ: Դիմադրելու անհրաժեշտութիւնը բաց է անում Արծրունու առաջ մի այլ ասապարէզ—սոլէմիրկա, բանակուրէ: Յարձակվել և պաշտպանվել, վէրք հասցնել և թոյլ չը տալ որ զիմացինը վէրք տայ. — ճակատամարտը կատարեալ է և այդ մուսի մէջ կազմակերպվում, ամբանում է Արծրունին, այսպէս ասած՝ պողլավում է:

Ի՞նչ արաւ զիմադրելու անհրաժեշտութիւնը:

Նա գերեզմանից համեց «Մեղու Հայաստանի» լրագիրը և ուսքի կանգնեցրեց նրան: Անբաւականութիւնը Արծրունու գէմ միայն դրսում չը սկսվեց: Նրա խմբագրական ժողովներին հաւաքվողները մի հաւաք տէր մարդիկ չէին: Շատերը նրանցից համաձայն չէին որ Արծրունին

այդպէս անխնայ յարձակումներ գործէ. այդ հարուածները, երիի, նրանց էլ էին դիմումն: Եւ սկսվեց խլրառումը, կամ աւելի ճիշտ ասած՝ զառումը «Մշակի» խմբագրութեան յարկի տակ: Անբաւականները կամաց-կամաց հեռանում էին և խմբվում Պետրոս Սիմէօն-եանցի շուրջը. իսկ համակրողները մնում էին: Բաֆփիի դրուածքից մենք արգէն դիտենք թէ ովքեր էին մնացողները: Դիպլոմատոր երիտասարդութիւնը վնում էր, — նա պիտի զնար, քանի որ Արծրունին այնպէս էր վերաբերվում նրան. մնում էին անդիպլոմները, թէրունները:

«Մշակի» խմբագրութեան այս կերպ վերակազման ճիշտ ժամանակը մենք չենք կարուզ որոշել: Պատմողներից ոչ մէկը չէ ասում թէ երբ տեղի ունեցաւ այդ բանը: Բայց հայելով «Մշակի» թէրթերին, մենք պիտի ասենք որ այդ չուն «Մշակից» գէպի «Մեղունակամից» տեղի չունեցաւ, այլ ամենաքիչը «Մշակի» առաջին տարվայ ընթացքում, դուցէ և երկրորդի առաջին կէստում: Մի մասը հեռացաւ «Մշակի» հէնց առաջին երկու ամիսներում և կենդանացրեց «Մեղուն». մի մասը, որ յետոյ պիտի հեռանար և Գրիգոր Արծրունու երդուեալ թըշնամիների շարքը մտնէր, զեռ երկում էր

«Մշակի» մէջ 1872-ի վերջերում: Զը նայած այս հանդամանքին, մենք հէնց այստեղ, գուցէ և զոհելով ժամանակադրական կարգը, կը դնենք այն պատկերը, որ ցոյց է տալիս թէ ինչեր էին տեղի ունենում «Մշակի» խմբագրական ժողովներում և զուռմը ինչպէս կատարվեց: Ինքը Արձրունին այսպէս է պատմում բոլորը *):

Անհամաձայնութիւնները ծագում էին, ի հարկէ, հիմնական հարցերի հողի վրա: Արձրունին համարեա միշտ իր դէմ էր տեսնում խմբագրական ժողովը. միայն Պօղսո Խզմացիլեանն էր, որ միշտ Արձրունու հետ էր լինում: Եւ ահա մեացածները զուռմ էին թէ այդ երկուսը կօսմօպօլոյտ են, արմատական են, օտարասէր են, աղդակնաս մարդիկ են: Վէճեր էին սկավում Արձրունու համոզմուքների դէմ: «Ես—ասում է Արձրունին—իմ մտքերը երկար ու բարակ բացատրելուց, ամբողջ գասախօսութիւն կարդալուց յետոյ, երբ տեսնում էի թէ դա ապարդիւն աշխատանք է, ուղղակի ասում էի. «Պարոններ, ես ձեզ մի ժամկայ մէջ չեմ կարող բացատրել այն, ինչ որ սովորելու համար ես գործեմ դրել իմ կեանքի կէսը, այն, որի վրա

*.) «Մշակ», 1890, № 45.

հիմնված են իմ ամենախոր համոզմունքները և որից բղխում են իմ յօդուածները...»: Եւ երբ մի օր ամենքը սկսեցին պահանջել որ Արձրունու առաջնորդողները ենթարկվեն քուէարկութեան և նրանց տպագրելը վճակի ձայների առաւելութեամբ, Արձրունին հետահալ պատասխանը տուեց ամենքին. «Եթէ դուք կը փորձէք արգելել ինձ իմ գաղափարներն արտայատերու, ես ձեր բոլորիդ վերայով կանցնեմ և զարձեալ կը շարունակեմ իմ գաղափարները յայտնելու»:

Այս յայտարարութիւնը արդէն վճռում էր ամեն ինչ: Արձրունին այնպիսի մարդկանցից չէր, որ ընկճվէր, յետ քաշվէր: Հանգամանքը պահանջում էր և նա առանց տատանվելու ձեռք էր վերցնում իր համակրած սկզբունքից անդամ, խմբովին աշխատելու սկզբունքից: Համակրելի էր, այն, այդ ըսկզբունքը. բայց կարելի էր սեփական խոր համոզմունքները զոհել խմբական սկզբունքին, մասնաւանդ երբ պարզ էր, որ խումբը հակառակ է համարեա բոլոր հիմն ական գաղափարներին:

«Իմ մորակող, մերկացնող ուղղութիւնը դուք զբեթէ բոլորդ վեասակար էիք համարում,—ասում է Արձրունին.—իմ մաքերը թէ ազգի մէջ կարող են լինել այլ գա-

ւանութիւնների մարդիկ, — գուք վեսսակար էիք համարում, դիւզական փոխառութիւնների մասին զրելը և այդ ընկերութիւնների օրինակելի կանոնադրութեան «Մշակում» տպագրելը, — գուք, մանուանդ գուք, պ. Զմշկեան, օտարամուտ, վեսսակար բան էիք համարում և այդ օրը զվարկները վերցնելով, զուրու էիք եկել ժողովից, վաճառականութեան դէմ յարձակվելը և նրա տեղ երկրի ինքնուրոյն արդիւնարերութեան զարգացում յորդորելը, գուք զրեթէ խմբավին վեսսակար էիք համարում, պնդերով որ հայոց ազգի գոյութիւնը, բայց եկեղեցուց, հիմնված է և վաճառականութեան վրա, և այն...»:

Ենթազրել անդամ կարելի չէ, որ այսպիսի տարրերից կազմված խմբագրութիւնը կարողանար երկար ու համերաշխ մնալ: Աւելացնենք այս բոլորի վրա և այն, որ խըմագրութիւնը պահանջեց Արծրունուց գրամական հաշիւները, բայց Արծրունին կտրական կերպով պատասխանեց. «Եթէ ուզում էք որ ես ձեղ հաշիւ տամ «Մշակի» նիւթական օգուտի մասին, ուրեմն բարեհամեցէք և բաժանելինձ հետ նիւթական վեսսաներ էլ, եթէ ացդպիսիներ կը լինեն»: Այդ էլ մի առիթ էք որ տարածայնութիւնը պառակտում

առաջացնէ: Բնկերական-խմբական սկզբունքով գործ առաջ տանելու այս անդրանիկ գործը հայերի մէջ չաջողվեց: Մեղաղը որևէ մէկին, ի հարկէ, անհեթեթութիւն կը լինէր, մարդիկ հաւաքվեցին միասին, բայց չը համաձայնվեցան և էլի հեռացան: Անրը-նական բան չը կայ այստեղ, և միայն հարց կարող է լինել այն մասին թէ ինչու Արծրունին հէնց սկզբից այնալիսի մարդիկ չը ընտրեց, որոնք կարողանացին հաշտվել իր ուղղութեան հետ: Բայց այս հարցն էլ անտեղի է, եթէ նկատի առնենք այն ժամանակները: Մեղանում զիռ չը կային որոշ գըրական բանակներ, կուսակցութիւններ: Կային, ճիշտ է, հատ-հատ առաջաւոր մարտընչողներ, բայց նրանք կուսակցութիւններ կազմելուց շատ հեռու էին: «Հիւսիսափայն» էր սկսել որոշ բանակի հիմք գնել, բայց երկար կեանք չունեցաւ և դրական կուսակցութիւններ չը կազմակերպվեցին: Արծրունուն էր վերապահված այդ գործը: Նա էր, որ հէնց «Մշակի» առաջին տարվանից հիմք դրեց ուղղութիւններով, գաւանանքներով տարրերվով կուսակցութիւնների, նրա զեկավարութեամբ, նրա նախաձեռնութեամբ աշխարհ եկաւ մշակ ական կուսակցութիւնը: Դրա հակառակ կուսակցութիւնն էլ

անուն ստացաւ, երբ վերանորոգվեց «Մեղուն»։ Նա կոչվեց մեղուական։

Եր առաջին համարի մէջ, որ լոյս տեսաւ 1872-ի մարտի 4-ին, երրորդ կերպարանափոխութեան ենթարկվող «Մեղուն», մի ակնարկ գցելով իր անցեալի վրա, ասում էր. «Մեղուն» իւր տասնամեայ ժամանակաշրջանում մտանում է այժմ իւր նոր շրջանը. Նոր ենք ասում, որովհետեւ նրա բեռն ու ծանրութիւնը, որ մինչեւ ցայժմ միայն մեր վերայ էր, ընկնում է այսուհետեւ մի ամրող ընկերութեան վերայ, որ անտարակոյս աւելի յաջողութիւն կունենայ թէ ժամանակի հանգամանքների պատճառով և թէ աշխատանքի բաժանմանը։ Մի խելքը լաւ է, իսկ երկուսը աւելի լաւ, ասում է առածք։ Մինչեւ ցայժմ մեր մէջ չէ եղած այսպիսի մի ընկերութիւն. ընկերական հոգին միշտ հեռու է եղած Հայլից. ինչ որ անկարող է զործել մի անձն, զիւրին է ընկերութեան համար։

Անկասկած, Ընկերական կազմակերպութիւնը գոնէ այն առաւելութիւնն ունէր «Մեղուն» վերաբերմամբ, որ լրագիրը յայտնի չափով ապահովված էր, անհամեմատ հարուստ ու բազմակողմանի էր անցեալի հետ համեմատած։ Սակայն մի հարց. որքան ինքնուրոյնութիւն կար «Մեղուն» ընկերութեան

մէջ, որքան նա կարողացաւ շարաթաթերթին տալ իր ստեղծած տիպը, կերպարանքը։

Նայում ենք վերանորոգված «Մեղուն» և առաջին իսկ հայեացքից երեսում է որ դա մի ընդօրինակութիւն է։ Ինքնուրոյնութիւն չէր էլ կարող վիճել քանի որ շարաթաթերթը վերատեղիվում էր ամենից առաջ «Մշակին» դիմադրելու, նրա նման գեր կատարելու համար։ Եւ մենք տեսնում ենք մի շարք նմանութիւններ, անցն զիրքն ու մեծութիւնը, սիւնակների նոյն թիւը. «Մեղուն» էլ նոյնպէս արէէ և բուրլի. նոյն իսկ յայտարարութիւնների զինը որոշված է «Մշակի» բառերով—«10 միջակ տառերի համար 1 կուպէկ»։ Այսքանը արտաքինի կողմից.—իսկ ներքինը Այդտեղ էլ պատրաստութիւններ են տեսնված։ Խմբագիր Սիմէօնեանցը առաջներում հաղիւ ամիսը, երկու ամիսը մի անգամ էր գուրս գալիս «Քանիցս պատիւ ենք ունեցել յայտնելու յարդոյ հասարակութեան» սկիզբ կրող յօդուածներով այժմ արդէն ստիպված է իւրաքանչիւր համարում գրել առաջնորդող։ Այժմ կան և ուրիշ բաժիններ. «Աղդային» բաժինը ներքին տեսութեան յօդուածներ, լուրեր է տալիս. բանափրական բաժնում այլ ևս երկար ու ձիգ թարգմանութիւններ չեն զետեղվում, ինչպէս առաջ,

այլ բազմաթիւ ինքնուրոյն պատկերներ ժողովրդական կեանքից։ Մի խօսքով, «Մեղութ» ընկերութիւնը, որքան էլ ինքնուրոյնութիւնից զուրկ լինէր, բայց աշխատում էր։ Արծրունու զրելու ձեռ անդամ ընդօրինակվում է։ աւեսնում ենք յօդուածներ, բաժանված մանր գլուխների, ինչպէս սիրում էր անել Արծրունին։

Աշխատասիրութիւնը, այն, անուրանալի է։ Հարցը միայն այն է թէ ինչ էր դուրս դափս այդ աշխատասիրութիւնից։ Գլխաւորը, ողի ներշնչողը դարձեալ հինն էր—Սիմեօն-եանցը։ Ճիշտ է, նա այժմ շատ էր զրում, ճիշտ է, նիւթիր էր դանում իր առաջնորդող-ների համար, բայց աշխատասիրութեամբ տաղանդ չէ ձեռք բերվում։ աստուածային կայծը բացակայում էր նրա զրուածքներից և «Մեղուն» իր էութեամբ մնում էր նոյնը, ինչ էր առաջ։ Տաղանդ, աչքի ընկնազ ընդունակութիւն չերևաց և խմբագրին շրջապատող մարդկանց մէջ։ Գրողներ էին, զրում էին, նրանց զրուածքները—զարմանալու բան չը կայ սրա մէջ—համապատասխանում էին հասարակութեան մի որոշ մասի տրամադրութեան, հայեացքներին։ Բայց հայկական մտքի մէջ մի յեղացչում առաջացնել մի փոքր ի շատէ աչքի ընկնազ շրջան կաղ-

մել նրանք չեն կարող։ Իրեւ ընդգիմազիր-ներ, նրանք ամենից շատ պիտի սովորէին հերքել իրանց հակառակորդին, ամբողջ ժամանակը վախ յայտնել, հակառակութիւններ, ճիշտ չը գործածած բառեր որոնել, պաշտպանել, միշտ պաշտպանել, ինչպէս էլ լինի՝ պաշտպանել մեր աւանդութիւնները, մեր կեցութիւնը ծայրայիշ մտքերից, ազգադաւ կօսմօզօլիատութիւնից, վեսասկար ու տնաքանդ աղատամութիւնից։ Այս նեղ ու մանր հոգակերի, վախերի ու զգուշութիւնների մէջ սովորական, միջակ միտքը չէր կարող ստեղծագործող լինել, լայն ու խոր հայեացքներ ունենալ, յուղել, զիւթելց կրակել և կրակվել։ Եւ մենք տեսնում ենք որ բանակոփւներից, ընդգիմազրութիւնից դուրս ՇՄեղուն» չափազանց ջրալի է, չափազանց աննշմարելի։

Ընդհարումը սկսվեց խոկոյն, «Մեղութ» հենց երկրորդ համարից։ Ամենից առաջ արգարանում էր Արծրունու հարուածներին ենց-թարկված երիտասարդութիւնը։ Եւ արգարանում էր ոչ թէ իր կատարած գործերով, որոնք չը կային էլ, այլ ողորմելի պատճաճարանութիւններով։ Դուք յարձակվում էք ուսում առած երիտասարդի վրա, ասում էք թէ նա փոխանակ զործ կատարելու, լուսոգոմինո է խաղում։ Բայց զիտէք որ զրա-

պատճառը հայ ընտանիքն է։ Հին աւանդութեան հետեւզ մեր ընտանիկան կեսանքը մեզ չէ ներկայացնում ոչ մի գուարճութիւն, որ նա մեղ համար օտար է, որ նա չէ առաջարկում մեղ մի բարոյական ապաստան Յետոյ գուք ծաղրում էք մեր զրովների ճառական ոճը. բայց զիտիք որ ճառերով, քարովներով է քրիստոնէութիւնը մտել Հայաստանի մէջ։

Նիօրէն կարճ պատասխան տուեց «վերանորոգվող Մեղուին»։ «Ճատ հեշտ է, ասում էր նա, իր պակասութիւններից արգարանալ ուրիշն մեղազելսփ Ես անշարժ եմ,—բայց ես սեղաւոր չեմ որ անշարժ եմ... ընտանիքն է մեղաւոր... Ընտանիքը մեղաւոր է, որ դուք անշարժ և անդործ էք, գուք այդ խոստովանում էք,—շատ բարի։ Բայց գուք մեղաւոր չք արգեօք, եթէ մինչև հիմի չք մտածել այդ անշարժութեանը ընդդիմադրութիւն անելու, մի ընտանիքի հնացած ուղղութեան դէմ ներգործելու, մեղաւոր չք արգեօք, որ նորա անհիւրասիրութիւնը, նորա բարոյական անտարբերութիւնը տեսնելով, գուք չք մտածել ձեր մէջ մի այնպիսի ընկերութիւն կազմելու, որտեղ դարման տալով ձեր հոգեւոր պահանջներին, գուք չբաւականանայիք ձեր մէջ հասարակական կապ

և յարաբերութիւններ պահպանել միայն գօմինութու և թղթախաղի միջոցով։

Գալուվ քրիստոնէութիւնը մտցնելուն, Արծրունին կրկնում էր այն հանրածանօթ պատմական փաստը, որ քրիստոնէութիւնը մի երկրի մէջ մտցնողը եղել է ոչ թէ արեղայի քարոզը, ճառը, այլ զլխաւորապէս այս կամ այն երկրի թագաւորի, իշխանի կամքը, նրա սուրբը՝ «Մեղուն» չը բաւականացաւ, ի հարկէ. մի կողմ թողնելով ընտանիքի մեղաւորութեամբ պաշտպանվելու անաջող փորձը, նա կպատ քրիստոնէութեան հարցին։ Առաջին իսկ ընդհարման մէջ «Մեղուն» ցոյց տուեց որ չէ կարող առանց աղաւաղելու բանակութ մղել։ Նա ասաց թէ «Մշակը» յայանում է որ քրիստոնէութիւնը տարրացրվել, ժողովրդականացրվել է որի միջոցով, մինչդեռ «Մշակը» խօսել էր այդ կրօնը մի երկրում պաշտօնապէս մտցնելու մասին։ Ի՞նչ հեշտ էր յեղաշրջումներով պատասխանելը։ Նիօրէն զրել էր թէ ճառը, քարոզը չէ մտցրել քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ. և իբրև ապացոյց աւելացրել էր. «Մովսէս Խորենացին իր զրուածքներով չէ մտցրել և տարածել քրիստոնէութիւնը, որովհետեւ նա արդէն մտցրած էր, եղիչէն երբ զրում էր, Վարդան Մամիկոնեանը իր զօրքով արդէն նահատակ-

ված էր քրիստոնէութեան գաղափարի համար»: Այդ խօսքերը «Մեղսուն» կրկնում էր, միայն ուրիշ կերպով: Նիօրէն առել է թէ Վարդանանց պատերազմը եղել է Եղիշէից և Խորենացոց առաջ, թէ Եղիշէի և Խորենացու գրուածքներն են միայն, որ մարմնացրել են քրիստոնէական գաղափարը:

Դնում ենք այս մանրամանութիւնները ոչ թէ այն պատճառով, որ մի առանձին կարուրութիւն ենք տալիս այդ բանակութիւն: Առաջին ընդհարումն է դա երկու լրագիրների մէջ, սկիզբը այն երկարատես ու յամառ պատերազմի, որ տեղ երկար տարիներ: Մենք ուզում էինք այսուղ իսկ, առաջին քայլում, ցոյց տալ թէ ինչ միջոցներով էին զինվում երկու կողմերը, ինչ հանդամանքների մէջ էր կատարվում ընդհարումը: Այս առաջին բանակութ բաւական ընդարձակվեց, մէջ մտան «Մշակի» և «Մեղսութ» աշխատակիցները: Մէկփառքէն (Քաֆին) այստեղից սկսեց իր զինակցութիւնը Արծրունու հետ՝ «Մշակի» թշնամիների գէմ կռւելու համար: «Մեղսուն» մեծ եռանդ էր ցոյց տալիս: Իր № 10-ի հետ նա տուեց մի մեծ յաւելուած, որի մէջ Սենեքերիմ Արծրունին, «Մշակի» խմբից հեռացածներից մէկը, խօսում էր պարբերական մամուլի, բայց

զլսաւորապէս «Մշակի» մասին, քննում էր Արծրունու առաջնորդողները և համարեանոչ մէկի մէջ չէր դանում համակրութեան արժանի մի միաբ: Այդ յաւելուածը աւելի ես սաստկացրեց բանակութիւը: Ինքը, Արծրունին ուղղակի չը պատասխանեց, բայց Զաբուճը գործի ցցեց իր ֆելիչտօնական նշարակները, նոյն իսկ գաւառներից էլ սկսեցին գրել այդ առիթով: Բանակութիւնը մէջ չենք մանում, որովհետեւ «Մեղսութ» յաւելուածը թէն մեծ էր, բայց իմաստի, փաստերի կողմից չատ աղքատ էր *):

Բայց մենք կանգ կառնենք մի ուրիշ բանակութ առջեն, որ ունի նշանակութիւն՝ երկու մարտնչող կողմերի բարոյական յատկութիւնը լաւ համեստալու համար: Այդանող արդէն սկզբունքների ընդհարում էր, որ տեղի ունէր մի կենդանի գործի շուրջը: այդտեղ Արծրունին երևան է գալիս ոչ միայն իրքի զրչի մարդ, այլ և իրքեւ հասարակական գործիչ, որ կուիը մամուլի էջերից անց է կացնում անմիջապէս կեանքի մէջ:

*) Սենեքերիմ Արծրունին իր տեսութեան մէջ խօսել էր, և միջի այլոց, և «Հիւսափայլի» մասին: Ստեղծանոս նազարեանցը իր մտսնաւոր նամակի մէջ անուանեց այդ գատողութիւնները «ցանցառամիտ»:

Երբ «Մշակը» սկսեց հրատարակվել, Ներսիսեան դպրոցում հաստատված տեսուչ չը կար: Ստեփանոս Նազարեանցի հեռանալուց յետոյ դպրոցի հոգաբարձութիւնը տեսչի պաշտօնակատար նշանակեց «Մեղսւի» խմբագիր Պետրոս Սիմեոնեանցին: բայց հոգաբարձութեան պաշտօնավարութեան ժամանակն էլ էր լրացել և 1872-ին պէտք է կատարվէր հոգաբարձական նոր ընտրութիւն: Արծրունին սկզբից և եթ ուշադրութիւն դարձրեց այդ հանգամանքի վրա: Իրեւ հասարակական օրգանի ղեկավար, նա պարագ համարեց հրապարակով պարզել թէ ինչ պաշտօն ունի կատարելու Ներսիսեան դպրոցը և ինչ է պահանջում այդ միակ ապահով միջնակարգ դպրոցի վարիչներից: Միմեանց ետից նա երեք առաջնորդող յօդուած նուիրեց այդ հարցին (№№ 6, 7 և 8):

Առաջին յօդուածը տպվեց փետրվարի 10-ի համարում և կրում է «ինչի մենք մէկ մէկի չենք հասկանում»:

Ուշադրութիւն դարձրէք—ասում է նա—մեր ժողովրդի զանազան դասերի մէջ փոխադարձ յարաբերութեան վերա, եւ դուք կը համոզվէք որ մեր ազգի դասերի մէջ գրեթէ չկայ հասարակական կապ: Դասերից ամեն մէկը բոլորովին առանձնական է:

այլակիրապ է զարգանում: Միակ գործիչը, որ մեզ կապում է մէկի հետ,—մեր դաւանութիւնն է»:

Այդ կապը բաւական չէ: Հասարակական կրթութիւնը կարող է կապել, միամին ձուլել ազգի առանձնացած գասերը: Իսկ հասարակական կրթութեան զվարարութիւնը կարող է մամուլը Սակայն մամուլը կարող է ժողովրդին հասկանալի դառնալ գըպրոցի միջոցավ: Հնուց մենք ունեինք զրականութիւն: բայց արդեօք ժողովրդը հասկանում էր զրքի լեզուն: Յայանի չէ որ մեր զրաբարը երբ և իցէ եղած լինէր ժողովրդի գործածական լեզու: Արդեօք հինգերորդ դարի հայերէնը միայն զրական լեզու էր թէ այս լեզուով խօսում էր և հայ մարդը: Վըճռել այս հարցը անկարելի է: Հինը անցաւ: «Այժմ մենք առանց սխալվելու կարող ենք հաստատել, թէ ժողովուրդը զրականական լեզու չէ հասկանում: Դուք կարծում էք, որ ես միայն զրաբարի մասին եմ խօսում,—ոչ Մեր նոր զրականական լեզուն, աշխարհաբանն էլ հասկանալի չէ ժողովրդին: Ինչքան դար շարունակ ժողովուրդը հայոց ժամանակութիւն էր լսում եկեղեցիներումը, —և եկեղեցիներից գուրս գալով և ընտանեկան կեանքը մտնելով, կրկին խօսում էր կամ

զրացերէն, կամ թիւրքերէն, կամ յունարէն։
Վերջին ժամանակները մենք աշխատում ենք
հայր հետ նոր, կենդանի անվանված զրակա-
նական լեզվով խօսել... Բայց ի զուր... Մեր
զրագաները չեն կարդում...»։

Մեզ չէ համականում ժողովուրդը, որով-
հետեւ նա պատրաստված չէ, չունի կրթու-
թիւն։ Մեզ ժողովրդի հետ կատողը պիտի
լինի տարրական գպրոցը։ Առանց այդ միջ-
նորդի՝ մամուլը կը մնայ ժողովրդի համար
«Ճայն բարբառոյ յանապատի»։ Ո՞վ են, ուր են
ժողովրդական ուսումնարանի ուսուցիչները։
Պէտք է ուսուցիչներ պատրաստել։ Խակ ովկ
կարող է նրանց պատրաստել—Ներսիսեան
դպրոցը։

Ներսիսեան գպրոցը Թիֆլիսում պիտի հասկա-
նայ վերջապէս, որ նորա նշանակութիւնն է պատ-
րաստել ժողովրդի համար ուսուցիչներ,—այսինքն
Կրթեալ քահանաներ

և ծխական ուսումնարանների համար զարժա-
պիտներ։

Երկրորդ յօդուածը վերաբերվում է աեսչի
ընտրութեան հարցին։ Կարեոր հարց. գպրո-
ցի ուղղութիւնը, առաջադիմութիւնը աեսչից
է կախված։ Հարկաւոր է, ասում էր Արծ-
րունին, որ ուսումնարանը մի որոշ ուղղու-

թիւն ունենայ։ Եւ հոգաբարձութիւնը, կա-
մենալով տեսուչ ընտրել, պէտք է ինքն իրան
հարց տայ թէ արգեօք ինքը վճռել է թէ
ինչ ուղղութիւն է յարմարվում գպրոցին։
Եւ եթէ նա ունի որոշ ծրագիր, ինչպէս պիտի
վարվէ, որ իր ընտրելի տեսուչը համապա-
տասխան լինի այդ ծրագրի պահանջներին։
Ասենք թէ գպրոցի նպատակն է քահանաներ
և ուսուցիչներ պատրաստել։ Դա արդէն հո-
գաբարձութեան ծրագրի էական մասն է։
Սյս գէպը ում ինչ պիտի պահանջէ հոգաբար-
ձութիւնը տեսչից, ինչ ծրագիր, ինչ առար-
կաներ պիտի անհրաժեշտ համարվեն։ Լաւ
է, եթէ հոգաբարձութիւնը ճանաչում է մի
անձ, որին ընդունակ է համարում տեսչի
պաշտօնը վարելու, հիմնելով իր կարծիքը
այդ անձի անցեալի վրա։ Լաւ, եթէ այդ ան-
ձը գիր հին գործունէութիւնից յետոյ որքան
տարի է անցել գարձեալ հետեւում է միշտ
ժամանակին և չչանանում։ Նորա մանկա-
վարժական մետօղը հրաշքի պէս տարիներին
դիմանում է, և միշտ ժամանակի պահանջ-
մունքին համապատասխան է։ Սրանք մաս-
նաւոր գէպքեր են, մինչդեռ ինդիքը տւելի
ընդարձակ և ընդհանուր կերպով պէտք է
դնել։

Խնդիրը արդար կերպով լուծելու համար

Արծրունին առաջարկում է զիմել այն միջոցին, որ գործադրվում է Եւրօպայում զիտնական ընտրութիւնների ժամանակ, մի միջոց, որ «ինչքան կարելի է, սահմանական կը քերին»։ Այդ միջոցը մրցութիւնն է, կօնկուրսը։ Թող յայտարարվի մրցութիւն, թոնդ առաջարկի որ ասեն մէկը, ով ուղում է տեսուչ լինել, ներկայացնէ իր ծրագրի նախագիծը, ցոյց տայ թէ ինչպէս պէտք է տանել դըպրոցի դործը։ Հոգաբարձութիւնը կը քննէ բոլոր ներկայացրած նախագծերը և հաւանութիւն կը տայ այնպիսիներին, որ աւելի համապատասխանում է նրա ծրագրին ու ցանկութիւններին։ Եթէ այդ նախագծերից ոչ մէկն էլ կատարեալ չը լինի, գարձեալ կայ այն առաւելութիւնը, որ մրցութեան միջոցով հոգաբարձութիւնը ծանօթանում է զանազան կարծիքների հետ և կարող է օգուտ քաղել խելացի ցուցմունքներից։ Արդարացի է այս միջոցը և այն ուստաձառով, որ ուսումնարանի վարչութեան հարցը, ծրագրիը կը շփի հասարակական կարծիքի հետ։ Արծրունին խորհուրդ էր տալիս որ ներկայացրած ծրագիրները տպագրվեն և մամուլի քննութեան առարկայ դառնան։

Հայը, իւր բնաւորութեամբ, փառասէր, ինքնամբ եւ ինքնահաւան էակ է։ Փորձեցէր փողոցում առաջին պատահած փոքր ի շատէ ուսում տեղ առաջարկելու (մանաւանդ ոսմիկով), — եւ նա առանց երկայութեան, մեծ ուրախութեամբ կը համաձայնի եւ կը նույնի ծեր առաջարկութիւնը։ Բայց պահանջեցէր միեւնոյն անծից գրաւոր մի պրօգրամման մաս... եւ այն ինքնահաւան հանճարը, կարելի է, իսկոյն յետ կը քաշվի... Միեւնոյն մարդը, որ ամեն տեսակ պաշտօն ուրախութեամբ յանձն կառնէ (այն պայմանով որ նրա անձը քննութեան չենթարկն), — անչափ կը դժուարանայ գրաւոր պրօգրամման ներկայացնելու... և եղբ մարդ... նորանից զաղա փար ան պահանջում, — իսկ նորան, կարելի է առհասան պահանջում, առաջ այս բարեկամութեանը։

Այսպէս գոլրոցը կաղատիկ անընդունակներից, Բայց կարող են պատահել և այնպիսիները, որոնք սովոր են սիրուն, գեղեցիկ ոճով ամբողջ հասորներ գրել, բայց մի հատ առողջ միաք չը յայտնել։ Պէտք է, սակայն առողջ որ հոգաբարձութիւնը չի խաբվի այդյուսալ որ հոգաբարձութիւնը չի խաբվի այդպիսի գրուածքներից, ուր միտքը դոհված է ձեին։

«Գիւղական քահանայ» առաջնորդողում Արծրունին նորից վերադառնում է ներսիսեան գոլրոցին։ Նախ և առաջ նա բացատրում է քահանայի նշանակութիւնը գիւղում։ Գիւղական աղքատ, աղէտ, բայց շատ հա-

ւատաւոր ժողովուրդը իր կեանքի բոլոր գէպւքերում խորհրդատուի, առաջնորդողի հարկաւորութիւն է զգում և միշտ զիմում է քահանային: Քահանան նրա համար միայն եկեղեցական ծխակատարութիւնների պաշտօնեայ չէ, այլ պիտի կարողանայ և բաւարարութիւն տալ նրա բոլոր հարց ու փորձերին, որոնք վերաբերվում են նրա տնտեսութեան, նրա առողջութեան, նրա զաւակների կրթութեան: Համապատասխանում է արգեօք քահանայի կրթութիւնը ժողովրդի պահանջներին: Եթէ քահանան ուսում ստացել է տարրական ուսումնաբանում, նա, ուրեմն, կարող է միայն խմանալ հայերէն և ուսուերէն լեզուները, քրիստոնէական ուսում և թուաբանութիւն: Այս պաշարով—աւելորդ է նոյնիսկ ասել—քահանան չէ կարող շատ տարբերվել իր ժողովրդից, շատ բարձր լինել նրանից:

Ենթագրենք թէ մեզանում բացվեց մի հոգեսոր բարձր ճեմարան, ուր աւանդվում են հոգեբանութիւն, աստուածաբանութիւն, զանազան լեզուներ, ընդհանուր և հայկական եկեղեցական պատութիւն: Այգտեղից գուրս են զայխ քահանայացուներ: Կարելի է նրանց ուղարկել զիւղերը: Ո՞չ «Նա թէն միակողմանի, բայց չափազանց բարձր ուսում է

ստացել որ կարողանար մատչելի լինել ժողովրդին»: Նա դորձնական կեանքի մարդ չէ, զիւղին: Նա վերացական ուսում է ստացել և բոլոր վիճակների չունի զիւղում: Ի՞նչ է զիւղի պահանջը:

Ամեն տգէտ էակին յատուկ է հրաշք պահանջի այն անձերից, որոնց նա իրանից վեր է համարում: Գիւղացին այնչափ պատվում է քահանային, որ շատ անդամ նորան դիմելով, նա պահանջում է այն, ինչ որ նորա կարողութիւնից վեր է:

Գիւղացու երեխան կամ կինը հիւանդացաւ... նա դառնում է գէպի քահանան, նորանից խրատ ուզերվ,—իսկ քահանան, որ բարձր, վերացական, լեզուազիտական կամ աստուածաբանական կրթութիւն է ստացել, անկարող է նորան իւր խրատով օնելու, որովհետեւ նա թշշկութեան ամենատարրական հմտութիւն անգամ չունի:

Գիւղացին տգէտ է: «Նա զիստէ իր հողը բարփել... նորա բնակեցրած երկիրը անհարթ եւ աղքատ է, գիւղի չորս կողմը չկան անտառներ—նա ստիպված է փայտի տեղ ամար իր տանը գործածելու, նա վառում է ուրեմն այն նիւթը, որ հարկաւոր է հողը բարփելու:

Այս եւ սորա նման դէպքերում ո՞րքան օգուտ կարող էր բերել քահանան... եթէ նա օրինակ միւկարող էր բերել քահանան... ուսումնաբանից դուրս եկած լինելով ջին կարգի ուսումնաբանից դուրս եկած լինելով ջորը ի շատէ տեղեկութիւն ունենայ տարրական բնագիտական ճշմարտութիւնների վերա, փոքր ինչ տեղեկակ լինէր զիւղացին տնտեսութեան:

Միայն այն ժամանակ նա կարդարացնի ժողո-

գրդի կողմից նորան ընծայած անսահման հաւատարմութիւնը, — երբ միջնին կարգի մի հոգեւոր դըպրոցում ընդհանուր կրթական դաստիարակութիւնը ստանալով, նա միջոց կունենայ ժողովրդի տնտեսական եւ հոգեւոր աննախանձելի դրութեան էութիւնը ըմբռնելու եւ իր դործնական ազդեցութեամբ կարողանայ նպաստել այն դրութեան բարփոքիուն:

Այսաեղից արդէն պարզ է թէ Ներսիսեան դպրոցը Արծրունու ծրագրով ինչ պիտի լինէր: Մի հոգեւոր միջնակարգ դպրոց, որ նըշկատի է առնում կեանքի գործնական պահանջները: Այդ դպրոցի տուած քահանան մի կրթված, տեղեակ մարդ է, որ գնում է ժողովրդի առջևից և զիտէ իր հօտի բոլոր հարցերին բաւարար պատասխան տալ: Զը նայած որ այս հանդամանքը աւելի քան պարզ է ամեն մի մարդու համար, չը նայած որ Արծրունուց յետոյ շատերը մեղանում կրկնեցին նոյն միաբը, մեր թեմական դպրոցները երբեք չը կարողացան այնքան լայն հիմքերի վրա գնալիք, այնպիսի ծրագիր գործադրել, որ հոգեւոր պաշտօնեան, ուսում ստանալով այնտեղ, կարողանար լինել ժողովրդի իսկական բարեկամը, իսկական օգնականը հոգու և աշխարհի գործերի մէջ:

Այսպէս ահա, Արծրունին որոշ ծրագրով որոշ պահանջներով էր վերաբերվում Ներ-

սիսեան դպրոցին: «Մշակի» ներքին տեսութեան մէջ զանազան մարդկանց կողմից քննալիցան դպրոցի պահանջները: Այդ բոլոր գրուածքների միաբը մի էր — բէֆօրմ: Այսպը ամենուածքների միաբը մի էր — բէֆօրմ: Այս և Լ. Ա. ստորագրութեամբ մի յօդուածի մէջ քարողվում էր այն միաբը թէ պէտք է վերացնել որդեղութիւնը Ներսիսեան դպրոցում: Նախ այն պատճառով, որ որդեղիրների վրա ծախսած գումարով կարելի էր աւելի մեծ գործ կատարել դպրոցում, երկրորդ որ որդեղիրների վակլված կեանքը վատ է ազգում նրանց առողջութեան վրա: Այս առիթով «Մեղուն» դարձեալ բանակոխւ սկսեց, կամենալով ցոյց տալ որդեղիրներ պահելու անհրաժեշտութիւնը:

Հարցեր արծարծել բաւական չէր: Հարկաւոր էր որ Ներսիսեան դպրոցը ունենայ այնպիսի վարչութիւն, որ կարողանար իրագործել ցանկալի բէֆօրմները: Սեպտեմբերի սկզբին նշանակված էին հոգաբարձական ընտրութիւններ և Արծրունին առաջ բերեց ընտրական մի ամբողջ պայքար, հիմնված սկզբունքների, որոշ ծրագրի վրա:

Ընտրական պայքար... Սա այն խոշոր նորութիւնն էր, որ մտնում էր մեր կեանքը մէջ 1872 թուականից: Դրանից առաջ հայ ժողովուրդը նոյն խակ կաթողիկոսներ էր

նի, այն ինչ հաստագլուխ աղայի, այս ինչ դատարկագլուխ բարձր ուսում աւարտածի, ինքն ժողովուրդը ոչինչ չէ կարող անել:

Այդ հին նախապաշարմունքի դէմ սկզբ
է գնալ, Պէտք է իմանալ որ մեծ սխալ և
մնարդարութիւն է արաօնված կաստաներ
ստեղծել և նրանց յանձնել մեր գործերը՝
Հարստութիւնը, աստիճանները, գիպլօմը մո-
ւրեցնում են մարդկանց և այնքան ճնշում,
որ անկարելի է լինում հասկանալ թէ այդ
արաօնված կաստաներից դուրս էլ կարելի է
ընտրելու արժանի մարդիկ դանել:

Խեղճ ժողովուրդ, որքան խարում են քեզ, եւ
դու այդ քանը չես նկատում: Շատ անգամ դու կար-
դու ես լրազիրը եւ կարծում ես, որ նա իմաստու-
թեամբ լի է, բայց վերջը տեսնում ես, որ ոչինչ
չես հասկանում տպածիցը եւ մի կողմ ես զնում
թերթը, քեզ ու քեզ ասելով. «երեւի այնքան խելօք
քան է, որ ես չեմ հասկանում»:

Բայց խեղճ, դու չփառես որ այն մարդն էլ որ
գրել է յօդվածը, նա էլ չէ հասկանում ինչ է դրել
որովհետեւ նա ինքն չէ շարունակում իր սեփական
մտաւոր զարգացման վերա հոգալ... որովհետեւ...
մամակ չընի... իսկ քեզ սովորեցնել է յան-
դոնում:

Թէկ անուններ չը կամ, բայց պարզ է որ
այս խօսքերը ուղղված են «Մեղուի» և նրա

ընարել, թիֆլասում երկու անդամ հոգաբար-
ձական ընտրութիւններ էին կայացել: Մենք
ունեինք մամուլ, բայց նա կամ անտարբեր
էր դէպի ընտրութիւնները, կամ բաւակա-
նանում էր երկու ջուխա խօսք ասելով: Եւ
ինչ էր այդ խօսքը: Մեր խմբագիրները կամ
Աստուծու օդնութիւնն էին կանչում ընտ-
րողների վրա կամ ընդհանուր պլաստական
ցանկութիւններ էին յայտնում որ ընտրվեն
լաւ մարդիկ: Գրիգոր Արծրունին որոշ կու-
սակցութիւն կազմեց, տղիտացիա սկսեց, իր
խմբով ընտրութիւններին մասնակցեց: Առա-
ջին անգամն էր մեզանում որ ընտրութիւն-
ները գառնում էին գաղափարների ընդհար-
ման ասպարէզ, առաջին անգամն էր որ տը-
պագրական խօսքը պայքարի զեկովար էր
հանդիսանում: Ահա ինչ էր ասում Արծրու-
նին իր «Ընտրողներին» առաջնորդողում, որ
լոյս աեսաւ օդոսասի Յ1-ի համարում:

Մենք կրկնում ենք, ամեն ժողովուրդ ամեն տեղ
սովորութիւն ունի հաւատ ջընծայելու իր սեփական
ոյժերին, դիմել իրանից բարձր դասին պատկանող
մարդիկներին, որոնցից մի քանիսը հարստութիւն
կամ աստիճաններ ունին, միւսները դիպլօմ: Նշա-
նակութիւն ունեցող մարդիկը իրանց կողմից օգուտ
քաղելով ժողովրդի տղիտութիւնից, հաւատացնում են
նրան թէ առանց այս ինչ հաստափոր վաճառակա-

Խմբի գէմ: Այս հանդամանքը ի նկատի առած, հասկանալի են դառնում և հետեւալ առզերը.

Ժողովներդ, կամննում ես մի կուսակցութիւն կազմել, որ քեզ կը ծառայէ եւ կը հողայ քո օգուտները,—ընտրէ մարդիկ ամեն դասից, ամեն պարապմունքից, ամեն վիճակից:

Հաւատամ, որ ընկերական ողի իսկ այդ է նշանակում, քայց ոչ թէ այն, որ քարոզում են մարդիկ, որք իրանք ընկերակցական ոգու ամենամեծ թշնամիներ են, թոյլ չտալով ոչ մի շարժում, ոչ մի մրցումն, որ դուքս է իրանց սահմանափակված համարի օգուտներից, խեղելով իրանց նախանձի մէջ ամեն նոր օգտական ազգային երեսոյթը, որովհետեւ իրանք ընդունակ չեն նոյնը իրագործել:

Ընտրողներ, աշխատեցէք շրջապատել ձեզ աղմարդիկներով:

Նորից ժողովուրդը, նրա շահերը, նրան ծառայելլ: Մինչեւ այդ ով էք ուշադրութիւն դարձրել այդ ժողովրդի վրա, ով էք դիմել նրան: Մինչեւ այդ դիմէին միայն, որ պէտք է ընտրել մեծամեծներին, ազա, իշխան, հարուստ մարդկանց: Այժմ քարոզվում էք աղատ ընտրութիւն, յանձնարվում էք կատարային նախապաշարմունքները ոսնակով անել և ընտրել անխափի այն ամենքին, որոնք կարող են ծառայել ժողովրդի գործին:

Այս սկզբունքների վրա առաջ տանելով ազիտացիան, երիտասարդութիւնը ընտրութեան օրը յաղթանակ տարաւ: Եկեղեցիներից ընտրված պատգամաւորների մեծամասնութիւնը «Մշակի» մարդկանցից էք բաղկացած. ընտրվեց ինքը, Արծրունին, ընտրվեցին Ռաֆֆին, Իգմայլեանը, Սունդուկեանը և ուրիշները: «Մշակը» այժմ էլ ընտրված պատգամաւորներին դիմեց, նրանց ցոյց տուեց թէ ինչ է սպասում հասարակութիւնը նրանցից: Ներսիսեան զպրոցին նա յատկացնում էք ահազին գեր: «Այդ գերը—քահանաներ և ժողովրդական ուսուցիչներ պատրաստելը—միայն Թիֆլիսի համար նշանակութիւն չունի, այլ բոլոր ուսուահայերի համար»: Թիֆլիսի հայութիւն վիճակվել է այդ բարոյական ոյժերի առաջնորդը հանդիսանալու բախտը, ապա ուրիշներ, Թիֆլիսը պիտի արդարացնէ ընդհանուրի ակնկալութիւնները:

Ամբողջ հայութիւնը նայում է մեզ վերա. ցոյց տանը որ մենք արժանի ենք մեզ ընծայած հաւատարմութեան: Թոյլ չտանք ոչ ոքին ասել, որ մենք անհոգ ենք ազգային գործերի վերաբերութեամբ եւ արժանի չենք նոցա:

Թիֆլիսի ժողովներդ, քեզանից եւ միայն քեզանից կախված էք ընտրել այնպիսի պատգամաւորներին, որք ազնուաբար կը լրացնէին իրանց պարտ-

ըր, քեզանից կախված էր ընտրել այնպիսի մարդիկներին, որք իրանց անձնական օգուտները եւ հակումները թողած, իրանց աչքի առաջ ունենային միմիայն ընդհանուր օգուտը:

Իբ կոչք «Մշակը» վերջացնում էր, պատգամաւորներին ուղղելով՝ այսպիսի խօսքեր.

Միթէ մեր մէջ չի դարթնի ինքնասիրութեան զգացմունքի նշոյլը, միթէ մենք եւ այս անգամ ընդհանուր գործի մէջ առաջվայ տարիների պէս մեզ անընդուակ կը յայտնենք:

Ոչ,—այդ լինելու չէ: Մենք պիտի ցոյց տանք, որ մենք զիտենք ուղղել մինչ սխալները եւ անկեղծ սրտով խոստովանելով նոցա, չինք ընտրելու այն տեսակ մարդիկներին, որոնց առաջ ընտրում էինք, այլ կընտրենք ընդհանուր գործը առաջ տանելու ընդունակ անձերին, նոր ոյժերով, նոր մարդիկներին, որովագրին եւ ժողովրդական գործին անկեղծ համակրող մարդիկներին:

Սեպտեմբերի 10-ին սկսվեցին պատգամաւորների պարագրունկները, որոնք տեսեցին երեք օր: Ընարութիւնները նոյն հետեանքները տուեին. Գրիգոր Արծրունին և նրա հետ աշխատող մի քանի մարդիկ հոգաբարձու ընարվեցին: «Մշակը» յաղթութիւն էր տօնում: Իսկ «Մեղմնուն»... Հետաքրքրական է այժմ «Մեղմնուն» նայել:

«Մշակը» մէջ մենք չենք տեսնում ընտ-

րութիւնների նկարագրութիւնը: «Մեղմուն» է, որ «Հունար հունար իշուն» յօդուածի մէջ ներկայացնում է. ծխական ընտրութիւնները ծաղրական դրութեամ մէջ: Ինչպէս երևում է, բաւական ուժեղ ու աշխոյժ է եղել երիտասարդութեան ազիտացիան: Եւ «Մեղմուն» ծանր հառաջում է, գանգատներ է անում: Ճարը կտրածի պէս նա ծաղրում է Արծրունու արտասանութիւնը, գնելով նրա ընթանում այսպիսի խօսքեր:

Բարձրագոյն ուսումը եւ կրտութիւնը արտասահմանեան կարող էին առանց զնահատվելու. հասկացան կնահատեցին: Եւ ինչպէս կարող էր այլապէս կատարուել. բանը վաղուց սարկուած էր այն անմիտ պտածների եւ տաղարկագլուխների դէմ:

«Մեղմուն» կանչում էր թէ ընտրութիւնները սարքած էին, թէ կուսակցութիւն է կազմվել: Նա պարտք էր համարում զգուշացնել, խրատել, և ասում էր. «Հոգաբարձու ընարվողը պէտք է հոգւով ճշմարիտ հայ մարդ լինի: Ոչ ֆրանսիացին, ոչ գերմանացին հոգւով, ևս աւելի համարքաղաքացին (կոսմոպոլիտ), որքան էլ իբրև մարդ լաւ լինի; օգակար չէ հայ դարրոցին հետեարար և հայ ժողովրդեան ներկայ պարագաներում»: Իսկ «Մեղմնուն»իմ Արծրունին, որ մասնագի-

տութիւն էր դարձրել «Մշակի» դէմ արշաւ-
ւանք մզելը, գրում էր.

Ումը յայտնի չեն այն խայտառակ միջոցները,
որոնք մենք գործ դրինք սպատղամաւորներ եւ հո-
գաբարձուներ ընտրել տալու համար, այսինքն ներ-
կայացուցիչներ ազգային կամ ժողովրդեան համոզ-
մունքների՝ այնպիսի մարդկանց, որոնք ըստ մեծի
մասին շայոց եկեղեցիների (Տփխիսի) ելք եւ մուտ-
քը չգիտեն, որոնք վաղուց է որ կտրել են իրանց
մրութեան կապը ազգի հետ եւ որոնք ծգուռմ են
դէպի օտարին եւ մեր այժմեան զրութեան մէջ մեզ
վիճակար համաշխարհականութիւնը, չկամինալով
մինչեւ անզամ հասկանալ ազգութիւն բառի նշանա-
կութիւնը:

Նշանաւոր է այս բանակոփառ մի քանի
կողմերով: Հայ պահպանողակամնութիւնը կըռ-
ւելու մի նոր միջոց չէր գտնում, թէն կըռ-
ւում էր վաղուց: Արովեանցին, Նաղարեան-
ցին, Նալբանդեանցին և առհասարակ բոլոր
նորերին մի ժամանակ անուանում էին լիւ-
թերական, աղանդաւոր: Անցաւ այդ ժամա-
նակը: Այժմ այլ ես կրօնով չէր կարելի վա-
խեցնել. և պահպանողակամները իրանց հա-
կառակորդներին անուանում էին կօսմօպօ-
լիս, հոգով օտարացածներ: Դա միենոյն հին
երգն էր, որի մէջ բառերն էին փոխվում
ժամանակի հետ: Էռթիւնը, դիմադրելու-

զէնքը միենոյնը մնաց մինչև այսօր էլ: Սե-
նկերիմ Արծրունին պահպանողականութեան
ամենամեծ իմաստութիւնն էր արտայայտում,
րարդելով հակառակորդների վրա այն ահա-
ւոր մեզադրանքը թէ նրանք եկեղեցի չեն
գնում, եկեղեցու դաները չեն ճանաչում: Դա
նշանակում էր որ միայն եկեղեցի դնացող-
ներն ունին իրաւունք լաւ, հասկացող հայ
լինելու: Եւ այդ ողորմելի զէնքը մնաց պահ-
պանողակամների ձեռքում և դրանից յետոյ,
երկար ժամանակ, երբ հարց էր լինում ընտ-
րութիւնների կամ առհասարակ աղգային-
վարչական դորձերի մէջ ձայն ունենալու
մասին:

Կուսակցութիւն, կանչում էին «Մեղուի»
մարդիկ մի տեսակ սարսափով, կարծես կու-
սակցութիւնը մի հրէշ էր, որ պիտի դողա-
ցնէր նրան մեր մէջ բերող երիտասարդներին:
Գրիգոր Արծրունին «Մեր կուսակցութիւն-
ները» առաջնորդողով բացարում է որ կու-
սակցութիւնը ոչ միայն սարսափ ազդող մի
բան չէ, այլ անհրաժեշտութիւն կեանքի
մէջ:

Ով ծանօթ է փոքր ի շատէ պատմութեան հետ,
պիտի ճանաչէ թէ կուսակցութիւնն եր ը
կաղմիլում են միայն այն ժամանակ, երբ հասա-
րակութիւնը բաղաքակրթվում է: Կուսակցութիւննե-

բը մի հասարակութեան մէջ կեանքի նշան են: Կուսակցութիւն բառը (partei) լատինական pars բառից, նշանակում է մաս կամ կազմ: Կա ուրեմն ժողովրդի մի խումբ է (մի մաս է), որ մի տեսակ ուղղութիւն ունէ: Կուսակցութիւնը միշտ կարող է առանց սիսալինու հպարտութեամբ ասել. ես ազդի մի մասն եմ կազմում:

Այն երկրներում, որտեղ բոլորովին ճնշված է քաղաքական եւ հասարակական կեանքը, որտեղ տիրում է կատարեալ անտարբերութիւն դէպի հասարակական գործերը, որտեղ արգելված է մի խումբ մարդիկներին ժողովիկ, դատել, խօսել,—այնտեղ չկան կուսակցութիւններ: Բոլոր այն ազգերի մէջ, որոնք քիչ շատ քաղաքական կեանքին բնդունակ են, հեշտութեամբ կազմում են կուսակցութիւնները:

...Զպատկանել ոչ մի կուսակցութեան բոլորովին պատի չէ բերում ոչ մի քաղաքացու: Ոչ մի կուսակցութեան չպատկանել նշանակում է աւելի եսական, կենդանական կեանք վարել եւ ոչ թէ հասարակական:

Բացատրելով այնուհետեւ կուսակցութիւնների բնաւորութիւնը, Արծրունին դալիս դիմում էր մեր կեանքի մէջ նկատվող շարժումներին:

10—15 տարի առաջ, ասում է նա, Թիվլիսի հայ հասարակական կարծիքը «Հին, ամենաիտած սերունդի» սեփականութիւնն էր: Փողովուրդը նախապաշարված էր ամեն մի նորութեան դէմ: Ռուսաց համալսարանները

աւարտած երիտասարդները փոքր առ փոքր սկսեցին հաւաքվել իրանց հայրենիքում, փորձեցին կազմել կուսակցութիւն և գործել պաւառների դէմ:

Երիտասարդներին անուանում էին վրբ, պրոտէստանտ, ազգ քանող, ազգատեաց, աշխատում էին նուազեցնել նոցա պատիւը հասարակութեան մէջ: Երիտասարդները կատարեալ իրաւունքով վըրդովովում էին այդ մեղադրանքների պատճառով: Նոքա ասում էին՝ մենք ցանկանում ենք միայն առաջ գ մութ իւն եւ աւելի ոչինչ... Նոքա իրաւունք ունէին, եւ շատ լաւ արեցին, որ խեցին պառաւների ծեռքից հասարակական կարծիքի իշխանութիւնը:

Ճամանակը անցաւ. հասարակական կարծիքը, զպրոցները, օրագրութիւնը այդ մարդիկների ծեռքումն է այժմ, նոքա բռնեցին պառաւների տեղը... բայց ինչ արեցին նոքա այդ ժամանակ... Նոքա հանգստացան իրանց յաղթութիւնից յետոյ, այն օրից յիտ նոցանից ոչ մինը իր ծեռք չառաւ ոչ մի զիքը, ոչ մի օրագիր, որ շարունակէ կարդալ, զարգանալ: Գասերը տափս էին զպրոցներում դրամական վարձատրութիւնն էլ ստանալով, բայց ոչ մի զիքը չէին կարդում դասաւութեան նոր մեթօզների վերա, ոչ մի խրատ չէին կամենում ընդունել այս ինչ կամ այն ինչ վերանորոգութեան վերա: Գիշերները անքուն անցնելով թուրթ խաղալումը, նոքա հաւատացած էին որ, ինչպէս որ լինի, միւս օրը յօրանջելով դասկը տան եւ կը ստանան իրանց ոռմիկը, հաւատացած էին որ հասարակական կարծիքի վիրա ազ-

դել չէ կարող ոչ մի նոր խումբ, նոցանից չէ կարող խլել հասարակական կարծիքի մենախմառը...

Յանկարծ կազմվեցաւ ժողովրդական մարդիկներից մի կուսակցութիւն... նմանապէս իրանց հայրենակիցներին լուսաւորելու նպատակով, —եւ ինչ է ներկայանում մեր աշքերին... Միեւնոյն մարդիկը, որը կատարեալ իրաւոնքով վրդովիրում էին, երբ պառաւները նոցա հալածում էին... միեւնոյն մարդիկը այժմ, նշանակութեանը հասնելուց յիտոյ, մոռանալով իրանց անցեալը, միեւնոյն անամօթ միջոցներն են գործ զնում նոր կազմված կուսակցութեան վերաբերութեամբ... սուտ լուրեր, բամբասանը, հայմոյանը, ամենակեղտուոտ ինտրիկաներ, զիտութեան գաղափարի պախարակելը, առաջադիմութեան նշոյների ոտնակոխ անելը...

Մեր այս գործի առաջին հատորում մենք մանրամասն նկարագրել ենք վաթունական թւականների մեր այն երիտասարդութիւնը, որ գործում էր Թիֆլիսում։ Դա Մօնկվայի հայ երիտասարդութիւնը չէր, առաջադիմական, եւրօպական քաղաքակրթութեան երկրպագու Թիֆլիսը մեր պահպանողականութեան նոր կերպարանափոխութիւնն էր ներկայացնում վաթունական թւականներին։ դա նոյն ազգամոլ-կրօնական ուղղութիւնն էր, բայց աւելի կրթիված, զարդացած։ Եւ այս պատճառով զարմանալի չէ որ այդ սերունդը հալածում էր «Մշակու» մարդկանց։

Սրծրունին այդ սերունդի շարունակողը չէր, այլ Մօնկվայի ազատամտութեան զարգացումը հայկական հողի վրա։ Այս հանգամանքը, այս պատմական հոսանքների յաջորդականութիւնը, Սրծրունին, ի հարկէ, չէր նկատումիր առաջին իսկ քայլերից։ Յետոյ պարզվեց ամեն ինչ, Բայց նշանաւոր է, որ Սրծրունուն այնպէս էր թւում թէ ընդհարվում են Թիֆլիսում՝ ոչ այնքան մեղանում գոյութիւն ստացած հոսանքները, որքան կըրթութեան սիստեմները։ Ռուսաստանում ուսումնական ստացած կրթութիւն ստացածների հետ—այսպէս էր ձևակերպվում թշնամութիւնը։ Գուցէ այդ իսկ ժամանակներում շատ փաստեր կային, որոնք այդպէս էին թեւլագրում։ բայց արտասահմաննեան և ոռւսական կրթութեան փոխադարձ թշնամութիւնն ու մշտական, հաստատ, անխուսափելի եւրեսյթ չը դարձաւ մեղանում և չէր էլ կարող դառնալ։ Այսպէս թէ այնպէս, Սրծրունին արդէն աղմանդաւորի հիտցմունքով էր վերաբերվում արտասահմաննեան և մանաւանդ գերմանական կրթութեան։ Եւ իր վերոյիշեալ յօդուածը վերջացնում էր այսպէս.

Զգո՞յշ կացէր, պարոններ, եթէ ոչ ժամանակով

կը փոշմանէք: Կամ հետեւեցէք մեղ, կամ սուս կացէք...: Տեսնմամ էք արեւմուտքում Եւրոպական լուսաւորութեան նշոյները: Այս փոքրիկ սեւ բիծը կարող է դառնալ մի սարսափելի ամսի: Եւրոպայից վերադարձած, լուսաւորութեան աղիւրի մօտ ուսում առած, ճշմարիտ գիտնական եւ աշխատասէք մարդիկների թիւը օրէցօր կը շատանայ: Այսօր երկու երեք են, վաղը կը լինեն տաս, մէկ էլ օրը քան...

Դրանից առաջ էլ Արծրունին «Լուսաւութեաննուիրակիները» յօդուածում (№ 15), «Պնուիրված էք Գերմանիայում ուսում առնող երիտասարդներին, իր ամբողջ յոցոր զնում էք արտասահմանցիների թիւ աւելանալու վրա:

Մեղ մնում է,—ասում էր նա—թէ հիների, թէ հասարակութեան, թէ նորերի հետ գործը փորձելուց յետոյ, ասել մնաք բարեւ եւ մտքում մը աւելացնել—առ յաւիտեան... Օտար երկրումը ձեր ճանապարհը բաց է, ձեզ առաջարկվում են պաշտօններ եւ պարապմունք... Բայց որովհետեւ ձեզ մօտ խօսքը եւ գործը համաձայն են, զուր պիտի գաք, որ կուէք: Փոքր թուով լինելով դուք կը յալթվէք, որովհետեւ տղիմութեան տարրի ընդդիմութեան ոյժը զեռ եւս շատ զօրեղ է... Միայն բաղմաթիւ լինելով, կամ զոնէ մի խումբ կազմելով, լուսաւորութեան նուիրակները կարող են յուսալ թէ կուէք աջողակ կը լինի:

Այսպէս էք թւում առաջին քայլափոխում, այսպէս էք խօսեցնում անսահման հաւատը

դէպի արտասահմանեան կրթութիւնը: Փորձ դեռ չը կար: Բայց փորձը կը լինէք շուտառվ և Արծրունին կը համոզվէք թէ որքան ինքը սխալված է եղել իր ջերմ հաւատի մէջ: Արտասահմանը բացառութիւն չէք, այնտեղ էլ պատրաստվում էին զանազան տեսակ մարդկի և դրանցից շատերը պիտի գային հայրենիք ոչ թէ կուելու հնութեան դէմ, այլ ուղղակի այդ հնութեան, յետամնացութեան շարքերը մանելու համար...

Իսկ մինչև այդ, Արծրունին մեր ցուրտ ու անհրապար իրականութեան մէջ ոգեսրված էք այն հաւատնականութեամբ, թէ Եւրոպայում դիմուրներ են պատրաստվում և մինչև նրանց զալը նա ինքը, համարեա մենակ, կոփւ էք յայտարարել և առաջ էք տանում նրան: «Է՛լ չենք հաւատում» առաջնորդողի մէջ նա մի զարմանալի ուժեղ ոճով դատապարտում է հակառակորդներին և ցոյց է տալիս որ այլ ևս ոչինչ համերաշխութիւն լինել չէ կարող».

Մենք հաւատում էինք ձեզ, որ դուք ուսումնական, գիտնական, առաջադէմ, գործունեայ մարդիկ էք,—բանի որ հեռուից էինք նայում ձեզ վերա, բանի որ ինքներս այնքան զարդացած չէինք, որ ձեզ քննադատնենք:

Այժմ է՛լ չենք հաւատում:

Մենք միամտաբար հաւատում էինք, որ զուք օրագրութեան վերաբերութեամբ ծեր կարողութեան չափ արդիւնաբերում էք նոր մտքեր, առաջ էք բերում նոր կենսական պահանջներ... բայց դժբաղդապէս համոզվեցանք որ ծեր զործունէութիւնը ոչ թէ օգտական չէ եղիլ, ոչ թէ ապարդին է անցել, այլ վերին աստիճանի վնասել է, որովհետեւ զգուանք է ծնել ժողովրդի մէջ դէպի տպած խօսքը առնասարակ եւ դէպի լրագրութիւնը մասնաւորապէս:

Այժմ է՛լ չենք հաւատում:

Մենք կարծում էինք, որ զուք ընդունակ էք կենսական պահանջների վերաբերութեամբ ծանր եւ օգտական նետազոտութիւններ անել,—բայց անդադար պատահելով քարոզներ ի եւ ոչ մի նետազոտութիւն, ոչ մի նոր ինքնուրուն միտք չը զբտնելով, համոզվեցինք որ ծեր զրաֆածների մութ լինելու պատճառը է մի բարի ցանկութիւն մորեիր աղբատութիւնը լեզվի ծեւերով ծածկելու:

Այժմ է՛լ չենք հաւատում:

Բարոյականութեան վերա ծեր քարոզները կարդալով, մենք հաւատացած էինք որ իրանք քարոզիչներն էլ պիտի բարոյական լինեն: Բայց մարուք խղճմտանքով հրապարակապէս անուանում ենք ծեղանքարոյական անքարոյական ականք, որովհետեւ ծեր խօսքի եւ գործի մէջ միշտ անհամաձայնութիւն եւ հակառակութիւն ենք տեսնում: Գուք դաստութիւն անելով, նոր զիրք չէիք կարդում, յօդվածներ եւ քարոզներ գրելով ինքներդ չէիք հետեւում գիտութեան առաջադիմութեանը, քարոզում էիք լոյս, լուսաւորութիւն, առաջադիմութիւն, բայց հասարակութեան մէջ նոր յայտնող ոյժերը ծեր նախանձի մէջ ատելութեամբ խեղդում էիք:

Այժմ է՛լ չենք հաւատում:

Դուք ծեղանքով կարդարացնէք, որ այդ նոր յայտնող ոյժերը փոխանակ ծեղանքութեամանալու, հէնց սկզբից պատերազմեցին ծեղ հետ, հակառակեցին ծեղ... Բայց միթէ զուք երեխայի միամըտութեամբ կարծեցիք, որ նոր միտքը կարող է չը պատերազմել հինի հետ:

Մենք ծեղ այդքան միամիտ չենք կարծում եւ համոզված էինք, որ զուք հասկանում էք այս տարրական ծշմարտութիւնը:

Այժմ է՛լ չենք հաւատում:

Մենք միայն մի բանի դէմ մինչեւ այժմ չը համարձակվեցանք խօսել,—այն է ծեր լեզուի հմտութեան վերա: Բայց երբ համոզվեցանք, որ լեզուի գիտցողները մութ, անհասկանալի, ծանծրալի են զրում, երբ ծեր զրվածները չարունակ կարդալով, ոչինչ չը սովորեցանք եւ ոչինչ չը հասկացանք,— երբ կարդացող ժողովրդից ծեր լեզուի հմտութեան դովասանութիւններ լսելով հետաքրքրեցանք հարցնել թէ ինչպէս է հաւանում նա միտքը եւ պատասխան ստացանք որ միտքը չենք հասկանում:

Այժմ է՛լ չենք հաւատում:

Եւ այս կուսակցութիւնը, որի դէմ ուղղված էին այս համարձակ, անխմայ մեղագրանքները, աշխատում էք պաշտպանմիել, հականարուածներ տալ: Բայց ինչպէս: Հայ կօսմօսօլիսների, հայ եկեղեցու գոները չը ճանաչող նորերի դէմ կազմած իր ահազին մեղագրական ճառի մէջ «Մեղուի» սիւներից մէկը, Սևնեքերիմ Արծրունի, ատում էք.

«Մենք հայերս չենք կարող լինել մեր կարծիքների մէջ ծայրայիզ, որպէսիւս մենք ոչինչ չունենք դոհարերութեանց համար, ոչինչ, բայց մեր անհատական կոյութիւնը»։ Սրանից դէնը այլ ևս չէ կարող գնալ պահպանողական անշարժութիւնը և մատավախութեան այդ քվինտ-էստէնցիան շատ լաւ ապացոյց էր, որ Արծրունին իրաւունք ունէր խփելու պահպանողականութեան դէմքին՝ «Եյժմ էլ չենք հաւատում»։ Զը պէտք էր հաւատալ, չէր կարելի հաւատալ և պահպանողականութեան այդ հիւանդու յարձակուները մի-մի առիթ էր Արծրունու համար գուրս բերել մեր ազգային վատ յատկութիւնները հրապարակի մէջ։

Այսպէս, հոգաբարձական ընարութիւնների միջնորդն Պետրոս Սիմէօնեանցը տպեց «Մեղուի» մէջ մի նամակ, որ պարունակում էր ինչ-որ մութ ակնարկներ Արծրունու տեսչութեան մասին Մարիամեան և Գայիանեան դպրոցներում։ Այդ ակնարկներից կարելի էր հետեւցնել թէ Արծրունին ինչ-որ շահամոլ ձգտումներ է ունեցել։ Արծրունին պատասխանեց Սիմէօնեանցին։ Բայց բանը այդ պատասխանը չէ երեսյթը առիթ տուեց նրան գրել՝ «ԱՌԻ խայտառակենք» գեղեցիկ առաջնորդողը։ Այդտեղ նա խօսում էր ազ-

գային արատների մասին։ Ասում են թէ ստորյատկութիւնները—խարերայութիւնը, անաղ-նւութիւնը, խարդախութիւնը յատուկ են քաղաքակիրթ ազգերին։ Հը զարգացած, նահապետական ազգերը պարզամիտ են։ Սարնդհանուր համոզմունք է, բայց անհիմն համոզունք։

Շատ հեշտ է մի բանի մէջ համոզված մնալու, ասում է Արծրունին։ հարկաւոր է միայն փակել աչքերը ու բամբակ կոխել ականչների մէջ—եւ դուք հաւաստի կարող էք լինել որ ձեր համոզմունքին հաւատարիմ կը մնաք...

Ամբողջ մարդկութիւնը այդպէս էր զործում պատմութեան ամբողջ ընթացքում ամեն նոր, առաջադէմ, լուսաւոր, նորովիչ երեւոյթի վերաբերութեամբ։ Ես չեմ կամնում լսել, —եւ չեմ լսի. չեմ կամենում տեսնել, եւ չեմ տեսնի...

Հին և միջնադարեան մարդկութեան պատմութիւնից վկայութիւններ բերելով, որոնք հաստատում են թէ ստորյատկութիւնները, ընդհակառակն, յատուկ են տղիսութեան և անզարգացած մաքին և հետզհետէ չըանում են, երբ մի ազգ քաղաքակրթութեան աստիճաններով բարձրանում է, նա բերում է մի այսպիսի համեմատութիւն։

Լուսաւորքած, մանաւանդ ռամկապետական ոգով կրթված ազգութիւնները ուրախանում են, երբ իրանց

մէջ նոր երեւոյթ են տեսնում, նոր ոյժ են նշմարում, աշխատում են ամեն միջոցներով օգնել, նըպաստել այդ նոր յայտնվող հասարակական զօրութեան, պարապեցնել, բարձրացնել, գործ զնել նորան, որ ոչ մի հասարակական թարմ գործիչ կորած, անպէտք չը մնայ մարդկային հասարակութեան համար:

Մեղանում, ընդհակառակն, այն որ հին է, բապաված է, անպէտք է, այն որ ցած է, անազնիւ է,—նա լաւ է, օգտաէտ է համարվում, որովհնտեւ մննը ինքներս լի ենք պակասութիւններով եւ կարող ենք միայն մեղ նման զօրութեան հետ յարմարվել:

Նոր յայտնվող, թարմ, կենդանի, զօրեղ երեւոյթը ձեր մէջ նկատելուն պէս, իսկոյն ծնվում է ձեր մէջ յետափայ գովինի զգացմունքը,—ա՛ թի իս այտառ ակենք այս ինչ նոր մարդին, կամ այս ինչ նոր երեւոյթը...

Այնուհետև Արծրունին տալիս է մի պատկեր, որ հաւանականաբար, իր կեանքից է վերցրել: Ինչպէս երեւում է, թիֆլիս վերադառնալու առաջին ժամանակը, Գայֆանեան և Մարիամեան ուսումնարանների իր աեւչութեան հանդամանքներն են խօսում հետեւալ տողերի մէջ.

Նախ եւ առաջ բարեկամանում են այն անձի հետ, շողոքորթում են նորան, ցոյց են տալիս որ կամենում են անպատճառ նորանից օգուտ քաղել...

Քեզ գրաւում են, գովում են, տալիս են պարապմունք, զուցէ պաշտօն,—միեւնոյն ժամանակ քեզ վերաբարձում են անթիւ պարտաւորութիւններ եւ չեն տալիս ոչ մի իրաւունք... Որ դու իրաւունքները չես ստացել ունենալով շատ պարտաւորութիւններ, այդ դու ուշ ես նկատում, դու պահանջում ես քեզ համար իրաւունքներ... աղաղակ, աղմուկ, անբաւականութիւն —«մինք հաւասարութիւն սիրող մարդիկ ենք, մենք չենք կարող տանել միապետական ազդեցութիւն»: Քեզ կը տան պաշտօն, քեզանից կը պահանջնեն պարտաւորութիւններ, —եւ միեւնոյն ժամանակ կաշխատեն վիրաւորել, անբաւականութիւն զցել—մինչեւ որ կը զգիս: Այն ժամանակ նորա իրանց նպատակին հասած են,—այդ մարդը անընդուն ակ է: Քեզ կը տան մի պարապմունք, կը յանձնեն մի հիմնարկութիւն կառավարելու, —բայց միեւնոյն ժամանակ չեն տայ նիւթական ոչ մի միջոց: Նիւթականից զրկված դու ի հարկէ ոչինչ չես կարողանայ անել,—եւ նորա իրաւունք կունենան ասել, նա անընդունակ է... մենք սխալվեցանք:

Սրանք, այս, մեր բարքերն են: Եւ այդ բարքերի ամբողջ գառնութիւնը անձամբ, թէս շատ կարծ ժամանակով, փորձած Արծրունին այսպէս էր վերջացնում իր այդ յօդուածը.

Եկէ՞ր, եկէր նոր մարդիկ, եկէր ձեր ուսմամբ, հմտութիւններով, բերէր այստեղ ձեր անխոնջ աշխատանքով համբերողութեամբ վաստակած գիտութիւնը, աղնութիւնը, բերէր Եւրօպայից վսիմ մարդիւնը,

դասիրական մտքերը, ձեր սրտերի մէջ հաւատ դէպի լուսաւորութեան առաքելութիւնը. եկէք որդիքը ձեր ծնողների մօտ, մտէք ձեր քաղցր բնտանիքը, վերաբարձէք ձեր հայրենիքը, ծեռք մեկնեցէք ձեր սիրելի հայրենակիցներին... մենք զիտենք ինչ կանենք.... Մենք միմեանց արդէն տուած ունենք մի կախարդական խօսքը, որի դէմ չէ կարող զի մանալ ոչ մի բարոյական ոյժ..., ա՞ր ի սրան էլ խայտ առակ ենք:

Այսպէս ահա, բանակոփուը Արծրունուն միայն օգնում էր հասարակական պակասութիւններ գտնելու և նրանց հրապարակում դատավիետելու համար: Բայց չէ կարելի առել թէ Արծրունին գոհ կարող էր մնալ իր հակառակորդների դործ դրած միջոցներից: Ինչպէս «Հայկական Աշխարհում» նա շարունակ պահանջում էր որ մաքերի փոխունակութիւն տեղի ունենայ մեղանում, որ մի գրողի մտքերը քննադատէ միւս գրողը, այնպէս էլ «Մշակի» մէջ նա շատ անդամ էր կրկնում որ բանակոփուը հարկաւոր է, որ նա անհրաժեշտ է՝ ճշմարտութիւններ պարզելու համար: Իբներով այդպէս, լինելով մի ոյժ, որ մտքերի ընդհարում էր առաջացնում, մի ոյժ, որի վերաբերմամբ չէին կարողանում անտարբեր մնալ ժամանակակիցները, Արծրունին ի հարկէ, չէր ասում թէ կոփուը կարելի

է մզել բոլոր միջոցներով. նա պահանջում էր որ հակառակորդը լինի ազնիւ, խոր ու լուրջ մտածող, որ գատողութեան և քննութեան ձեր լինի շիտակ: «Մեղուն» այդպէս չէր կարողանում մարտնչել «Մշակի» դէմ և յարձակումը, բանակոփուը հասկանում էր անձնական վիրաւորանքի, հայնոյանքի մաքով: Մենք տեսանք, որ նա ծաղրում էր, օրինակ, Արծրունու արտասանութիւնը. Գելիէտօնիստ Զաքումի խայթոցներին նա պատասխանում էր, բերելով այն, որ նա բնական պակասութիւն ունի, այն է, որ նրա մի ստը կարծ է: Այդպիսի բաների դէմ Արծրունին հարկաւոր էլ չէր համարում խօսել: Նա կուռում էր աւելի այն միջոցների դէմ, որոնցով հակառակորդները աշխատում էին ծուռ մեկնութիւն տալ իր մտքերին, աղաւաղել, աղճատել իր ասածները: Պոլէմիկական անբարեկազմութեան օրինակները նա բացատրում է՝ «Եղէ էր պակաս» առաջնորդողի մէջ (№ 41):

Ամբողջ 1872 թւականի ընթացքում «Մեղուն» էջերից «Մշակի» դէմ կուելու ամենասեծ և առնդը ցոյց էր տալիս փաստաբան Սենեգերիմ Արծրունին: Նա նոր էր սկսել զրել և իրան յայտնի դարձնել ուզում էր համարեա միմիայն բանակուի մէջ, ուրիշ նիւթեր նա չուներ: Եւ ահա Գրիգոր Արծ-

բունին այդ յօդուածով գալիս էր ցոյց տալու, թէ մի նոր չարիք էլ է աւելացնել հայոց մամուլի մէջ։ Կային մինչև այդ երկու չարիք։ Մէկը բարոյականութեան քարոզն էր, միւսը փասծ ճարտասանական մեթօդը։ Իսկ որն էր այդ երրորդ, նոր չարիքը։

Ընթերցող—ասում էր Գրիգոր Արծրունին—զուք զիտէք ինչ է փաստաբան (աղվօկատ)։ Գուք մի քրէական զործ ունէք, կամ մի քաղաքական վէճ։ զուք գալիս էր փաստաբանի մօտ և ինդուում էր նորան դատաստանի առաջ պաշտպանութիւն ծեր հակառակորդի դէմ։ Զեր հակառակորդը նոյնն է անում։ Երկուսն էլ հաւատացած են, որ արդար են, կամ զոնէ ծեւանում են իրանց այս բանի մէջ համոզված։ Մինը ասում է սեւ, միւսը սպիտակ եւ փաստաբաններից մինը պիտի աշխատէ ապացուցանել թէ զործը սեւ է, միւսը թէ նա սպիտակ է։

Բայց որովհետեւ միեւնոյն բանը չէ կարող թէ սեւ թէ սպիտակ լինել, ուստի փաստաբանին մնում է ապացուցանել որ նա ոչ սեւ է, ոչ սպիտակ, թէեւ սեւ է, բայց միեւնոյն ժամանակ սպիտակ է, կամ աւելի լաւ ասենք, թէեւ սպիտակ չէ, բայց սեւ էլ չէ եւ այլն։

Սա փաստաբանական մեթօդ է։ Ինչու է այդպէս։ Ճիշտ դիտութեան մեթօդը այն է, որ նախ կատարվում են հետազոտութիւններ, առա միայն դրանցից հանդում են եղբակացութիւններ, հետեանքներ։ «Փաստա-

բանը, ընդհակառակն, նախ և առաջ իրան մի նապատակ, մի հետեանքը է նշանակում և յետոյ նոր սկսում է պտուել, որոնել ապացոյցներ, այն հետեանքին հասնելու համար»։ Այս խակ փաստաբանական մեթօդը գործադրվում է և գրականութեան մէջ։

Ասենք թէ ես յանձն եմ առել կրիտիկայի մէջ պաշտպանել «Մերուն» «Մշակի» գէմ, —ես փաստաբան լինելով, ակամայ ենթարկվում եմ իմ սովորական մեթօդին։ Ես չեմ կարող հետազոտել «Մեղուի» եւ «Մշակի» արժանաւորութիւնները ու պակասութիւնները, որովհետեւ ես հետազոտելու նպատակով չեմ յանձն առել կրիտիկը, այլ այն նպատակով, որ ապացուցանեմ թէ «Մեղուն» լաւ է, բան թէ «Մշակ»... Վաղը զուցէ քամին փոխվելով, ես նոյն ճարտարութեամբ կը սկսեմ ապացուցանել թէ «Մշակը» լաւ է «Մեղուից»...

Աղվօկատ կրիտիկոսին հարկաւոր է ապացուցանել որ մեղանում չէ կարող հաստատ ուղրութեամբ մի կուսակցութիւն կազմվել, նորա համար իր գործը տանելու համար, անպատճառ հարկաւոր է այդպիսի բան ապացուցանել։ Նա չէ կարող հետազոտել, որովհետեւ եթէ նիշտ մեթօդը գործ զնելով, նա սկսէր հետազոտել, զուցէ կը զրտներ թէ կարող է կազմվել կուսակցութիւն, եւ զուցէ կը տեսնէր որ արդէն կազմվեցաւ, —բայց նորան անպատճառ հարկաւոր է ապացուցանել որ չը կայ... ուստի նա իր դատողութիւնը նորանով է սկսում, որ մեղանում եղած ուսումնարանները եւ կրթութիւնը չեին կարող այնպիսի մի հաստատ ուղրութիւն տալ,

որ կազմին համոլմունքները, բայց որովհետեւ մի-
եւնոյն ժամանակ կուսակցութիւն կազմելու համար
պէտք է շատ մարդիկ լինին, ուրեմն ոռւս համա-
լսարաններից դուքս եկած մարդիկը կարող են կազ-
մել մի հաստատ կուսակցութիւն, աւելի բազմաթիւ
լինելով, բան թէ արտասահմանից եկածները:

Նա չէ ապացուցանում թէ կայ կամ չը կայ...
բայց նա ապացուցանում է որ չէ կարող լինել
որովհետեւ հարկաւոր է նորան ապացուցանել որ չը
կայ... եւ այլն...

Այդ յօդուածին Սենեքերիմ Արծրունին
պատասխանեց մի ահազին յօդուածով, որ
բանում էր «Մեղուխ» բանասիրական բաժնի
ամբողջ չորս երեսները: Բայց ինչ էր նա
ասում:—Այն, որ ամենահին ժամանակներից
եղել են փաստաբաններ, որոնք ճառեր էին
ասում բարձր ոճով, որ փաստաբանների մէջ
եղել են երեելի գործիչներ, զրովներ, որ
փաստաբանները դատարաններում այս էին
անում, այն էին անում: Հարցը զրականու-
թեան մէջ գործադրվող փաստաբանական
մեթօդի մասին էր, իսկ նա փաստաբանական
դասակարգի մասին էր խօսում, կարծես
հարց կար փաստաբանների լինելու կամ չը
լինելու մասին, կարծես առված էր թէ փաս-
տաբանը չէ կարող լաւ գործիչ, երեելի զրոյ
լինել: Եւ «Մշակը» չնորհակալութիւն էր

յայտնում Սենեքերիմ Արծրունուն, որ նա
իր յօդվածով հաստատեց մեր ասածը աղ-
փոկատական դրականական մեթօդի վերա»:
Եւ այդ նկատողութիւնը «Մշակը» վերջացնում
էր մի ոռւսերէն ասացուածքով՝ „Մա որ պա-
ռեցի ասացուածքով, «Մեղուխ» ռազմական
մասը նման էր այս ասացուածքին, որի
բառացի թարգմանութիւնն է. «Մենք վառա-
րանի մասին ենք խօսում, նա՝ ճրագի մասին»...

IV

Ու միայն խանդել, այլ եւ շինել:—ի՞նչ է խմբագիրը:—Հետազոտուրիւն եւ ոչ խարող:—Ներգործական յացիր:—Մայրենի լեզուի հաւրցիր:—Մի ոռուերէն բրոշիր մեծ եւ փոքր ազգերի մասին:—Արծրունու պատասխանը:—Բանակոյի ոռու յագիրների դեմ:—Հայի բշնամին:—Ինձնամնուրեան մեծ սկզբունքը:—Հայ կինը:—Անհատի զարգացման օրենքի:—Թարում:—Ինձնուրոյն գրականուրեան պահանջ:—Կայսիկական եւ Ռեզական ուսուռ:—«Մեր տեսեական պազգայ»:—Հայերի վաճառականական դերը:—Փոխադարձ ինքնօգնուրեան սկզբունքը:—Ինչադաշնան վախառուրիւն, սպառողադան բնկերուրիւններ, փոխառու-ինմայրուական զանձաւաններ:—«Ենթիմ տեսուրիւն» բաժինը:—Վաճառականուրիւն, գործարանական կեանի, մասն արդիւնաբերուրիւն, պրօքտարիաս, օստա դրամագուխներ, մշրցուրեան ոլժը:

—co—

Մինչև այսուեղ մենք տեսանք Գրիգոր Արծրունու գրուածքների մի կողմը միայն—պատերազմ այն ամենի դէմ, ինչ փտած է, անշարժ է հայոց կեանքի մէջ, ինչ խոչընդուռ է հանգիստանում առաջադիմութեան, քաղաքակրթեան գործում: Պատերազմը առաջին իսկ քայլից յայտարարվում է, ինչոք առաջանք, այն տարրերի դէմ, որոնք հասա-

րակութեան մէջ գեր են կատարում, բայց անբարեխիղն են, պարտաւորութիւններ չեն ճանաչում, հետեաբար և կատարում են միայն բացասական գեր: Ո՞վ էր որ գուրս էր մնում այդ պատերազմից. ով էր, որ հարուածների չեր ենթարկվում:—Այդ էլ մենք տեսանք—բուն ժողովուրդը: Ժողովուրդը մեզաւոր չեր. նրա արատները շատ էին, բայց առաքինութիւններն էլ շատ էին. նա տղէտ էր, անպատճասա, տնտեսական վատ պայմանների մէջ ճնշված—ահա նրա արդարացումը: Նա պահանջում էր ծառայութիւն կարող մարդկանց կողմից, կարօտ էր օգնութեան: Եւ ով չեր ծառայում նրան, ով կարող էր օգնել, բայց չեր օգնում, նա այն փտած ու վեսասկար ոյժն էր, որի դէմ Արծրունին պատերազմում էր:

Սակայն միայն պատերազմը, միայն յարձակումներն ու բանակոփւը չեին Արծրունու գործը: Թշնամիններն ասում էին թէ նա քանդում է ամեն ինչ: Նշանակում էր որ նրանք միայն մի կողմն էին տեսնում: Քանդել ու միայն աւերակներ փոել և բաւականանալ գրանովլ—լինում են, այն, այդպիսի զրական գործիչներ էլ, Բայց Արծրունին այդպիսիներից չեր: Եարունակելով հետեւել նրա առաջնորդողներին, մենք ահա այժմ կը տեսնենք,

որ նա միայն կոխւ չեր մզում, այլ և մտքեր,
գաղափարներ էր արծարծում:

Ամենից առաջ տեսնենք թէ ինչպէս էր
Արծրունին հասականում խմբագրի պաշտօնը
(«Ինքնակոչ Խմբագիր», № 3):

Ինչեւ մի լրագրի խմբագիր, նշանակում
է մի հասարակական պաշտօն յանձն առնել:
Հասարակական պաշտօնը երկու ճանապար-
հուլ է ձեռք բերվում. կամ հասարակութիւնն
է ընտրում, կամ իշխանութիւնն է նշանա-
կում: Խսկ խմբագիրը. ով է նրան ընտրում,
ով է նրան նշանակում—Աչ ոք: Խմբագիրը
ինքն է դուրս գալիս հասարակական պաշ-
տօն ստանձնելու: Նա, ուրեմն, ինքակոչ է:
Բայց ինչ է այդ ինքնակոչ պաշտօնեան: Կար-
ծում են թէ նա հասարակութիւն դաստիա-
կիչն է: Բայց դա մի ծիծաղելի յաւակնու-
թիւն է: «Այսպիսի մարդից ես կը հարցնէի.
Արդեօք ով է իրաւունք տուել քեզ ժողովրո-
դի դաստիարակից պաշտօնը սեպհականա-
ցնելու»:

Խմբագիրը, հասարակական այդ ինքնա-
կոչ պաշտօնեան, դաստիարակիչ չէ: Ապա
ինչ է: Եթէ յիշում էք, Արծրունին «Հայկա-
կան Աշխարհի» մէջ էլ հարևանոցը չօշա-
գիւլ է այդ հարցը: Այն ժամանակ նա խմբա-
գիր չէր, բայց իրեն կրող առում էր իր

գերը հետազօտողի գեր է: Նոյն այդ սկզբ-
բունքը նա արծարծում է այժմ իրեն խըմ-
բագիր:

Մեր դարում առաքեալներ եւ մարգարէներ չը
կան: Մեր դարը աշխատողների դար է:—Մարդիկ,
որոնք հաւատում են իրանց քարձր կոչմանը, կամ
ինչպէս ասվում է, իրանց գործունէութեան մէջ ու-
ղեկից են համարում իրանց քարի աստղը,—այդ-
պիսի մարդիկ ծիծաղելի են թւում տասն եւ իննե-
րորդ դարի համար: Այժմ հարկաւոր են մեզ այն-
պիսի մարդիկ, որոնք ոչ թէ երկնային ոգով շնչա-
ւորված զային քարոզելու խաւարը փարատելու հա-
մար,—այլ մշակներ, որոնք աշխատէին յարմարվե-
լով ժամանակակից պահանջներին:

Աչ, հասարակական դաստիարակութիւ-
նը պէտք է սպասել նոյն խսկ հասարակու-
թիւնից. Նա ինքը պիտի դաստիարակվի, և
մասնաւոր մարդը, խմբագիրը, պէտք է ու-
րիշ կերպ հասկանայ իր պաշտօնը: Խմբագի-
րը հասարակական ասպարէզում պիտի լինի
նոյնը, ինչ է ընապէտը ընական հարստու-
թիւնների հետազօտութեան ասպարէզում:
Ինչպէս քնութեան մէջ, այնպէս էլ հասարա-
կութեան մէջ կան քնած մտաւոր ոյժեր,
քնած զօրութիւն, քնած հարստութիւն, մը-
տաւոր անմշակ, հում նիւթ:

Գրագէտից, լրագրի խմբագրից պիտի պահանջենք, որ նա հետազօտի հասարակական հողը, քննի նորան կազմող մասերը, զարթեցնի քնած մտաւոր զօրութիւնը, յարուցանի մտաւոր հարուստ հանքերի արդիւնաբերութիւնը...

Ամօթ է այն խմբագրութեանը եւ խմբագրին, որ երկար ժամանակ հրատարակելով մի պարբերական գրքած, չը կարողացաւ զարթեցնել ընդունակութիւններ, իր չորս կողմը կազմել տաղանդներ, կրթել գրողներ:

Ողորմելի է այն օրագիրը, որը տասը տարիից աւելի հրատարակվելով, չը կարողացաւ հետազօտել հասարակական հողը եւ նրա մտաւոր հանքերի խորբից յարուցանել ինքնուրոյն արդիւնքներ, զարթեցնել ին քնուրոյն ու թիւն:

Սյա տողերը, որոնք լոյս տեսան այն ժամանակ, երբ «Մշակրա քսան օրական մի ծընունդ էր, չափազանց նշանաւոր են» Երիտասարդ խմբագրը որքան գեղեցիկ կերպով հասկացել էր նաև և առաջ իրան: Զէ եղել մեղանում մի մարդ, որ նրա պէս քնած ոյժեր զարթեցնել, տաղանդներ առաջ քաշել, ինքնուրոյնութիւններ յարուցանել խմանար: Այդ գրուածքի մէջ Արձրունին, գուցէ և ակամայ, գուցէ միայն իր անսահման հաւատի գեռ անորոշ զիտակցութեամբ, նկարել է «Մշակրա խմբագրին՝ նրա քսան տարվայ գործունէութեան ընթաց ում: Առաջ տանելով այդ զարմանալի յօդուածի ընթերցանու-

թիւնը, մենք գեռ էլ չատ մարդարէական ցուցմունքներ ենք տեսնում:

Լրագրի հիմնողը, ասում է Արձրունին, չատ անգամ լինում է մի անյայտ անձ, ծանր, անհամ, անոճ, անմարտելի գրող: Բայց նա ընդունակութիւն է ունենում ճանաչել մարդ, «Ճանաչել ծնվող տաղանդ, հետազօտել հասարակութեան մէջ քնած հարստութիւն, չըջապատել իրան ընդունակ մարդիկներով, ուղղութիւն տալ ամենքին, հասկացնել վերջապէս ամենքին իրանց ընդունակութեան յարմարվող գրական ստեղծվածի ձեր»: Անհան ստանաւորներ գրողին խմբագրիր դարձնում է վիստասանութեան ձերն և նա, որ առաջ անյայտ էր և ազգեցութիւն չունէր ընթերցողի վրա, դառնում է նշանաւոր քոմանիստ *): Միջակ արժողութեան դրամաների, կօմեդիաների հեղինակը դառնում է, ուրիշ հանգամանքների և չըջանի պատահելով, տաղանդաւոր ֆելիչտօնիսատ... և այլն:

Եւ այսպէս, հետազօտիչ և ոչ քարոզիչ: Բարողների դարը անցաւ: Խմբագրիր ոկտար

*) Այսպէս էր Բաֆֆին: Նա սկսեց ստանաւորներով, քայց նրա տաղանդը բանաստեղծութեան այդ ձեր մէջ չէր: Իրեւ ստանաւորների հեղինակ նա անհշան կը մընար. քայց թողնելով ստանաւորը, դարձաւ նշանաւոր գիպագրող:

է պահանջ, ինքնուրոյնութիւն զարթեցնող լինի: Վերջապէս կայ և ամենանշանաւորը.

Խմբադիրը պիտի կաղմի խմբագրութիւն, որտեղ աշխատէ միացնել մոռաւոր ոյժ... որ երբ ինքը կը հեռանայ, կը թողնէ ասպարէզը, հասարակութիւնը կարողանայ ասել թէ նորա գործունէութիւնը ապարդիւն չը մնաց, որովհետեւ նա իրանից յետոյ մտաւոր զօրք թողեց, որ սկսած ուղղութեամբ եւ անընդհատ աշխատանքով պիտի շարունակէ լուսաւորութեան համար պատերազմելու:

Ահա ինչ է հասարակական այն ինքնակոչ պաշտօնեան, որի անունն է խմբագրութիւնն Արծրունին էր մեղանում այդպիսի խմբագիր, որ ոչ միայն լաւ գիտէր թէ ինչ պէտք է մտնել այդ պաշտօնի մէջ, այլ և առաջին քայլերից մասձում էր ասոլարէզից հեռանալու, մտաւոր զօրք թողնելու մասին: Այսպէս բացատրելով խմբագրի էութիւնը, կամ աւելի ճիշտն ասած՝ իր էութիւնը, Արծրունին մի ուրիշ յօդուածում («Օրագրութեան նշանակութիւնը», № 39) բացատրում էր թէ ինչ պիտի լինի լրագիրը կամ աւելի ճիշտն ասած՝ «Մշակը»:

Հրապարակախօսութիւնը մի գլխաւոր և առաջին յատկութիւն ունի—առաջադիմութիւն: «Շարունակ առաջ գնալ, զարդանալ,

հետեւել նոր մտքերին, մարդկային մտքի զարգացման... Առանց այս առաջին և անհրաժեշտ յատկութեան, լաւ է որ օրագրութեամբ պարապել յանձն առնողը կօչկակարութեամբ պարապէ... բայց միթէ կօչկակարը կարող է յուսալ որ միշտ առնող կունենայ, եթէ նա կօչիկներ կարելու ձեր երբէք չի փոխի, չի կատարելագործի, այլ կը պատրաստէ իր վաճառքը հին, նահապետական ձեռվք:

Իսկ լրագիրը պիտի հասարակութեան մէջ ներգործ ական գեր կատարէ: Կան եւրօղական լրագիրների մէջ կը աւոր ական գեր կատարազներն էլ, բայց նրանք նախ և առաջ քիչ են, երկրորդ՝ հասկանալի, օրինական երեւոյթ են եւրօղական կեանքի մէջ, մինչդեռ մեղանում բոլորավին անտեղի ու անհարկաւոր են: Բայց ինչ են ներգործական և կրաւորական լրագիրները:

Մեծ մասը ներգործ ական են, այսինքն նոցանից ամեն մինը մի տեսակ, յայտնի, որոշ ուղղութիւն ունենալով, նպատակ ունէ ազգել ընթերցողների վերա, մտցնել նրանց մէջ իր ուղղութիւնը, կրթել եւ կաղմու մի յայտնի ուղղութեան կուսակցութիւն: Կը աւոր ական լրագիրները չափից շատ տարածվելով, իրաւունք ցունեն սահմանափակել մի նեղ, կուսակցական հայեացքների եւ համոզմունք-

ների մէջ, այլ նոցա հիմնական ուղղութիւնը եւ սկզբունքն է բաւականացնել ամեն տեսակ կուսակցութիւնների, ամեն ուղղութեան մարդիկների պահանջներին։ Ուստի նորա իրանց էջերի մէջ տպում են ամեն ուղղութեան յօդվածները։

Կրաւորական լրագիրների թիւը ամենից շատ է անգլօ-սակասնական երկրներում—Անգլիայում, Ասերիկայում և Գերմանիայում։ Պատճառն այն է, որ այդտեղ հասարակութիւնը շատ է զարդարած, կուսակցութիւնները շատ են։ «Պէտք է մարդը արդեն զարդացած լինի, պէտք է կուսակցութիւնները որոշված լինեն, պէտք է հաստատ, անխափան համոզմունքներ ունենան թէ մասնաւոր մարդիկը, թէ կուսակցութիւնը որ լրագրի մէջ պատահելով ամեն տեսակ ուղղութեան, առեն տեսակ համոզմունքների և հայեացքների արտայացութեանը, նորա չը շփոթվեն, չը թափառեն, չը խառնվեն, այլ զանազան, ամենատարբեր մարդերին անդադար հանդիպելով դարձեալ կարողանան դուրս բերել իրանց համար մի որոշ ուղղութիւն, իրանք կարողանան իրանց համար մշակել սեպ հական, անհատական համոզմունքներ և հայեացքներ»...

Իսկ այն երկրներում, ուր չը կայ այդպիսի զարդացում, ուր կուսակցութիւնները

շատ թիչ են, շատ թոյլ են, կրաւորական լրագիրները ոչ միայն չեն կարող աջողվել, այլ և օգուտ անգամ չեն կարող բերել։ Այնաեղ, ուր մարդիկ գեռ ևս չունեն իրանց համար մի որոշ ուղղութիւն, ուր նոր են սկսում տարբեր մտածել և հասկանալ,—այնտեղ հարկաւոր են խիստ և որոշ ուղղութիւն ունեցող ներգործական լրագիրներ, որոնցից իւրաքանչյուրը մի տեսակ ուղղութեան արտայացութիւն լինելով, կազդէ ընթերցողի վրա, ուղղութիւն կը մշակէ նրա մէջ, կուսակցութիւն կը կազմէ։ Գալով հայերին, երկու տեսակ պատասխան չէ կարող ունենալ այն հարցը, թէ արդեօք ներգործական լրագիրներ են մեզ հարկաւոր։ Այս, անպատճառ հարկաւոր են։

Մեզ համար—գրում է Արծունին—դեռ եւս վաղ է, վնասակար է եւ անիրազործելի է կը աւորա կան քաղաքական թերթը։ Բայց թէ մեզանում պատահմամբ խմբագիրների կրծութեան պակասութեան կամ լրազրութեան նշանակութեան վերա կատարեալ տղիսութեան պատճառով, կազմի կը աւորա կան մի թերթ, նա չի լինի ընդհանրական, ընդարձակ, աղնիւ, բարի նշանակութեամբ կրաւորական, —այլ շատ շատ կը լինի միայն անդյն, իսկ դէպքերի մեծ մասամբ յի մար:

Հետազոտող խմբագիր, ներգործական լրագրի գեկավար, սա մի նոր հիմք էր, որի

վրա գնվում էր հայ լրագրութիւնը 1872 թւականից: Հետազօտող խմբագիրը ուժեղ, տպաւորիչ է մանառանդ իր մի յատկութեամբ: Նա գիտէ ժամանակին յարուցանել հարցեր, գիտէ օրվայ խնդիրները, այժմէութիւն ներկայացնող երեւոյթները ըմբռնել, արձագանք տալ նրանց, քննութեան հանել: Արծրունու այս զարմանալի ընդունակութիւնը արտայայտեց մայրենի լեզուի հարցի մէջ:

1872 թւականի փետրվարի սկզբներում Թիֆիսում պետական միջնակարգ դպրոցների կառավարիչների (գիրեկաօրների) ժողով կար, որ քննում էր զանազան դպրոցական հարցեր: Ի միջի այլոց գրված էր անդայն լեզուների դասաւութեան հարցը և ժողովը հասաւ այն եզրակացութեան, որ տեղական լեզուների դասաւութիւնը պետական դըրոցներում անողութ է: Սկզբունքի մի շատ լուրջ հարց էր արծարծվում: Արծրունին ճեղու և կեանք առաջնորդողի մէջ (№ 11) բացատրեց թէ ինչ նշանակութիւն ունի իւրաքանչիւր աղջի համար նրա մայրենի լեզուն:

Հայ հրապարակախօսի համար միշտ առանձին կարեռութիւն է ունեցել այդ հարցը, քանի որ շատ քիչ կը լինեն այնպիսի ազգիր, որոնք հայերի նման անփոյթ, ան-

բարեխիղճ, ուղղակի թշնամի լինեն իրանց լեզուի վերաբերմբ: Հայ հրապարակախօսը միշտ հարկադրված է կրկնել հային թէ պէտք է սովորել մայրենի լեզուն: Նազարեանցի կենսագրութեան մէջ մենք տեսանք որ այդ խոչոր երախտաւորի խօսքի, քարոզի, դատուղութեան սկիզբը և վերջը լեզուն էր: Արծրունին էլ—մենք այս էլ տեսանք—իր առաջին խսկ զրուածքներից այս հարցն էր շօշափում և մինչեւ այդ շարունակ նրան էր վերապառնում: Նազարեանցը ասում էր որ լուսաւորութեան, առաջադիմութեան միակ ապահով գործիքը կարող է լինել մայրենի լեզուն: Արծրունին, հաստատելով այս մինոյնը, ուրիշ, աւելի խոր ու հետաքրքրական պատճառաբանութիւններով է ամրացնում այդ ճշմարտութիւնը, հիմնվելով գերմանացի գիտնական Կարլ Ֆոխտի յայտնած մի մաքի վրա:

Ֆոխտը ասել էր որ լեզուի կերպարանաւորութիւնը կապ ունի մարդու ֆիզիոգիական կազմուածքի հետ,—այսինքն, որ այս ինչ կամ այն ինչ լեզուն համապատասխանում է այս ինչ կամ այն ինչ աղջի մարդկանց կազմուածքի առանձնայատկութիւններին: Հաղիւ է պատահում, ասել է Ֆոխտը, որ մի մարդ օտար լեզուի միջոցով

կարողանայ արդիւնաբերել մի ինքնուրոյն միտք. Արծրունին գերմանացի զիսնականի այդ միտքը զարգացնում է այնպիսի բացառութիւններով, որոնք ցոյց են տալիս թէ մի լեզուն կազմվել է մի ազգի առանձնայատելութիւնների, ինքնուրոյն տիպի, ֆիզիկական և բարոյական կազմուածքի հետ միասին և, հետևաբար, միակ յաբմար, բնական, արդիւնաւոր միջոցն է զարգանալու, ստեղծագործելու, ընդունակութիւններ արտացյալելու համար:

Արդեօք չէ կարելի ընդունել, որ երբ մի ազգի լեզուն կազմվում է,—նա, հետևելով բնական օրէնքին, ազգի յատկութիւնների եւ առանձնութիւնների համապատասխան ծեւեր, կազմակերպութիւն, ոյժ եւ ոզի է սեպհականացնում:

Եթէ իմ լեզուն հետևանք է իմ բարոյական առանձնութիւններին, որոնք իրանց կողմից կախված են իմ մարմնի, տիպի կազմուածքի յատկութիւններից,—ուրիմն ինձ համար մայրենի լեզուն ոչ թէ միայն այն պատճառով թանգ պիտի լինի, որ ես իմ ազգը սիրում եմ, բայց զիսաւորապէս այն պատճառով, որ նա բոլոր ուրիշ լեզուներից ամենից յարմար է իմ ուղեղի մոտաւոր աշխատանքին, որ նա իմ ուղեղի կազմութեանը ամենայարմարագոյնն է, որ նա իմ ուղեղի կազմակերպութիւնից անբաժանելի է, որ նա իմ մտաւոր զարգացման համար անհրաժեշտ է:

Եթէ այդ այդպէս է, ուրեմն իմ ազգային լեզվով ինձ աւելի մատչելի է իմ անձնական, անհա-

տական, իմ անձին սեպհական, ինքնուրոյն մոքերը յայտնելու, քան թէ օտար լեզով, որը կազմվել է ուրիշ երկրում, ուրիշ կլիմայի ազդեցութեան տակ, ուրիշ պատմական եւ հասարակական պայմաններին է ենթարկվել:

Կենդանի օրինակներով այս գատողութիւնը ապացուցանելու համար Արծրունին վերցնում է ֆրանսերէն և գերմաներէն լեզուները: Ֆրանսիացին աշխոյժ, յափշտակվող, շուտ ըմբռնող, տաղանդաւոր բնաւորութիւն ունի. այդպէս է և նրա լեզուն, մինչդեռ գերմանացու ճիշտ ու ծանր բնաւորութեան միանգամայն համապատասխանում է նրա ծանր լեզուն իր «մինչև հրաշք հասցրած ճիշտ և եթէ կարելի է ասել, մատեմատիկական ասացվածներով և ձեւերով»:

Մի ազդ մոռանալով իր մայրենի լեզուն,—կորցնում է իր բնական միջոցներից մէկը, ուրեմն կը պակասի, կը նուազի նորա բնական զարգացման, նորա անհատական յատկութիւնների, նորա ինքնուրոյնութեան, ուրեմն նորա՝ հասարակաց օգտի համար արդիւնաբերութեան ոյժը: Եթէ ֆրանսիացին չիմանայ ֆրանսիական լեզուն, ուռւը ոռւսաց լեզուն, հայը հայոց լեզուն, վրացին վրաց լեզուն, —ֆրանսիացին չի լինի կատարեալ ֆրանսիացի, դերմանացին չի լինի կատարեալ զերմանացի, ուռւը կատարեալ ոռւս, հայը կատարեալ հայ...

* Կորցնելով իր մայրենի լեզուն, ուրեմն իր բնա-

կան դործիչներից (օրգաններից) մէկը, թէ ոռւսը, թէ զերմանացին, թէ ֆրանքացին, թէ հայը կը զրկվին իրանց կազմվածքին եւ բնաւորութեանը յատուկ քնական ընդունակութիւնների մինչանաւոր մասից:

Արգեօք դրանից մարդկութիւնը օգուտ կը ստանար թէ վեաս—ի հարկէ վեաս, պատասխանում է Արծրունին: Խւրաքանչիւր ազգ մարդկութեան մի կարեւոր մասն է կազմում: Մարդկութեան բոլոր մասերը, բոլոր անդամները պիտի առաջադիմնն զարգացնելով իրանց առնձնայտառուկ ընդունակութիւնները: Բայց ինչպէս կարող է մի ազգ ինքնուրոյնարար առաջ գնալ, եթէ կը կորցնէ իր լեզուն, կամ ուրիշ խօսքերով՝ կը սպանէ իրան:

Սպանել իրան նշանակում է անմնասպանութիւն գործել—բայց բացի սորանից նա նշանակում է յանցանք գործել ամբողջ մարդկային հասարակութեան առաջ, զրկելով նորան մի անհրաժեշտ անդամից:

Ահա թէ ինչ ահագին, կենսական նշանակութիւն ունի մայրենի լեզուն մի ազգի համար: Յիշենք այստեղ որ Արծրունին նոյն այս տեսութիւնը, աւելի ընդարձակած, օրինակներով աւելի ճոխացրած, արծարծեց 1881 թւականին հայոց տասուցչական առաջին ժո-

դովում, մի պասախօսութեան մէջ, որ խոր տըպաւորութիւն գործեց:

«Լեզու և կեանք» յօդուածից քիչ յետոյ «Կավказ» պաշտօնական լրազրի հետ բաժանվեց մի անանուն հեղինակի լրօշիւրը՝ հետեւել վերնագրով. „Օ սуществъ национальной индивидуальности и обѣ образовательномъ значеніи крупныхъ народныхъ единицъ“. (Աղջայնական անհատականութեան էութեան և խոչոր ազգերի կըրթական նշանակութեան մասին): Նա էլնուիրված էր մայրենի լեզուի հարցին և Արծրունու տեսութեան հակառակ հայեացքներ էր պաշտպանում, կարծես զրված էր «Մշակի» յօդուածին պատասխանելու համար: Ի՞նչ էր ասում ոռւս անանուն հեղինակը:

Նրա համար էլ մայրենի լեզուն ամենակարեւ, առաջնակարգ նշանակութիւն ունի լեզուն, ասում է նա, ինքն ազգն է: Աղդութեան հողին, ամբողջ ոյժը, ամբողջ ինքնուրոյնութիւնը միայն լեզուի մէջ է: Բայց կայ պատմութեան օրէնք, կայ սպատմական անհրաժեշտութիւն: Դա այն է, որ փոքր ազգերի լեզուն ուժեղ չէ, դիմացկուն չէ, զարգանալ, բարգաւաճել չէ կարող: Ինչու: Արովնեան քանակութեան հետ կապված է և որակը: Խոչոր ազգերը զարգացնում, կատա-

րելութեան են հասցնում իրանց լեզուն, որովհետեւ թւով աւելի շատ մտաւոր աշխատավոր ունեն. մինչդեռ մանր աղգերը չունեն այդ ոյժը, ուստի և նրանց լեզուն պիտի մնայ թոյլ ու աղքատ: Այդ թուլութիւնից էլ առաջ է գալիս այն պատմական անհրաժեշտութիւնը, որ փոքր աղգերի լեզուն մեռնում է, մեռնում են, ուրեմն, և իրանք, փոքր աղգերը, մեռնում են, ի հարկէ, ոչ ֆիզիկապէս, այլ իրեն ինքնուրոյն ժողովուրդ գագարում են գոյութիւն ունենալուց և ձուլվում են այն խոշոր աղգի հետ, որ աւելի զարգացած, հարուստ լեզու ունի:

Ցեղի առանձնայատկութիւնը — զրում է բրօշիւրի *) հեղինակը — ցեղի առանձնայատկութիւնը, որի մէջ արտայայտվում է նրա ամբողջ դէմքը, նրա լեզուի առանձնայատկութիւնն է: Լեզու — դա ինքը ցեղն է, որ համանիշ է լեզովն: Լեզուն այն գործիքն է, որի միջոցով արտայայտվում է մարդու մըտաւոր ոյժերի գործունէութիւնը: Լեզուն, լինելով հասարակութեան մտաւոր ոյժերի գործունէութեան գործիք, դրա հետ միասին, նրա մտաւոր հարստութիւնների զանձարանն է:

*) Այս բրօշիւրը երկրորդ անգամ հրատարակվեց Պետերբուրգում 1873-ին և բաժանվեց «Русский Миръ» լուագը բաժանորդներին:

Այստեղից է առաջ գալիս այն երեսյթը, որ հասարակութեան կազմուածքի կատարելութեան աստիճանի հետ զուգընթաց գնում է և լեզուի, իրեն կրթական դործիքի, զարդացման աստիճանը: «Մարդկային ընտանիքի մէջ մի ցեղի գործութիւնը, նշանակութիւնը կախված է նրա լեզուի կատարելութիւնից, հարստութիւնից, ուրիշ խօսքերով՝ մտաւոր նիւթի այն պաշարից, որ ցեղը կարող է ձեռք բերել իր լեզուի միջոցով»:

Սյասիսով մեր առջե նկարվում է պայքարի մի ասպարէզ, ուր, ինչպէս ամեն մի պայքարի մէջ, յաղթութիւնը պատկանում է կատարելագործվածին: Փոքրիկ աղգերի լեզուն չէ կարող կատարելագործվել այն աստիճան, որ նա գառնայ համամարդկային քաղաքակրթութեան գործիք: Եւ ինչ է առաջ բերում այս անկարողութիւնը: — Պատմական օրէնք — թոյլը, անկատարը պիտի ոչնչանայ, աեղի տալով ուժեղին, կատարեալին: Մարդը միշտ ձգտում է դէպի առաջադիմութիւն, փոքր աղգերը, իրանց այդ ձգտման մէջ, ըստիպված պիտի լինեն ընդունել աւելի կատարեալ կրթական դործիք, քան իրանց սեփական լեզուն: Փոքր աղգերի լեզուի մահը անխուսափելի է, դա բնական է, և իրանց լեզուն կորցրած փոքրիկ աղգերը պիտի ընդունեն

մեծ ազգերի լեզուն, այն ազգերի, որոնց հետ
կապել է նրանց պատմութիւնը։ Հեղինակը
մինչև իսկ նկարում է թէ ինչպէս է կատար-
վում այդ մահը։ Նա միանդամից, յանկար-
ծակի չէ զալիս, այլ աստիճանաբար, ամիրա-
պետող լեզուն հեշտութեամբ գուրս է մղում
մայրենի լեզուն նախհասարակութեան բար-
ձը, կրթված խաւերից, ապա և առետրա-
կան ու արդիւնաբերական կենտրօններում
ապրող ազգաբնակութեան միջից։ Աւելի եր-
կար մայրենի լեզուն մնում է զիւղական,
հասարակ ժողովրդի մէջ։ Եթէ մայրենի լե-
զուն այնքան գետ կրթական ոյժ ունի, որ
կարողանում է ժողովրդի մտաւոր պահանջ-
ներից մի քանիքն գոնէ բաւարարութիւն
տալ, այդ դէպրում նա յամառ պահիւմ է:
Բայց վերջ ի վերջոյնոյն պատմական անխու-
սակելի օրէնքն է։ — Փոքր ազգերի լեզունե-
րի ոչնչացում, որ նշանակում է այդ ազգե-
րի, իբրև անկախ մարմնների, անհետա-
ցում։

«Մշակը» մանրամասն քննապատութեան
չենթարկեց այդ բրօշիւրը։ «Գրականական
Խանութ» առաջնորդողի մէջ (№ 33) նա տը-
կար և անհիմն համարեց հեղինակի փիլիսո-
փայական եղակացութիւնները փոքրիկ ազ-
գերի գերի և ճակատագրի մասին Գլուխուր

միայլ, որ ուղում էր ապացուցանել «Մշա-
կը», այն էր թէ՝ փոքրիկ ազգերը իրանց սե-
փական լեզուի միջոցով չեն կարող զարգա-
նալ, մարդկութեան օգուտ բերել։ Պատմու-
թիւնից մի շարք փաստեր քերելով, Արծրու-
նին պնդում էր հակառակը, այսինքն որ փո-
քրը ազգերը կարող են ինքնուրոյնաբար
զարգացնել իրանց ընդունակութիւնները։
Ի՞նչ փաստեր են դրանք։

Հին աշխարհը յոյն փոքրաթիւ ազգն ու-
նի իբրև օրինակ։ Փոքր էր ժողովուրդը, բայց
ինչեր տուեց մարդկութեան։ Եւ ընդհանուր
պատմութեան մէջ դա բացառիկ երևոյթ չէ։
Չէլս ազգն էլ փոքրիկ էր, բայց նա առաջին
անդամ սկիզբ դրեց բոլովականութեան, բաց
արաւ առաջին համարաբանը։ Լեհական
փոքրիկ ազգից գուրս եկաւ Կոպերնիկի պէս
մեծ խելքը։ Շվեդացիները ունեցան Տօրվալդ-
ուէնինման հոչակաւոր քանդակագործը. փոք-
րիկ Հօլլանդիան այնպիսի նշանաւոր նկարիչ-
ներ տուեց, որ մի ժամանակ ամբողջ Եւրօ-
պայի համար նկարչութեան ուսուցիչ էր
հանդիսանում։

Եւրօպայից անցնելով Սսիա, Արծրունին
ապացուցանում էր, որ աշխարհի այս մա-
սում էլ նոյն երեսյթը շատ օրինակներ ու-
նի։ Փոքր էր հրէական ազգը, բայց նա աշ-

խարհին տուեց Հին-կտակարան, որ դարեւ-
րով մնում է աշխարհի բոլոր ազգերի հա-
մար կրօնական խմաստութեան աղբիւր. նոյն
փոքրիկ ազգն էր, որի մէջ ծնվեց քր-
իստոնէութիւնը, մի վարդապետութիւն, որ
այնքան բարձրացրեց մարդուն:

Ասիական ազգերից ովքեր ընդունեցին նախ եւ
առաջ քրիստոնէութիւնը եւ միակ էին նորան պաշտ-
ապանելու Ասիայում,—արդիօք չէին երեք փոքր ազ-
գեր. Հայեր, Ասօրիներ եւ Վրացիներ: Դարեր
անցնում էին դարերի յետեւից եւ այդ ազգերը
իրանց հերոսական ջանքերով ամեն առաջադիմու-
թիւն մերցնող մահմետական տարբի հետ շարունակ
պատերազմելով, իրանց արիւնով պահեցին կովկասը
եւ Փոքր Ասիան մարդկային կրթութեան համար:
Եւ այդ բոլորը կատարվում էր փոքր ազգերի միջ-
նորդութեամբ, չը նայելով որ նոցա լեզուն չունէր
ընդհանուր կրթութական նշանակութիւն:

Այսպէս ջրելով սուս հեղինակի այն գըլ-
խաւոր հիմքը, թէ փոքր ազգերը չեն կարող
ինքնուրոյնաբար զարգանալ, Արծրունին նո-
րից դիմում է մայրենի լեզուի ստեղծագոր-
ծական նշանակութեան: Նա ասում է.

Անհետացաւ լեզուն,—անհետացաւ եւ ազգու-
թիւնը, մնաց միայն մարդկիների մի յայտնի թիւ,
որը առանց մայրենի լեզուի անընդունակ են մտա-
ւոր գործունէութեան: Բայց ինչ է այդ բնական

օրէնքի պատճառը, եւ ինչի նա արգելք է լինում:
աղդութիւնների կործանման,—սա ունի երեւի իր
օրգանական հիմքը բնութեան մէջ, որոնց խախտելը
բաղաւորապէս վեր է պատուելի հեղինակի կարո-
ղութիւնից: Նա մոռանում է, որ ազգութեան լեզուն
մշակվում է ոչ թէ միայն դարերով, բայց մի ազ-
գութիւն շրջապատող բոլոր հանգամանքների շնոր-
հով: Նա ըս գիտէ, երեւի, որ օրինակ, Աֆրիկայի
նեղրերի մէջ զոր ածվող լեզուն երբէք չէր կարող
մշակվել նեռաւոր շիւսիսում: Կամ լիոնաբնակ մի
ազգի լեզուն,—տափակ երկրում չէր կարող գոյանալ:

«Մշակի» այս վերաբերմունքը դէպի այդ՝
«վերնալպով համակրելի», բայց բովանդակու-
թեամբ հակակրելի» բրօշիւրը բանակուի ա-
ռիթ գարձաւ: «Հավաքած» լրագրում ոնն
Պատէլ Զալէսկի յարձակվեց «Մշակի» վրա,
ասելով թէ նա չէ հասկացել բրօշիւրի միտ-
քը: «Մշակը» հեղինանքով պատասխանեց նրան
իր № 40-ի ներքին տեսութեան մէջ, հաս-
կացնելով որ բրօշիւրի մէջ ամեն ինչ պարզ
է ասլած:

Մեր պատուելի ըննիւը—գրում է Արծրունին
—աշխատում է իրան զարմացած ծեւացնել, ար-
տագրելով մեր յօդուածից մի տեղ եւ շարելով նորա
մէջը անթիւ հարցական եւ բացականչական նշան-
ներ: Խակ այն տեղը շատ հասարակ եւ անմեղ է:
Այդ այն տեղն է, որտեղ մենք ասում ենք, թէ
մայրենի լեզուն անհրաժեշտ պայման է ինքնուրոյն

մոտաւոր գործունէութեան համար, որովհետիւ, այժմս
էլ աւելացնում ենք, մայրենի լեզուն, յարմարեցրած
լինելով մարդի կազմվածքին, հեշտացնում է նորան
իր կողմից յարմարեցնել իրան շրջապատող պայ-
մաններին։ Այդ միտքը, կարլ Ֆօխստից յայտնած,
ունէ շատ ազգակցութիւն եւ Գարվինի վարդապե-
տութեան հետ։

Առհասարակ, «Կավկազ»-ի յօդուածա-
գիրը ներկայանում էր «Մշակին» իրքեւ բար-
կացած, որուա և կայծակլ թափող Արամազգ։
Սակայն այդ բարկութիւնը սարսափելի չէր
«Մշակի» համար. ընդհակառակն, նաև միան-
գամայն արդարացնում էր յայսնի տաս-
ցուածքը. «Արամազգ», գու բարկանում ևս,
դու, ուրեմն, մեղաւոր ես»։ Այս խօսքերով
էլ «Մշակի» վերջացնում էր իր կիսահեղնա-
կան սրատափոմնը Բայց այսպիսի զիկը չը
բռնեց Արծրունին, երբ բանակուրը անցաւ
Պետերբուրգի «ԳՈԼՈԾ» լրագրի էջերը. Ռուս
լրագիրը մի ընդարձակ առաջնորդող նույիրեց
«Մշակին» և նրա պաշտպանած հարցին, բայց
այնքան հեռու գնաց իր եղբակացութիւն-
ների մէջ, որ Արծրունուն ննում էր ընթեր-
ցովին թողնել լրագրի վարմունքի դատա-
պարտութիւնը։

«ԳՈԼՈԾ»-ը, իր սրաշտապանութեան տակ
առնելով ուսւերէն բրօշիւրի հեղինակին, ա-

սում էր թէ «Մշակի» դիտողութիւնները
չարժէ ուշագրութեան առնել, թէ ինքը բա-
նակուր չի սկսի հայ լրագրի դէմ, քանի որ
վերջինս արձագանք է մի որոշ կուսակցու-
թեան, մի որոշ ուղղութեան, որ աւելի և ա-
ւելի յայտնի է գառնում Կովկասի տեղական
ընակինների մի քանի գասերի մէջ։ Հէնց
այս կէտի վրա էլ ծանրանում էր մայրաքա-
ղարի սուս թերթը. Աւելորդ համարելով
հերքել Արծրունու բերած պատճառարանու-
թիւնները, մոռանալով որ հարցը ուրիշ ոչինչ
չէ, եթէ ոչ լրագրական մի բանակուր, հրա-
պարակական քննութեան առարկայ գարձած
մի հասկացողութիւն, «ԳՈԼՈԾ»-ը ասում
էր, որ սուսերէն բրօշիւրի հեղինակը գա-
լով այն եղբակացութեան թէ փոքր ազգերի
լեզուները պիտի ոչնչանան, «ընականապէս
հակառակում է ցնորդիններին «Մանուկ» Հայ-
աստանին» կուսակցութեան, որ մտածում է
Հայոց ազգի վերածնելութեան մասին։ Այդ
իսկ կուսակցութիւնը գիխաւորապէս ապրու-
տամբեցաւ կովկասեան ուսումնարաններում
տեղացի լեզուների դասատվութեան վերջնե-
լու դէմ։ Այդ մանուկ երեակայողների գոր-
ծիքին (օրդան), Թիֆլիսում հրատարակվող
հայ «Մշակ» լրագրին, խիստ բնական է, որ
հաճելի չին լինելու տետրակի հիմնական

դրութիւնները, և այդ լրագիրը ջանք է գործ զնում հաստատել նոցա անսառւգութիւնը»:

Եւ մայրաքաղաքի լրագիրը իր կողմից ամեն ջանք գործ է զնում հասկացնելու որ պետական լեզուի նշանակութիւնը չէ հասկանում «Մշակը», որ պետական լեզուն անհրաժեշտ է սովորել և այնու Բայց պետական լեզուի մասին ոչ մի հարց չը կար և չէր էլ կարող լինել, քանի որ ոչ ոք չէր էլ մտածել անդամ որ այդ լեզուն չը պէտք է սովորել։ Մայրենի լեզուի պաշտպան Նազարեանցը աւեն անդամ ասում էր որ հայը իր մայրենի լեզուի հետ հաւասար չափով պիտի սովորէ պետական լեզուն։ Արձրունին էլ միենացն էր կրկնում։ «Հայկական Աշխարհի» մէջ արագած իր յօդուածներից մէկում նա ասում էր որ սուսաց պետութիւնը, իւազաղութիւնն հաստատելով Կովկասում, մի մեծ պարտաւորութիւն է դրել մեզ վրա—քաղաքակրթվել, առաջադիմել։ Եւ մենք յանցաւոր կը լինենք, եթէ ամեն ջանք գործ չը դնենք կառավարութեան մեղ վրա վրած պարտութիւնը կատարելու համար։ Ի՞նչպէս պիտի կարողանանք կատարել։ Ի հարկէ, ուսում առնելով, կրթվելով։ Եւ այդ ուսումը, կրթութիւնը դարձեալ Ռուսաստանը պիտի տար մեզ։

„Գոլօշ“ լրագիրը այսպիսի բաներ չէր ուզում իմացած լինել, նա միայն ասում էր թէ պետական լեզուի նշանակութիւնը այս է ու այս է, մի բան, որ ամենքի համար շատ ու շատ պարզ էր։ Արձրունին ուսում լրագիրի այդ վարմունքի առիթով այսպահը գրեց։

◀ Մենք հասարակութեան դատողութեան ենք Թողնում վճռել, որքան անհիմն են այդ տեսակ խօսքերը։ Երեսի «Գոլօշ» լրագիրի պատուելի խրմագրութիւնը չէ խմանում, որ լրագիրները նորա համար են հրատարակվում, որ լուսաւորին մարդիկներին, եւ ոչ թէ մի ազգութիւն վերականգնեցնելու նպատակով։ Եթէ լրագիրների ու զբեկի հրատարակութեամբ կարելի կը լիներ ազգութիւնները վերականգնեցնել, — այն ժամանակ ընկած ազգութիւնները ամեն օր կը վերականգնեին։

Որքան էլ ցաւալի լինէր ուսում լրագիրների այս վերաբերմունքը, կար այն նշանաւոր հանդամանքը, որ հայերէն լրագիրը խօսեցնել էր տալիս իր մասին, հարկադրում էր որ իր հայեացքներն ու դատողութիւնները ի նկատի առնվիճն, թարգմանվեն, քննադատվեն։ Սյս նոր երեսյթը անշուշտ հայերէն լրագրի օգտին էր խօսում։ Նշանակում էր, որ հայ հրատարակախօսութիւնը այնքան ամրացել է, այնքան արդէն ոյժ է սաացել, որ

Նրան անհկատելի թողնել այլես կարելի չէր։
Գրիգոր Սրծրունին, այս ոյժի, այս լրջութեան առաջին և ամենանշանաւոր ներկայացուցիչը, այնուհետեւ էլ շատ առիմներ ունեցաւ բանակուր մղելու սուս լրագիրների դէմ, հարկադրելով որ իր հայերէն յօդուածները թարգմանվեն և քննվեն։ Սա մի նոր յաղթանակ էր մեր մայրենի լիզուի համար։

Հարցը, սակայն, այս բանակուր մէջ էլ չամփափիլից, չը վերջացաւ։ Մայրենի լեզուի միճակին Սրծրունին նորից զիմոց «Հայոց Լեզու» առաջնորդովի մէջ (№ 46), որ, ի գէպ ասենք, նուիրված էր Սնդրէսս Սրծրունուն։ Հետաքրքրական է այստեղ այն թուոցիկ տեսութիւնը, որի մէջ հայոց գրականութեան անցեալն է երեսում։ Հինգերորդ դարից մինչև տասնեւչորրորդի վերջը մենք ունեինք հարուստ գրականութիւն։ Նա միակողմանի էր, վերացական էր, որովհետեւ այդ ժամանակամիջոցում չը կացին գրական, ճիշդ գիտութիւնները Սյունետեա ամբողջ երեք դար— 15, 16 և 17-րորդը, ներկայացնում են կատարեալ անապատ։ Դա Հայոց մտքի կատարեալ անկման շրջանն էր։ Տասնութերորդ դարի սկզբում յայսնվում է Մխիթար Սերաստացին, որ հիմնում է ու Ղազարի միաբանութիւնը։

Այդ փոքրիկ կղզին 18-րորդ դարից սկսած, դառնում է հայոց մորի համար միակ ապաստան Ամեն կողմից հալածված, ոչ թէ միայն ինքն հայը բայց եւ նորա ողին, նորա պանդուխտ, Թափառական միտքը,—վաղուց կոչնչանար, կանհետանար աշխարհի երիսից, եթէ նա չընենար մի հարուստ անցեալ, տասն անգամ հարիւր տար վայ անցեալ։

Ճիշտ չէ ոչնչանալ մի ազգութեան կամ մի լեզուի, որ ունի արդէն իր հարուստ գրականութիւնը։

Մխիթարեանների կատարած մեծ դերը ուրուագծելուց յետոյ, Սրծրունին զիմում է հայ ընտանիքներին և նրա կատարած դերին։ Մինչդեռ կաթօղիկ արելամները և նոյն իսկ եւրօպացի զիտնականները ուսումնասիրում էին հայոց լեզուն ու գրականութիւնը, ինչ էր անում հայ ընտանիքը, որ միշտ պարծենում է իր սաստիկ բարոյականութեամբ։ Նա ասելութեամբ հալածում էր իր միջից մայրենի լեզուն։ Խօսքը, ի հարկէ, միջին և բարձր գասակարգերի մասին էր։ Սրծրունին շատ լաւ գիտէր, որ հասարակ ժողովուրդը առ այժմ վարակված չէ այդ ախտով։ Բայց կարդ է, որ ռամեն հասարակութեան մէջ միջին և բարձր գասերի ուղղութիւնը և ողին տիրապետում է փոքր առ փոքր և ամբոխի վրա։ Այդպէս պիտի լինէր և մեզա-

նում: Բայց մի բախտաւոր հանդամանք ուղղակի փրկիչ հանդիսացաւ մեղանում: Ի՞նչ էր գա:

Այն, որ մայրենի լեզուն ատող ծնողների որդիները պարտաւորութիւն չը համարեցին կուրօրէն հնազանդվել իրանց ծնողներին: Եթէ հնազանդված լինէին, նրանք էլ պիտի ատէին մայրենի լեզուն և նա կորած կը լինէր: Եւ չը հնազանդվողները արական սեւի սերունդն էր, որովհետեւ ոմեր քոյրերը որք փակուած կեանք վարելով, բոլորովին ենթարկվեցան ծնողների բոնաւորութեանը», նոյնպէս ատում են իրանց սեփական լեզուն:

Մեղ փրկից եւ կը փրկի այն, որ մենք մեր ընտանիքին հակառակ ենք վարփում: Նա ասում է, մենք ունեցանք մեր անցեալը, մեր դրականութիւնը, մեր փառաւոր ժամանակը,—ուրեմն էլ ինչ հարկաւոր է աշխատել. ժամանակակից հայը ընդունակ չէ որ եւ է արդիւնաւոր աշխատանքի:

Մենք ընդհակառակն ատում ենք. մենք ունեցանք մեր անցեալ հարուստ մտաւոր կեանքը—ուսորի իրաւունք չունենք չը շարունակիլ նորա արդեան մշակութիւնը:

Մենք յաղթեցինք, եւ սորանով բաւականում ենք:

Յաղթեցին, ճիշտ է: Դա մի նշանաւոր յաղթանակ էր, որ տանում էր եռանդով

լցված, պարտաճանանչ սերունդը հին հայեցքների դէմ: Բայց դա չէր նշանակում հնութեան կատարեալ պարտութիւն, նրա հայեացքների կատարեալ ոչնչացում: Եռանդուն սերունդի յաղթական արշաւանքի առջե հայ ընտանիքը չը կանգնեց. նա տեղի տուեց, քաշվեց: Բայց երբ ասպարէղից անհետացաւ եռանդուն, պարտաճանանչ սերունդը, մեզանում տիրեցին նախկին անուշագրութիւնը, ատելութիւնը դէպի մայրենի լեզուն, հայ բուրժուա ընտանիքը դարձեալ մտաւ իր դերի մէջ, սկսեց իր օրինակով ազգել հասարակ ժողովրդի վրա: Եւ ժամանակակից նոր սերունդը այլ ես փրկութիւն չէ որոնում ընտանիքի վարմունքին հակառակվելու մէջ: Այժմ նոր ու հին սերունդները կատարելապէս համաձայն են իրար հետ...

Եւ այն եռանդու, պարտաճանանչ սերունդի տարած յաղթանակը մի պատահական, անհասկանալի աջողութիւն չէր, այլ ունէր իր խոր ու հաստատուն պատճառները: Հին, շատ հին ժամանակներից է, կարծեմ, կազմված այն ասացուածքը թէ հայի ամենամեծ թշնամին ինքը հայն է: Այս անողորմ ճշմարտութիւնը գուք կը դանէք ամեն տեղ. մեր ամբողջ պատմութիւնը շարունակ այս է կրկնում. մեր մատենազիրները, մեր ողբա-

ցողները, մեր քարտիչները շարունակ հայր այս յատկութիւնն էին բնդգծում, հարուածում, անիծում: Մեր նորագոյն հրապարակախօսներն էլ իրեն մի սուրբ, անուրանալի ճշմարտութիւն այդ սարսափելի խօսքերն էին խփում, մեր հասարակութեան ճակատին: Առհան Արծրունին էլ միենոյն ճշմարտութիւնն էր դարձնում իր առաջնորդողներից մեկի (№ 40) բավանդակութիւն: «Մեր առենասևծթշնամիները»—այսպէս է վերնագիրը. և կարդալով միայն այդ վերնագիրը, չը գիտելով յօդուածի բովանդակութեան, դուք խակոյն կասէ թէ այդ թշնամիները—իրանք, հայերն են: Որովհետեւ զա մի հանրացած միոք է, զա հասարակաց խօսք է: Հետաքրքրականը այսաեղ այն է, թէ Արծրունին ինչպէս է ձեւակերպում այդ ազգացին հին ասացուածքի ճշմարտութիւնը:

Երեակայեցէք,—ասում է նա—որ ձեր ծնողները ամբողջ օր, առաւօսից մինչև զիշեր, կրկնում են ձեր ականջում թէ դուք տնիցել էք հարուստ ու երեկի նախնիքներ, թէ նրանց վատքին սահման չը կար, թէ նըրանց պատում էին ամեն տեղ, ի՞նչ դուք կը դայ:

Երեխան այդ տեսակ բաները լսելով կը փրփի,

կը հպարտանայ, բոլոր իրան շրջապատող մարդիկ-ների վերա արհամարհներով կը նայէ... կորած անցեալի ցնորբների յետեւից ընկնելով, նա միջոց չի ունենայ ներկան բննելու, նա չի նկատի իր ներկայի պակասութիւնները ու իր գրութեան թշուառութիւնը,—նա կը մեծանայ սարսափելի ինքնահաւանութեան մէջ:

Ճետեւանքը կը լինի մտաւոր եւ բարոյական անշարժութիւն:

Մեծանում է այդպիսի կրթութիւնը ստացած երեխան, սկսում է փորձել, ճանաչել չարն ու բարին, յարաբերութիւններ ունենալ աշխարհի հետ. նա սկսում է քննուլ իրան եւ յանկարծ նկատում է որ ամբողջ մանկութեան ընթացքում ցնորբների ետեւից ընկնելով, յափշտակված էք երեակայական դաղափարներով, իրակալանութիւնը ցոյց է տալիս նորան «փոխանակ իր նախնիների փառաւոր անցեալի ու իր սեփական անձի յուսած գեղեցիկ ապագայի,—միմիայն մի թշուառ, ողորմելի ներկան:

Այս միմնոյնը պատահել է և հայ ազգի ճետ: Եւ այսաեղ Արծրունին դատապարտում է ինքնագոն ազգանիրութիւնը, որ հիմնված է անցեալի միակողմանի, ուսցրած պատմութեան վրա:

Մեղ ամեն բան վատ կերպով են սովորացրել, բայց մանաւանդ անպիտան կերպով սովորացրել են մեզ մեր ազգային պատմութիւնը: Նա մեզ համար դարձել է մեր բարոյական եւ մտաւոր ներկայ գրութեան համար կորստեան պատճառ:

Յափշտակվելով անցեալով, մենք մեր ներկայ դրութիւնն էլ անցեալի չափով ենք չափել: Մեզ ասում էին թէ հայը քաջ է եղել, —եւ մենք չէինք նկատում որ արդեան հայը ստրկային բնաւորութիւն ունէ: մեղ պատմում էին որ հայը միշտ եղել է անձնանուէր—եւ մենք չէինք նկատում, որ այժմ նա պատրաստ է ընդհակառակն իր ամենամօտիկ հայրենակցին հարստանարել, վսասել, որ նա միայն մի քարոյական ուղեկից է նանաչում, —վայ եւ լ կ ե ա ն ք ը, որ նորան միայն մի ազնիւ զգացմունք յայտնի, —ե ս ո ւ թ ի ւ ն ը:

Մեզ մեր պատմութիւնը թերի կերպով սովորեցնելով ամենամեծ վնաս քերեցին, որովհետեւ փրեցին եւ միայն մեր ինքնահաւանութիւնը եւ ոչ մի քննդատական հայեացք չը դցեցին պատմած իրողութիւնների վերա:

Այդ է պատճառը որ երբ մեզանում ըսկալեց քննագատող ուղղութիւնը, շատերը չէին ուղում լսել, կատարեալ արհամարհանըով էին պատասխանում: «Բայց ժամանակն իրն առաւ, ինքն աքն ու թիւնը, իր սեփական պակասութիւնների մեղադրելը քանի գնում է, աւելի ու աւելի տարածվում է»: Հայը սկսել է ինքն իրան մեղադրել թէ գրականութեան մէջ, թէ բեմի վրայ: Ի՞նչ է դա, ի՞նչպէս պէտք է գնահատել այդ երեսյթը: Արծրունին բերում է հետեւեալ խօսակցութիւնը.

—Դուք միշտ մեղադրում էք, ամեն բան վատ կողմից էք ներկայացնում, բոլորովին յուսահատեցնում էք ընթերցողին, —ասում էք ինձ մի պարոն, —դոնէ մի պայծառ բան ցոյց տուեցէք մեզ մեր կեանքում...

—Որ պայծառ երեւոյթ չը կայ, պարոն, ևս ինչ անեմ:

—Այն ժամանակ հնար ք ե ց է ք, բայց մի ցոյց տուէք մեզ միայն մեր վատ կողմերը...

—Ես իրաւունք չունեմ հնարելու, պատասխանցից ես:

Դմ պարոնը դժբախտաբար մի պայծառ բան չը նկատեց, այն է՝ անողորմ ինք նա ք ն ու թ ի ւ ն ը, որ մեր այժմեան հայերի մէջ միակ ուրախացուցիչ երևոյթ է:

Սաստիկ անողորմ անձնաբնութիւնը թէ զ ը աւ կ ա ն ո ւ թ ե ա ն, թէ ուսումնարանի մէջ, թէ բեմի վերա, նշան է, որ ազգը ընդունակ է փոխվել, հրաժարվել իր պակասութիւններից, առաջադիմութիւն անել:

Միայն նորա, որք ընդունակ չեն մազի չափ անզամ փոխվելու, ընդունակ չեն կատարելագործվելու, միայն նորա թշնամի են այդ փրկարար հասարակական միջոցի: —ան ձն ա ք ն ո ւ թ ե ա ն,

...Վերջապէս պէտք է հասկանանք, որ այն հասարակութիւնը, որ հրաժարվում է ինքն իրան քննութեան տակ դցել, նա ինքն իրան դատապարտում է յաւ ի տ ե ն ա կ ա ն ա ն շ ա ր ժ ո ւ թ ե ա ն, ուրեմն հասարակական մահվան:

Մեր ամենամեծ թշնամիները մենք ինքն ներս ենք: Ի՞նչ անենք մեր այդ թշնամուց

աղատվելու համար: Պէտք է ինքներս քննաւ-
դատենք մեզ, քննադատենք սասաթիկ, անո-
գորմ կերպով: Դա է մեր փրկութիւնը: Կա-
ռաբելագործվել, առաջ դնալ, մեր վերքերից
ու կեղտերից մաքրվել կարող ենք միայն
այդ միջոցով:

Եւ ինքը, Արձրունին, բաց է անում ու-
ղանում ինքնաքննութեան մի ոսկեդար: Ակիզ-
րը գրել էին Ստեփան Ռոկանը, «Հիւմիսա-
վայրի» մարդիկ, Կ. Պօլսի «Մեղուի» խմբա-
գիր Արվաճեանը, բայց միայն Արձրունուն էր
վերապահված դարձնել այդ ուղղութիւնը տի-
րապետող մեր հրապարակախօսութեան մէջ: Ինքնաքննութիւնն էր, որ վայրիվեր արաւ-
շատ հասկացողութիւններ մեղանում: Նա
իւրաքանչիւր հետազօտութեան հիմքը գար-
ձաւ, նա նոր ուղղութիւն, նոր կերպարանք
հաղորդեց մեր վիստադրութեան, գտնելով
նրա տաղանդաւոր ներկայացուցիչ Շափփիի
մէջ իր ամենաեռանդուն երկրագուներից
մէկը: Եւ նրա տուած օգտաները շատ և շատ
են: Ճիշտ էր ասում Արձրունու խօսակից
պարոնը թէ այդ ուղղութիւնը յուսահատա-
կան է: Այն, շատ բան մոռայլ ու յուսաբեկ
դրութեան մէջ էր երեան գալիս մեր առջե-
նայց դա թուլութիւն բերող յուսահատու-
թիւն չէր: Նա չէր ասում թէ պէտք է ձեռ-

քերը կախ զցել, վճիռ կայացնել, թէ ոչնչ
չէ կարելի և չը պիտի անել: Յուսահատա-
կան դրութիւնը եռանդ, գործունէութիւն,
շարժում էր առաջայնում: Արձրունին չէր
սխալում, ասելով թէ հայերի մէջ միակ մը-
խիթարական, միակ պայծառ երեսյթը ինք-
նաքննութիւնն է: Նրա հակառակորդները
ինքնաքննութիւն հասկանում էին թշնամու-
թեան մտքով և յայտարարում էին թէ Արձ-
րունին և նրա կողմնակիցները աղջի թշնա-
միներ են: Բայց որ լաւ գործիչը մեղանում
այդպիսի անուն չէ ստացել: Պատմութիւնը
պատասխանում է մեզ, որ ոչ մէկը...

—○—

Հարուածելով հայ ընտանիքի բացասա-
կան կողմերը, Արձրունին, բնականարար,
չէր կարող առանց ուշադրութեան թողնել
կանանց հարցը, մի հարց, որ, ինչպէս զի-
տենք, նրա զրական գործունէութեան առա-
ջին խոկ քայլերից եղել է նրա համար ամե-
նակարևորներից մէկը և որին նա վերադար-
ձել է շատ անգամ: «Մշակի» առաջին տար-
վայ ընթացքում Արձրունին միայն մի առաջ-
նորդող է յատկապէս նուիրել մեր կանանց
(«կանանց ստրկութեան հետևանքը», № 13):

Տիսուր է կնոջ ճակատագիրը պատմում ենք նրան ընթացքում: Կինը միշտ կախված է մարդուց. նրա գրութիւնը շարունակ ընդունում է այն կերպարանքը, որ համապատասխանում է աղամարդի զարդարման: Երբ արդամարդը վայրենի է, կինը զրաստ է. կամաց-կամաց կնոջ գրութիւնն էլ փոխվում է, երբ աղամարդը վայրենութիւնից դուրս գալով, սկսում է հետզետէ բարձրանալ բաղաքակրթութեան աստիճանով: Կնոջ պատմական ճակատագրի մէջ ահազին յեղափոխութիւն գործողք քրիստոնէութիւնն էր, առաջին հասարակական վարդապետութիւնը, որ երկու սեռի բարոյական հաւասարութիւնը քարոզեց: Քրիստոնէութիւնն էր, որ կերպարանափոխնեց կնոջ գրութիւնը և մեզ մօտ Հայաստանում: Առաջին խոշոր երևոյթը հինգերորդ դարն էր, երբ հայ կինը հանդիսացաւ աղամարդի հաւասար մարդ և մասնակցեց թէ կրօնական և թէ աղջային շարժման:

Բայց քրիստոնէութիւնը չէ կարողանում մեզ մօտ առաջ գնալ, զարդանալ. նա մահմեղականութեան սարուին է գառնում: Հայը քրիստոնէուայ մնալով, իր կենսական երեսթների, իր բարք ու վարքի, իր հասկացողութիւնների մէջ ենթարկվում է մահմեղական ոգուն, իւրացնում է նրա դաղափարներն ու

ըմբռնումները. նա դառնում է «ըռնաւոր ընտանիքի մէջ, մոլիուանդ և անհամբերող՝ հասարակութեան մէջ, կորցնում է եռանդ դէպի շարժում և նորութիւն, յուսահատկում է, դառնում խոնարհ...կինը կրկին ստրկանում է»:

Բայց ահա դալիս է նորագոյն ժամանակը, եւրօպական լուսաւորութեան առաջին նշայրները թափանցում են հայերի մէջ և ստրկութեան հետեանքը առաջ են գալիս իրանց ամբողջ գառնութեամբ: ԱՄարդ և կին աղէտ, հասարակութիւնը անպատճառ կըրթութիւնը ընդունելու, աղամարդը այնքան անկիրթ, որ գեռ երկար ժամանակ ընդունակ չի լինի, իր կողմից կրթութիւնը ընդունելուց յետոյ, աղդեկ միւս սեռի մտաւոր զարդացման վրա: Եւ դրա հետեանքն այն եղաւ, որ հայ կինը սկսեց սովորել, կրթվել, բայց ոչ թէ իր աղջի մարդիկների ձեռքով, այլ անմիջապէս զրաք տարրերի աղջեցութեան ենթարկվեց: Կրթութիւնը եւրօպական լեզուով էր, եւրօպական ոգով:

Պարզու կամքի դէմ, եւրօպական լուսաւորութիւնը սկսեց աղջեցութիւն ունենալ կնոջ վերա... եւ կինը հեռացաւ մարդից, կարծես այլ եւս չէր հասկանում նորսն: Կինը օտար դառաւ մարդի ձգտում-

ներին, հասկացողութիւններին, նպատակներին։ Մարդը հայութեան վերա էր խօսում,—կինը չէր հասկանում նորան։ Մարդը հայերէն էր խօսում, կինը ծիծաղում էր։ Նա հայ է, բայց իր ուղղութեամբ նա տարբերվում է հայոց հասարակութիւնից։ Նորան ծանօթ չէ հայութեան հին անցեալը, նորան ծանօթ է, միայն հայի մօտիկ անցեալը, որը նորա համար անտանելի սորկութիւն էր։

Նա, կարծես, կենդանի բողոք է հայ մարդի անընդունակութեան, ազգի պատմական անցեալ թշուառութեան, պատմական պայմաններից առաջացած այն սորկութեան դէմ, որին նա երկար ժամանակ ենթարկված է եղել...

Հայ կինը, կարծես, ասում է հայ մարդին. այն քիչ մաս լուսաւորութիւնը, որ ես ստացել եմ, վատ թէ լաւ ըմբռնելով նորա տարրական սկզբները,—ես ստացայ եւրօպական տարրից, եւ ոչ թէ քեզանից...

Ամեն տեղ մարդը զարգանալով, մտաւորապէս ազգում է կնոջ վերա։ Հայ արդեան հասարակութեան մէջ այլպէս չէ։ Մարդի կամքի դէմ, առանց մարդի միջամտութեան կնոջ եւ լուսաւորութեան աղբիւ մէջ, —հայ կինը անմիջապէս սկսում է լուսաւորութիւն ստունալ եւրօպական աղբիւրից։

Մարդը ուշացաւ իր բնական պաշտօնը կատարելու մէջ... նորա տեղը քռնած է։ Ուրիշ, աւելի զարգացած տարրը նորա պաշտօնը կատարում է։

Եւրօպական լուսաւորութիւնը, ինչպէս ամեն նըշմարտութիւն, անողորմ է...։

Հայ կինը յափշտակվեցաւ մեր անշարժութեան գրկից... Մեր սեահական յանցանքն է, եթէ կինը

դառնում է մեղ օտար, նա դառնում է մեր հակառակորդ...

Ուրիշ մի քանի տեղերում էլ Արծրունին շեշտում է հայ կնոջ այդ գրութիւնը, այսինքն այն, որ հայ ընտանիքի մէջ օտարացում, խորթութիւն մտցնելու ամենաազգու գործիքը հայ կինն է դառնում։ Եւ դա, իսկ որ, կենսական մի մեծ երկոյթ էր։ Հայի նահապետական ընտանիքում կինը, զրկված լինելով որ և է ուսումից, կրթութիւնից, լինելով մի անկեղու ստրուկ, սաստիկ կապված էր հայրենի աւանդութիւնների, ընտանեկան սրբութիւնների հետ։ Այդ ստրուկը կենտրոնացնող, իր շուրջը հաւաքող մի ոյժ էր։ Նրա վրա էր պահճում ամերդջ տունը և նրա հերոսական ջանքերը ընտանեկան ըսկըբունքի, սրբութեան, աւանդութիւնների ու նախապաշտամունքների հզօր, անխորտակեցի պաշտպաններն էին։ Բայց փոխվեցին հանդամանքները, հայ կինը սկսեց կրթվել, և նա դարձաւ ընտանիքի մէջ բոլորովին հակառակ գեր կատարող մի ոյժ։ Նա սկսեց օտարացում մտցնել ընտանիքի մէջ, նա ըսկսեց քայլացել այն, ինչ դարերի ընթացքում պահելուհապանել էր իր անօրինակ մարտիրոսութիւններով։ Արծրունին քա-

ցարում էր այդ երեսիթը այն կրթութեամբ, որ ստանում էր հայ կինը. նա ասում էր, որ հայ կնոջը հայութիւնից խլեց եւրօպական ուսումնք Սրանով նա, ի հարկէ, չէր ասում թէ հայ կինը եւրօպական ուսում չը պիտի ստանայ: Ո՞չ, ամրող հարցը ուսում ստանալու միջոցին ու եղանակին է միայն վերաբերում: Ի՞նչպէս պէտք է լինի այդ կրթութիւնը, ինչ պէտք է անել, որ եւրօպական կրթութիւնը այդպէս ոչնչացնող չը լինի:

Այստեղ մենք կանոնում ենք Սրծրունու աշխարհայեցութեան հիմքերի առաջ: Սրդէն տեսանք, որ սկզբից ենթ Սրծրունին ամեն բանի մէջ անհատի ազատ զարգացման կողմնակից է, այդ սկզբունքն է համարում միակ ճշմարիտը, միակ արդարն ու բեղմնաւորը մարդկացին երջանկութեան համար:

Անհատ ասելով, նա միայն մարդուն չէր հասկանում: Մի հատ մարդը անհատ է իր հասարակութեան մէջ, բայց ընդհանուր մարդկութեան մէջ անհատ է ամեն մի ազգ: Եւ ինչ հարկաւոր է ամեն մի մարդուն անհատապէս զարգանալու համար, որպէս զի նրանից օգուտ տեսնի հասարակութիւնը, նոյնը հարկաւոր է և ամեն մի առանձին աղոփին, որպէս զի նա օգուտ բերէ ամբողջ մարդկութեան:

Յատկապէս անհատի նշանակութիւնը և դերը բացատրելու համար Սրծրունին 1872-ին գրել է երկու յօդուած. «Կաթոլիկ եկեղեցի և անհատութիւն» (№ 22) և «Ի՞նչ է անհատութիւն» (№ 25): Առաջին յօդուածում նա ընորոշում է պատականութեան էութիւնը: Դա մի պատմական տեսութիւն է, հիմնված առաջաւոր, լուսամիտ հեղինակների (Դրեպէրի և ուրիշների) հայեացքների վրա: Մենք ամենքս զիանք թէ ինչ է պատականութեան ողին. նա վախում է ազատութիւնից, անհատական իրաւունքներից, մարդու մէջ անհատականութեան զգացմունքի զարգանալուց: Մի շարք դարեր իրանց զործերով, մաքառումներով ցոյց են տալիս թէ ինչպէս կաթոլիկ եկեղեցին ձգտում էր սպանել անձնաւորութիւնը, գարձնել նրան եկեղեցական իշխանութեան ստրուկ: Մինչդեռ քրիստոնէութիւնը անհատի զարգացման սկզբունքն էր դրել իր հիմնարկութեան օրից: Եւ Սրծրունին այդ ճշմարտութիւնը պարզող մի օրինակ համարում է հինգեռորդ դարի Հայաստանը:

Հինգեռորդ դարի հայը քարազում էր անհատի անկախ ինքնածանաշութիւնը: Լուսաւորչական եկեղեցին քարոզում է, որ եկեղեցին «հաւատացեալների ժողով է» և ոչ մի

տեղ մեր գաւանութիւնը դրա հակառակ բան չէ ասում. օրինակ այն, թէ հաւատացեալ-ները սիսի անպայման, առանց իրանց խըզ-ձից խորհուրդ հարցնելու, հպատակվեն եկեղեցուն. Եւ հինգերորդ դարի գաղափարական շարժումը Սրծրունին համարում է հէնց այդ իսկ անհատական դարդացման դործ: Ահա ինչ է նա ասում.

Հինգերորդ դարի, Զրադաշտի դէնի դէմ սարսա-փելի կոլուների ժամանակ, երբ անհատներից ամեն մէկը, մարդ թէ կին, դէպի հայրենիք եւ կրօն ու-նեցած խոր սիրով զինաւորված, զոհում էին իրանց անձները, —եկեղեցին, որպէս հիմնարկութիւն կարծես թէ յետ քաշվեցաւ եւ կուփ զիռողական քափէում թոյլ տուեց ուրիշ հասարակական զօրութեանը առաջ-նորդել ազգային շարժմանը... այն զօրութիւնը ան-հ ա տ ո ւ թ ի ւ ն էր: Եւ ինչպէս ասում է մեր Եղիշէն, մարդիկներից ամեն մէկը իր անձամբ ներկայացնում էր եկեղեցին, մնջանից ամեն մէկը ի կ ե ղ ե ց ի էր:

Օրինակը այս է հաստատում, որ երբ հասարակութեան մէջ չէ սպանված անհա-տականութիւնը, երբ անձնաւորութիւնը գարդացած է ինքն իր մէջ, գիտակցաբար, այդպիսի հասարակութիւնը կարող է գաղա-փարական, առաջադէմ շարժումներ գործել, շարժումներ, որոնք այդ հասարակութեան պարծանքն են մնում դարերով: Մինչդեռ

պապականութիւնը, դարերով ջանք գործա-գրելով որ լինի անհատականութիւն, այլ լինի կոյր հնազանդութիւն, ստրկութիւն, երբէք չը կարողացաւ ազատ, առաջադիմական շարժումներին դրգիչ հանդիսանալ:

Ինչո՞ւ է անհատականութեան սկզբունքը այդպիսի առողջ, գեղեցիկ երևոյթներ առա-ջացնում: Այդ բանը Սրծրունին բացատրում է իր երկրորդ յօդուածում, հիմնուելով բնա-կան գիտութիւնների վրա: Բնութիւնը կեն-դանի մարմինների ստեղծագործութեան մէջ դրել է մի մեծ, անփափոխելի սկզբունք: Պա այն է, որ կենդանի մարմինը բաղկացած է դանազան գործարաններից, զանազան օր-դաններից, որոնց նշանակութիւնն է ամբողջ մարմնի համար անհրաժեշտ այլ և այլ պաշ-տօնները կատարելը: Եւ իւրաքանչյուր օրգան յարմարեցրած է կենդանի մարմնի տեսակին, բնաւորութեան, կեանքի եղանակին: Կովի ատամները բոււսական կերակրով ապրող ա-նասունի համար ամենայարմար գործիքներն են. մարդը միայն բուսեղէն չէ ուտում և նրա ատամները ուրիշ կազմուածք ունեն:

Օրգանական մարմնի համար անհրաժեշտ են այն բոլոր մասերը, որոնցից կազմված է նա: Օրգանական մարմինը իր բոլոր գործիք-ներով կազմում է այն, ինչ որ գիտութիւնը

անուանում է անհատ։ Հիմա զրկեցէք այդ անհատը նրա օրդանների մէկից։ Ի՞նչ կը լինի։ Ամբողջ մարմինը կը կորցնէ իր օրդանական ամրողջութիւնը, իր անհատականութիւնը։ Զրկել անհատը իր մի օրդանից, նշանակում է վեասել նրան։

Հասարակութիւնը կազմվում է անհատներից, իսկ մարդկութիւնը—ազգերից։ Ազգութիւնն էլ անհատ է մարդկային մեծ ընտանիքի մէջ։ Աւեն ազգութիւն իր անհատական ինքնուրոյն յատկութիւններն ունի, դրանք նրա գործարաններն են և պիտի ապրեն, որպէսզի ազգն էլ ապրէ իր անհատական կեանքով։ Եւ դա անհրաժեշտ է ոչ միայն այդ անհատին, այլ ամբողջ մարդկութեան։

Եթէ պահպանել մարդի անհատութիւնը նշանակում է հասարակութեանը օգուտ բերել, նորան հարստացնել, նորա համար նոր ոյժ մշակել, —ուրեմն եւ պահպանել ազգութիւնների անհատ ականյաց կութիւնները, անհատականութիւնների մէջ անհատութիւնների անհատութեանը։

Մենք տեսանք որ Արծրունին մայրենի լեզուի մասին ծաղած սպազարի մէջ անհատականութեան այս օրէնքի վրա էր հիմնվում։ Ահա նոյն այդ սկզբունքից առաջնորդվելով,

նա գրում է՝ «Թատրօն հարկաւոր է թէ ոչ առաջնորդողը (№ 31)։ Եւ ահա ինչպէս է նա պատասխանում այդ հարցին։

Փորձեցէք 12 տարեկան մի երեխայի ձեռքը վերացական փիլիսոփայութիւն պարունակող մի զիրք տալ, —և նա երեխ, ոչնչ չի հասկանաց։ Բայց պատրաստեցէք այդ երեխային հասկացնել նոյն այդ ծանր վերացական մաքերը ասաիճանաբար, աւելի թեթև և մատչելի ընթերցանութեան միջոցով, —և զուք ժամանակի ընթացքում հասկանալի կը դարձնէք նրան այն փիլիսոփայական զիրքը։ Փորձեցէք երեխային նախ և առաջ նրա մայրենի լեզուն չը սովորեցնել, այլ հէնց սկզբից աւանդել նրան լոլոր առարկաները օտար լեզուով, երեխան մեծ զժուարութիւն, մեծ արգելքներ կը զգայ կանօնաւոր կերպով մըտաւորապէս զարգանալու համար։ Իսկ եթէ զուք նախ և առաջ մայրենի լեզուով զարթեցնէք երեխայի մէջ հետաքրքրութիւն, ըսկիով դնէք նրա մտաւոր զործունէութեանը, կը տեսնէք որ երեխան ժամանակով ինքը կը զգայ օտար լեզուներին զիմելու անհրաժեշտութիւնը՝ իր մէջ զարթած ուսումնամիրութեանը լրտմն տալու համար։

Մի ուրիշ օրինակ երիտասարդով կարգում է մայրենի լեզուով զրած մի զիրք։ Նրա մէջ

յարուցվում են նոր մտքեր, որոնց լրում
տալու համար նա պահանջ է զգում՝ դիմելու
երկրորդ, երրորդ, չորրորդ գրքին։ Նրա հար-
շաբարութիւնը աւելի և աւելի ընդարձակ-
վում է, իսկ մայրենի գրականութիւնը այն-
քան ազգաւ է, որ չէ կարողանում բաւա-
րութիւն տալ նրան։ Եւ նա ստիպված է
մինում դիմել օտարագղի գրականութեանը։

Անա մտաւոր զարդացման համար բնական եւ
կանոնաւոր ընթացքը, — զարթեցնել մարդի մէջ բնա-
կան ձգուումն աստիճանաբար կրթվելու, հետզհետէ
եւ ինքնանանաչութեամբ առաջ դնալու։

Այս բնական և կանոնաւոր ընթացքը
սիրափ թատրօնական գործում էլ պարտա-
ւորական լինի։ Ահա հայի առաջ ներկայա-
ցնում են օտար կեանքից վերցրած կամ օ-
տար կեանքի մէջ աւենաերենի համարված
դրաման։ Ընդունեցէք թէ այդ հայը գեռ չէ
դնահատում կամ հասկանում իր մայրենի
լեզուով գրված պիէսները։ Եւ ի՞նչ կը տես-
նէք։ Կը տեսնէք այն, որ հայը չի հասկա-
նայ և օտար կեանքից վերցրած պիէսը։

Բայց շարժեցէք նորա հետաքրքրութիւնը շա-
րունակ ներկայացնելով նորան իր մայրենի լեզով
այնպիսի գրվածները, որք առնված են իր շրջանից,

ծողովրդական կեանքից, — եւ նա իր շրջանի երեւոյթ-
ներով հետաքրքրվելուց յետոյ, փոքր առ փոքր պա-
հանջ կը զգա՝ ընդարձակել իր հորիզոնը եւ ասա
դիմել եւ օտար երեւոյթներին։

Թիվիկաը արգեն սկսել է մեծ կենտրօն-
ներին յատուկ կեանք վարել։ Նա ունի իտա-
լական օպերա, ուստաց թատրօն, գիտական
ընկերութիւններ, գրական երեկոներ, հրա-
պարակական գասախօսութիւններ և այն։
Սյդ բոլորը, սակայն, մատչելի չէ ժողովրդի
ստորին դասին կամ մինչև իսկ միջին դասի
մի մասին։

Ստորին դասը շարունակում է ազատ ժամանակը
նուիրել կամ կու իւն երին (մուշտի կոիւ) կամ զա-
նազան ուխտագուռ թիւն երին։ Միջին
դասը թուղթ խաղալուն, կանայք թուղթ եւ լուս խա-
ղալուն, գիտնականները բամբասելուն եւ այլն...»

Երեակայենք թէ ըեմի վրա ներկայա-
ցնում են Օստրօվսկու պիէսները։ Նրանք
շատ լաւ են, նրանց մէջ հանձարեղ գրչով է
նկարված ուստ կեանքը։ Բայց հայ-վրաց հա-
սարակութեան համար, որ գեռ սովոր չէ իր
մայրենի լեզուով գատել Օստրօվսկու դուրս
բերած հասարակական երեսյթների մասին,
—այդ պիէսները չեն կարող կրթողական

նշանակութիւն ունենալ: Եւ մեր հասարակութիւնը չէ ել գնում այդ ներկայացումները տեսնելու:

Ի՞նչ է մնում անել: Ո՞չ Օստրօվսկու հիանալի գրուածքները, ո՞չ ընդհանուր մարդկային նշանակութիւն ունեցող Շեքսպիրի կամ Շլլերի գրամաները գեռ մատչելի չեն: Մնում է գրաւել հասարակութիւնը Օֆենբախի և ուրիշների գործերով, զանազան «Փեղեցիկ ելէններով» և փրանսիական ճաշակով զրված այնպիսի պիէսներով, ուր երեսմ են ռոկոր կուրծքերով, ոտներով ու ձեռքերով ներկայացնող, պար եկալ, իրանց մէջ պաշտչվող, գալթակզեցուցիչ գերասանուհիները: Բայց գրաւելու այս միջոցը անկիրթ, գեռ իր սեփական ազգային, ինքնուրոյն բեմական արուեստ չունեցող ժողովրդի համար անբարոյական է, վերին ասաիթճանի միասակար և նոյն իսկ վատնպաւոր...

Մնում է դիմել այն մեթօդին, որով մենք փիլիսոփայութիւնը մատչելի դարձրինք երեխային: Այն է՝ սկսել մայրենի, սեփական գործից և նրա վրա կրթելով ժողովրդը, տանել դէպի օտարը, դէպի հանրամարդկայինը:

Հարկաւոր է ամեն միջոցներով նպաստել ժողո-

վրդական, ազգային քեմական արհեստի զարգանալուն, որ մեր հայ-վրաց հասարակութիւնը նախ եւ առաջ զրաւվելով իր սեփական շրջանի հասարակական կեանքով, այնքան նետաքրքրվէր առհասարակ կենսական զաղափարներով, որ ժամանակով ազգային, սեպհական մտաւոր կեանքի արդիւնքը նորա համար նեղ երեւալով, նա ականյ ստիպված լինէր ընդարձակել իր մտաւոր հօրիզոնը եւ դիմել օտար լինուներով զրված եւ օտար կեանքից առնված քեմական ստեղծվածներին:

Ահա մտաւոր զարգացման կանօնաւոր ընթացքը:

Այս ընթացքը միանդամայն համապատասխանում է այն սկզբունքին, որի վրա հիմնում էր Գրիգոր Արծրունին իր ուղղութիւնը, այն է՝ անհատական զարգացման: Բայց չէ կարելի չը խստավանել, որ նա չափազանց խտացնում էր գոյները, ուսահանջելով որ ժողովուրդը նախ և առաջ գաստիարակվի սեփական կեանքից վերցրած, ինքնուրոյն դրուածքների վրա և ապա միայն ծանօթանայ օտար բեմի հետ:

Այս, ճիշտ էր միանդամայն, որ թատրոնը կարող էր գրաւել հասարակութիւնը տեղական, հարազատ կեանքի արտայայտութիւններով, բայց կարծող էնքը մենք ունենալ այնքան պատրաստութիւն, որ միայն մեր սեփական սուեղծագործութիւններով կերակրէինք ժողովուրդը: Մեր գրական աղքատութեան մէջ

հարկաւոր էր և օտարը, թարգմանականը՝ ուշ սուցաննելու, գրողներ, կատարողներ ու զնահատողներ պատրաստելու համար։ Սակայն պէտք է ասել որ Արծրունին անհաշտ թշնամի չը մնաց թարգմանական օտար զրուածքներին։ Նա էլ հասկանում էր զրանց անհրաժեշտութիւնը։ Եւ եթէ այնպէս խիստ կերպով էր ինքնուրոյնութեան պահանջը դնում, պատճառն այն էր, որ ինքնուրոյնութիւն մեզանում շատ քիչ կար, բայց անհրաժեշտ էր որ շատ լինէր։

Ինքնուրոյնութիւն Արծրունին պահանջում էր ոչ միայն բնմական զրուածքների վերաբերմամբ, այլ զրական գործունեութեան բոլոր ձևերում։ Մամուլից նա պահանջում էր ինքնուրոյն տաղանդներ ծնեցնել, իսկ «Ո՞վ է մեզաւոր» առաջնորդողում (№ 14) ասում էր։

Մենք զգվեցինք օրագրութենից, որովհետեւ մեր օրագրողներ, չը ճանաչելով ժողովրդի պահանջները, մտաւորապէս պատրաստ չը լինելով հանդէս դուրս գալ, չը կարողանալով իրանց մտքերը լայտնել, ինքնուրոյն մտաւոր արդիւնքը ծնել, լցում էին թերթի էջերը ամեն ստացած անհամ նամակներով, դամբանական ճառերով, անխորհուրդ բանաստեղծութիւններով։

...ինքներս զրելու նիւթ չունենալով, մենք ստիպաված էինք մեր լրագիրների էջերը եւ օրագիրների երեսները կամ անհասկանալի թարգմանութիւններով

լցնել, կամ զաւառներից առաջին պատահած անհամ նամակներով, որ չը վիրաւորենք այս ինչ կամ այն ինչ քաղաքում նշանակութիւն ունեցող Կիրակոսեանի կամ Մարտիրոսեանի անձնական զգացմունքը, նորա ինքնասիրութիւնը։

Ինքնուրոյն միտք, ինքնուրոյն ստեղծագործութիւն որոնելը մեր կեանքի առաջացրած անհրաժեշտութիւնից էր բղխում։ և Արծրունուն ներելի էր ժամանակի ստիպուղական պահանջի ազգեցութեան տակ մի քիչ միակողմանի էլ լինել՝ այդ անհրաժեշտութիւնը ցոյց տալու համար։

Անհատական զարգացման սկզբունքը երեսում է և Արծրունու մի այլ յօդուածում— «Պետութեան զանազան տարրերը» (№ 48): Պետութիւնները կարող են կազմված լինել զանազան ազգութիւններից, որոնց միացնում է ընդհանուր քաղաքական օրենքը։ Բայց ազգութիւններից մի պետութիւն կազմող մասերը կարող են հետեւեալ տարրերը լինել զանազան, միմեանցից տարրեր լեզուները, միմեանցից տարրեր կրօնները և վերջապէս քաղաքական կուսակցութիւնները։

Պետութեան համար անհրաժեշտ է իր բաղկացուցիչ բոլոր տարրերի միութիւն, բայց ոչ միակերպութիւն։ Եթէ միութիւն բառով մենք պէտք է հասկանակ միակեր-

սլութիւն, այն ժամանակ պէտք է տեսնենք այսպիսի դրութիւններ քաղաքական աշխարհում. Աւատրիան, ուր գերմաններէն լեզուներով խօսողները բազմաթիւ են, քանի թէ զանազան ուրիշ լեզուներով խօսող խըմբերը առանձին վերցրած, պիտի ստիպէ իր բոլոր հպատակներին գերմաններէն խօսել. Ֆրանսիան, ուր բազմութիւնը կաթոլիկ եկեղեցուն է պատկանում, պիտի ստիպէ բողոքականներին ընդունել կաթոլիկութիւնը: Անգլիան, ուր տիրապեսող կրօնը բողոքականութիւնն է, պիտի ստիպէ որ կաթոլիկ իր լանդիան բողոքականութիւն ընդունէ:

Բայց այդպէս չէ, միութիւնը միակերպութիւն չէ նշանակում և զրա ամենալաւ օրինակը Շվեյցարիան է, որ կազմված է միացած, բայց ոչ միակերպ աղքութիւններից:

Շվեյցարիայի հանրապետութիւնը հասնում է կատարեալ միութեանը ոչ թէ խիստ միակերպութեան միջոցով, այլ բազմա տեսակ եւ միմեանցից բոլորովին տարբեր պետութեան մէջ գտնվող տարբերի մէջ ընդհանուր հաւասար ակցութիւններից:

Ամենամեծ ուշադրութիւն նուիրելով տեղային, մամնաւորապէս հայ ազգին վերաբերվող հարցերին, «Մշակը» աչքից չէր գըցում և ժամանակակից առաջնակարգ հասա-

րակական, օրէնսդրական և քաղաքական երեսոյթները: Այսպէս, «Մշակը» խօսեց ընդհանուր զինւորազրութեան, կլասիկական ուսման մասին: Հետաքրքրական է որ Արծուունին ընդհանուր զինւորազրութիւնը համարում էր մի երկրի մտաւոր և նիւթական զարգացման արդիւնք: Ընդհանուր զինւորազրութիւնը մի պարտաւորութիւն է, բայց որտեղ կարող է այդ պարտաւորութիւնը սիստեմ գառնալ, իրագործվել: Այնտեղ, ուր կայ իրաւունքներ ունեցող քաղաքացին: Մի պարտաւորութիւն ձշութեամբ կատարելը հեշտ բան չէ: Հարկաւոր է զարգացած լինել պարտաւորութիւն կատարելու համար. իսկ զարգացած լինելու համար պէտք է կատարեալ իրաւունք ունենալ զարգանալու՝ թէ մտաւորապէս, թէ նիւթապէս: Այս սկզբունքից առաջնորդվելով, Արծուունին չէր հաւատաւում, որ ընդհանուր զինւորազրութիւնը այնպիսի երկրներում, ինչպէս են Թիւրքիան և Պարսկաստանը, կարողանայ հասարակական օգուտներ տալ:

Այն երկիրներում, որտեղ չը կայ մտաւոր հիմք, որտեղ չը կայ ժողովրդական կրթութեան կազմակերպված սիստեմա, որտեղ ամենքին տիրում է մոլեսանդութիւն, որտեղ դեռ եւս ժողովուրդը վարժված չէ ոչ աշխատանքի, ոչ քաղաքական իրա-

ւունքի եւ ինքնակառավարութեան մէջ, որտեղ մահմեղականը անհամբերող է դէպի քրիստոնեան, հայլուսաւորչականը դէպի հայ կաթօվիկը, յոյնը դէպի հրէան, հայը դէպի յոյնը, մահմեղականը շիա զաւանութեան՝ դէպի մահմեղականը սուննի դաւանութեան... որտեղ գիւղական ազգաքնակութիւնը ողորմելի է մի կողմից, որովհետեւ աւաղակութիւնը դեռ աղնիւ արուեստ է համարվում, ու միւս կողմից՝ որովհետեւ հարկատութիւնը եւ պաշտօնեաների կառավարութիւնը կամայականութեան վերա է հիմնած...

Գալով կլասիկական ուսման հարցին, նկատի ունենալով Արծրունու յօդուածները «Հայկական Աշխարհի» մէջ, կարող ենք հետեղակացնել, որ նա հակառակ պիտի լինէր այդ ուսման, նա չէր կարող հակառակ չը լինել, քանի որ բէալական ուղղութեան ներկայացուցիչ էր, պահանջում էր ճիշտ, դրական փառութիւնների ամրապեսութիւնը թէ դպրոցի և թէ գրականութեան մէջ: Այդ հարցին «Մշակը» նուիրել է երկու առաջնորդող, որոնցից մէկի մէջ քննում էր հին, կլասիկական աշխարհի հասկացովութիւնները: Հետաքրքրութեան արժանին այդուղ այն է, որ Արծրունին կլասիկական ուսման հետեանք էր համարում սօցիալիզմը և կօմմունիզմը: Դրանք ներկայանում են իրեն վկասակար վարդապետութիւններ, որոնցից աղասվելու

համար պէտք է թողնել կլասիկական ուսման սիստեմը և դիմել բէալական ուսման Սյատեղից պարզ է, որ Արծրունին իր ուղղութեամբ, զաւանանքներով պատկանում էր աղասամառութեան, լիբերալիզմին, այս բառի ընդարձակ և լաւագոյն խմաստով: Որ նա հակառակ էր սօցիալականութեան, երեսում է և այն բանից, որ տարիներ յետոյ, առաջարկելով համալսարան բանալ Թիֆլիսում, նա այդ հիմնարկութեան օգտաւէտութիւնը Թիֆլիսում բացատրում էր և նրանով, որ այսուղ ուսանող երիտասարդութիւնը աղասի կը լինի սօցիալիզմի թոյնից...

Իրեն բէալիստ, իրեն գործնական, ճիշտ զիտութիւնների դարի զաւակ, Արծրունին, ի հարկէ, առանձին մեծ ուշադրութիւն պիտի նուիրէր մեր երկրի տնտեսական հարցերին: Մենք այդ ակտանք նրա այն յօդուածներում, որոնք գրպեցին մինչեւ «Մշակը»: Սկսելով սեփական լրագրի հրատարակութիւնը, Արծրունին աւելի միջոց և հնարաւորութիւն ունէր զարգացնելու իր գործունէութեան այդ կողմը: Իր մի շարք առաջնորդողներում, որոնցից մի քանիսը կրում են «Մեր տնտեսական ապագայ» ընդհանուր վերնագիրը, Արծրունին հայ ընթերցողի առաջ բաց է անում մի բոլորովին նոր, անձանօթ աշխարհ: Բացի

առաջնորդողներից, «Մշակի» ներքին տեսութիւնը համարեա ամբողջովին նուիրված էր տնտեսական-արդիւնաբերական բազմակողմանի հարցերին: Եւ «Մշակը» իր առաջին տարվայ մէջ այդ կողմից պարունակում է այնպիսի մի մեծ հարստութիւն, որի նմանը նոյն խել տեղական ուրիշ լեզուներով հրատարակող թերթերին էլ յայտնի չէր նոյն չափերով:

Մենք, ի հարկէ, չենք կարող քայլ առ քայլ հետեւ այդ բոլոր յօդուածներին: Կը վերցնենք միայն մի քանիսը Արձրունու առաջնորդողներից, որպէսզի իմանանք թէ տնտեսական ինչ սկզբունքներ էր նա առաջարկում սխօլաստիկ, վերացական կրթութեան և հասկացողութիւնների մէջ անշարժացած հային:

«Մեր տնտեսական ապագայ» յօդուածների շարքը սկսվում է (№ 19) անտառների նշանակութեան և նրանց ոչնչացնելու հարցով: Բայց կարեորը այդ չէ: 1872 թւականին վերջանում էր Փօթի-Թիֆլիսեան երկաթուղին: Առաջին անդամն էր որ շոգեկառքը պիտի շարժվէր Անդրկառլիասում: Յայտնի է թէ քաղաքակրթութեան այդ հրաշալի սեփականութիւնը ինչ ահազին փոփոխութիւններ է մացնում մի երկրի մէջ, մանաւանդ

այնպիսի երկրի, որ դարաւոր անշարժութեան է ենթարկված, որի ժողովուրդը ոչինչ պատրաստութիւն չունիք քաղաքակրթութեան պահանջները հասկանալու և իրագործելու համար: Արձրունին դեղեցիկ, կրակոտ առաջնորդողում (№ 23), ուշադրութիւն հրաւիրելով մեր երկիրը մտնող այդ նոր հսկայական ոյժի վրա, ասում էր թէ ինչ պիտի լինի երկաթուղին մեզ համար:

Ի՞նչ պիտի լինի: «Եւրօպական լուսաւորութիւնը անողորմ ոյժ է, ասում է նա: —Կամ բոլորովին չը պէտք է հետեւէք նրան, և յամառութեամբ նրա ոչ մի սկզբնական միավը չընդունէք, կամ եթէ առաջին քայլ արեցիք, —ալ ես չեք կարող յետ կանոնել և ընդդիմանալ նորա ընթացքի զօրութեանը»: Գալիս է երկաթուղին: Նա մի զօրեղ խթան կը լինի մեր ինքնահաւան անշարժութեան դէմ: Եւ եթէ դուք դարման չը տաք նրա բերած պահանջներին, ուրիշները կը կանգնեն ձեր տեղը և ձեղանից կը խլեն գործելու միջոցները: Շուտով շոգեկառքը կը սուլէ մեր երկրում: Սիրելի կը լինի ձեզ համար այդ սուլոցը: Ո՞չ, դուք պէտք է ատէք նրան: Եւ Արձրունին մարդկային լեզու է զնում այդ սուլոցի մէջ, խօսեցնում է նրան:

Նա կը դառնայ ձեզ համար ատելի, ծաղրական ճայն, որը եթէ կը թարգմանվի մարդկային լիզվով, հստեւեալ միտք կունենայ. «Դուք յամառութեամբ մնացիք ձեր անշարժութեան մէջ, — հիմի ու շէ, ձեր իշխան ու թիւնը անցաւ: Դուք յամառութեամբ պաշտպանելով սուրբ անշարժութիւնը, սրբադրութիւն համարեցիք թէ եկեղեցու, թէ հասարակութեան մէջ կենդանի լիզվով ամբոխի հստիսուելու, այլ շարունակեցիք մեռած դրաբառը ձեր հասարակութեան մէջ զործածելու, — հիմի դուք պիտի կորցնէք ձեր լիզուն: Դուք չը կարողացաք աղդել ձեր կանանց վերա կրթողական կերպով, ստըրկացրիք նոցա եւ չը կրթեցիք նոցա — կինը յափշտակվեցաւ ձեր գրկից, դուք նորա համակրութիւնը կորցրիք: Դուք ձեր որդիներին կրթութիւն տալուց յիսոյ չուզեցիք նոցա ստացած գիտութիւնից օգուտ քաղել եւ գործ զնել նոցա հասարակութեան ծառայութեանը, մինչեւ 30 եւ 40 տարեկան հասակը նոցա տղէտ եւ անփորձ համարելով, — եւ ձեր ուսեալ երիտասարդների տեղը օտարազգի գիտնական երիտասարդները զործ կը կատարեն: Զեր երիտասարդութեան մեծ մասը ձեր անշարժութեանը ենթարկվելով, եւ չը գիտենալով ձեր ամեն բան մեռցնող աղքեցութեան դէմ բողոքել, անցնում էր անգործութեան եւ թուղթ խաղալու մէջ տարիները օրերի նման, — եւ նորա պիտի կորցնեն բնական իրաւունքը աղղեցութիւն ունենալ հասարակութեան վերա: Դուք յափշտակվեցաք առեւտրական զործունելութեամբ, որին համարեցիք ամենից հնչու միջոց շուտով հարստանալու, արհամարհեցիք երկրագործական պարապմունքը, արհամարհեցիք առհասարակ արդիւնաբերութիւնը, բաւականացաք միայն

առեւտրական միջոնորդութեամբ: Դուք ձեր արդարեւ անարդար միջոցներով հաւաքած հարստութիւններն էլ գործ չը զրիք արվեստագործութեան, երկրագործութեան, տնտեսութեան զարգացման նպաստերւն, չը հիմնեցիք գործարանները, չը բովագործեցիք երկրի հանքերը, չը բարուզեցիք երկրագործութիւնը, զինեղործութիւնը, շերամապահութիւնը, — եւ այդ բոլորը պիտի կատարեն ձեր տեղը օտարազգիները, որովհետեւ զուք ուշացաք, ինքնահաւանութեամբ կրիմնելով «զեռ եւս վաղ է»:

Դուք արդիւնաբերութիւնը արհամարհեցիք, ընտելացած չը լինելով աշխատանքին եւ խմբովին դիմեցիք ձեր բոլոր ոյժը գործ զնելով պաշտօնական ծառայութեանը, — եւ դատապարտեցիք ձեզ ինքներգ չը ծնել նոր մտաւոր կամ նիւթական արդիւնքը, այլ միայն եղած դրութիւնը պահպանել...»:

Շողեկառքի սուլոցի այս մեղադրական ակտի մէջ երեսում է Արծրունու տնտեսական ծրագրի ամբողջ մանրամասնութիւնը: Ահա նա հետեւեալ յօդուածում չօշափում է վաճառականութեան հարցը:

Հայերի վաճառականութիւնը չափազանց յայտնի է աշխարհին և նրա մասին շատ խօսել են եւրոպական զանազան հեղինակներ էլ: Միայն առեստրի շրջանում հայը կարողացաւ համաշխարհային հոչչակ ստանալ. և դա ազգային միակ պարծանքն էր, քանի որ հայը Արևելքի վաճառականութեան ամենանշանա-

նաւոր տէրն էր: Պարծանք էր այն, որ հայը ոտի տակ է տալիս ամբողջ Արևելքը, որ նրա կարաւանները անհուն տարածութիւններ են կտրում անցնում ևնա Եւրօպայի բուլոր վաճառաշահ նաւահանգիստներում ունի իր պահեստները: Բայց ահա XVIII դարում Արևելքի վաճառականական ասպարէզում հայերի մրցակից են հանդիսանում Եւրօպայիները—անդիպացի, ֆրանսիացի, հօլլանդացի վաճառականները: Հայը ստիպված է տեղի տալ այդ մրցակիցներին, որովհետեւ նրանց պէս պատրաստված ու լուսաւորված չէ: Զրկվելով ինքնուրոյն, անկախ դիրքից, հայ վաճառականը զրկվում է և շահից: Յայտնի է դառնում, որ հայը իսկապէս մի առևտրական միջնորդ է, որ նա ինքը ոչինչ չէ արդիւնաբերում, այլ միայն առնում և ծախում է պատրաստ ապրանքը: Սյս հանգամանքը շեշտում են դեռ XVIII դարի հեղինակները:

Մեզանում առաջին անդամ Ստեփանոս Նազարեանցն էր, որ յայտնեց թէ ոչ մի պարծանք չէ հայի հոչակլած վաճառականութիւնը, քանի որ նա առևտրական միջնորդութեան կերպարանքն ունի և արդիւնագործութիւնն չէ առաջացնում մեր երկրում: Գրիգոր Արծրունին էլ, այդ տեսակէտից նայելով վաճառականութեան վրա, ասում էր որ

եկել է կամ կը գայ ժամանակը, երբ հայը իբրև միջնորդ էլ գուրս կը քշվի հրապարակից: Հայի միջնորդութիւնը հարկաւոր էր, քանի որ մեր երկիրը գժուարութիւններ էր ներկայացնում օտարների համար. կովկասեան պատերազմները, յարմար և արագ հաղորդակցութեան բացակայութիւնը ձեռնտու էին միջնորդ հայերին, որոնք երկրի հում նիւթերը ուրիշ երկիրներ էին արտահանում և գրաից էլ ապրանքներ ներմուծում: Այժմ կովկասը խաղաղացաւ, հաղորդակցութիւնը ապահով և արագ է գառնում: Կը մնան հայերը միջնորդներ:

Այն, գուցէ մի առ ժամանակ կը մնան, մինչեւ որ օտարազգիները կը մտնեն մեր երկիրը, ըստ կը ճանաչեն նրան: Սկզբում նըրանք էլի կը դիմնն հայերի միջնորդութեան, մինչեւ որ իրանք կը հասաւատին, իրանց ձեռքը կատնեն ամեն ինչ: «Ի՞նչ կը մնայ հային, հարցնում եմ ես, եթէ նա յամառութեամբ կը շարունակի առուտուրը իր հասարակական գործունէութեան միակ ճիւղը համարել... Ի՞նչ կը մնայ,—միայն մանրավաճառութիւնը կամ օտարազգիներին ծառայել, որպէս կօմի սիօն էր»:

Ոչ մի երկիր չը կայ, որի բնակիչների մեծ մասը, երկրի բնական հարստութիւնը

թողած, պարապէր միայն առևտուրով։ Սա
անբնական գրութիւն է։ Եւ Արձրունին, ցոյց
տալով ապագան, առաջարկում էր թողնել
հին հասկացողութիւնները և սկսել երկրի
բնական հարստութիւնները շահագործել։ Դեռ
ամեն ինչ կործ չէ, եթէ ժամանակին խելքի
դաք, գուշացնում էր նա։

Հայի վաճառականութիւնն այդպէս է։
Բայց հայը միայն վաճառական չէ, ազգի մեռ-
ծամանութիւնը հողի վրա է նստած, եր-
կրագործութեամբ է պարապում։ Սակայն
հողագործութիւնն էլ ոչ մի յուսատու ա-
պագայ չէ խոստանում։ Նկատելի է մի ցա-
ւալի երեսյթ, որ գանգասաների առիթ է
տալիս մտածող և հասկացող մարդկանց։
Դա այն է, որ հայ ժողովուրդը, գարե-
րից ի վեր լինելով երկրագործ, քիչ հա-
կում ունէ դէպի երկրագործութիւնը։ Գիւղը
ձգտում է դէպի քաղաք։ Մարդիկ թողնում
են իրանց սլարտպմոնքը և քաղաքներ տե-
ղափոխում։ Երկրագործ հայի իդէալն է վա-
ճառական գառնալ և հէնց որ նա վող է
ձեռք գցում, աշխատում է խանութ բաց
անել։

Ամեն տնտեսական երեսյթ իր խոր պատ-
ճառներն ունի երկրագործութիւնը մեղա-
նում չէ զարգանում, որովհետեւ մեր երկրում

միջոցներ, գումարներ չեն գործադրվում նը-
րան բարւոքելու համար։ Արձրունին վերա-
ցնում է եւրօպական երկու երկիրներ—Ան-
գլիան և Շվեյցարիան, որոնք երկու հակա-
ռակ ըեեւններ են կազմում երկրագործու-
թեան մէջ։ Երկու երկիրներում էլ հողագործու-
թիւնը շատ ծաղկած գրութեան մէջ է։ բայց
ինչ ճանապարհներով են նրանք հասնում այդ
գրութեան։ Անգլիայում հողը պատկանում է
խոշոր կալուածատէրերին, որոնք մեծ դրա-
մագլուխներ են ծախսում երկրագործու-
թիւնը բարւոքելու, կատարելագործելու հա-
մար։ Շվեյցարիայում, ընդհակառակն, հողը
մեծ մասամբ բաժանված է մանր կտորների,
որոնց տէրերը իրանք գիւղացիներն են։ Սա-
կայն այստեղ էլ գործում է զրամագլուխը,
որի միջոցով հողագործութիւնը անդադար
առաջադիմում է։ Բայց որտեղից է այդ դրա-
մագլուխը։ Գիւղացիները, առանձին-առան-
ձին վերցրած, շատ հարուստ չեն։ ուստի
նրանք միանում են, ընկերակցութիւններ են
կազմում, և ահա հաւաքական գործակցու-
թիւնը պատրաստում է նոյն անհրաժեշտ
ոյժը հողագործութիւն զարդացնելու համար
—դրամագլուխը։

Մեր երկրում չը կան ոչ Անգլիայի հա-
րուստ կալուածատէրերը, որոնք մեծ գու-

մարներ ծախսէին, ոչ էլ Շվէյցարիայի գիւղական ընկերութիւնները: Եւ ահա մեզանում հողագործութիւնը մի պարապմունք է, որ ապրուստի շատ նուազ միջոցներ է տալիս ազգաբնակութեան: Երբ տարվայ բերքը աջող է, մեր գիւղացին դեռ կարող է ապրել առանց գծուարութիւնների: Բայց լինում են բնական զանազան պատահարներ, վերջապէս ինքը, գիւղացին զանազան պատճառներով չէ կարողանում հերկել իր գետինը: Այս անտեսական ձախորդութեան մէջ նա այլևս չէ կարող ինքնազլուկո ասլրել. դիմում է վաշխառուին, մեծ տոկոսների տակ է ընկնում: Երկրագործական գործիքները նահապետական գրութեան մէջ են, փող չը կայ նորերը, կատարելագործվածները ձեռք բերելու համար, փող էլ լինի, հասկացողութիւն չը կայ, թէ նրբան օգտակար են դրանք:

Ի՞նչ անել: Լոկ բարոյական քարոզներով բան չի գառնայ. որքան ուղում էք, ասացէք թէ լաւ են կատարելազործված գործիքները, թէ պէտք է հող մշակել, բայց գիւղացին ընկճագած է նիւթական-տնտեսական հանգամանքների տակ: Չը կայ խոշոր հողատիրական կապիտալը, չը կայ ընկերակցական կօօպէրատիլ սկզբունքը, ժողովուրդը ինքնօգնութեան գաղափարը չունի, գիւղական էժան կրեդիտը

գոյութիւն չունի: Ահա ինչ գրութեան մէջ է գիւղացի ժողովուրդը:

Եւ նա անդադար եւ անդադար դաղթում է քաղաքները, թողնելով ապար դիւն երկրագործական պարապմունքը, հաշովելով մի անբնական հրէշաւոր զզացմունքի հետ, ընտանիքի եւ հայրենիքի յաւիտենական կորուստը:

Ճիշտ որ հրէշաւոր երեսյթ: Մամուլը, սակայն, չը պիտի բաւականանար երեսյթը արձանագրելով. նա պիտի ցոյց տար և այն գործնական միջոցները, որոնք կարող են օգնել ժողովրդին քարուքանդ, անհայրենիք լինելու դէմ: «Մշակը» կատարում է այդ պարտականութիւնը. նա ցոյց է տալիս թէ որն է փրկութիւնը Այդ փրկութիւնը Սրծրունին, իբրև հեռատես անտեսագէտ-հրապարակախօս, գտնում էր ընկերակցութիւնների, կօօպերատիլ կազմակերպութիւնների մէջ: Բացարելով («Ընկերակցութիւնների միավը», № 47) թէ ինչ է արդիւնաբերութիւնը և սպառումը, նա դալիս էր Շուլցէ-Փօն-Դէլիչի և Ֆերդինանդ Լասսալի առաջարկած միջոցներին Առաջինը մշակ, աշխատաւոր դասի ինքնօգնութիւնը հիմնում էր ընկերակցութիւնների վըրա, երկրորդը պահանջում էր որ պետու-

թիւնը փոխ տայ մշակներին հիմնական դրամագլուխ՝ մատչելի տոկոսներով:

Ո՞ր ձեն է լաւը.—Արծրունին թողնում է այս հարցը, նա միայն ասում է, որ առայժմ աւելի հարկաւոր են արդիւնաբերական կօսպերացիաները. առանց դրանց՝ սպասման ընկերակցութիւնները շատ չնշն օգուտ կը բերեն: Եւ նա խորհուրդ է տալիս զիւղերում փոխատու և խնայողական ընկերութիւններ հիմնել: Այս ընկերութիւնների օգուտը, նշանակութիւնը, կազմակերպութեան եղանակները «Մշակը» շատ անդամ է բացատրել իր զանազան յօդուածներում, իսկ 1873 թւականին իր մի քանի համարներում տպագրեց զիւղական խոփառութիւննայողական զանձարանների նօրմալ կանոնադրութիւնը: Ակիվրը, ոգին, հիմքը հասարակական ինքնօդնութիւնն է, Արծրունին շարունակ, անդադար այս վրեկարար դաշտավարն էր ժողովրդականացնում զանազան ձեերով, չէր բաւականանում մի անդամ, երկու անդամ կրկնելով: Այն ժամանակները, երբ նա սկսեց այդ կազմակերպութեան անհրաժեշտութիւնը քարոզել մեղանում, ընկերակցութիւնները եւրօպացում արդէն պարզ հանկացված, դործագրվող ոյժեր էին: Աշխատաւոր գասակարգը իր կեցութիւնը բարուու

քելու համար շարժումներ էր գործում, ձեւեր էր մշակում: Հարկ չը կայ ասելու որ այդ շարժումների նոյն իսկ ամենահետաւոր արձագանքները չէին հասնում մեր երկրին: Մենք գեռ քնած ու անշարժ, անհոդ էինք. բայց ժամանակը մեր առջի էլ պիտի զնէր նոյն անհրաժեշտութիւնը: Արծրունին զգում էր այդ: Կարիք չը կար որ նա հայ ընթերցողին մտցնէր Արևմտեան Եւրօպայի շարժումների մանրամասն նկարագրութիւնների մէջ, նա վերցնում էր աւելնակարենորը, ասենատարրականը: Ամեն բանի հիմքը ինքնօդքնութիւնն էր, արդիւնաբործողների և սպասողների համախմբումը փոխադարձ աջակցութեան սկզբունքով: Եւ նա այս կորիզը շատ էր աշխատում տնկել մեր հողի մէջ:

Բայց չենք կարող ասել թէ նրա քարուգութիւնները առանձին գործնական հետեւանքներ ունեցան: Հայերը միայն կարդում էին, միայն իմանում էին որ օգտակար հիմնարկութիւններ կան աշխարհիս վրա, իսկ իրագործել իրանց մէջ այդ հիմնարկութիւնները—այդ անհնարին եղաւ, այնքան մեծ էր մեր ասիական աւանդապահութիւնը: Ներկայումս ընկերակցութիւնների, կօօպերատիվ գործունէութեան անհրաժեշտութիւնը ահազին նուածումներ է արել մարդու տնտեսա-

կան կեանքի համարեա բոլոր բազմաթիւ, զանազան կերպարանքներ ունեցող ճիւղերում և հրաշքներ է գործում: Միայն մեզանում, հայերի մէջ, գեռ շարունակվում է հին առանձնասիրութիւնը, միակ ու անջատ գործելու դժբախտ յամառութիւնը: Սակայն ով է մեղաւորը: Մի անգամ էլ նայենք այն թւականին, երբ Արծրունին սկսեց բացատրել մեղ Ընկերակցութիւնների ահազին ոյժը, հասարակական նշանակութիւնը: Երեսուն տարի է անցել այն օրից, երեսուն տարի շարունակ կրկնվում էր այդ միազը, և սակայն նրա դործադրութիւնը այսօր էլ նոյնքան հեռու ու անհաւատալի է թւում, որքան երեսուն տարի առաջ...

Տնտեսական հարցերը ի միջի այլոց չեն քննվում, այլ այն խորին համոզմունքից առաջնորդված, որ դրանք մեղ համար կեանք և մահ են, լինել և չը լինել պիտի վճռեն: «Մեր թղթակիցներին» յօդուածի մէջ Արծրունին առաջարկում էր հում նիւթեր հաւաքել դիւղերի, քաղաքների տնտեսական հանգամանքների, տեղական պայմանների մասին: Նախ տպել այդ նիւթերը և ապա նրանց քննել, նրանցից եղակացութիւններ հանել, երեսոյթները պէտք է պարզաբանել, հիմնվելով ճիշտ փաստերի վրա, միանդամից

հաւատացած լինելով որ իւրաքանչիւր երեւոյթ իր պատճառներն ունի:

Եւ թղթակիցները, մի կողմ դնելով հանդէսների ուռուցիկ նկարագրութիւնները, ազգասիրական զեղումները, տալիս էին փաստեր, ուղարկում էին նիւթեր: Դրանց միջնցոցով Արծրունին շատ երեսոյթներ բացատրում էր տնտեսական պատճառներով: Այսպէս է, օրինակ, «Հայերի շատ չը բազմանալու պատճառները» յօդուածը (№ 50): Այդ երեսոյթը տնտեսական պատճառ ունի: Եւ Արծրունին առաջին անգամ մեղանում բացատրում էր թէ ինչ անմիջական կապ կայ ժողովրդի աճեցման և տնտեսական պայմանների մէջ: Այդ հանդամանքը շատ լաւ յայտնի է ամեն մէկին, ուստի մենք երկար կանդ չենք առնի նրա վրա: Առանձին-առանձին քննելով հայ աղջը կազմող դասակարգերը, Արծրունին նրա տնտեսական պայմանների մէջ էր զբանում այն հարցի լուծումը թէ ինչու հայերը շատ չեն բազմանում: Գիւղացին մշտական առատութիւն չէ տեսնում, շարունակ գաղթում է քաղաքները: Առետրականը երկար ժամանակ չէ կարողանում ամուսնանալ, որովհետեւ գեռ պիտի փող աշխատէ: Նա թափառական կեանք ունի: Արհեստաւորը աղքատ է, կատարելագործված գործիքներ չու-

նի, լուսաւորված անունով դասի մէջ թէ երխտասարդը և թէ օրիորդը չեն կարողանում իրանց անձնական ոյժերի գործազրութիւն դանիլ, աղաս պրօֆէսիաները մեզանում գեռ այնքան չեն դարպացած, որ ապահովեն կեանքու: Բայց աւելի հետաքրքրական է այն դասողութիւնը, որ անումէ Արծրունին հարուստ դասակարգի մասին:

Մեզանում հարուստ դասակարգը աւելորդ է համարում իր որդիներին անկախութիւն տալ: Սոերիկայում հարուստ հայրը, հէնց որ որդին վերջացնում է ուսումը, տաշմու է նրան իր կարողաթեան մի մասը և որդին սովորում է անկախ ապրել, գործել իր համար: Իսկ մեզանում հարուստ դասակարգի որդին պիտի սպասէ իր հօր մահվան այնուհետեւ պարզ է, որ հարուստ հօր մեռնելուն պէս, որդին գառնում է իր հօրից ժառանգած հարստութեան ամենամեծ թըշնամին ու շատ ժամանակ չէ անց կենում մինչև բոլոր հարստութիւնը վասնած է»:

Սյսպէս ահա, մեզանում էլ հասարակական երեսյթները ուսումնաւորվում և պատճառարանգում էին այնպէս, ինչպէս պահանջում են ճիշտ, դրական զիտութիւնները: Բարոյախօսական քարոզների դարը անցնում էր: «Յանցաւորներ և հասարակութիւն» տ-

աաջնորդողի մէջ (№ 17) Արծրունին ասում էր թէ յանցանքների գէմ կուելու համար բաւական չեն ոչ բարոյական քարոզները, ոչ պատիճները, ոչ զպրոցները: Յանցագործութիւնները են և բաղմաթիւ պատճառներից են առաջանում, որոնց մէջ զիսաւոր տեղը բռնում են անտեսական պատճառները: Ընկերակցութիւնները շատ գէպքերում կառնէին յանցանքների առաջը: Դրա հետ պէտք է փոփոխել սօցիալական պարմանները, լաւ օրէնսդրութիւն տալ և այլն...

Քանի որ խօսքը տնտեսական հարցերի մասին է, մենք պիտի դուքս գանք «Մշակի» առաջնորդողների բաժնից և մի համառօտ ակնարկ գցենք նրա «Ներքին Տեսութիւն» բաժնի վրա: Այդտեղ էլ արծարծվում էին շատ կարևոր տնտեսական և արդիւնաբերական հարցեր: Ինչպէս զիտենք ներքին տեսութեան բաժնում աշխատում էր Վասիլ Շահմիրզեանը: ինքնուրոյն յօդուածներից մի քանիսը կրում են նրա ստորագրութիւնը, բայց աւելի շատ են այնպիսի յօդուածներ, որոնք տպվում էին ինչպէս առաջնորդողները, առանց ստորագրութեան: Ու՞մ են պատկանում ներքին տեսութեան անսարագիր յօդուածները, — չը զիտենք: Բայց որ Գրիգոր

Արծրունին այդտեղ էլ ունէր իր բաժինը,—
դա մանկասկած է. շատ յօդուածների մէջ
մնաք գտնում ենք Արծրունու ոճը, համար-
ձակութիւնը, գեղեցիկ պատճառարանութիւ-
նը, քննական մնեց ոյժը: Շատ յօդուածներ
մի-մի առաջնորդողներ են, տաված
քին տեսութեան բաժնում: Մենք դիմա-
ւորապէս այդ յօդուածները կունենանք ի
նկատի, համոզուած լինելով որ միայն Արծ-
րունին կարող էր նրանց գրողը լինել:

«Մշակի» երկրորդ և երրորդ համարում
տաված է մի ընդարձակ յօդուած՝ «Առեարա-
կան ինդիր Թիֆլիսում» վերնագրով: Այդ-
տեղ խիստ քննութեան են ևնթարէված
հայ վաճառականական հին իմաստութիւն-
ները, որոնք այժմ ոչ միայն որ և է օգուտ
բերել չեն կարող, այլ և քայլքայում են վա-
ճառականութիւնը: Ո՞րն է ամենազլիսաւոր
թշնամին, որ քանդում է հայ վաճառական-
ներին:—Տգիտութիւնը, որ աւելի վեասակար
է, երբ ինքնահաւանութեան հետ է միանում: Այդ
տգէտ ինքնահաւանութիւնը չէ թոյլ տա-
լիս անտեսական երեսյթների խակական պատ-
ճառներն իմանալ: Դրա փոխարէն վաճառա-
կանը գիտէ գանգատվելը: Առևտուր չը կայ,
գործերը վատ են գնում,—և հայ վաճա-
ռականը գիտէ այն միայն, որ այդ ճգնաժա-

մը կանցնէ ինքն ըստ ինքեան, մի բարեյա-
ջող հանգամանքի ազգեցութեամբ, ահա
կանցնէ զօրքը, կը գայ մի բարձրաստիճան
անձաւորութիւն, և առևտուրը կը կինդա-
նանայ: Ուրիշ պատճառների մասին նա մտա-
ծել անդամ չէ կարող: Մինչդեռ երեսյթը
պէտք է հասկանալ անտեսական դիմութեան
սահմանած օրէնքների տեսակէտից:

Ամեն հասարակութիւն, ամեն հասարակական յարա-
բերութիւն, ամեն հասարակական-տնտեսական երե-
ւոյթ եթէ մի կողմից հիմնված է մրցութեան
վերա միւս կողմից անպատճառ հիմնվում է եւ
փոխարէ պատասխանական վերաբերութեան
վրա:

Ինչպէս հայը, իր բոլոր հասարակական յարա-
բերութիւններում հայրենակիցների հետ, փոխա-
րէ պատասխանական առաջնորդ է, —այնպէս եւ վաճառականութեան մէջ նա ըմբռնել
է միայն մրցութեան օգուտը, այն զօրութեան
օգուտը, որը հաւասարակշռած չը լինելով ընկերութեան
ական ու թեան ոգով, կամ փոխադարձ պատաս-
խանաւութեան պարտաւորութեամբ, —զանում է
Վայրենի, անհասարակական, աւերեցուցիչ զօրութիւն:

Այդ աւերող զօրութեան, այդ վայրենի
մըցութեան դէմ վաճառականական դասա-
կարգը պիտի գուրս բերէ փոխադարձ աջակ-
ցութեան դադարիարը, հիմնելով բանկեր, փո-

Խաղարձ վարկի ընկերութիւններ, որոնք միջոց կը տան վաճառականին յարմար և ձեռնուու պայմաններով կրեդիտ ձեռք բերել, այսինքն միմևանց օդնել, պահպանել, կարողութիւն տալով ամեն մէկին գիմագրել աննպաստ պայմաններին։ Առհասարակ վաճառականների համար պահանջվում էր զարգացողութիւն, գիտութիւն։ «Մշակր» առաջարկում էր հիմնել թիվյիսում կուրսեր, ուր վաճառականները կարող լինէին օտար լեզուներ սովորել։

Աւելի մեծ էր «Մշակր» հոգացողութիւնը բուն ժողովրդի, այսինքն երկրագործ, արհեստաւոր, բանուոր գասակարգերի մասին։ Առաջին անդամն էր, որ դիւզը երեան էր դալիս մեր մամուլի մէջ իր ցաւերով, իր անօգնական գրութեամբ։ Դա այն աշխարհն է, որ շարունակ հարստահարվում է, կողոպատվում է, բայց որի համար ոչենչ չեն ուզում անել։ Գիւղական և առհասարակ ստորին ժողովրդական խաւերի մէջ տարածված են զանազան փիղիկական և բարոյական արտաներ։ Կարծում են թէ դրանց դէմ կուելու համար բաւական է բարոյախօսութիւնը, բայց չեն իմանում որ բարոյական քարոզներով չի վերացին գժբախտութեան ամենապլատոր պատճառը, որ աղքատութիւնն է։ Ասում են

թէ ժողովուրդը կորստից ազատելու միակ միջոցը կրթութիւնն է և կանչում են շարունակ՝ ուսումնարաններ, ուսումնարաններ և միշտ ուսումնարաններ։ Բայց դրանք օդային բառեր են և կը լսէ ժողովուրդն այդ խօսքերին։ Ահա նա ունի առած։ «Սոված փորփս ուսումն էր պակաս»։ Սա անտեսական մի մեծ ճշմարտութիւն է։ Այնտեղ, ուր չը կայ տընտեսական ապահովութիւն, ուր մարդը կատարելապէս կուշտ չէ, չէ կարող դպրոց և ուսում զարգանալ։ Հոչակաւոր Բօկլը ասում է։ «Առանց հարստութեան չը կան ազատ ժամներ, առանց ազատ ժամների չը կայ գիտութիւն»։ Ժողովուրդը քաղցած է, —կարմղ է նա կրթութեան մասին մտածել։ Նա քըրափնք է թափում և ազքատանում է։ Քըրափնք թափելը ազքատութիւն, քաղցածութիւն է նշանակում մեզ մօա. իսկ ինչ այսք է անել հարստանալու համար։ Պէտք է ծծել, ինչպէս ծծում են վաճառականները, պէտք է հարստահարել, ինչպէս հարստահարում են նրանք։

Ոչ, կամեննում էք ուսումը անհրաժեշտութիւն դարձնել գիւղացու համար, —բարոյագիւղէք նրա անտեսական գրութիւնը, հարըստացրէք նրան։ Հարստացնել կարելի է, միջոց տալով երկրագործ ժողովրդին զար-

գացնելու իր պարապմունքները, աւելի արդիւնաւոր դարձնելու նրա աշխատութիւնը։ Վստահ եղէք, որ երբ զիւղացին կունենայ իր հացը, երբ նրան անողորմ կերպով չի տանջի ասղելու հարցը, այն ժամանակ նա կը սկսէ և մտաւոր գործի մասին մտածել։ Եւ զիւղացուն այդ դրութեան հասցնողը պիտի լինին փոխատու ընկերութիւնները, իբրև զիւղատնտեսութիւնը զարդացնելու ամենալաւ, փորձված միջոց։

Մեր անտեսական կեանքը դեռ նահապետական է, գեռ սուր արտայայտութիւններ չեն ստացել, ուստի պէտք է հէնց այժմից պատրաստվել, հէնց այժմից խելացի կերպով լուծել այն հարցերը, որոնք այսօր սաղմնային դրութեան մէջ են, բայց վաղը պիտի դառնան միւմի ահաւոր երեոյի։ Ահա այժմից խեկ երեսում են «առաջն ծաղիկները», Մեր երկրում էլ սկալում են գործարաններ բացվել, որոնք կառաջացնեն բանուոր դասակարգ, պրօլէտարիատ։ —Դեռ չը կայ մերգանում գործարանական մշակների դասակարգը, սա նշանակում է որ Եւրօպայի հետ համեմատելով, մեր հասարական կեանքի մէջ մի վատ կողմը պակաս է։ Բայց ինչ որ չը կայ, կարող է լինել։ Բադւում սկսել են գործարաններ հիմնել, թիֆլոսում դոյու-

թիւն ունեն կտաւի գործարան, ուր արդէն մի քանի հարիւր մարդ են աշխատում, և մոմի գործարան, որ առաջինից աւելի փոքր է։

Նկարագրված է մոմի գործարանը։ Ուշադրութիւն է դարձրած, որ մշակները հակառառղջական պայմանների մէջ են աշխատում։ Նրանց սենեակներում չը կայ բաւականաչափ լոյս, օդափոխութիւնն չէ կատարվում։ Եւ այդ նկարագրութիւնը «Մշակը» վերջացնում է այսպէս։

Մենք ոչինչ չէինք ասելու մեր գործարանների արդիւնաբերութեան դէմ, թէ նորա մտցնելը երկրի մէջ պիտի բարտքէր աշխատողների դրութիւնը, բայց ոչ թէ լցնէր դրամատէրերի այնպէս էլ (ուրիշի աշխատանբով) լի գրպանները։ ...Մենք հիմնում ենք ֆաբրիկանները, զործարանները, բազմացնում ենք մշակների թիւը, չը հոգալով նոցա նիւթական ապահովութեան վերա եւ մոռանում ենք կամ չենք իմանում, որ սորանով պատրաստում ենք մեզ ապագայի համար այնպիսի անյաղթելի արգելքները, որոնք Եւրօպայի գումար առ առ տէ թէ բարակ կուլթ եւ անհամար պատճառ են դառել անլուծելի եւ արիւնանեղ խնդիրների։

Եւ ազտավել այդ խնդիրներից չէ կարելի, ասելով թէ մեր երկրում գործարանական կեանք չի սկսվի։ Ո՞չ, այդ կեանքը պէտք է

սկսվի, նրան անպատճառ հարկաւոր է սկսել.
ուրիշ կերպով մենք անտեսական առաջադիր-
մութիւն չենք ունենայ, մենք միայն օտար-
ների հարկատուն կը մնանք: Նայեցէք Կով-
կասին, տեսէք որքան հարստութիւններ ու-
նի նա: Զը շահագործել այդ հարստութիւն-
ները, կը նշանակէք մեռելութեան դատա-
պարտել իրան:

Արդեօք հարկաւոր է խօսել նորա վիրա, որ գոր-
ծարանները մեղ օգուտ են: Անա ինչ է ասում ինձ
մի վանական: «Տես էս սուփրէն. սորա մէջ կայ
մի զրվանքայ բուրդ, որ արժէ մէկ արասի. բայց
ինչ էք կարծում, ինչ եմ տուել սորան... վեց մա-
նէթ»: Այս խօսքերը պարզ ցոյց են տալիս մեղ, թէ
ինչ կը նշանակէ: Երկրիս համար իր սեպական գոր-
ծարաններ ջունինալը: Մէկ արասու եւ վեց մանէթի
մէջ զանագանութիւնը, —այդ մի սարսափելի հարկ
է, որ մեր երկիրը վճարում է օտար ազգերի ար-
վեստագործութեանը:

Գործարաններ հիմնելու մի յարմարու-
թիւնն էլ այն է, որ մեզանում գործող ձեռ-
քերը էժան են: Բայց թնդ ընթերցողը չը
կարծէ թէ պէտք է, ուրեմն, որ զրամատէ-
րերը որքան կամնում են օգուտ քաղեն այդ
էժանութիւնից, հարստահարեն մշակ դասա-
կարգը: Ո՞չ, եթէ հարկաւոր է գործարանա-
կան կեանքի դարպացումը մեզանում, զրա-

դլխաւոր նպատակներից մէկն էլ այն պիտի
լինի, որ գործաւոր դասակարգը միջոց ու-
նենայ աւելի լաւ վարձատրութիւն ստանա-
լու, իր թշուառ գրամիւնից ազատվելու:

«Կարող է ուշ չը լինել» յօդուածում ար-
ծարծվում է պրօլէտարիատի հարցը: Սեփա-
կանութիւն չունեցող այդ դասակարգը գեռ
բազմաթիւ չէ մեզանում: բայց նա կը
ստուարանայ, երբ մեր երկրում էլ կը
զարգանայ խոչսր արդիւնաբերութիւնը, որ
գործից կը զրկէ, կը սարկացնէ մանր ար-
դիւնաբերողներին և այսպիսով պրօլէտարիա-
տի բանակը կը մեծացնէ: Քանի որ խոչսր
արդիւնաբերութիւնը գեռ իր սկզբնական
քայլերն է անում մեղ մօտ, ժամանակ է ձեռք
առնել այնպիսի միջոցներ, որնք կազատեն
մեղ պրօլէտարիատի սպառնացող շարժումից:
Դրա համար հարկաւոր է պահպանել մանր
արդիւնագործութիւնը: Ոյժ տալով խոչսր
արդիւնագործութեան, մենք օդնած կը լի-
նենք զրամատէրերին, որ նրանք իրանց ձեռ-
քի մէջ կենարօնացնեն երկրի ամեն տեսակ
արդիւնաբերութիւնը: Եւ այն ժամանակ մը-
շակները կը դառնան կենդանի մեղենաներ,
որոնց հարկաւոր է այնքան սպառնանել և
խնայել, որ նրանք չը փչանան, իսկ նրանց
մարդկային յատկութիւնների վրա ոչինչ ու-

շադրութիւն ոչ ոք չի դարձնի: Բայց չը մոռանանք, որ այսպէս գնալով, մենք կը հասնենք այն տեղին, որ ապագայում անհաշտ թշնամի կը պատրաստենք մեզ համար—աշխատողների պրօլէտարիատը:

Փրկութիւնը նրա մէջ է, որ նպաստենք մանր արդիւնաբերութեան՝ ընդարձակելով նրա շրջանը և մանր արդիւնաբերողների թիւը: Դրա համար էլ պէտք է գոյութիւն ունենայ նոյն հիմնաբերութիւնը, որ այնքան մեծ դեր կարող է կատարել դիւզատնտեսութեան մէջ, այն է էժան, մատչելի կրեդիտը: Աշխատողները, արհեստաւորները ուրիշի համար են գործում: Նրանք ստանում են վարձ, որ հարկաւոր է նրանց ապրուստի համար, իսկ նըրանց աշխատանքը ուրիշին, այսինքն վարձ տուողին, չահ է բերում: Այդ շահին կարող էին մասնակից լինել իրանք, աշխատողները, արհեստաւորները, եթէ փոխատու դանձարանը օգնէր, որ նրանք իրանց համար կատարէին այն գործը, որ ուրիշների համար են կատարում: Աւսպիտով կը պահպանվէր մանր արդիւնագործութիւնը և աշխատաւոր մարդիկ գործատէրերի ստրուկը չէին գառնայ:

Տեղային տնտեսական կեանքի մէջ առաջ էր գալիս և մի հերթական հարց.—օտար դրամագլուխների հարցը: Փօթի-թիֆլիսեան

երկաթուղին գեռ պլատրաստ չէր, երբ յայտնի դարձաւ որ նա մեր երկիրը կը թափէ արտասահմանեան դրամագլուխներ՝ ընութեան հարստութիւնները շահագործելու համար: Արդէն Թիֆլիսում մի ֆրանսիացի բաց էր արել դրամենեակ, որ պիտի միջնորդ հանդիսանար օտար դրամատէրերի և մեր երկրի մէջ: Շահագործութեան առարկան առաջ ու առաջ հանքերը պիտի լինէին: «Մշակը» ընական էր համարում օտար կապիտալների արշաւանքը գէպի մեզ, բնական և օդաւաէտ: Երբ մենք ինքններս չենք կարող ընկերական սկզբունքով մեր երկրի արդիւնաբերութիւնը զարգացնել, բնականաբար պիտի ենթարկվենք այն օրէնքին, որ աւելի լաւ պատրաստված օտարը գայ և մեր հողերի վրա գործ սկսէ: Բայց ինչ պէտք է անենք մենք, ինքններս, երբ օտարները երեան կը գան մեր մէջ իրեւ արդիւնագործներ: Մենք ոչ թէ պիտի բաւականանք մեր հանքերը օտարներին ծախսելով կամ կապալով տալով, այլ պիտի աշխատենք ընկերանալ նրանց հետ, բաժին ունենալ արդիւնագործութեան մէջ: Անդործ նստել ու սպասել հարկաւոր չէ:

Մենք ուշացանք, մենք տգէտ ենք,—այդ ճշշմարիտ է, բայց այդ չէ նշանակում, որ մենք յու-

սահատված պիտի դիմենք կատարեալ անզործութեանը; Մինչեւ մտաւոր զարգացման մի յայտնի աստիճան, մինչեւ մի յայտնի հասակ, մարդս կարող է ուրիշի խնամակ ալութեան տակ զբոնվել. բայց ինչ կասէինք, եթէ աշակերտը վարժապետի խնամակալութեան տակ մտնելոց յետոյ էլ չը ուկենայ դուրս դալ այն խնամակալութեան տակից:

Այսքանը բաւական համարենք իրեւ «Մշակի» անտեսական բաժնի պատկերացում: Աւելացնենք այն, որ լրագիրը խօսել է և քաղաքային տնաեսութեան մասին, հողը պարարտացնելու միջոցներն է ցոյց տուել, առաջին անդամը մեղանում մասնացոյց է արել թէ տնաեսական ինչ սոսկալի ցաւ է մեր գիւղերում այնքան աարածված վաշխառութիւնը և այլն... Ո՞րտեղից յանկարծ դուրս եկան այսքան կենսական, կարևոր հարցերը և ուր էին նրանք մինչեւ «Մշակի» հրատարակելը: Նրանք, ի հարկէ, գոյութիւն ունէին մեր կեանքի մէջ, մի-մի խոշոր երեւոյթ էին. «Մշակի» անմիջական, մեծ գործը այն էր, որ նկատեց նրանց, առաջ քաշեց, ցոյց տուեց նրանց ահազին կարերութիւնը սեր կեանքի մէջ: Իր քաղաքատեսական դաւանանքները նա ամփոփում էր «Աշխատանքը և Աղքատութիւն» գեղեցիկ յօդուածի

մէջ (№ 38), որի համառօտ բովանդակութիւնը հետեւեալն է:

Մարդու ամենագլխաւոր հարկաւորութիւններից մէկը այն է, որ հարկադրում է նրան մնուցանել իր անձը: Այդ կողմից մարդը նման է անասուններին, որոնց նման ուտելու, սպասելու հարկաւորութիւն ունի: Նմանութիւնը չատ ակներեն է. երբ մենք կուշտ ենք, առաստելեան մէջ ենք ապրում, մենք բարոյական ենք դառնում, բայց երբ գալիս է սովը, մենք մոռանում ենք ամեն ինչ և պատրաստ ենք ամեն աեսակ ատոր ուխարեւայ միջոցներից օգուտ քաղել՝ մեր մարմինը պահպանելու համար: Կերակրվելու անհրաժեշտութիւնից գուրս է գալիս անբարյականութիւն, յանցանք: Բայց կայ մի բան, որ թոյլ չէ տալիս մեզ միշտ այդ միջոցով վճռել մեր կեանքի պահպանութեան հարցը: Դա այն է, որ մենք զիսենք օգնութիւն խնդրել մեր մարմնի և մաքի գործածումից—աշխատանքից և հնարա ագի առւթիւնից: Որքան կերակրվելու անհրաժեշտութիւնը մեղ նմանեցնում է անասուններին,—այնքան աշխատանքի օրէնքը աղնւացնում, բարձրացնում է մեղ:

Ամեն ինչ, որ ձեռք ենք բերել մենք, աշխատանքի պատուղն է: Առանց աշխատանքի

ոչ դիտութիւն կայ, ոչ արհեստ, ոչ հարստութիւն: Բայց աշխատանքն էլ ունի իր չափն ու սահմանը: Զէ կարելի աշխատել անդադար, առանց հանգստանալու: Աշխատանքը ծնվում է ապրելու պահանջից. և աշխատանքի հետևանքը մի բանի, մի մթերքի արդիւնաբերութիւնն է: Այդ արդիւնքով նա բաւարարութիւն է տալիս իր պահանջներին. իսկ ինչ աւելանում է, նա մթերում է այդ աւելորդը ապագայի համար և դա կոչվում է հարստութիւն հաւաքել: Հարստութիւնը պայմանական հասկացողութիւն է: Մի միլիօն փողը հարստութիւն է, բայց մի սայլ փայտն էլ նոյնպէս հարստութիւն է: Երբ մարդը մենակ է օգուտ քաղում ընութեան բերքերից, երբ նա մենակ է սպառում իր արդիւնաբերածը և չունի իր շուրջը արդիւնաբերող, մթերք հաւաքող մարդիկ, նա հարուստ է: Երբ շատանում են մարդիկ, երբ սաստկանում է մրցութիւնը, այն ժամանակ ընակիների մի մասը ստիպված է լինում օրվայ ապրուստ հայթայթող աշխատանքով բաւականանալ, չը մտածելով մթերքի պաշար կաղմելու, այսինքն հարստութիւն ժողովելու մասին:

Սնմիթար է աղքատութեան վիճակը: Բայց նա բարոյական և տնտեսական մեծ

հետեանքներ է առաջացնում: Մի կողմից նա աշխատանքի անհրաժեշտութիւնն է վառ պահում, իսկ դա մի խթան է բարոյական ոյժը անդադար արթուն պահելու համար: Միւս կողմից, աղքատ, մշակ դասակարգին արգելված չէ ձգտել դրամազլուխ կազմելու և իրան աղահովելու. այստեղից ծնվում է տընտեսական այն գաղափարը, որ հնար է տալիս աղքատ դասակարգին իր այդ ձգտումը իրագործելու: Եւ այդ տնտեսական գաղափարը արդիւնաբերական, սպառման, խնայողական ընկերակցութիւններն են...

Մենք այստեղ չենք ուղում քննել, թէ որքան գործնական էին «Մշակի» այս դատուղութիւններն ու ծրագիրը: Ուշադրութիւննենք գարձնում միայն մի հանդամանքի վրա: Բանուրական հարցը, պրօլէտարիատը մեր երկրում գետ ապագայի գործեր էին, գեռ չեին հասունացել մեղանում: «Մշակը» առաջարկում էր օգուտ քաղել հէնց այդ հանդամանքից և այժմից իսկ կարդարել այդ հարցերը այնպէս, որ ապագայում ցնցումների և բարգութիւնների տեղ չը մնար: Նա, ուրեմն, ուղում էր որ մեր հասարակութիւնը մի սքանչելի կանխատեսութիւն ունենայ, առաջուց պատրաստէ այն հունը, որով պիտի անցնէր ապագայ գետը: Բայց հնարաւոր էր

դա: Կարելի՞ է այդքան մեծ իմաստութիւն սպասել մեր իրականութիւնից, երբ եւբօսպական ազգերն էլ չեն ունեցել այդ կանխատեսութիւնը: Մեծ հարցերը այդպէս չեն վրճովում. նրանք գեռ ծնվում են, աճում, իրականութիւն են դառնում, ահաւոր պահանջներ են ներկայացնում և այդպէս հարկադրում են լուծում տալ իրանց: Առանց կռւի, առանց մրցութեան աջողութիւն ձեռք չերփում: Այսպէս է օրէնքը:

Բայց այդ օրէնքը, ի հարկէ, չէր արգելում որ «Մշակը» քննէ նոր երեան եկող, ապագայի պատկերը ներկայացնող երեսյթները: Մեզանում տնտեսական նոր կեանքի պահանջներ էին. իսկական, զգայուն հրապարակախօսութիւնը պարտաւոր էր արձագանք տալ նրանց, լուսաբանել, ճանապարհներ, ուղղութիւններ ցոյց տալ, ապագան գուշակել: Եւ այս պարտականութիւնը «Մշակը» կատարում էր մի լրջութեամբ, որի նմանը գեռ չէր եղել մեր մամուլի էջերում...

V

Հայերը եւ Արանց հաւեւան ազգերը:—Հայ-վրացական յարակեռուրիւններ:—Դիօրգի Ներերկելիի ճառը:—ԱՄՀ-շակը եւ «Գրուրա»:—Արտամին Տեսուրիւն:—Թիւրբահայեր. զաւառը եւ Կ. Պողիսը. կրտական պակասուրիւն:—Պարսկաստան. Բաֆթիի ճամակները:—Թղրակցուրիւններ Գերմանիայից. Անդրեաս Արծրունի:—Դշրական բաժին:—Մեր վկայիկներն ու պատմուածիները:—Մելիշզադիկի առաջին փորձերը:—Եղրակացուրիւններ «Մշակի» առաջին տարվայ մասին:—Հրաշի եւ աշխատանի:

—○—

Դիմելով այժմ հասարակական այն երեւոյթներին, որոնք արձագանք գտան «Մշակի» առաջին տարվայ ընթացքում՝ նրա ուրիշ բաժինների մէջ, մենք ամենից առաջ կանգ ենք առնում Գրիգոր Արծրունու մի ուրիշ մեծ գաղափարի առաջ. —դա նրա վերաբերմունքն է դէպի կովկասեան այլացեղ և այլակրօն աղգութիւնները:

Շատ կարևոր էր այդ հարցը: Հայերը ապ-

բում էին խառն ուրիշ աղգութիւնների հետ։
Հարկանութիւնը շատ էր մօտիկ, առօրեայ
շփումները տնտեսական և մտաւոր հողի վրա
այնքան խոշոր երեսյթներ էին առաջացնում,
որ անտես անել պատմական այդ իրողու-
թիւնը, կը նշանակէր արհամարհել երկրի ա-
ռաջադիմութեան ամենամեծ գործօններից մէ-
կը։ Արձրունին խաղաղ կուլտուրական գար-
գացման քարոզիչ էր. նա պահանջում էր ա-
ռաջադիմութիւն, պահանջում էր առաջադի-
մութեան համար ոչ միայն շատ բան սովո-
րել, այլ և շատ բան մոռանալ։ Մոռանալ
պէտք էր մանաւանդ այն նախապաշարմունք-
ները, որոնք խոչընդուռ են հանդիսանում մեր
առջե, վերանորոգութեան, կատարելագոր-
ծութեան ճանապարհին։ Զինվելով աղգային
սնապարծութեան, չօվինիզմի դէմ, պահան-
ջելով լուրջ, անդադար աշխատանք իրեն բա-
րորութեան հասնելու միակ միջոց, նա չէր
կարող չը զինվել այն վիխադարձ նախապա-
շարմունքների, ատելութեան դէմ, որ դոյու-
թիւն ունեն զանազան տարբեր աղգութիւն-
ների մէջ։ Եւ նա հէնց առաջին իսկ քայլե-
րից աղգերի եղբայրակցութեան ջերմ պաշտ-
պան հանդիսացաւ։

Կովկասը նրա առջե ներկայացնում էր մի
այսպիսի երեսյթ։ Ռուսաց տիրապետութիւ-

նը հաստատել է քաղաքական խաղաղութիւն։
Երկիրը այլևս պատերազմի դաշտ չէ և նրա
մէջ ապրող աղգերը միայն մի նպատակ, մի
ձգտում պիտի ունենան—զնալ առաջադիմող
մարդկութեան ետեից, իւրացնել եւրօպական
լուսաւորութիւնը, ապրել քաղաքակիրթ աղ-
գերի կեանքով։ Մենք տեսանք թէ ինչպէս
էր Արձրունին հասկանում աղգերի առա-
ջադիմութեան խորհուրդը, աղգերը անհատ-
ներ են և նրանցից իւրաքանչիւրը, պահելով
իր ինքնուրոյնութիւնը, իր յատուկ կերպա-
րանքն ու ընաւորութիւնը, պիտի զարգանայ
անդադար։ Այստեղից առաջանում է կատա-
րեալ յարգանք դէպի օտար աղգերի ինքնու-
րոյն սեփականութիւնները, դէպի նրանց լե-
զուն, պատմութիւնը, կրօնը։ Ահա այդ փո-
խաղարձ յարդանքի վրա էլ պիտի հիմնի
տարբեր աղգութիւնների համերաշխութիւնը,
նպատակ ունենալով ընդհանուր հայրենիքի
առաջադիմութիւնը։ Կովկասը պէտք է գուրս
դայ իր նահապետական դրութիւնից, նա ա-
հագին ջանքեր պիտի անէ մի բարեկիրթ,
կուլտուրապէս զարգացած երկիր դառնալու-
համար։ Սա մի պարտաւորութիւն է, որ գը-
րել է տեղային աղգաբնակութեան վրա ուու-
սաց տիրապետութիւնը։ Եւ այս մեծ գործի
մէջ հարկաւոր է բոլոր աղգութիւնների միա-

բան, աղնիւ աշխատակցութիւնը: Խւրաքանչիւր աղդ պիտի մտցնէ իր բաժինը. ոչ մի աղդ, աշխատելով առանձին, անջատված, չէ կարող միայն իր սեփական միջոցներով գրւուխ բերել այն ահազին գործը, որ պիտի կատարէ ամբողջ երկիրը: Եւ առաջադիմութեան գործը մեղանում հաստատ ու տեղական չի լինի, մթէ մի աղդ առաջ դնայ, միւսը մնայ անշարժ, մէկը դէպի առաջ քաշէ սայլը, միւսը դէպի յետ: Հարկաւոր է միաբան, ընդհանուր գործակցութիւն:

Գրիգոր Արծրունին Թիֆլիսում մօտենում է վրացիներին և համերաշխութիւն է հաստատում երկու հարեան աղքերի երիտասարդութեան մէջ: Բարեբախտարար, մենք ունենք մի վրացու վկայութիւնը, որ պատմում է թէ ինչպէս հաստատվեցան եղբայրական յարաբերութիւնները հայ և վրացի երիտասարդութեան մէջ: Այդ վրացին այժմ հանգուցեալ Գիօրգի Ծերեթէլին է, մի աղնիւ, առաջադիմ և լուսամիտ գրական գործիչ: 1892 թւականի դեկտեմբերի 27-ին, երբ ահազին, չը տեսնաված բազմութիւնը Խօջիվանքի գերեզմանատանը հաւաքված էր Գրիգոր Արծրունուն թագելու համար, ճառախօսների տեղը բարձրացաւ Գիօրգի Ծերեթէլին և յուղված ձայնով, որ խոր տպաւորութիւն թողեց ամ-

բողջ բազմութեան վրա, արտասանեց հետեւեալ խօսքերը ^{*)}).

Ես եւ Արծրունին առաջին անգամ ծանօթացանք միմեանց հետ 1872 թւին, երբ նա սկսեց հրատարակել իր «Մշակ» լրագիրը եւ իր կենզանի մութերով ու նոր զծած ճանապարհով սթափեցրեց հայ հասարակութիւնը: Այդ ժամանակ մեր մէջ հաստատվեց մի բարեկամական կապ: Ես եւ իմ ընկերներս այն ժամանակ աշխատում էինք «Գրուբա», «Կրէբուլի» եւ «Սասօփիլո Գաղէթի» լրագիրներում: Գրիգոր Արծրունին իր կտրուկ մտածողութեամբ եւ եւրոպական վիտնականների մօտ ճոխացրած խելքով շատ շուտով մօտեցրեց իրան այն ժամանակվայ վրացի գրողների փոքրիկ շրջանը:

«Լրացի եղբայրներ, ասում էր Արծրունին, մեր եւ ձեր վիճակը՝ թէ ուրախութեան եւ թէ վշտի կողմից միշտ մէկ է եղել նոյն իսկ հին ժամանակներից: Մենք դրացի եւ ազգակից ժողովուրդներ ենք եղել, իսկ այսօր, մեր անխելքութեան պատմառով, մենք մոռացել ենք միմեանց եւ ոչ թէ միայն բարեկամ չենք, այլ եւ միմեանց թշնամի ենք դարձել: Շատ կան մեր եւ ձեր մէջ այն տեսակ մարդիկ, որ իրանց անձնական օգտի համար վիրաւորում են արդար մարդուն: Գրանց մէջ կան այնպիսի վրացիներ, որ նեղացնում են հայերին եւ այնպիսի հայեր, որ հարուածում են վրացիներին: Բայց ինչնու պէտք է մենք մի երկու երեք անխիղն մարդկանց պատճառով ատենք միմեանց: Ոչ, պէտք է մենք, որպէս մամուլի ներկայացուցիչներ, բարողներ ու զարթե-

^{*)} «Ճարագ» շաբաթաթերթ, 1892, № 50.

Ընենք վրացիների ու հայերի մէջ սէր եւ եղբայրութիւն, որովհետեւ մենք անկարող ենք առանց փոխադրծ բարեկամութեան հասնել մեր կատարելութեան։ Հօ դիտէք, եղբայրներ, որ միութիւնը ոյժ է, իսկ բաժանութիւնը—թուլութիւն։

Ահա այսպիսի բաց եւ անկեղծ խօսքերով գրի-գոր Արծրունին մօտեցրեց մեզ իրան։ Նա բացեց մեր առաջ իր խմբագրատան դռները եւ երեմն մենք էինք գնում նրա մօտ, երբեմն նա էր զալիս մեզ մօտ։ Այդ ժամանակներին այնպիսի մի հասարակօգուտ բան չէ պատահնել, որի մասին համերաշխութեամբ ու երկու հարեւան ազգերի համար հաւասարապէս օգտակատ կերպով զրած չը լինենք՝ մենք—մեր լրադիրներում ու ամսագրներում, իսկ նա—իր «Մշակում»։ Նա սովորեցնում էր մեզ Հայ-աստանի պատմութիւնը, իսկ մենք նրան—վրաց ժողովրդի պատմութիւնը։

Սա առաջին լուսաւորված հայն էր, որ քարոզում էր վրացիների եւ հայերի համերաշխութեամբ գործելու մասին։ Սա էր, որ առաջին անգամ քարոզեց մեզ եւ իր մահից յետոյ էլ կտակեց այն ոսկի տառերով դրոշմէլելու արժանի խօսքը թէ «միութիւնը ոյժ է, իսկ անմիաբանութիւնը—թուլութիւն է»։

Այդ եղբայրական համերաշխութեան արտայայտութիւնն էր, որ երբ հրատարակվեց «Մշակի» յայտարարութիւնը, «Դրօէբա» լրագիրը հետևեալ տողերը նույիրեց նրան։

Ողջունում ենք եւ երկար կեանք ենք ցանկանում համանման պարտաւորութիւն ունեցող մեր եղ-

բայրակցին։ Մրա հետ ցանկանանք, որ այս նոր հայերէն լրագիրը առաջվայ հրատակութիւններից առաւել համակրութիւն ցոյց տար ամեն բանի մէջ, որովհետեւ միասին ապրելով, մենք միեւնոյն թշշնամիններով եւ բարեկամներով ենք շրջապատված, վրացիներս եւ հայերը։

Գրիգոր Արծրունին «Մշակի» առաջին էսակ համարում այսպէս պատասխանեց այդ ողջոյնին։

Մենք մեզ պարտաւորութիւն ենք համարում պատասխանել վրաց «Դրօէբա» օրագրին, որ մեր կարծիքն էլ չի տարբերվում նորա յայտնած մտքից։ Կովկասը թէեւ զանազան ազգութիւններով է բնակեցրած, որոնք այլ եւ այլ, մէկ մէկից տարբեր դաւանութիւնների են պատկանում, բայց իր տեղագրական եւ աշխարհագրական զրութեան պատճառով դառնում է այդ բոլոր ազգերի համար ընդհանուր հայրենիք եւ միջոց է տալիս նոցա ծատելու ընդհանուր համանման օգուտներին։ «Մշակը», ողով հայ մնալով, միեւնոյն ժամանակ ուրախութեամբ մենում է համակրութեան ձեռքը դէպի վըրաց լրագիրը, անվախ խոստովանելով որ վրաց «Դրօէբայի» պէս յայտնած լուսաւորեալ մտքիը նա չի գտել արդեան ոչ մի հայկական պարբերական հրատարակութեան մէջ։

Այսպէս միմեանց ձեռք տալով, երկու լրագիրները համերաշխութեամբ առաջ են գնում։

միմեանց օգնելով, միմեանց ոյժ տալով հաւարակական հարցեր լուծելու մէջ։ «Մշակում» ապված անդրանիկի թատրօնական բէցէնդիան (№ 2) վրաց թատրօնին է վերաբերվում։ Երկու լրագիրները միմեանցից քաղուածքներ են անում և հայ-վրացական մըտաւոր և բարոյական շահերը պաշտպանում են ազնիւ զինակիցների եռանդով։ Ամեն տեղ, ուր խօսք էր լինում տեղական լեզուների, գրականութեան, թատրօնի մասին, Սրծրունու համար միայն հայ ազգը չը կար, այլ նրա հետ միասին և համահաւասար՝ վրաց ազգը։ Այդ գաղափարական զինակցութիւնը շարունակվեց մի քանի տարուց աւել և ներկայացնում էր ընդհանուր, միատեսակ կուլառուրական գաղափարներով տուգորված երկու տարրեր ազգերի երիտասարդութեան միաբանութիւնը։ Նայելով այդ երեսյթին, կարելի է հապրտութեամբ ասել որ քաղաքակրթութիւնը վերացնում է և ցեղական ու գաւանական նախապաշարմունքները։ Խմբելով ազգերը մի մեծ ընտանիքի մէջ, ուր փոխադարձ համակրանքներն ու յարդանքներն են աիրում գարաւոր ատելութեան, անմիաբանութեան տեղ։ Բայց, աւաղ, շատ երկարատե չէր «Մշակի» և «Դրօէքայի» եղբայրակցութիւնը, իր աեղում մենք կը տես-

նենք որ փոխվեց վրաց լրագրի խմբագրութիւնը և զրա հետ էլ փոխվեցին յարաբերութիւնները։ Սակայն Գրիգոր Սրծրունին մինչև իր կեանքի վերջը հաւատարիմ մնաց իր իդէալին և հաւասար յարդանքով էր վերաբերվում կովկասեան ազգերին։

«Մշակի» շատ կանօնաւոր, հարուսա և հետաքրքրական բաժինն էր և արտաքին տեսութիւնը, ուր աշխատում էր, ինչպէս գիտենք, Պօղոս Իզմայիլեանը։ Այդ բաժնում արտայայտվում էր արտասահմանեան կեանքը իր ամենախոշոր երեսյթներով, որքան այդ հնարաւոր էր մի շաբաթաթերթի մէջ։ Ամենապլիսաւորը այն էր, որ այդտեղ տպագրվում էին ինքնուրոյն, խմբագրական յօդուածներ, որոնց մէջ արտայայտվում էր լրագրի որոշ ուղղութիւնը։ այնպէս որ արտաքին տեսութիւնը լրացնում, ամբողջացնում էր այն ամենը, ինչ «Մշակը» տալիս էր առաջնորդողների և ներքին տեսութեան մէջ։ Արտասահմանեան կեանքի այնպիսի երեսյթները, ինչպէս են բանուորական շարժումները, կանանց գաղաքական իրաւունքներ տալու հարցը, կրթական սիստեմները, արձադանք են գանում «Մշակի» մէջ, լուսաբանվում են առաջադիմական տեսակէտից։ Քաղաքական աշխարհի ամենախոշոր իրու-

Դութիւնը ֆրանս-պրուսական պատերազմի բերած հետեւանքներն էին։ Պատերազմը վերացցել էր և երկու ախոյեանները, յաղթողը և յաղթվողը, սկսել էին մեծ եռանդով իրանց ներքին կեանքը կանօնաւորել։ Հերոսական ջանքեր էր գործ դնում մանաւանդ մրանսիան, պատերազմական ահուելի տուգանքը վճարել, երկիրը նորից զարգացման ճանապարհի վրա դնել, բուժել թշնամու ահեղ հարուածներից դոյացած վէրքերը, կուել հանրասկետական բէժիմի հակառակորդ տարբերի դէմ, — ահա նրքան գործ կար մրանսիայում։ Գերմանիան էլ դործում էր, նա քնած չէր իր վաստակած դափնիների վրա։ Այն գերմանասիրութիւնը, «ր Գրիգոր Արծունին ցոյց էր տուել գեռ «Հայկական Աշխարհում», շարունակվեց և «Մշակի» մէջ։ Արժանի մեծարանքները մատուցանելով ֆըրանսիայում կատարվող առաջադիմական ջանքերին, «Մշակը» միշտ առանձին ոյժով էր շնչում Գերմանիայի առաւելութիւնները։ Ոչինչ հիմք չունենալով համակրելու կղերական ուղղութեան, «Մշակը» մեծ հաճութեամբ արձանագրում էր այն կոիւը, որ Գերմանիայում սկսել էր Բիսմարկը կաթօլիկ եկեղեցականութեան դէմ (կուլտուրկամի)։ Մենք արդէն տեսանք, որ պատականութիւնը և Մը-

շակի» համար խիստ անհամակրելի մի սկզբանք էր։ իբրև անհատական զարգացման թշնամի մի հիմնարկութիւն։ Գերմանիան իր պատերազմով պատականութեան մահացու հարուածներ տուեց, նա ոչնչացրեց Նապօլէօնին, որ Հոօմի պաշտպանն ու հովանաւորն էր, նա թոյլ տուեց որ իտալական զօրքերը զրաւեն Հոօմը և միանդամայն վերջ դնեն պապի աշխարհական իշխանութեան։ Պատերազմից յետոյ էլ Գերմանիան աշխատում էր ընկձել պատականութեան ոյժը իր սահմանների մէջ։ Ահա թէ համակրանքի նրգան առիթներ կային «Մշակի» համար։

Պատականութեան խորտակումը օգուտ տուեց և հայերին, ասում էր «Մշակը»։ Ինչպէս յայտնի է, հէնց այդ ժամանակներում կ. Պօլսի հայ-կաթօլիկ հասարակութեան մէջ սկսվեցին հասունեան և հականասունեան վէճերը։ Հականասունեանները, պաշտպանելով աղղային իրաւունքները, դիմադրելով լատինամոլ հասունեաններին, օգուտ էին քաղում քաղաքական այն դրութիւնից, որ ստեղծել էր քրանս-պրուսական պատերազմը։ Զը կար այլ ևս Նապօլէօնը, որպէսզի կարողանար ճնշումներ գործադրել կ. Պօլսում, Վատիկանը թոյլ էր, հեղինակութիւն չունէր իրեւ քաղաքական մարմին, և ահա հայ-կաթօլիկ

հասարակութիւնը համարձակ պահանջում է որ իր ազգային ծէսը, ազգային լեզուն պահպահ իր եկեղեցու մէջ:

Սրտաքին տեսութեան մէջ էր և այն բաժինը, որ պիտի խօսէր Ռուսաստանի սահմաններից դուրս ապրող հայութեան մասին: Թիւրքիայի և Պարսկաստանի հայերը պատշաճաւոր տեղ են բանում «Մշակի» մէջ: Սակայն Թիւրքիայի հայերի վերաբերմամբ «Մշակի» առաջին տարվայ տուածները համեմատաբար աղքատ են: Տեղեկութիւնները քաղվում են եւրօպական և թիւրքահայ լրագիրներից, սեփական թղթակցութիւններ չը կան: Միայն մի հատ խմբավորական ինքնուրոյն յօդուած ենք գտնում, յատկապէս թիւրքահայերին նուիրված: Բայց այդ յօդուածի մէջ շատ որոշ, աչքի ընկնող պարզութեամբ է արտապայտվում «Մշակի» վերաբերմունքը դէպի թիւրքահայերը, մի վերաբերմունք, որ ապագայում այնքան մեծ տեղ պիտի բռնէր թէ մեր և թէ «Մշակի» կեանքի մէջ:

Հէնց առաջին իսկ քայլից «Մշակի» թիւրքիայի հայութեան մէջ զանազանում է երկու մաս. գաւառներ և Պօլիս: Եւ այս երկու մասերը միմեանց ենտ նմանութիւն չունեն: Թիւրքահայերը արտօնութիւններ են վայելում, նրանք ունեն սահմանադրութիւն,

բաւական աղատ մամուլ: Բայց այդ արտօնութիւնները մայրաքաղաքի հայերին են պատկանում:

Թէեւ այս արտօնութիւնները առ այժմս այնքան իրական չեն, թէեւ Փոքր Ասիայի զաւառներում տիրում է կատարեալ կամայականութիւն, հայերին հալածում են, պղծում են նոցա եկեղեցիները, անպատվում են նոցա կանանցը, բռնադատում են քաղաքայիններին, բայց այնուամենայնիւ այսօր օրէնքի մեռած յօդվածները վաղը կարող են իրականութիւն ստանալ, թղթի վերա յիշված իրաւունքները կարող են կենդանանալ:

Կ. Պօլում, որպէս կենտրօնում, որտեղ 300,000 հայերի հասարակական կեանքը աւելի զարգացած է, որտեղ օրագրութեան եւ զրականութեան աղատ քննադատութիւն կայ, որտեղ նիստ ունի ազգային քաղաքական ժողովը, այդպիսի զեղծումներին տէրութեան պաշտօնիաների կողմից աւելի զժուար է պատահել: Կ. Պօլում աւելի միջոցներ կան կրթվելու, զարգանալու, ազատ, անկախ լուսաւորութեանը ձգտելու, քան թէ թիւրքիայի զաւառներում, որտեղ մարդի իրաւունքը զեռ եւս ոտնակոխ է արած...»

Համեմատաբար աղատ Կ. Պօլիսը այդ պատճառով էլ ծաղկեցրել է իր մէջ ժողովրդական կրթութեան գործը. բայց ծաղկեցրել է ոչ թէ կատարելութեան հասցնելով նրան, այլ միայն նրանով, որ միջոցներ ունի ուսումնարաններ բանալու, բարոյական աղա-

տութեան ձգտելու։ Պատրիարքարանի հրատարակած տեղեկագիրը ցոյց էր տալիս որ կան բաւական թւով ապահովված դպրոցներ, բայց չը կան պատրաստված ուսուցիչներ։ Այդ առիթով «Մշակը» յայտնում էր որ առհասարակ թիւրքահայերի ստացած կրթութիւնը, լինելով ֆրանսիական, օդտակար չէ։

Սորանից դեռ մէկ երկու տարի առաջ մայրաքարի պրէսսայի ամենանշանաւոր լրագիրներից մինը, խօսելով Գերմանիայի վերա, անուանեց այն երկիրը բարբարոս, եւ այն ազգը, որ հիմնեց եւ զարգացրեց մանկավարժութեան ուսումն, այսինքն մարդի անհատական զարգացման եւ ազատութեան գործին ամենամեծ ծառայութիւն արաւ, —դրոշմեց քարքարոս ազգ անունով։ Մեզ ծանօթ է Կ. Պոլի միայն մի օրագիր, այն է «Երկրագունոր», որ 1871 թուին քանի մի ուշադրութեան արժանի յօդվածներով բողոքեց այդ վայր ի վերոյ, ֆրանսիական թեթեւ եւ միակորմանի կրթութիւնից առաջացած թերի կարծիքի պէմ։

Այս տողերի մէջ երեսում է գերմանական ուսանող Արձրունին։ Նա պակասութիւն էր համարում որ թիւրքահայերը խորչում են գերմանական կրթութիւնից և ասում էր.

Միայն մի բան պակաս է դեռ եւս թիւրքիայի հայերի ժողովրդական կրթութեան, ձիշտ գիտութեան եւ մանկավարժութեան հետ ծանօթութիւնը, որոնց

աղքիւրը Գերմանիա չը մանաչելու համար հարկաւոր է կատարեալ կոյր կամ զոնէ սաստիկ կարմատես լինել։

Ո՞րքան հիմնաւոր էր այդ նկատողութիւնը։ Իրանք, թիւրքահայերը այժմ խոսափանում են գրանսիական կրթութեան պակասութիւնները և ասում են, որ եթէ ոռուսահայերի գրականութիւնը աւելի կրթիչ, ուժեղ ու գաստիարակիչ է, զրա պատճառն այն է, որ ոռուսահայ գործիչները գերմանական կրթութեան ազգեցութիւնն են կրում իրանց մէջ։ Եւ իրաւ, Կ. Պօլսում չէր աջողվում բուն ժողովրդական, իրական գրականութիւն հիմնել, զրականութիւն, որի նպատակը լինէր կեանքի լուրջ ու բազմակողմանի ուսումնամիարութիւնը։

Թիւրքիայից անցնելով Պարսկաստան, Կը տեսնենք որ վերջինս աւելի մեծ աել է գրաւում «Մշակի» արտաքին տեսութեան մէջ, աւելի մանրամասն և բազմակողմանի կերպով է ներկայացրած։ Այսուեղ համարեա չը կան քաղուածքներ օտար լրագիրներից, այստեղ ամբողջ նիւթը սեփական է, ինքնուրոյն։ Դրա ամենազվասուր պատճառն այն է, որ «Մշակի» խմբագրութեան մէջ էր Պարսկաստանում ծնված ու մեծայած Բաֆֆին։

Բագֆիի նամակները «Մշակի» 1872 թւաւ կանի արտաքին տեսութեան պլխաւոր հարըստութիւնն են կազմում։ Երանք մանրամասն, զրաւիչ կերպով նկարագրում են պարսկական իրականութիւնը, և այն հայ ժողովուրդը, որ ապրում է Ուրմիի և Սալմաստի կողմերում, դուրս է գալիս ձեր առջն իր բոլոր հոգակրով ու ցաւերով, իրրե իրաւագուրի, մշտապէս հարստահարվող մի բազմութիւն, որի ճակատին զրված է աշխատել, քրտինք թափիել, արդիւնաբերել, բայց չը վայելել գտնն աշխատանքի պատովները։ Բագֆին նկարագրում է և հայերի հարեանաներին—ասօրիներին, քրտերին։ Առաջին անդամն է, որ մեր զրականութեան մէջ խօսք էր լինում այդ ցեղերի մասին։ Չատ հետաքրքական է մանաւանդ ճանապարհորդութիւնը գէպի ձուլամերկ և Մար-Շիմօնին ներկայանալը։ «Հիւսիսափայլում» Բագֆին իր ճանապարհորդութեան ժամանակ տեսածների մի փոքրիկ մասն էր նկարագրել—Աղթամարը։ Այժմ «Մշակի» մէջ նա ներկայացնում էր այն ամենը, ինչ նա տեսել ու իւմացել էր Պարսկաստանում և Թիւրքիայում։ Եւ նրա նկարագրութիւնները այնքան զրաւիչ ու վերին աստիճանի հետաքրքական էին, որ, ինչպէս հաղորդում էին «Մշակին»,

արտասահմանի հայ ուսանողները ուղում էին թարգմանել այդ նամակները գերմանական լեզուով։

Բացի այդպիսի ինքնուրոյն գրուածքներից, որոնք պատրաստվում էին խմբագրութեան մէջ, «Մշակը» գնալով աւելի և աւելի յաճախ էր տալիս թղթակցութիւններ։ Ինչպէս զիտենք, լրագրի հրատարակութիւնը սկսելիս թղթակցութիւնների գործը այնքան անորոշ ու անյուսավի էր, որ հարկագրված էին խըմբագրութեան մէջ թղթակցութիւններ կազմելով ուրիշներին օրինակ տալու համար։ Եւ այդ օրինակը շուտ ներգործեց։ Խմբագրութիւնը հարկագրված չէր երկար ժամանակ տանը թղթակցութիւններ կազմել, թխել թղթակիցներ շուտ պատրաստիցան և մենք «Մշակի» հէնց առաջին տարվայ ընթացքում տեսնում ենք թղթակցութիւնների բաժնի անդադար զարգացումը։ Խմբագրութիւնը ղեկավարում էր, «Մշակի» առաջնորդողները զրգում էին։ և ահա գաւառների կեանքը ըսկսում է հետզհետէ երեան դալ լրագրի էջերում, այնպէս որ խմբագրութիւնը հնարաւորութիւն ունի իր թղթակիցների հաղորդած տեղեկութիւնները և երեսյթները քընութեան ենթարկելու իր յօդուածների մէջ։ Թղթակցութիւնները միայն ներքին դա-

ւառներից չէին դալիս, այլ և արտասահմանից, Առաջին անդամից Գերմանիան է, որ ամենից շատ թղթակցութիւններ է տալիս «Մշակին»: Եւ սա հասկանալի է. Գերմանիայում էր ապրում Անդէաս Արծրունին: Գերմանիայից յետոյ Պարսկաստանն էր. թղթակցութիւններ ստացվում էին մեծ մա-



Համբարձում Առաքելեան

սամբ Թաւրիզից, Թեհրանն էլ մի երկու բան տուեց, Թաւրիզից գրում էր Համբարձում Առաքելեանը: «Մշակի» անդրանիկ թղթակից-

ներից մէկն է Առաքելեանը. Նա միակն է կենդանի մնացածներից, որ այսօր էլ շարունակում է զրել «Մշակի» մէջ, երեսուն տարվայ ընթացքում հաւատարիմ մնալով նրա դրոշակին:

«Մշակի» տռաջին տարվայ տեսութիւնը վերջացնելու համար մեզ մնում է մի թեթև ակնարկ զցել նրա զրական բաժնի վրայ: Արծրունին ասում էր՝ անշնորհք ու անկարող է այն խմբագիրը, որ ինքնուրոյն տաղանդներ չէ առաջ բերում, որ իրան շրջապատող դրողներին ուղղութիւն չէ տալիս, չէ որոշում թէ նրանցից որը ինչ ճիւղի մէջ կարող է աջողութիւն ունենալ իրքն ստեղծագործող: Ի՞նչ կարողացաւ անել նա այդ ուղղութեամբ առաջին տարվայ ընթացքում:

Գրական բաժինը բաղկացած էր փոքրիկ պատմուածքներից: Դրանց թիւը բաւական մեծ էր, բայց զրանք զեռ մի առանձին հարըստութիւն չին կաղմում, մանաւանդ եթէ նըկատի ունենանք, որ «Մեղուն» էլ մեծ քանակութեամբ այդպիսի վէպիկներ էր տալիս: Մեր վիպագրութիւնը առհասարակ շատ դանդաղ կերպով էր զարդանում. Արովեանից յետոյ երեք տասնեակ տարիներ էին անցել, բայց մեր վէպը շարունակում էր խանճարուրքի մէջ փաթաթված մնալ: Վաթսունա-

կան թւականներին Պոօշեանցի աղդադրական մէպին *) հետեւց Աղայեանցի «Արութիւն և Մանուէլը», բայց դա էլ վէպ չէր, դրա մէջ էլ չը կար գեղարուեստ, թէև առատ էին կեանքի տեսարանները։ 1872 թւականին «Մեղուն» առանձին զրքով տուեց իր բաժանորդներին նոյն Աղայեանցի «Երկու Քոյրը», բայց այդ գիւղական հոգուերգութիւնը նոյնպէս ովինչ չէր աւելացնում եղածի վրա։

Մենք մի քանի անգամ անսանք որ Արծրունին մեծ նշանակութիւն էր տալիս վիպական գրականութեան։ Ինքնուրոյն վէպն էր, որ պիտի օգուտ բերէր հայ ընթերցողին, մի կողմից պատկերացնելով նրա առջե նրա սեփական կեանքը, իսկ միւս կողմից զարդացնելով և տարածելով ընթերցանութեան սէր։ Բայց ինչպէս ստեղծել գրականութեան այդ կարեւոր ճիւղը, ինչ կար մեղանում «Մըշակի» հրատարակութիւնից առաջ, եթէ չը հաշենք Պոօշեանցի և Աղայեանցի գրուածքները, կը մնան այն փոքրիկ պատմուածքները, որոնք ապօռում էին «Մեղուն» մէջ 1863 և յաջորդ թւականներում։ Այդ պատմուածքները այն միակ արժանաւորութիւնն ունեին,

*) Տես իմ «Ստեփանոս Նաղարեանց», հատ. II, էր. 260։

որ վորձում էին մօտենալ քաղաքային կեանքի մի քանի կողմերին։ Միմիայն այդ ձրդտումն է ուշաղրութեան արժանի, որովհետեւ պատմուածքները գրական արժանաւորութիւններից զուրկ էին, ապաւորութիւն թողնել չէին կարող։ «Հայկական Աշխարհը», չը նայած, որ իրան անուանում էր գրական ամսագիր, միանդամայն ամուլ հանդիսացաւ նոյն իսկ այդքան խեղճ ու կրակ պատմուածքների կողմից։ Նա ովինչ չը տուեց Մեղանում զեռ թատերագրութիւնն էր րէալական գեղարուեստի ներկայացուցիչը։ Նա արդէն տուել էր «Պէտօի» նման սիրուն գոհարը, իսկ վիպագրութիւնը մնում էր փոքրիկ տեսարաններ ցոյց տուողի խղճալի գերում։

Այդ կերպարանքով էլ վիպագրութիւնը 1872 թւին մտաւ «Մշակի», յետոյ և կերպարանափոխված «Մեղուն» մէջ։ Նա տալիս էր պատկերներ, բայց արուեստ չունէր, լեզու չունէր, չափ չունէր և երկու լրագիրների մէջ տապած պատկերների բազմութիւնից հաղիւ թէ կարողանանք գտնել մի երկուսը, որոնց այժմ էլ կարելի կը լինէր կարդալ առանց զարմանալու նրանց միամիտ, աղքատ կաղմուածքի վրա։ «Մշակի» մէջ այդպիսի պատմուածքներ տալիս էր զիսաւորապէս Գէորգ Զմշկեանը։ Զբաղվել նրա պատ-

կերներով աւելորդ է, բայց պէտք է աւսենք, որ նա «Մշակում» սկսեց իր թատրօնական յիշողութիւնները, որոնք հետաքրքրութեամբ են կարդացվում: Աւելացնենք և այն, որ «Մշակի» աշխատակիցներին առանձնապէս դրաւում էր ֆելիչածնական ոճը, և մենք տեսնում ենք պատկերներ, որոնց մէջ ֆելիչատոնիստի հեղնութիւնը մի առանձին ոյժով է ընդգծում աշխարհի անարդարութիւնը: Այսպէս է, օրինակ, «Կօշկակարի խրճիթից» առունով սիրուն պատկերը:

Արդարացի կը լինէր, եթէ մենք այս ընդհանուր և համառօտ դիտողութիւններով էլ վերջացնէինք «Մշակի» դրական բաժնի տեսութիւնը: Բայց մեր առջե կայ այն հանգամանքը, որ այդ բաժնում աշխատում էր և Բաֆֆին: «Մշակի» մէջ զարդացած այդ գըրական խոշոր ոյժը պարտաւորեցնում է մեզ հետեւել նրան՝ առաջին իսկ քայլերից:

Յակոր Մէլիք-Յակոբեանը միայն Պարսկաստանի նամակներն էր ստորագրում Բաֆֆի անունով. իսկ մնացած զրուածքների համար նա ունէր մի կեղծ անուն—Մէլիք-զադէ: Մէլիքզադէի ստորագրութեան մենք յաճախ ենք պատահում «Մշակի» առաջին տարվայ մէջ. դա ցոյց է տալիս որ Մէլիք-Յակոբեանը շատ բան ունէր ասելու, որ նա

Արծրունու ամենաեռանդուն աշխատակիցն էր: Նա զրում էր զանազան բաներ—կենսագրութիւն, քննազատութիւն, սոլէմիկական յօդվածներ: Մինչև իսկ փորձեց ֆելիչետոն զրել և այդ ֆելիչածնի վերնագիրը ճիշտ և ճիշտ այնպէս էր, ինչպէս նալբանդեանի ֆելիչածնների վերնագիրը «Հիւսիսափայլում»: Նմաննվելով կոմս էմմանուէլին, Մէլիք-Յակոբեանը զրում էր «Յիշատակարան Պ. Մէլիքզադէի Օրագրութիւններից»: Բայց Մէլիքզադէի իսկական կոչումը այն տեղն էր, ուր նա առաջին անգամ երեան եկաւ «Մշակի» № 21-ի մէջ: Դա բանախրական բաժինն էր, և այդուղ տպկեց Մէլիքզադէի «Գեղեցիկ Վարզիկը»:

Իր պատկերների համար Մէլիքզադէն նիւթ վերցնում էր իր հայրենիքի, Պարսկաստանի կեանքից: Այսպէս են նրա «Կուսադրութիւնը», «Սովոր», «Անբախտ Հոփիսամէն»: Այդ առաջին պատկերները իսկապէս շատ բանով չեն զանազանվում այն պատկերներից, որոնք այդ ժամանակ երեսում էին մեր լրագիրներում. բովանդակութիւնը աղքատ, միամիտ, նիւթի մշակումը շատ թոյլ: Բայց այդ անարուեստ պատմուածքների մէջ երեսում է և նորութիւնը. Մէլիքզադէն բնութեան սիրուն նկարագրութիւններ է տա-

լիս, ունի հարուստ երևակայութիւն։ Բայցի դրանից, նրա գրուածքների մէջ արդէն լըս-վում է մի հզօր շեշտ—հարստահարված, ի-րաւագուրիկ հայը մահմեդական աշխարհում։ Պարսիկ տիրաղների կամայականութիւնը ար-տայայտվում է հայ աղջիկներ յափշտակելու մէջ, իսկ հայ կտրիծ երիտասարդները զիմա-դրում են, խլում են զոհերին նրանց ձեռ-քից,—ահա Մէլիքզադէի սիրած սիրէչար։ Ծնված և մեծացած բռնութեան աշխարհում, պարսկաստանցի երիտասարդը իր առաջին քայլերից պատրաստվում էր դուրս գալու իրեն մի տաղանդ, որի ամենամեծ ոյժն էր՝ բողոք բռնութեան դէմ։ Բայց նա դեռ թոյլ էր իրեն վիպագրող, նրան զեռ պակասում էր իսկական ոգեսրութիւնը, նրա առջի դեռ մարմնացած, միս ու արիւն ստացած դաղա-փար չը կար։ Եւ նա իր Վարդիկների, Հոփի-սիմէների դժբախտութիւնն էր նկարագրում, դեռ շիմանալով թէ ինչպէս պիտի մահմեդա-կան լուծի տակ տափակած հայը վրկութիւն որոնէ իր համար։

Ինչպէս երեսում է, Մէլիքզադէն այդ ժա-մանակ շատ վիպական գրուածքներ ունէր, բայց դրանց մէջ աջողվածները շատ չէին։ Այսպէս, «Մշակի» մէջ տպվածներից մինք մատնացոյց կանենք միայն «Սովլ», մի պատ-

կեր, որ շատ ազգու տպաւորութիւն է թող-նում իրեւ սովի և գաղանացած մարդու նը-կարագրութիւն։ Մէլիքզադէն ունէր և մեծ վէպեր, օրինակ, «Զահրումարը», որ գրված է այդ ժամանակներից և հրատարակվեց նրա մահից յետոյ։ Արծրունին իր յիշողութիւննե-րի մէջ ասում է թէ 1872-ին Ռաֆֆին բե-րեց իր «Խըլվըլիկ» վէպը, բայց ինքը չը հա-ւանեց այդ գրուածքի բովանդակութիւնը, թէև նրա նկարագրական մասերը անհնման էին։ Այսպէս է և «Զահրումարը»։ Նրա մէջ կան շատ նոր մօտիվներ, որոնք գեռ անյայտ էին մեր վիպագրութեան, նրա մէջ գեղեցիկ կերպով նկարագրված են բազասական երե-ւոյթներ, դէմքեր, բայց դա, այնուամենայ-նիւ, մի անաջող վէպ է, թոյլ՝ իրեն գեղար-ուեստական ստեղծագործութիւն, անբնական շատ տեղերում։

«Մշակի» խմբագրութեան հետ իր վիճա-կը կապելուց յետոյ,—ասում է Արծրունին— Ռաֆֆիի տաղանդի սահմանները և այդ տա-ղանդի ձեր հետղետէ որոշվեցան։ Եւ սա ճիշտ է. 1874 թւականին Ռաֆֆին հրատա-րակեց առանձին գրքով իր «Փունջի» երկ-բորդ հատորը, որի մէջ տպված վէպիկնե-րը արդէն ցոյց են տալիս, որ հեղինակը շատ է առաջ գնացել այն դրութիւնից, որի մէջ

գտնվում էր «Գեղեցիկ Վարդիկը» գրելիս.
Նա հետզհետէ զարգանում էր, աւելի հմտութեամբ էր գործադրում իր նկարագրական չնորհը, աւելի բէալիստ էր դառնում, գեղարուեստական չափը աւելի լաւ էր ըմբռնում:

—οο—

Դեկտեմբերի 28-ին հրատարակվեց «Մշակի» 1872 թւականի վերջին, 51-րորդ համարը. Արձրունին այդ համարի առաջնորդողի վերնագիր գրեց երկու թւանշան—«1871 և 1872»։ Դրանք երկու տարիներն էին, մէկը «Մշակից» առաջ, միւսը՝ «Մշակի» առաջին տարին։ Համեմատվում էին այդ երկու տարիները. — ինչ կար և ինչ կայ։ Թողենք որ Արձրունին ինքը պատմէ այդ, նա շատ լաւ է պատմում։

1871 Թուին Կովկասում կային հայերէն լեզվով լրագիրներ։ Այդ լրագիրները հրատարակվում էին անորոշ ժամանակամիջոցներով, անկանոն կերպով... ոչ որ չէր իմանում մէջը ինչ էր գրած, ոչ որ չէր կարդում, շատերը հայերից (մանաւանդ բարձր շրջանի հայերը) տեղեկութիւն էլ չունէին նոցա զոյութեան մասին։ Ով որ գիտէր հայերէն կարդալ, կը գտնէր թերթի մէջ հետեւեալ բովանդակու-

թիւնը։ Քանի մի անկապ քաղաքական լուրեր ուսւ լրագիրներից եւ «Մասխից», անծանօթ մարդու երկար կենսագրութիւն, երկար նամակ յար գոյաց ատիւ խմբագրին պատուական լրագրին մեր ազգը շատ յետ է մնացել միւս ազգիրից, բայց այսունետեւ նա պիտի ընթանայ հսկայական բայերով դէպի լուսաւորութեան ասպարէվը, որովհետեւ մեծապատիւ... Կիրակոս աղա Մարտիրոսեանը ընծայել է 50 ոռորի հարաբի նորաշն ծխական ուսումնարանին... երանի՛ մեր բոլոր հայրենակիցները հետեւէին այդպիսի պայծառ օրինակին. ո՞հ, ինչու մեր ազգը իր բարերարներին չէ ճանաչում եւ այն։ Թերթի վերջը գալիս էր մի թարգմանութիւն աշխարհագրութեան դասագրքից... եւ շատ անգամ երբ նիւթը պակասում էր վերջին երեսը կամ սպիտակ էր. մնում, կամ մի որ եւ է պատկերը գարզակ տեղ էր բռնում։

Եկաւ 1872 թւականը։

Յունվարի մէկն էր... Թիֆլիսի հասարակութեան մէջ, ինչպէս միշտ, թուղթ էին խաղում, խօսում էին կրուծօկի, պարահանդէսների, այս կամ այն մասնաւոր անձի, մասնաւոր կամ ընտանեկան գործերի վերա... Յանկարծ մէկն ասաւ. «գիտէք վաղը զուրս գալու է նոր հայոց լրագրի առաջին համարը».—մի քանիմերը ուշարդութիւն չը գարձրին խօսողի վերա, միւսները արհմարհանքով ժամանեցին, երրորդները ծիծաղցան, մէկէները իսկոյն խօսողից նեռացան, կարծես թէ նրանց ականջին դիպաւ, անախորժ մի ծայն, վիրաւորական մի խօսք, կամ նրանց աշ-

քերին ներկայացաւ մի գարշելի տեսարան... Թուան տեղից ու հեռացան...

Անա փօստից եկաւ մի նամակ. «Պատուելի պարոն, շատ ցաւում եմ, որ մեր հայաբնակ քաղաքում 4 քաժանորդներից աւելի չը գտնվեցաւ: Զեր լրազիրը զուցէ շատ օրինաւոր կը լինի, բայց մենք այնքան զզվեցանք մեր հայ լրազրութիւնից, լրազրութիւն սկսողը բոյորովին պատրաստ չը լինելով այդ գործունէութեանը,—որ մենք այժմս էլ չենք հաւատում թէ: հայ երէն լեզվով կարելի է մի օրինաւոր լրազիր հրատարակել...»

Սյս յուսահատ դրութեան մէջն էր մեր հայ հասարակութեան կարծիքը 1871 թ. մայրենի լրազրութեան վերաբերութեամբ, այդպէս սկսվեցաւ 1872 թիւը...

Անա հրատարակեցաւ նոր լրազիր առաջին համարը... ինչպէս էք գտնում,—վաստ չէ... Բայց պէտք է խոսովանած, որ ամեն լրազիրների առաջին համարը լաւ է լինում... տեսնենք ինչ կը լինեն հետեւալները... մի ամիս չի անցկենայ, —եւ նրանք ստիպված կը լինեն լցնել իրանց էջները թարգմանութիւններով:

Բայց անցել էր ոչ թէ մի, այլ ամբողջ տասն երկու ամիս: Եւ Արձրունին, կանգնած երկրորդ տարվայ չէմքին, հետաքրքրական էր համարում իմանալ այժմ ինչ կարծիք կայ հայ լրազրութեան մասին:

Կարծիքը, ի հարկէ, պիտի փոխվէր, բայց ոչ այդքան շուտ: Եթէ հասարակական անտարբերութիւնը երկար ժամանակ ամրա-

ցած մի ժայռ էր, իսկ Գրիգոր Արծրունու հրապարակախօսութիւնը մի կաթիլ ջուր, պէտք էր, ուրեմն, որ այդ կաթիլը երկար ժամանակ ընկնէր ժայռի վրա, որպէսզի կարողանար նրան ծակել: Մեր հասարակութիւնը առանձին գիւրազգացութիւն չունի, որ իսկոյն հասկանայ, իսկոյն ցնցի: Երևոյթը գեռ իր սկզբնաւորութեան մէջ էր, այնքան մօտ էր կանգնած տեսնողներին, որ միանգամից գնահատել, ամբողջովին հասկանալ շատ գժուար էր: Կային, ի հարկէ, շատերը, որոնք զգում էին թէ մեղանում մի նոր բան է սկսվում. «Մշակի» բաժանորդների թիւը այդ էր ցոյց տալիս: Բայց յաղթանակը այդպէս շուտ ձեռք չէ բերվում. մի տարում շատ բան չէ կարելի անել, մանաւանդ մեղ պէս մի հասարակութեան մէջ, այնպիսի մի ասպարէզում, ուր իւրաքանչիւր քայլը պատերազմով պէտք է նուաճել:

Հարկաւոր էին երկար տարիներ: Բայց այս առաջին տարին ցոյց էր տալիս թէ ինչ պիտի լինէր այդ երկար տարիների շարքը: Մենք, այսօրվայ մարդիկս, աւելի լաւ և յարմար գրութեան մէջ ենք, քան այն հասարակութիւնը, որին Արծրունին հարց էր տալիս թէ այժմ ինչ կարծիք ունի նա հայ լրազրութեան մասին: Այսօր մեզ այդ առաջին

հարցից բաժանում է երեսուն տարիների տարածութիւնը. հեռուից զիտողի հանդըստութեամբ զինված ընթերցողը կարող է այսօր իր վճիռը արձակել անկողմնապահ կերպով, աչքի առջև ունենալով փաստերը միայն: Հենց այդ պատճառով էլ մենք այսքան երկար կանգ առանք ռՄշակի առաջին տարվայ վրա, քայլ առ քայլ հետեւցինք Արծրունուն և նրա լրագրին: Կանգնեցնեով ընթերցողին մի մեծ շինութեան առաջ, մենք պարտք համարեցինք ծանօթայցնել նրան այդ շինութեան հիմքերի հետ, ցոյց տալ թէ ինչ նիւթերից են կազմված նրանք, ինչպէս է նրանց դարսել, պնդացրել ճարտարապետը: Եւ մենք տեսնում ենք որ Արծրունու կառուցած շինութիւնը հիմքից մինչև վերջը միատեսակ է տարված, առանց տատանումների, առանց շփոթութեան: Դա մի ձեռք է, որ դողաւ չը գիտէր, մի միտք, որ չեղումներ անել չէր կարող ճարտարապետը միևնունն է թէ հիմքի մօտ, թէ շինութեան ծայրին:

Նա մեր մէջ երեան է գալիս միանդամայն պատրաստված: «Մշակի առաջին տարին լիակատար կերպով պարզում է Արծրունու հրապարակախօսական դէմքը. ոչինչ չէ մոռացված, ոչինչ թերատ գծեր չը կան: Նա կուի մարդ է. նա տափակ մտքերի անհաշտ

թշնամին է, նա պահանջում է որ իւրաքանչիւր մտածող մի յայտնի գոյն ունենայ, նա հարկագրում է որ կուսակցութիւններ կազմվեն մեզանում, բաժանում է աջակողմեաններին և ձախակողմեաններին, որոշում է դիրքերը և այդպէս բաց անում կուի գաշտը: Վրդովվում, տակն ու վրա է գառնում այն խաղաղ ճահիճը, որ հայկական կեանքն էր ներկայացնում: Խիզախ, համարձակ, ազատ միտքը առաջին իսկ քայլերից փոփորիկ է յարուցանում: Մենք լսում էինք ու սարսափում: Մենք դիտէինք որ խաղաղ ու միարան ապրել իմաստութեան ծայրն է, իսկ կուսակցութիւնները դժբախտութիւն են. Արծրունին դադափարական կուսակցութեան սկիզբն է գնում և ասում է որ մեռած է այն կեանքը, ուր կուսակցութիւններ չեն առաջանում: Մենք դիտէինք որ պէտք է սիրով ու խաղաղ ապրենք, —Արծրունին պարտաւորութիւններ էր գնում մեր առջև և ասում էր, «Ոտրակով չը խփես, բան չի գուրս գայ»: Տպագրական խօսքը մեզանում չը տեսնված մի ոյժ էր գառնում. նա խարազանում էր, նա յուզում էր, հարկագրում էր շարժվել, ականջ դնել: Հայ հրապարակախօսութիւնը պատուաւոր գիրք էր բոնում և նրան լսում էին նոյն խակ օտարները:

Անցնում էր հին, բարեմիտ ազգասիրութեան դարը։ Մեղանից պահանջում էին ուսումնասիրել մեր իրական կեանքը, հետազոտել մեր տնտեսական երեսյթները։ Փոխանակ ինքնազո՞ն ազգասիրութեան՝ մեր առջե զնվում էր ազգային լեզուի նշանակութիւնը. փոխանակ հին, անցած գնացած հերոսների՝ մեր աչքի առաջ էին հանվում վաշխառուի ճանկերում տանջվող գիւղացին, արհեստաւորը, պրօլետարիատը։ Աշխատել դրանց համար, գործ կատարել դրանց օգնելու, դրանց կեանքը ապահովելու, տնտեսական գրութիւնը բարւոքելու համար—ահա իդէալ. աշխատող, ներկայով ապրող և ապագայ պատրաստող սերունդ էր հարկաւոր և ոչ թէ անցեալի համար դատարկ ախ ու վաշ անողներ։ Հարուածելով մեռած, անպիտան, խանգարող ոյժերը, Արծրունին ցոյց էր տալիս գործունէութեան լայն ասպարէզ. որքան գործեր կային ճշմարիտ աշխատողների առաջ, որքան կարեոր կենսական հարցեր կային կախված մեղ վրա և մենք նրանց չէինք նկատում։ Նա անդադար կանչում էր, նրա ձայնը ազդու էր, խօսքը ամենքին մատչելի եւ նա իր հետ բերեց մի շարժում։ «Մշակը» դեռ մի քանի ամսական էր, բայց արդէն

օտարներն էլ նկատում էին, որ նա երիտասարդութեան պարագլուխն է...»

1872 թւականը դարագլուխ է կազմում մեր լրագրութեան, մեր գրականութեան պատմութեան մէջ։ Այդ դարագլուխը բերեց «Մշակը»։ Սա լոկ խօսք չէ. անթիւ ու առատ փաստերը այս պատմական իրողութիւնը հաստատում են ամենադրական կերպով։ 1872-ից մեզանում տիրապետում է նոր ուղղութիւնը և հինը անցնում է աւանդութիւնների կարգը։ Մեղանում սկիզբ է առնում իսկական լրագրութիւնը, մենք սկսում ենք զբաղել մեր կեանքով, մեր սեփական հարցերն ենք ստեղծում, հրապարակական քննադատութիւնը լայն ու հաստատ հիմքերի վրայ ենք դնում։

Առաջադիմութիւնը մեր մտաւոր խեղճ աշխարհի մէջ փայլուն էջեր է բաց անում։ Նա միանդամից խուժեց մեր կեանքի մէջ, միանդամից բաց արաւ իր գրօշակը։ Մնում էր որ նա երկարատև լինի, գործէ անընդհատ յամառութեամբ, տոկունութեամբ։ Եւ կարելի էր ապահով լինել, որ այդպէս էլ կը շարունակի, որպէսիտեւ այն մարգը, որ այսպիսի մի շըան բաց արաւ մեզանում, չէր նայում իր վրա իրեն մի դիւցազնի, մի մարգարէի, մի հրաշագործ ոյժի վրա։ Ո՞չ

«Մենք հրաշք չենք դործել,—ասում է Արծրունին իր առաջնորդողներից մէկում *): Մենք անդադար կրկնել ենք թէ հրաշք ների դարը անցաւ և այժմեան դարը՝ անընդհատ, տոկուն աշխատանքի դար է։ Նոյն իսկ մեր այդ համոզմունքի խոստովանութիւնը ապացոյց է, որ մենք մեր դործունէութիւնից սպասել չէինք կարող հրաշքների, ոչ երկու, ոչ էլ տաս տարվայ ընթացքում։ Ճշմարիտ է, աշխատանքի հետեանքը շատ անգամ ուշ է բերում շօշափելի պտուղներ,—բայց նրա գոյութիւնը բոլորովին անտես առնելու անկարող է հասարակութիւնը։ Մի անգամ յայտնած միաքը ոչնչացնելու մարդկային հասարակութեան ուժից վեր է... Այժմեան դարում որ և է փոխոխութիւն դէպի լաւը կարելի է սպասել միայն անընդհատ գործունէութիւնից, հրաշք սպասել կարելի է միայն երկարատես և տոկուն աշխատանքից»։

Ահա ամբողջ դադանիքը եւ մենք, մանրամասն կերպով ծանօթանալով Գրիգոր Արծրունու երկարատես, տոկուն աշխատանքի սկզբնաւորութեան հետ, այժմ առաջ կը գը-

նանք աւելի համառոտած տեսութիւններով, արձանագրելով այն, ինչ նա աւելացնում էր իր դրած հիմքի վրա։

բունին արդէն 1000 բաժանորդի յոյս ունի
և մտածում է «Մշակը» շաբաթը երկու ան-
գամ հրատարակելու մասին:

Ի՞նչ էին ցոյց տալիս բաժանորդների՝ մե-
զանում դեռ չը տեսնված այդ խոշոր թւերը:
Արձրունին ասում էր թէ դրանք ապացոյց-
ներ են որ հայ լրագիրը այժմ կարողանում է
կազ հաստատել հասարակութեան հետ: Եւ
պատճառը այս էր որ լրագիրը ժողովրդի տըն-
տեսական կեանքի վրա մեծ ուշադրութիւն է
դարձնում. զիւղերն էլ սկսեցին լրագիր ըս-
տանալ, իսկ օրի վրա բազմացող թղթակ-
ցութիւնները, որոնց զիսաւոր առարկան ժո-
ղովրդի կեցութիւնն է, վկայում են որ լրա-
գրի բռնած ուղղութիւնը միանդամայն հա-
մապատասխանում է ազգաբնակութեան էա-
կան կարկիններին ու պահանջներին: Մնում
էր աւելի ևս մատչելի դարձնել լրագիրը ժո-
ղովրդին Եւ Արձրունին թանգ համարելով
7 բուրփի բաժանորդագինը, երկրորդ տար-
վանից իջեցնում է նրան 5 բուրփու: «Մե-
զուն», որ մրցութեան դործում ոչինչ չէր
խնայում, ուրիշ միջոցի դիմեց. անփոփոխ
թողնելով 7 բուրփի բաժանորդագինը, նա մե-
ծացրեց իր դիրքը, որ թոյլ էր տալիս նրան
«Մշակը» աւելի նիւթ տալ ընթերցողին:
Սակայն աջողութիւնը «Մշակի կողմն էր, եթէ

VI

Երկրորդ եւ հետեւեալ տարիները:—Բաժանորդագրու-
րին առանց գործակալների:—Մի նոր ոյժ «Մշակի»
մէջ—Ըսխացին իր վելիկութեարով:—Քաղաքային տըն-
տեսուրեան հարցեր. զինակցուրին «Գրուրապի» եւ
«Տիֆլոսկի Ենտոնի»-ի հետ:—Գիւղատեսիսական
յրագիր ժողովրդի համար:—Արծրունին եւ բուրփերը.
«Այսինի» յրագիրը:—Գաւառական մամուլ:—Եկեղեցի եւ
հոգեւորականուրին:—Վերադարձ դէպի նախանձան
եկեղեցին:—Միսիօնարուրին:—Կրօն եւ ազգուրին:—
«Արաւարը» եւ «Մեղուն Մշակի դէմ»:—Ցեսարական հարց
ներսիւնան դպրոցում:—Անդրէան Արծրունու ընթառ-
րինելը:—Կղերական կամայականուրինելու:—Պայշարը
Տէղափոխում է Կ. Պօլիս:—Պասախոսուրինելու Թիֆ-
լիսմ:—Առաջին գրական դաս:—Արծրունին եւ Երիցեան:
—«Կավազա»:—Արծրունու առաջին դասախոսուրինելը:
—Կամակներ:—Աշխարհական արեղայուրին:—Նոր աշ-
խատակիցներ:—«Գաղորենի, միշտ գաղրենի»:

—○—

Հրատարակութեան երկրորդ տարին
«Մշակը» արդէն մօտ 700 բաժանորդ ունի:
Աջողութիւնը աստիճանաբար աւելանում է,
այնպէս որ երկրորդ տարվայ սկզբում Արծ-

աշքի առաջ ունենանք մանաւանդ հետեւեալ հանգամանքները:

Մեր մամուլի պատմութեան մէջ զես չէր եղել դէպի, որ մի լրագիր կամ ամսագիր բաժանորդագրութիւն սկսէր առանց դործակալների: Խմբագիրը ծանօթներ ունէր զանազան քաղաքներում. դիմում էր նրանց, խնդրում էր բաժանորդներ հաւաքել: Իսկ հաւաքել նշանակում էր դիմել այս կամ այն անձին, խնդրել, թախանձել, զրել տալ բաժանորդ: Կամաւոր բաժանորդագրութիւն մեզանում համարեա թէ չը կար. մի լրագրի կամ ամսագրի նիւթական դրութիւնը ամբողջապէս կախված էր այն հարցից թէ որ քան եռանդուա, ազգեցիկ են նրա դործակաները: Այդ դրութեան չորհիւ մամուլի վիճակը ազգեցիկ անհատների ձեռքում էր գտնվում. կուզէին այդ ազգեցիկները, և լրագրը կամ ամսագիրը բաժանորդներ կունենար, չէին ուղի—բաժանորդներ չէին լինի, կամ անքան քիչ կը լինէին որ խմբագիրը յուսահատութեան մէջ կընկնէր: Պարզ է, որ բաժանորդագրութիւն այս սպայմանների մէջ մեզանում չէր կարող զարդանալ անկախ, ազատախօս մամուլը: Ալացոյց «Հիւախսափայլը»: Լրագիրը կամ ամսագիրը պիտի խունկ ծխէր, շողովորթէր, քծնէր: Նաղարեանցը փորձեց

այդ սովորութեան դէմ զնալ, բայց այնպիսի դիմագրութիւն տեսաւ ազգեցիկ անհատների կողմից, որ հարկագրված եղաւ դիմել կովկասեան փոխարքայ իշխան Բարեատինսկուն, խնդրելով որ նա տեղական իշխանութիւնների միջոցով տարածէ «Հիւախսափայլը»: Պարբերական հրատարակութիւն ստանալը համարվում էր ազգասիրութիւն. յանուն ազգասիրութեան՝ խմբագիրները կամ նրանց դործականները անդորրագրեր էին ուղարկում գոնչ գուռ. գտնվում էին «ազգասէրներ», որոնք ընդունում էին այդ անդորրագրերը և բարեխիղճ էին փող վճարելու մէջ. շատերը կամ վերադարձնում էին անդորրագրերը կամ ստանում էին պարբերական հըրատարակութիւնը, առանց երբէք մտածելու փողի վճարման մասին: Դա խկապէս մուշացկանութիւն էր, ինչպէս իրաւացի կերպով նկատում էր «կուռնկի» հրատարակիչ էնֆիածեանցը իր մի յայտարարութեան մէջ:

Սկսելով «Մշակի» հրատարակութիւնը, Գրիգոր Արծրունին էլ ենթարկված էր գործակալներին դիմելու տիսուր անհրաժեշտութեանը: Խմբագրութիւնը իր առաջին յայտարարութեան մէջ առաջարկում էր ցանկացողներին «գործակալ լինել «Մշակը» տարածելու համար. 10 բաժանորդ գտնողը մի

օրինակը ձրի էր ստանում, 20 բաժանորդ գանողը—երկու օրինակ և այլն: Բայց Արծրունին շատ շուտ զգաց լրագիրը գործակալուների միջոցով տարածելու ամբողջ անցարմարութիւնը, վատութիւնը: Երբորդ տարվայ բաժանորդագրութիւնը բաց արաւ առանց գործակալների միջնորդութեան և միանգամից փայլուն հետևանքների հասաւ: Մինչև յունվարի վերջը նա արդէն 500 կամաւոր բաժանորդ ունէր, ուստի «Մշակի» մէջ յայտնեց որ երբէք չի դիմի արհեստական միջոցների՝ լրագիրը տարածելու համար:

Մենք մեր կողմից խոստովանում ենք—ասում էր նա—որ մենք միշտ զգվանք ունեինք այդ տեսակ միջոցներից եւ միայն առաջին տարի ստիպվեցանք այդ միջոցները գործ դնելու, որովհետեւ հայերը չէին էլ ուզում հաւատալ որ մայթենի լեզուով կարելի է մի փոքր ի շատէ օրինաւոր լրագիր հրատարակել, այնքան զգված էին նրանք մեր լրագիրներից: Երկրորդ տարուց սկսած մենք ուղարկել ենք միայն այն անձանց մեր լրագրի տոմսակները, որք իրանք էին խնդրում ու առաջարկում գործակատար վնել:

Բայց այժմ այլ ևս այդ ստիպողական միջոցները չեն գործադրվի: Աւելի լաւ է ունենալ 500 բոլորովին կամաւոր բաժանորդ, քան 1000 ստիպողական, որովհետև այն հինգ հարիւրը «տարից տարի» կամեն և ժամանակով կը դառնան 1000 կամաւոր ստորագրով և

աւելի, կը դառնան մայրենի ճշմարիտ լրացրական գործունէութեան համար հաստատ արմատ: Սակայն կարող է պատահել որ առանց գործակալների օդնութեան բաժանուրդների եղած թիւն էլ կը պակասէ: Արծրունին դրանից չէ վախենում: Նա ասում է.

Քանի որ մեր բաժանորդների թիւը կը նուազվի, այնքան մենք պակաս գործ դնելու ենք որ եւ է ստիպողական միջոցները...

Ի հարկէ շատերը կասեն մեզ՝ բայց ձեր լրագիրը այդպիսով անշուշտ կը լինի, մեր հայոց ժողովրուրը ոչինչ չէ: անում առանց ստիպողական միջոցների:

Թող ընկնի... բան չը կայ... այդ էլ կը փորձնք... այն ժամանակ հաւատացած կացէք, որ մեր վերջին համարը հրատարակելով, կասենք հայերին՝ հայե՞ր, զուք ոչ ազգ էք, ոչ հասաւ բակութիւն, որովհետեւ զուք անընունակ էք այն անընդհատ առաջադիմութեան, որին ընդունակ է ամեն մարդկային հասարակութիւնը, մինչեւ անզամ վայրենիները...

Եւ կոտրած սրտով կը թողնենք այդ երկիրը...:

Հաւատալով իր գործին, հաւատալով որ կենդանի, իրական ուղղութեան հետեւող գըրականութիւնը անկախ, կամաւոր ընթերցողների մի դասակարգ կը ստեղծէ մեղանուրմին այսպիսի խիստ խօսքերով կը կտրում իր կապը արհեստական, ստիպուղական միջոցներից, որոնց դիմել էին և այդպական միջոցներից,

սօր էլ դեռ դիմում են բոլոր հայ պարբերական հրատարակութիւնները: Եւ զուր չէր Արծրունու այդ վառ հաւատը: Ճիշտ է, վերոյիշեալ խօսքերից մի քանի տարի անցած, նա, դարձնելով «Մշակը» ամենօրեայ, ստիպված եղաւ, գործի կատարեալ նորութեան պատճառով, դիմել արհեստական միջոցի, բայց դրանից յետոյ նա երբէք այլ ևս չը կրկնեց այդպիսի փորձեր: Եւ նրան, միայն նրան աջողվեց պատուով, առանց մուրացկանութեան, առանց ստորացումների, տանել լրապի հրատարակութիւնը, դրաւելով իր կողմը մշտական, կամաւոր ընթերցողների մի բալմութիւն: Միւս թերթերը, ամսագիրները հեղեղում էին գաւառները իրանց անդորրապրերով, ամեն ջանք գործ էին դնում բաժանորդներ որոնելու համար, բայց Արծրունին մրցութիւն չէր սկսում անդորրապրերը դունէ դուռն ման ածողների դէմ և նրա բաժանորդները այն մարդիկ էին, որոնք իրանց կամքով, գիտակցաբար ընտրութիւն կարող էին անել այս կամ այն լրագրին զբրվելիս: Ուրիշները խնդրելով, աղաջելով, շուղաքորթելով էին բաժանորդներ դտնում, զօռով էին իրանց հրատարակութիւնները ընթերցողի շմեքին փաթաթում, իսկ Արծրունին միայն գաղափարի, ուղղութեան, տա-

դանդի ոյժով էր զրաւում բաժանորդներին: Նա միայն կարող էր պարծենալ որ ունի գիտակից, ազատ, հասկացող ընթերցողներ: Եւ նչ մի խմբագիր չէ եղել նրա այդ նախանձելի դրութեան մէջ. վկայ թնկ լինի մեր մամուլի պատմութիւնը: Հայերէն տպագրական խօսքի պատիւը բարձրացնելու, այդ խօսքը մտաւոր անհրաժեշտ կերակուր, պահանջ գարձնելու մէջ Արծրունու չափ մեծ ծառայութիւն ոչ ոք չէ ցոյց առւել: Եթէ կան մեր իրականութեան մէջ փայլուն բօսէներ, երբ մեր լրապիրը, մեր զիրքը մի թշուառ մուրացկան չէ, դոների տակ, փողոցների անկիւններում ուշագրութիւն և բարերարութիւն հայցող մուրացկան,—դրանք վերաբերվում են միայն Արծրունու գործունէութեան: Նա էր, որ ստեղծեց մեր դժբախտ բարքերի մէջ անկախ, խելապէս բարձրագլուխ, հպարտ, իր արժանապատւութիւնը ամեն ինչից բարձր գասող մամուլ...

Եւ այսպէս, «Մշակը» հէնց առաջին տարվանից սկսում է սերա կապ հաստատել իր և հասարակութեան մէջ, սկսում է տիրապետել: Մեռելութեան, անշարժութեան թշնամի, նա անդադար նորութիւններ է մըտցնում իր մէջ, գրաւում է նոր ու թարմ ոյժեր: «Մշակը» պատմութեան համար ամե-

Նախոշոր նորութիւնը, որ երեան է դալիս
երկրորդ տարվայ ընթացքում, այն է, որ
Գրիգոր Արծրունին սկսում է ֆելիքտօններ
զրել:

Ֆելիքտօնը մեր հրապարակախօսութեան
սկզբից եղել է այն դրական ձեզ, որ սիրել
են մեր զրողները և որ առանձնապէս սիրելի
է դարձել հայ ընթերցողի համար: Թեթև,
վառվուն ոճը, համեմած ծազրի հետ—ահա
այն միջոցը, որով աւելի հեշտ ու ազդու է
եղել մեր բարբերի, մեր պակասութիւնների
մերկացումը: Ծանր, լուրջ հրապարակախօ-
սութիւնը ամբողջապէս եւրօպական հողի
պտուղ էր և մեզ համար խորթ մի բան էր,
օտար երկրից բերած մի պատռաստ: մենք
դեռ պիտի սովորէինք նրան: Մինչդեռ ֆէ-
լիքտօնական ձեզ մեղ համար այնքան խորթ
լինել չէր կարող: որ և է սրամիտ պատմու-
թեան, առակի ձեռվ պակասութիւններ ծազ-
րելը մեզ էլ յայտնի էր հին ժամանակներից
և մեր ժողովուրդը ամենամեծ հաճութեամբ
է պատմում ծաղրածուների արարքները,
կրկնում նրանց ասածները: Ֆելիքտօնը, որի
դլխաւոր տարրը նոյն ծաղրն է, ամենից
մատչելի, ժողովրդական ձեն էր մեզանում և
նա սկզբից ենթ մեծ տջողութիւն ունե-
ցաւ: Միքայէլ Նալբանդեանցը ընթերցողնե-

րին գերաւմ էր իր ֆելիքտօններով: Նրանից
յետոյ ֆելիքտօնական զրուածքներ երեսում
էին «Կոռունկի» և «Մեղութիւ մէջ, բայց Թիգ-
վսում ֆելիքտօնը դարձաւ զաւառաբանու-
թիւն, նա զրվում էր միայն Թիգվսի բար-
բառով: Ճիշտ է Թիգվսի բարբառը անհման
ճկունութիւններ ունի խիստ ծաղր արտայայ-
տելու համար, բայց կար այն պակասութիւ-
նը, որ նա թիգվսեցուն էր միայն ծանօթ և
Թիգվսից զուրս մեծ աջողութիւն ունենալ
չէր կարող: Բացի զրանից, զրական իւրաքան-
չեւր ճիւղ, բայց մանաւանդ ֆելիքտօնը, պա-
հանջում է առանձին, ինքնուրոյն տաղանդ:

«Մշակը», ինչպէս տեսանկ, առաջին խոկ
համարից մայրեց զրական լիգուով զրված
ֆելիքտօնը: Զաքուճը բաւական աչքի ընկ-
նող ընդունակութիւն էր ցոյց տալիս այդ
բաժնում: մանաւանդ բանակուների մէջ
թունալից ֆելիքտօնը արտայայտում էր իր
ամբողջ ոչնչացնող ոյժը: Վերանորոգված
«Մեղուն» առաջին տարին չունէր ֆելիքտօն,
նոյն խոկ պակասութիւն էր համարում ծաղ-
րական ոճով զրելը: Բայց Զաքուճի սուր
պաքները հարկադրեցին որ նա էլ մասձէ
այդ բաժնի մասին: 1873 թւականի «Մեղութի»
առաջին համարը արգէն գծի տակ ունի ֆե-
լիքտօն, ստորագրած Քաղքցի կեղծ անունով:

Քաղքցին խմբագիր Պետրոս Սիմէօնէանցն էր. նա սկսեց յաճախ երեան կալ և նրա սրախօսութիւնների ու ծաղրի առարկան, ի հարկէ, «Մշակն» էր: Չափունը սկսել էր շատ ուշ-ուշ երեալ «Մշակում»: Ամերիկեանը շուտով հեռացաւ Թիֆլիսից և թէպէտ ուղարկում էր իր ֆելիէտօնները հեռուից, բայց դրանք, ի հարկէ, այլիս սագմական նախկին նշանակութիւնն ունենալ չէին կարող:

Եւ ահա «Մշակի» 1873 թւականի № 6-ի մէջ մի նոր ֆելիէտօնիստ է երեան դալս, որ այսպիսի վկայութիւն է տալիս իր մասին.

Սովորութիւն կայ, որ նոր ֆելիէտօնիստը պիտի անպատճառ իրան ներկայացնէ պատուելի հասարակութեանը,—բայց ես աւելորդ եմ համարում այդ ամեն տեղ ընդունված քաղաքավարութիւնը, որովհետեւ կամնում եմ անյայտ մնալ մեր ընթերցող հայ-հասարակութեանը:

Սյստան իմացէք միայն, իմ սիրելի ընթերցող, որ ես Ասիացի եմ, Ասիայում ծնվել եմ եւ մնացել, բարձր ուսում սուացած չեմ, ոչ Պետերբուրգի համալսարանից դիալոմ եմ ընդունել, ոչ գերմանական մի համալսարանում փողով զիալոմ եմ առել,—սարսափելի իրողութիւն, որ Թիֆլիսի «Մեղու Հայաստան» լրագրի խօսքերին նայելով, ամեն օր կատարվում է կը թված Գերմանիայում:

...Կրկնում եմ, որ ես մի հասարակ, անտաշ Ասիացի եմ, ու կարող եմ միայն այն բանի վրա

խօսել, որ իմ ջրս կողմն եմ տեսնում, միեւնոյն ժամանակ ան աղնիւ համարելով, առհասարակ խօսել այն բաների վրա, որոնց մասին ոչինչ տեղեկութիւն չունեմ:

Այս համեստ յանձնարարականն էր ներկայացնում իր մասին Գրիգոր Արծրունին, Ասիացի անուան տակ թագնվելով իրեն նոր ֆելիէտօնիստ: Բայց յանձնարարականները աւելորդ էլ էին: Այսուեղ զծի տակ էլ, ծաղրի բաժնում, Արծրունին չուտով ցոյց տուեց իր ամբողջ տաղանդը: Լինելով խիստ խօսքի տէր, լուրջ, տաք ու կրքոտ ընաւորութիւն, հեռու պահելով իրան թղթախաղից, խմբչքից, զուարծութիւններից և քէ-ֆերից, Արծրունին կեանքի մէջ մի մոայլ ասկէտ չէր, մի ճգնաւոր չէր, այլ մի վերին աստիճանի ախորժելի խօսակից, որ կարողանում էր մեծ հետաքրքրութիւն մտցնել խօսակցութեան մէջ՝ համեմելով նրան սրախօսութիւններով, հանաքններով, զուարծալի անեկտօններով: Ֆելիէտօնիստի կայծը կար նրա բնաւորութեան մէջ և այդ բաժնում զրելը նրա համար նոյնքան ոգեորիչ էր, որքան լուրջ հրապարակախօսական բաժնի մէջ: Նրան առած էր ծաղրով ջարդելու, ոչնչացնելու երկնային չորհրձը: Եւ անողորմ ծաղրը հնչում էր զծի տակից ամեն անդամ, երբ

բաւական նիւթ էր հաւաքվում Ասիացու Փելիչտօնի համար:

Շատերն են զրել ֆելիչտօններ, Պետրոս Սիմեոնեանցը իր լրագրի էջերը լայն բաց արաւ ամեն մի գրութեան համար, որի ճակատին զրված էր «Փելիչտօն», Հետեղով նրա և Գրիգոր Արծրունու օրինակին, մեր միւս խմբազիրներն էլ գրում էին ֆելիչտօններ: Բայց Ասիացին մի հատ էր մեզանում, ուռասհայ գրողների մէջ նա ամենատաղանդաւոր երգիծաբանն էր: Երգիծաբանութիւնը նա պահպանեց տպագրական խօսքի բարձրութեան վրա. ունենալով ծաղրելու, ծիծաղիցնելու շնորհք, նա երբէք, իր հակառակորդների նման, չը ստորացրեց իրանց գիմելով անմիտ ծամածութիւնների, էժանագին հանապչիութեան: Այդաեղ էլ նա պահվում էր զրական վայելչութեան սահմաններում, զիտէր թէ ինչն է թոյլատրված և ինչն է արգելված զրական էթիկայի կանոններով: Եւ թոյլատրվածի սահմաններում նա անողոք էր, խնայել չը զիտէր. առողջ, բարեկարգիչ ծաղրը, այն ծաղրը, որի միջով, ինչպէս ասում են, արտասունքներ են երեւում, պատկերացնում էր հասարակական ախտերը, հասարակական գործիչներին: Հասարակական ասպարէցն էր ճանաչում Ասիա-

ցին. Նրանից դուրս, մասնաւոր, ընտանեկան հանգամանքները, հակառակորդի անհատական կեանքը գոյութիւն չունէին նրա համար: Լուրջ, կրակոտ, յարձակողական, պատերազմող հրապարակախօսութեան մէջ անխոնջ Արծրունին անխոնջ էր ծաղրի բաժնում: Ասիացին ապրեց մինչև այն օրը, երբ Գրիգոր Արծրունու հետ մտաւ դադաղ: Նա «Մշակի» ամենասարսափելի խայլին էր և գծի տակից միանում էր այն ուժեղ հարուածներին, որոնք ճայթում էին գծի վերևում, առաջնորդողների և այլ յօդուածների մէջ: Ասիացու ֆելիչտօնները, որոնք մօտքան տարի զարդարում էին «Մշակի» էջնորը, մեր հասարակական կեանքի հայելին են. Իւրաքանչիւր փոքր ի շատէ աչքի ընկնող դէպք արձագանք է գտել այդտեղ, իւրաքանչիւր հասարակական հարց արձանագրվել է այնպէս, ինչպէս պարտաւոր է արձանագրել կոչման բարձրութեան վրա կանգնած, լուսամիտ գաղտիարներով տոգորված ֆելիչտօնիստը: Ասիացու ֆելիչտօնների ժողովածուն մի կալէյտօսկօպ է, որի մէջ մեր կեանքի իրողութիւնները իրար յաջորդում են իրանց բազմակողմանի պատկերներով ու դէմքերով...

Մենք գեռ առիթներ շատ կունենանք Ա-

սիացու մօտ գնալու: Տեսնենք առայժմ թէ
ինչ էր տալիս «Մշակի» հրապարակախոսու-
թիւնը 1873 թւականին և յաջորդ երկու տա-
րիները:

«Մշակի» առաջին տարվայ առաջնորդող
յօդուածների ամենամեծ մասը ընդհանուր ըը-
նաւորութիւն է կրում, աւելի ծրագիր է,
սկզբունքների և աշխարհայեցողութիւնների
լայնածաւալ բացատրութիւններ: Երկրորդ
տարվանից հրապարակախոսութեան նիւթը
զգալի կերպով տեղական, մասնաւոր, առօր-
եայ կերպարանք է ստանում: Միմեանց և-
տեից յաճախ երեան են զալիս թիֆլիսի քա-
ղաքային հարցերը (ջրանցք, գաղի լուսաւո-
րութիւն, արհեստագիտական դպրոց), թիֆ-
լիսում նոր բացված առեւտրական հիմնար-
կութիւնները (առեւտրական բանկ, փոխա-
գարձ վարկի ընկերութիւն) և այնու Բայց
թիֆլիսի գործերն ու շահերը, ի հարկէ, մո-
ռացնել չեն տալիս ընդհանուր կուլտուրա-
կան և աղդային շահերը:

Մենք սկզբ է այստեղ նկատենք, որ
թիֆլիսի տեղական հարցերը բացի նրանից,
որ առհասարակ չօշափում էին բարեգործու-
թեան և ինքնագործունէութեան շատ հետա-
քրքրական սկզբունքները, ունէին և այն կա-
րևոր նշանակութիւնը, որ իրանց շուրջն էին

կենտրօնացնում զանազան լեզուներով հրա-
տարակվող լրագիրների համերաշխ գործակ-
ցութիւնը: «Մշակի» և Դրօէրայի» զինակ-
ցութեան մասին մենք խօսեցինք: Մնում է
աւելացնել, որ 1873 թւականից աւելացաւ
մի նոր զինակից էլ և դա „Տիֆլիսկի ՅԵՍΤՆԻԿԵ“ լրագիրն էր:

Ուստաց պարբերական մամուլի միակ ներ-
կայացուցիչը թիֆլիսում „Կավազъ“ պաշ-
տօնական լրագիրն էր, որ իր ուղղութեամբ,
իր կոչումով չէր կարող համապատասխանել մի
հասարակական անկախ քննադատող օրգանի
պահանջներին: Պակասում էր մասնաւոր մի
լրագիր, և այդ պակասը լրացրեց մի հայ,
իշխան կոստանդին Բէհբուտօվ, „Տիֆլի-
սկի ՅԵՍՏՆԻԿԵ“-ի հիմնադիրը և խմբագիրը:
Առաջին տարին նա լոյս էր տեմնում շաբա-
թը երկու անգամ և գեռ բոլորովին կազմա-
կերպված չէր իբրև հրապարակախոսական
օրդան: ունէր աղքատ բովանդակութիւն, իր
էջերը լցնում էր մեծ մասամբ դաստաստա-
նական գործերի մանրամասն հաշիւներով:
Սակայն նոր լրագրի մէջ գնահատելին այն
էր, որ նա իր ուղղութեամբ մօտենում էր
«Մշակին» ու «Դրօէրային» և սրանց հետ
ձեռք ձեռքի տուած էր զնում: Նրա մէջ ար-
ագանք էին զնում այն հարցերը, որոնք

յարուցվում և քննվում էին հայ և վրացական երկու լրագիրների մէջ և այդպիսով ոռւս հասարակութիւնն էլ ծանօթանում էր տեղական լեզուներով հրատարակվող օրգանների հետ։ Այդպիսի մի խղճմատաւոր միջնորդ շատ հարկաւոր էր։ «Մշակը» շուտով էլի ըանակուի բռնվեց „Կավказъ“ լրագրի հետ։ Ասիթներից մէկը դարձեալ մայրենի լեզուի հարցն էր։ «Մշակ»-«Դրօէրա» ցանկալի էին համարում որ նոր բացված քաղաքային արհեստագիտական դպրոցում դասաւութիւնը լինէր տեղական լեզուներով, որպէս զի աշակերտները կարողանան իրանց ստացած զիւտութիւնը տարածել ժողովրդի մէջ, իսկ „Կավказъ“-ը համարում էր այդ միտքը յանցանք պետական լեզուի դէմ։ Բանակուի միւս առիթը հայոց դպրոցների հարցն էր։ „Կավказъ“-ը ծուռ ու գունաւորված տեղեկութիւններ էր տուել այդ դպրոցների մասին, «Մշակը» բողոքեց դրա դէմ։ Անա այդ ընդհարումների միջոցին „Տիֆլիսկի Ենտունիկ“-ը արձանագրում էր իր էջերի մէջ «Մշակի» և «Դրօէրայի» գրուածքները։ Արձրունին յաճախ գրում էր և ոռւս լրագրի մէջ։ Հայ-վրացական համերաշխութիւնը արտայայտվում էր համարեա ամեն մի քայլում։ Զրանցքի և լուստուրութեան հարցերում

«Մշակն» ու «Դրօէրան» ընդդիմադիր կուսակցութիւն կազմեցին, սկսեցին միասին մերկացնել քաղաքային վարչութեան սխալները։ Մի ոմն Ռուկօ արտասահմանեան ինչոր ընկերութիւնների անունից բանակցութիւններ էր սկսել քաղաքի հետ՝ ջրանցքի շինութիւնը և փողոցների լուսաւորութիւնը վերցնելու համար։ «Մշակն» ու «Դրօէրան» սկսեցին մերկացնել Ռուկօին և իրանց ասածները հաստատելու հումար միասին հեռագրով դիմեցին Լօնդօն և պատասխան ստացան թէ Ռուկօի ցոյց տուած ընկերութիւնները գոյութիւն չունեն։ Տպաւորութիւնը ահազին էր, և թէն քաղաքային ինքնալարութեան մէջ գործող մի բարձրաստիճան մարդ ասել էր թէ չը պէտք է ուշագրութիւն դարձնել «Մշակ»-«Դրօէրայի» վրայ, որովհետեւ դրանց խմբագրողները „մալչիշկա“ (երեխայ) են, բայց այդ համերաշխարհը կատարեալ յաղթանակ բերեց և քաղաքը չընկաւ Ռուկօի սարքած թակարդի մէջ։

Երկու լրագիրները շարունակ իրար էին դիմում, իրարից քաղուածքներ էին անում, իրար օգնում էին՝ անտեսական երկոյթները բարեխիցնութեամբ և աղնւութեամբ լուծելու մէջ։ Թէ համերաշխութիւնը, փոխադարձ անկեղծ բարեացակամութիւնը ինչ գեղեցիկ հե-

տեամսկների էին հասցնում, այդ ցոյց է տալիս «Մշակի» և «Դրօէբայի» վերաբերմունքը վաշխառութեան հարցին: Մեր այժմեան օրեւրում, երբ ազգայնամոլութիւնը այնքան կուրացրել է վրացի գործիչների մի մասը, հայերի գէմ համարեա խաչակրաց արշաւանք է քարոզվում և այդ ատելութիւնը հայերի գէմ վրացի ազգայնամոլները հիմնում են այն իրողութեան վրա, որ վրաստանում վաշխառու են մեծ մասամբ հայերը: Մի քանի վաշխառութեան պատճառով ատելութիւն քարոզել մի ամբողջ ազգի գէմ, համարել բոլոր հայերին հարստահարիչ, վաշխառու—այս է մեր օրերի վրացական հայրենասիրութեան ամենամեծ արտայատութիւնը առաջաւոր դասկարգի մի յայտնի շրջանում:

Այսպէս չէր այն ժամանակ, երբ «Մշակն» ու «Դրօէբան» եղբայրացած էին: Այն ժամանակ էլ, ի հարկէ, զոյտութիւն ունէր, և անշուշտ անհամեմատ մեծ չափերով, անտեսական այն սոսկալի դժբախտութիւնը, որ կոչվում է վաշխառութիւն: «Դրօէբան» իր մի յօդուածի մէջ ասում էր որ իրողութիւն է թէ հայերն են գլխաւորապէս վաշխառութեամբ պարապում և այս հանգամնքը առիթ է տալիս անզարդացած վրացի ժողովրդին վաշխառու համարել բոլոր հայերին,

ուրեմն և ատել ամբողջ հայ ժողովուրդը: Բայց դա մի սիսակացողութիւն է, վաշխառութիւնը կապ չունի ազգայնութեան հետ, նա տնտեսական մի երեսյթ է և գոյութիւն ունի բոլոր ազգերի մէջ: Վաշխառութեան գէմ պէտք է կուել անտեսական խելացի միջոցներով և այդ գիբբախտութիւնից ազատվելը պիտի աչքի առաջ ունենայ ժողովուրդը և ոչ թէ ազգայնական հարց դարձնէ նրան:

Արծրունին, ծանօթացնելով ընթերցողներին իր գանչակից լրագրի հայեացքների հետ, մի առաջնորդողի մէջ նոյնպէս պարզեց վաշխառութեան էութիւնը և հասկացրեց թէ նրգան մեծ արատ է բերում վաշխառութիւնը հայ ազգի անուսն:

Մինչեւ որ մենք աշխատում ենք հասկացնել երկու հարեւան ազգութիւնների մէջ բարոյական կապերի, փոխազարձ օգնութեան, եղբայրասիրութեան, ընդհանուր շամերի օգուտը,—մեր հայրենակիցների մի խումբ (որք պատիւ չեն անում մեր ազգութեանը) իրանց հարստանարող վարմունքով ոչ թէ միայն հեռացնում են մեզանից վրաց գիւղական ազգաբնակութեան համակրութիւնը, բայց եւ իրանց վնասակար գործունէութեամբ համոււմ են բոլորովին հակառակ հնատեւանքին՝ նրանք թշնամախնում են կովկասեան վրաց ազգաբնակութիւնը դէպի հայոց տարրը, ատելի են անում հալոց անունը հարեւան եւ նոյն օգուտներ ունեցող ազգի մէջ...

Ե՞րբ պիտի հասկանանք որ հայը ամեն տեղ, թէ ընտանիքի, թէ հասարակութեան մէջ ինքն իր ամենամեծ թշնամի է, որ եթէ նրան չեն սիրում, այդ այն պատճառով է, որ նա չէ իմանում իրան սիրելի անել... Հայը զարմանում է որ նրան չեն սիրում, —բայց չէ մտածում որ նա մինչեւ այժմ ոչինչ չէ արել, որ իրան սիրել տար (№ 26, 1873):

Հայ-լրացական այս համերաշխութիւնը լրաւական երկար տևեց: 1876 թւին տօնվում էր «Դրօէքայի» տասնտամեակը: Տօնին մասնակցում էին և հայ երիտասարդները: Արձրունին ճաշի ժամանակ գիմեց «Դրօէքայի» խմբագիր Մեսլիխն մի փոքրիկ ճառով, որի մէջ ասում էր թէ մինչդեռ Եւրօպայում լրագրութիւնը մի շահաւետ գործ է, մեզանում նա զրկանքների և արգելքների հետ է կապված:

Այդ հանգամանքը—շարունակեց Արձրունին—լաւ յայտնի է եւ իմ բարեկամ Ս. Մեսլիխն, որ իր լրագրի աջողութեամբ պարտական է ոչ թէ միայն իր խելքին եւ ընդունակութեանը, բայց եւ այն հանգամանքին, որ նա լաւ հասկացել է հասարակութեան բարոյական ցաւերը եւ տանչանքները, ինքն սովորած լինելով զրկանքներին եւ տանջինում: Զարմանալի է որ ունեւոր մարդիկներին երբէք վիճակված չէ առաջ տանել մտքի պրօպագանդայի գործը, բայց այդ վիճակված է միշտ աղքատ մարդիկներին: Ես կը վերջացնեմ իմ խօսքերը մի ցանկութիւն յայտ-

նելով, որ թէեւ ձեզ կերեւայ գուցէ անտեղի, բայց որ ես համարում եմ նշմարիտ եւ արդար՝ ես ցանկանում նմ ձեզ, իմ բարեկամ, միշտ տանջվել, որ միշտ հասկանաք, ինքներդ զգաք հասարակութեան բարոյական ցաւերը եւ նրա բարոյական տանջանքները:

Բայց այս գեղեցիկ համերաշխութիւնը ընդհատվեց, երբ «Դրօէքան» անցաւ ուրիշ մարդկանց ձեռք, որոնք սկսեցինք ատելութիւն քարոզել հայերի գէմ: Արձրունին ցաւելով էր արձանադրում այս հանգամանքը «Մշակի» մէջ: Նա ինքը անփոփոխ մնաց իր համոզմունքի մէջ ազգերի փոխադարձ համերաշխութեան և եղբայրակցութեան վերաբերմաբ: Այդ լայն, հանրամարդկային գաղափարը Արձրունուն միայն վրացիներին չը մօտեցրեց: «Մշակի» խմբագիրը չէր կարող մոռանալ որ մեր երկրի աղդաբնակութեան մի ահազին մասն էլ թուրքերն են կազմում: Թուրքերի վերաբերմաբը էլ նա ունէր իր համակրութիւնները, բարի կամեցողութիւնը:

1873 թւականի սկզբում Արձրունին բարձրացրեց ժողովրդի համար գիւղատնտեսական լրագիր հրատարակելու հարցը: Նա կովկասեան Գիւղատնտեսութեան Ընկերութեան անդամ էր և առաջարկութիւն մտցրեց որ ընկերութիւնը ձեռնամուխ լինի մի այդպիսի

լրագրի հրատարակութեան: Իր պատրաստած դրաւոր զեկուցման մէջ Արծրունին ասում էր որ զիւղատնտեսական լրագիրը, ժողովրդին բոլորովին մատչելի լինելու համար, պիտի խմբագրվի տեղական լեզուներով: Այս լեզուներից նա առաջմ մասնացոյց էր անում երկուուր—հայերէնը և վրացերէնը: Ցանկալի էր և թուրքերէն լեզուն մացնել լրագրի մէջ, բայց, դժբախտաբար, այդ լեզուով հրատարակող մասնաւոր պարբերական թերթեր չը կան և յայտնի չէ՝ ունի՞ թուրքերէնը այնքան հարստութիւն, որ հայերէնի կամ վրացերէնի նման կարողանայ մի զիտական-ժողովրդական լրագրի լեզու դառնալ:

Գիւղատնտեսական Ընկերութիւնը չը կարողացաւ իրագործել Արծրունու այս առաջարկութիւնը, միջոցների պակասութեան պատճառով, բայց ընդունելով տեղական լեզուների կարեռութիւնը՝ զիւղատնտեսական զիտեկիներ տարածելու մէջ, որոշեց հրատարակել զիւղատնտեսական թերթը միայն վրացերէն լեզուով: Այն ժամանակ Արծրունին յայտնեց «Մշակու» մէջ, որ ինքը կաշխատէ լրացնել Գիւղատնտեսական Ընկերութեան թողած պակասը՝ տպագրելով իր լրագրի մէջ այնպիսի յօդուածներ, որոնք կը ծանօթացնեն հայ ընթերցուին զիւղատնտե-

սութեան զանազան ճիւղերի հետ: Եւ իրաւ, «Մշակը» իր գոյութեան ընթացքում առանձին ուշագրութիւն էր զարձնում զիւղատնտեսութեան վրա. նա տալիս էր բաղմաթիւ գրուածքներ ոչ միայն զիւղատնտեսական ընդհանուր զիտելիքների մասին, այլ և մասնաւորապէս զիւղական տնտեսութեան զանազան ճիւղերի մասին: Այսպէս, 1874 թւականին մենք տեսնում ենք մի շարք մասնագիտական յօդուածներ, որոնք, ըստ երեւոյթին, տեղ չը պիտի ունենային մի գրական-հասարակական լրագրի մէջ: Հայերէն զիւղատնտեսական մի թերթի պարտաւորութիւնները «Մշակը» կատարում էր երկար տարիների ընթացքում և Արծրունին մինչև վերջը համարում էր այդ ճիւղը իր լրագրի կարեռը բաժիններից մէկը:

Իր զեկուցումը կարգալուց մի քանի ամիս յետոյ Արծրունին լսում է որ Բագրում մտադրութիւն կայ մի թուրքերէն լրագիր հիմնելու: Եւ ահա ինչ է զրումնա «Մշակի» մէջ.

Մենք լսում ենք որ Թուրք երիտասարդ Հասան-թէկ Մէլիքօվը, որ զիտաւորութիւն ունի հրատարակել մի թուրքաց լրագիր Բագր քաղաքում, արդէն ներկայացրած է խնդիրը: Անհամթերութեամբ սպասում ենք նոր Թերթի առաջին համարը: Կովկասեան ազգաբնակութեան մէջ Թուրքերը այն մասն էին

կազմում մինչեւ այժմ, որք միշտ յետ էին մնում ընդհանուր շարժումից, չէին մասնակցում մեր ձրգումներին։ Յոյս ունենք որ մեր թուրք եղայրները հասկացան այժմ որքան վնասակար է երկրի բնակիչները լինելով, իրանց օտար համարել երկրի մէջ։ Յոյս ունենք որ հայոց եւ փրաց լրագիրները ոչ թէ միայն խօսքով, բայց եւ գործով կօգնեն նոր թուրքաց թերթին (№ 25, 1873)։

Դա թուրքերէն առաջին լրագիրն էր, «Արքնչի» անունով։ Մինչև թոյլտութիւն ստանալը, թուրքերէն տառեր պատրաստելը անցաւ երկու տարի։ Եւ այդ ժամանակամիջոցում Արծրունին մի քանի անդամ առիթունեցաւ իր համակրանքներն ու բարի ցանկութիւնները յայտնելու թուրքերէն լրագրի առիթով, այնպէս որ խմբագիր Հասան-բէկ Մէլիքօվը 1875 թւին «Մշակի» մէջ մի նամակ տպեց, որով իր չնորհակալութիւնն էր յայտնում Արծրունուն և ասում էր թէ «Արքնչին» եղայրաբար ձեռք է մեկնում թէ «Մշակին» և թէ միւս լրագիրներին։ Ահա ինչ հրաշքներ էր սկսել ցոյց տալ մեր բազմացել և բազմալեզու երկրում հանրամարդկային եղայրակցութեան դադախարով առդրված խաղաղ քաղաքակրթական շարժումը։ Ո՞րքան գեղեցիկ տեսարան մի երկրի համար, ուր գարերով ազգերն ու լեզուները ապրել էին փոխադարձ կատաղի ատելութեան, ա-

ըիւնահեղ թշնամութիւնների մէջ, Նրանց այժմ միացնում էր ընդհանուր շահը—առաջադիմութիւնը քաղաքակրթութեան շաւղի վրա։ Առայժմ այդ եղայրական համերաշխութիւնը երեք ազգերի երիտասարդութեան բերանով էր քարոզվում և միայն լրագրութեան մէջ էր արձագանք դտնում։ Դա մի սերմ էր դեռ, բայց դրված ամենից վատահելի, ամենից պտղատու հողի մէջ։ Մնում էր ցանկալ որ ժիր, արթուն ու եռանդու մըշակներ չը պակասեն՝ այդ սերմը պահելու, խնամելու և աճեցնելու համար։ Դժբախտաբար, մեր երկիրը այդպիսի մշակներ շատ չունեցաւ։

Այդ օրտաշարժ համերաշխութիւնը չէր ցոյց տալիս արդեօք թէ նրգան յաւ էր հասկացնել Գրիգոր Արծրունին առաջադիմութեան էութիւնը։ Պահանջելով անհատի առաջացացում, համարելով ազգերը նոյնալիսի անհատներ մարդկութեան ընդհանուր ընտանիքի մէջ, պահանջելով որ այդ ազգ-անհատները չը զրկվեն առանձնապէս զարգանալու, իրանց առանձնայատկութիւններով ապրելու և առաջտղիմելու իրաւունքից, նա տեսնում էր որ այդ գաղափարը արդէն իր պատուղներն էր ցոյց տալիս կեանքի մէջ. աղդերի ասպարեզից վերանում էին նախապա-

շարմունքները, ցեղային ատելութիւնները և դրանց տեղ հաստատվում էր փոխադարձ յարգանք, համերաշխութիւն։ Հասկանալի էր դառնում որ իւրաքանչիւր աղջի համար բաւական տեղ կայ մեր աշխարհում՝ աշխատելու, երջանիկ ինելու համար։

Անհատական զարգացման նոյն սկզբունքը ցոյց էր տալիս Արծրունուն և մեր մոռացված գաւառները։ Հասարակութեան հաւաքական մասնիկներ կազմող այդ գաւառները նոյնպէս պիտի ինքնուրոյնարար զարգանային։ Եւ այդ ինքնուրոյնութիւնը Արծրունին պահանջում էր, ասկացուցանելով որ գաւառներում էլ պիտի սկսվի և զարդանայ լրագրութիւնը։

Լուր կար, որ Բագւում հիմնվում է մի նոր հայերէն լրագիր, իսկ Վանում ուղում են վերանորոգել «Արծիւ Վասպուրականի» ամսագրի հրատարակութիւնը։ Այս առիթով Արծրունին այսպիսի խորհրդածութիւններ էր անում։ Հայ լրագրութիւնը սկսվեց հայկական հեռաւոր գաղթավայրերում, մի ժամանակ հնարաւոր և հասկանալի էր որ Վենետիկում կամ Մօսկվայում հրատարակվեն այն պարբերականները, որոնք պիտի առաջնորդէին հայ ժողովուրդը։ Այդքան հեռաւոր տեղերից հայ խմբագիրները չէին կարող ուսումնասիրել հայկական կեանքը, նրանք

միայն կարող էին քարողնել։ Այժմ հայ լրագիրները հրատարակվում են արդէն հայութեան շատ մօտիկ գաղթավայրերում—Թիֆլիսում և Կ. Պօլսում։ Բայց դա վերջնական նպատակ չէ. իր իսկական կոչումը հայ լրագրութիւնը կարող է կատարել ժողովրդի մէջ, բուն հայրենիքում։ Բայց դա առայժմ անկարելի է։ Մնում է որ մեր դաւառներում հիմնվեն տեղական լրագիրներ, որոնք նիւթ կը տան Թիֆլիսի և Կ. Պօլսի լրագիրներին։ Այդ տեղական թերթերը հում նիւթ մատակարարողներ կը լինեն, նրանք կը ներկայացնեն իրանց գաւառների հարցերն ու կարիքները, իսկ կենտրօնական քաղաքների լրագրութիւնը կը մշակէ այդ նիւթերը։

Պէտք է ամենք որ Արծրունին չէր էլ ընդունում թէ առհասարակ լրագիրը պիտի մշակէ նիւթերը, մանրամասն, ինսամքով կատարված ուսումնասիրութիւններ տայ։ Այդ պաշտօնը արդէն պէսաք է թողնել ամսագրին։ Ամսագրի վերաբերմամբ Արծրունին պահանջում էր որ նա չը լինի պատահական անկապ յօդուածների մի ժողովածու, այլ որոշ ուղղութեամբ ու ծրագրով հրատարակվող մի պարբերական օրդան, որ հաւաքում, դասաւորում է լրագրիների տուած նիւթերը, լուսաբանում է նրանց։ Հայերի մէջ իսկական

ամսագիր, այս բառի եւրօպական նշանակութեամբ, դեռ չէր եղել^{*)}:

Հանդիսանալով մեր գործերի, դործիների, հին ու նոր սերունդների, հիմնարկութիւնների քննադատ, նրանց պակասութիւնները խարազանող ու մերկացնող, Արծրունին, բնականաբար, չէր կարող աչքից դցել մեր ազգային հին և կարեոր հիմնարկութիւնը—եկեղեցին, և «Մշակի» երկրորդ տարվանից առանձին ուշադրութիւն է դարձնում եկեղեցու և եկեղեցականների վրա: Ինքն ըստ ինքեան պարզ է, որ Արծրունու պէս մի մարդը չէր կարող գոհ մնալ մեր եկեղեցու ներկայ դրութիւնից: Այդ բանը բաւական էր, որ նրա հակառակորդները ազմուկ բարձրացնէին թէ նա եկեղեցու թշնամին է, ուղում է քանդել-ոչնչացնել եկեղեցին, անհաւատութիւն տարածել և այլն: Բայց այս ազմուկը մի նոր բան չէր մեղանում: Տարիներ առաջ նոյն ազմուկը բարձրացրած էր Ստեփանոս Նազարեանցի դէմ այն պատճառով, որ նա կամենում էր տեսնել իր մայրենի ե-

*) Գրիգոր Արծրունու փայփայած մտքելից մէկն էր՝ հրատարակել «Մշակի» հետ և մի ամսագիր: Այս ցանկութիւնը նա յանախ յայտնում էր մանաւանդ իր կեանքի վերջին տարիներում: Բայց նա չը կարողացաւ այդ գիտարարութիւնը իրագործելու փորձեր էլ անել:

կեղեցին բարեկարգված, ժամանակի պահանջներին համապատասխանող, ուրեմն և մի ուժեղ հաստատութիւն:

Արծրունին, չը լինելով նազարեանց կրօնական համոզմունքների կողմից, նազարեանցի պէս մեծ կարևորութիւն էր տալիս հայոց եկեղեցուն, համոզված էր որ եկեղեցին մեղ պէս մի ազդի համար չէ կարող իր դերը վերջացրած համարվել: Ամբողջ հարցը նրա մէջ էր թէ եկեղեցին նրբան պատրաստված կը լինի իրրե դաստիարակող, հովվող հիմնարկութիւն, նրբան կարող կը լինի հայ ժողովրդի հոգեկան պահանջներին բաւականութիւն տալու: Նազարեանցի պէս Արծրունին էլ ոչինչ միսիթարական բան չէր տեսնում մեր եկեղեցու վարչական կազմակերպութեան մէջ և նա էլ պահանջում էր հիմնաւոր վերանորոգումներ: Բայց նազարեանցը վերանորոգումների որոշ, մանրամասն ծրագիր չէր առաջարկում: Նա միայն ցոյց էր տալիս անհրաժեշտութիւնը, ընդհանուր ըսկղրունքները, պախարակելով եկեղեցականների անշարժութիւնը, ծիսականութեան տիրապեսութիւնը և ոյու բացակայութիւնը: Այն ինչ Գրիգոր Արծրունին հէնց սկզբից որոշակի է դնում իր պահանջները, անուանադիր յիշատակում է թէ ինչեր պէտք է փոփոխել:

Կարեոր է որ մենք փոքր ինչ մանրամասն կերպով ծանօթանանք այս հարցի հետ, քանի որ Գրիգոր Արծրունու դործունէութեան մէջ շատ նշանաւոր տեղ է բռնում Եկեղեցին, քանի որ այդ հաստատութեան շուրջն էր, որ նա մղել է իր ամենախիստ պատերազմները և վաստակել է թշնամիների բանակներ:

Իր այն յօդուածներում, որոնք տպվեցան «Հայկական Աշխարհի» մէջ և «Մշակի» առաջին տարվայ մէջ, Արծրունին շատ անդամ շնչտել է որ ժամանակակից քաղաքակրթութիւնը քրիստոնէութեան արդասիքն է, որ քրիստոնէական վարդապետութիւնը հիմնված է մարդկային այն ամենանուիրական, ամենաբարձր գաղափարների վրա, որոնք են ազատութիւն, հաւասարութիւն և եղբայրութիւն: Բայց միենոյն ժամանակ Արծրունին հասկացնել էր տալիս, որ ինքը քրիստոնէութիւնը չէ շփոթում աստուածաբանութեան հետ: Այլ է քրիստոնէութիւնը, այլ է աստուածաբանութիւնը: Եկեղեցին—սա համաշխարհային պատմութեան մէջ ապացուցված տարրական ճշմարտութիւն է—այն չէ, ինչ էր այն ժամանակ, երբ աստուածաբանութիւն չը կար, երբ առաջին դարերի քրիստոնեաները, պարզ ու համահաւասար մարդիկ, աշխատում էին լրագործել Աւետարա-

նի վարդապետութիւնները: Եկեղեցին ընկաւ փառքի, իշխանութեան, տիրապետութեան ետերց և հեռացաւ առաջին դարերի քրիստոնէութիւնից: Փառքի, զարդերի, տիրապետութեան ներկայացուցիչ հոգեորականութեան բոլոր ձգտումների և իդէալների իրատացումը պապականութիւնն է, որ 1870 թւականին սեփականացրեց իրան նոյն իսկ մի այնպիսի յատկութիւն, որից զուրկ է մարդը—անսխալականութիւնը:

Այստեղից արդէն պարզ է թէ ինչ վերաբերմունք պիտի ունենար Արծրունին դէպի Եկեղեցին: Բայց մինչև 1873 թւականը նա դուրս չէ զալիս այս ընդհանուր դատողութիւնների շրջանից: Մինչև 1873 թւականը նա իր դէմ ունէր հին սերունդը, «սպառված երիտասարդութիւնը», բայց Եկեղեցականութիւնը գեռ առիթ չունէր նրա հակառակորդը լինելու: Էջմիածնի «Արարատը» 1872 թւականին զանում էր որ «Մշակի» «ցարդ հրատարակեալ մի քանի թերթից պարունակութիւնը կապացուցանեն որ օդաւեէտ և արդիւնաւոր կարող է լինել Ազգիս համար»^{*)}): Բայց ահա «Մշակի» մէջ Արծրունին տպում է «Հոգեորականութիւն և Ժողովուրդ» առաջ-

*) 1872, № 1.

Նորդողը (№ 9): Այդտեղ նա նորից կրկնում է որ եկեղեցին շատ է հեռացել առաջին դարերի քրիստոնէութիւնից, որ անբնական կուսակրօնութիւնը յետոյ է մտցրվել նրա մէջ։ Դիմելով յատկապէս հայոց եկեղեցուն, նա յայտնում էր որ այդ եկեղեցին էլ բացառութիւն չէ կազմում, որ նա շեղվել է իր նախնական դրութիւնից։

Միթէ նա (եկեղեցին) նոյն է որ Լուսաւորչի ժի ժամանակն էր,—հարցնում է Արձրունին։ Միթէ մեր այժմնան հոգեւորականները նոյն խորին յարգանք եւ պատիւ ունեն ժողովրդի մէջ, ինչպէս իմնէր նորի հայ հոգեւորականները, որք առաջնորդում էին իրանց հօր ծեռովով ժողովրդական շարժմանը Զբագաշտի հետեւղների դէմ։ Միթէ նրանք ժողովրդական են, ինչպէս առաջ։

Բնութեանը համեմատ ընտանեկան կեանքից հեռու, ժողովրդական փողերը վատնող, խոռվութիւն դրոյ, իմարդիգաններ վարող, փառքի պատուանշաններին հետեւող, անգործ, անշարժ, տղէտ, մոլեւանդ, ժամանակակից գիտութենից եւ նշաբատութենից յետ մնացող, ժողովրդական կրթութիւնը խօսրով քարոզող, բայց գործով նրա զարգացմանը արգելող, ամեն նորութեան եւ լուսաւորութեան ընդիմադրող մարդիկ։ Սրանք են ժողովրդական հոգեւորականների մեծ մասը։

Եւ զարմանալի չէ, որ քանի գնում է, հայոց եկեղեցու ծոցից, Սուրբ Լուսաւորչի ջանքերով մաքուր հիմնած, բայց մեր աթեաններով եւ քահանաներով սկզբնական մաքրութեամբ չը պահպանված

եկեղեցուց, անդադար անջատվում են եւ թշնամանում են մեր եղբայրները՝ մին բողոքական է դառնում, միւսը կաթոլիկ։

Սիմօնականութիւնը, սրբավաճառութիւնը, կաշառակերութիւնը այնքան զարգացած են, այնքան բացարձակ կերպով են գործադրվում, որ ժողովուրդը վազուց հեռացած կը լինէր եկեղեցուց, եթէ այնքան պինդ կապված չը լինէր նրա անցեալի հետ, եթէ նա պաշտելիս չը լինէր Լուսաւորչի հիմնած եկեղեցին։

Աստուած տայ որ ժողովուրդը այնքան զարգանայ, որ հասկանալով ձեր անիրաւութիւնները ու հարստանարութիւնները, մեղաղիր միայն ձեզ, պաշտօնեաներին, բայց ոչ թէ իսկոյն անջատվի, զնայ բողոքական կամ կաթոլիկ զառնայ, վրէժինիր լինելով ձեր մնջող վարմունքից... որ լուսաւորվելով, սովորի զանազանել սկզբ ը գործ ադրութիւնից, սովորի պաշտել մեր եկեղեցու մաքուր հիմքը հոգեւորականների անմաքուր վարմունքից...»

Այն ժամանակ զգոյշ լինէք... դուք կը կորցնէք ձեր ժողովրդականութիւնը։

Եւ այն ժամանակ ժողովուրդը զարգանալով եւ ողով հայ մնալով, չի ընդունի բողոքականութիւն, կաթոլիկութիւն, կամ այլ կրօնք,—ոչ, նա կը հանդիսանայ պատահական գաղափարի, ընդդէմ նրա անարժան ժամանակակից պաշտօնեանների։

Սա առաջին հարուածն էր: Ինչպէս միշտ,
չը հասկացան թէ ինչ է այդ հարուածի միտ-
քը. ինչպէս միշտ, հոգեորականութիւնը սկսեց
բացատրել այս պարզ, հանրամատչելի պա-
հանջները այն մտքով թէ Արծրունին ան-
պատւում է մեր եկեղեցին, ուղում է ոչնչա-
ցնել նրա հեղինակութիւնը, անջատել ժո-
ղովուրդը իր հոգեոր հովիւներից: «Մշակը»
իր ուրիշ յօդուածներում էլ պարզ ձեակեր-
պեց իր պահանջները: Վերադառնանք, ասում
էր նա, մեր եկեղեցու նախնական պարզ
ձեին, վերակազմնաք մեր եկեղեցին այնպէս,
ինչպէս նա դոյութիւն ունէր քրիստոնէու-
թեան առաջին դարերում. թող չը լինի կու-
սակրօն հոգեորականութիւն, թող եսլիսկո-
պոսները, վարդապետները ամուսնացած մար-
դիկ լինեն, ինչպէս ամուսնացած էին Գրի-
գոր Լուսաւորիչը և նրա ժառանգները: Գրլ-
խաւոր ուշադրութիւնը դարձնելով քահանա-
ների վրա, «Մշակը» պահանջում էր, ինչպէս
տեսանք, որ քահանան լաւ պատրաստված
լինի ժողովուրդը առաջնորդելու, նրա ցա-
ւերն ու կարիքները ամոգելու համար: Աս-
տուածաբան քահանաներ չեն մեղ հարկաւոր,
այլ կրթված, ժողովրդից իրանց դիտութեամբ
բարձր կանգնած հովիւներ: Հեռացնենք կը-
դերականութեան ովին, թող մեր եկեղեցում

միայն մի բան լինի հիմք, խարիսխ—ժողո-
վրդականութիւն: Մենք ցաւում, արտասվում
ենք որ օտար քարողիները, միսիօնարները
դալիս են, հանում հային իր եկեղեցու ծո-
ցից: Բայց ցաւելով արտասվելով ինչ դուրս
կը զայ: Կաղմակերպվենք և մենք. պրօպա-
դանդային հակադրենք պրօպագանդա. օտար
միսիօնարների դէմ հանենք մեր միսիօնար-
ներին, որոնք քարողեն, թոյլ չը տան կրօ-
նափոխութիւն:

Ծանրակշիռ, կարեոր հարցեր էին սրանք,
կարօտ ամենալուրջ ուշադրութեան: Կարելի
չէր պահանջել, որ եկեղեցականները և նրանց
կուսակիցները անպատճառ համաձայն լինէին
Արծրունու հետ այս հարցերի մէջ. բայց պա-
հանջլում էր որ այդ առաջարկութիւնները
գոնէ քննվէին լրջութեամբ, որ հակառակորդ-
ները իրանց ծրագիրները առաջարկէին՝ դոյ-
ութիւն ունեցող և ամենքի համար անու-
րանալի պակասութիւնները վերացնելու հա-
մար: Այդ տեսակ վերաբերմունք տեղի չու-
նեցաւ. դրա փոխարէն լսվեց էլի նոյն հին
երդը. առաջ քաշվեց աստուածաբանութիւնը,
բայց աւելի կարեոր համարվեց բարձրացնել
վայնասուն եկեղեցին քանդողների, օտարու-
թիւն մտցնողների դէմ: «Արարատը» 1874-ին
արդէն կիսատ-պոատ ակնարկներով խօսում

Էր օտարներին վաճառված մարդկանց մասին, հասկացնում էր որ հարազատ հայը չէ կարող և չը պիտի խօսէ իր եկեղեցու պահասութիւնների մասին:

«Մեղուի» համար հօ երկնքից իջած մասնանայ էր «Մշակի» բռնած այս ուղղութիւնը: Այժմ հօ կարելի էր ապացուշանել որ վերանորոգութիւններ պահանջող «Մշակը» եկեղեցու, ուրեմն և աղդութեան հիմքերը փորող մի թշնամի է: Եւ այդպէս անողը այն իսկ «Մեղուն» էր, որ խունկ էր ծխում Ստեփանոս Նազարեանցի առջև, որ «Հիւսիսափայլի» ամենամօտիկ բարեկամն էր ձեւնում: Նրա համար ոչինչ նշանակութիւն չունէր որ «Մշակը» կրկնում էր գշեւսիսափայլի» պահանջները. հարկաւոր էր հակառակութեան նիւթ, և «Մեղուն» ջուխտ ձեռքով գրկեց եկեղեցու բարեփոխութեան հարցը, որպէսզի ցոյց տայ թէ ինքն է հարազատ հայ, իսկ իր հակառակորդը օտարացած է, կօսմօպօլիտ է, ֆարմասօն է և այն: «Մեղուն» մտաւ այն գերի մէջ, որ ինքն էր իր ձեռքով դատապարտել վաթսունական թւականներին: Մեր ներկայ գործի առաջին հատորում մենք ցոյց տուինք թէ ինչպէս լաւ էր «Մեղուն» նկարագրել այդ ժամանակ իր պալագայ կերպարանքը:

Չենք կարող այստեղ հետեւել այն բանակուխն, որ ծագեց «Մշակի» յարուցած այս հարցերի առիթով: Մենք դեռ ապագայում էլ չատ պիտի տեսնենք այսպիսի բանակուխներ: Արձանագրենք այստեղ այն փաստը, որ «Մըշակի» երկրորդ տարեցընից մեր հոգեորականութիւնն էլ կանգնած է նրա թշնամիների շարքում և աեսնենք թէ սկզբունքի ուրիշինչ հարցեր էր գնում Արծրունին եկեղեցու վերաբերմամբ:

Հոգեորականների սովորութիւնն է ասել թէ իրանք են կազմում եկեղեցին, թէ իրանք են պահում-պահապահում եկեղեցին: Դա մեծ սխալ է, եկեղեցին կազմում են ժողովուրդը և հոգեորականները: Մի ժամանակ, օրինակ հինգերորդ դարում, հոգեորականներն էին առաջնորդում աշխարհականներին, որովհետեւ նրանք աշխարհականներից շատ էին զարգացած: Այժմ այդպէս չէ: Այժմ գիտութիւնը, կրթութիւնը աշխարհականների ձեռքին է և հոգեորականութիւնը առանց աշխարհականների ոչինչ չէ կարող անել: Եկեղեցու պաշտօնեանները չեն կարող մնալ առանց ուսման, առանց գիտութեան, իսկ այդ բանը նրանց կարող է տալ միայն աշխարհական դասը. հետեւաբար, ինչպէս են կարող հոգեորականները եկեղեցու պաշտպան հանդիսանալ,

միայն իրանց սեփականացնել եկեղեցին պաշտպանելու իրաւունքը՝ առանց աշխարհականների օգնութեան։ Հարկաւոր է, ուրեմն, սերտ կապակցութիւն այդ երկու տարրերի մէջ, հարկաւոր է հասկանալ որ հոգեորականը առանց աշխարհականի ոչինչ է։

Կան բթամիտներ, որոնք մեղագրում են թէ «Աշակը» հոգեորականութեան թշնամի է, — ասում է Արծրունին և շարունակում է։

Այն, մենք թշնամի ենք տղիտութեան, — ուրեմն եւ այն հոգեորականների, որոնց մէջ նշմարում ենք այդ հակածնկերական եւ հակաքրիստոնէական յատկութիւնը։

Մենք թշնամի ենք հար ստահարութեան, — ուրեմն եւ այն հոգեորականների, որոնց մէջ նշմարում ենք այդ հակածնկերական եւ հակաքրիստոնէական յատկութիւնը։

Բայց կարղ ենք մենք արդեօք թշնամի լինել նոցա, որք իրանց պաշտօնը կատարում են ճշտութեամբ, որք հասկացել են իրանց կոչումը, որք արժանի են այդ կոչման։

Ի հարկէ ոչ։

Այժմ հարցնում էք՝ ինչ ենք պահանջում հոգեորականութիւնից։

Նախ պահանջում ենք որ նա թէ մտաւորապէս, թէ բարոյապէս բարձր լինէր մնացած հասարակութիւնից, եթէ ոչ՝ նրա դյութիւնը հասարակութեան մէջ ոչինչ նշանակութիւն չունի, նա բոլորովին անօգուտ է։ Եթէ ես ոչխար եմ, իսկ զուք իմ հովիւ, — պէտք է այնքան բարձր լինէք. ինձանից՝ թէ ձեր

բարոյականութեամբ, թէ ձեր ուսումով, որ ես կամայ ակամայ ենթարկվեմ, խոնարհվեմ ձեր առջեւ։ Ես ժողովրդի մարդ լինելով, պէտք է ձեր բարոյականութիւնից օրինակ առնեմ, ձեր բարողներից մը տաւորապէս շանվեմ։ Եթէ ոչ, ինչ կը դուքս զայ։

Դուքս կը զայ, որ վարժապատը աւելի տը թէ քան թէ քան թէ աշակերտը... ի հարկէ աշակերտըն ել նորանից ոչինչ սովորել չէ կարող։

Զարմանալին այն է, որ այդքան պարզ, այդքան հասկանալի, տարրական պահանջը վիճելի էր համարվում և այժմ էլ համարվում է, երբ խօսքը մեր հոգեորականութեան է գալիս։ Արծրունին իբրև մի նմուշ վերցնում էր էջմիածնի Արարատը։

Ոչ չէ հաւատում մեզ որ մեր հոգեորականութիւնը հայերէն, այսինքն կենդանի, կանօնաւոր շնարին է այժմ խօսել եւ հասկացնել իր մտքերը թէ լրազրի, թէ ուսումնարանի, թէ քարոզի մէջ, — թող վեր առնի «Արարատ» ամսագրի, մեր հոգեորականութեան այդ օր գան ի մի համար, — եւ կը տեսնէ թէ ինչ խայտառակ լեզուով է զրվում այդ ամսագիրը՝ ոչ զրաբու ոչ աշխարհաբառ, ամեն տեղ ոչ թէ միայն հայոց լեզուի ոգու, բայց եւ ընդհանուր մարդկային առողջ զատողութեան դէմ լեզուի լօգիկական սիսալներ։

Իսկ հմտութիւնները թէ աստուածաբանական, թէ բնագիտական, թէ աշխարհագրական, թէ պատմական, — Աստուած աղատէ։

Եւ սրանք պէտք է մեզ բան սովորեցնեն։

Հարցը այնքան պարզ է, որ ամեն մէկը միայն բացասական պատասխան կարող էր տալ: Բայց հոգևորականներն ու նրանց կուսակիցները երկար ու բարակ մտածելիք չունեին. կար պատրաստ պատասխանը, և դա այն էր որ «Մշակը» եկեղեցու երդուեալ թրշնամին է: Եւ երբ այդպէս էր այս պարզ ու անպաճոյն հարցի մէջ, հասկանալի է թէ ինչ կը լինէր այն դէպքերում, երբ «Մշակը» ցընցող, արմատական պահանջներ էր դնում: Այդպիսի պահանջներից յիշենք ժամասացութեան լեզուի հարցը: Արծրունին ասում էր որ ժողովուրդը եկեղեցում ոչինչ չէ հասկանում, որովհետև ժամասացութեան պրաբար լեզուն նրան միանդամայն անմատչելի է: Նա պահանջում էր որ եկեղեցական դրգերը աշխարհաբարի թարդմանվեն: Եւ ամենից առաջ թարդմանել հարկաւոր էր ս. Գիրքը: Այս պահանջը շատ վաղուց, դեռ 1850-ական թւականների սկզբում դրել էր Ստեփանոս Նաղարեանցը: Բայց այժմ էլ, 20—25 տարուց յետոյ էլ, այդ պահանջը անհասկանալի, անդործադրելի էր համարվում հոգևորականների կողմից և Գրիգոր Արծրունին ստիպված էր յօդուածների մի շարք նուիրել այդ հարցին, նոյն իսկ թարգմանել կտորներ ս.

Գրքից՝ ապացուցանելու համար թէ թարգմանել կարելի է և հեշտ է:

Խօսելով կրօնի և եկեղեցու մասին, Արծրունին չէր կարող առանց ուշադրութեան թողնել և մի մեծ հարց, որ գոյութիւն ունէր մեղանում վաղուց: Դա կրօնի և ազգութեան հարցն էր: Մեղանում, ինչպէս յայտնի է, կորել էր ազգութեան ճշմարիտ միավը, նա դարձել էր կրօնի կամ եկեղեցու հասկացողութիւն: Հայը նա էր, ով պատկանում էր լուսաւորչական եկեղեցուն. հեռանալ այդ եկեղեցուց, նշանակում էր հեռանալ հայութիւնից:

Գրիգոր Արծրունուց առաջ շատերն էին աշխատել ցոյց տալու որ կրօն և ազգութիւն տարբեր բաներ են: Ստեփանոս Նաղարեանցի կենսագրութեան մէջ մենք դրինք այդ նոր շարժման պատմութիւնը: Շարժումը սկսվեց կ. Պօլսում, իսկ ոռոսահայերի մէջ Նաղարեանցը առաջինն էր, որ սկսեց քարոզել թէ լուսաւորչական եկեղեցուց դուրս էլ հայը շարունակում է հայ մնալ: Արծրունին նոյն այդ հարցին դիմեց «Մշակի» հրատարակութեան երկրորդ տարին (№ 24): Նա էլ, ի հարկէ, կրկնեց այն, ինչ ասել էին մեր լաւագոյն դործիչները: Բայց այստեղ մենք կը բաւականանք լոկ այս իրողութիւնը յիշատակելով:

Մենք շուտով կը տեսնենք որ Արծրունուն
վիճակված էր այս հարցի առիթով մի երկաւ-
րատե, ահագին կոփւ սկսել: 1873-ի այս ա-
ռաջնորդողը այդ մեծ պայքարի առաջա-
րանն էր:

Այն, այսպիսի հարցերը մեզանում մեղք,
սրբազնութիւն էին հրատարակվում: Ան-
միտ հակառակութիւնը ուրանում էր ամեն
մի, նոյն իսկ համատարած ձշմարտութիւն:
Եւ Գրիգոր Արծրունին իր տեսութիւններից
մէկի մէջ (№ 1, 1875) ասում էր.

Մենք սկսեցինք հրատարակել մեր Թերթը, սկսե-
ցինք ամենքին մեր կ ա ր ծ ի ը ո ւ ղ ի ղ ե ր ե-
ս ի ն ա ս ե լ... Ինը ու նոր սերունդ, հոգեւորական-
ներ, կանայք, մանկավարժներ, դիւլացիներ, —ա-
մենքը, որք անցան մեր դրչի տակով, միթէ սպա-
սում էին որ մենք լրազի ենք սկսում հրատարա-
կել այն նպատակով, որ շողոք ո թ ե ն ք...

Մեր այդ բոլոր հասարակական տարրերից երեք
ամենաուժեղ, ամենանշանաւոր տարրեր մեզ ատելով
ատեցին, դարձան մեր անհաջող թշնամիներ...

Հին սերունդ՝ քարոյական անուն ու թե ան ն ե ր-
կ ա յ ա ց ո ւ ց ի չ չ :

Նոր սերունդ, ուսումնական երիտասարդութիւն՝
գիտութեան ներկայացուցիչ:

Հոգեւորականներ՝ կ ը օ ն ք ի ներկայացուցիչներ:
Սյու երեք, մեր հասարակութեան մէջ ամենա-
նշանաւոր, ամենամեծ հեղինակութիւն ունեցող գոր-
ծիչները ինչպէս վարվեցին մեզ հետ...

Ա, ո ա զ ի ն ը սկսեց բերանացի անձքներ Թա-
փել մեր զլիխն:

Ե ր կ ը ո ր դ ը, որ առաջ երբէք չէր մտածում
կարդալու, զրելու եւ մտաւորապէս պարապելու,
կազմոց մեզ դէմ մի հակալը ագիր, մեր ամեն
շարժմունք, ամեն մէկ խօսք լրտեսելու եւ աղաւա-
ղած կերպով ներկայացնելու համար:

Ե ր ը ո ր դ ն ե ր ը փորձեցին հանդէս դուրս գալ,
ինչպէս նրանց սովորութեանը վայել է, մասամբ զը-
րականութեան մէջ, մասամբ զանազան այլ գաղտ-
նի միջոցներով...

Արդեօք վախեցաք, արդեօք կատաղեցիք, արդեօք
վրդովիեցաք...

Զը զիտենք, —բայց զիտենք թէ սաստիկ ա տ ե-
ցիք ե ր ե ր դ է լ...

Այդ զիտենք, տեսնում ենք եւ զգում...

Ի՞նչ էր պատճառը:

Արդեօք ծեղ կատաղեցրեց մտքերի նորու թիւ-
նը, խօսքերի ճշմարտ ու թիւնը, կամ զա-
ղափարների ա զ ա տ ո ւ թ ի ւ ն ը...

Երեք պատճառներն էլ, ի հարկէ, կայինտ
Այնքան առատ ու անողորմ էին այդ պատ-
ճառները որ երեք տարվայընթացքում Արծ-
րունին արդէն տեսնում էր և զգում սաս-
տիկ ատելութիւն իր դէմ: Դէմ էր հայոց
ամբողջ մամուլը, դէմ էր ինտելիգենցիայի
մեծ մասը: «Մշակը» մենակ էր, հայերի
մէջ զինակից չունէր: Այդ մենակութիւնը
հարկադրում էր Արծրունուն յուսահատական

մտքեր յայտնել: Այսպէս, նա ասում էր թէ հայ երիտասարդները սխալիեցան որ գնացին Եւրօպա դիտութիւն սովորելու: Նրանք պէտք է նախ գնային արհեստներ սովորելու, որպէսզի վերադառնալով Եւրօպայից, սկսէին կամաց-կամաց պատրաստել հասարակութիւնը: Ուսում առած, դիտնական երիտասարդներ չէին հարկաւոր մեղ, այլ նախ և առաջ՝ կօշկակարներ և այլ արհեստաւորներ: Մենք ոչինչ չը կարողացանք սովորեցնել, բացականչում էր Արծրունին. մեր գրուածքները ոչինչ չը փոփոխեցին մեր կեանքի մէջ. այսպիսի հասարակութեան վրայ մենք յոյս չունենք:

Բայց այդ խօսքերը մենակ մարտնչողի մաղձոտ տրամադրութիւնն են միայն ցոյց տալիս. Արծրունին չէր վախենում իր մենակութիւնից, նա յայտնում էր որ մինչեւ վերջին շունչը պիտի հրատարակէ իր լրագիրը, պիտի գրէ անդադար: Եթէ ժամանակակից հասարակութիւնը ոչինչ յոյս չէ ներշնչում, նա իր յոյսը դրել է ապագայ սերունդի վրա:

Մենք, սակայն, պէտք է ասենք որ հասարակութիւնը լսում էր նրան, ուշազրութեամբ էր լսում: «Մշակը» կարդացվում էր. նա հարկաւոր էր ամենքին, հարկաւոր էր մասնաւանդ նրա թշնամիներին: Զէ որ կովկա-

սեան հայոց մամուլի մէջ յատկապէս նրանով և նրա համար էր ապրում մի հակառագիր: Սյունակի անունը Արծրունին տալիս էր «Մեղուին»: 1872 թւականին, երբ հակառակութիւնից ճնվեց այդ լրագիրը, մենք տեսանք մի թունդ բանակոփէւ Երկրորդ տարվայ առաջին կէսում Արծրունին շատ քիչ էր ուշազրութիւն դարձնում հակալրազրի վրա, որի պաշտօնն էր Վլատենելը իր իւրաքանչիւր շարժուածքը, իւրաքանչիւր քայլը և ներկայացնել աղաւաղած կերպով: Ընդհարումները մի-մի տեղի էին ունենում վելիէտօնների և գաւառական թղթակցութիւնների մէջ: Բայց ամառվանից էլի բորբոքվեց բանակոփէւ: Եւ պատճառը Ներսիսեան դպրոցն էր. այդտեղ Արծրունին հոգաբարձու էր, իսկ Պետրոս Սիմէծնեանցը՝ տեսչի պաշտօնակատար:

Ներսիսեան դպրոցի այն հոգաբարձութիւնը, որ ընտրվեց 1872 թ., և որի մէջ էր և Գրիգոր Արծրունին, իր պաշտօնավարութեան սկզբից նախ տնտեսական հարցերին նուիրեց իր ուշազրութիւնը: Ուսումնական մասը բարեկարգելու համար հոգաբարձութիւնը իր միջից հինգ հոգուց բաղկացած մի մասնաժողով ընտրեց, որի առաջին գործը եղաւ պատրաստական գասարան բաց անելը: Սյունականի համար գանազան ծրագիրը

ներ առաջարկվեցան, բայց լաւագոյն ճառաջից «Մշակի» աշխատակից Վ. Շահնվերդեանի առաջարկածը. ինքը Շահվերդեանն էլ ուսուցիչ հրատիրվեց. նրա «Նկատողական Ուսումնակիրը հրատարակվեց դպրոցի ծախսով: «Մշակր» ուրախութեամբ էր արձանագրում այդ իրողութիւնները:

Հոգաբարձական մասնաժողովը, պատրաստականի հարցը լուծելուց յետոյ, պիտի անդնէր բարձր դասարանների հարցին. բայց յայտնեց, որ չէ կարողանում շարունակել իր պարագմունքները, քանի որ դպրոցը չունի տեսուչ, որ տայ մասնաժողովին հարկաւոր նիւթերն ու տեղեկութիւնները: Տեսչի պաշտօնակատարին մասնաժողովը անսես էր անում. միայն այսքանը բաւական էր որ Պետրոս Սիմէօնեանը հասկանար հոգաբարձութեան տրամադրութիւնը: Տեսչական հարցը դրված էր հոգաբարձական սեղանի վրա. բայց նա գեռ չէր լուծվում: Սկսվեցին դպրոցի տարսնկան քննութիւնները. «Մշակր» մի քանի անդամ շեշտեց թէ որքան անբաւարար է ուսումնական մասը, կրօնի փոխարէն աւանդվում էր միջնադարեան սխօլաստիկա, միւս առարկաների քննութեան մէջ տեղի ուսուցիչների դիտնականութիւնն էր երեսում, քան աշակերտների պատրաստութիւնը:

«Մեղուն» չէր կարող լուռ մնալ. նադարձեալ սկսեց իր աշաւանքը կօսմօպօլիտների դէմ, իր ամբողջ ոյժով ընկաւ «Մշակի» վրա: Բանակուիւը բորբոքվեց դեռ ամառվանից, երբ հոգաբարձութիւնը գեռ որոշ դիրք չէր բռնել տեսչական հարցի մէջ: Յայտնի էր որ հոգաբարձութեան անդամների մեծամասնութիւնը «Մշակի» մարդիկ ևն, ուստի պէտք էր ցոյց տալ որ այդ կօսմօպօլիտները չեն կարող մի ազգային դպրոց կառավարել, որ նրանք ծշմարիտ հայեր չեն և այն: Արծրունին էլ սկսեց մերկացնել «Մեղունի» դաւանանքներին հետեւող մարդկանց: Նա անխնայքննադատում էր նրանց աշխարհայեցողութիւնները, անընդունակութիւնը:

Սովորել են բառեր գործածել, բայց իրանք էլ չեն հասկանում իրանց գործածած բառերի միտքը: Կօսմօպօլիտ... Բայց ինչ է կօսմօպօլիտը. միթէ նա իրաւ այնքան սարսափելի բան է: Կօսմօպօլիտը ի նկատի ունի ամբողջ մարդկութեան բարիքը, բայց նա չէ կարող ծառայել ամբողջ մարդկութեանը, ուստի ծառայում է այն ազգին, որին ինքն է պատկանում, համոզված լինելով որ դրանով նա ծառայում է մարդկութեանը: Ի՞նչպէս է կօսմօպօլիտը կատարում իր ծառայութիւնը: Նա դիտէ որ աղջերը չեն կարող դպրոց-

Նալ, եթէ կղղիանան իրանց մէջ, եթէ չը հասկանան փոխառութեան օրէնքը։ Զէ կարող իինել մի ազգ, որ իր մէջ ունենայ բոլոր մտաւոր պաշարները. իւրաքանչիւր ազգ մարդկութեան գանձարանի մէջ մտցնում է իր մի հարստութիւնը, այդ գանձարանից էլ ազգերը փոխ են առնում այն ամենը, ինչ հարկաւոր է իրանց երջանկութեան համար։ Քրիստոնէութիւնը աշխարհը փոխ առաւ մի փոքրիկ Հրէաստանից։ Մի ժամանակ Յունաստանն էր լուսաւորութեան հայրենիքը և այնտեղ էին դիմում հինգերորդ դարի հայերը, որպէս զի սովորեն, վերադառնան իրանց հայրենիքը և սովորածը տարածեն հայ ժողովրդի մէջ։ Միթէ նրանք էլ այն կօսմօպօլիտներից էին, որոնցից այնքան վախենում է «Մեղուն»։

Իսկ եթէ կան կօսմօպօլիտներ, որոնք ամենեին չեն ճանաչում իրանց ազգը, չեն աշխատում նրա համար, այդ միայն ցոյց է տալիս որ նրանք անբարեխիղն մարդիկ են։ Եւ այդ երևոյթը կարելի է նկատել ոչ միայն կօսմօպօլիտների մէջ։ Միթէ բոլոր վարժապետները լաւ են. միթէ միապետական կոչվողները մի դուռ բռնաւորներ են, կամ ազատամիտ կուսակցութեան պատկանողները մաքուր, աղնիւ մարդիկ են։

Դուք հարկաւոր էք համարում պահպանել հայի վատ կողմերը, հայի պակասութիւնները միայն նրա համար, որ նրանք հայի պակասութիւններն են, — եւ աղաղակ էք բարձրացնում, կօսմօպօլիտ էք կանցում նրանց, որք իրանց կարողութեան չափ օտարների նոր գաղափարները աշխատում են հայացն էլ։

Ցիշեցէք մեր խօսքերը՝ մի տաս տարի չի անցկենայ, եւ մեղուական խօսքը կը դառնայ մի ածական, որ կը նշանակէ խաւարաս էք եւ յետադրանք էմ։

Այդ մարդարէութիւնը Արծրունին գուրս էք բերում այն առատ փաստերից, որ տալիս էին մեղուականները։ Ո՞րտեղից եկան դրանք և ինչ բերին իրանց հետ։ Մի քանն տարի առաջ, առում է Արծրունին, հայ ժողովուրդը քնած էք, անշարժ, նա մոռանում էր իր մայրենի լեզուն, պահանջ չէր զգում կատարելագործվելու իբրև ազգ, հասկանալու իր չարն ու բարին։ Այդ դրութիւնից սթափեցնելու համար գուցէ հարկաւոր էք մի ծայրայեղ ուղղութիւն, հարկաւոր էք գուցէ ոչ միայն աղդամափութիւն, այլ և աղդամոլութեան գաղափարը տարածել։ Այդպէս էլ արին այն մարդիկ, որոնք վերադառնան համալսարաններից, ժողովրդին զարթեցնելու համար նրանք հայութիւնից դուրս ոչինչ չէին տեսնում և ուղղակի քարողում էին.

ռաւ է հայ լինել և անկիրթ, քան թէ լուսաւորված մարդ և հայութիւնը կորցրած լինելու: Այդ գաղափարը գուցէ և հարկաւոր էր մի ժամանակ, բայց դա մի ուղղութիւն է, որ Արծրունին կնքում էր «տիրացուական» անունով: Տիրացուների կրթութեան դարը անցաւ, ասում էր նա: Դուք այլ ևս չէք կարող ազգել հասարակութեան վրա, գուք այլ ևս չը պիտի կրթէք նոր սերունդը ուսումնարանների մէջ:

Ազգամոլութեան արատներից մէկն էլ այն էր, որ կազմում էր «Մեղուի» ուղղութեան գլխաւոր յատկութիւնը: Մի համեմատութիւն դնելով «Մեղուի» և «Արարատի» մէջ, Արծրունին ասում էր որ վերջինը, որքան էլ գատարկ լինի, որքան էլ արժանաւորութիւններից զուրկ լինի, ունի այն առաւելութիւնը, որ մի յայտնի գոյնի, մի որոշ ուղղութեան է պատկանում: Կարելի է նրան չը համակրել, բայց չէ կարելի արհամարհել նրան, զգուել նրանից: Մինչդեռ «Մեղուն» ամեն երևոյթի, ամեն հարցի վերաբերմամբ երկու տարբեր չափ ունի: Օտար երկիրներում տեղի ունեցող երևոյթների համար ուրիշ չափ կայ նրա ձեռքին, մեր կեանքի համանման երևոյթների համար՝ ուրիշ: Այն, ինչ վատ է, ատելի է, յետաղիմական ու խաւար է ուրիշ եր-

կիրներում, չատ հաճելի է դառնում, երբ մեղանում է տեղի ունենում: Մի խօսքով՝ նա ազատամիտ է, երբ հարցը ուրիշ երկիրներին է վերաբերվում և պահպանողական ու յետաղէմ, երբ պէտք է մեր մասին խօսել: Սա նչ միայն «Մեղուի», այլ և առհասարակ մեր պահպանողական ամբողջ մամուլի մի հարազատ պատկերն է:

Դուք—ասում էր Արծրունին—սպանեցիք հայ լրագրութիւնը ձեր անընդունակութեամբ: Դուք այն գրութեան հասցրիք տըպագրական խօսքի վիճակը, որ ոչ ոք նրան չէր հաւատում, ոչ ոք չէր ուղղում նայել նրան: Զեր լրագրութիւնը այժմ էլ արժանի չէ իր կոչմանը. վիխանակ ամբոխի մտաւոր մակերեսոյթից ձեղ բարձր պահելու, դուք չուզորութում էք նրա բոլոր վատ կրքերին, որ բաժանորդ չատ ունենաք: Եւ երբ այդպէս է, «մենք չենք վախենայ ասել, որ այդ տեսակ լրագրի գոյութիւնը մենք վնասակար ենք ճանաչում, և մեզ պարտաւորութիւն պիտի համարենք մեր բոլոր ջանքը գործ դնել՝ նրան ոչնչացնելու համար»:

Ցիշենք այստեղ թէ ինչպէս էր Գրիգոր Արծրունին իր ուսանողութեան ժամանակ վերաբերվում համոզմունքով և ուղղութեամբ տարբերվող մամուլին: Այն ժամանակ նա

ասում էր թէ տարբեր ուղղութիւնները անհրաժեշտ են, թէ հակառակ ուղղութիւն ունենալը չէ նշանակում թէնամութիւն։ Այժմ իջնելով կուի դաշտը, տեսնելով թէ ինչ զէնքերով են գործում իր հակառակորդները, նա թողնում է քնքչութիւնը դէպի այդ հակառակորդները և իւրացնում է այն համոզմունքը թէ վատ, իր սրբազն կոչման դաւաճանող մամուլը մի չարիք է, որը պէտք է ոչնչացնել և այնուհետև, մինչև իր կեանքի վերջը, նա նոյն այդ համոզմունքն էր պաշտպանում։ Անշուշտ, նա այդպէս ասում էր ոչ թէ այն պատճառով որ կայ հակառակ մամուլ. ոչ, հակառակ մամուլի գոյութեան անհրաժեշտութիւնը նա ընդունում էր միշտ։ Բայց ոչնչացնելու արժանի էր համարում տպագրական անաղնիւ խօսքը, այն մամուլը, որ չէր կարողանում իր կոչման բարձրութեան վրա մնալ։

Բերենք մի օրինակ։ «Ելի իրանց էշն են քշում» առաջնորդողի մէջ (1873, № 41) Արծրունին նորից վերադառնում էր այն հարցին թէ ինչ է կօսմօպօլիտը։ Նա գրում է այդտեղ մի այսպիսի նախադասութիւն։ «Հաղար անդամ ենք մեկնել որ կօսմօպօլիտը ընդհանուր մարդկութեան երջանկութիւնը աչքի առաջն առնելով, աշխատում է և այն ազգու-

թիւնը, որին պատահմամբ ինքն էլ պատկանում է, օգտաւէտ կացուցանել մարդկութեան համար»։ Ահա այդ «պատահմամբ» պատկանում է» բառերը առիթ են տալիս «Մեղուին» աղաղակելու թէ Արծրունին իր հայութիւնը պատահական բան է համարում։ Ընթերցողը տեսնում է որ այդտեղ Արծրունին իր մասին չէ խօսում, այլ միայն բացատրում է թէ ինչ է կօսմօպօլիտութիւնը։ Բայց «Մեղուի» համար այդ «պատահմամբ» բառը փրկութեան խարիսխ է դառնում և տարիների ընթացքում չէր դադարում կրկնելուց թէ Արծրունին իսկական հայ չէ, այլ միայն պատահական։ Նա գրում էր թէ «Մշակն» ասում էր, որ «չարժած կօսմօպօլիտական զգացմունքից ծառայում է հայ ազէտ հասարակութեանց (ազդին), որին պատահմամբ ինքը պատկանում է»։ Կամ թէ՝ «կօսմօպօլիտական զգացմունքից դրդած ծառայում է ազդին, որին կարծես ցաւում է որ պատկանում է պատահմամբ»։ Ի՞նչ աղնիւ բացատրութիւն։ Արծրունին նոյն խիլ ցաւում էլ է որ հայ է ծնվել եւ ողեորդված իր այդ աննման քաջազդութեամբ, նա վեհաբար ասում էր, որ հայոց ազգը մեծ անհատներ է ունեցել, որ այսօր էլ շատերը կան ազգասէր և ազգի մասին մտածողներ։ «Միթէ, ասում էր, պա-

տուական «Մշակին» պատիւ չէր պատկանեւ-
լու ի թիւս այսպիսեացս Հայ աղգին, որ թէ
իւր անցեալ տառապանքներով և ներկայ վի-
ճակով կարելցութեան և յարգանաց է ար-
ժամի և ոչ անարգանաց: Միթէ չը յիշեց աղ-
նիւ «Մշակը», որ որեիցէ աղգի դէմ անար-
գանք արտայայտելը սրբապղծութիւն է ա-
մեն հասկացող, բարեկիրթ, բարեխիղճ և ա դ-
նիւ անհատի աշքում»:

Ահա մինչեւ ուր էր գնում հակառակորդի
անազնութիւնը: Զարմանանք որ Արծրու-
նին ասում էր թէ պէտք է ոչինչ ջանք չը
խնայել այսպիսի մամուլը ոչնչացնելու հա-
մար: Եւ նա անինաց մերկացնում էր թէ
ինչ է իր հակառակորդների աղգասիրութիւ-
նը: Այդ բանակուից ամիսներ առաջ Ասիա-
ցին իր ֆելիէտօնում տուել էր «Մեղուի»
ծաղրական նմանութիւնը, ասելով թէ ինքն
էլ պիտի հրատարակէ «Լու Հայաստանի,
լրագիր անշարժական և ոչխարացին» թեր-
թը: Իսկ այդ բանակուի միջոցին բացատրում
էր թէ ինչ են նշանակում «Մեղուի» «ա դ-
դային և ներքին» բաժինները:

Ընթերցող, հասկանում էր ինչ զանազանութիւն
կայ ն ե ր ք ի ն եւ ա զ գ ա յ ի ն բաժինների մէջ...

Զանազանութիւնը այն է, որ ներքինը ն ե ր-

ք ի ն է, իսկ աղգայինը ա զ գ ա յ ի ն է, կամ պար-
զելով մեր միտքը՝ ներքինը աղգային չէ, իսկ
աղգայինը ներքին չէ...

Օրինակ, դուք շատ անդամ կարդալով «Մեղու
Հայաստանի» լրագիրը, պատահած կը լինէր միեւ-
նոյն համարում երկու նամակ միեւնոյն բաղաքից,
—որոնցից մինը տպվում է ա զ գ ա յ ի ն ի մէջ, իսկ
միւսը ն ե ր ք ի ն բաժնի մէջ... Ի՞նչու է այդպէս:
—Որովհետեւ մինը խօսում է այս կամ այն աբեղա-
յի, հպիսկոպոսի հրաշագործութիւնների վրա, կամ
ծխական ուսումնարանի հարցաքննութիւնների վրա՝
այդ աղգային է,—իսկ միւս նամակը նոյնտեղից խօ-
սում է օրինակ այն բանի վրա, թէ այս տարիայ
երկրի անբերրութեան, կամ այլ պատճառով, յիշեալ
հայաբնակ բաղաքի մէջ առաջին պիտոյքի, հացի
թանգութիւն է կամ հարկաւոր մթերքի պակասութիւն
է, սաստիկ աղքատութիւն է,—այդ աղգային ե-
րեւոյթ չէ: Ուրեմն երբ հայը աղօթում է, ուսում է
առնում, ուսումնարան է կառավարում,—այդ աղ-
գային է, իսկ երբ հայը բաղցած է,—այդ ա զ գ ա-
յ ի ն չէ...

Բացի սրանից նոյն երեւոյթը, նայելով թէ որ-
տեղ է պատահում նա, լինում է կամ աղգային,
կամ ներքին... Օրինակ երբ մի հայ ծխական ու-
սումնարանի փողերը կամ եկեղեցու փողերից է գո-
ղանում,—այդ ա զ գ ա յ ի ն է, իսկ եթէ մի հայ բա-
ղաքի փողերից օրինաւոր գումար իր ջիրին է նուի-
րում,—այդ ն ե ր ք ի ն է...

Վերջապէս ցոյց տանք մի շօշափելի օրինակ.
եթէ մի էշ զում լինի մի որ եւ է վանքապատկան
այգում,—այդ ա զ գ ա յ ի ն է, իսկ եթէ նոյն խելա-
ցի կենդանին ձայն հանելիս լինի յիշեալ այգու պա-

րիսպներից փոքր ինչ դուրսը, այդ անշուշտ ն ե թ-
ք ի ն է...

Իր հակառակորդների թուլութիւնները, անկարողութիւնը այսպիսի կծու ծաղրի ենթարկելու ընդունակութիւն ունեցող հրապարակախօսը, այն, իրաւունք ունէր ինքնավատահութեամբ ասել—«մենք կոչնչացնենք ձեզ»: Մեր գարում, մասուր գործի մէջ, ոչնչացնողը այն ողորմելի, երեխայական աղմուկը չէր կարող լինել թէ Արծրունին իրան պատահական հայ է համարում, այլ տաղանդը, հոգեկան այն մեծ կարողութիւնը, որ հարուածում է տափակութիւնը, սաեղծագործում է, ըմբռնում է յաղթանակի ամրող գաղտնիքը:

Եյս ընդհարումների մէջ էին երկու լրադիմները, երբ Ներսիսեան դպրոցում հաստատուն տեսուչ ունենալու հարցն էր արծարծվում: «Մեղուն» գիտէր թէ ինչ բան է պատրաստվում և աւելի ու աւելի սաստկացնում էր իր յարձակումները գերմանական գօկտօնների գէմ: Արծրունին դեռ շարունակում էր գերմանական և ոչ-ղերմանական կրթութիւն ստացածների կոիւ համարել մրցութիւնը առաջադիմական և յետադիմական տարրերի մէջ: «Մեղուն» ասում էր թէ գերմանական

գօկտօնները անընդունակ հանդիսացան, թէ ժողովուրդը զզուել է նրանցից և բարդում էր նրանց վրա զանազան մեղաղբանքներ, սակայն բաւականալով մութ, անանուն ակնարկութիւններով: «Մշակը» ասում էր թէ պատրաստ է նոյն իսկ երդվել, որ այդ մեղաղբանքները անհիմն են:

Դեկտեմբերի 8-ին տեսչի ընտրութիւն էր նշանակված: Պետրոս Սիմէօնեանցը զրեց իր թեկնածութիւնը. քուէարկեցին, և նա չընտրվեց: Ապա ձայների հակագին մեծամասնութեամբ (8-ով 1-ի գէմ) տեսուչ ընտրվեց Անդրէաս Արծրունին: Մի քանի օրից յետոյ Սիմէօնեանցը տեսչի պաշտօնակատարութիւնից հրաժարական տուեց: Պէտք է ասել որ Գրիգոր Արծրունին սկզբում ասպետաբար վերաբերվեց իր հակառակորդին. յայտնելով «Մշակ» մէջ Անդրէասի ընտրութեան մասին, նա չասաց որ Պետրոս Սիմէօնեանցը քուէարկվել է և սեացել:

Պէտք էր սպասել Կաթողիկոսի հաստատութեան: Բայց այդաեղ միջամտեց կղերական կամայականութիւնը: Թիֆլիսի առաջնորդ Մակար արքեպիսկոպոսը ներկայ չէր եղել այն նիստին, ուր ընտրվել էր Անդրէաս Արծրունին: Պատրուակ ստեղծվեց նոր ընտրութիւն նշանակելու համար. և հոգաբար-

ձութիւնը, երեխ հաստատ համոզված լինելով որ նոր ընտրութեան հետևանքն էլ նոյնն է լինելու, կամայ-ակամայ համաձայնութիւն տուեց նոր նիստ նշանակելու։ Այդ նիստը տեղի ունեցաւ 1874-ի յունվարի 12-ին։ Եւ ահա ինչ ենք կարդում դպրոցի պատամութեան մէջ*). «Մակար արքեպիսկոպոսը եկաւ ժողով, հետք բերելով հայրապետական կոնդակ, որով իրան հրահանդ էր տրվում տեսուչ ընտրելու մասին, և յայտարարեց, թէ ինքը եկել է ժողով ոչ իբրև նախագահ հոգաբարձութեան, այլ իբրև վիճակի առաջնորդ, և համաձայն է տեսչի ընտրութիւն կատարելու քուէարկութեամբ, միայն այն պայմանով, որ հոգաբարձուները խոստանան չընտրել Անդրէաս Արծրունուն, աւելացնելով թէ Անդրէաս Արծրունի ըստ ուսման և բարյականութեան արժանաւոր անձն է, սակայն ինքն չկարէ համաձայնել առ ընտրութիւն նորա ըստ յայտնի ինքեան պատճառանաց։ Հոգաբարձութիւնը, առանց ընտրութիւն կատարելու, կազմեց այս մասին օրապիր «ի տեղեկութիւն յապագային» և ըստորագրելով օրագիրը՝ ցըսեց։

*). Ս. Մալխասեան, ռէամառօտ պատմ. ներսիս. դըպոցի» եր. 147։

Անկարելի եղաւ կոիւը շարունակել օրինական հողի վրա, և ահա առաջ քաշվեց հոգեոր իշխանութիւնը։ Նա ոտնակոխ արեց դպրոցի կանոնադրութիւնը, խեղդեց ազատ ընտրութեան սկզբունքը, որպէս զի ցոյց տայ թէ ինքը համամիտ է «Մեղուի» հետ և նոյնան վախենում է Շխմօօվիս հայերից», որքան Պետրոս Սիմէօնեան։ Սա առաջին գէպին է, երբ պահպանողականութիւնը իր շահերը պաշտպանելու համար, մտնում էր կղերականութեան փէշի տակ և յատկացնելով նրան միապետական իրաւունքներ, քանդում էր սահմանադրական կարգերը։ Սարդիս եպիսկոպոս Զալալեանի և Ալէքսանդր Թայիրեանի միապետական կամայականութիւններից դպրոցը ազատելու համար մի ամբողջ շարժում սկսվեց Թիֆլիսում և այդ շարժման մէջ, որ քուէով պաշտօնեաները ընտրելու սկզբունքը մտցրեց, բուռն մասնակցութիւն ունեցաւ Պետրոս Սիմէօնեանը։ Այժմ նա ինքն էր քանդում այն գործը, որի համար մի ժամանակ մարտնչում էր։ Պատճառն այն էր, որ երեացել էր նոր երիտասարդ կուսակցութիւն։ Մակար արքեպիսկոպոսի կամայական վարմունքը արգէն մի ասպացոյց էր որ Գրիգոր Արծրունին մի վախեցնող ոյժ էր դարձել։ Նա յարձակվում էր

հոգեորականութեան վրա, մերկացնում էր նրա տղիտութիւնը, նրա արասները: Եւ նրան պատասխանում էին, ապօրէն կերպով արգելվով նրա եղբօր ընտրութիւնը: Բայց դա մի նոր զէնք էր, որ տալիս էին Արծրունու ձեռքը:

Յունվարի 12-ի կամացականութեան դէպէքը շատ վատ տպաւորութիւն գործեց հոգաբարձուների վրա: Դեռ յոյս ունէին որ կարելի կը լինի վերականդնել հոգաբարձութեան աղատ իրաւունքները. Անդրէաս Արծրունին եկաւ Թիֆլիս, սպասում էր թէ ինչ ելք կը ստանայ հարցը: Ամառն էլ հասաւ, բայց գեռ տեսչի ընտրութիւն չէր կատարվել: Վերջապէս, օդոսասոխն հոգաբարձութիւնը, այլ ևս աւելորդ համարեց զիմադրութիւնը, ընկունեց վիճակաւոր առաջնորդի կամայականութիւնը: և տեսուչ ընտրեց Սեղբակ Մանդինեանին: Սա էլ գերմանական կրթութիւն ստացածներից էր, բայց «կօսմօպօլիսների» շարքում չէր դասված, ուստի անմիջապէս տեսուչ հաստատվեց:

Հետաքրքրական է, որ Գրիգոր Արծրունին էլ համակերպողներից մէկն էր և շարունակեց հոգաբարձու մնալ: Ճիշտ է նա բողոքեց «Մշակի» մէջ, ցոյց տուեց թէ ինչ պիտի լինի կօլեգիալ հիմնարկութեան նա-

խագահը, ինչ է տրամադրում դպրոցի կանօնադրութիւնը և ինչպէս պիտի հասկանալ ընտրողական իրաւունքը, բայց այդ բոլորը քիչ էր. Արծրունին դեռ չը զիտէր կուել իրաւունքների պաշտպանութեան համար այնպէս, ինչպէս կուեց իր կեանքի վերջին տարիներում:

Լրագրական պայքարը շուտով անցաւ կ. Պօլիս. Պետրոս Սիմէօնեանցը իր կրած պարտութեան վրէքը հանեց «Մասիս» լրադրի մէջ՝ յարձակվելով հոգաբարձութեան վրա: Միայն այդ ժամանակ Արծրունին յայտնեց որ Սիմէօնեանցը տեսուչ էր ուզում ընտրվել, բայց չընտրվեց: Մի կողմ թսղնելով նրան, Արծրունին իր յարձակումները ուղղեց «Մասիս» դէմ այն պատճառով, որ նա, առանց հանգամանքներին ծանօթ լինելու, բռնել էր Սիմէօնեանցի կողմը: Այս դէպքը առիթ գարձաւ որ Արծրունին կ. Պօլիսի հայոց մամուլի պակասութիւններն էլ մերկացնէ: Բայց չը պէտք է կարծել թէ առիթը և պատճառը միայն տեսչական բանակուիւն էր: Դրանից առաջ էլ նա մի քանի անգամ անուանել էր կ. Պօլիսի լրագրութիւնը ողորմելիս և մատնացոյց էր արել որ թէև Թիւրքիայում մամուլը համեմատաբար պղատ է, բայց հայերը, չորհիւ այն հան-

գամանքի որ ֆրանսիական թեթեամիտ կը ը-
թութիւն են ստացել, անկարող են հանդի-
սանում մի լուրջ, ազդեցիկ լրագրութիւն
ստեղծելու:

Մանդինեանի տեսչութիւնը Ներսիսեան
դպրոցում խովութիւնների մի շրջան բա-
ցեց: Մակար արքեալիսկոպոսը տեսչի ընտ-
րութեան հարցում արդէն ցոյց էր տուել որ
ինքը կոչման բաձրութեան վրա կանդնած
նախագահ լինել չէ կարող, այլ իր գոր-
ծողութիւնները յարմարեցնում է մեղուա-
կան կուսակցութեան շահերին: Անելով մի
քայլ, նա այլ ևս աւելսրդ համարեց կանգ
առնել, և կամայականութիւնները օրէնքի ու
կարգի տեղը բռնեցին: Գրիգոր Արծրունին
և Մուշեղ քահանայ Տէր-Ղեռնդեանը, իբրև
հոգաբարձուներ, զրաւոր բողոքներ տուին
տեսչի դէմ, պահանջելով հեռացնել նրան,
բայց այդ բողոքները առանց հետեանքի մը-
նացին: Դպրոցի տէրերը երեք հոգաբար-
ձուներ էին, որոնք միացած էին առաջնոր-
դի հետ. նրանք կայացնում էին վճիռներ և
ուղարկում էին այդ վճիռները միւս հոգա-
բարձուներին որ ստորագրեն: Տասն և չորս
աշակերտաներ բողոքեցին տեսչի դէմ, բայց
արձակվեցին դպրոցից: Մուշեղ քահանան
շարունակ բողոքում էր թէ դպրոցում և թէ

«Մշակի» մէջ: Մակարը նրան պատժեց իր
առաջնորդական իշխանութեամբ: Թիֆլիսի
կօնսիստորիան հրաման արձակեց, որով հե-
ռացնում էր այդ քահանային հոգաբարձու-
թիւնից և նոյն իսկ զրկում էր նրան քահա-
նայագործութիւնից: Իր հրամանի մէջ նա
բացարձակապէս յայտնում էր թէ քահանա-
յի յանցանքն այն է, որ նա համարձակվել է
կարծիք յայտնել որ դպրոցի տեսուչը իբրև
թէ անյարմար է և անընդունակ է: Ահա թէ
որտեղին էր հասել փաշայական կամայակա-
նութիւնը, ահա ինչ միջոցներ էին գործա-
դրում «իրանց մարդուն» պահպանելու հա-
մար:

Եթէ դպրոցում ասիական բռնութիւնը
այսպէս ուաքի տակ էր տալիս ամեն կարգ
ու օրէնք, կար բարեբախտաբար ազատ մա-
մուլ, որ մերկացնում էր այդ արարքները:
«Մշակը» արշաւանք սկսեց տեսուչ Մանդին-
եանի դէմ և, ուշագրութիւն չը դարձնելով
մեղուականների վայնասունի վրա, հրապա-
րակ էր հանում այն ամենը, ինչ ասում էին
դպրոցի կարգերից դժգոհները: Ինչպէս վայ-
ել է այն մարդկանց, որոնց զեկավարողները
սկզբունքները չեին, այլ անձնական հաշիւ-
ները, մեղուականները աղաղակում էին թէ
«Մշակը» կարգավահութիւնը խախտում է»

տալելով աշակերտաների բողոքները։ Կարծես
առաջնորդի գործ դրած կամայականութիւն-
ները, կաթողիկոսից հաստատված հոգաբար-
ձուին հեռացնելը շատ կարող էին նպաս-
տել որ դպրոցում դոյութիւն ունենայ որ և
է հաստատ հասկացողութիւն օրէնքի, իրա-
ւունքների և պարտաւորութիւնների մասին։

Մակար արքեպիսկոպոսը հոգաբարձա-
կան կոչումը ոչնչացնել էր ուղում, բայց
Գէորգ կաթողիկոսը ցոյց տուեց նրան, որ
նա իր իշխանութիւնից և իրաւունքներից
վեր բաներ է անում. կօնսիստօրիայի հրա-
մանով արձակված Մուշեղ քահանային կաթո-
ղիկոսը նորից հաստատեց հոգաբարձուի տաշ-
տօնի մէջ։ Բայց բարձր իշխանութեան այս
կարգադրութիւնը բաւական չէր կամայա-
կանութիւնները սանձահարելու համար։ Հո-
գաբարձուների մի մասը, որոնց թւում և
Գրիգոր Արծրունին, գործերից հեռու մնա-
ցին մինչև որ Մակարը հեռացրվեց առաջ-
նորդութիւնից և նրա աեղը նշանակվեց
Գաբրիէլ արքեպիսկոպոս Սյվագեանը։ «Մը-
շակը» Մակարին ճանապարհ գրեց մի յօ-
դուածով, որի մէջ ցոյց էր տակիսնրա պա-
կասութիւնները *): Այլաղեանի գալուստը

*) Մյդ պակասութիւններից «Մշակը» շեշտում, էլ

(1876-ից) այնքան խաղաղացրեց մարդկանց,
որ հեռացած հոգաբարձուները նորից իրանց
գործին զնացին։ Բայց նրանց պաշտօնավա-
րութեան ժամանակը լրացել էր և նոր ընտ-
րութիւններ նշանակվեցին։ Արծրունին այլ
ևս հոգաբարձու չընտրվեց։

Միայն մեղուականութիւնը և աղփային
հարցերը չէին բանակուի դաշտ բաց անում
Արծրունու համար։ 1874 թւականի մեծ պա-
սին Թիֆլիսում աեղի ունեցան մի շարք հը-
րապարակական դասախոսութիւններ ուուսե-
րէն լեզուի։ Դասախոսութիւններ կարդա-
ցողներն էին Ալէքսանդր Երիցեան, տիկին
Սիմոնօվիչ, Սկորով, Ստագին, Լիլաչօվ,
Պալիբին, Մօլչանով։ Արծրունին «Մշակ»
մէջ յայտնեց որ դասախոսներից միայն Սի-
մոնօվիչն ու Սկորովն են տիրապետում ի-
րանց ընարած առարկաներին, իսկ մնացած-
ների կողմից «անասելի» յանդինութիւն» էր

մանաւանդ այն, որ Մակարը, իրեւ առաջնորդ և հոգա-
բարձութեան նախագահ, չէր կարողանում կուսակցու-
թիւններից բարձր պահել իրան, լինել կարգի և օրէնքի
խիստ պաշտպան։ 1874 թւին, էֆէնդեանցի հոգեհան-
գստի ժամանակ, Գրիգոր Արծրունին կամեցաւ, իրեւ
հոգաբարձու, մի քանի խօսք ասել եկեղեցում, բայց
Մակարը թոյլ չը տուեց։ Սյս աստիճանին էր հասցրել
արքեպիսկոպոսը իր կուսակցական անհամբերողութիւնը։

ցոյց տուեց Բօկլի գրքի նշանակութիւնը և
ապա ուղղեց Ստադլինի հասցէին հետեւալ
խօսքերը.

Մի բան խորհուրդ կը տայինք միայն պ-
Ստադլինին չը մոռանալ. վատ թէ լաւ լինի մեր գոր-
ծունէութիւնը, մենք ժամանակաւոր չենք եկել այս-
տեղ՝ մենք մեզ նպատակ չենք կարող զնել բանա-
կութեան բռնվել մի որ եւ է բաղախնդիր թա-
փառական, ինքնակոչ կրթողի հնտո... Նրա պէս շա-
տերը եկան ու գնացին... մեզ այլ եւս այս տեսակ
անդրածովային էժան փիփոփայութիւններով եւ խե-
օք յիմարութիւններով զարմացնել չէ; կարեին... վի-
ռաւորել մեզ ինքնահաւան տղիտութեամբ նմանադին
չէ կարելի...

Ստադլինը դիմեց դատարանին, մեղա-
դրելով Արծրունուն վիրաւորանքի և գըր-
պարտութեան համար: Սռաջին անդամն էր
մեղանում, որ հայ խմբագիրը կանչվում էր
դատարան՝ իր գրուածքը այնտեղ պաշտպա-
նելու համար: Գործը քննվում էր հաշտարար
դատաւորի մօտ 1874-ի մայիսին. երկու կող-
մերն էլ սկսեցին ապացուցանել որ հաշտա-
րար դատաւորը ձեռնհաս չէ այդ գործը
քննելու: Դատաւորը առաջարկեց վէճը հաշ-
տութեամբ վերջացնել. և երբ կողմերը հա-
մաձայնութիւն չը տուին, նա գագարեցրեց
գործը: Բայց թէ նրան Արծրունին իրաւացի

հասարակութեան առաջ դուրս գալ ուսոււ-
ցանողի գերսւմ, քանի որ նրանցից ոչ պէ
չունի հիմնաւոր պատրաստութիւն: Խօսերով
մի առանձին յօդուածում յատկապէս Երից-
եանի մասին, որի գասախօսութեան առար-
կան էր հայ կնոջ գրութիւնը անցեալում և
ներկայում, Արծրունին ասում էր թէ Երից-
եանը չունի քննական կարողութիւն, թէ
նիւթը մշակել նա չէ խմանում: Ընդունելով
որ գասախօսը պընդարձակ բնական ընդու-
նակութիւնների տէր մարդ է, և գուցէ նրան
պակաս չէ ահազին աշխատասիրութիւնը, Արծրունին
գանում էր որ պիտութեան սիս-
տեմական ուսումը, որ և է կրթութիւնը հայեացք,
որ անհրաժեշտ է ամեն հասարա-
կական դասախօսութեան մէջ—պակաս է պա-
րոնին... Ամեն երկրում զիտութեան ամենաա-
բարձր յատկութիւնը՝ համեստութիւնն է,—
իսկ մեր երկրում նա ընդունված չէ»:

Միւս դասախօս Ստադլինը անտեղի յար-
ձակումներ էր գործել անզիլացի նշանաւոր
դիտնական Բօկլի գէմ: Արծրունին մի քանի
կծու տողեր զրեց այդ առիթով, Ստադլինը
պատասխանեց „Կավազը“ լրագրում, ծաղ-
րելով Արծրունուն, անուանելով նրան երե-
խայ և այլն: Այդ յարձակումների գէմ Արծ-
րունին զրեց մի մեծ յօդուած, որի մէջ նախ

Էր յարձակվում Ստագլինի վրա, կարելի է եղբակացնել նրանից, որ մայրաքաղաքի պարբերական թերթերից մի քանիսն էլ խիստ քննադատեցին Ստագլինի դասախոսութիւնը, որ տպված էր առանձին գրքով. իսկ „Հեծելի“ շաբաթաթերթն ասաց որ Թիֆլիսը չը պիտի թոյլ տար այդպիսի վայրիվերոյ և անմիտ դասախոսութիւն։

Մնում էր Երիցեանը. Արծրունին գելիէտօնների մէջ էլ ծաղրում էր նրան, անուանելով նրան ազառաւած գիմնազիստ։ Եւ Երիցեանն էլ կարողացաւ իր վրէժը առնել Արծրունուց, „Կավказъ“ լրագրի գլխաւոր աշխատակիցներից մէկն էր Երիցեանը և այդտեղ էլ նա մաքրում էր իր հաշիւները Արծրունու հետ իրեւ հարազատ մեղուական։ Ահա այդ վրէժինդրութեան մի փոքրիկ պատկերը։

1875 թւականի սկզբում՝ Անդրէաս Արծրունին Թիֆլիսում կարգաց մի դասախոսութիւն ծծումի մասին։ Երիցեանը „Կավказъ“ լրագրում մի ընդարձակ յօդուած տպագրեց և մոռանալով որ ինքը մասնագէտ չէ, ոչնչութիւն հրատարակեց ամբողջ դասախոսութիւնը, թէն մի վրացի, Երիսթով ազգանունով, նոյն „Կավказъ“-ի մէջ ցոյց տուեց Երիցեանի սխալները և Անդրէաս Արծրունու տե-

սութիւնների ճշտութիւնը։ Այս գեռ ոչինչ կարելի էր հաշտվել այն մտքի հետ որ հնադիտութեամբ պարապողը քննադատում էր մի մասնագէտի դրուածքը։ Երիցեանը, խօսք սկսելով դասախոսութեան մասին, պարաք էր համարել ծանօթացնել ընթերցողներին Անդրէաս Արծրունու հետ։ Եւ որպիսի բարեխղճութեամբ։ Նա ասում էր թէ Անդրէասը «Մշակի» խմբագրի եղբայրն է, թէ Գրիգոր Արծրունին միջնորդում էր որ եղբօրը տեսուչ նշանակեն Ներսիսեան դպրոցում, բայց հայոց հոգեոր իշխանութիւնը շատ խելացի վարպեց՝ սերժելով նրա այդ միջնորդութիւնը։ Եւ ոչ մի խօսք Ներսիսեան դպրոցի կանօնադրութեան մասին, ոչ մի խօսք այն մասին թէ Անդրէասին ընտրել են դպրոցի հոգաբարձուները 8 ձայնով ընդդէմ մէկի...

Վրիժառութեան մի քայլն էր գաւ Շուտով „Կավказъ“ լրագրը մի արշաւանք սկսեց «Մշակի» դէմ. Փելիէտօնիստ Նեմոն, որ Կթէ Երիցեանը չէր, անշուշտ Երիցեանի ցուցմունքներով էր ղեկավարվում, կրկնեց Արծրունու դէմ այն ամենը, ինչ ասել էր «Մեղուն»։ Դուրս գջլելով «Մշակի» զանագան յօդուածներից այս կամ այն կտորը, նա աշխատում էր ցոյց տալ, որ Արծրունին երեք տարվայ ընթացքում ոչինչ հասարակարեն էր տարվայ ընթացքում ոչինչ հասարակա-

կան հարց չէ արծարծել, աչքի ընկնող ոչ
մի բան չէ դրել, այլ միայն և միմիայն դո-
վել փառարաներ է բան, իր եսին է երկրպա-
գել, իր անձնական հաշիւներն է տեսել: Մի
բան միայն չէր ուրանում ուսւ լրագրի ֆե-
լիքտնիսալը, այն, որ «Մշակը» 1872 թւա-
կանից չէ դադարում դրական աշխարհը տակն
ու վրա անելուց: Հայոց կեանքի մէջ նա
մտցնում է վայրենի և անզործնական դադա-
փարներ, որոնք հակառակ են հայի նահապե-
տական կեանքին և սովորութիւններին: Յօ-
դուածագիրը խոստանում է փաստեր բերել,
քայլ առ քայլ քննելով երեք տարվայ «Մշա-
կը», բայց չէ կատարում իր խոստումը, ար-
դարանալով նրանով, թէ Արծրունին շատ է
վիրաւորվում իր զրուածքներից և ինքը խըզ-
ճում է նրան: Բայց բերած մի քանի փաս-
տերն էլ բաւական են խմանալու համար թէ
ինչ տեսակ գրական հակառակորդ էր այդ
Nemo-ն: Մենք կը բերենք միայն մի նմուշ:
«Մշակի» այդ քննադատը, կրկնելով մեղուա-
կանների այն խօսքը թէ Արծրունին հայերէն
բոլորովին չը դիտէ, իբրև ապացոյց բերում
էր մի բառ. հայոց լեզուի մէջ դոյութիւն
չունի «ազգագրութիւն» բառը և նրան հնա-
րել է Արծրունին. այդ բառը „Կավказъ“-ի
աշխատակիցը թարգմանում էր „Naçiogra-

ֆիя“ և ծաղրում էր Արծրունու տղիտութիւնը
հայերէնի մէջ: Սարսափելի ապացոյց էր, չի:
Դրանով յօդուածագիրը իր սեփական տղի-
տութիւնն ու անբարեխաղճութիւնն էր ցոյց
տալիս:

Արծրունին միայն մի քանի խօսքով պա-
տասխանեց „Կավказъ“-ի այդ ընդարձակ
յօդուածներին: Վիրաւորվելու մի առանձին
առիթ չունէր նա, քանի որ միենոյն բաները
նա միշտ տեսնում էր «Մեղուի» մէջ: Ռուս
լրագրի աշխատակիցը ցոյց էր տալիս իր ով
և ինչ լինելը նրանով, որ Թիֆլիսում հրա-
տարակվող լրագիրներից հաւանում էր միայն
«Մեղուն». Նրա համար «Մշակի» չափ վատ
և վնասակար էին և „Տիֆլիսկի Եկեղեց-
նիկ“ ու «Դրօէբա» լրագիրները: Կարող էր
Արծրունին վերաւորվել այդպիսի մի քննա-
դատի գրուածքներից...

Բայց երիցեանը գեռ իր բոլոր վրէժը չէր
հանել: 1876 թւականին Թիֆլիսում պիտի
կատարվէր միօրեայ ժողովրդագրութիւն: Արծրունին «Մշակի» մէջ մի շաբք յօդուած-
ներով բացատրեց թէ ինչ է ժողովրդագրու-
թիւնը, ինչ նշանակութիւն ունի նա: Զը բա-
ւականանալով այդքանով, նա 1875 թւականի
նոյեմբերի 16-ին Թիֆլիսի կլասիկական զիմ-
նադիայի դահլիճում կարդաց հայերէն լե-

գուռով մի դասախոսութիւն, որ նուիրված էր նոյն առարկային։ Դա առաջին հայերէն դասախոսութիւնն էր մեզանում։ Ռւնկնդիրների մէջ կային շատ աշակերտներ և Մարդիամեան դպրոցի աշակերտուհիները, որոնց Արձրունին ձրի տոմսակներ էր տուել։ Մի քանի ժամանակից յետոյ նա կրկնեց այդ դասախոսութիւնը Հաւաքարում, Թիֆլիսի այն թազում, որ թէն կալած է քաղաքին, բայց նրա խորթ դաւակն է՝ մանաւանդ կրթական հիմնարկութիւնների կողմից։ Այսաեզ ապրում է հասարակ ժողովուրդը, և Արձրունին զնաց նրա մօտ՝ կենդանի խօսքով մի լան հասկացնելու համար։

Իր առաջնորդողներից մէկում Արձրունին ասում էր որ զիտութիւնը հանրամատչելի պիտի լինի, և այն զիտութիւնը, որ ծածուկ է պահպում ժողովրդից, զիտութիւն չէ։ Հետեւ լուսով իր այդ հայեացքին, նա ամեն բանի մէջ վերին աստիճանի պարզ, հեշտ հասկանալի լեզու էր զործ ածում։ Այսպէս էր նա և իր դասախոսութեան մէջ։ Բայց Երիցեանը, „Հավակաչ“-ի մէջ հաշիւ տալով այդ դասախոսութեան մասին, ամենամեծ պակասութիւնը համարում էր այն, որ նրա մէջ ամեն ինչ շատ էր պարզ, շատ էր տարրական, ինքն ըստ ինքեան հասկանալի։ Գլխաւորա-

պէս այդ «պակասութեան» պատճառով էլ նա ծազրում էր Արձրունուն, զործ ածելով համարեա նոյն խօսքերը, որ Արձրունին ասել էր իր, Երիցեանի, դասախոսութիւնների առիթով։ Բայց այդ երկուսի մէջ կար հիմնաւոր տարբերութիւն։ Արձրունին, քննադատելով Երիցեանին, ինչպէս տեսանք, յայտնի արժանաւորութիւններ էլ էր զանում նրա մէջ, մինչդեռ Երիցեանը ոչինչ արժանաւորութիւն չէր տեսնում Արձրունու մէջ։

„Հավակաչ“ լրագրի թշնամութիւնը «Մըշակի» դէմ շարունակվեց, քանի որ նրա զըլիսաւոր աշխատակիցը Երիցեանն էր, իսկ խմբագիրը—Ստալինսկին։ Վերջինս չը մոռացաւ Արձրունու հարուածները և այն ժամանակ, երբ հեռացել էր Թիֆլիսից։ 1878-ին նա Խարիկօվում հրատարակում էր „Խարեկօվ“ անունով լրագիրը, որի մէջ յարձակվում էր «Մշակի» վրա։

Թողնենք առ այժմ բանակոփանների դաշտը. շուտով մենք կը տեսնենք որ տեղական ուրիշ ուսում լրագիրներ էլ վէճի բոնվեցին Արձրունու հետո։ «Մշակը» խօսեցնել էր տաիս ամենաքիչն, և Արձրունին շատ լաւ էր բնորոշում այն գերը, որ կատարում էր իր լրագիրը։ Նա ասում էր թէ «Մշակը» ունի ջերմ երկրպագուներ, ունի կատաղի թշնամիներ,

բայց չունի անտարբեր վերաբերվողներ։ Նրան կամ պաշտում են կամ ատում, բայց երբէք սնառես չեն անում, երբէք չեն մոռանում նրա գոյութիւնը։

Եւ այդ զարմանալի յատկութիւնը բախում էր նրա խմբագրի անսպառ տաղանդից։ Դա մի անհանգիստ ոյժ էր, որ գործում էր միաւնման վառ եռանդով։ Շատ քիչ են «Մշակի» այնպիսի համարները, ուր նա առաջնորդող յօդուած կամ մի այլ գրուածք չունենար։ Աման տեղ նա կարողանում էր գեանեղել այնպիսի կարուկ, աղդու տողեր, որոնք անսպատճառ մի միաք էին յարուցանում, այսպէս կամ այնպէս ցնցում էին։ Նրան մեղագրում էին, նրան ատում էին՝ նրա անփոփոխ, մշտական խստութիւնների համար։ Բայց ինչու էր նա խիստ ու անողոք, ինչու նրա գրիչը միշտ թաթախված էր թոյնի մէջ։

Նրան ներկայանում էր մի հիւանդ, անդամալոյծ, վերքերով պատած հասարակութիւն, և նա կամենաւմ էր մի օր առաջ ցոյց տալ այդ անդամալոյծին նրա անկումը, նրա սարսափելի հիւանդութիւնը։ Առում են թէ նա շոյելով ու գգվելով պիտի բժշկէ վերքերը։ Բայց կարելի է այդպիսի պահանջ դնել։ Գրողը, եթէ նա մի ողորմելի միջակութիւն չէ, եթէ ներկայացնում է մի ամբողջացրած

ինքնուրոյնութիւն, մանաւանդ եթէ վերեից ստացած է մի առաքելութեան կոչում, ունի իր յատուկ բնաւորութիւնը, խառնուածքը, իր խօսքն ու խօսելու եղանակը։ Համաշխարհային գրականութեան մէջ փառաւորված մեծ երգիծաբաններն ու մերկացնող հրամարակախօսները կարող էին իրանց ժամանակի պահանջներին ենթարկվել. բայց եթէ ենթարկվէին, էլ ինչպէս կը լինէին Սուլիֆաներ, Բէօրնէներ, Հէյնէներ։ Արծրունու գաւանանքն էր՝ «Դժգոհութիւնը առաջադիմութեան մղողն է» (1875, № 34)։ Եւ ինքը, իբրև առաջադիմութեան դիմուոր, յայսնում էր իր դժգոհութիւնը ամենախիստ կերպով։ Ահա մի քանի տողեր Ասիացու Փելիչտօնից (1875, № 49)։

Զէ, աէտք է հրաժարվել հայերի մէջ հանճար լինելոց։ Այդ ազգի մէջ հանճար լինել անհնարին է, այդ ազգը ազգ չէ, զա մի տեսակ հան ելուկ է։ Նրան ուսումնասիրել, ճանաչել, ըմբռնել՝ դժուար է եւ մինչեւ անդամ անհնարին չէ...
Ի՞նչ անենք, ո՞ր ջուրն ընկնենք...

...Եւ ի՞նչպէս կարելի է այն ազգին ուսումնասիրել, ճանաչել, ըմբռնել, որ ոչինչ որոշ բնաւորութիւն, ոչինչ որոշ բարոյական պատկեր չունի, որ չունի իդէալներ, ծառումներ, կատարելատիպեր...
Նրա կատարելապատկերը, նրա իդէալը երկու բան են, որ կեանքի ամեն բայլափոխում նրա միակ չափ ու կշիռը են՝ մի արշին եւ մի բուբել...

Գուցէ միայն այն ժամանակ հանձար կը համարվես այդ ազգի մէջ, երբ որ զանազան աններելի միջոցներով կը հարստանաս...

Կրակոտ, անհամբեր, ըմբռստ բնաւորութիւնը գործ է սիրում, բարեկարգութիւն, պարտաճանաչութիւն է պահանջում, իսկ նրան շրջապատած է մոխրագոյն, հիւանդոտ իրականութիւնը: Եւ նրա գրչի ծայրից այսպիսի թոյն է թափկում: «Ում ենք խարում», հարցնում է նա. հարցնում է այն մարդկանցից, որոնք առաքինութիւննեն համարում աղքային պակասութիւնները ծածկելը: Խարենք մեզ, աչք փակելով, կոյք ձեւանալով, թէ խարենք օտարներին, ցոյց տալով նրանց որ հայր պարտաճանաչ է, միաւրան է, կարող է իր հոգեկան պահանջների, իր մասւոր շահերի համար մոռանալ իր նիւթական բարեկեցութիւնը: Ո՞չ, մեզ կամ օտարին խարելուց օգուտ չը կայ: Խարելով մենք ոչինչ չենք բժշկի մեղանում, ոչինչ չենք փոխի: Դժգոհութիւնը առաջադիմութեան մղողն է. դժգոհ լինենք մեղանից, որպէսզի փրկվենք:

Ինքնազոհութիւնը, աղքասիրական լուսութիւնը օտարների առաջ երբէք մեզ չէին թոյլ տայ քննադատութեան սուր նշարակը խրել մեր հասարակական մարմինի մէջ, դուրս

բերել մեր յետամնացութիւնն, մեր դժբախտ անշարժութեան յատկանշանները: Եւ Արծրունին իր այդ սուր դժգոհութիւնն, մեր կացնող ընդունակութիւնն չնորհիւ որքան աղքային բնորոշ գծեր զբեց հրապարակում, որքան դառն ձշմարտութիւններ դտաւ, որոնք մինչև այդ շատ բնական, արդար ու ցանկալի երեցթիւններ էին համարվում:

Վերջնենք «Հայի տնտեսութիւնը» յօդուածը (1873, № 27): Հայը յայտնի է իրեն աղնակող, իրեն զիզող: Խնայողութիւնը տնտեսական կեանքի մէջ կատարում է ահազին գեր: Բայց երջանիկ է նա իր այդ յատկութիւններով: Ոչ, երջանիկ լինել չէ կարող:

Հայը հաւաքրում է, այն, հարստութիւններ, զիզում է նիւթերը, —բայց անհաշիւ. Եւ նրա հաւաքած հարստութիւնը բոլորովին անծնական է եւ չէ անցում ապազյ սկրունդին: Նրա աշխատնքը ապարդիւն մի աշխատանք է, ինչպէս մրջիւնների ծիծաղիի ջանքերը: Ոչ մի հարստութիւն կովկասեան հայերի մէջ չէ տեւ ել մի սկրունդից աւելի:

Հայը հաւաքրում է, այն, բայց հաւաքրում է միայն նրա համար, որ մնդրվենք պահի իր հաւաքածը... Նրան պակաս է այն յատկութիւնը, առանց որի խնայողութիւնը դատարկ խօսք է՝ նա գուրկ է իր հաւաքածը մի որ եւ է ձեռնարկութեան գործ դնելու յատկութենից: Նա զուրկ է անծնավստահութեան յատկութենից:

Նա հաւաքրում է, բայց չէ գործ դնում, նա

հաւաքում է, բայց չէ մտածում այնպէս կրթել նոր սերունդը որ շահեցնի իր հաւաքածը:

Այդ է պատճառ, որ կան մեզանում հայերի մէջ հարուստ անհատներ, բայց չը կայ հարուստ հայ տարրը:

Հայ հարուստների այդ պատկերացումը Սրծրունին շարունակում է մի քանի համարից յետոյ՝ «Մահուան Հերոսներ» յօդուածի մէջ (№ 39): Այդտեղ խօսքը կտակների մասին է: Հին ժամանակներից մենք պարծենում ենք մեր հարուստների կտակներով: Կտակը նուիրագործում է հարուստ հայի յիշատակը, սրբացնում է նրան հասարակութեան աջըռում, ազգային մեծ բարերարների շարքն է անցկացնում նրան: Սակայն ահա ինչ էր տեսնում Սրծրունին այդ վաղուց սրբացրած կտակի մէջ:

Կենդանութեան ժամանակ հայը,—ասում է նա, —մարմնացած եսականութիւն է, մտածում է միայն իր մասին, ապագան նրա միտքը չէ զբաղեցնում: Նա ոչ միայն ինքը չէ օգուած քաղում իր դիվածից, այլ և թոյլ չէ տալիս որ ուրիշները իրանց ոյմերը դործագրեն հասարակութեան օգտին: «Հասարակաց օգուածը» նրա համար անհասկանալի մի խօսք է:

Բայց յանկարծ մօտենում է նրա մահվան բօ-

պէն եւ նոյն մարզը պահանջում է որ իր մահից յետոյ հրաշքի պէս փոխվէին հանգամանքները դէպի լսուր, չը նայեկով որ ինքն ոչինչ չէ արել, կարողութեան չափ, իր գործը աջդիցնելու նպատակով յարմար արդիւնաբեր մի հող պատրաստելու համար:

Կենդանութեան ժամանակ միայն մի հոգս ունէր նա—զիզել և զիզել, ինչ միջոցներով էլ լինի՝ զիզել, այդ գիշածը երբէք գործադրութեան մէջ չը մտցնել: Ինչպէս որ զիշած գումարը նրա կենդանութեան ժամանակ մի մեռած զրամագլուխ է, այնպէս էլ նա անզործազրելի է համարում զիտութիւնը, ուսումը նրա համար մեռած զրամագլուխ է: «Երա որդին մի կենդանի կտակ է, որ այժմս գործ զրվելու չէ, այլ պահվելու է մի անորոշ ժամանակի համար»: Մեռնում է այդ հայը, և յանկարծ ինչ է յայտնվում:

Այն մարզը, որ իր կենդանութեան ժամանակ երբէք մտածած չէ ապագայի վրա,—պատրաստ ունի մի կտակ, որով նա իր բոլոր կարողութիւնը, կամ նրա մասը կտակում է ապագայ սերունդի օգտին, բարեգործական ան նպատակ ու պատահ է, ի նպաստ մտաւոր զարգացման բարոյական, օգտականութեան վրա գործադրելի լինելը նա իր կեանքի ժամանակ հերքում էր...

Բայց մեռնողը չի մտածում, որ իրանից յետոյ մնացած հայրենակիցները ամենըն էլ իրան նման են,

ամենքն էլ նոյն բնաւորութիւն ունին, նոյն ուղղութեան են հետեւում:

Հանգուցեալը յանձնում է իր կտակի կատարումը իրան նմաններին, իրանցից նշանակված կը տակակատարներին... նրանք էլ մտածում են՝ ինչի ինքներս օգուտ չը բաղենը կտակած գումարից, որ նրան պահենք... ինչի համար գործ զնենք գումարը,—աւելի լաւ չէ պահենք ու էլի դիմենք... խօ մեռնելու ժամանակ էլի կարող ենք եթէ ոչ բոլորը, գոնէ մի մաս կտակի բարեգործական, աղդային նպաաակով...

Եւ փաստերի այս գեղեցիկ վերլուծումից Սրծումին գալիս համում է այսպիսի եղակացութիւնների.

Մինչեւ որ հայը իր կենդանութեան ժամանակ բարի գործ չը գործէ, մինչեւ որ իր կենդանութեան ժամանակ հասարակական ողի իրան չը սեփականացնէ, —մեր հասարակութիւնը երբէք առաջ չի գնայ...

Հայը իր կեանքի ժամանակ հասարակութեանը չէ ծառայում, նրան ոչինչ օգուտ չէ բերում, չէ գործ զնում ծեռքին ունեցած բարոյական եւ նիւթական միջոցները, —բայց պահանջում է որ իր մահից յետոյ հայրենակիցները իր կտակը կատարեն... սպասում է ուրեմն նրանցից այն հասարակական ողին, այն հասարակական արժանաւորութիւնները, որ ոչ թէ միայն նորա չեն կարող ունենալ, բայց որ նա ինքն էլ չունէր:

Եթէ մենք ինքներս մեր կեանքի ժամանակ ոչ թէ միայն բան չենք անելու, բայց եւ հակա հա-

սարակական ընթացքը կը պահպանենք, եւ յետոյ կը պահպանչենք որ մեր կտակակատարները այն անեն, ինչ որ մենք ինքներս ընդունակ չէինք անելու —հաւատացէք որ մեր յոցերը միշտ խարված կը լինեն...

Առաջադիմութիւնը մարդկային հասարակութեան մէջ կտակն երի միջնորդութեամբ չէ կարող ընթանալ, —այլ միայն հասարակութիւնը կազմող իւրաքանչիւր անհատի ան ճնակ ա շի ա տ ա կ ց ու թ ե ա ն օգնութեամբ:

Այսպէս ահա, Սրծումին մեր աւանդական սուրբ հասկացողութիւններից մէկի ամբողջ ամնապատակայարմարութիւնն էլ էր ցոյց տալիս: Մենք սովորել էինք հարուստ աղաների կտակների վրա աչք տնկել, նրանցից սպասել մեր փրկութիւնը. բայց Սրծումին ասում էր. կտակներով առաջադիմութիւն չի լինի, աշխատեցէք ամենկադ, աշխատեցէք ձեր կենդանութեան ժամանակ, հասկացէք հասարակաց օգուտը այն ժամանակ, երբ դուք ապրում էք, կարող էք ձեր անձնական գործակցութեամբ նսլաստել հասարակական գործին:

Տեսնելով այս անընդհատ յարձակումները մեր պակասութիւնների գէմ, այս մշտական բողոքները, այս անխնայք քննադատութիւնները, մենք կարող ենք կարծել թէ Սրծումին, ու ոչինչ առաջադիմութիւն չէր աենուրեմն, ոչինչ առաջադիմութիւն չէր աեն-

նում մեր երկրի մէջ: Ո՞չ, նա տեսնում էր, նա ուրախութեամբ էր արձանազրում ամեն մի երեսիթ, որ առաջ գնացող քայլի նշան ունէր: Թէ որքան էր նա նշանակութիւն տալիս մեր կեանքի մէջ տեղի ունեցած փոփոխութիւններին, երեսում է նրանից, որ 1873-ին նա արդէն ընդունում է որ Թիֆլիսում կարող է բացվել համալսարան: Հինգ տարի էր անցել այն ժամանակից, երբ նա բոլորովին ապարդիւն էր համարում բարձրագոյն գպրոցի գոյութիւնը կովկասում: Բայց միթէ այդքան կարծ միջոցում Թիֆլիսը այնքան փոխվեց, որ կարող էր համալսարանական կրթութեան վայր գտնալ: Արծրունին գտնում էր որ փոխվելէ Թիֆլիսը: Ի հարկէ, ժողովուրդը նոյնն էր, ի հարկէ տեղայի ընտանիքը շարունակում էր իր գերը կատարել: Բայց կար և այն հանգամանքը, որ այժմ, հինգ տարուց յետոյ, բաւականաչափ ինտելիգենցիա կայ հաւաքված Թիֆլիսում: Այժմ շատացել են բարձր ուսում ստացածները և Արծրունին ասում էր. «Հիմի ժամանակ է» (№ 31), կարելի է համալսարան ունենալ, արդեօք պատրաստ է ժողովուրդը այդպիսի մի հիմնարկութիւն պահպանելու:

Տղամարդկանց կրթութիւնը Արծրունին այսքան առաջացած էր համարում: Բայց կա-

նանց կրթութեան վերաբերմամբ նա այսքան միխթարական եղակացութեան հասնելու առիթ չունէր: Համեմատում էր հայ կանանց վրացուհիների հետ և տեսնում էր որ վերջիններս աւելի բացված են, աւելի շատ են նուիրված հասարակական գաղափարներին, անհամեմատ բարձր են հայուհիներից նրանով, որ սիրում են իրանց մայրենի լեզուն, զրականութիւնը: Հայ կինը շարունակում էր գետ սառն, խորի մնալ իր ազգի մտաւոր պահանջների վերաբերմամբ: Իսկ առանց նրա օջնութեան չէ կարող լինել առաջադիմութիւն հայերի մէջ: Հայ կնոջ այդ դրութիւնը այնքան յուսահատական է, այնքան վաս ազգեցութիւն ունի մեր մտաւոր շահերի տեսակէտից, որ Արծրունին, մի ճարգունելու համար յայտնում էր մի շատ ինքնուրոյն միակը: Նա ասում էր թէ լաւ կը լինի, որ գաղափարներին ծառայող երիտասարդը չամունանայ:

Սիրեղայութիւնը հարկաւոր էր քրիստոնէութեան առաջին դարերում, երբ պէտք էր տարածել այդ կրօնը: Նա հարկաւոր է մեր հասարակութեան պէս մի հասարակութեան մէջ էլ:

Սիրել կ ին, սիրել ընտանիք եւ միեւնոյն ժամանակել սիրել մի գաղափար եւ սիրել մարդ-

կութիւնը,—մին միւսին արգելում է: Մինը խըլում է մարդից այն ոյժը, այն եռանդը, որ հարկաւոր է զործ դնել միւսի վրա...

Վառված լինելով մի նոր գաղափարով, ոգեւորփած լինելով մի նոր վարդապետութեան քարոզութեամբ եւ հասարակութեան մէջ նորան ընդունել տալու եւ արմատացնելու մտրով—մարդը լիսարէս նորանով յափշտակիլով, իր ամբողջ հոգին նրան նուիրելով, ստիպված է հեռանալ, փախչել կնոջից, ընտանիքից, որ մասամբ կը խին նրանից նրա յափշտակիված, վառված եռանդը...

Ֆրանսիացի զրող Պրուգօնը իր գրուածքներից մէկում ասել է որ նոր հասարակական, սոցիալական գաղափարներ ասարածելու համար հարկաւոր է անպսակ, կոյս կեանք, որ մարդը կարողանայ ամբողջովին նուիրել իր գաղափարներին: Արծրունին գտնում էր որ այդ խորհուրդը մանաւանդ օգտակար կը լինի հայերի համար, քանի որ կինը մեղանուտ չէ մասնակցում մեր մտաւոր շարժմանը:

Մտաւոր կեանքով ապրող, նոր հասարակական գաղափարներ քարոզող հայը, պսակվելով ժամանակակից կրթված հայ աղջկայ հետ, չէր գտնի նրա մէջ արձագանք իր այն մորերի, որը կազմում են նրա համար ամբողջ կեանքի նպատակը, այլ կը գտնէր նրա մէջ միայն սառնութիւն, անտարերութիւն դէպի իր իդէալը:

Ժամանակակից հայ երիտասարդը, որ զբաղված է իր հայրենակիցների քարոյական եւ մասաւոր վե-

րանորոգման գաղափարի քարոզութեամբ, պսակվելով ժամանակակից կրթված հայ աղջկայ հետ, կը պատահէր նրա մէջ մի ապարդիւն ոյժ, մի անտարբեր սառնութիւն դէպի իր ամենասիրելի գաղափարբերը, եւ այդ հակառակ եւ սարսափելի անտարբերութիւնը մի անզամից կը սպանէր նրա մէջ կամ փոքր առ փոքր կը մնացնէր նրա այն բոլոր ամենամանկագին իդէալները, որ նա տարիներով մշակել է, իր սրտում օրօրել է, յայտնել է, քարոզիլ է, որոնց տարածելը, որոնց հասարակութեան մէջ սերմանելը եղել է նրա համար ամբողջ կեանքի միակ եւ վերջնական նպատակ... (1875, № 27):

Բայց ինչպէս հասկանանք այն, որ առանց կնոջ համակրութեան, առանց նրա աջակցութեան՝ հասարակութեան մէջ առաջադիմական գաղափարներ չեն տարածվի: Միթէ հակասութիւն չէ. պէտք է կնոջ համակրութիւնը գրաւել, բայց միենոյն ժամանակ չամունանալ կնոջ հետ՝ համարելով նրան արդիքը, խոչընդոտ, ապանիչ ոյժ: Արծրունին մի համարից յետոյ ասում է որ իր ասածների մէջ հակասութիւն չը կայ: Եւ ահա ինչպէս.

Երբ որ մի նոր վարդապետութիւն քարոզողը ունի այդ զօրեղ զաշնակցին, որի ոյժի առջեւ ամեն է—կնոջ համակրութիւնը—նա կարան հպատակում է—կնոջ համակրութիւնը—նա կարան կարան լինել որ իր վարդապետութիւնը հիմք բող է վստան լինել որ իր վարդապետութիւնը հիմք ստացաւ, կընդունի, կիրագործվի եւ երկար կեանք կունենայ:

Բայց իսկ այն պատճառով, որ այդ մաքուր, այդ

անկեղծ համակրութիւնը, այդ զօրեղ, այդ անյաղթելի դաշնակցութիւնը այնքան թանկագին է քարոզչի համար,—նա պէտք է առհասարակ կանանց սրտին դիմէ, եւ ոչ թէ գրաւէ մի կնոջ սիրտը մասնաւորապէս...

Եւ մինչեւ անգամ մի կնոջ սրտի գրաւած սէրը պէտք է զոհնի ընդմանրութիւն օգուտի համար:

Այդ է նշանակում կոյս մնալ, այդ է նշանակում զոհել կնոջ, ընտանիքի, զաւակների սէրը, զաղափարը սիրելու համար. այդ է նշանակում կենտրօնացնել իր ոյժերը, իր ամբողջ եւը գաղափարի ծառայութեանը նուկրելով:

Ընդմանուրի օգտի մասին մտածողը իր աւունքունի մտածել եւ իր անձնական բաղդառնութեան ու ութեան վրա:

Վերացական գողափար, հասարակական վերանորոգութիւն քարոզողը, վիրջապէս մոռաւոր արդիւնաբերողի իրաւունք չունի ինքն բաղդառնոր լինել...

Նա կարող է ճգնել բաղդին, բայց երբէք չը պէտք է հասնի նորան:

Գուցէ բաղդը կը սպանէր նրա մէջ դիւրաղպացութիւնը դէպի ամբոխի կարիքը...

Դատելով տեսականապէս, ճիշտ է այս բոլորը: Գաղափարի քարոզիչը ամբողջապէս գաղափարին պիտի նուիրվի, ոչինչ չը պիտի խանդարէ նրան իր առաքելութիւնը կատարելու համար: Արծրունու համար այս տեսակ գործիչը մի իդէալ էր. «Էվէլինայի» մէջ էլ նա բարձրացրել է գաղափարական գործու-

նէութիւնը մասնաւոր, անհատական զգացւմունքից. Զարդված եսական երջանկութիւնն հասարակաց բարիքի համար—սա այն զոհաբերութիւնն էր, որ Արծրունին պահանջում էր իսկական գործիչից: Ինքը անձամբ զոհեց իր անձնական բարօրութիւնը, իր բարեկեցութիւնը՝ հասարակական շահերին ծառայելու համար: Բայց պահանջնելով անպատճ մընալ, արեղայական սկզբունք գործադրել զաղափարական առաքելութեան համար, Արծրունին մոռանում էր մի բան,—որ դա հակառակ է մարդկային բնութեան: Եկեղեցու վերանորոգութիւնների հարցում նա պահանջում էր որ եպիսկոպոսներն ու վարդապետները ամուսնացած լինեն, կուսակրօնութիւնը համարում էր հակառական երեսյթ: Ի՞նչպէս էր որ աշխարհական վարդապետութեան համար նա պահանջում էր կուսութիւն, հրաժարումն ընտանիքից, կնոջից, երեխաներից:

Եւ այդպիսի անձնուրացութեան, այդպիսի ծանր զոհաբերութեան քանիսները կարող էին ընդունակ լինել: Կարող էին, ճիշտ է, լինել անհատներ, բայց դրանց հերոսներ պէտք էր համարել: Մտաւոր քարոզութիւնը, զաղափարական գործունէութիւնը այն իսկ հողն է, որի վրա շատ յաճախ բռնկվում է մէր քարոզողի և ունկնդիր կնոջ մէջ: Արծ-

բունին պահանջում էր խեղգել այդ սէրը, զոհել նրան: Չենք վիճում, դադափարի այդքան վիթխարի հերոսներ գուցէ և յաճախ պատահեն, բայց օրէնք դարձնել այդ բանը, ընդհանրութեան համար պարտադիր մի կարդ, — այդ անկարելի էր: Եւ մենք պէտք է ընդունենք, որ Արծրունին այսքան խիստ պահանջներ գնում էր՝ ճնշված իրականութեան տակ: 1891 թւականին նա խոստովանում էր որ մի ժամանակ հայ կնոջ դրութիւնն այնպէս էր, որ հրապարակախօսը նրա վերաբերմամբ քնքոյչ լինելու հարկաւորութիւն չէր զգում: Հեռու էր հայ կինը մտաւոր գործունէութիւնից, նա չէր կարգում, չէր հետաքրքվում: Եւ հրապարակախօսը, ենթարկված չը լինելով նրա մեղմացնող ազդեցութեան, խիստ էր գրում, իր պահանջների մէջ անողոք էր: Բայց հայ կինը միշտ այդ դրութիւնն մէջ չը պիտի մնար: Նա սթափիլց, սկսեց առաջադիմել, հասկանալ ու սիրել հայ գրականութիւնը, հասարակական դադափարները: Եւ հրապարակախօսը պիտի փոխէր իր կարծիքը նրա մասին:

Մենք, սակայն, պիտի նկատի ունենանք այս հանգամանքը: Անպատկ, կոյս գործիչների պահանջի մէջ Արծրունին պաշտամունքի՝ կուլտի աստիճանին էր հասցնում հասարակա-

կան գաղափարները: Գլխաւորը, թանկագինը այս է: Մեղ պէս մի ազգի մէջ, ուր սկզբից եեթ թոյլ ու հաշմանդամ է եղել հասարակական, ընդհանրական շահերի հասկացողութիւնը, Արծրունու պէս մի գործիչի, հասարակական իդէալների այդ գանատիկոսի երեւան գալը արդէն մի բախտ էր մեղ համար...

—∞—

«Մշակի» երկրորդ, երրորդ և չորրորդ տարիների ընթացքում աշխատակիցների, թըղթակիցների թիւը զնալով ստուարանում է: Հարստանում է մանաւանդ գաւառական բաժնը և Գրիգոր Արծրունին յաճախ գիմում էր գաւառներից գրողներին, նրանց ուշագրութիւնը հրաւիրում էր տնտեսական երեւոյթների վրա, ազգաբնակութեան կարիքները ուսումնասիրելու ծրագիրներ էր տալիս: Ներքին տեսութեան մէջ տեսնում ենք Արծրունու բաղմաթիւ յօդուածները, բայց այս բաժինը այլևս այն ակադեմիական կերպարանքը չունի, ինչպէս առաջին տարում, երբ ապագրվում էին ընդհանուր սկզբունքներ բացարող քաղաքանատեսական և այլ յօդուածներ: Այժմ՝ յօդուածները աւելի մաս-

նաւոր, առօրեայ, տեղական բնաւորութիւն էին կրում: 1873 թւականի մայիս ամսից «Մշակի» մէջ իրեւ թղթակից սկսում է գրել Ալեքսանդր Քալանթարը, «Մշակի» այժմեան



Ա. Քալանթար

խմբագիրը: Նա բնակվում էր Բագւում և իր թղթակցութիւնների մէջ զլիսաւորապէս ու-

շաղրութիւն էր գարձում նաւթային արդիւնաբերութեան վրա, որ այն ժամանակները գեռ նոր էր սկսել զարգանալ: Բագութից անցնելով Մօսկվա՝ ուսում չարունակելու համար, Ալեքսանդր Քալանթարը այնտեղից սկսում է աւելի մեծ եռանդով աշխատակցել «Մշակին», մանաւանդ և օթանանական թւականների վերջից:

Նոր աշխատակիցների թւում էր և Յովհաննէս Տէր-Գրիգորեանը, որ «Մշակի» երկրորդ տարգանից սկսում է գրել պատկերներ Թիֆլիսի կեանքից: Այդ ժամանակ նա մօտ էր «Մշակի» խմբագրութեան, բայց ուսուցչի պաշտօնով գնալով գաւառները, թղթակցութիւններ էր զրում զանազան տեղերից. Եօթանանական թւականների վերջերում, երբ «Մշակը» դառնում է ամենօրեայ, Տէր-Գրիգորեանը խմբագրութեան մէջ աշխատող զլիսաւոր աշխատակիցներից մէկն է դառնում: Գրելով զլիսաւորապէս ներքին տեսութեան յօդուածներ, թատրոնական բէցէնզիաներ, երբեմն նաև վէպիկներ: «Մշակի» միքանի առաջնորդողների տակ մենք տեսնում ենք նրա ստորագրութիւնը:

Նոր աշխատակից էր և Սոլոմոն Եղիազարեանը, որ «Մշակի» մէջ զետեղեց միքանի պատկերներ գաւառական կեանքից (նա

Երեանեան նահանգի Դավալու գիւղից էր):
 Արտաքին տեսութեան բաժինը նոյնպէս
 զնալով հարստանում է: Ճիշտ է, այժմ այլ
 ևս այնքան առատ չեն առաջին տարվայ
 խմբագրական տեսութիւնները, բայց դրանց
 փոխարէն երեան են գալիս մի շարք թղթա-
 կիցներ: Պօղոս Խզմայլեանը Թիֆլիսում չէր,
 զնացել էր արտասահման և թղթակցութիւն-
 ներ էր ուղարկում Պարիղից: Բայց նա եր-
 կար չաշխատակցեց «Մշակին»: Նրա տեղ
 Պարիղից սկսեց նամակներ ուղարկել Յա-
 րոն, որ գասախօսութիւններ էր լսում հայա-
 դէտ Դիւլօրէի մօտ: Նա գրում էր յաճախ,
 գրում էր շատ, գրում էր ոչ միայն գրան-
 սիական կեանքի, այլ և մեր ներքին կեան-
 քի հարցերի մասին: Յարոն քանի արտա-
 սահմանում էր, մեծ եռանդով էր աշխա-
 տակցում «Մշակին», սպաշտանում էր «Մշա-
 կի» գաղափարները, Սրծրունու արծարծած
 հարցերին արձագանք էր տալիս իբրև առա-
 ջագիւմական գրող: Վերադառնալով Թիֆլիս,
 նա շարունակեց աշխատել «Մշակի» մէջ, թէն
 ոչ առաջից եռանդով, մինչև 1878 թւականը:

Արտասահմանեան աշխատակիցների մէջ
 մեր յիշած ժամանակամիջոցում աչքի է ընկ-
 նում և Փիլիպոս Վարդանեան, որ գրում
 էր Շվեյցարիայից: Յաճախ թղթակցութիւն-

ներ էր զրում և բժշկապետ Գ. Քուչարեան:
 Բայց «Մշակը» իր աշխատակիցների թը-
 ռում ունէր և օտարներ: Թիֆլիսում մի քանի
 յօդուածներ տուեց ուսուցիչ Կարլ Հան, աղ-
 գով գերմանացի: Իսկ Գերմանիայից մի ժա-
 մանակ թղթակցութիւններ զրում էին Միւլ-
 լէր և գոկաօր Ֆան-Կրիկէն: Վերջինս Սրծ-
 րունի եղբայրների ուսանողական ընկերն էր
 և կապված էր նրանց հետ բարեկամական
 անկեղծ սիրով: Ֆան-Կրիկէն երկար չաշխա-
 տակցեց «Մշակին». Նա մեռաւ 1875-ին, ծա-
 զիկ հասակում: Նրա մահացուցակը, որ գրել
 էր Սնդդրէաս Սրծրունին, «Մշակը» գետեղեց
 առաջին երեսի վրա, սև շրջանակների մէջ
 (1876, № 17): Գրիգոր Սրծրունին իր կողմից
 հետեւեալ տողերը նուիրեց իր աշխատակցին.

Այս համարը հրատարակելով, մենք գտնվում
 ենք մի շատ տիտուր տպատորութեան տակ: Մեր
 սիրելի բարեկամ և աշխատակից Ֆան-Կրիկէն ի
 մահվան անսպասելի լուրը յարուցեց մեր հե-
 տեւեալ տիտուր մտածմունքները: Միթէ նորերը, ի-
 րանց պատերազմը չը վերջացրած, պիտի զնան,
 պիտի թողնեն աշխարհն... Մեր ազնիւ բարեկամը,
 օտար լինելով, նիտաքքրքից մեզանով, ուվից օգնել
 մեղ, սկսեց աշխատակցել մեր նոր լրագրութեանը:
 Եւ նա զեռ շատ երիտասարդ էր, նա զեռ կարող
 էր երկար ժամանակ իր տաղանջը արդիւնաւոր ա-
 նել մարդկութեանը...

Այսպահ ջերմ համակրութիւնը դէպի մի օտարազգի երիտասարդ, որ մի քանի յօդուածներ էր տուել «Մշակին», դարձեալ հասկանալի և բնական է երեւամ, երբ մենք աչ-



Գրիգոր Առծունի (1873)

քի առաջ ենք բերում այն հանգամանքները, որոնք շրջադարձում էին Արծրունուն: Օտարոները համակրում էին, սիրում էին, իսկ հայերը: Ինչպէս երեւամ է, հէնց այդ տարին էր, որ «Մշակի» շուրջը հաւաքված մարդկանց վերջնական զտումը տեղի ունեցաւ, հեռա-

ցան և նրանք, որոնք գեռ չեին հեռացել: Եւ Արծրունին, ինչպէս պէտք է ենթադրել, նրանց հայելին էր ուղղում իր «Դաւաճաններ» յօդուածը (1875, № 43): Այդտեղ նա նկարազրում էր մի նոր մարդուն, որ վերջացնելով ուսումը, սկսում է մի գործ և տեսնելով որ իրան համակրում են համամիտամարդիկ, սկզբում ուրախանում է: Բայց որքան զարմանում և զայրանում է նա, երբ տեսնում է որ այդ համամիտները դիմակաւորված մարդիկ են, որ փոխանակ նոր ուղղութեան կուսակից լինելու, նրանք յետազիմական դադախարներ են պաշտում և հին սերունդից էլ վատ յատկութիւններ ունեն: Դրանց Արծրունին անուանում էր դաւաճաններ: Հիներին պէտք է հարուածել, բայց կարելի է չատել: «Իսկ նոր սերունդի դաւաճաններին մենք ատելով ատում ենք, և երդիում ենք նրանց միշտ ատելու և մեր բոլոր ոյժից հարուածելու և հալածելու»: Եւ նա վերջացնում էր այդ յօդուածը հետեւեալ տողերով.

Հիներից մենք ոչինք չէինք սպասում եւ ոչ ինչինք էլ սպասում, իսկ զոյտանից, նորերից սպասում էինք...

Դիմակներդ լաւ չեն ծածկում ձեր երեսը, գի-

տութեան, յաւիտենական նշմարտութեան, ազատամտութեան եւ նոր ուղղութեան դաւաճաններ...

Հիներին մենք խղճում ենք,—իսկ մեզ, դաւաճաններ, ատելով ատում ենք:

Եւ իրաւ Արծրունին երբէք չխնայեց դաւաճաններին, երբէք չը գագարեց նրանց հաւածելուց: Նա գիտէր անողորմ կերպով գուրս չարտել ամնն մէկին, որ դաւաճանում էր իր գրօշակին, իր ուղղութեան: Այս առիթով էլ շատ ու շատ գանգատներ են լավել մեղանում: Բայց կարելի՞ է մեղագրել Արծրունին: Յիշենք քիչ վերեում բերած նրա պահանջները: Հասարակական գործունէութեան նույիրված մարդուց նա պահանջում էր կատարեալ անձնազոհութիւն: Նա չէր թոյլ տալիս որ հասարակական գործիչը իրաւունք ունենայ անձնական երջանկութեան մասին անդամ մտածելու: Այսքան վեհ, այսքան սըրբազան բարձրութեան վրա գնելով հասարակական օգուտը, նրան ծառայելու անհրաժեշտութիւնը, կարող էր Արծրունին ուրիշ կերպով վարվել դաւաճանների հետ: «Դաւաճանները միշտ աւելի ատելի են; քան պարզ թշնամիները», ասում է նա: Եւ ով կարող է ուրանալ այս ճշմարտութիւնը...

Եղած աշխատակիցների, հաւատարիմ մը-

նացածների մէջ մենք առանձնապէս պիտի խօսենք երկուսի մասին—Անդրէաս Արծրունու և Ռաֆֆիի մասին:

Անդրէասը, ինչպէս տեսանկը, թիֆլիս եկաւ 1874-ի սկզբում: Ներսիսեան գալրոցի տես-



Անդրէաս Արծրունի

չութիւնը չաջողվեց և երիտասարդ գիտականը, մի տարի մնալով թիֆլիսում, մեծ եռանդով աշխատակցում էր «Մշակին»: Գրում էր նա զիսաւորապէս իր մասնավիտութեան վերաբերված յօդուածներ, բայց միանգամայն խորի չէր մնում հասարակական ըն-

թացիկ հարցերին: Ամառը Անդրէաս Արծրունին մի երկար ճանապարհորդութիւն կատարեց Կովկասի զանազան կողմերում՝ բնական հարստութիւնները ուսումնասիրելու համար. այցելեց Լոփին, Գանձակի գաւառը, գնաց Բագու, Դաղստան... իր այցելած ըստ տեղերից նա թղթակցութիւններ էր ուղարկում «Մշակին», որոնց մէջ նկարագրում էր իր հետազօտութիւնների արդիւնքները: Առանձին ուշադրութիւն դարձրեց նա Պուրայում տորոնի արդիւնագործութեան վրա: Տորոնը Կովկասի արդիւնագործութեան մէջ շատ խոշոր գեր է կատարել, բայց եօթանանական թւականների սկզբից ակսել էր սաստիկ ընկնել, որովհետև գտնվել էր ալիքարին անունով դոյնը, որ իր էժանութեամբ դուրս էր մզել տորոնը: Պուրայում արդէն տաղնալ էր տիրում և Անդրէաս Արծրունու, իբրև մասնագէտի, կարծիքներն ու խորհուրդները մեծ նշանակութիւն ունեին արդիւնագործների համար: Եւ Անդրէասը խըզմատոր հետազօտութիւններ կատարեց, յայտնեց իր եղրակացութիւնները «Մշակի» մէջ: Բացի գրանից, նա տպագրեց մի շարք յօդուածներ Կովկասեան հանքերի մասին, ուշադրութիւն հրաւիրեց այն հանդամանքի վրա, որ ծծումբի արդիւնագործութիւնը կա-

բող է հարստութեան մեծ աղբիւր դառնալ Կովկասի համար: Թիֆլիսում, ինչպէս տեսանք, նա դասախոսութիւն էլ կարդաց ծըծումբի մասին:

Իր հայրենիքում երիտասարդ զիանականը շատ օգուսներ կարող էր տալ իր մասնագիտական պատրաստութեամբ: Մեր երկիրը այդպիսի ոյժերի կարօտութիւն ունէր՝ իր բնական հարստութիւնները երեան հանելու համար: Բայց Անդրէաս Արծրունին մեղանում տեղ չը գտաւ, չը նայած իր պատրաստականութեան, աշխատելու յօժարութեան: Եւ չը գտնելով իր ոյժերի, իր ընդունակութիւնների գործադրութեան տեղ և յարմարութիւն, նա հեռացաւ մեր անհիւրընկալ երկրից, գնաց աշխատելու քաղաքակիրթ մարդկութեան մէջ, իր հայրենիք դարձրեց Գերմանիան, ուր նրա համար պատրաստված էր յայտնի գիտնականի փառքը...

Ճանապարհ գնելով իր եղրօրը, Գրիգոր Արծրունին իր դառն գանգատները թափեց՝ «Գաղթենք, միշտ գաղթենք» առաջնորդող օդուածի մէջ (1875, № 10):

Գարձեալ մի երիտասարդ, երօպական ուսում ստացած, թողնում է մեր երկիրը եւ գնում է օտար երկրներ՝ իր ստացած հիմունքիւնները գործ դնելու համար:

Մեր երիտասարդները զավիս են մի քանի ժամանակով, տեսնում են որ գործադրութիւն չը կայ իրանց հմտութիւններին,—եւ կրկին դնում են:

Ո՞վ է մեղաւոր...

Իրանք:

Նրանք պիտի զիտենային, որ մեր երկրում ոչ Աէ միայն հարկաւորութիւն չը կայ բռւն զիտութեան, բայց եւ տեխնիկական արհեստները զրեթէ բռլորովին գործադրութիւն չեն զտնում մեզ մօտ: Մեր երկրում, ինչպէս մենք մի անգամ ասացինք, գործ են դրվում միայն ամենաստոր արհեստները՝ դերձակութիւն, կօշկակարութիւն... ինչի այդ չը սովորեցին...

Եկան զինեղործներ,—ինչ հարկաւոր են մեզ զինեղործներ. եկան զիւղատնտեսներ,—ինչ հարկաւոր է մեզ զիւղատնտեսութիւն. եկան բարձր բազմարվեստեան զպրոցում աւարտած երկրագործներ,—ինչ հարկաւոր է մեզ երկրագործութիւն... վերջապէս եկան հանքարաններ,—ինչին են պէտք մեզ հանքարաններ:

Ուզում էք մնալ ձեր սիրելի հայրենիքում, կամենում էք որ ընտանիքը ձեզ զնահատէք, որ հասարակութիւնը ձեզ ընդունէք,—պիտի սովորէիք ամենաստոր արհեստներ, որ ոչ բռւն դիտութեան, ոչ էլ նրա տեխնիկական գործադրութեան վրա են հիմնը-փած,—պիտի սովորէիք՝ կօշիկներ կարել, շոր ձեւել ու կարել, մի նայել...

Խսկ դուք վերադառնում էք ճշմարտ զիտութենով, վերադառնում էք տեխնիկական, բազմարվեստեան հմտութիւններով... ումից էք սպասում օգնութիւն... հասարակութենից, ծիծաղելի բան է: Գուցէ կարծում էք որ այս կամ այն աղան, որ

այս կամ այն և աստափոր ը կը խոստովանի որ դուք նրանից աւելի էք հասկանում, ու կը տայ ձեզ գործ՝ մինը իր խաղողի այգիների, միւսը իր ֆարբիկայի կառավարութիւնը... սխալգում էք:

Եւ չը կայ էլ ոչինչ կառավարելու. ամենալաւ կապիտալիստները այնպէս են կառավարել իրանց կայքը, որ այժմ մէկը չը կայ, որ զիտենար՝ ինչ ունի, ինչ չունի...

...Զունէք հարստութիւն, խսկ ունենալով զիտենական, տեխնիկական հմտութիւններ, աւելորդ էք դիռ եւս մեզ համար... մի ամենաստոր եւ ապրուստը ապահովող արհեստն էլ չը զիտէք... պէտք է կրէք ձեր արած սխալմունքի պատիճը:

Սխալմունք,—ոչ, յ անցանք: Այդ յանցանքը նորանում է կայանում, որ դուք և աւ ատաց ցիք մեր հասարակութեան խոստումներին; եւ չը զիտէիք որ խաթառ գած էք...

Դուք սխալվեցաք, պէտք է կրէք ձեր արած սխալմունքի պատիճը,—եւ պէտք է գաղ թէք...

Երեւի և այսի մատագիրն է զաղթել, անդապար զաղթել... որովհետեւ հայ հասարակութիւնը վժուել է մնալ անշարժ, երդուել է յաւիտենական անշարժութեան գաղափարին...

Խսկ ինչ որ յայտնվում է նրա մէջ նոր, թարմ, առաջ մզող, զարկ տուող, —նա պէտք է դուքս գցիք, աքտորիք, ժայթքվի նրա միջից...

Մեր ժամանակակից հայ հասարակութիւնը կարծում է որ կարող է հայ մնալ միայն մի պայմանով, այն է անշարժութիւնը, խսկ եթէ մի որեւէ շարժում, առաջադիմութիւն ընդունեց, —նա այլ եւս իրան հայ չէ համարում...

Այս է հայի պատմական յատկութիւնը:

Հետեւեցէք, հետեւեցէք այդ գովելի յատկութեանը, զաղթել տուեցէք, ստիպեցէք ձեր վարմունքով գաղթել օտարութեան մէջ այն բոլորը, ինչ որ բացառութեամբ ձեր մէջ յայտնիում է՝ նոր, թարմ, առողջ, բարոյապէս եւ մտաւորապէս բարձր...

Բայց չը մոռանաք որ վերջը դուք ինքներդ կը պատժէք այդպիսի հակառնկերական վարմունքի համար...

Գիտնս, հասարակութիւն, քո վարմունքը քո որդիների վերաբերութեամբ ինչպէս է անուանվում՞ և սարական անձնապատճեն:

Այն ժամանակ, երբ Արծրունին գրում էր վրդովված սրախց բզիսած այս կծու, բայց զարմանալի ճշմարիա տողերը, թիֆիսից նոյն գաղթողի դրութեամբ հեռացել էր և «Մշակի» միւս մշտական աշխատակիցը՝ Բաֆֆին։ Վաճառականի խանութում ծառայելը այլ ես անկարելի էր գարձել յուսատու գրողի համար։ «Մշակի» շրջանը այն աղդեցութիւնն էր արել նրա վրա, որ նա թողեց խանութը։ Բայց զրական աշխատանքը գեռողի համար։ «Մշակի» շրջանը այն աղդեցութիւնն էր արձել նրա վրա, որ նա թողեց խանութը։ Բայց զրական աշխատանքը գեռողի համար ապրուստի միջոց չէր գարձել։ Բաֆֆին ստիպված եղաւ ուսուցչութեան ետեղ գնալ և ճանապարհվեց Թավրիզ ուսուցչի պաշանով։ Բայց իր կապը չը կտրեց «Մշակի», և Պարսկաստանից

Էլ չարունակեց իր աշխատակցութիւնը։ Ի՞նչ էր նա տուել մինչև 1875 թւականը։

Վերջացնելով Պարսկաստանի նամակները «Մշակի» երկրորդ տարվայ մէջ, Յակոբ Մէլիք-Յակոբեանը երկար ժամանակ երեան չէր դարձարագում Բաֆֆի ստորագրութեամբ։ Դրա փոխարէն մենք յաճախ հանդիպում ենք Մէլիքագէին։ Բայց նա երեք տարվայ ընթացքում կարծես չէ զգում իր իսկական կոչումը—վիպագրութիւնը, թէև 1874-ին առանձին գրքով հրատարակել էր «Փունջի» երկրորդ հատորը, որի մէջ կային փոքրիկ գեղեցիկ վէպիկներ։ «Մշակի» մէջ նա ամբողջ այդ ժամանակամիջոցում ունի «Մի օրավար հողապատկերը միայն։ Մնացած նրա գրուածքները զրական-հրատարակախոսական բնաւորութիւն ունէին։ Թւում էր թէ նա հեռանում էր վիպագրութիւնից և իր կոչումը որոնում էր քննադատական և հրատարակախոսական հարցերի մէջ։ Նշանակութեան արժանի է, որ Բաֆֆին այդ ժամանակներում առանձին ուշագրութիւն է դարձնում թիւրքահայերի գործերի վրա։ Մի առանձին աշխայժող նա հետեւում էր Թիւրքիայի կեանքին և «Մշակի» մէջ ընդարձակ յօդուածներ էր գրում, որոնց նիւթը թիւրքահայերի ընթացիկ հրատապ հարցերն էին—Հասունեան

Խառնակութիւնները, Խրիմեանի պատրիարքութիւնը և նրա չուրջը գործող կուսակցութիւնները, Վանի տիսրահռչակ Պօղոս վարդապետը, Սրուանձտեանի գրական աշխատութիւնները և այլն:

Գեղարուեստական բաժինը «Մշակի» մէջ գեռ թոյլ է: Յովհաննէս Տէր-Գրիգորեանի, Սողոմոն Եղիազարեանի և ուրիշների պատմուածքները թոյլ են, անմշակ են, շատ-շատ միայն բարքերն են կարողանում պատկերացնել: Վիպազրութիւնը առհասարակ մեր գրականութեան մէջ գեռ մտածելու նիւթեր չէր տալիս, բէալական տիպեր և կեանքի հանդամանքներ չէր լուսարանում: Դեռ իր առաջնութեան մէջ էր թատերագրութիւնը: Սունդուկեանի «Բանդած Օջախը» և «Էլի մէկ զոհը» նոր-նոր յայտնութիւններ էին մեր գրականութեան մէջ և Սրծրունին մեծ հաճութեամբ զբաղվում էր տաղանդաւոր թատերագրողի ստեղծած տիպերով թէ իր առաջնորդողների, թէ ֆելիէտօնների մէջ: Բեմը՝ մերկացնող հրապարակախօսութեան դաշնակիցն էր դառել: «Մեր բարձր ուսում ստացած Օսէփներ», «Հին և նոր սերունդի ուստերազմը բնմի վրա» առաջնորդողները գրված են «Բանդած Օջախի» և «Էլի մէկ զոհի» առիթով:

Նկատենք այստեղ որ «Մշակի» մէջ առաջին տարվանից առանձին աչքի լնկնող երեսյթ է գտնում զրական քննադատութիւնը: Մատենախօսական յօդուածները բազմանում են մանաւանդ յետագայ տարիներում: Այդ բաժնում ամենից շատ աշխատում էր Բագիկն. նա է զրել քննադատական յօդուածներ և Սունդուկեանցի պիէսների մասին:

Իսկ ոտանաւորներ «Մշակը» երբէք չէր տպագրում:

և տեղատութեան։ Տեսնում ենք այդ կեանքի մէջ ամբողջ շրջաններ, երբ բարձրանում, լեռնանում է գաղափարական շարժումը, ողոզում է առօրեայ մոխրագոյն իրականութեան բոլոր շարքերը, երբ ազգի բոլոր ստեղծագործական ընդունակութիւնները լարվում են, միանում են մի մեծ պաշտամունքի առաջ և միաբան գործակցութեամբ իրազործում են ամբողջ մարդկութեան համար սուրբ մի միտք։ Սա մակընթացութիւնն է, տեսնային եռանդի այն լարումը, որ կլանելով ազգի ամբողջ ուշըն ու միտքը, տանում է նրան զէպի համաշխարհային մեծագործութիւնները՝ արհամարհել տալով ամեն մի զրկանք, ամեն մի զոհողութիւն։ Եւ շարունակվում է այդ շարժումը, մինչեւ որ գալիս է տեղատութիւնը, և ուսած գաղափարականութիւնն իշնում է, ընկնում, որպէս զի դարձեալ առօրեայ, սովորական կարգը զայ տիրելու։

Մենք էլ, ոռւսահայերս, մեր կեանքի մէջ ճաշակել ենք այդպիսի մի երկու շրջանների նուիրական ազգեցութիւնը։ Ճաշակել ենք ասում, որովհետեւ մենք, իբրև մի փոքրիկ ազգ, որ ենթարկված է մեծ ազգերի մտաւոր և կուլառւրական ազգեցութեան, չէնք կարող ինքնուրոյն, անկախ, ինքնազլուխ շարժումներ սկսել։ Մենք միշտ իւրացնում

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ:

Ն Շ Ա Ն Ա Խ Ո Ր Շ Բ Ա

I

Հասարակական շարժում Խուսասանում։—Մշատօնական երկիրներ եւ ազսարա հոսանք։—Նոր շրջան մեր կեանքի մէջ։—Տախամենան դիպներ։—Արծրունին քարտրական դիպների դրունու վրա։—Պատմական տեսուրիշեան գաւառների ձգումը դիպի Խուսասան։—Պատրիարքարանի եւ ազգային ժողովի զործերը։—Արծրունու նշանաբանը։—Դիպայի Խուսասանի վրա։—«Մեղրիի» հակառակուրիներ։—«Փորդ» հանդիս դատողուրիներ։—Ի՞նչ է կիւրականուրիներ։—Կ. Պօրի մամուլը Արծրունու դիմ։—Գաղրականուրիեան հարց։ «Մեն» էլ հրաներ ենք։—Ներսկու պատրիարքի շրջարեւականը, Արծրունու առաջին յարձակումը ներսկու դիմ։—Կ. Պօրում սարված առասպեկտ Կովկասի մասին։—«Մասիսի» յօդուածը։—«Այժմ կամ երբեմ»։—Վոստօնի Յորօշիւրը։—Թիֆլիսի հայերի ուղերձը։—Դիպականացուն։—«Ազիշի» հոգերանուրիներ։—«Ազիշի հըրդեհը։—Հայի հոգերանուրիներ։



Առաջադէմ ազգերի կեանքը շատ անդամ ներկայացնում է մի պատկեր, որը մենք կարող ենք նմանացնել ծովի մակընթացութեան

էինք, միշտ ենթարկված էինք. մեր դասաւուն, մեզ ոգեսրողը մեզ վոա տիրող մեծ ազգի կեանքն էր։ Տասնիններորդ դարում Ռուսաստանը երկու անդամ գաղափարական մեծ շարժումներ է սկսել և այդ երկու շարժումներն էլ արձագանք են դաել մեր կեանքի մէջ։

Վաթսունական թւականների մեծ շարժման հետ մենք արդէն լաւ ծանօթ ենք։ Ներքին բարեկարգութեան, ինքնաճանաչութեան, ժողովրդական դասի այդ գեղեցիկ շարժումը քնած հասարակութեան մէջ յարուցեց գաղափարական դործիներ, առաջազիմութեան առաքեալներ. Նազարեանց, Նալբանդեանց, Գամառ-Քաթիպա, Շահազիդ այդ ժամանակների ծնունդներ են, Գրիգոր Արծրունին վաթսունական թւականների իդէաների վրա ստացաւ իր առաջին գաստիարակութիւնը։

Բայց վաթսունական թւականներին մենք գեռ նոր-նոր էինք սկսում զգալ, ապրել. շարժումը մասնաւոր աղդեցութիւն արտւ մեղ վրա։ Այդպէս չէր երկրորդ մեծ շարժումը, որ սկսվեց Ռուսաստանում 1875—1876 թւականներին։ Վաթսունական թւականների շարժումը աղատեց միլիոնաւոր ճօրտերին Ռուսաստանի խորքերում։ իսկ եօթանասնական թւականներին նոյն այդ աղատված Ռուսաւո-

տանը ցոյց է տալիս համաշխարհային նոր պատմութեան մէջ չատ հազուագէպ մի մեծագործութիւն. նա ահազին շարժում է սկսում մի բարբարոս պետութեան լուծի տակ ձնչված ազգերը աղատելու համար։ Կանգնած համարեա ամբողջ Եւրօպայի թշնամական, կասկածու, սառն վերաբերմունքի առաջ, նա մենակ, սեփական ոյժերի վրա յոյս դրած, սկսում է մի աղիտացիա յանուն արդարութեան, մարդկացին իրաւունքների, քրիստոնէական գաղափարի. ուսւ ժողովուրդը բորբոքվում է աղատարար տենչանքներով, հրապարակ է հանում իրնիւթական և բարոյական ոյժերի մի ահազին պաշար և ալեոր, բարբարոսական Արևելքում նրա ջանքերով տեղի են ունենում ահաւոր դէսքեր, որոնք կերպարանափոխում են շատ փոքր ազգերի պատմութիւնը։

Այդ խոչոր շարժումը աւելի մեծ արձագանք է տալիս մեղանում և մեր կեանքի մէջ առաջ է դալիս մի շատ նշանաւոր, շատ փայլուն շրջան, որը մենք կարող ենք անուանել 1876—1883 թւականների շրջան։ Ոչ միայն տասնիններորդ դարում, այլ և նրանից էլ առաջ, դարերի մի երկար շարքում մենք չենք կարող գանել մեր աղգային կեանքի տարեգրութիւնների մէջ այդքան փայլուն մի եօթնեակ։ Այդ ժամանակը մի անկիւնա-

քար է կազմում մեր պատմութեան մէջ. մեր ժողովրդական կեանքը ստանում է մի նոր ուղղութիւն՝ ասպարէզ հանելով մեր բոլոր մտաւոր կարողութիւնները; Գրականութեան, մամուլի, գլուխական գործի, ֆատօնի, հասարակական հիմնարկութիւնների համար զարգացման, բարդաւաճման ոսկէ շրջանէ դա: Հրապարակախօսութիւնը աւելի ևս կրակութափ է ստանում, գեղարուեստական դրականութիւնը մեծ թուչը է անում. Գամառ-Քառիպան իր նոր երգերն է գրում, Բաֆֆին մեր նոր վիտապրութիւնն է սկսում իր «Զալալէդդինով», «Ալենթով», «Դաւիթ-բէկով», «Կայծերով»: Մենք հիմնում ենք ամենօրեայ լրագրութիւն, մամուլի նոր օրգաններ են ծնվում: Հայոց թատրոնը Աղամեանի փառաւոր շրջանի մէջ է մտնում: Հիմնվում են բարեկործական և հրատարակչական ընկերութիւններ, բազմանում են դպրոցները, մանկավարժական հարցերը վէճերի նիւթ են դառնում, ուղղութիւններ են ստեղծում, ուսուցչական ժողով գումարում: Ոչնչանում է անջրակետը ուսուահայերի և թիւքքահայերի մէջ և Հայաստանի գաւառների կրթական գործը դառնում է արևելեան և արեմտեան միացած, մօտեցած հայութեան ընդհանուր սուրբ գործը: Ո՞քան եռանդ ժողովրդի գարկերակի մէջ,

որքան հիւթ նրա կեանքի մէջ. գաղափարներ ձգտումներ, ապագայի վարդապոյն յոյսեր— այս եռուն նիւթերից էր խմորվում շարժումը: Հասորներ են հարկաւոր այդ եօթնամեակի ամբողջ պատմութիւնը ներկայացնելու համար: Բայց այդ պատմութեան նոյն խսկ համառօտութիւնն անդամ այժմ չէ կարելի տալ օրինաւոր կերպով. գեռ ժամանակը չէ եկել, գեռ հանգամանգները չեն թոյլ տալիս աղատ ու համարձակ մտնել այդ շըրջանի մէջ: Մեր ընթերցողների ուշադրութիւնը հրաւիրելով այս տողերի վրա, մենք կը փորձենք, որքան հնարաւոր է, գոնէ համառօտ կերպով յիշատակել գէսքերը և զեղելութիւնները:

Սոլագայ պատմագիրը, կասկած չը կայ, կը վկայէ անսաշառութեամբ, որ այդ նշանաւոր ժամանակների ամենախոշոր գործիչներից մէկը Գրիգոր Արծրունին էր: Եւ այս իրողութիւնը արձանագրելու համար նա կունենայ իր առջև փաստերի մի ամբողջ կոյտ: Դա «Մշակ» լրագիրն է: Նշանաւոր եօթնամեակի ամբողջ պատմութիւնը որքան առատ նիւթեր ունի «Մշակի» հասորների մէջ. այնտեղ արձանագրված է իւրաքանչիւր քայլ, իւրաքանչիւր միտք, դիտաւորութիւն, դէպք: Ի՞նքը, Արծրունին, իր յետագայ զրուածքները,

բից մէկում *) ասում է որ այդ ժամանակ-ներում «Մշակը» յարուցեց այնպիսի հարցեր, «որոնց յետոց երբէք այլն չը կարողացաւ յարուցանել», որ «առաջնորդող յօդուածը ամենից մեծ գեր էր խաղում և ամենից շատ անեղ էր բանում «Մշակի» համարներում»: Դա, ասում է Արծրունին, «Մշակի» ամենատփայլուն ժամանակն էր:

Յայնի է, որ Ռուսաստանի շարժումը սլաւօնասիրական խիստ զոյն ունէր: 1875թ. ալստամբութիւն ծագեց Բօնիք և Հերցեգովինա սլաւօնական նահանգներում, թիւրքաց կուռավարութիւնը, իր վաղեմի սովորութեան հետեւելով, սկսեց արեան և գաղանութիւնների մէջ խեղգել այդ ապստամբութիւնը: Բայց այս անդամ զոհերի ձայնը անլսելի չը մնաց, որովհետեւ սլաւօն ույնեայի հզօր սլաշտակն հանդիսացաւ Ռուսաստանը: Եղելութիւնը քաղաքական մեծ հարցի կերպարանք ընդունեց: Ռուսաստանը դիմեց եւրօպական դիպլոմատիայի աջակցութեան և ամեն ջանք դորձ դրեց, որպէս զի հարցը խաղաղ լուծում ստանայ: և ապստամբութեան տեղերում մայնվեն բէֆօրմներ, որոնք պիտի ապահովէին քրիստոնեաների կեանքն ու ստացուածքը:

*) «Մշակ», 1889, № 5:

Մինչդեռ դիւանագիտութիւնը իր գրադրութիւններն էր սկսել, մինչդեռ առաջարկութիւններ էին անում թիւրքիային և նրանից բացատրութիւններ էին ստանում, Ուուսաստանում սկիզբ առաւ և լայն չափերով տարածվեց ապստամբներին օգնութիւն հասցնելու գործը: Լրագիրներում տպագրվեցին Սերբայից, Զերնօգօրիայից և կած կոչերը, ուրոնց մէջ սրտաշարժ գոյներով նկարագրվում էին աղատութեան համար զէնք վերցրած սլաւօնացիների գրութիւնը, երկրի աւերումը, արիւնահեղութիւնները, թիւրքական դադանութիւնները: Օգոստոսի կէսին Սլաւօնական Բարեգործական Բնկերութիւնը սկսեց գործել, նուէրներ հաւաքել, աղգաբնակութեան բոլոր խաւերի մէջ նա ջերմ համակրանք դատաւ և չորս ամսվայ ընթացքում կարողացաւ Բօնիք և Հերցեգովինա հասցնել մօտ 400 հազար բուլլու օգնութիւն: Այդ օգնութիւնից աւելի կարենը էր այն, որ Ռուսաստանի մէջ կազմվում էր հասարակական կարծիք, թէ չը պէտք է ոչինչ զոհուղութիւն խնայել՝ տանջվող եղայրներին թիւրքաց լուծից ազատելու համար:

Խաղաղասէր Ալէքսանդր Երկրորդը աշխատում էր փոխադարձ համաձայնութիւնների և զիջումների միջոցով կարգաւորել արևելեան

հարցը, որ սպանում էր ահաւոր բանկումով տակն ու վրա անել ամբողջ քաղաքական աշխարհը: Սակայն դիւնազիտակական ջանքերը զուր էին անցնում, Եւրօպան սովորել էր կասկածով նայել Ռուսաստանի վրա, ենթադրելով այս անգամ էլ թէ սլաւոնասիրական շարժումը ծածկում է ռուսաց փառակրթական նուաճողական ձգտումները: Անդիհան սկսեց գիմագրել Ռուսաստանի պահանջներին և թիւրքամոլ Դիզրայէլի կառավարութիւնը ամեն քայլում զգալ էր տալիս սուլթանին որ նա մենակ չէ և կարող է վստահութեամբ առաջ տանել ձգձգումների, անպտուղ խոստումների քաղաքականութիւնը:

Իսկ զէսպերը Բալկանեան թերակղզում զարգանում էին ճակատագրական ընթացքով և աւելի ու աւելի արծարծում էին այն հրդդեհը, որ վառիլ էր Բօնիփա-Հերցեգովինայում: Եկատ 1876 նշանաւոր թւականը, նշանաւոր այն ահեղ ցնցումներով, որոնց ասպարէզը Թիւրքիան էր: Ռուսաստանի եռանդուն միջամտութիւնը վառեց մահմեդական ֆանատիկոսութիւնը: Գարնանը Եւրօպական Թիւրքիան արիւնոտվեց: Կ. Պօլսում գահընկէց եղաւ և սպանվեց սուլթան Աբդիւլ-Ազիզը. սպանվեցին Թիւրք մենիստրներից երկուսը. Սալօնիկում մահմեդական ամբոխի ձեռքով

չարաչար սպանվեցին Եւրօպական երկու հիւապատուներ. Յօլգարիայում ապստամբութիւն բարձրացաւ և թիւրքերը այնտեղ այնպիսի զարհուրելի դազանութիւններ գործեցին, որ սարսափի աղաղակ բարձրացաւ Եւրօպայում և պետական մեծ գործիչ Գլադատօնը սկսեց իր հոչակաւոր արշաւանքը Դիզրայէլիի թրքամոլ մինիստրութեան դէմ, որ բարբարոս թիւրքերի պաշտպան էր հանդիսացել և չէր թոյլ տալիս որ քրիստոնեաները աղատվեն մօնուուրական անիծված լուծից:

Արևելքի հրդեհը այլ ևս ոչ մի կերպով չէր կարելի հանգցնել: Դէսպերը յաջորդում էին իրար շշմեցնող արագութեամբ: Ամառը Սերբիան և Զերնօգօրիան պատերազմ յայտարարեցին: Թիւրքիային: Աբգիւլ-Ազիզի յաջորդ սուլթան Մուրադը նոյնպէս գահընկէց եղաւ և փակվեց Ստամբուլի պալատներից մէկում իրեւ խելագար: Ռուսաստանի համակրութիւնը դէպի ապստամբված և պատերազմող պատօնները ահագին չափեր ընդունեց. հասարակական կարծիքը լարման ծայրայեղ աստիճանին հասաւ. խումբ-խումբ կամաւորներ թափվեցան Սերբիա՝ իրանց արիւնը նույիրելու աղատութեան գործին: Դա մի ամբողջ խաչակրաց արշաւանք էր յանուն

քրիստոնէութեան, յանուն արդարութեան և
մարդկային նուիրական իրաւունքների:

Որբան էլ եւրօպական պետութիւնների
համար ցանկալի էր որ արենելեան արիւնոտ
հարցը սուր կերպարանք չընդունէ, չը պա-
հանջէ իր արմատական, միակ հնարաւոր
լուծումը քրիստոնեանների ազատութեան, մի-
ջոցով, գէպքերը անհամեմատ զօրեղ հանդի-
սացան և արեան ու արտասունքների իրա-
կանութիւնը խլացրեց միջազգային քաղա-
քական հարցերը, դառնալով ուշադրութեան
և ընդհանուր հոգացութեան միակ առարկայ:
Ռուսաստանը անտարեր չէր, և ոչ ոք չէր
կարող խեղգել արենելեան հարցը: Ալեքսանդր
II կայսրը բոլորովին հարկաւոր չէր համա-
րում ծածկել որ իր կամքն է մարդավայել
կեցութիւն ստեղծել Թիւրքիայում քրիստո-
նեանների համար, դա Ռուսաստանի պատուի,
հեղինակութեան հարց էր դարձել, և նա-
հանջման ճանապարհ այլ ես չը կար: Կայսրը
դորձում էր համբերութեամբ, նա ամենից
առաջ ուղում էր որ արենելեան հարցի ար-
դարացի լուծումը կատարվի եւրօպական
պետութիւնների համաձայնութեամբ: Իսկ
եթէ եւրօպական համաձայնութիւնը անկա-
րող կը լինի իրականացնել քրիստոնէութեան
և մարդկայնութեան պահանջները, այն ժա-

մանակ Ռուսաստանը կը գործէ մենակ, իր
սեփական միջոցներով:

Այս հաստատակամութիւնը, այս բացար-
ձակ, անդառնալի վճիռը այլ ևս ոչ մի կաս-
կած չէր թողնում որ արենելեան հարց անու-
նը կրող դարաւոր համգոյցը միայն ուսւաց
սրով պիտի կտրվի: Թիւրք-սերբիական պա-
տերազմի ժամանակ արդէն մի աւելի մեծ,
աւելի ահաւոր պատերազմի հոտ էր փչում,
ուսւաթիւրքական պատերազմի հոտը: Թէև
գիտլօմասարիան գեռ շարունակում էր ջանքեր
թափել, բայց Ռուսաստանը, յոյս չունենալով
ոչ եւրօպայի բարեացակամութեան, ոչ էլ
Թիւրքիայի խոստումների անկեղծութեան
վրա, իր պատրաստութիւններն էր տեսնում:
Զօրքը պատերազմական դրութեան մէջ գրր-
վեց: Ամբողջ քաղաքակիրթ աշխարհը նայում
էր այդ մեծ պայքարին, որ մզում էր քրիս-
տոնէական խաչը մահմեդական կիսալումի
դէմ: Թէ որքան մեծ էր հետաքրքրութիւնը,
կարելի է եղբակացնել հէնց նրանից, որ,
ինչպէս հաշել էին լրազիրները, երկու տար-
վայ ընթացքում այլ և այլ երկիրների մէջ
լոյս տեսան մօտ 12,000 բրոշիրներ և զբր-
քեր, նուիրված արենելեան հարցին: Իսկ որ-
քան էին զրում պարբերական հրատարակու-
թիւնները...

Հայ լրագիրներն էլ, ի հարկէ, արձագանք էին տալիս այդ ընդհանուր շարժման: Խօսքը միմիայն բալկանեան սլաւոնների մասին էր, Եւրոպական Թիւրքիայի սահմաններից գուրս չը կար տանջվող քրիստոնեաներին ազատելու հարց: Եւ ահա ամբողջ հայ մամուլի մէջ «Մշակը» գրաւում է մի բացառիկ դիրք, բարձրացնելով և արծարծելով թիւրքահայերի հարցը: Արծրունին սկսում է իր կրակող առաջնորդողների շարքը, առաջնորդողներ, որոնց նման ահապին գեր կատարած լրագրական յօդուածներ մեղանում չեն եղել և որոնք Արծրունու գրական դործունէութեան փառքն ու պասին են կազմում:

1876 թւականին, երբ ամբողջ Արևելքը այնքան խօսեցնել էր տալիս իր մասին, երբ հասունանում էին և իրանց լուծման էին հասնում ազգերի աղաւութեան մեծ խնդիրները, «Մշակը» գեռ շաբաթաթերթ էր: Արծրունին գեռ հաղար բաժանորդի էր սպասում, որ շաբաթը երկու անգամ հրատարակէ իր լրագիրը. բայց այդ թիւը չը կար, իսկ ժամանակը մյուսան սպահանջում էր աւելի յաճախ երեալ, աւելի շատ խօսել իր մասին: Այդ պահանջը շատ լաւ էր զգում Արծրունին և նա վճռեց չը սպասել հաղար բաժանորդի, այլ յոյս դնել անձնական զոհողու-

թիւնների վրա: Սակայն շաբաթը երկու անգամ կարելի էր հրատարակել միայն յաջորդ, 1877 թւականից, իսկ մինչև այն պէտք էր բաւականանալ շաբաթաթերթով: Եւ պէտք է խօսատվանել, որ շաբաթը մի անգամ խօսելով էլ Արծրունին կարողացաւ մեծ աղմուկ և իրարանցում բարձրացնել: Նրա դէմ զինվեց ամբողջ հայոց մամուլը թէ Թիֆլիսում և թէ Կ. Պօլսում. բայց նա իր փոքրիկ շաբաթաթերթով առաջ էր տանում մի յաղթեական պրօպագնութա, սաստիկ ազգելով ընթերցողների վրա թէ մեղ մօտ և թէ Թիւրքիայում:

Դեռ ապրիլ ամսից Արծրունու ուշագրութիւնը գրաւում էր այն հանգամանքը, որ Թիւրքիան անբաւական տարրերի մի խառնարան է գարձել Անբաւական են ամենքը, անբաւական են ոչ միայն քրիստոնեաները, այլ և մահմեղականները: Ոչ ոք չէր կարծի որ երկու փոքրիկ նահանգների (Բօսնիա-Հերցեգովինա) ապստամբութիւնը այսքան խոշոր հետևանքների կը հասցնէ, այսքան պարզ կերպով ցոյց կը տայ աշխարհին որ Օսմանների պետութիւնը քայլքայման է հասել: Բոլոր դրկուածների համար ամենայարմար միջոցն էր մարդկային իրաւունքներ պահանջելու. նոյն իսկ Կ. Պօլսի սօֆթեաները բարեկարգութիւն, սահմանադրութիւն են պահան-

ջում: Եւ այդ ժամանակ լուռ ու անգործ էր միայն մի ազդ—հայերը, որոնց թիւր հասնում էր երեք միլիոնի: Սա անքնական էր թւում Արծրունուն. սա միայն այն էր ցոյց տպիս որ հայերը անասնական դրսթեան ևն հասել իրանց գարաւոր ստրկութեան միջոցում: Պէտք է որ հայերն էլ ձայն բարձրացնեն միւս քրիստոնեաների նման:

Միթէ վերջապէս Թիւրքանկատակ հայերը չեն հասկանայ որ Թիւրքիայի այժմինան անմիտիար զրութիւնը այնքան յարմար է մարդկային իրաւունքները պահանջելու համար, որ գուցէ դարձերով այդ տեսակ յարմար զրութիւն դարձեալ պատճելու չէ: Ամօթ կը լինի հայերին, եթէ նրանք իրաւունքները պաշտպանելու եւ նոր իրաւունքներ սիփականացնելու համար ճայն չեն բարձրացնի, մինչեւ որ Թիւրքիային հսկադակ այլ քրիստոնեայ ազգութիւնները իրանց անձն են դրում, իրանց արիւնն են Թափում ազատութիւնը ծեռք քերելու համար, մինչեւ որ մահմետականներն անդամ ուսքի են կանդնում, տէրութենից սահմանազրութիւն պահանջելու համար:

Թէ այս և թէ ուրիշ այս տեսակ տողեր սարսափի և զայրոյթի ազագակ բարձրացրին մեր մամուլի մէջ: Արծրունին քարոզում է ալպատամբութիւն, ասում էին մեր լրադիրները: Արծրունին ուզում է կոսորել տալ Թիւրքիայի հայերին, մինչդեռ նրանք, այդ

հայերը, խաղաղ ապրում են իրանց համար, արտօնութիւններ են վայելում և թէպէտ դաւասներում նրանց հարստահարում են քըրդերը, բայց թիւրք կառավարութիւնը այդ բանի մէջ մնալով չունի, նա բարեացակամ է դէպի հայերը:

Սակայն Արծրունին իր ասածն էր պլնդում: Եւ նա իրաւունք ունէր, քանի որ նրա տեսակէտը միանդամայն ճիշտ էր և համապատասխանում էր իրականութեան:

Մենք արդէն տեսանք որ Արծրունին հէնց սկզբից թիւրքահայերին բաժանում էր երկու մասի.—Կ. Պօլիս և գաւառներ: Հատ երեսյթին, այս երկու մասերը մի ժողովուրդ, մի տեսակ կացութիւն պիտի ներկայացնէին: Բայց իրապէս դրանք միմնանցից ասստիկ տարրերվող մասեր էին: Կ. Պօլիսը մի հատուած էր, մի գաղութ. այնտեղ, ճիշտ է, հայերը ունէին համեմատական բարեկեցութիւն, ազատութիւն: Նրանք կրթութիւն էին ստանում Եւրօպայում, ունէին իրանց գարոցները, մամուլը, զրականութիւնը, հարստանում էին վաճառականութեան և սկետական կապանների մէջ, բարձր պաշտօնների էին համար: Նոյն իսկ Ազգային Սահմանադրութիւնը, որ կոչված էր Թիւրքիայի ամբողջ հայութեան գրկից լինելու, համարեա միայն

Կ. Պօլսի հայերին էր պատկանում, Կ. Պօլսի տեղական մի հիմնարկութիւն էր:

Բոլորովին ուրիշ աշխարհ էր ներկայացնում գաւառը, բուն Հայաստանը: Այնտեղ էր խելական ռայեան. նա տղէտ ու խաւար էր մնում, իրաւագուրկ մինախիք էր, աղնատեսապէս քայլքայլած, մշտական հարստահարութիւնների մատնված, կեանքի և դոյքի աղամակութիւն չունէր. նա քրգերի ստրուկ էր և ոչինչ պաշտպանութիւն չէր գտնում Թիւրք իշխանութիւնների մօտ. սանձարձակ կամայականութիւնների հայրենիք էր նրա երկիրը, ուր տիրողը ոյժն էր Բայց նրան չէին նկատում: Կ. Պօլսի հայութիւնը ծածկում էր նրան: Այդ գաղութի բարեկեցութիւնը հայաբնակ գաւառների բարեկեցութիւնն էր համարվում: Մի որ և է հայ ամիրայի, աղղուկ կապալառուի, բարձրաստիճան էֆէնդիի առատ ու զարդարուն կեանքը ամբողջ աղզի լաւ ապրուստի նշան էր համարվում. ևթէ սուլթանը մի շքանշան էր տալիս որ և է եւ պիսկառոսի, հայ վիշայի, Դդա նշանակում էր թէ ամբողջ հայ ժողովուրդն է արժանանում սուլթանական բերեհաճութեան և սէրին:

Ահա այս մոլորութիւնն էր, որ պարծենկոտ յաւակնութեամբ հակառակում էր

Արծրունուն, ասում էր թէ հայութեան ապագան Թիւրքիայումն է, և քարոզել թէ Թիւրքահայն էլ պիտի ձայն բարձրացնէ, իր դատը խառնէ միւս քրիստոնեայ աղզերի դատի հետ, նշանակում է լինել ազգի դաւաճան, օտարաների շահամոլ քաղաքականութեան գործիքը: Արծրունին հարկաւոր չէր համարում երկար ու բարակ բանակոփւ մըղել այդ սասափիկ հակառակութեան դէմ: Նա միայն զգում էր, լաւ էր զգում որ հայը Թիւրքիայում բացառութիւն կազմել չէ կարող, որ Կ. Պօլիսը հայութիւն չէ, որ գաւառների համար մարդկային իրաւունքներ պահանջնելու ամենալաւ, միակ յարմար ժամանակն է:

Ո՞վ էր ճիշտ հասկանում իրերի զրութիւնը: Մի փոքրիկ պատմական տեսութիւն այստեղ աւելորդ չը պիտի համարվի, որպէս զի մենք կարողանանք անաչառ դատողութիւն ունենալ այս հարցի մէջ:

Գաւառների և Կ. Պօլսի շահերի տարբերութիւնը նկատելի էր դեռ հին ժամանակից, և մենք XVII դարում տեսնում ենք այդ շահերի ընդհարումը: Կ. Պօլսի արտօնված, բարեկեցիկ դաղութը ապրում էր իր համար, իսկ գաւառներին վերաբերվում էր արհամարհանքով, նայում էր նրան բարձրից:

«Խըմպըլ» արհամարհական անունը, որ տալիս են սոլսեցիները գաւառացիներին, ինչպէս երևում է, վաղուց գոյութիւն ունէր Մայրաքաջարը չէր օգնում խաւար, հարստահարված գաւառներին։ Հարտուս ամիրայական դասակարգի համար, որ կ. Պօլում ազգային գործերի միակ տէրն էր, նոյն իսկ շատ ձեռնտու էր գաւառների խղճալի դրութիւնը։ Ինչպէս յայտնի է, ամիրաներից իւրաքանչիւրը գառնում էր որ և է բարձրաստիճան փաշայի հովանաւորութիւնը վայելող սեղանաւոր, փող էր տալիս իր բարերարին և փոխարէնը վերցնում էր հարկերի կապալը և կեղեկում էր հասարակ ժողովուրդը՝ փաշայի վայելած գումարները յետ ստանալու համար։ Դա, այսպէս ասած, փողի արխտօկրատիան էր, և որովհետև փողի համար չը կայ ազգութեան, կրօնի հարց, այլ նա միայն խոնարհ, հեշտ կեղեկվող մարդիկ է որոնում, ուստի ամիրաները (բացառութիւնները շատ չեն) հայ ժողովրդի պատիժն էին հանդիսանում։ Այդ ազգեցիկ, իշխող, հրամայող դասակարգի համար շատ լաւ, շատ ձեռնտու էր թիւրքական բէժիմը։ Եւ այդ պատճառով կ. Պօլսի հայութիւնը ացքի էր ընկնում իր թիւրքասիրութեամբ։

Գաւառների հայութիւնը, մենակ ու ան-

պաշտպան մնացած, կրում էր իր ծանր խաչը։ Բայց նրա մէջ չէր մեռել լաւ օրերի յոյսը։ Նա զիտէր թէ ո՞րն է իր ծանր դրութիւնից դուրս գալու միջոցը և յարմար դէպքերում գործում էր ինքնազլուխ, առանց կ. Պօլսի հայութիւնից խորհուրդ հարցնելու։

Յարմար դէպքերը ներկայացնում էին ոռութիւրքական պատերազմները։ Այն ժամանակից, երբ ոռուաց իշխանութիւնը հաստատվեց Սնդրկովկասում և սկսեց զէնքի ոյժով ոչնչացնել Պարսկաստանի տիրապետութիւնը։ Թիւրքիայի հայերը նոյնպէս աչք դարձրին դէպի հիւսիսային քրիստոնեայ աղոցը, նրա մէջ էին աեսնում այն ոյժը, որ կարող էր աղասիել իրանց թիւրքական լուծից։ 1829 թւականի ոռութիւրքական պատերազմի ժամանակ, մինչդեռ կ. Պօլում հայ լուսաւորչականներն ու հայ կաթոլիկները իրար մատնում էին թիւրք կառավարութեան ձեռքը, իրար ամբաստաններով պետական դաւաճանութեան մէջ, Ալաշկերտի հայերը դէնք վերցրին, միացան ոռուս զօրքերի հետ և հերոսաբար կոխւ էին մղում թիւրքերի դէմապաշտպաններով ոռուներից զբաւված Բայազէտը։ Պատերազմից յետոյ մօտ 30 հազար ժողովրդի գաղթականութիւնը երգուումից, Ալաշկերտից և Բասէնից դէպի ոռուաց հողը

շատ պարզ ապացոյց էր որ գաւառների հայութիւնը ձգտում է աղասութեան, որ նրա համար անտանելի է թիւրքական և քրդական լուծը: 1854—1855-ին նորից պատերազմ սկսվեց Ռուսաստանի և Թիւրքիայի մէջ: Այս անդամ տեղի չունեցաւ մեծ գաղթականութիւն, բայց հայ աղքարնակութիւնը գիւմաւորում էր սուսներին իրեւ աղատովների, և Աղաշկերատում գործող ոռւս բանակն էին գալիս Մուշի և այլ տեղերի հայերը, խնդրելով գալ և նուռաճել իրանց երկիրներն էլ: Ոչ Կ. Պօլիսը, ոչ ուրիշ հայաբնակ կենարօնները չը գիտէին գաւառական հայութեան իսկական գրութիւնը: Ոչ ոք չէր ուսումնասիրել, ոչ ոք չէր ծանօթացրել այդ թշուառ, ամենքից մոռացված խուլ անկիւնները քաղաքակիրթ աշխարհին: Ռուս զինուորականներն էին տեսնում այդ գրութիւնը և ահա ինչ էր զրում նրանցից մէկը, գեներալ լիխուամին:

Աւերովները գեռ գոյութիւն ունեն, նոյնքան ուժեղ եւ վայրենի, ինչպէս առաջ, քանի որ դեռ պահպում են իրանց երկրի սահմաններում. բայց թէ ինչ կը լինի յետոյ—յայտնի չէ: Կարելի է, սակայն, ենթադրել բաւական միշտ կերպով, որ եթէ պարսկական եւ Թիւրքական իշխանութիւնները ոչ միայն ջնկնեն, այլ մնան թուլութեան ներկայ դրութեան

մէջ, այն ժամանակ էլ հնտղինետէ բնացինչ կը գառնայ կամ դէս ու դէն կը հալածվի խեղճ ազգաբնակութիւնը, որ կենդանի է մնացել Զինգիս-անի, Անկոթիմուրի և ուրիշ նուռամողների արշաւանքներից յետոյ,—եթէ մի որ եւ ից կողմնակի ոյժ չը կանգնեցնէ և ըստ բարեկարգէ աւերողներին: Պատերազմի ընթացքում մենք տեսանք թէ որբան հեշտ եւ հնարաւոր են այսպիսի անկարգութիւնները, տեսանք հայերի կոտորածը քրդերի ձեռքով, բայց զի՞ո փոքր չափերով, իսկ երբ տեսնում ես այս տարածութիւնները, ուր բնակեցրած են տակն ու փառ անելու եւ միմնաց ոչնչացնելու պատրաստ ազգերով, այն ժամանակ զգում ես որ անհրաժեշտ է եւրոպացիների արագ, գործունեայ եւ իշխանական ազգեցութիւնը, որ կարող կը լինէր լուսաւորել կամ ճնշել այդ վրտանգաւոր ազգերը եւ այդպիսով մեծ դժբախտութիւնների առաջը առած կը լինէր: Եւ հէնց միայն հայերը արժանի են զթութեան. նրանք թէեւ ճընշված ու անգօր են, բայց հեղ են, սովոր են բաղարացիական՝ կենարին՝ օրէնքների սահմանում, եւ քրդերից, թուրքմէններից եւ առնասարակ բոլոր մուսուլմաններից աւելի ընդունակ են աւելի շուտով իւրացնելու լուսաւորութիւնը, որ բարձրացնում է մարդու եւ հասարակութեան արժանաւորութիւնը:

...Ազգութիւնների, լեզուների եւ կրօնների այնպիսի խառնուրդի մէջ, որ գոյութիւն ունի այստեղ, նկատի առնելով եւ այն, թէ որբան ընդհանրապէս լարված են յարաքերութիւնները նրանց մէջ, չէ կարելի սպասել որ կարգն ու հանգստութիւնը իրանք իրանց հասաւատվեն այստեղ, որ նուաճվածները կարողանան խաղաղ մանապարհով ձեռք բերել իրանց իրաւունքները եւ վերադարձնել իրանցից Խլված բա-

Ներից մի մասը: Աստական Թիւբքիայում անհրաժեշտ է մի նոր ուժեղ իշխանութիւն, որովին ներ զանազան աղջութիւնների մէջ եղած յարաքերութիւնները փոփոխելը նրանց արդարութեան չափով հաւասարացնելը գիտւար գործ է, որին ընդունակ չէ Թիւբքական իշխանութիւնը թէ իր բնաւորութեան եւ թէ ներկայ թուլութեան պատճառով: Այստեղ հարկաւոր են եւրօպացիններ...: Քրիստոնեանների մշտական կոտորածը Թիւբքիայում կարծեմ ապացոյց է թէ, որքան ոյնչ է այն ազիցութիւնը, որ ուզում են ունենալ երկրի վրա եւրօպական դեսպանատները եւ հիւպատոսարանները Թիւբքաց կառավարութեան միջոցով: Քրիստոնեանները իրանք պիտի դիմեն իրանց պաշտպանութեան աւելի ուղիղ միջոցին, իրանց սեփական վէնքին. բայց կասկած չը կայ որ ամենքը չեն կարող պաշտպաննել իրանց: Ես հաւատացած եմ, որ վերջին ժամանակներս քիչ հայեր չեն կոտորվել առանձին-առանձին դէպքերում. այդ մասին չեն կարող տեղիկութիւններ հասնել այս հեռաւոր, խուզանկիւններից եւրօպական լրագիրների խմբագրութիւններին, իսկ դեսպանատների եւ հիւպատոսարանների համար, երեւի, ծեռնոտու է Թագցնել այդ դէպքերը: Քրիստոնեանների պաշտպանութիւնը հնարաւոր է ոչ թէ խօսրերով, այլ գործով եւ բանակների ներկայութեամբ: Այս տեղերը գալիս են անհաստ եւրօպացիններ առեւտրական գործերով կամ թէ կաթօլիկ պրոպագանդան, եւ միեւնոյն ժամանակ այստեղ կանգնած են ռուսաց ամբողջ բանակներ, մննք այստեղ համարեա մեր տանն ենք *):

*) Генераль-Майоръ Лихутинъ—„Русские въ Азиатской Турции въ 1854—1855 годахъ“. СПБ., 1863, կр. 270—272:

Պատահական այցելուի այս երկու-երեք էջ գրաւող գատողութիւնների նմանութիւնն անդամ ունեցող մի բան մենք չենք կարող գտնել մեր այն ժամանակվայ ամբողջ գրականութեան, մամուլի մէջ: Կ. Պօլիսը ունէր պարբերական մամուլ, որ, սակայն, բացի տեղային եկեղեցական հարցերից ոչինչ չէր ճանաչում. Թիվլիսի հայերի դրութիւնը աւելի ևս վատթար էր—այստեղ նոյն խկ լրագրութիւն էլ չը կար և եթէ լինէր անդամ, գարձեալ նոյն հարցերով միայն կարող էր զբաղվել: Եւ Թիւբքիայի կորած գաւառնեներում հարատահարվող հայ ժողովրդին մընում էր մի տարերական ձդում դէպի Ռուսաստանը, մնում էր փայտայել իր մէջ այն յոյզը, թէ ուռւսները երբ և իցէ կը գան ու կազմատեն իրան քրգերի և Թիւբքերի ձեռքից:

Դիմի պատերազմը բերեց իր ետևից գաղափարական շարժման մի նոր գրգում: Կ. Պօլսի հայութեան մէջ բուն ժողովրդական շարժումը վաղուց էր սկսվել, շարժում, ուղղված ամիրայական դասի բռնակալութեան դէմ: Սակայն գաւառների դաաը համարեա ոչինչ տեղ չունէր այդ ժողովրդական շարժման մէջ: Դիմի պատերազմի ժամանակ արդէն կար երիտասարդների մի կուսակցութիւն, որ տողորված էր լաւագոյն

ձգտումներով։ Այդ ժամանակ գաւառների աղատութիւնը դառնում է զաղափար, որ երդի մէջ է մանում և Պէշիկթաշլեանը ունի շատ էջեր, որոնք ցոյց են տալիս ժամանակի տրամադրութիւնն ու յոյսերը։ Մի ուրիշ վառվառն երիտասարդ, Ստեփան Ռսկանը, Պարիզում աշխատում էր որ եւրօպական քաղաքականութիւնը ուշադրութիւն դարձնէ Թիւրքաց Հայաստանի վրա։ Բայց դրանք լոկ բարի ցանկութիւններ էին, լոկ սկզբնաւորութիւն։

Աւելի հիմնաւոր բան էր երեսում նոյն երիտասարդութեան ձեռքով ստեղծված աղդային սահմանադրութիւնը։ Դա թիւրքահայերի ընդհանուր գործն էր, գաւառներն էլ մասնակցութիւն պիտի ունենային եկեղեցական-աղդային այդ ինքնավարութեան մէջ, հետեաբար կարող էին իրանց անդային ցաւերը հրապարակ հանել։ Բայց այլ է մի խելացի օրէնք խմբազրելը, այլ է այդ օրէնքը գործադրելու հնարաւորութիւնը։ Սահմանադրութիւնը, ինչպէս ասացինք, պօլսական մի հիմնարկութիւն դարձաւ, գաւառը շատ թոյլ կերպով էր ներկայացվում աղդային ժողովի մէջ, այնտեղ պատրաստված ժողովուրդ չը կար, այնտեղից երեսփոխաններ չէին զնում կ. Պօլիս։ Եւ գնային էլ, շատ մեծ գործ չէին կատարի։ Թիւրքիայի պէս մի պետութեան

մէջ սահմանադրութիւնը կարող էր լինել, ինչպէս ձիչտ նկատել էր թիւրք բարձրաստիճան պաշտօնեաներից մէկը, մի քառակուսի անիւր Երկար ժամանակ աղդային ժողովը զբաղված էր ապարդին վէճերով, գաւառները ոչինչ իրական օգուտ չունէին այդ վիճաբանութիւններից, որոնք մեծ մասսամբ վերաբերվում էին սահմանադրութեան վերացնութեան, ներքին վարչական հարցերին։ Իրականութիւնը գաւառներում մի և նոյն էր մենք տեսնում ենք որ 70-ական թւականների սկզբում Վանի մէջ ծագում է մի ամբողջ շարժում, որի նպատակն էր ընդունել ոռուսաց հպատակութիւն և այդպիսով աղասավել մշտապէս հարստացարվող ուայեայի գրութիւնից։

Սակայն սահմանադրութիւնը էլի մի քայլ էր գէպի առաջ։ Որքան էլ նա քիչ լինէր բուն ժողովրդի, գաւառների ներկայացուցիչ, որքան էլ գաւառների զրութիւնը աղդային ժողովի առանձին ուշադրութեան չէր արժանանում, կար այն կարեոր հանգամանքը, որ նա գոնէ գաւառների արձագանքը դարձաւ, հաւաքեց հարստահարութիւնների փաստերը, կաղմեց գաւառների տանջանքների պատմութիւնը։

Առաջին նշանաւոր քայլը արվեց Խրիմ-

եանի պատրիարքութեան օրովէ Մեծ ժողով վրդականութիւն վայելող այդ եպիսկոպոսի պատրիարք ընարվելը մի յարմար առիթ էր որ դաւառացի ժողովուրդը ձայն բարձրացնէ։ Ազգային ժողովը Սիսի կաթողիկոսութեան, սահմանադրութեան վերաբննութեան և այլ այսպիսի հարցերի առիթով անվերջ և անսպառող վիճարանութիւններ ունէր, բայց և այնպէս, պատրիարքի պահանջելով, մի քանի նիստ էլ դաւառական հարստահարութիւններին նույիրեց Եւ ինչ դուրս եկաւ։ Տղիտութիւնից ոչխարացած ժողովուրդը կեղեկվում էր անդադար. նրան կեղեքում էին հայ վաշխառուները, կեղեքում էին քրդերը, կեղեքում էին և թիւրք պաշտօնեաները։ Ահա ինչպէս էր նկարադրում դրութիւնը դաւառում մեծացած, գաւառի կեանքին այնքան լաւ ծանօթ Խրիմեան պատրիարքը՝ աղդային ժողովի առաջ արտասանած իր մի ճառի մէջ.

Հայաստանի մէջ հարստահարութիւնը միշտ կայ եւ պիտի շարունակէ, քանի որ նոն երկու եղբայր, երկու ժողովուրդ կը բնակին, որոց մէկին ծեռք աւետարան և միւսին մեռք դուրսն կայ։ Առւրանի հաւատացեալը այնպէս կը կարծէ թէ նա, որ հաւատաք ընծայէր անոր, արժանի է հարստահարութեան. իսկ աւետարանը կըսէ, ուրիշ իրաւոնք մը չունիս, այլ պիտի հարստահարութիս մինչ ի վերեղման։

Հիմա ինչպէս հաշտեցնելու է այս երկու ժողովուրդը իրարու նետ։ Երբ տէրութիւնը Եւրոպայի լուսաւորութիւնն ընդունեց, Կիւմհանէի օրէնսդրութեան օրէն օրինագիրք մը շինեց, ու է ս թ ու ր դրաւ անունը, եւ զանի այս երկու եղբայր տուաւ ու ասաւ. դուրանը մզկիթին եւ աւետարանը եկեղեցւոյ մէջ պաշտեցէք, իսկ ձեր ընկերային կեանքին այս օրինագիրքն ըլլայ ուղեցոյց։ Կառավարութիւնը զայս ընկերով իւր պարովք կատարած է, բայց քիւրզը այս օրինագրին երեսն անգամ չը նայիր, եւ թէ որ այս վիճակը շարունակվի, անմնար է որ քիւրզն ու հայը իրարու նետ հաշտվեն, մանաւանդ որ մէկը սուր ունի եւ կը հարուածէ, միւսն աւետարան ունի միայն եւ կը չարչարվի... Պէտք է խնդրել (տէրութիւնից) որ հաւասարութեան օրէնքը՝ որ կայ արդէն եւ գաւառներու մէջ չէ լսված՝ գործադրվի։ Իսկ անհաւասարութեան վիճակին մէջ ով որ դուրան ունի ծեռքը, անոր վերասպանված է մարդպանի, կուսակալի պաշտօնը. բայց երբ հաւասարութեան սկզբունքը ի դորդ դրվի, եւ քիւրզը տեսնէ թէ քրիստոնէին մէջքըն ալ պաշտօնական թուր մը կայ կախված եւ կուսակալի պաշտօն կը բարձրանայ, իրօք կըմքոնէ այն ատեն օրինագրին ողին եւ տէրութեան հրամանը... Տէրութեան շնորհիւ քիւրդերն ալ կը զըսպուկին, հարստահարութիւններն ալ կամնետին, բայց առանց ներքին աւերումները բառնալու ամեն ինչ անօգուտ է։ Ես կըսեմ, արտաքին աղէտները ներքինին հետեւանքներն ենն ժողովուրդն անմուռնչ ոչխար մը դարձած՝ ոչ իւր իրաւոնքները կը ճանչէ, ոչ պիտոյքները կըզգայ եւ ոչ օրինաց տեղեկութիւն ունի։ Իսկ աշխարհի արդի դրութեան համե-

մատ ով որ տղէտ է, պիտի բռնաբարվի, եւ լոյսը միայն աղատութիւն վայելէ *):

Ահա դարերի իրականութիւնը, որ երեան էր դալս 1871-ին Թիւքքիայի հայոց պաշտօնական ներկայացացուցչի ատենաբանութեան մէջ: Ի՞նչ պէտք էր անել: Այժմ կայ սահմանադրութիւն, կայ երեսփոխանական ժողով, ճառեր, վիճաբանութիւններ. ոչինչ չէ մոռուցված, սահմանադրութիւնը խմբագրված է հիմանալի կերպով, Եւրօպայի ուսմիշաստական կարգերը վերցրված են ճշտութեամբ, Կ. Պօլսի ժողովուրդը ամեն աարի մայիսին տօնում է այդ ինկընավարութեան տարեգարձը, «Արիք հայկազունք» է երգում: Բայց որքան կարողութիւն և պատրաստութիւն ունի երեսփոխանական ժողովը իր պատրիարքի ատենաբանութեան մէջ պարզված իրականութեան հանդէպ: Սիսի կաթողիկոսութեան նույի իրավունքը ատենաբանութիւնները պատուաւմ էին այն հարցի շուրջը թէ ովլ է կենարօնական վարչութիւնը, եւ բեսփոխանական ժողովը թէ խառն ժողովը, Խրիմեան պատրիարքը ասաց հետեւալ խօսքերը.

*) «Փողձ» հանդէս, 1876, № 4:

Հոս նատեր եմ ձեր մէջ, բայց ո զիտէ թէ իմ երեւակայութիւնս ուր է գնացեր, ո զիտէ թէ որ զաւառներու մէջ կը գեղերիմ մտովի, ուր չարչարեալ ժողովուրդներ, անոր մանկիկներ, վշտահար հարսեր ու փեսաներ կը ներկայանային աչքիս, եւ ակնկառոյց մենէ զօրավիզն կը ինդրեն: Մենք հոս անդուկ կը վիճաբանենք... վիճաբանութիւնը սահման մը պիտի ունենայ...

Երեսփոխանական ժողովը ութ հոգուց բաղկացած մի մասնաժողով ընտրեց՝ մի մահրամասն տեղեկագիր կազմելու համար: Մասնաժողովը պատրիարքարանի արխիվը քըրւքրեց, քանի տարիվայ տեղեկութիւններ քաղեց, բացի դրանից դիմեց գաւառական առաջնորդներին և իր մի քանի հարցերի պատասխանը խնդրեց: Այդ բոլոր աշխատանքի հետեւանքն եղաւ մի հարուստ, փաստալից տեղեկագիր, որի մէջ գաւառների անմիաթար դրութիւնն էր պատկերացած: Տեղեկագիրը ուղարկվեց Բ. Դուռը: Դա աղդային ժողովի իրաւունքն էր, որ տալիս էր սահմանադրութիւնը: Շատ լաւ իրաւունք էր դա, սահմանադրութեան յատուկ յօդուածով դրված այդ կարգը: Սահմանադրութիւնը բացի դրանից ուրիշ շատ լաւ բաներ էլ ունէր: «Ասեն ինչ կար նրա մէջ—ասում է միջազգային իրաւունքի նշանաւոր մասնագէտ

Ռուլէն ժաքմէն—ամեն ինչ, բացի մի յօդուածից, որի վրա մատնացոյց անել կարողանայ հայը, որպէս զի թոյլ չը տայ քիւրդին խլել իր ոչխարները, բէշին—բռնաբարել իր աղջիկներին և քարուքանդ անել իր հոյը, հարկահանին—երկու կամ երեք անգամ պահանջել մի և նոյն հարկը. մի խօսքով կար ամեն բան, բացի մի այնպիսի կարգադրութիւնից, որ իսկական երաշխառութիւն լինէր թիւրք կառավարութեան կամայականութիւնների դէմ» *):

Սպային ժողովի տեղեկագիրը, որ հրատարակեց 1872-ին, գաւառների զրութիւնը մաղի չափ չը պիտի բարոքէր. դրա համար ոչինչ երաշխառութիւն չը կար. Բայց նա մի թանկապին գօկումնեն էր, որ չառ ընորոշ փասեր էր պարունակում. Նա ցոյց էր տալիս թէ ինչ տեսակ հարսաահարսութիւններ մշաական երեսոյթի կերպարանք են քնդունել. ցոյց էր տալիս և այն, որ պատրիարքարանը ըսան աարիների ընթացքում գաւառից իրան հասած իւրաքանչիւր հարսաահարսութեան մասին թագրիքն եր է ուղարկել Բ. Դուսը, բայց այդ պաշտօնական թղթերի մնձ մասը

*) „Положение Армения въ Турции“, М. 1896, եր. 9,

մնացել է առանց հետեանքի, իսկ եթէ մի քանի դէպքերում Բ. Դինից կարգագրութիւններ և հրամաններ են ուղարկվել հարըստահարութիւններն աեղերը, գրանք մնացել են անկատար: Հարստահարութիւնների մի մահամասն աեղեկագիր էլ ազգային ժողովը 1876-ին հրատարակեց և այգտեղ էլ վկայեց որ 1872-ի տեղեկագիրը ոչինչ չօշափերի արշինք չի ցոյց տուել, պատրիարքական պիտագրիւնները» նոյն վիճակին են ենթարկվել, ինչպէս միշտ: Թղթեր գրվում էին, բողոքներ յայնագում էին, հրամաններ ուղարկվում էին, բայց այդ բոլորը մնում էր մեռած տառ, թուղթ:

Այսպէս էր ահա գրութիւնը, երբ վրա հասան 1875—1876 թւականների դէպքերը և ահապին կարեորութիւն ունեցող հարց գարձրին թիւրքիայի հպատակ քրիստոնեանների գրութիւնը: Հայ գործիչներից միայն Գրիգոր Արծրունին էր, որ իսկոյն ըմբռնեց բօպէի անչափ կարեորութիւնը: Ազատութեան գաղափարը, ինչպէս աւոանք, վազուց ապրում էր ժողովրդի մէջ. Արծրունին չը ստեղծեց գաղափարը, նա միայն հասկացաւ որ ոչ թիւրքահայերի գեղեցիկ սահմանագրութիւնը, ոչ Կ. Պոլսի էֆէնգինների բարեկեցութիւնն ու չքանչանները չեն կարող կեանքի, զոքքի,

պատուի ապահովութիւն տալ դաւառներում ապրող հայութեան։ Արծրունու կատարած գործի մեծութիւնը հէնց նրանում է, որ նա հասկացաւ թէ Բօսնիա-Հերցեղովինայի և Բօլ-գարիայի արիւնոտ դաշտերում գլուխ բարձրացրած սոսկալի իրականութիւնը մի է Թիւրքիայում բնակվող բոլոր քրիստոնեաների համար, թէ ժամանակ է մի կողմ զնել խարուսիկ յոյսերը, ժամանակ է իմանալ թէ իրական ինչ արժէք ունեն թիւրքաց կառավարութեան սիրունիկ խստունները, սահմանադրութիւն, բէֆօրմ և այլ այսպիսի զարդարուն էտիկէտներ կրող դատարկութիւնները։ Ոյժ պէտք է, որ փսփոխէ իրերի գրութիւնը Թիւրքիայում, զինուորական մեծ ոյժ։ Կար այդ ոյժը և գործում էր անշահասիրութեամբ։ Դա Ռուսաստանն էր։ Եւ Արծրունին խորապէս համոզված էր որ Ռուսաստանը բարերարութիւն կանէ և հայերին, որ յօյսը միայն Ռուսաստանի վրա պէտք է զնել։

Ընթացիկ քաղաքական դէպքերն ու հո-սանքներն էին այդպիսի ջերմ հաւատ ներ-շնչում Արծրունուն։ Դրանից համարեա եր-կու տարի առաջ Փաքր-Ասխայում սով էր և հայերը սոսկալի տառապանքներ էին կրում։ Արծրունին միայն չեշտեց այդ իրողութիւնը, բայց

չը զրադից դաւառացի թիւրքահայերի զը-րութեամբ, չասաց թէ ինչ պէտք է անել նրանց դրութիւնը մշտապէս բարելաւելու հա-մար։ Նա մինչեւ անգամ չը կարողացաւ մի մեծ գումար հաւաքել սովատանջների համար, որովհետեւ բաւականացաւ մի անդամ հրաւելը կարդալով և մի քանի արտատպումներ անե-լով այլ և այլ լրագիրներից։ Այդ ժամանակ էլ, բանակում մղելով «Մասիսի» դէմ Ներսի-սեան դպրոցի առիթով, Արծրունին խօսք բա-ցեց կ. Պօլսի հայ ինտելիգենցիայի մասին և յայտնեց թէ որքան չնչին գեր է կատա-րում նաւ Եթէ կ. Պօլսի գրողներն ու գոր-ծիչները լաւ պատրաստված լինէին, մտա-ւոր մեծ ոյժ ունենային, հայոց մամուլը Թիւրքիայում կը դառնար քաղաքական մի հե-ղինակաւոր հիմնարկութիւն և Եւրօպան այդ մամուլից կը քաղէր տեղեկութիւններ Թիւր-քիայի մասին։ Բայց հայոց մամուլը ոչինչ լուրջ ուսումնասիրութիւն չէ տալիս, աղդե-ցիկ գեր չէ կատարում և Եւրօպան չէ էլ ճանաչում հայերին։

Այսպիսի դատողութիւններով էր բաւա-կանանում Արծրունին այն ժամանակ, երբ Թիւրքիայում սուր քաղաքական հարցեր չը կային, երբ արևելեան հարցը, այսպէս ասած, մոխրի տակ թաղված կայծի էր նման։ Ու-

րիշ բան էր 1876 թւականը. քաղաքական աշխարհը տակն ու վրա դառած, հրդեհը վառված էր. ոռոսաց լրագրութիւնը կրակում էր հասարակութեան զգացմունքները, անձնութիրութիւնը, ահազին զոհովութիւնները միացել էին խօսքի հետ: Կրակից և «Մշակը» Բալկանեան թերակղզի, սլաւոններ, այն, ճիշտ է, նրանք արժանի են կարեկցութեան: Բայց հայերը:

Սկզբում Արձրունին այնքան մեծ աշխոյժով չէր զբաղվում այս հարցով: 1876 թւականի առաջին կէսում նա իր առաջնորդողները նութիրում էր սովորական հարցերին—Ս. Գրքի թարգմանութեան, կղերականութեան, և միայն լրագրի արտաքին տեսութեան մէջ, խօսելով թիւրքիան տակն ու վրա անող փոթորիկների մասին, աւելացնում էր մի քանի տողեր թէ հայերն էլ պիտի ձայն բարձրացնեն: Բայց տարիվայ ուղիղ կէսից թիւրքահայերի հարցը նա մտցնում է առաջնորդողների մէջ և այնուհետև մի կողմն է թողնում աւետարանի թարգմանութեան, զպրոցների բարեկարգութեան միաբը, ընդհանուր հարցերը: Նրա ուշքն ու միաբը կլանում է թիւրքահայերի զրութիւնը:

Առաջին առաջնորդող յօդուածը տպվեց յուլիսի 1-ին (№ 24) և կրում է «Քրիստո-

նէութիւն և Մահմեդականութիւն» վերնապիրը: Այդտեղ Արձրունին բացատրում էր իր հիմնական հայեացըները և այն միջոցները, որոնցով թիւրքահայը մարդկային իրաւունքների տէր կը դատնայ: Այդ բոլորի հետ ծանօթանալու համար մենք կը բերենք այդ առաջնորդողի ամենանշանաւոր մասերը.

Ամբողջ տարի է արդէն որ թէ եւրօպական հասարակական կարծիքը, թէ ընդհանուր բաղարձականութիւնը զբաղված են արեւելան հարցով: Թիւրքանապատկ քրիստոնեաների պատերազմը մահմեդականութեան ճնշող ոյժի դէմ՝ ըննադատութեան առարկայ է դարձել ամբողջ աշխարհի լրագրութեան եւ դրականութեան համար, հոգսերի եւ պարագանենքների առարկայ է դարձել կրթված աշխարհի դիմումատիայի համար... Քրիստոնեայ ազգերի անունները, որը ապստամբված են թիւրքաց անտանին լուծի ոչմ, յիշվում են իւրաքանչիւր լրագրում: Թիւրքանապատկ քրիստոնեայ ազգերի անունները, որը այդքան դար ճնշված են մնում մահմեդականութեան անողորմ եւ բաղարձակարթութեան թշնամի տարրի տիրապեսութեան տակ, լսվում են ամեն քերաններից,—միայն մի ազգի անունը ոչ մի տեղ չինք պատահում՝ ոչ լրագիրներում, ոչ դիմումատիական թղթերում, ոչ էլ առօրեայ խօսակցութեան մէջ:

Իսկ այդ ազգը, հայերը, փոքր ազգ չին: Մօտերեք միլիոն քրիստոնեայ ժողովուրդ, Թիւրքաց տէրութեանը հպատակ, նոյնքան եւ զուցէ աւելի թշ-

ուառ դրութեան մէջ է զտնվում, քան թէ սլաւօնական ազգերը:

Այդ ազգը դարեւոր բարոյական, մտաւոր եւ տնտեսական մնշման պատճառով դարձել է բոլորովին կրաւորական, նա չունի այնքան բարոյական զօրութիւն, որ իր մնշման դէմ բողոք բարձրացնէ անգամ... Նա կորցրել է հաւատ դէպի իր սեփական ոյժերը, նա հաշտվել է այն մտքի հետ, որ ինքն ոչ թէ միայն ազգ էն, այլ որ իր անհատներից իւրաքանչիւրը իրաւունք չունի մինչեւ անգամ մաքի անունը կրելու, իրաւունք չունի այն հասարակ ընդհանուր մարդկային իրաւունքները վայելելու, որ վայելում է ամեն մի մարդկային էակ...

Թիւրբիայի հայերը մնշված, ստորացրած են, մինչեւ այն աստիճան կրաւորական են դարձրած, որ իրանց սեփական շրջանից անկարելի է սպասել բռնաւորութեան, հալածանքի, մնշման դէմ բողոք...

...Պէտք է մի դրսի հզօր ոյժ, դրսի ազգեցութիւն յայտնվի, որ մարդասիրական գութից շարժված, մեկնէր այդ հոգով ընկած, անդադար բռնարարութեան տակ յուսահատված եւ մաշված ազգութեանը իր օգնութեան ձեռքը...

Հայերը առաջին քրիստոնեայ ազգն են,
16 **գար նահատակվում են քրիստոնէութեան համար:**

Քաղաքակրթված աշխարհի համար այդ քրիստոնէական բարոյական պատերազմող տարրը, քրիստոնէութեան այդ կարապետները Ասիայում պէտք

է Թանկազին լինէին որպէս աւետարանի առաքեալները բարբարոսական աշխարհում...

Միթէ Եւրոպան Թիւրբահպատակ քրիստոնեայ խօսքով հասկանում է միայն սլաւօնացիներին եւ ուղղափառներին, միթէ միեւնոյն չէ բնդհանուր մարդկային օգուտների համար ո՞ր ցեղին եւ քրիստոնէական եկեղեցու ո՞ր գաւանութեանն է պատկանում մնշված քրիստոնէական այս կամ այն ազգութիւնը, որի կոչումն էր միշտ եւ պէտք է լինի՝ միջնորդ մինել Ասիայում քրիստոնէութեան, ուրեմն եւ քաղաքակրթութեան լոյսի տարածման...

Եթէ այդ կոչումը առաջ անգիտ ակցական էր, — նա ապագայում պէտք է զիտակցական դառնայալ:

Մանաւանդ մի եւրոպական պետութեան, այն է Ռուսաստանի ծեռքում, որի կոչումն է տարածել Արեւելքում համաշխարհային քաղաքակրթութիւնը, այդ տոկուն, աշխատասիր, քրիստոնէութեան գաղափարին իրան զոհած ազգութիւնը, և այ երը՝ կարող էին որպէս միջոց ծառայել Փոքր-Ասիայում Ռուսաստանի նպատակը իրավործելու համար:

Հայերը կարող էին Ռուսաստանի համար ամենահաւատարիմ միջնորդներ լինել, նպաստելով այդ պետութեան նպատակներին եւ կոչմանը՝ տարածել եւ մտցնել Փոքր-Ասիայում աւետարանի եւ եւրոպական կրթութեան լոյսը, ուրիմնեւ ընդհանուր մաքայր այս ի այ ի ն քաղաքակրթութեան ձեռքը:

Հետեւեալ համարում Արծրունին նորից ալարգում է իր հայեացքները արեւելեան հարցի վերաբերմամբ: Նա ասում է. «Այժմ կամ

Երբեք»։ Պէտք է օգուտ քաղել դէպքերից, մի ուրիշ անդամ այսպիսի յարմարութիւն չը պիտի ներկայանայ։ Հայերը միմիայն Ռուսաստանի վրա պիտի յոյս դնեն։ Անդիմական քաղաքականութիւնը խորամանկ է, նենդաւոր. նա ոչ միայն պաշտպանում է Թիւրքիան, այլ և սովորեցնում է նրան նենդաւոր, խարդախ միջոցներով խարել քաղաքակիրթ աշխարհը։

Յաւալի է—ասում է Արծրունին—երբ տեսնում ենք մի եւրօպական զօրեղ պետութիւն, Անդիման, ընդունել է եւ պաշտպանում է այդ անխղութեան, այդ անիրաւութեան քաղաքականութիւնը։

Մենք ասացինք մեր անցեալ համարում եւ կրկնում ենք որ Թիւրքահպատակ հայերը իրանց թշուառ դրութենից դուրս գալու համար կարող են օգնութիւն սպասել եթէ ոչ անպատճառ նիւթական, զոնէ բարոյական միայն մի եւրօպական պետութենից, այն է Ռուսաստանից։

Միայն Ռուսաստանը կարող է հասկանալ որքան օգտաէտ է Թէ ընդհանուր մարդկային քաղաքակրթութեան կէտից, Թէ իրան ոռւսաց պետութեան օգուտների համար որքան նշանաւոր է շահել, դրաւել կորած, ընկած, յուսահատված քրիստոնեայ տարրը Փոքր-Ասիայում։

Արծրունու այս մտքերի դէմ ամենից առաջ վայնաստուն բարձրացրեց, ի հարկէ,

Թիփլիսի «Մեղուն»։ Պետրոս Սիմէօնեանցի լուազիրը խիստ հետեղողական էր ասենագըլը խաւորը մի բանի մէջ—«Մշակի» դէմ գնալու մէջ։ Հանդամանկները շատ անդամ էին ցոյց տալիս այդ հակառակութեան անմատութիւնը, բայց ուրիշ կերպ, ինչպէս երեւում է, անհընարին էր, «Մեղուն» չէր կարող հակառակ չը լինել «Մշակին», ինչ հանդամանկը մէջ էլ ուզում է լինի։ Սակայն մենք պէտք է առենք որ այդ հակառակութիւնը Սիմէօնեանցի ամձնական համոզմունկների արդիւնքը չէր միայն, ինչպէս ուրիշ շատ դէպքերում, այսուեղ էլ նա հանդիսանում էր մի ամբողջ հոսանքի արձադանք, մի ամբողջ աշխարհայեցողութեան թարգման։ Եւ Արծրունու կատարած դերը լաւ ըմբռնելու համար մենք պարտաւոր ենք մօտիկուց և մանրամասնաբար ծանօթանալ այդ հակառակ հոսանքի հետ։ Ինչպէս կը աեմնենք, «Մեղուփ» գաղափարները միայն Թիփլիսում չէին դաւանվում, այլ և, որ աւելի կարեորն է, Կ. Պօլտում։

Ահա ինչ ենք կարգում «Մեղուփ» № 27-ի մէջ, որ յոյս աեսաւ «Մշակի» առաջնորդողից երկու շաբաթ յետոյ։

Վերջին ժամանակ, երբ Եւրոպական Տաճկաստանի մի քանի գաւառներում ծագեցաւ ապստամ-

բութիւն, մի քանի հայ երիտասարդներ սկսան երազել, եւ առանց հեռատենութեան եւ հանգամանքները կշռելու, որոնց մէջ գտնվում է հայ ազգը Տաճկաստանում, աշկարայ դրուել եւ Հայերին զէնք առնելու եւ ապստամբելու:

Բերելով այնուհետեւ այն հանգամանքը, որ հայերը մի փոքրիկ ժողովուրդ են, չքառապատկած թիւրք և քիւրդ ցեղերով, որ ապստամբութիւնը հայերին զուր կոտորելու պատճառ կը դառնար, լրագիրը շարունակում էր.

Մենք կարծում ենք, որ նոյն իսկ Տաճկաստանի կառավարութիւնն, որ հայեցուածքներով քարձր է իւր մոլեռանդ ժողովրդից, ճանաչում է Հայ ազգի նշանակութիւնը իւր տէրութեան ապագայի համար, իրեւ լուսաւորութիւն տարածելու միջնորդ, ուստի եւ չէ կարող նրան մոռանալ եւ ապահովել զանալ. Իսկ մեր խորհուրդն է. նախ մեր քաջ եւ քաղաքագիտ պուրիցիստներին, որ նորա փոխանակ խեղճ եւ թշուառ եղբարց կեանքի հետ խաղ անելու, լոկ իրանց ազատասէր ցոյց տալու համար, մարդոց աչքին փոշի փչելու կամ կուրութեամբ օտարների զործիք լինելու. ենէ ծանծքացել են իրանց կեանքից՝ թող իրանը ժողովն եւ կազմեն անյաղթելի սրբազն գունդ Մշակի քաջ խմբագրի առաջնորդութեամբ եւ երթան պատերազմ, տեսնենք թէ առաջին թնդանօթի ծայնը ո՞ր ծակը կփախցնէ նրանց:

Անտարակոյս ենք, որ առհասարակ դժոխութիւնը անհաճոյ են ամեն բարեկարգ կառավարութեանց,

որոնց համար Թաճկագին են իրանց ժողովրդոց ապահովութիւնն եւ կանոնաւոր զարգացումն, նոյն իսկ իրանց ապահովութեան համար:

Երկրորդ մեր համեստ խորհուրդը մեր սիրելի Հայ եղարց, որոնք ամեն ուրեք ցրուած են, է այն, որ նորա պահպանելով իրանց պարզ հայկական կեանքը, հետու մնան շրայլութիւնից, եւ զարգանալով մտաւորապէս եւ քարոյապէս եւ ապահովելով իրանց նիւթապէս, դառնան անհրաժեշտ կարեւոր խաղաղ քաղաքացիք այն երկիրներում եւ տէրութիւններում, ուր նորա բնակվում են եւ վայելն տիրապետող ազգերի հետ հաւասար քաղաքական իրաւունքներ, պահպանելով իրանց ազգայնութիւնը՝ լեզուն եւ կրօնը, զարգացնելով սոցա ժամանակի պահանջներին համաճայն: Իսկ Տաճկահայերի կոչումն մինչեւ անգամ աւելի լաւ է քան այս. Թող նորա ուսմամբ եւ քարոյապէս զարգանալով չանան եւ նրանք մեծ կշիռ կստանան այստեղ անշուշտ, վասն զի ժամանակը պիտի պահանջէ: Իւր հարկը եւ Տաճկից եւ Քրիստոնէի թիւրքմէնից, որոնք այն ժամանակ ակամայ պիտի զառնան դէպի Հայերը սրանցից ժամանակի պահանջած ուսումն եւ գիտութիւնը ստանալու: Հայի այս մտաւոր եւ քարոյական զերազանցութիւնն անշուշտ ժամանակով կը կազմէ Տաճկաստանի մէջ երկու զօրեղ տարրեր՝ Տաճկական եւ Հայկական, որոնց իւրաքանչյուրը կլրացնէ: միւսի պակասութիւնն եւ այսպէս երկուսը միասին ներդաշնակութեամբ կը կազմեն մի Տաճկա-Հայկական քաղաքական մարմին, որպիսի կերպարանք ունեն աշխարհիս երեսին շատ զօրեղ քաղաքական մարմիններ:

Մեղքի հետ կարագ էլ էր ծորում «Մեղուի» բերանից: Ո՞րքան հեշտ ու դեղեցիկ էր նա վճռում արեւելեան հարցը: Միամտութիւնը, ինչպէս տեսնում էր, այն աստիճանին էր հասցրած, որ ենթազրվում էր թէ Փոքր-Ասմիայում հնարաւոր է մի թիւրքահայկական պետութիւն՝ հիմնված կուլտուրական եղբայրակցութեան վրա: Աւելորդ է ասել անգամ, որ այսպէս ասողը բոլորովին ծանօթ չէր երկու ազգերի ցեղական, կրօնական, կուլտուրական յատկութիւններին ու հակումներին, ծանօթ չէր պատմութեան, իրերի լօգիկային, աշխարհի օրէնքներին: «Մեղուն», այս քաղցրիկ ասպագային հաւատացած, յորդոր էր կարգում թիւրքահայերին չը լսել «Մշակի» խօսքերին, հանգարտ նստել իրանց տանը, զարդանալ—իսկ թէ ինչպէս զարդանալ, ինչպէս շունչ քաշել, կեանք ու պատիւ պահպանել, այդ «Մեղուի» դործը չէր, մանաւանդ որ նա հաւատացած էր թէ թիւրքաց քարեխնամ» կառավարութիւնը ամեն ինչ կը հոգայ հէնց իր սեփական օգուտի համար:

Սա մի հէքիաթ էր, որ ստեղծել էր ազգային ինքնագոհութիւնը: Եւ փաստերը, հէնց «Մեղուի» էջերում արձանազրվող փաստերը, գալիս էին ջտիջախելու այդ հէքիաթը: Այսպէս, թիւրքաց կառավարութեան

բարի ինսամքների վրա այնքան մեծ յոյսեր դրած լրագիրը իր № 40-ի առաջնորդող յօդուածում սպիտակած էր խոստովանել որ թիւրք կառավարութիւնը թոյլատրել է ու թոյլատում է բոնութիւն հայերի դէմ և խորասիտ կերպով աւելացնում էր. Շնորհ հիմքն էր թողնել Քրդին և Տաճկին հարստահարելու Հային և այլոց, որ սոքա չը զօրանանց: Ահա այդ իրականութեան մէջ պիտի հայերը այնքան զարգանային, որ զարդացնէին և թիւրքերին ու մի թիւրքահայկական միութիւն կազմէին...

Մի քանի ուրիշ առաջնորդողներ էլ գրեց «Մեղուն», որոնց մէջ շարունակեց ազմուել բարձրացնել թէ «Մշակը» տնաքանդութիւն է անում, ուզում է թիւրքահայերին կոսորել տալ և այն: Քազրցին լաւ նիւթ էր գըտել և մի առանձին հածութեամբ ծաղրում էր թէ ինչպէս Գրիգոր Արծրունին բանակ է կազմում ու գնում է պատերազմելու: Յուլիսի վերջերում Արծրունին մի զրական եւրեկոյթում կարդաց իր գրած «Մի պատկեր»: Դա մի փոքրիկ պատմութիւն էր այն մասին, թէ ինչպէս մշեցի մշակը, Թիֆլիսում տարիներ տանջվելուց յետոյ, ծանր աշխատանքով վաստակած կօպէկները վերցրած տուն է վերադառնում, բայց աեսնում է որ

տուն չէ մնացել, գիւղ էլ չը կայ: Ամեն ինչ
աւերակ է, յարձակվել են քրդերը, քանդել
են, տարել ու կոտորել: «Մեղուն» մինչև իսկ
այդ անմեղ պատկերից էլ կատաղեց: Նա
գրում էր.

«Մշակի» 29-դ համարի մէջ տպուած է մի յօ-
դուած, որի անունը միւադ դնելու տեղ՝ սխալ-
մամբ պատկ եր է դրուած: Ոչ մի մշեցի զորա
մէջ չի գտնիլ իւր պատկերը, այլ մի հրէշ, որ կա-
րող էր վիժուել միայն խանգարուած երեւակայու-
թիւնից Խոկ լիզո՞ւն, լիզո՞ւն... կարծես մարախնե-
րից կերուած արտ լինի:

Հայց ի զուր էր կարծում «Մեղուն» թէ
Արծրունին իր մի քանի յօդուածներով ոտ-
քի կը կանգնեցնէ թիւրքահայերին, կո-
տորել կը տայ: Արծրունին ինքն էլ շատ
լաւ ճանաչում էր հայերին, գիտէր թէ որ-
քան բթացած, անզզայացած ժողովուրդ է
ապրում ասիական թիւրքիայում: Իր ամե-
նակրակու յօդուածներից մէկի մէջ (№ 28)
նա ասում էր թէ անսնելով թիւրքաց Հայ-
աստանում տեղի ունեցող հարստահարու-
թիւնները, գուր կասէք թէ հայերը «դիակ
են, լէշ են, ազը են»: Կոտորածը ասիական
թիւրքիայում «Մշակի» առաջնորդողները չը
պիտի առաջացնէին, քանի որ կոտորածների

ու հարստահարութիւնների համար հարկա-
ւոր էլ չէ եղել, որ հայերը ապստամբվեն:

Բալկանեան թիւրքակզզում տեղի ունեցող
անցքերը արձագանք գտան և Փոքր-Ասիա-
յի խորքերում: Քրիստոնէութիւնը ահաւոր
մենամարտ էր սկսել մահմեդականութեան
հետ. վերջինս դրդոված էր, փանատիկո-
սութեան և վայրենութեան տեսարաններով
էր սարսափի ազդում քրիստոնեաներին: Թէ՛ն
հայերը շատ հեռու էին սլաւօնների երկրից,
թէ՛ն նրանք լուռ ու մունջ նստած էին ի-
րանց տներում, բայց ամառվանից սկսեցին
տիսուր լուրեր դալ և թիւրքաց Հայաստա-
նից. հարստահարութիւնները, կողոպուտներն
ու սպանութիւնները մեծ չափեր ընդունե-
ցին և «Մեղուն» թղթակիցը գրում էր Կ.
Պոլսից հետեւեալը.

Մեր Տաճկաստանցի Հայոց արդի կացութիւնը
խիստ տիսուր է, վիճակնիս խիստ վատթար. հան-
րածանօթ մոլեւանդութիւնը կատաղի կերպիւ զըր-
դուած է քրիստոնէից դէմ. հոս մայրաքաղաքիս մէջ
արդէն ցոյցեր կըլան ու կիսուուին, մէկ քանի ան-
գամ է որ թուրքերը քրիստոնէից դրները բարի
բռնեցին զիշեր ատեն: Խոկ Հայաստանի մէջ սար-
սափելի վիճակ մը ունին քրիստոնեայք, որք ընդ-
հանրապէս հայը են:

Մի կողմից այսպիսի թղթակցութիւններ և բազմաթիւ այլ տեղեկութիւններ, միւս կողմից ծաղր ու հայոյանք Արծրունու դէմ, թէ ինչնւ է նա ասում որ թիւքքահայերը լուռ չը պիտի մնան: Այն, իւրաքանչիւր հրապարակախօսին չէ առած հասկանալ ժամանակի խորհուրդը, լինել նրա ոգու արտայայտութիւն:

Այս դեռ «Մեղուն»: 1876 թւականի յուլիսից սկսեց հրատարակվել թիվլիսում «Փորձ» անունով եռամսմեայ հանդէսը, որի խմբագիրն էր Արտար Յովհաննիսեան: Ռուսահայ մամուլի մէջ աւելանում էր մի նոր օրդան: Բայց «Մշակը» չէր կարող ասել թէ դա իր վիճակիցն է: Որքան էլ թոյլ ու անդոյն լինեին այդ հանդէսի այն խմբագրական յօդուածները, որոնց մէջ պիտի երեսար նրա ուղղութիւնը, նոյն խակ առաջին համարից կարելի էր նկատել որ «Փորձը» ասում է այն, ինչ ասել էր և ասում էր «Մեղուն», և սխալված չէր «Արշալոյս Արարատեան» լրագրի թղթակցը, որ անուանեց «Փորձը» «Մեղունի» արձագանք: Իր անդրանիկ յայտարարութեան մէջ անուանելով իրան «Հայաստանեայց, աղատութեան սկզբունքների վերայ հիմնած, Սուրբ Եկեղեցւոյ հարազատ որդի», նոր հանդէսը առաջին համարի «Աղ-

գային Տեսութիւնը» (ներքին տեսութիւն չը կար) սկսեց մի խուլ արշաւանքով «Մշակը» դէմ:

Հայոց ազգը—ասված էր այդ տևոտթեան մէջ— իւր քաղաքական ինքնուրոյն գոյութիւնը կորցնելուց յետոյ պահպանել է իւր ազգութիւնը զիսաւրապէս Սուրբ Գրիգոր Լուսաւորչի հիմնած եկեղեցու շնորհիւ. ով որ պատկանել է այդ եկեղեցուն, համարուել է եւ մինչեւ այժմ էլ համարվում է հայ, թէեւ իրօք նա այլ ձագումից եւս լինէր, եւ միւս կողմից՝ այն հայը, որ ուրիշ եկեղեցու գիրկն է մտել, դադարել է իւրեան հայ անտւանել, շփոթելով ուրեմն եկեղեցու գաղափարը ազգութեան գաղափարի հետ:

Այս նախաբանից յետոյ՝ եռամսմեայ հանդէսը գալիս էր ասելու որ «Մշակը» (անունը չէ տուած) նայում է եկեղեցու հարցի վրա ոչ թէ պատմութեան և քաղաքականութեան տեսակէտից, այլ այնպիսի հայեացքով, որ կարծես նրա ասածները հայոց ազգին չեն վերաբերում: Մեզանում հոգեորականութիւնը առանձին դասակարգ չէ կազմում, նա հակառակ չէ զիտութեան և առաջադիմութեան:

«Փորձը» ոչինչ նոր բան չէր ասում. այդ բոլորը շատ և շատ անդամ կրկնել էր «Մեղուն»: Սուրբունին, քննադատելով հանդիսի առաջին համարը, ասաց որ դա պատահական

յօդուածների մի ժողովածու է, որի մէջ չը կայ ներքին կապ, պատահում են լաւ յօդուածներ, բայց քիչ չեն և այնպիսիները, ուրոնք ընտանեկան ընթերցանութեան համար բոլորովին անպէտք են: Ուրեմն «Փորձը» ոչ ամսադիր է, այս բառի խսկական խմասով, ոչ էլ նոյն իսկ ընտանեկան ընթերցանութեան համար պիտանի մի ժողովածու: Մի ընդարձակ առանձին յօդուածով էլ Արծրունին պատասխանեց «Ազգային Տեսութեան» մէջ յայսած այն մաքին, թէ մեզանում չը կայ կղերականութիւն:

Այդ բառը—կղերականութիւն—առաջին անգամ Արծրունին էր, որ սկսեց գործ ածել մեր մէջ: Նա ցոյց էր տալիս որ մեզանում էլ, ինչպէս և ուրիշ ազգերի մէջ, կղերական առանձին գասակարգ է կազմում կուսակրօն հոգերականութիւնը, որ չունենալով որոշ պաշտօն, ստեղծել է իր համար արտօնութիւններ և այդ արտօնութիւնների տէր մնալու նպատակով արգելում է, որքան կարողանում է, որ ազատ մտաւոր զարգացում չը լինի ժողովրդի մէջ, որ ժողովրդական իրաւունքները բռնաբարված լինեն, որ բուն ժողովրդական հոգեսրականութիւնը—քահանաները—միշտ նիւթապէս անապահով պրութեան մէջ լինի, միշտ կախված կուսակրօն

հոգեսրականութիւն կամքից և իշխանութիւնից: Մեզանում կղերականութիւն կայ, բայց եթէ թոյլ կերպով է դեռ արտայայտում իր դոյութիւնը, պատճառն այն է, որ կուսակրօն հոգեսրականութիւնը գեռ տղէտ է: Եւ Արծրունին զրում էր հետեւել՝ խորապէս ճշմարիտ և մանաւանդ այժմ անհերքելի դարձած տողերը.

Կայ տղէտ, բայց կայ եւ քաղաքակրթված կղերականութիւն... Դժբաղդաբար մինը միւսից վտանգաւոր է: Մինչեւ անգամ կարելի է ասել որ քանի կղերական ողի ունեցող դասակարգը լուսաւորվում է, նա աւելի վտանգաւոր է դառնում ժողովրդի ազատ, անհատական, ազգային զարգացման: Տգէտ կղերականութիւնը միամիտ կերպով կարծում է որ երբէք ժողովուրդը չի զարթնի, եւ աշխատում է ոչ մի տեղ չը հիմնել ուսումնաբաններ, չը նպաստել նրանց հիմնելուն եւ եղածների բարեկարգելուն, ընդհակառակն միշտ արգելում է նրանց բարյական եւ նիւթական ծաղկմանը: Բայց լուսաւորված կղերականութիւնը հասկանում է, որ եթէ ինքն չը հիմնէ, —ուրիշները կը հիմնեն դպրոցներ, ուրիշն լաւ է համարում ինքն հիմնել, իր ծեռից չը թողնելու դպրոցները... Եւ հիմնելով, առաջնորդելով, կառավարելով դպրոցները, աշխատում է մտցնել ուսման մէջ սկզբանական սահմանափակ ուղղութիւն, որ արգելի մարդի ազատ, լայն, ընդարձակ մտաւոր զարգացման, մտցնում է սահմանափակ ուղղութիւն, որպէս մարդի վրա խիստ հսկելու ամենալաւ միջոց, մտցնում է կոյր հնագանդութիւն, սաստիկ դիսցիլ-

լինա, եւ աշակերտների միմնանց մէջ ու նրանց վերաբերութեամբ վարժապետների լրտեսութեան սխստեմա, մտաւոր կեանքի վրա հսկողութիւնը հասցնում է մինչեւ լրտեսութեան երեխաների միմնանց մէջ ունեցած գաղտնիքների...

...կղերականութիւնը ի թնէ եւ սկզբունքով թշնամի է բարձրագոյն կրթութեան, բայց երբ որ տեսնում է թէ բահանայութեան մէջ զարթնում է իր իրաւունքների հասկացողութիւնը, սկսում են բաղմանալ նրա մէջ կրթված մարդիկ, —կղերական կուսակցութիւնը իսկոյն շտափում է ինքն ճիմնել մի հոգեւոր աստուածաբանական դպրոց *), բարձրագոյն ընթացքով (որ ինքն սկզբունքով սրտի խորքից առում է), որպէս զի ինքն ներգործութիւն ունենայ քահանաներ պատրաստիող երիտասարդների զարգացման վրա, ծեւէ նրանց ուղեղը սահմանափակ, կրաւորական կերպով, ինչպէս որ ինքն ուզում է: Եւ քանի լուսաւորփում է կղերականութիւնը, այնքան նա աւելի ճարպիկ է լինում այդ տեսակ գործերում: Միայն տպէտ կղերական կուսակցութեան մէջ լաւ չեն որոշվում կղերական ծգտումները, կամ շատ անշնորհ եւ անվտանգ են երեւում, որովհետեւ նա տգէտ է... Հենց որ նա մտաւոր զարգացման աստիճանը կը բարձրանայ, նա աւելի եւ աւելի վըտանգաւոր կը լինի:

Ահա ինչ բաներ չէր կամեցել տեսնել նորածին եռատմսեայ հանդէսը: Բայց նա ուրիշ

*) Աբծրունին այստեղ ինկատի ունէր էջմիածնի նհմարանը:

շատ բաներ էլ չէր տեսնում: «Մեղուին» նման վելը կատարեալ դարձնելու համար նա իր երկրորդ համարում սկսեց նոյն երգը երգել թիւքահայերի մասին: Մի ազգ, ասում է հանգէսը, կարող է ապրել իր տոկուն աշխատութեամբ, իր ինքնուրոյն առաջադիմութեամբ: «Օսմաննեան պետութեան այժմեան կազմակերպութիւնը և քաղաքական զրութիւնը ամենայն միջոց տալիս է, որ ազգն այդ ճանապարհով յառաջ գնայ: Հայ ազգի զրութիւնը բարւորելու համար պէտք է ուսումնասիրել Հայաստանը, տեսնել թէ ինչ պակասութիւններ կան այնտեղ: Դժբախտութեան պատճառը գաղթականութիւնն է: Բայց ինչու է գաղթում հայը:

Գուցէ փողը պակաս է՝ երկիրը մշակելու, գուցէ ճանապարհներ չկան՝ արդիւնքները վաճառահանելու, ուրեմն պէտք է զիւղական բանկեր բանալ, ինչի չենք աշխատում ընկերութիւններ կազմել ճանապարհներ շինելու համար, ինչի չենք զիմում եւրոպական դրամագլուխներին, եթէ մեր միջոցները սահմանափակ են:

Մեղ հաւատայնում են, թէ Տաճկական Հայաստանում մարդու կեանքն ու կայքը անապահով դրութեան մէջ են: Բայց մի որ քննել է թէ երբ եւ ինչ հանգամանքներում են պատահում յարձակունքներ հայոց կայքի եւ կեանքի վերայ: Մենք, օրինակի համար, հաստատ աղբիւրներից լսած ենք, որ

բրդերն ու աւազակները հայ գիւղերի վերայ զրեթէ միայն այն ժամանակ են յարձակվում, երբ գիւղի մէջ մնում են ծերեր ու կանայք, իսկ տղամարդիկը գնացած են լինում թուրքիայի մեծ քաղաքները եւ կովկասու կողմերը փող աշխատելու։ Գուցէ բարւու քերով գիւղերի դրութիւնը, մենք ամնկատելի կերպով հասնենք եւ այն հետեւանքին, որ ոչ միայն գաղթականութեան առաջն առնենք, այլ եւ գաղթականներին ետ դարձնենք իրանց հայրենիքը։

Մեղադրում են Օսմանեան պետութեան աստիճանաւորներին, փաշաներին, կայմակամներին, որոնք նպաստում են մեր ազգի թուլանալուն։ Նախ՝ այդպիսեաց Թիւը հաջի Թէ խիստ շատ լինի. երկրորդ, որ սետութեան մէջ չեն պատահում գուցէ աւելի մեծ յանցանքներ կառավարիչների կողմից։ Մենք միայն հաւաստի ենք, որ այդպիսիներին ամեն իշխանութիւն, ուրեմն եւ բարձրագոյն հուռը, երբ նոցա յանցաւու գործերին տեղեկանում է, առանց պատճի չի մողնում։ Բայց դորանից՝ պիտի ընդունենք, որ այն նեղութիւնները, որ քրդերն ու աւազակները պատճառում են քրիստոնեաններին Հայաստանում, յանցանք թիւն եր են, պատճելի արարմունքներ են։

Ահա ինչ տեսակ հասկացողութիւն ունէ-ին հայ հրապարակախօսները, դրողները իրանց թիւրքահայ և դրայցիների մասին։ Մենք վերեւում բերեցինք գեներալ Լիխուտինի գրաւուածքը և ասացինք որ հայոց ամբողջ գրականութեան մէջ չէր կարելի գանել այդ տողերի պէս մի գրութիւն։ Բայց այդ տողերը գրվել

էին դեռ 1855 թւականին։ Անցել էր այն ժամանակից քսան տարի և հայ գրողը դեռ այս տեսակ վայրի վերոյ դատողութիւնների մէջ էր խարխափում, թէն կ. Պօլսի պատրիարքարանը երկու մանրամասն տեղեկագրեր էր հրատարակել, թէն արեւելեան հարցի առիթով գրված անթիւ յօդուածների, գրքերի մէջ պարզգում, ապացուցվում էին թիւրքական կառավարութեան հիմնական, օրգանական պակասութիւնները։ Թէ մինչև որ աստիճանին էր հասնում «Փորձի» միամտութիւնը, երևում է նրանից, որ այդ գրական-հասարակական հանդէսը ասում էր թէ հայերը ինքնապաշտանութեան համար կարող են գէնը ունենալ, թէ հրացան բանեցնելը Թիւրքիայում, «գոնէ հայերին Հայաստանուում» արգելված չէ, մինչդեռ պատմութիւնը դաս է տալիս որ դեռ Օմար խալիֆան սահմանել էր թէ մահմեդականի հալատակ այլակրօնը իրաւունքը չունի գէնը կրելու։ Ի վիրջոյ «Փորձը» իր զարմանալի դատողութիւններին աւելի զարմանալի վերջ էր տալիս իրաւունքը, ասում էր նա, ձեռք է բերվում կուով և իսկոյն աւելացնում էր.

Կոիւ ասելով չենք ուզում հասկանալ յեղափոխական միջոցները, ապատամբութիւնը եւ այն։ Հայե-

թի դրութիւնը Թուրքիայում, նոցա վաղելած իրաւունքներն ու արտօնութիւնները դեռ այնքան են, որ առանց ապստամբութեան դիմելու, կարող են բարւորել իրանց դրութիւնը...

Պէտք է, սակայն, խոստովանել որ «Փորձը» հաստատ համոզմունք չուներ այդ հարցում: Երբորդ համարից նա սկսում է տպել Գամառ-Քաթիւպայի «Ալատ երգերը». — «Բողոքոք առ Եւրոպա», «Վանեցու Հայր մերը» և այլն, երգեր, որոնք ոչ միայն արմատապէս հակառակ էին հանդիսի խմբագրութեան վերոցիշեալ թիւրքասիրական խոհերին, այլ և հարկադրում էին խմբագրութիւնը քիչ յետքաշվել, քիչ ուղիղ հասկանալ իրերն ու հանգամանքները: Գամառ-Քաթիւպան Արծրունուց յետոյ առաջինն էր, որ սուսահայերի մէջ սկսեց ձայն բարձրացնել Թիւրքաց Հայաստանի ժողովրդի մասին: Նա մարդարէւրանաստեղծներից էր, գուշակում էր մօտիկ ապագան, տեսնում էր գալոցը, զգում էր:

Այժմ թողնենք Թիւֆլիսը, անցնենք Կ. Պօլիս: Այստեղ Արծրունու զրուածքները աւելի կատաղի, վայնասուն բարձրացրին. Թիւրքաց մայրաքաղաքի հայերը, իրանց պատրիարքի հետ, թիւրքասիրական ցոյցեր արեցին, որպէս զի խմացնել տան թէ չեն ուղում Թուսաստանի օդնութիւնը:

Նախ և առաջ յիշատակենք որ թիւրքահայ մամուլը այդ կարենոր ժամանակներում միանգամայն անգիտակ և անհոգ էր: Մինչ զեր իրաւունքների, սեփական երկրի, ապահովված աշխատանքի հարցեր էին արծարծվում, թիւրքահայ զրազները ամենայն հանգստութեամբ քննում էին թէ որքան լաւ կը լինէր որ հայերը գաղթէին օտար երկիրներ: Ամենից առաջ այդ միտքը պաշտպանում էր գոկոր Շիշմանեան, որ յայտնի է Ծերենց կեղծ անունով, Զմիւռնիայի «Արևելեան Մամուլ» ամսագրի մէջ: Ծերենցի դէմ սաստիկ բողոքեց Բաֆֆին Թաւրիզից զրված իր մի յօդուածով, որի վերնագիրն է՝ «Գհատունայիկ երք նոյն միտքը սկսեց քարոզել և կ. Պօլսի «Մանզումէի էֆքեար» լուրջ լրագիրը, այն ժամանակ Արծրունին դրեց՝ «Մենք էլ հրէաներ ենք» գեղեցիկ առաջնորդողը: Իրեն աղպային մի արատի վառվուն պատկերացում՝ նա չէ կարող մոռացութեան տրվել, ուստի մենք կը բերենք նրան քաղուածօրէն.

Երկրագործութիւնը, արհեստները, վանառականութիւնը իրանց մայրենի հողի վրա թողնելով, հայերը անդադար ծփում են զաղթել, միշտ զաղթել...

Մի փոքրիկ խումբ հայերի զաղթում է իր մայրենի հողից մի քանի հազար վերատ հեռաւորութեամբ,

զետեղվում է մի որ եւ է մայրաբաղաքի մէջ, շինում է եկեղեցի,—ու սկսում է վաճառականութեամբ պարապել...

Հարցնող լինի թէ ինչի են այնքան հեռու գնացել,—իրանք էլ չեն կարողանայ պատասխանել...

Այդ խումբի մէջ յանկարծ յայտնվում է մէկը, որ այս կամ այն ճանապարհով հարստանում է՝ կամ սուր թղթադրամով, կամ թղթախաղով, կամ սուր, խաքերայ վաճառականութեամբ, անազնի կապալներով... Եւ ահա ամբողջ խումբը սկսում է այդ մարդուն Աստուծու տեղ պաշտել, նրան առաջին մարդ համարել ամբողջ ազգի մէջ,—որովհետեւ այդ դուցէ ամենաանազնիւ միջոցներով հարստացած մարդը օտար երկրում զետեղված այդ հայ վաճառականների խմբին տոկոսով փող է տալիս...

Եւ ահա նա ազգի բարերար դարձաւ...

Բայց ինչ օգուտ ազգին օտար երկրում զետեղված այդ վաճառականների խմբից, որոնք կտրել են իրանց բոլոր յարաբերութիւնները մնացած ազգի հետ, աշխատող, բրտինք թափող, իրանց մայրենի հողի վրա մնացած բազմութեան հետ, արհամարհներով խօսում են եւ նայում են իրանց հայրենակիցների վրա, ապարդիւն ոյժ են կտրմում իրանց ազգի համար եւ միեւնոյն ժամանակ օտարազգի հասարակական կարծիքի առաջ ներկայացնում են իրանց անձնական յատկութիւններով ազգի ամենաստոր, ամենաանմիջական կողմից, կոտրելով օտարերկեայ հասարակութեան աչքում իրանց ազգի անունը...

...Այն ազգը, որ չունի իր մէջ ոչինչ բարոյական հիմունքներ,—այդ տեսակ ազգ գոյութիւն ունենալ չէ կարող:

Այն ժողովուրդը, որ ներելի է համարում փախչել իր մայրենի հողից, գնալ հեռու աշխարհներ, մողնել իր հայրենիքը, որ չը բաժանէ իր հայրենակիցների հետ նրանց բարոյական կամ տնտեսական աննախանձելի դրութիւնը, որ քաջութիւն չունի իր տան մէջ դիմանալ կեանքի այս կամ այն դժուարութիւններին եւ արգելվներին, չը գիտէ, ընդունակ չէ որ եւ է զոհաբերութիւն անելու,—այդ տեսակ ժողովուրդ՝ որպէս աղդ գոյութիւն չէ կարող ունենալ...

Լաւ է որ այդ մարդիկը իրանց մայրենի հողի վրա ապրէին, աշխատասէր ու աղքատ լինէին, երկրագործութեամբ կամ արվեստերով պարապէին, քան թէ հեռու երկրում զետեղվելով, կտրեն իրանց բոլոր հասարակական կապերը իրանց ազգութեան հետ եւ հարստան այնտեղ: Այդ տեսակ հարստութիւնը մեզ համար, ազգի մնացած մասի համար, որ իր հայրենի հողի վրա է մնացել՝ մի կօպէկ չարժէ...

Այն ազգը, որի անդամները իրանց մէջ չունեն ոչինչ հասարակական կապեր, որոնք անդամար աշխարհի չորս կողմը ցրվում են, որոնք չը գիտեն միասին ապրել, միասին իրանց ցաւերը եւ ուրախութիւնները տանել,—այն ազգը որ զոհ է լինում երբ հեռու աշխարհում իր հայրենակիցներից կտրված, կարողանում է անազնիւ վաճառականութիւն անել, խաբել օտարազգիներին, շահնիւլ, հարստանալ, եւ միևնոյն ժամանակ պարծենալ թէ հաւատարիմ է մնում իր ազգութեանը, որովհետեւ կառուցած ունի իր հայրենիքից հազարաւոր վերսու հեռու մի եկեղեցի, թէւ մոռացած եւ արհամարհում լինէր իր մայրենի լեզուն,—այդ տեսակ ազգ՝ ազգութիւն չէ, նարենի լեզուն,

մինչեւ անգամ հասարակութիւն չէ,—այլ միայն մի աղանդ...
Հրէաներն էլ ազգ չեն, այլ միայն մի աղանդ...

...Անբարոյական մարդիկ, անհատներ ամեն աղութեան մէջ կան,—բայց եթէ գրեթէ ամբողջ աղջը նախանձով է նայում այն մարդու վրա, որ հարստացել է ամենակեղտու միջոցներով, համարում է նրան առաջին մարդ, պաշտում է նրան, երկրպագում է նրան, ներում է նրան իր անցեալը, անուանում է նրան ազգի բարերար, այն պատճառով որ այդ մարդը, ամենաաններելի միջոցներով հարստանալուց յիսոյ, մի կողմից տոկոսով փողեր է տալիս օտար երկրում զետեղված խարերայ ազգային վաճառականներին, միւս կողմից կեղծաւոր կերպով իրան ազգասէք է ձեւացնում՝ զողացած փողից մի քանի աւելորդ կօպէներ ազգային գործերի փրանուիրելով,—այդ տեսակ ազգ, ցաւելով պէտք է ասենք, եթէ ըստ փոխէ իր ընթացքը, կարող է ապազայի համար, որպէս ազգային բարոյական միաւոր, որպէս մարդկութեան մի անհատ՝ կորած համարվել:

Գաղթական հայութեան այս պատկերը, ընդհանուր առմամբ, անհատական բացառութիւնները մի կողմ թողնելով, ճիշտ է: Այսպէս է վկայում երկար անցեալը, այսպէս է խօսում և ներկան Եւսակայն այսպիսի մի գրութիւնը նախանձելի էին համարում թիւրքահայ գործիչները, Ծերենցի նման յայսնի գրողները, այն էլ Բրր,—1876 թւականին, երբ

Արևելքը իր աւերակների տակից նոր օրերի, նոր գրութիւնների էր սպասում: Սա ցոյց էր տալիս որ Թիւրքիայի ամբողջ հայութեան ներկայացուցիչ համարվող կ. Պօլիսը միանգամայն միամիտ, խիստ ինքնագործ էր այդ ժամանակներում, չունէր ոչինչ ակնկալութիւններ, և միակ գաղափարը, որ մատչելի էր նրան, թիւրքասիրութիւնն էր:

Այդ տրամադրութիւնը տիրում էր թէ պաշտօնական շրջաններում, թէ լրագրութեան մէջ: Թիւրքիան նեղված էր. և կ. Պօլիսի հայութիւնը ամեն կերպ աշխատում էր այդ նեղված պետութեան աչքն ընկնել իր հաւատարմութեամբ: Թիւրք-սերբիական պատերազմի ժամանակ եղան հայեր, որոնք կամաւոր գրվեցին և մտան թիւրք գօրքերի շարքը: Ներսէս պատրիարքը յուլիսի սկզբում մի շրջաբերական հրատարակեց, որով հրաւիրում էր թիւրքահայերին օգնել Օսմանեան գահին:

Մի այնպիսի ժամանակ, երբ քրիստոնեայ հպատակների հարցը սպասում էր կեանքի և մահվան հարց դառնալ, թիւրքաց կառավարութիւնը ամենայն հաճութեամբ մի քանի բարեկամական ցոյցեր էր անում դէպի հայերը, որպէսզի նրանց հաւատարմութեան վրա յենվելով, կարողանայ ասել Եւրօպային, թէ

Թիւրքիայում տանջվող քրիստոնէութեան հարց չը կայ, այլ միայն սլաւօնական ինտերիգ։ Հայոց պատրիարքին խոստումներ էին անում, բանը հասաւ այն տեղին, որ մեծ վէզիրը այցելութիւն տուեց Ներսէս պատրիարքին, մի բան, որի նմանը չէր եղել հայոց պատրիարքարանի տարեգրութեան մէջ։ Եւ Ներսէսը—դեռ դէպքերը չէին խրատել նրան, դեռ ևս հաւատացող էր նա—կարծում էր թէ թիւրքասէր քաղաքականութեամբ կարելի է ձեռք բերել այն, ինչ ուրիշ քրիստոնեայ ազգեր ուղում էին զէնքով ստանալ։ Այդ պատճառով նա հրատարակեց վերոյիշեալ շրջարերականը, որով յորդորում էր հայերին ոչ միայն ազօթքներ կարդալ թիւրքական զէնքի աջողութեան համար, այլ և զինուոր գրվել *։ Դա մի շատ հետաքրքրական գոկումնատ է. պատրիարքը այդտեղ վկայում էր թէ ճիշտ է այն ընդհանրական կարծիքը որ հայերի ասպագան թիւրքիայումն է։ Ահա ինչպէս էր փաստաբանվում այդ միտքը.

Այն օրէն ի վեր—զրում է Ներսէսը—որ Հայոց ազգին ամենամեծ մասն Օսմանեան հզօր Տէրութեան հսկատակասէր բաղը հովանոյն ներքեւ մուաւ, իւր

*) «Մշակի» թղթակիցը Կ. Պոլսից հաղորդում էր որ հայ կամաւըների թիւը համոււմ էր 40-ի։

հինգ դարուց պատմութիւնը կը ցուցանէ, թէ ինչ մնամեծ շնորհներ իրեն պարզեւած է այս հզօր Տէրութիւնը։ Եթէ այսօր Թուքրիոյ մէջ կը տեսնենք Հայ ազգը որ կը պահէ իւր կրօնը, իւր Եկեղեցին, իւր Լեզուն, իւր Պատմութիւնն ու աւանդութիւնները, վերջապէս եթէ այսօր Հայ ազգն կը զբայ իւր էութիւնը, նոյն բարեինամ Տէրութեան շնորհաց արգիւնը են։ Այս ճշմարտութեան ամեն Հայու միտք համոզուած է եւ չը կայ Հայ մը զրեթէ որ ասոր դէմ խօսի առանց իւր պատմութիւնն անփառանալու եւ Ազգին շահները չը ճանչելու։

Հայոց ազգն ալ իւր այս վայելած շնորհներուն փոխարէն հաւատարիմ հպատակութիւն ցուցած է արդիամբ, եւ յարատեւ երախտավիտութիւն իւր սրտին մէջ կրած է յորդոց յորդիս։ Ինչ ասպարէզ որ բացուած է իւր առջեւ, հոն թերած արգասաւորած է իւր բոլոր մտաւորական, բարոյական եւ նիւթական կարողութիւնները եւ ապացուցած է այսութէ Օսմանեան պետութեան ամենակարեւոր տարրն է։

Ստոյգ է թէեւ որ Հայ ազգը մերժ ընդ մերժ գաւառներու մէջ բարեինամ Տէրութեան կամաց հակառակ հարստանարութեանց ենթակայ եղած ալ է, հարստանարութիւնը՝ որոնք միայն մարմինը կը վնասին, եւ հեռի են այն տեսակ հարստանարութիւններէն՝ որոնք ողին եւ մարմինը միանգամայն կը վնասեն եւ ազգին գոյութեանը կը սպառնան, սակայն վերջին օրերս ծեռք առնուած միջոցներով եւ մանաւանդ Վեհափառ Սուլթանի գահակալութեան առթիւ հրատարակուած հրովարտակին սկզբանց յինլում մեծ յոյս ունինք որ այնպիսի մասնաւոր ճընշմանց ու անկարողութեանց ալ հիմնական բարեկարգութեամբ առաջը պիտի առնուի, եւ մեր գաւա-

ռացի ազգայինք լիովին պիտի վայելին բարեկամ Տէրութեան մեր Ազգին վրայ ունեցած մասնաւոր սիրոյ եւ համակրութեան արդիւնքը:

Արդ Հայ ազգն՝ որոյ ժակատագիրն այսչափ դարերէ ի վեր նուիրագործեալ կապերով միացած է Օսմանցւոյն ժակատագիրն հետ, չը կրնար անտարբեր մնալ Օսմաննեան Տէրութեան գտնուած արդի ծանրակշոր պարագայից մէջ, այլ պարտաւոր է ինչպէս ամեն ժամանակ, նոյնպէս եւ առաւել եւս ներկայ ժամանակիս մէջ անկիղծ օժանդակութիւն մատուցանել: Այս օժանդակութիւնն ընելով հայրենաստ' Հայը՝ նոյն իսկ իւր ազգային շահը պաշտպանած կը լայ. վասն զի Օսմաննեան երկիրը պաշտպանել՝ Հայաստանը պաշտպանել ըսել է. նոյն իսկ Հայուն Կրօնը, Դպրոցը, ինչքը, տունը, ընտանիքը եւ պատիւն ու կեանքը պաշտպանել ըսել է:

Ուստի խորհրդակցութեամբ Խառն ժողովոյ Ազգային Վարչութեան՝ Նուիրական պարտք կը համարիմ այսու Շքաքերական կոնդակաւ յորդոր կարդալ բոլոր Հայ ժողովրեան որ ամեն որ իւր կարդութեան սահմանին մէջ հայրենիաց պաշտպանութեան համար պէտք եղած օգնութիւններն ընել փութայնախ աղօթելով հրապարակաւ յատենի Եկեղեցւոյ առ Ամենաքարձեալ Աստուած, Թագաւորն Թագաւորաց, որպէս զի Իւր նախախնամական հօր հոլաթեւաց պաշտպանութեամբն մեր Օգոստափառ Սուլթան Մուրատ Ե. կայսրն եւ նորա աթոռն անսասան պահպանէ, իւր նախարարաց եւ պաշտօնէից խոհեմութիւն եւ իմաստութիւն պարզելէ, եւ կայսերական արիազունդ բանակաց եւ զինուց յաջողութիւն շնորհէ: Նոյնպէս աղօթելով այն ամեն աղդէ կամաւորելոց համար՝ որք հայրենասիրական եռանդով վա-

ռուած զէնք կառնուն հայրենիաց Թշնամիներուն զէմ:

Երկրորդ՝ ըստ կարողութեան իւրաքանչիւր ուրուք եւ ըստ յօժարութեան կամաց օգնելով թէ նիւթական եւ դրամական նպաստից մասնակցութեամբ եւ թէ անձնական ծառայութեամբ:

Վերջապէս ամենքս ի մի թերան եւ ի մի սիրոտ չը ինայենք մեր Վեհապետին եւ մեր Հայրենիաց պաշտպանութեան համար որ եւ է զոհողութիւնն եւ ծառայութիւն, որոնք ներկային եւ ապագային մէջ մեր ազգին համար փառք եւ օգուտ կը բերեմ:

Մի կողմ թողնելով ուրիշ բոլոր հանգամանքները, նկատի առնենք միայն այն, որ թիւրքիայի պէս մի մեծ, զինուորական բըռնապետութիւն պատերազմ էր մզում երկու փոքրիկ, թոյլ, նոյն իսկ կանօնաւոր զօրքեր չունեցող ուլաւօնական իշխանութիւնների դէմ, որ թիւրքաց բանակները, Սերբիայի սահմանները հասնելու համար, պիտի անցնէին Բօլգարիայի արիւնոտ գաշտերով, ուր գեռ նոր այդ զօրքերը կատարել էին այնպիսի գաղանութիւններ, որոնցից սարսափահար էր գարձել ամբողջ քրիստոնեայ աշխարհը: Միայն այս հանգամանքները աչքի առաջ բըռնելով, մենք տեսնում ենք որ առնուազն չափազանցութիւնն էր քրիստոնեայ աղքի հոգեսոր ներկայացուցչի կողմից այդպիսի շրջագերական հրաւելք հրատարակելը: Կարծեմ ոչ մի

ժամանակ կ. Պօլսի հայութիւնը այս աստիւ-
ճանի թիւրքամիրութիւն էք ցոյց տուել:
Ճիշտ է, յոյներն էլ էին կամաւորներ տալիս,
գոյցէ նոյն իսկ աղօթում էլ էին իրանց ե-
կեղիցներում որ կիսալուսինը ջախջախէ
Զերնօգօրիան և Սերբիան, բայց հայերի ջերմ
թիւրքամոլութիւնը մի առանձին, աչքի ընկ-
նող երեսից էք կազմում:

Միայն մի մարդ գտնվեց հայերի մէջ, որ
բողոք հրատարակեց Ներսէս պատրիարքի
այս շրջաբերականի դէմ: Եւ դա Գրիգոր
Արծրունին էր: Հրատարակելով շրջաբերա-
կանը «Մշակի» մէջ, նանոյն համարում (№ 33)
տպեց մի առաջնորդող, որի վերնապիրն էր
«կ. Պօլսի Ներսէս պատրիարքի խայտառակ
և ամօթալի շրջաբերականը»: Դա առաջին
խիստ յարձակումն էր Ներսէսի դէմ: Այդ
շրջաբերականի մէջ Արծրունին տեսնում էր
կղերականութեան յաղթանակը:

Ներսէս սրբազանի շրջաբերականը կարդալուց
յիսոյ—ասում է Արծրունին,—մինք ոչինչ զանա-
զանութիւն չինք գտնում նրա ամօթալի վարմունքի
եւ շոօմի անխալական նրէշի վարմունքի մէջ Թիւր-
քաց տէրութեան վերաբերութեամբ...

Ն'նչ սրանչեմ պատկեր՝ քրիստոնէական առա-
բեկական եկեղեցու հովիւը՝ քարոզում է հրապարա-
կապէս թէ աւետարանի պահպանողը իսլամն է,

թէ՝ «Օսմանեան երկիրը պաշտպանել՝ Հայաստանը
պաշտպանել ըսել է. նոյն իսկ Հայուն կրօնը, զբա-
րոցը, ինչըը, տունը, ընտանիքը եւ պատիւն ու
կեանքը պաշտպանել ըսել է»:

Մենք միշտ համոզված էինք որ ք թ ի ս տ ո-
ն է ու թ ի ւ ն ը՝ թէ իր քարոյական, թէ հասարակա-
կան վարդապետութեան կողմից քարձր է, քան թէ
մահ մ մ ե գ ա կ ա ն ո ւ թ ի ւ ն ը, որ միայն քրիստո-
նկութեան միջոցով կարելի է մարդկութեան հասնել
լայն, ընդարձակ՝ քարոյական, հասարակական եւ
քաղաքական գարգայմանը: Մենք միշտ համոզված
էինք որ քրիստոնէութիւնը դաւանող ազգը չէ կա-
րող իր բոլոր մտաւոր, հոգեւոր, տնտեսական եւ
հասարակական կարողութիւնները զարգացնել մինչեւ
որ ենթարկված կը լինի մի պետութեան լուծին,
որի դաւանութիւնը՝ մահմեղականութիւնը սկզբուն-
քով թշնամի է մարդու ազատ, անհատական զար-
գացման, այն դաւանութիւնը, որ իրան երբէք ըն-
դունակ չէ ցոյց տուել՝ նպաստել պետական կանո-
նաւոր, հաստատ, զօրեղ կազմակերպութեան զարգա-
ցնելուն, որ միշտ սկզբունքով թշնամի է եղել լոյսի,
առաջադիմութեան, ժամանակակից զաղափարների
ընդունելուն...

Բայց Ներսէս սրբազանը այսպէս չէ կարծում:
Այդ քրիստոնեայ հովիւը, այդ աշակերտը եւ առա-
բեալք Քրիստոսի՝ անհրաժեշտ է համարում քրիս-
տոնէական ազգի գոյութեան տեւողութեան համար
մահ մ մ ե գ ա կ ա ն ո ւ թ ի ա ն հ ո վ ա ն ա ւ ո ր ո ւ-
թ ի ւ ն ը, քրիստոնէայի պատիւը ենթարկում է իս-
լամի պատիւ հովանաւորութեանը, աւետարանը ստո-
րագրում է դուրանին ...Քրիչի հօտի գոյութիւնը
կարօտ է համարում Մանմշի պաշտպանութեան...»

Մենք խօսքեր չենք գտնում մեր զարմանքը, զայրացումը, մեր զզվանքը արտայայտելու համար, տեսնելով որքան ստոր է ընկել բարոյապէս մեր հոգեւորականութիւնը եւ որ նրա երարխիական կազմակերպութեան այդքան բարձր աստիճանների վրա բուն է դրել կաթօլիկ կղերականութեան թշուառ ողին:

Բայց Կ. Պօլսի թիւրքամոլական ցոյցերը այդքանով չը բաւականացան: Այդ ցոյցերը զաւեշտական, ծիծագելի կերպարանք ստացան Ներսէս պատրիարքի շրջաբերականից քիչ յետոյ: Մի օր Կ. Պօլսի թիւրքախօս հայ լրագիրներից մէկը վերցրեց և հազորդեց թէ Կովկասում ապստամբութիւն է ծագել ոռւաների դէմ: Մի քանի ուրիշ լրագիրներ ազանութեամբ ընկան այդ լուրի վրա և սկսեցին նրան ուռցնել, մնեացնել: Հնարվեցին մի շարք առասպեկտներ: Իրը թէ կովկասեան ազգերը միացել են, հայերը 80 հազար մարդ են հանել ոռւաների դէմ, կովկասեան փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլը թագաւոր է հրատարակվել կովկասում, հայոց կաթողիկոսը բանտարկված է, և, որ դիմաւորն է, ապստամբները ջարդել են ոռւս զօրքերը: Այս առասպեկտներին հաւատացին, մի քանի հոգեւորականներ նոյն իսկ քարոզներ ասացին եկեղեցիներում, յորդորելով հայերին,

որ դէնք վերցնեն, զնան կովկասում ապլատամբվածներին օգնելու: «Մանզումէի Եփքեար» լրագիրը փորձեց հերքել այդ հրէշաւոր առասպեկտները, բայց ժողովուրդը յարձակվեց լրագրի տպարանի վրա. անկարգութիւնները այնպիսի կերպարանք ստացան, որ ոռւսաց գեսպանութիւնը ստիպված եղաւ միջամտել և պաշտպանել «Մանզումէի» խըմբագրին:

Թիւրք կառավարութիւնը, ի հարկէ, հաճութեամբ էր նայում իր հաւատարիմ հպատակների այս ցոյցին: Առասպելը գոնէ այն միտքը կունենար որ զուր է Ռուսաստանը իրան քրիստոնէութեան, ազատութեան պաշտպան հրատարակում. ահա նրա հպատակներն էլ ապստամբվում են: Եթէ այս առասպելին չը հաւատար Եւրոպան, հօ հայ աղքը, որ ապրում էր զաւառներում, պիտի համոզվէր որ զուր է յոյս դնել Ռուսաստանի վրա: «Մշակը» եռանկոտ, ուժեղ բողոքներ հրատարակեց թիւրքամոլական այդ յիմար ցոյցերի դէմ. նա դատապարտեց Կ. Պօլսի հայ ինստիլիգենցիալի թեթեամտութիւնը և առաց որ այդ արարմունքը նպատակ ունի թիւրքիայի հայերի միտքը պղտորելու և մոլորեցնելու: Այդպէս էլ եղաւ իրապէս: Երբ թիւրք կառավարութիւնը հարց ու փորձի

Ենթարկեց առաջին անգամ այդ հրէշաւոր ստութիւնը հրատարակող խմբագրին, սա պատասխանեց թէ արել է այդ բանը «Մշակի» զգրու. «Մշակը» քարողում է որ թիւրքահայերը ապստամբվեն, ահա ինքն էլ, դրա փոխարէն, հրապարակ է հանել ոռւսահայերի ապստամբութեան առասպելը:

Այն հրէշաւոր լուրերը, որ տարածեց նորերում Կ. Պօլսի լրագրութիւնը Ռուսաստանի վրա,—ասում էր Արծրունին,—պարզ ցոյց են տալիս մեզ թէ կայ Կ. Պօլսում հայերի մի յայտնի կուսակցութիւն, որ մեծ հակակրութիւն ունի դէպի Ռուսաստանը:

...Յիշեալ երկու բանակները սրանք են՝ մի կողմից Կ. Պօլսի սահմանադրական հայերը, բուրժուազական օգուտներ ունեցող, հարուստ հայերը եւ նրանց հոգեւորականութիւնը, եւ ուրիշ կողմից՝ հասունեան կաթօվիկները:

Որքան Հայաստանի հայոց ամբոխը, մօտ երեք միլիոն Փոքր-Ասիայի մեծ մասամբ երկրագործ եւ արուեստաւոր հայոց ժողովուրդը ցանկանում է միանալ Ռուսաստանին, ապրել հաստատ օրէնքների հովանաւորութեան տակ, դուրս գալ այնպիսի դրութենից, որտեղ նա ապրում է անսահման կամայականութեան տակ, անպաշտպան լինելով հարստահարութիւնների, քարբարոսութիւնների, մահմեղական ամբոխի, աւագակների եւ թիւրք պաշտօնեաների կամայականութեան դէմ,—այնքան Կ. Պօլսի հայոց հասարակութեան մեծ մասին ծեռնոտու է Օսմանիան պետութեան հովանաւորութեան տակ ապրելը: Կ. Պօլսի հայերը ապրում են օտար հողի վրա, կտրված

են հողից, երկրի տնտեսական եւ բարոյական օգուտներից, պարապում են վաճառականութեամբ, կապալառութեամբ, վաշխառութեամբ եւ շատերը նրանցից կապված են թիւրքաց տէրութեան հետ աւելի էլ սերտ կապերով, օսմաննեան տէրութեան պետական ծառայութեան մէջ գտնվելով: Հասկանալի է որ նրանց ծեռնոտու է թոյլ, միշտ փոփոխական ուղղութիւն ունեցող կառավարութիւն...

Բոլոր արտօնութիւնները որ ունեն Կ. Պօլսի հայերը, չեն տարածվում գաւառների հայերի վրա: Ասիական գաւառների հայը, բրտինք Թափող հայը կամենում է միայն որ իր անծը, իր ստացվածքը, իր օրական աշխատանքը ապահոված լինէին, նաև չէ կամենում հարստանալ: Ընդհակառակն զանազան անազնիւ միջոցներով հարստացած Կ. Պօլսի հայ էֆէնդին կամ ամիրան մոռացել է այն երկիրը, որից դուրս է եկել, նա կտրել է իր կապերը իր ազգութեան հետ, նա աւելի բարձր է զասում իր նիւթեական շահերը, քան թէ իր ազգութեան տնտեսական եւ բարոյական օգուտները: Նա ունի Կ. Պօլսում եկեղեցական եւ ուսումնարանական ինքնավարութիւնն, —նրան ինչ փոյթ որ այդ ինքնավարութիւնը լոկ խօսք է զաւառների համար եւ որ տեղական վարչութեան կամայականութեան եւ թուլութեան պատճառով, այդ երեւակայական ինքնավարութիւնը չէ կարող ոչ գործադրված, ոչ պահպանված լինել զաւառներում: Կ. Պօլսի հայ ամիրան, էֆէնդին եւ հոգեւորականը գիտնի թէ քանի զոյութիւն կունենայ Թիւրքաց պետութիւնը, նրանց հարկաւոր չէ ոչ միծ ուսում, ոչ ազգութիւն, ոչ բարոյական զարգացում, ոչ մամնապիտական կրթութիւն, ոչ բաղաքացու ժամանակակից արժանաւորութիւններ եւ յատկութիւնն—

ներ,—նրանց հարկաւոր է միայն փող, որով նրանք ամեն բան կարող են անել այդպիսի թոյլ պետութեան հետ, իրանց արիւնակից գաւառացի հային էլ հարկաւոր ժամանակ հարստանարելով:

Գալով միւս կուսակցութեան, Արծրունին ասում էր որ «հասունեան կաթոլիկ եզութեական կուսակցութեան» էլ ձեռնտու է Օսմանեան պետութեան դոյտթիւնը, քանի որ թիւրքական թոյլ կառավարութիւնը տալիս է նրան ամեն յարմարութիւն՝ առաջ մզկելու իր պրօպագանդան ինտրիգների, զանազան որոդայթների միջոցով։ Եւ որպիսի համերաշխութիւն է տիրում Կ. Պօլսի հայ և թիւրք լրագիրների մէջ։ «Նորիրումս—շարունակում է Արծրունին—Բասիրէթ» թիւրքաց լրագիրը թիւրքիայի հայերին գրաւելու համար իր մի համարի մէջ բացականչում է՝ «Թիւրքաց պետութեան կոչումն է ազատել հայերին ոռուսաց տիրապետութեան անտանելի լուծից»։

Ահա թէ նրան մէծ ազմուկ հանեց «Մըշակը», նրքան կատաղի դիմադրութիւն ստեղծեց իր այն յօդուածներով, որոնց մէջ մարդկային տարրական իրաւունքների ապահովութիւն էր պահանջում գաւառների հայ ժողովրդի համար։ Կ. Պօլսում միայն «Մանդումէ» լրագիրն էր իրան փոքր ի շատէ օ-

րինաւոր պահում։ Նոյն իսկ «Մասիսը», որ հայոց պատրիարքարանի կիսապաշտօնական օրգանն էր համարվում և լուրջ ու խոհեմ թերթի համբաւ ունէր, պարտք համարեց առենախիստ լեզուով յարձակում գործել «Մըշակի» դէմ։ Ահա ինչ էր զրում պատրիարքարանի այդ օրգանը.

Բնաւ չէր յուսացուեր մայրաքաղաքիս հայ լրադրաց ոմանց մէկ չափազանցութեան փոխարէն, թիֆրիզի հրատարակեալ եւ ամեն մէկ տողը քրաբննիչին սուր քննութեանն ենթարկեալ թերթ մը, գուցէ անկէ առնելով, թուրքիոյ Հայոց եւ զանոնք կառավարող տէրութեան դէմ նախատինք եւ թշնամանը տեղայ, ոչ թէ Հայու այլ Մոսկովի մը բերնին մէջ վայլող լեզուաւ մը... «Մշակը» թուրքիոյ Հայերը դիակ՝ լ՛շ, աշոր կը կոչէ։ Մեր ամենքս անոր աչքին առջեւ մարդ ըստելու անդամ արժանի չինք եղեր, այլ զրաստ, անբարոյական, ինկած, անշունչ էակներ ենք եղեր։ Ասկէ վար բան մը կը մնայ զմեղ կուչելու։ Եւ եթէ պատճառը հարցնելու լինինք, այս է եղեր որ «Թուրքիոյ Հայերը թուրքերուն եւ քիւրդիրուն սիրած զանակ չի՞ն կոխեր»... Ի՞նչ մարդասիրական պահանջում։

...«Մշակի» խմբագիրն ինչ փաստ ունի ապացուցանելու թէ թուրքիոյ Հայն այն աստիճան ընկած է, ինչպէս որ կը կարծէ։ Ինչպէս պիտի կրնայ ապացուցանել թէ Ռուսիոյ Հայը բարոյապէս գերազոյն է թուրքիոյ Հայէն։ Ինչ յառաջապիմութիւն, ինչ լուսարութիւն, ինչ ազգային կեանք կրնայ

ցուցնել Ռուսական Հայաստանի մէջ, որպէս զի՞ Թուրքիոյ մէջ հայութեան չնշումը կը պահանջէ։ Որովհինեւ Փոքր-Ասիոյ խորերն եւ Հայաստանի մէջ կը պատահին եղեր մասնաւոր եղեռնագործութիւններ հակառակ կայսերական կառավարութեան կամաց՝ ի վնաս այս կամ այն Հայ անհատին, եղեռնագործութիւնները որոց հեղինակներն եթէ ձեռք անցնեն, իրենց արժանաւոր պատիժը կը կրեն, ասոր համար պէտք է եղեր որ Հայերն ի գէն դիմեն իրենց կառավարութեան դէմ եւ «Մշակի» բարողած քաղաքական ընթացքը բռնեն իրենց Խալամ հայրենակցաց նկատմամբ, որոց ամենամեծ մասը սիրով եւ համակրութեամբ վարուած են իրենց հետ այս չափ դարերէ ի վեր, եւ այնպէս կը վարուեն միշտ, մանաւանդ ներկայ լուսաւորեալ դարուս մէջ։

...Ենել ընկերական պատերազմի եւ ապստամբութեան հրաւէք կարդալ Հայոց, ստուգիւն եթէ ոչ ազգատեղութեան, գոնէ յիմարութեան վերջին ծայրն է։ Եթէ Հայն իւր ազգային անհատականութիւնը պահած է, կը հարցնենք թէ որո՞ւ շնորհիւ է։ Ո՞չ ապաքին այն կառավարութեան պարտի իւր ազգութեան եւ լեզուին պահպանութիւնն, որ այսչափ ժամանակէ ի վեր ոչ միայն քնաւ չը բռնադատեց զինքն իւր ազգութիւնը փոխելու, երբ ամեն բանի կարող էր, այլեւ պաշտպանեց եւ առանձնաշնորհութիւններ տուաւ։ Նոյն խսկ այն գարերուն մէջ՝ երբ Թուրքիա տակաւին Թամսիմաթը գործարած չէր, երբ եւրոպական տէրութեանց ներդաշնակութեան մէջ մտած չէր, Հայերը մեծամեծ շնորհներ կը վայելէին։ Թուրքիոյ ել ու մուտքն իրենց ձեռքն էր. վաճառականութեան մեծ մասն իրենք կը ինչին, եւ կայսերական մեծամեծ գործարաններ կը բանեցնէին։ Ահա

այս շնորհիւ Թուրքիոյ Հայք կրցած են անթիւ եկեղիներ ու դպրոցներ կանգնել, իրենց կրօնքը պաշտոնել եւ լեզուն մշակել, զարգանալ եւ աճել։

Եւ Կ. Պօլսի հայութեան շահերի այդ փաստաբանութիւնը լրագիրը վերջացնում էր հետեւեալ «խորիմաստ» եղբակացութեամբ։

Կարծենք Ռուսիոյ մէջ ալ խելքը գլուխ հայ մը չը կայ որ համոզուած չըլլայ այս ծշմարտութեանց ուստի տարակոյս չունինք որ «Մշակի» յօդուածները ծշմարիտ Հայու մը դրէ չեն կրնար ելած ըլլալ, այլ կամ Ռուսի մը կամ ազգուրացի մը, որ չը գիտինք ինչ նպատակաւ իւր Թուրքիոյ ազգակիցներն այսպէս Ռուսիոյ փառասիրութեան զոհելու փորձ կը փորձէ։

Այս անմիտ ակնարկութիւններն էին միակ զէնքը Արծրունու բազմաթիւ հակառակորդների ձեռքում։ Թուղնելով որ յետագայ գէպքերը ապացուցանեն թէ նվ էր ճշմարիտ հայը, նվ էր լաւ հասկանում իրերի դրութիւնը, մենք այստեղ կը յիշեցնենք ընթերցողին, որ «Մշակի» հակառակորդները ձեռնաու էին համարում մոռանալ, չեղածի պէս համարել նրա ասածների էական, ամենազլիսաւոր մասը և ազմուկ հանել երկրորդական բաների շուրջը։ Նրանք մոռանում էին, որ Արծրունին հաստատ

կերպով ասում էր. «Այժմ կամ երբէք»։ մոռանում էին, որ Արծրունին, նկարագրելով թիւրքական ռայեայի ստրկութիւնը, բթացած դրութիւնը, ասում էր որ նրան կարող է աղատել մի զրախ մեծ ոյժ և այդ ոյժը Ռուսաստանն է, որ իր վրա է վերցրել արեւելեան քրիստոնեաների պաշտպանութիւնը։ Հայերի համար էլ յոյսի դուռ է բացվում. «Այժմ կամ երբէք»։

Եւ ահադին աղմուկն ու վայնասունը չը կանգնեցրին Արծրունուն։ Նա չը նահանջեց, կէսից յետ չը դարձաւ, այլ շարունակեց իր պրօպագանդան աւելի մեծ եռանդով։ «Մշակի» միջոցով նա կարող էր միայն հայերի հետ խօսել, բայց պէտք էր ոռւս հասարակութիւնն էլ ծանօթացնել թիւրքահայերի դրութեան հետ։ Ոռւս լրագիրների մի նշանաւոր մասը թշնամաբար էր տրամադրված դէպի հայերը։ Գլխաւոր շարժառիթներից մէկը, ի հարկէ, այն թիւրքամոլական տրամադրութիւնն էր, որ տիրում էր Բոնֆօրի ափերում ապրող հայերի մէջ։ «Կովկասեան ապստամբութեան» մասին յօրինված առասպելների առիթով Պետերբուրգի լրագիրները խիստ յարձակումներ դորձեցին հայերի դէմ և Ասիացին իր գելիէտօններից մէկում արևորութեամբ ասում էր թէ մեղ հայհոյում են,

անդադար հայհոյում են։ Անհրաժեշտ էր ռուս հասարակութեան առաջ պարզել իրողութիւնը, այն, որ Կ. Պոլսի հայութիւնից դուրս կայ հայերի մի ահապին բաղմութիւն, որ տանջվում է սլաւօնների պէս։ Բայց ով պէտք է անէր։ Արծրունին մի կողմից զարմանք էր յայտնում որ հայ ուսանողները Պետերբուրգում և Մօսկվայում թարգմանութիւններ չեն անում հայոց լրագիրներից և չեն տպագրում ոռւս լրագիրների մէջ, միւս կողմից ինքը աշխատում էր այդ անհրաժեշտ պահանջը իրագործել։

Այս պատճառով նա յուլիսի վերջից սկսեց տպագրել „Տիֆլիսկի ԵՇՏՆԻԿ“ լրագրում մի շարք յօդուածներ՝ «Հայերի դրութիւնը Թիւրքիայում» ընդհանուր վերնագրով։ Դա մի բարեխիղճ, մանրամամն ուսումնասիրութիւն էր, հիմնված 1872-ի այն տեղեկադրի վրա, որ հրատարակել էր Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը և լուսարաննախածայն տեղեկութիւններով, որ տալիս էր Կ. Պոլսի հայոց մամուլը։ Յօդուածների տակ դրված է Ս. ստորագրութիւն, բայց ոչինչ կասկած չը կայ թէ դրանք Արծրունու գրչին են պատկանում, քանի որ այնտեղ ամեն ինչ ներկայացրած է «Մշակի» ոճով և հայեացք-

Ներով և շատ տեղ նոյն իսկ թարգմանութիւններ կան «Մշակից»:

Հոկտեմբեր ամսին, երբ արևելեան հարցի քարուցած ուշադրութիւնը իր ծայրայեղ լարման էր հասել, Արծրունին հրատարակեց ուռւերէն մի փոքրիկ բրօշիւր՝ „Յօստոչն Յօպօստութիւն” Վորոշուր վեց փոքրազմբ երես գրաւող այդ գրուածքը «Մշակի». մի առաջնորդողեց մեծ չէր *) և նրա մէջ Գրիգոր Արծրունին աշխատում էր յիշեցնել մի ահաւոր ճշմարտութիւն, որ մոռացվում էր արևելեան հարցի քննութիւնների ժամանակ:

Ամբողջ Եւրօպան համոզված էր որ արեւելեան հարցի արդար, բնական լուծումը կը լինէր վանդել թիւրքերին Եւրօպայից: Նոյն իսկ պետական այնպիսի մեծ խելք, ինչպիսին էր Գլադիատօն, իր ճառերի, իր հրատարակած հշանաւոր բրօշիւրի մէջ ասում էր թէ թիւրքերի Եւրօպա անցնելը մի սոսկալի անէծք էր քաղաքակիրթ մարդկութեան համար և այդ անէծքից աշխարհը կաղատվի այն ժամանակ, երբ թիւրքերը կը հաւաքեն իրանց ունեցած չունեցածը և կը հեռանան Եւրօպայի հողից: Այդ վճիռը շատ վաղուց էր

*) Թարգմանութիւնը տպվեց 1877-ի առաջնարդող ներից մէկում:

Պայացրել քրիստոնեայ Եւրօպան, դա, ի հարկէ, յայտնի էր թիւրքերին, որոնք և ժամանակաւոր հիւրեր էին իրանց համարում եւրօպական հողի վրա: Յայտնի է, որ շատ բարձրաստիճան թիւրքեր կտակում էին թաղել իրանց Բօսֆորի ասիական ափերի վրա. նրանք զիտէին որ թիւրքի իսկական հայրենիքը, վերջ ի վերջոյ, Փոքր-Ասիան է: Եւ իրաւ, գարերի ընթացքում եւրօպական քրիստոնէութեան ջանքերը ի նկատի ունէին միայն Եւրօպական հողի վրա ապրող քրիստոնեաների ազատութիւնը թիւրքական լուծից և եթէ օսմանեան թագաւորները իրանց օժար կամբով անցնէին Բօսֆորի ասիական ափը, արևելեան հարց չէր լինի:

Արևելեան հարց այդ դէպքում չէր լինի: Բայց որքան ճիշտ էր դա: Արծրունին իր բրօշիւրի մէջ հէնց այդ հանգամանքն էր քննում:

Արեւելեան հարցը—ասում էր նա—միայն սլավոնականութեան եւ օրթոդօքտութեան հարց չէ, նա նոյն իսկ միայն քը իստո՞ն է ու թե ան հարց չէ, այլ աւելին. զա կուլտուրական հարց է, կուլտուրական ցեղերի կուլի հարցն է բարբարոսութեան դէմ, արիական եւ սեմական ցեղերի կուլի հարց թուրական հարց է:

Արեւելան հարցը—դա սլավոնների, յոյների, հայե-

թի, ասօրիների, վրացիների, հրէաների խուլ, համր, օրհասական կուլի հարցն է նրանց մնշող մօնզօլական լուծի դէմ:

Ահա ինչ պէտք է հասկանայ Եւրօպան:

Եթէ այդ ցեղերից մի քանիսը կուռում են դէնքիրը ձեռքին, իսկ միւսները տանջվում, արիւն են թափում առանց կուլի, մեռնում են անօգնական,— դրանից չը պէտք է հնտեւցնել թէ վերջինները թիչ են տանջվում, քան առաջնները...

Ահա, կրկնում եմ, ինչ պէտք է հասկանայ Եւրօպան:

Արիական եւ սեմական ծագում ունեցող այս ցեղերը, որոնք հպատակ են թիւրքիային, Օսմանների պետութեան մէջ ազգաբնակութեան բացարձակ միամասնութիւնն են կազմում: Խոկ եթէ այդ ցեղերին միացնենք թիւրքիայի այն ազգաբնակութիւնը, որ թէև մահմեդական կրօնին է պատկանում, բայց նոյն արիական ծագումն ունի, այն է մահմեդական սլաւոններին, մահմեդական յոյներին, մահմեդական հայերին, մահմեդական վրացիներին եւ նոյն իսկ քրդերին (հին մեղացիներին) եւ սեմական ցեղին պատկանող մահմեդական հրէաներին եւ մահմեդական ասօրիներին, որոնք մահմեդականութիւն ընդունել են մօնզօների բարբարոսական մնշման տակ, — այն ժամանակ գուրս կը գայ որ թիւրքիայում կուլտուրական ցեղերը ահապին, մնշող մեծամասնութիւն են կազմում, համեմատած սելցուկեան թիւրքերի մի բաւոն թոռների նետ:

Ահա զարձեալ, կրկնում եմ, ինչ պէտք է հասկանայ Եւրօպան:

Եթէ Եւրօպան ուզում է, որ զարգացման եւ կուլտուրայի ընդունակ ցեղերը, այն ցեղերը, որոնք ժամա-

նակաւորապէս մնշված են, բայց կուլտուրա կ ան են, նորից վերադարձնեն կուլտուրային, վերադարձնեն մարդկութեան,— նա թուրանական լուծից պիտի աղատէ բոլոր ոչ-թուրանական ցեղերը:

Գարիբաղդիի պէս բաղաբագէտները եւ Եւրօպայի հասարակական կարծիքի այնպիսի դիկավարներ, ինչպէս Լմիլ դը-ժիւրադէն, վճռում են արեւելեան հարցը չափազանց նեշտ կերպով. բաւական է միայն, ասում են նրանք, վանդել Թիւրքերին Եւրօպայից Փոքր-Ասիա— եւ արեւելեան հարցը լուծված է:

Իսկ ինչ պիտի անէք մնովա-Եւրօպական ցեղերի այն միջիօների նետ, որոնք բնակված են Փոքր-Ասիայում, կուլտուրական մարդկութեան այդ օրօրանում:

Եւրօպան միթէ այդ ցեղերը մօնզօլական, ցեղի կերը կը զարձնէ, մորեխի պէս բաց կը թողնէ Թիւրքերին Փոքր-Ասիա:

Դասնով դուք չէք վճռի արեւելեան հարցը, այլ միայն կը ծգծէք նրան, կը բարդացնէք:

Ժամանակ կար, երբ սլաւոններն էլ, Եւրօպական յոյներն էլ չէին համարձակիում կուել Թիւրքական լուծի դէմ, ինչպէս այժմ չեն համարձակիում այդ անել Փոքր-Ասիայի յոյները եւ հայերը, այլ արիւն էին թափում, կոտորվում էին լուռ, ինչպէս այսօր արիւն են թափում եւ լուռ կոտորվում են Փոքր-Ասիայի հայերը եւ յոյները...

Բայց վերջապէս սլաւոնները միաբան գէնք վերցին:

Ո՞վ կարող է երաշխաւոր լինել, որ Փոքր-Ասիայի ազգաբնակութիւնն էլ ժամանակով զէնք չի վերցնի:

Միթէ դրանով կը լուծի արեւելեան հարցը: Ո՛չ, նա միայն կը ծգծիլ:

Այսօր ասպատամբիկ են Թիւրքիայի Եւրօպական հապատակները, հինգ, տասը տարուց յետոյ կապատամբվեն Թիւրքիայի ասխական հապատակները...

Միթէ զրանով կը լուծվի արեւելիան հարցը:

Եթէ Եւրօպան ուզում է պահպանել Թիւրքական կալուածների ամբողջութիւնը, թող պահանջէ Թիւրքիայից համար եւ լայն մարդկային իրաւունքներ նրա այն բոլոր հապատակների համար, որոնք թուրանական ծագում չունեն: Խակ կարծէ է Թիւրքիան այդ կատարել, կարծէ է պահել իր տուած խօսքը, իրագործել խոստացած թէֆորմները... Երբէք:

Խակ եթէ նա ուզում է ազատել միայն Եւրօպական նահանգները Թիւրքական լուծից եւ զրանով կարծում է լուծել արեւելիան հարցը, այդ գէպում նա կարող է համոզված լինել որ հինգ, շատ-շատ տար տարուց յետոյ նա նորից կունենայ արեւել և ան հարց եւ գուցէ աւելի յուսահատական, աւելի սարսափելի կուռվ...

Կարծէ է Եւրօպան երաշխաւոր լինել, որ այն ժամանակ նա կարողութիւն կունենայ խցել իր ականջները եւ չը լին միլիօնաւոր մարդկանց հեծեծանքները միայն այն պատճառով, որ յուսահատական, գուցէ եւ օրհասական կոփը տեղի կունենայ ոչ թէ Եւրօպայում, այլ Փոքր-Ասիայում:

Թող Եւրօպան լուծէ արեւելիան հարցը այժմ եւ եթ, եւ լուծէ արմատական կերպով, թէ չէ չը պէտք է լինել մեծ մարդարէ գուշակելու համար, որ մօտիկ ապագայում նրան հարկաւոր կը լին լուծել այդ հարցը նորից:

Եթէ Եւրօպան ուզում է Թիւրքիայի կալուածները անձեռնմխել պահել, պէտք է պահանջէ նրա բոլոր

հապատակների համար հաւասար մարդկային իրաւունքներ:

Դրանով դեռ չի լուծվի արեւելիան հարցը, այլ նա նորից կը ծագէ մի քանի ժամանակից յետոյ:

Եթէ կը բաւականանայ միայն նրանով, որ կը վկնդէ Թիւրքերին Եւրօպայից Փոքր-Ասիա, այդ գէպում մի քանի ժամանակից յետոյ նրա տասջնորից յարութիւն կառնէ արեւել և ան հարցը՝ իր հեծեծանքներով, հատաշանքներով, զէնքը ձեռքին:

Ո՞րն է արեւելիան հարցի արմատական լուծումը:

Այն ցեղերը, որոնք ընդունակ չեն պետական կեանքին, ինչպէս մօնղօլական ցեղը, պատմութեան անդառնալի վճում պէտք է զրկվեն պետական կեանքով ապրելու իրաւունքից, մանաւանդ որ պետական կեանքին անընդունակ ցեղի ձեռքում տանջվում են կուլտուրական կեանքին ընդունակ միլիօններ արիական եւ սեմական ցեղերից:

Ազգում է Եւրօպան տարածել քաղաքակրթութիւնը Եւրօպական Թիւրքիայում եւ Փոքր-Ասիայում, վերադարձնել կուլտուրական ժողովուրդները Եւրօպական կուլտուրային,—այդ գէպում նա պիտի հասկանայ, որ Թիւրքական տիրապետութիւնը մի անյաղթելի արգելք է՝ քաղաքակրթութիւնը թէ սկաւունական ցեղի եւ թէ Փոքր-Ասիայի ցեղերի մէջ տարածելու դէմ:

Պատմութիւնը անողոք է:

Ազգերի զոյութեան կուի եւ մարդկութեան ընդհանուր զարգացման մէջ պատմութիւնը զրկում է զոյութեան իրաւունքից, որ պէտք է պահպան բոլոր այն ազգերը, որոնք ապագուցել են պետական կեանքով ապրելու իրանց անընդունակութիւնը:

Այս բրոշիւրի վրա ուշադրութիւն դարձրին մայրաքաղաքի մի քանի ոռուս լրագիրներ: Առհասարակ, ոռուսաց մամուլի մէջ, գլխաւորապէս «Մշակի» և նրա խմբագրի ջանքերով, սկսեց փոքր առ փոքր երեան դալ համակրութեան մի հոսանք հայերի վերաբերմամբ: Աւելորդ է ասել թէ «Արեւելեան Հարց» բրոշիւրը որբան պատիւ էր բերում մի լուրջ, մատածող հրապարակախօսի: ընթերցողը ինքը կարող է դատել այդ մասին, դատել մանաւանդ թէ որբան իրաւացի նըղեասուութիւններ և ճիշտ գուշակութիւններ էր զրել Արծրունին իր այդ փոքրիկ, բայց աշխոյժ ու կտրուկ ոճով զրած աշխատութեան մէջ: Մենք այստեղ նորից մի փոքրիկ նմուշ կը տանք, թէ երդուեալ, կոյր թշնամութիւնը, ինչպէս վերաբերվեց Արծրունուն և այս գէպքում: Ահա ինչ էր դրում «Մեղու Հայաստանին» իր № 41-ի մէջ.

Ամրող տարի է, որ բոլոր Եւրոպան տակն ու վրայ եղաւ Արեւելեան հարցի պատճառով, թագաւորներ եւ կայսրներ մանապարհորդեցին, դեսպաններ ամեն տեղ վագեցին, խօսեցին ու վիճեցին, միլիոնների ծախսեր եղան, զօրքերը տեղափոխվեցան — դեռ էլի հարցը անվճիռ մնաց, որ ի վերջոյ Մշակի խմբագիր պ. Գր. Արծրունին 5 կոպէկով վճռեց— վասն զի նորա «Արեւելեան հարց» ոռուսերէն բրո-

շիւրը հինգ կոպէկ արձէ: Ի՞նչպէս, այնպէս որ Եւրոպան չգիտէր թէ ինչ պիտի անէ եւ պ. Գրիգոր Արծրունին սովորացրեց նրան նա պէտք է Տաճկաստանի բոլոր հպատակ ազգերին ազատութիւն տայ, որովհետեւ նորա Խրանական եւ Սեմիտական ազգեր են, իսկ Տաճկիներին ենթարկէ նրանց, որ այսուհետեւ սորա նրանց հարստանարեն, որովհետեւ Տաճկիները Մողոլեան ցեղին են պատկանում եւ կուլտուրական ազգ չեն (?):

Ի՞նչ է մնում այլ եւս Եւրոպային. սա, ինչպէս եւ Տաճկաստանը անշուշտ կը նորունեն պ. Արծրունու վմիուը:

Եւ այսպիսի ծամածուութիւնների միջոցով լրագիրը գալիս էր այն եղրակացնութեան, որ Արծրունու բրոշիւրը մանկական բան է և ծիծաղ է յարուցանում հասկացող հասարակութեան մէջ: Ի՞նչ դատաստան...

Երրորդ գործը, որ ձեռնարկեց Արծրունին «Մշակից» գուրս յօդուաթիւրքահայերի, աւելի կարենոր էր: Հոկտեմբերի վերջերում Ալէքսանդր կայսրը Մոսկվացում մի շատ նշանաւոր ճառ արտասահմաց: Թիւրքերը յաղթող էին հանդիսացել Սերբիայում և խեղձ իշխանութեան վերջը հասած կը վիճէր, եթէ ոռուսաց կայսրը միջամտած չը վիճէր. նա պահանջեց թիւրքերից զինադադար և այդ պահանջը թիւրքիան անկարող եղաւ չը կատարել: Օգուտ քաղելով զինադադարից, եւ-

բօսպական դիտակամատիան վճռեց կ. Պօլսում՝
գեսալանամաժողով կազմել՝ թէ թիւրք-սերբիա-
կան հաշտութեան պայմանները որոշելու և
թէ Բալկանեան թերակղղում բէֆօրմներ
մտցնելու համար։ Ալէքսանդր կայսրը, յայտ-
նելով այդ մասին իր ծառի մէջ, աւելացրեց
թէ ինքը վճռել է, գեսալանաժողովի անաջո-
ղութեան դէպքում, գործել անկախ և ծայ-
րայել դէպքում նոյն իսկ զէնքի դիմել։

Կայսրի այդ խօսքերին արձագանք տուեց
ամբողջ Ռուսաստանը. ամեն կողմից ուղերձ-
ներ ուղարկեցին թագաւորին, որոնց մէջ
յայտնում էին ուռւ ժողովրդի պատրաստա-
կանութիւնը ամեն զոհողութիւն յանձն առ-
նելու, որ քրիստոնեաների աղատութեան
գործը կայսրը տանէ այնպէս, ինչպէս Ռու-
սաստանի պատիւն է պահանջում։ Հայրե-
նասիրական ցոյցերը ողովել էին ամբողջ
ուռւաց պետականութիւնը. Թիֆլիս քաղաքն էլ,
տեղական ազնուականութիւնն էլ ուղերձներ
էին պատրաստում։ Արծրունին, օգուտ քա-
ղելով դէպքից, նախաձեռնող հանդիսացաւ
որ մի առանձին ուղերձ էլ Թիֆլիսի հայերը
ներկայացնեն։ Ամբողջ օրերով նա, կառք
նստած, այս ու այն կողմ էր զնում ստորա-
գրութիւններ հաւաքելու։ Ուղերձը գրվեց
Կովկասեան փոխարքայ Մեծ իշխան Միլայիլ

Նիկոլաելիչի անունով. Ալէքսանդր կայսրը՝
ի թիւս ամենքի, չնորհակալութիւն յայտնեց
և Թիֆլիսի հայերին, որոնց ուղերձը պաշ-
տօնապէս հրատարակվեց բոլոր լրազիրնե-
րում։ Ահա այդ ուղերձը.

Զերդ կայսերական Բարձրութիւն։

Բնակվելով Ռուսաց տէրութեան հովանիին տակ
եւ վաղուց արգէն վայեկելով մեզ համար Թանկագին
սիստութեան հովանաւորութեան տակ հանգստութեան
եւ խաղաղութեան պարզեւները, մենք, Թիֆլիս քա-
ղաքի բնակիչ հայերս, դրվագ լինելով քրիստոնէա-
կան մարդասիրութեան զգացմունքից, չենք կարող
անտարբեր մնալ դէպի այն աներեւակայելի տան-
ջանքները, որ կրում են ասիական Թիւրքիայի սահ-
մաններում բնակվող մեր ցեղակիցները եւ համազա-
ւանները, որտեղ ոչ սեփականութիւնը, ոչ քրիստո-
նաների կեանքը, ոչ նրանց ընտանիքի, կանանց
եւ աղջիկների պատիւը ոչնչով չէ ապահովված։

Գիտենալով ոքքան մեր Սիրելի Թաղաւորը եւ
ամբողջ Ռուսաստանը անսահման համակրում են
Թիւրքահպատակ քրիստոնէաների վիճակին, մենք
մեր թէ արիւնով եւ թէ կրօնքով եղբայրների դրու-
թեան բարելաւացնելու բոլոր յայսը զնում ենք Ռու-
սաստանի հզօր նեղինակութեան ոյժի վրա, եւ ապա-
ւինում ենք միմիայն Խնքնակալ կայսրին։

Քրիստոնէական մարդասիրութեան, խոր ցաւոկ-
ցութեան, ազգականութեան զգացմունքը դէպի մեր
եղբայրները՝ դրեց մեզ դիմել Զեր կայսերական
Բարձրութեան Օգոստափառ միջնորդութեանը եւ ա-

մենահաւատարմաբար խնդրել Զեր Յարձրութիւնը արկանել թագաւոր Կայսրի ոտներին մեր ամենահպատակ խնդիրքը՝ պաշտպանել Եր հզօր ձեռքով, հաւասար Թիւրքիայի այլ քրիստոնեաներին, մահմեղականութիւնից միշտ ճնշված հայոց աղջր այն միջոցներով, որ Նախախնամութիւնը յանձնել է Նորին Մեծութեանը եւ որ Նա աւելի յարմար կը համարի *):

Այս ուղերձը, ինչպէս հազորդում էին արտասահմանեան լրագիրները, հիմք դարձաւ որ Կ. Պօլսի գեսապանաժողովում ոռւսաց գեսապան Իդնատիեվ հարց բարձրացնէ և թիւրքահայերի մասին։ Բայց գեսապանաժողովի ժամանակ Կ. Պօլսի հայերն էլ արդէն ուրիշ տեսակ տրամադրութիւն էին ցոյց տալիս։ Արագ զարգացող քաղաքական գէպարերը սովորեցնում էին նրանց որ թիւրքամոլութիւնը ոչինչ օգուտ չը պիտի տայ հայ ցեղին։

Մենք տեսանք թէ որքան երկար ժամանակ Գրիգոր Արծրունին մենակ էր, չըրջապատված հակառակորդների բարձրածայն վայնասունով։ Որքան էլ հայոց ամբողջ մամուլը աղաղակում էր թէ միայն գաւաճան, աղգուրաց հայը կարող է խօսել այնպէս,

*) «Մշակ» 1876, № 48.

ինչպէս խօսում է Արծրունին, հետզհետէ երևան էր գալիս այն նշանաւոր համգամանքը, որ «Մշակի» ձայնը համակրանք է գըտնում հայ շրջանների մէջ։ Կովկասի զանազան կողմերից Արծրունին ստանում էր համակրական նամակներ։ Ծուսաստանի հայ ուսանողութիւնը, որ մինչև այդ համարեա անտարբեր էր գէպի «Մշակը», նոյնպէս սկսեց համակրանք և գաղափարակցութիւն ցոյց տալ։ Արծրունին գոհութեամբ էր արձանագրում այս երեսյթը «Մշակի» մէջ։ Առաջին օրինակը տուեց Մուկվայի հայ ուսանողութիւնը։ Արծրունին ասում էր թէ Մուկվայում արդէն չորս ուսանողներ կան, որոնք գրում են «Մշակի» մէջ։ Դրանք սովորական, առօրեայ հարցերի մասին չէին միայն գրում, այլ յաճախ դիմում էին և օրվայ հրատապ հարցին, արենեկան հարցին։ Շատ գրում էր այդ մասին Ալէքսանդր Քալանթարը. Լևոն Խան-Աղեան, Ներսէս Արէւեան նոյնպէս յաճախ էին գրում։

Եւ այսպէս, Արծրունին, ինչպէս բնական էր սպասել, գրաւեց իր այդ պրօպագմնդայի մէջ նախ և առաջ երիտասարդութեան համակրանքը։ Իր կրակոտ յօդուածներով նա աղդեցութիւն գործում էր և Կ. Պօլսում մի քանի շրջանների մէջ։ Բայց խօսրի ոյժը

ինքն ըստ ինքեան բաւական չէ մի գաղաւիար արծարծելու, մարմնացնելու համար ինքը, կեանքը պիտի ապացուցանէր թէ այդ խօսքը իրաւացի և ճշմարիտ է, թէ նրանով արտայայւող միաքը մեռած, հնարած բան չէ: Այդպիսի վաւերացում կեանքը շատ էր հազորդում Արծրունու խօսքերին: Թիւրքաց Հայաստանի իրականութիւնը գալիս էր թիւրքասէր հակառակորդներին լուցնելու:

Որբան բալկանեան քրիստոնեաների հարցը սպասնալից, խեղզող բնաւորութիւն էր ստանում Թիւրքիայի համար, այնքան ասիական նահանգներում սաստկանում էր տեղացի մահմետականների գրգռմունքը քրիստոնեաների դէմ: Կիսապաշտօնական «Մասիսը», ինչպէս տեսանք, հեղնանքով էր սուսմ, թէ «Փոքր-Ասիսյ խորերն և Հայաստանի մէջ կը պատահեն եղեր մասնաւոր եղեռնագործութիւններ»: Բայց ահա այդ «կը պատահեն եղեր»-ը դառնում է այնպիսի համատարած, գժբախտ իրողութիւն, որ ինքը «Մասիսը» այլիս չէ կարողանում թիւրքամոլական ինքնագործութեամբ հրապարակ գալ այլ սկսում է լաց ու կոծ բարձրացնել գաւռական սանձարձակ հարստահարութիւնների և գաղանութիւնների առիթով: Կ. Պօլսի միւս հայ լրագիրներն էլ լցվում են նկա-

բագրութիւններով, որոնք փոքր չափով յիշեցնում են Յօլգարիան: Թիւրքաց կառավարութիւնը հալածանք սկսեց այդ լրագիրների դէմ, մի քանիսը վակեց, հայերը սկսում էին հասկանալ որ իրանք բախտաւոր բացառութիւն կազմել թիւրքական իրականութեան մէջ չեն կարող: Գաւառները իրանց հրգեհներով, սպանութիւններով խելքի էին բերում մայրաքաղաքի հայերին: Եւրոպական բազմաթիւ լրագիրների մէջ սկսեցին տպկել յօդուածներ թիւրքահայերի մասին և գրողները մեծ մասամբ հայեր էին: Սեպտեմբերին Արծրունին գոհութեամբ արձանագրում էր որ Կ. Պօլսի մէջ ընդհանուր տրամադրութիւնը վտակեց: Հայերը միացել են, մտածում են իրանց դրութեան մասին: Ներսէս պատրիարքը ներկայացրեց թիւրք կառավարութեան մի խնդրագիր, որով պահանջում էր հաւասարեցնել հայերի իրաւունքները իսլամ ժողովրդի իրաւունքների հետ: — Իսկ երբ յայտնի դարձաւ, որ Կ. Պօլսում գեսպանաժողով պիտի լինի, Աէթ-Աբգարը կազմեց մի փոքրիկ յիշատակագիր հայերի գրութեան մասին, որ հրատարակվեց առանձին բրոշիւրով: Այդ յիշատակագիրը, ինչպէս թիւրքահայերի բաղձանք, ներկայացրվեց մարկիզ

Սօլսրիւրին, որ Սնդլիայի ներկայացուցիչն
էր գեսպանաժողովում:

Այս բոլոր գէպքերը և փաստերը իրաւունք էին տալիս Գրիգոր Արծրունուն զիմել այն մարդկանց, որոնք սկզբում այնքան ազմուկ բարձրացրին իր գէմ: «Աղջտափրական խարեւայութիւն» առաջնորդողը (№ 45) մի ամփոփում էր, որի մէջ պատկերացած էր մնոր տիրացուական աղջասիրութեան մնանկութիւնը:

Տասն եւ եօթ տարի է—ասում էր այդ առաջնորդող—որ Թիւրքիայի հայերը ստացել են իրանց տէրութենից սահմանադրութիւն: Անա տասն եւ եօթ տարի է, որ մենք անդադար լուսմ ենք թէ հայերը ժաղդաւոր են, երշանիկ են Թիւրքիայում, թէ նորա այնտեղ վայելում են ինքնավարութիւն, ունին մի հաստատ սահմանադրութիւն իրանց համար...

Բայց ինչ է այդ երեւելի սահմանադրութիւնը,—ոչ ոք զիտէր եւ ոչ ոք չէր կարող բացատրել: Իրանց, Թիւրքիայի հայերից որ հարցնելիս լինենք՝ ինչ բան է ձեր սահմանադրութիւնը,—նորա մեկնել չեն կարող:

Այստեղ, Ռուսաստանում, հայերի մի բաւական տարածված կուսակցութիւն կայ, որ ահա տասն եւ եօթ տարի է աշխատում էր միշտ հաւատացնել մեզ որ ոչ մի տեղ հայերը այնքան երշանիկ չեն, որքան Թիւրքիայում...

...Թիւրքիայի հայերի դրութեան խևական պատկերը մեր աչքերից ծածկելով, այդ սկնութեան սար-

սափելի վէրքերը անդադար քօղարկելով, այդ փտած կուսակցութիւնը կարծում էր որ միւս երկիրների հայերին մեծ բարերարութիւն է անում, ազգասիրական գործ է կատարում...

Եւ այժմ, երբ որ Թիւրքիան գտնվում է սարսափելի քաղաքական մի կրիզիսի մէջ, յանկարծ յայտնվեցաւ որ Թիւրքիայի հայերի դրութեան վրա մեզ պատմած բոլոր գեղեցիկ բաները,—առակներ էին: Կրիզիսի բօպէում յայտնվեցաւ որ նուչկած սահմանադրութիւնը՝ օպային մի ամրոց էր, որ կառուցված էր մեր տիրացու-ազգասէրների գլխներում միայն, այժմ կրիզիսի բօպէին յայտնվեցաւ որ այդ երեւելի սահմանադրութիւնը անզօր է պաշտպանել հայերին տէրութեան կամայականութեան եւ բարբարոսութեան դէմ, անզօր է պաշտպանել Թիւրքիահայտակ հայի ամենաանհրաժեշտ, անբռնաբարելի մարդկային իրաւութը...

...Եւ ահա Թիւրքիայի հայը մոլորված, յուսանատված դիմում է ոչ թէ իր տէրութեանը, որից ոչինչ բաւականութիւն չէ ստանում, այլ ստիպված է դիմել օտար պետութիւնների օգնութեանը...

Եւ յանկարծ մեր տիրացու-ազգասէրների փտած կուսակցութիւնը, որի զէվիզն էր Թիւրքիա հարա ճա ճա (Թիւրքիան ինքն կանէ, ինքն իրան կը լուսաւորի, ինքն իրան կը կառավարի),—մոլորված տեսնում է թէ իր բոլոր յոյսերը գուր էին, կամ որ իր տասն եւ եօթ տարվայ խաբերայութիւնը յայտնվեցաւ, մերկացաւ...

Նրան ասում են՝ զուր սկսալված էիր,—որ չասնք գուր թշուառ խաբերաներ էր, որ այսքան ժամանակ աշխատեցիր մոլորեցնել ազգը եւ հասարակական կարծիքը, բոլոր ջանքեր էիր գործ դնում

քնիցնել այն գայրացումը, որ անշուշտ կը յայտնվէր, եթէ ներկայացնէիր Թիւրքիայի հայերի զրութեան խակական պատկերը. դուք օրօր էիր կարդում մեր զվին, դուք կամ ամենամեծ յանցաւորներ էք, կամ միամիտ կարճատես, սահմանափակ, ողորմելի զըլուխներ էք...

Բայց փտած տիրացու-ազգասէրների յիմար ինքնասիրութիւնը չէ ներում իրանց սխալը խոստովանել, չէ թոյլ տախս անկեղծութեամբ խոստովանել թէ այսքան տարի նորա կամ խաք ված էին, կամ խաք ու մ էին:

Կ. Պօլսի գեսպանաժողովը սկսեց իր նախազատրաստական պարապմունքները նոյեմբերի 10-ից, իսկ պաշտօնական նխտերի շարքը բացեց գեկտեմբերի 11-ից: Թիւրքաց կառավարութիւնը վեց մեծ պետութիւնների ներկայացուցիչների դիմաց մի բան միայն կարողանում էր անել—քաղաքական ճարպիկ խաղեր: Նա կամ համակերպվում էր միացած Եւրօպայի պահանջներին կամ զանազան միջոցներով մերժում էր նրա առաջարկութիւնները: Դեկտեմբերի 11-ին, երբ պիտի բացվէր գեսպանաժողովի առաջնն պաշտօնական նխտը, Բօսֆօրի ափերում ուրտացին թնթանօթները: Եւրօպական պետութիւնների ներկայացուցիչներին իմաց տրվեց, թէ այդ օրը Թիւրքիայում հրատարակվում է սահմանադրութիւն, որ վերցրած

է Եւրօպական օրինակներից և սուլթանի բոլոր հպատակների համար բաց է անում երջանկութեան, ազատութեան և քաղաքակըրթութեան մի նոր գարագլուխ:

Դա նշանակում էր թէ դեսպանաժողովը աւելորդ է: ԶԵ որ նա գումարիված է ուաւոնական երկիրների համար տեղական քէֆօրմների ծրագիր մշակելու. ահա փոխանակ տեղական մասնաւոր բարենորոգումների, սուլթանը իր բոլոր հպատակներին չորհում է լայն ինքնավարութիւն:

Շատերը հասկացան որ թիւրքական սահմանադրութիւնը մի քաղաքադիտական ձեռնածութիւն է, և ուրիշ ոչինչ: Ի՞նչ սահմանադրութիւն կարող էր գոյութիւն պահպանել Թիւրքիայի պէս մի պետութեան մէջ: Դեսպանաժողովը, այնուամենայնիւ, շարունակեց իր պարապմունքները: Բայց Եւրօպական կօնցերար շատ էլ միարան չէր. նա սկսեց զիջողութիւններ անել, իսկ թիւրքերը սկսեցին աւելի և աւելի համարձակ կերպով մերժել Եւրօպական միջամտութիւնը: Ալէքսանդր կայսրը վաղուց նախատեսում էր այդպիսի ելքը. նա համոզված էր որ դեսպանաժողովը ձգձգումների քաղաքականութեան միջոցներից մէկն էր: Ուստի գեռ գեսպանաժողովի սկզբում նա հրամայեց ողա-

տերագմական դիրքի մէջ գնել բանակի մի մասը: Պատերազմը գնալով անխուսափելի էր դառնում: Ծուսաց դօքքերը հաւաքված էին Եւրօպական Ռուսաստանի բուժինական սահմանների վրա, իսկ Անդրկովկասում թիւրքական սահմանների վրա:

Ի՞նչ էին անում Կ. Պօլսի հայ ղեկավառող շրջանները: Ներսէս պատրիարքը վճռաւ կան քայլեր չէր անում, նա տատանվում էր. կամ դիմում էր ղեկավանաժողովին, կամ յայսնում էր որ հայերը գոհ են իրանց դրութիւնից. նա հաւասարում էր թիւրքական սահմանադրութեան և կարծում էր թէ այդ նոր օրէնքը կարող էր լինի վերացնել քրիստոնեանների դժգոհութեան բոլոր պատճանները: Աղքային ժողովում 1878 թ. յուլիսին արտասահմած իր ճանի մէջ Ներսէսը այսպէս էր նկարագրում իր դործունէութիւնը 1876-ի վերջներում.

Տէրութիւնը ի ժողով գումարեցան ի Պօլիս: Ի՞նչ ըրաւ Հայոց աղջը. օրինաւորութենէն դուրս չելաւ. Հայերը զոհ էին որ Օսմաննեան Տէրութեան ներքեւ էին. այլ իրենց վիճակին դառնապէս դժգոհ էին. Եւ որովհետեւ ընդհանուր քրիստոնէից վիճակը բարւոքելու խօսքեր կըլլային, Հայերն ալ ընդհանուր բարեկարգութենէն սպասեցին իրենց վիճակին բարւութումը:

Տեր Պատրիարքը, զիտէք արդէն, Տիւնը Երեսփոխանք, պարապ վեցաւ. աշխատեցաւ Բ. Դրան քով, աշխատեցաւ դեսպանաց քով: Այլ Դեսպանաժողովը փոխանակ ընդհանուր վիճակին բարւոքումը նկատողութեան առնելու, նկատողութեան առաւ միայն էէրսէք-Պօլսայի եւ Պուլկարաց խնդիրները: Ասի անիրաւութիւն մըն էք մնացեալ քրիստոնեայ ժողովրդոց, եւ Ներեցէք ըսէլ, Թերեւս իմ սահմանէս ըիչ մը գուրս ենելով, Օսմաննեան կայսրութեան ալ քայլայումը կը պատրաստէք՝ ապստամբութիւնը բացալերելով: Օսմաննեան կայսրութիւնը Դեսպանաժողովին այս որոշումը ընդունեց. եւ մեք հայք պատճառ չունէինք որ դգոհէինք:

Ներսէսը ղեռ խուսափում էր ոռւսաց քաղաքականութեան որ և է համակրութիւնն ցոյց տալուց, նա աւելի անզլիական ղեսալաւնի աղդեցութեան տակ էր գտնվում և գոհ էր օսմաննեան սահմանադրութեամբ: Եւ մինչզերս հայ մամուլի մի մեծ մասը Ներսէսի հետ հաւատում էր թէ սահմանադրութիւնը կապրէ թիւրքիայում և հայերի համար էլ երջանկութեան շրջան բաց կանէ, Գրիգոր Արծրունին «Մշակի» մէջ սինդում էր թէ այդ սահմանադրութիւնը մի խաղ է, թէ թիւրքիայում չէ կարող լինել սահմանադրական կարգ:

Զարմանափ տեսարան—գրում էր նա.—Թիւրքաց սահմանադրութիւնը հրատարակված է,—բայց ոչ Եւրօպան է հաւատում թիւրքիայի խոստումնե-

թին եւ պահանջում է նրանից ապահովութիւններ, զարանտիաններ, որ այդ խոստումները լոկ խօսք մնան, սահմանադրութիւնը կամ խոստացած արտօնութիւնները չը դառնան անպէտք կտոր Թուղթ, —ոչ էլ իրանք Թիւրքանպատակ ազգերը հաւատում են իրանց տէրութեան խոստումներին...

Եւ միթէ Անգլիան նշարիտ, անկեղծ կերպով հաւատում է Թիւրքիայի խոստումներին և չը զիտէ թէ այդ սահմանադրութիւնը, ինչպէս Թիւրքիայի բոլոր անցած խոստումները՝ խորամանկ, նենգաւոր աչքակապութիւններ են, աւելի ոչինչ:

Դէսքերը ցոյց էին տալիս որ Թիւրքական իրականութիւնը Եւրօպացից փոխ առած հիմնարկութիւններից չի փոխվի: Օսմանեան սահմանադրութիւնը հրատարակում էր, ի միջի այլոց, և մատուցի աղատութիւնն Բայց հէնց այդ միջոցին, երբ խմբադրվում էր այդ օրէնքը, երեք հայ խմբադրիներ բանտարկվեցին, ծեծի ենթարկվեցին և բանի կերպով Տրապիզոն քչվեցին այն պատճառով, որ համարձակվել էին տաղագրել հայտնակ զիւղերում տեղի ունեցած հարստահարութիւնները: Դարձեալ նոյն այդ գեսանաժողովի ժամանակն էր, նոյն այդ սահմանադրութեան խմբագրելու միջոցին էր, որ Վանում տեղի ունեցաւ սոսկալի հրդեհ: Գիշերը Թիւրքերը կրակեցին հայերի խանութները, թւով մօտ երկու հազար հատ, և կողովուցին նրանց

«Մասիսի» լեզուով դա նշանակում էր՝ «կան եղեր եղենազործութիւններ». բայց Խրիմեան Հայրիկի «Վանդոյժը» ցոյց էր տալիս, թէ ինչ էր այդ եղենազործութիւնը: Վանի հայ աղգարնակութիւնը մի զիշերում դարձաւ մուրացկան: Ներսէս պատրիարքին խոստացան քննութիւն նշանակել, պատժել յանցաւորներին և Ներսէսը դեռ հաւատում էր Օսմանեան սահմանադրութեան...

Սյապէս էր ահա վերջանում 1876 նշանաւոր թւականը, աւելի մեծ բարզութիւններ, կնճռու հարցեր թուղնելով իր յաջորդին: Գրիգոր Սրծրունին իր առաջնորդողներից մէկում առում էր թէ այժմ, տարվայ վերջին, ինչպէս կայ սլաւօնական հարց, յունական հարց, այնպէս էլ կայ հայոց հարց: Չորս-հինգ ամիս առաջ չը կար այդ հարցը, ոչ ոք հայերի մասին չէր էլ մտածում, բայց այսուհետեւ հայերն էլ կը կաղմեն արենելեան հարցի մի մասը: Սյանեղ Սրծրունին գնում է մի հետաքրքրական հարց և պատասխաննելով նրան, երեան է հանում մի, իրաւ որ, շատ բնորոշ զիծ հայի աղգային բնաւորութիւնից, նրա հոգեբանութիւնից: Հայերը ապատամբութեամբ չը հասցրին իւրանց ձայնը քրիստոնեայ ազգերի ականջն: Ապատամբութիւնը հայ աղգի բնաւորութեան հակառակ է: Բայց ուրիշ ինչ միջոց կար:

Հայոց ազգը մի ուրիշ զարմանայի յատկութիւն ունի եւ այդ յատկութիւնը նշմարելի էր նրա մէջ իր ամբողջ պատմութեան ընթացքում: Նա ուզում է խելքով, մտաւոր գէնքով, ապացոյցներով, դատողութիւններով յաղթել իր թշնամում: Նրան ճնշում են, նրան ծեծում են, վիրաւորում են, բանտարկում են, սպանում են,—իսկ նա վիխստփայութիւններ է անում, ապացուցանում է որ այդ անարդար է, վիճում է իր ճնշողի, իր հալածողի, իր թշնամու հետ... Հայերը այդ միշտ արել են:

Հինգերորդ զարում Զրադաշտի կրօնի պաշտողները հայերին ճնշում էին, Հայաստանը աւերում էին, ամբողջ քաղաքների, զաւառների, գիւղերի բնակիչներին վերութեան էին տանում, բնակութիւններին կրակ էին տալիս, կանանց եւ կոյսերին անպատճում, տանջում էին, մարդկանց կոտորում, սպանում էին կամ բանտարկում էին,—իսկ հայը իր Եղիշէի կամ Եղիշիկի բերանով զատողութիւններ էր անում, ապացուցանում էր իր բռնակալին նրա զաւանած կրօնի անհիմն լինելը եւ նրան իր կրօնը՝ քրիստոնէութիւնը քարոզում: Պարսից արքայի հրամանով բանտարկված հայ քաջ նախարարները իրանց բռնակալներին՝ քրիստոնէութիւն, արդարութիւն եւ մարդկային իրաւունք էին քարոզում:

Կար մէկ ուրիշ ազդ, հրէաները, որոնք իրանց թշնամիներին աղօթքներով եւ հրաշքներով էին ուզում յաղթել, քայց հայոց ազգի պէս մի ազգ, որ տուրք ձեռին կատաղի թշնամու առաջ անդէն կանգնած քարոզէր նրան վիխստփայութիւն, մարդասիրութիւն, լոկ խօսքով, լողիկական մտախոնութեամբ պահանջէր մարդկային իրաւունք, արդարութիւն,—

Հայոց ազգի պէս մի ազգ հազիւ թէ մի ուրիշ կը գտնվի աշխարհիս երեսին:

Ո՞րտեսից է մտել հայի մէջ այդ յատկութիւնը, որ մենք կանուանենք ապացուցայի ք թղաքական աշխատութիւն, —ըստ գիտենք:

Եւ այդ է պատմառը որ հայը միշտ ճնշված, միշտ հալածված է եղել, որովհետեւ զինաւորված մարդու առաջ անզէն կագնել եւ նրան դատողութիւն անել, նրան արդարութիւն բացատրել... գէնքի, սրի, հրացանի, թնդանօթի ոյժը, պատերազմը՝ լողիկայով, մտաւոր ոյժով յաղթել, —զեռ եւս վաղ է, զեռ եւս մարդկութիւնը մտաւոր զարգացման այդ կէտին չէ հասել:

Հայը կանգնում է բարբարոս, կատաղի, մոլենանդ մահմեղականի առջեւ, ապացուցանում է նրան իրաւունքը, աղերսներ է տալիս նրան, պահանջում է արգարութիւն եւ գուցէ վերջը սպանում է նրան, —բայց ինչպէս, ինչնվ... սպանում է որ եթէ չը ստանայ իր պահանջած ամենաանհրաժեշտ մարդկային իրաւունքը, այն ժամանակ ստիպված կը լինի դաղթել իր հայրենիքից, որ նուանված է Թիւրքերից, որ Թիւրքաց պետութեան մի մասն է կազմում... Կարծես թէ վայրենի Թիւրքը մտաւորապէս այնքան զարգացած է, որ կարող է հասկանալ այդ սպանալիքի բոլոր ոյժը, բոլոր նշանակութիւնը, կարծես կարող է հասկանալ որ ճշմարիտ իրան էլ վնաս է, եթէ աշխատաէր, ընդունակ հայոց ազդի պէս տարրը զաղթէ իր պետութենից...

Եւ այժմ, արեւելեան հարցի մէջն էլ հայը հաւատարիմ է մնացել իր պատմական յատկութեանը, իր քաղաքական բնաւորութեանը...

Նա ամբողջ Եւրօպան ուզում է համոզ ել, նա

Թիւրբիան ուզում է յաղթել իր սիրած, սովորական միջոցով, հասարակ լօգիկայով, մտաւոր ոյժով:

Ցանկանում ենք մեր ազգին որ եթէ նրան վիճակած է այդ ճանապարհով ընթանալ, կատարելապէս աջողվի նրան այդպիսով ստանալ իր մարդկային իրաւունքը, ձեռք բերել արդարութիւնը:

Ճիշտ որ ապագայի քաղաքականութիւն...
Մարդկութիւնը իր լաւագոյն յոյսերը, իդէալական տենչանքները միշտ ապագայի մէջ է տեսնում: Ապագայ—դա անորոշ հասկացողութիւն է. ով կարող է ասել թէ Երբ կը լինի այդ ապագան, որքան նա հեռու է ներկայից: Ներկան, այն ներկան, երբ գրվում էին այդ տողերը, պատրաստում էր մի արիւնահեղ, երկարատեղ պատերազմ՝ ուռաների և թիւրքերի մէջ: Դեռ ոչ մի հարց չէր վճռվել. լոգիկան, բանականութիւնը անկարող հանդիսացան. դիսլումատիան գրչով և թանաքով շատ աշխատեց, բայց չը կարողացաւ պատմութեան էջներից մի տող անգամ վուխել: Այժմ նա պիտի յետ քաշվէր, թոյլ տալով որ խօսեն թնդանօթները, ազգերի համար իրանց կրակով և արիւնով պատմութիւն կազմով թնդանօթները:

Սրեելքի հրդեհը աւելի և աւելի սաստականում էր: Գալիս էին ահաւոր դէպքեր, կեան-

քը Անդրկովկասում և նրա սահմանակից երկիրներում անօրինակ եռանգուն շարժման մէջ էր մանում: Մամուլի կասարելի դերը աւելի բարդանում էր. «Մշակը» չէր կարող այլ ևս շաբաթաթերթ մնալ...

ոգով հսկայ աղքեր, որոնք մեծագործութիւններ են կատարում։ Մեր խօսքը այն փոքր աղքութիւնների մասին է, որոնք ձակատադրի խորթ զաւակներ են եղել դարերի ընթացքում և բնութիւնից էլ խոչոր քայլեր անելու ընդունակութիւն չեն ստացել։ Մենք մի խեղճ, ցնցոտիներով պատաժ գաճաճ էինք, երբ պատմական ձակատագիրը վերջապէս խղճաց մեղ, մօտեցրեց Եւրօպայի քաղաքակրթութեան և հրամայեց աշակերտել, սովորել։ Մենք սկսեցինք քայլեր անել, բայց որքան խեղճ էին մեր, ասիական գաճաճներին քայլերը։

Մամուլը տասնիններորդ դարում ինչ հսկայական առաջադիմութիւններ արաւ, նա զարգանում էր օր օրի վրա, նա իր ոյժով եօթններորդ մեծ պետութիւն հրատարակվեց. Առագրական ձեռնարկութիւնները վիթխարի չափերի հասան: Կարելի էր այդ հսկայական կեանը մէջ նոյն իսկ նկատելու արժանի մի դէպք համարել այն չնչին հանգամանքը, որ մի լրագիր փոխանակ շարաթը մի անգամ հրատարակվելու, սկսում էր լոյս տեսնել շարաթը երկու անգամ: Եւ սակայն մեզանում, մեր խեղճ ու խաւար իրականութեան մէջ, դա մի տամբողջ երեսյթ էր, մի դարագլուխ երեսուն տարի էր, ինչ ոռւսա-

Զարարը երկու տնկամ հրատարակելու նշանակուրիւնը։
—նոր աշխատակիցներ։—Թիւրբանայ գրողներ «Մշակում»։—Ընդհանուր հարցեր. «Ամեն ինչ փողի համար», արուկներ ենի, հասարակական սիրոյ բացակայութիւն, հայ ընտանիք, կենդանի լեզու։—Արեւելեան հարցը։
—Վանի հրկիզեալեների համար։—Երկրորդ յարձակում ներսկու պատրիարքի դէմ։—Ռուս-թիւրբական պատերազմ։
—Ի՞նչ է պատերազմի խորհուրդը։—Ասիացու մերիկա-
սոնից։—Հայաստանի ապագան կախված Ռուսաստանից։
—Անդիսական խաղաղին բաղադրականուրիւն։—Պատերազմի երեւան և հանուն հայ ազգի հանճարը։—Արծունին եւ մեր ազգային պահանդրիւնները։—Դէմք է հայերին ծանօթացնել օստանների հետ։—Ալաշկերտի զաղրականուրիւն։—Բարեզործական ընկերուրեան միտք։
—Թիվիսի մասնաժողովը։—Դիպլոմ. Պոլուտմ։—
Ներսկու սուրբան Համբիդ մօս։—Թիւրբական պատուրիւններ. յրիստնեններից զիմնուրներ հաւաքելու հարցը։—Հայերի դիմադրուրիւնը։—Եվկեդիյին եւ ժողովուրդ։—Ռուսասիրական սասիիկ շարժում կ. Պօլսի դուռը։—Ներսկու մէջ։—Ներսկու առանունները, փոխվելը։—
Երեւունու մէջի յաղրանակը։

—ο—

Փոքրիկ աղքերի կեանքը մէջ փոքրիկ երեսյթներն էլ նշանաւոր են հանդիսանում։ Սակայն սա ընդհանուր օրէնք չէ բոլոր փոքրիկ աղքերի համար։ Կան թւով փոքր, բայց

հայերի մէջ գոյսութիւն ունէր պարբերական մամուլ բայց մենք գեռ շաբաթաթերթերից դէնը չէրնք անցել: Եւ համեմատութեան համար ինչու հեռուն զնալ: Թիֆլիսում հրատարակվող ոռւսերէն երկու լրագիրները 1877-ին ամենօրեայ էին դարձել. նոյն իսկ վրաց «Դրօէրան» էլ նոյն թւին սկսեց հրատարակել ամեն օր: Իսկ մենք: Գրիգոր Արծրունին 1877-ի առաջին համարում ասում էր որ շաբաթը երկու անգամ լրագիր հրատարակելը (ի հարկէ հայերի մէջ) «մեծ րիսկ է»: Եւ այս խօսքերը արտասանվում էին մի ժողովրդի մէջ, որ մօտ մի միհօն հոգուց էր բազկացած: Ահա գեռ ինչ էինք մենք...

Հարց տանք. գոնէ այժմ, լրագրի շաբաթական երկու անգամ հրատարակվելը նշան էր որ հայ ընթերցողների թիւը շատացել է:— Ո՞չ: Երկու տարուց ի վեր Արծրունին սպասում էր հաղար բաժանորդի: Բայց փորձը ցոյց տուեց թէ դա մի չափազանց մեծ, անիրազործելի պահանջ էր: Եւ Արծրունին չը սպասեց. դարձեալ իր սեփական աշխատանքի, իր սեփական ոռճիկի վրա դնելով յոյսը, նա սկսեց շաբաթը երկու անգամ հրատարակել, սափորված լինելով նորից 7 րուբի նշանակել «Մշակի» բաժանորդագիրնը: Լրագրի համարների կրկնապատկեն էլ չաւելացրեց բաժա-

նորդների թիւը. Արծրունին խոստովանում էր որ «Մշակը» առաջին տարին աւելի հետաքրքրութիւն գարթեցրեց. հայր, ասում էր նա, հետաքրքրվում է մի բանով, քանի որ նա նոր է, բայց յետոյ խոկոյն էլի սառչում է:

Այդ պայմանների մէջ փոքր բան չէր ձեռնարկել մի գործի, որ գեռ չէր եղել ոռւսահայերի մէջ: Եւ մենք համաձայն պիտի լինենք, որ իսկապէս մեծ բիսկ էր այդ տեսակ գործ սկսելը: Այժմ մեզ համար էլ գուցէ մի առանձին բան չը համարվի շաբաթական երկու համար հրատարակելը: Այժմ մենք, որքան էլ չը լինի, մի քանի քայլ առաջ ենք գնացել: Բայց աեսէր թէ ինչ առաջնորդողով էր Արծրունին սկսում 1877-ի «Մշակը».

Ամեն մարդ կրում է իր խաչը, բայց այն մարդկանց, որոնք բացի իրանց մասնաւոր խաչից կրում են եւ հասարակական խաչը, այդ ծանր թերու այն ժամանակ միայն թեթեւ կերեւայ, երբ նոքա կը տեսնեն համակրութիւն հասարակութեան կողմից, կը ստանան իրանց տոկուն աշխատանքի, իրանց գործունէութեան մէջ օղնութիւն այն հասարակական տարրերի կողմից, որոնց նուիրել են իրանց նիւթական, մտաւոր եւ բարոյական ոյժերի ծառայելը:

Այս, ծանր խաչ, որը պէտք էր կրել մենակ: Մի կողմ թողնենք նիւթական հարցը. աւելի ծանր, աւելի մաշեցնող էր խմբագրի

աշխատանքը։ Արծրունին ոչ միայն կռւում էր, օրէցօր թշնամիների թիւն էր ստուարացնում, այլ և համարեա մնանակ էր տանում խմբագրական ամբողջ գործը։ «Առանց նիւթական օդնութեան,—ասում է նա նոյն առաջնորդողում,—առանց բարոյական քաջալերութեան, բարեկամների մի վորքիկ խմբի համակրութեամբ միայն մենք առաջ տարանք մեր գործը հինդ տարի շարունակ, շրջապատված լինելով ամեն կողմից անհաշտ կատաղի թշնամիներով»։

Ծանր, յուսահատական էր մանաւանդ վերջին հանգամանքը։ Մենք տեսանք, որ մանաւանդ 1876-ին այդ կատաղի թշնամութիւնը աւելի ընդարձակ, կարելի է ասել՝ համատարած ընաւորութիւն ստացաւ արեւելեան հարցի պատճառով։ Եւ այնպիսի մի ժամանակ, երբ տպագրական խօսքը թէ թիվը լիսում և թէ Բօսֆորի ափերում առանց այլ նայլութեան, առանց քաշվելու անուանում էր Արծրունուն ազգի դաւաճան, վաճառված մարդ, օտարի գործիք, —արգեօք անտեղի խոզախութիւն չը ձեռնարկել մի այնպիսի գործի, որ ժողովրդի աւելի մեծ աջակցութեան և համակրութեան էր կարօտ։

Բարեկախտաբար, Արծրունին աւելի լաւ էր ձանաչում հայ ժողովուրդը, քան նրա

այն թշնամիները, որոնք խօսում էին այդ ժողովրդի անունից։ Ժողովուրդը քնած է, գեռ շատ թոյլ կերպով է արտայայտում իր վերաբերմունքը դէպի երկու կռւող կողմերը։ Բայց նա կը զարթնէ, նա դատաստան կանէ։ Զը կան մարդիկ, բայց կը լինեն։ Միշտ վառ էր այն հաւատը թէ ժողովրդի խաւերից պէտք է և կարելի է համակրող շրջաններ նուաճել և 1876 թւականի գործունքութիւնը, որ համակրութեան ցոյցեր էր հանել բուն ժողովրդի, ուսանող երիտասարդութեան միշտից, միանգամայն հաստատում էր այդ հաւատը։

Ահա ինձն էր առաջ տանում Արծրունուն իր ոգեսրութեան մէջ։ Այդ ոգեսրութիւնը մոռացնել տուեց նրան բոլոր զրկանքները, դժուարութիւնները, և ուսահայ մամուլի պատճութեան մէջ երեան նկաւ նոր, թարմ երեսյթը—շարաթը երկու անգամ հրատարակվող լրագիրը։ Այն կոչման մէջ, որ Արծրունին ստացել էր բնութիւնից, դա երկրորդ նշանաւոր գործն էր։ Նա էր, որ վերականգնեց հայ մամուլի ընկած պատիւը, հեղինակութիւն տուեց տպագրական խօսքին, ոյժ դարձեց նրան, նա էր, որ գուրս ըերեց հայ լրարադիրը մուրացկանի, արհամարհված աղդասիրական գործի խայտառակ գրութիւնից։

Նա ստիպեց հային լրագիր կարդալ ոչ թէ ազգասփրաբար, այլ իրքն անհրաժեշտութիւն, լուսաւորութեան և քաղաքակրթութեան մի ազդեցիկ դործօն։ Այժմ պէտք էր առաջ դը նալ, պէտք էր աւելի ևս զարգացնել մամուլի ոյժը։ Շաբաթը մի անդամ տեսնվել ընթերցովի հետ մի թերթի սիւնակներից—դա շատ քիչ էր, ժողովուրդը երեխայ է, ժողովուրդը շուտ է մոռանում, հեշտ է մոռանում, պէտք է, ուրեմն, աւելի յաճախ տեսնվել նրա հետ, աւելի շատ բան ասել նրան։

Եթէ ի նկատի ունենամք, որ մեր գլուխականութիւնը մեծ մասամբ ամփոփված է եղել, ինչպէս և է այժմ էլ, պարբերական մամուլի մէջ, «Մշակի» շաբաթական երկու անդամ հրատարակվելը պէտք է համարենք մեր գրականութեան զարգացման մի մեծ նշան։ Որքան շատ տեղ ունի լրագիրը, այնքան նա նիւթ է տալիս։ Եւ իրաւ, 1877-ի «Մըշակը» արդէն շատ բանով է տարբերվում անցեալ տարիներից։ Հրապարակախօսութիւնը աւելի ևս զարգանում է, բազմակողմանի է զառնում, հասարակական կեանքը աւելի ևս լիակատար կերպով է արտայացավում լրագրի մէջ։ Ինքը, Արծրունին, կրկնապատրագրի մէջ։ Ինքը, Արծրունին, կրկնապատրագրի մէջ։ Էր աշխատանքը։ Մի կողմ թողնելով լրագրի միւս բաժինները, նկատի առնենք

որ առաջնորդողները այժմ էլ նրա ձեռքում են և այժմ արդէն շաբաթը երկու անդամ պէտք է երեան գալ այդ կարեոր, ուժեղ, ազդեցիկ բաժնում։ Կենդանանում է և զուտ զրական բաժինը։ Այժմ արդէն հնարաւոր է համեմատաբար մեծ վիհական, շարունակելի զրուածքներ տալ, ինչպէս նաև ժամանակակից ուրիշ կարեոր նիւթերի վերաբերմանը աւելի ընդարձակ ուսումնասիրութիւններ։

Այսպէս խօսելով «Մշակի» մասին, մենք չենք մոռանում որ նոյն այդ ժամանակի թիգրիսում հրատարակվում էր «Փորձ» հանդէսը։ Իրանց զրական անցեալով փոքր ի շատէ յայտնի ոյժերը համարեա բացառապէս այնտեղ էին աշխատում։ Բայց ինչ էին տալիս նրանք։ Երեք ամիսը մի անդամ լոյս էր աեսնում մի մեծ զիրք։ Ընթերցանութեան զանազան նիւթեր, մեծ մասամբ թարգմանական, տալիս էր այդ հաստափոր հանդէսը, տալիս էր և նիւթեր պատմութեան համար, արձանագրում էր ժամանակակից դէսպերը։ Բայց ազդեցութիւն գործել, զեկավարել նա չէր կարողանում։ Ընդհանուր առմամբ դա մի անդոյն ժողովածու էր։ Արծրունու պէս մի մարդու համար այդ տեսակ գործունէութիւնը մահ, ոչնչութիւն էր նշանակում։ Եւ յայտնի անունների համախմբումը այդ եռ-

ամսեայ հանդէսի մէջ չը կարողացաւ խլել Արծրունուց առաջնութիւնը զբական-հրապարակախօսական ասպարէզում, մենակ նա կարողանում էր միշտ լարված պահել հասարակութեան ուշագրութիւնը դէսի «Մշակը»։ «Փորձն» էլ հասարակութեան ոլահանջներին չը համապատասխանող մի զբական ձեռնարկութիւն էր. նա էլ իր խմբազրի անձնական միջոցներով էր ասլրում։ Բայց չը նայած, որ շրջապատել էր իրան յայտնի անուններով, տալիս էր մեր ամսագիրների մէջ մինչև այն դեռ չը տեսնված հասարութեամբ զգեստ, այսուամենայնիւ, չը կարողացաւ պահանջ ստեղծել, գոյութեան իրաւունք նուածել և անյայտացաւ իրեն մի արհեստական դործ։

Արծրունին, ինչպէս գիտենք, յայտնի անունների ետեից չէր ընկնում, շրջապատում էր իրան «Ճկնորսներով», այն գաղափարական անյայտ, համեստ, բայց ոգեսրվող երիտասարդութեամբ, որի նկարագրութիւնը տուել է Բաֆֆին։ 1877 թւին «Մշակը» այդ եռանգուն աշխատակիցն էլ թիվլիսում չէր գտնվում. նա ուսուցչութիւն էր անում Արդուիսում և հին, յայտնի անուն ունեցողներից միայն Գարբիէլ Սունդուկեանցն էր, որ հանդէս եկաւ «Մշակի» մէջ իր «Վարփնկի Վեչէրը» մեծ պատմուածքով։ Բայց Արծրու-

նին շարունակում էր «Ճկնորսներ» գտնել, զբանցից մէկի հետ մենք չուտով կը ծանօթանանք—Գրիգոր Պապեան, դաւառացի մի երիտասարդ, որ նոր էր աւարտել Ներսիսեան դպրոցը և վիպաղրովի չնորհք էր ցոյց տալիս։

Աւելացներով «Մշակի» համարների թիւը, Արծրունին խմբագրութեան մէջ աշխատողների մի փոքրիկ խումբ կազմեց։ Դրանք բոլորը նոր կեանքի մէջ մանող երիտասարդներ էին, որոնք կրթութիւն էին ստացել Ներսիսեան դպրոցում։ Այդ աշխատաւորներից մենք կը յիշատակենք մէկին. դա Յովհաննէս Տէր-Մարկոսեանն է, որ 1877 թւից մինչև այսօր անփոփոխ անձնատուր եղած է «Մշակին»։ Լրազրական գործի մէջ ամենքը չեն յայտնի գառնում հասարակութեան իրանց անուններով։ Այդտեղ կայ և վարագոյրի ետակում համեստ, անանուն աշխատովը, որ սակայն պակաս երախտաւոր չէ իր տոկուն, անընդհատ, զրկանքներով ու գժուարութիւններով լի զործունէութեամբ։ Յովհաննէս Տէր-Մարկոսեանը «Մշակի» այդպիսի երախտաւոր աշխատողներից առաջինն է։ Արծրունին ակղքից և եթ մի առանձին սիրով կապվեց այդ երիտասարդի հետ և մինչեւ մահը նա էր նրա ամենամօտիկ բարեկամը, որի հետ երկար տարիների ընթացքում բաժանել

էր թէ տաժանակիր աշխատանքը, թէ ուրաշխութիւն և թէ վիշտ։ Մեծանալով «Մշակի» խմբագրութեան մէջ, սնվելով Արծրունու դաղափարներով և շարունակ վայելելով նրա մտերիմ բարեկամութիւնը, Տէր-Մարկոսեա-



Յ. Տէր-Մարկոսեան

նը այսօր էլ «Մշակի» տրագիցիաների հաւատարիմ աւանդապահն է, նրա դաղափարների անխոնջ պաշտպանը։ «Մշակը» ունեցել է շատ դժուար ժամանակներ, երբ նա չէր կարողանում նիւթապէս ապահովել իր աշխատակիցներին։ Տէր-Մարկոսեանը միշտ

ծառայել է նրան անշահասիրութեամբ, երբէք հարց չը դարձնելով նիւթականը։ Հայոց խմբագրութիւններից ոչ մէկը չէ տեսել նրա պէս մի մարդ, որ ամբողջ քառորդ դար ծառայէր լրադրին անձնամուաց հաւատարմութեամբ։

Սյովիսի մարդիկ էին Արծրունու նեցուկները։ Վարձատրութիւնը չէր, որ կապում էր ընդունակ աշխատողներին լրադրի հետ. կար աւելի մեծ, աւելի հաստատուն կապը—դաղափարը։ Այս կողմից Արծրունին ամենաերջանիկն էր հայ խմբագիրների մէջ։ Գաղափարով կապված լինելով իր աշխատակիցների հետ, նա այնքան անկախ էր պահում իրան, այնքան խստապահանջ էր, որ երբէք չէր խոնարհվում անվարձ աշխատողների առաջ, չէր ենթարկվում նրանց տրամադրութեան. ընդհակառակն, հէնց որ տեսնում էր թէ աշխատակիցներից մէկն ու մէկը դաւաճանում է լրադրի ուղղութեան, ուղում է իր կամքը թելադրել, իսկոյն փակում էր նրա առջեւ իր խմբագրութեան դուռը։ Հեռացածների փոխարէն զայխ էին նորերը և Արծրունին դիմումներ չէր անում, սրան ու նրան չէր խնդրում որ իրան աշխատակցեն։ Բարոյական վարձատրութիւնը, գաղափարականութիւնը այսքան ահազին ոյժ էր նրա

ձեռքում. և առանց այդ ոյժի նա չէր էլ կարող տանել լրագիրը այն միջոցներով, որ տալիս էր հայ հասարակութիւնը:

Սրեելեան հարցը մի մեծ դրդիչ է դառնում, որ «Մշակը» մօտենայ թիւրքահայերին: 1876 թւականին առատ թղթակցութիւններ են տալիւմ կ. Պօլսից: 'Դժբախտաբար, մենք հաստատապէս չը դիտենք թէ նվեր էին այն մարդիկ, որոնք այդ ժամանակ այնքան հետաքրքրական, հիւթալից թղթակցութիւններ էին ուղարկում թիւրքաց մայրաքաղաքից: Նոյն թւականին յաճախ են երեսում և թղթակցութիւններ Վանից, որոնց մէջ նկարագրվում էր գաւառի իրականութիւնը: Վանի թղթակիցը Մկրտիչ Փորթուղալեանն էր, թիւրքահայ աչքի ընկնող գործիչներից մէկը, որ մի ժամանակ լրացիր էր հրատարակում կ. Պօլսում: 1877-ին նա եկաւ Թիֆլիս և այսուղ մօտ մի տարի աշխատում էր «Մըշակի» խմբագրութեան մէջ, նիւթեր տալով դիմաւորապէս արտաքին տեսութեան բաժնի համար:

Սկսելով շարաթական երկու համարի հրատարակութիւնը, Արծրունին մեծ աշխոյժով, կրկնապատկած եռանդով առաջ է տանում այդ նոր գործը: Որքան շատ էր նա գրում, այնքան սաստկանում էր նրա գրչի թափը:

Յարձակումները աւելի աներկիւդ են դառնում, մերկացումները աւելի անխնայ: Ուշագրութեան ամենազլիսաւոր առարկան, ի հարկէ, արեելեան հարցն է, թիւրքահայերի գրութիւնը: Բայց Արծրունին յաճախ թողնում է այդ դիմաւոր առարկան, դիմում է մեր ներքին հարցերին: Այսպէս, նա արծարծում է քահանաներին մշտական, որոշ ոռճեկով ապահովելու հարցը, ցոյց է տալիս մեր ընտանեկան և զպրոցական կրթութեան պակասութիւնները: Ծանօթանանք մի քանի այսպիսի յօդուածների հետ, որոնց մէջ դատավիետվում են մեր հասարակական բարքերը, ազգային յատկութիւնները:

«Ամեն բան փողի համար» առաջնորդողում Արծրունին խօսում է հայի ծայրայեղ նիւթապաշտութեան մասին: Գուցէ, ասում է նա, աշխարհիս վրա չը կայ ուրիշ մի այնպիսի ազգ, որ հայի պէս գուրկ լինէր իրէաններից, նրա չափ իրված լինէր կոպիտ նիւթապաշտութեան մէջ:

Հայի համար չը կան վերացական գաղափարներ, բարոյական ի դէ ալ ներ... Հայը ամեն բանի վրա նայում է փող վատակ ելու հայեացրից...

Ուսում, հասարակական գործունէութիւն, պարապմունք, պաշտօն, կոչում, մասնավիտութիւն, սէր, ընտանիք, —ամեն բան հայի աչքում համեմատական արժէք ունի, նայելով թէ որքան այս կամ այն գործ,

այս կամ այն գաղափար, այս կամ այն երեւոյթ նիւթապէս շահաւէտ է...»

Հայը ամեն բանից սպասում է անմիջական արդինք, նիւթական օգուտ, շահ, տոկոս...

Ի հարկէ բազառութիւններ ամեն տեղ կան, ուրեմն կան եւ մեր ազգի մէջ—բայց մեր ազգի ընդհանուր բնաւորութիւնը՝ շահասիրական նիւթապաշտովն է, որ առաջնորդում է հային ամեն տեսակ հանգամանքներում...

...Եւ ահա այդ նեղ, սահմանափակ, անհասարակական բնաւորութիւնը հայը հպարտութեամբ անուանում է գործն ակ ան ոգի:

...Հայը ուսում է առնում հաշւով, կեանքի մէջ իր գործ զնելու մասնագիտութիւնը ընտրում է հաշւով, պասկիում է հաշւով, մեռնելիս մինչեւ անզամ կուակ է անում հաշւով, հաւատացած լինելով որ բարեգրծական մի բանի կօպէկ կտակելով, նա բայց է անում իր համար զրախտի դռները,—նա մեռնելիս միայն ընդունակ է զոհաբերութիւն անել, հասարակական մի բարի գործ կատարել, այն էլ անում է շահասիրական նպատակով, իր հոգու համար:

Ինչու հայը այնքան անստարբեր է գէպի իր սեփական լեզուն: Որովհետեւ այդ լեզուից նա նիւթական շահ չունի:

Եւ նա արհամարհում է իր ազգային, իր մայրենի լեզուն միմիայն այն պատճառով, որ նրանով նաց չէ կարելի ճարել... Հայը չունի բարոյական բարձր գաղափարներ, նա ամեն բանի վրա նայում է առեւտրական կէտից, նա իր մայրենի լեզուի վրա

էլ նայում է ինչպէս մի ապրանքի վրա... ապրանքը լաւ չէ ծախալում, նին է,—ուրեմն նրան հարկաւոր չէ առնել...

Հայը նայում է իր մայրենի լեզուի վրա, ինչպէս մի կոտրած ամանի վրա, ինչպէս մի մաշված շորի վրա...

Այն, ամեն բան փողի համար...

Բայց եթէ մի օր հայը տեսնէր թէ իր արհամարհած մայրենի լեզուն սկսում է զին ստանալ, գործադրվել հասարակութեան մէջ, եթէ նա տեսնէր թէ աղջկան բաժինք, փող տալու տեղ, կարելի է, օրինակ, նրան սովորեցնել իր մայրենի լեզուն, թէ մայրենի լեզուով ընտանիքում խօսող եւ մայրենի լեզուով երեխաներին դաստիարակող հայունի գրալիչ զօրութիւն ունի հայ երիտասարդի համար,—այն ժամանակ բոյոր հայ ծնողները կը սկսէին իրանց աղջկերանց հայերէն սովորեցնել, որովհետեւ այն ժամանակ հայերէն լեզուն էլ մի շահաւէտ գործ կը դառնար, հաց կը տար, այսինքն միջօց կը տար նրանց իրանց աղջկերանցից ազատվելու, առանց աղջկան մի որ եւ է բաժինք տալու՝ միջօց կը տար ծնողներին իրանց ապրանքը տեղաւորելու, կամ ինչպէս թիժլիսեցիք ասում են՝ նրան սաղան ն ելու...

Մի ուրիշ յօդուածում, որի վերնագիրն է՝ «Մենք ստրուկներ ենք», Արծրունին պատկերացնում է հայի եսամոլութիւնը: Ստրկութեան մէջ գարերով ապրած մի ազգ կորցնում է իր մարդկային ամենաազնիւ, ամենանուրը յատկութիւնները, դառնում է աւելի

կոչատ, կոսպիտ, նիւթապաշտուածայը Հայը իր ստրկութեան դարերում կորցրել է մարդկային ազգի առենաթանգ, ամենանուիրական զգացմունքը—ո է բ ը:

Սիրել՝ նշանակում է ապրել. սիրել՝ նշանակում է զործել մարդկութեան համար. սիրել՝ նշանակում է զոհվել իրան նմանների համար:

Սէրը հասարակ կան գործի չ, նախող է ամեն նշանաւոր, կարգից զուրս երեւելի գործերի մարդկութեան մէջ:

Եթէ սէրը չը լինէր,—չէին լինի մարդկային կրօնական եւ բարոյական վարդապետութիւնները, մարդկութիւնը չը ծնի փիլիսոփայութիւնը, չը ունենայ քրիստոնէութիւնը... Սէրն է որ եղել է աւետարակ է ապարագելողը, նա առաջինն է եղել որ քարոզել է մարդկութեանը՝ աղատութեան, հաւասարութեան, եղայրասիրութեան հասարակ առաջին գաղափարները:

Սէրն է որ ստեղծել է հասարակ առաջինը: Սիրոյ զգացմունքի դրդմամբ ծնունդ է տեսել մարդկութեան մէջ գիտութիւնը...

Ո՞ր կողմ եւ նայէք, ո՞ր մարդկային հիմնական զաղափար, ո՞ր հասարակական կազմակերպութիւն եւ նետազօտէք,—ամեն տեղ կը նշմարէք սէր, որպէս զօրեղ ստեղծագործական ոյժ՝ կրօն, ընտանիք, գիտութիւն, փիլիսոփայութիւն, դրականութիւն, բանատեղծութիւն, արհեստ, շքեղարվեստ, երաժշտութիւն, մանկավարժութիւն, հասարակական կազմակերպութիւններ՝ ինչպէս ընկերակցութիւններ, աշխատանոցներ, վանքեր, ուսումնարաններ, մշակ

դասի փոխադարձ օգնութեան ընկերութիւններ,—բոլորի սկզբնական դրդող ոյժը, սկզբնապատճառը՝ մարդու զէպի մարդկութիւնը ունեցած սիրոյ զգացմունքն է...

...Որքան մարդկութիւնը աւելի ազատ է զարդանում,—այնքան սիրոյ զգացմունքը դառնում է զօրեղ եւ դիտակ գա և կան...

Միայն ստրուկ հասարակութեան մէջ իզուր կորոնէք սիրոյ զգացմունքի նետքերը:

Ինչպէս տեսնում էք, այստեղ ընդգծվում է հասարակական սէրը: Մի սէր, որ եսական, անձնամոլ չէ, այլ հասարակաց բարեցինութեան, մարդկային ընդհանուր, համայնական գործին է ծառայում: Մեր ստրկութիւնը նրանով է յայտնվում, որ մեզանում չը կայ այդպիսի սէր, սէր՝ իրք հասարակական կեանքի հգօր զրգիչ: Մասնաւորելով իր խօսքը, Արծրունին մատնացոյց է անում անասնական սէրը աղամարդի և կնոջ մէջ կամ թէ այն, որ հայը կեզեքում է միւս հային՝ իր անձնական շահերի համար: Բայց այդ երևոյթները միայն հայկական չեն, ամեն ազգի, նոյն իսկ ոչ-ստրուկ ազգի մէջ կան այդ երեսյթները: Սիրոյ բացակայութիւնը մեղանում եւրան է զալլա հասարակական ուրիշ շատ երեսյթների մէջ: Եւ դրանցից մէկը, գուցէ ամենապերճախօսը, բերում է Արծրունին իր յօդուածի վերջում:

Հային օտար է հասարակական սէրը։ Գուցէ ոչ մի ազգ աշխարհին իրեսին այնքան հակումն չունի դէպի զաղթականութիւնը, դէպի միմեանցից ցրվելը, միմեանցից փախչելը, ինչքան հայերը։ Հայը լաւ է համարում բաղդաւոր ապրել օտարութեան մէջ, քան թէ իր ազգի շրջանում բաժանել իր արիւնակիցների հետ նրանց բոլոր ցաւերը եւ ուրախութիւնները։ Այդ է եղել միշտ հայի թուլութիւնը, եւ Հայաստանի, որպէս քաղաքական մարմնի, անկման պատճառը։ Հայը վերջապէս չունի սէր դէպի հայրենիքին նա առաջին անախորժ դիպուածում փախչում է իր հայրենիքից եւ յետոյ միայն հետուից սկսում է կեղծաւոր կերպով անհամ սիրահարական երգեր երգել իր հայրենիքին...»

Հասարակական արատները քննելիս, պակասութիւնների արմատները մերկացնելիս, Սրծրունին նորից և նորից զիմում է ընտանիքին։ Մենք արդէն տեսանք թէ նրքան խիստ բողոքներ էր յայտնում Սրծրունին հայ ընտանեկան կազմակերպութեան դէմ, նրքան հարուածում էր այդ կազմակերպութեան հիմքը, որ բնակալութիւնն է։ Մինոյն բողոքները, բայց աւելի խիստ լեզուալ, նա գնում է մի շարք յօլուածների մէջ, որոնք խօսում են մեր ընտանիքի մասին։ Ինչու էր Սրծրունին այդքան մեծ կարևորութիւն տալիս ընտանիքին, ինչու շարունակ նրա մասին էր խօսում։ Ահա ինչու.

Այն ազգերը չունին ոչինչ ապագայ, որոնց ընտանեկան կեանքի կազմակերպութիւնը խիստ բարոյականութեան սկզբունքի վրա հիմնված չէ։ Այն ազգերը բաղաքակրթութեան ընդունակ չեն, որոնց ընտանեկան կեանքը կամ չափից զուրս լուծված եւ գելի է, կամ չափից զուրս փակ եւ բռնաւոր է։ Երկու ծայրայնորութիւնն էլ չն տանում մարդուն դէպի խելացի, ազատ, համեստ, անհատական բարոյական եւ մտաւոր զարգացումը։ Թէ ընտանեկան լուծված կեանքը, թէ բռնաւորութիւնը, — երկուսն էլ անքարոյանութիւնն են։

Հայ ընտանիքը երկրորդ ծայրայնորութիւնն է ներկայացնում—ըռնաւորութիւնը։ Կարիք չը կայ որ մենք նորից հետեւնք Արծրունու քննադատութեանը, որից գուրս էր բերվում թէ ինչ տեսակ կրթութիւն, ինչ սպանիչ աղդեցութիւն է տալիս այդ տեսակ ընտանիքը, մանաւանդ հարուած դասակարգի մէջ։ Նկատենք այստեղ միայն այն, որ Սրծրունին մեր դիւզական ընտանիքն էլ համարում էր կոչառութեան և վայրենութեան վրա հիմնված մի քան և զարմանում էր թէ ինչպէս շատերը իդէալացնում են այդ ընտանիքը, անուանելով նրան նահապետական։

1877 թւականին էլ, ինչպէս և միշտ, Սրծրունին յօլուածներ նուիրեց կանանց հարցին, լեզուի նշանակութեան, գլորոցական առաջադէմ, ազատ, ժամանակակից կրթու-

թութեան։ Մեր գործածական լեզուի վերաբերմամբ այն միտքն էր յայտնում, որ նա չը պիտի կազմիի միայն դրաբարից, ոչ էլ միայն գաւառական կենդանի բարբառներից, այլ այդ երկուսիցն էլ օգուտ պէտք է քաղէ որ կարողանայ կազմակերպվելու Բայց այդքանը բաւական չէ։ Մենք, բացի դրանից, պիտի օգուտ քաղենք արգէն մշակված ձեր ունեցող օտար, քաղաքակրթված լեզուներից։

Շատ անգամ—ասում է Արծրունին, կողմնակի կերպով պատասխանելով այն մեղադրանքներին, որոնք ուղղված էին իր դէմ—մինք լսում ենք այս տեսակ դատողրեթիւններ՝ այժմիան երիտասարդութիւնը գործ է ածում ուսւական կամ առնասարակ եւրօպական ձեւեր հայերէն դրելու ժամանակաց...

Բայց այդ ասողները չեն մտածում որ մեր այդ գործածած նոր ձեւերը ոչ ուսւական են, ոչ էլ ֆրանսիական կամ գերմանական, ոչ էլ եւրօպական, — այլ ընդհանուր մարդկային լօգիկական ձեւեր, որոնց ակամայ ենթարկվեցան իրանց հասարակական դարբացման մէջ եւ ուսւաց եւ ուրիշ եւրօպական լեզուները։

Գրողը պէտք է մի որ և է եւրօպական նոր լեզու էլ իմանայ, որպէսպի կարողանայ դարբացնել նոր լեզուն կանոնաւորութիւն, կենդանութիւն տալով նրան Անպատճառ եւրօպական, քաղաքակրթված լեզուներին պէտք

է հետեւից թէ չէ կը ստացվի այն, ինչ եւրեւում է Կ. Պոլսում։

Թիւքքիայի հայ գրողները, զիտնականները եւ խմբագիրները մեծ մասամբ չը զիտեն ոչ մի եւրօպական լեզու, զիտեն միմիայն մօնգոլական թուրքերէնը, որի ձեւերին ընտելանալով, մտցնում են հնգիւա-եւրօպական ծագութիւն պատկանող հայոց լեզուի մէջ մօնզօլական թուրքերէնի ձեւերը...

Խսկ եթէ զիտեն էլ մի որ եւ է եւրօպական լեզու, օրինակ ֆրանսներէնը, այն էլ թերի կերպով,— նրանք շատ ուշ են սկսում ուսումնասիրել, արդէն ընտելացած լինելով մօնզօլական լեզուի ֆիլօլոգիական ձեւերին, պարբեռութիւնների դասաւորութիւններին եւ մտածելու նղանակին։

Այդ է պատճառը որ Թիւքքաց հայերի նոր, կինդանի, գրականական լիգուն ոչինչ ապագայ չունի, այդ է պատճառը որ նա ոչինչ առաջադիմութիւն չէ անում, անշարժ է մնում, եւ վերջին ժամանակները նրանց գրողներից շատերը, ներքին ազգմամբ հասկանալով, անփիտակցարար համոզվելով թէ յոյս չը կայ այդ տեսակ անշունչ լեզուի զարգացումից՝ սկսեցին քարոզել թողնել կենդանի լեզուն, աշխարհաբարը եւ վերադառնալ գրաբառին...

Ա. զ գ ու թ ե ա ն եւ ի ր լ ե զ ո ւ ի մէջ մեծ եւ սերտ կապ կայ...

Ազգութիւնը որ զեռ եւս համոզված չէ արդեօք նա կենդանի է թէ մեռնելու վրա է, — այդ տեսակ ազգութիւն անկարող լինելով յարուցանել մի կենդանի լեզու, սկսում է քարոզել վերադառնալ մեռած լեզուի գործածութեանը։

Անցնենք այժմ օրվայ հրատապ հարցին: «Մշակը» այնքան չատ է խօսել արենելեան հարցի մասին, այնքան հարուստ նիւթեր է արձանագրել իր էջերի մէջ այդ հարցի ընթացիկ պատմութիւններից, որ մեզ անհնարին է կանդ առնել իւրաքանչիւր փոքր ի շատէ աչքի ընկնող յօդուածի վրա: Արդէն լաւ ծանօթացած լինելով այն հայեացքների հետ, որ ունէր Արծրունին թիւրքանպատակ քրիստոնեաների զրութեան վերաբերմամբ, մեզ կը մնայ համառօտ կերպով յիշատակել այն բոլոր գէպերը, որոնց արձագանք է տուել «Մշակը», միշտ աչքի առջև ունենալով որ Արծրունին լարված ուշազրութեամբ հետեւում էր տեղի ունեցող անցքերին, համարձակ յայտնում էր իր կարծիքը, քարոզում էր, զրդում էր, պահանջում էր, զարծունէութեան ծրագիրներ էր առաջարկում:

Տարվայ սկզբին «Մշակը» սկսում է նույրատութիւններ հաւաքել Վանի հրկիզեալների օգաին: Քաղաքական աշխարհը զեռքանակցութիւնների մէջ էր թիւրքիայի վերաբերմամբ. բայց բանակցութիւնները որոշ հետեւանքի չէին հասցնում: Ռուսաստանի բըռնած սպառնական դիրքը տպաւորութիւն չէր գործում թիւրքերի վրա, զիջողութեան միաք չէր ներշնչում նրանց: Կ. Պօլսի դեսպանա-

ժողովը իր վերջին ձեւակերպած պահանջները յանձնեց թիւրք կառավարութեան, իսկ սա այդ դժուար բօպէին մի մեծ ժողով կազմեց մայրաքաղաքի ազգաբնակութեան ներկայացուցիչներից և հարց տուեց նրանց թէ ինչ պէտք է անել՝ ընդունել Եւրօպայի պահանջները թէ ոչ: Ժողովը պատասխանեց թէ չը պէտք է ընդունել. քրիստոնեայ ազգութիւնների ներկայացուցիչներն էլ, որոնց մէջ էր և հայոց պատրիարքի փոխանորդը, այդպէս պատասխան տուողների հետ էին. միայն բողոքական հայերի ազգապետն էր, որ հակառակ կարծիք յայտնեց: Բ. Դուռը, հիմնվելով ժողովրդի այդ վճռի վրա, մերժեց դեսպանաժողովի մշակած պահանջները և որպէսզի ցոյց տայ քաղաքակիրթված աշխարհին թէ այդ մերժումը լոկ քմահաճոյքի բան չէ, սկսեց գործադրել սահմանադրութիւնը, պատգամաւորներ ընտրել տալ, ազգային ժողովը (պարլամենտը) և սենատը բաց անել: Այդ գործութիւնները պիտի ցոյց տային թէ ընդհանուր բարեկարգութիւններ են մացնվում թիւրքիայի մէջ:

Այդ միջոցին Արծրունին երկրորդ խիստ արձակումը գործեց ներսէս պատրիարքի դէմ: Դրա շարժառիթը հետեւալն էր: Կ. Պօլսի «Նոր Դար» լրագիրը 1876 թ. գեկ-

տեմբերի 29-ի համարի մէջ հաղորդում էր-
«Երէկ կյան ժողովը որոշեց Բ. Դրան ու-
ղերձ մը գրել, նոր սահմանադրութեան վրայ
իւր գոհաւութիւնն ու չնորհակալութիւնը յայտ-
նելով, որով Հայազգի Օ սման ցիութիւ-
նը, պաշտօնական լեզուին ամեն տեղ ընդ-
հանրապէս տաձկան լեզուն ըլլալը,
Պատրիարքարանի լոկ կըօնական խնդրոց
վրայ իրաւասութիւնը, աղգային և քաղաքա-
կան ցաւոց ընդհանուր երկրէն ընտրեալ
երեսիսանաց միջոցաւ յայտնուիլը և աղ-
գային դարրոցաց մէջ կրօնական դաւանու-
թեանց վերաբերեալ ուսմանց վրայ միայն
Պատրիարքարանի իրաւասութիւն ունենալը
կընդունուի: Այս ուղերձը այսօր պիտի մա-
տուցուի Բ. Դրան հանդիսապէս յանուն
Պատրիարքարանի, առանց սպասելու Աղգային
ժողովի քուէէն անցնելու:

Այս հաղորդագրութեան միտքը հասկա-
նալու համար պէտք է նկատի առնել որ օս-
մանեան սահմանադրութեան հիմնական մի-
կանօնն այն էր, որ Թիւրքիայի իւրաքանչյուր
հպատակ կոչվում է օսմանցի և պաշտօնա-
կան լեզուն ամեն տեղ թիւրքերէնն է: Այս-
պիսով ջնջվում էին առանձին - առանձին
աղդութիւնների անունները. Օ սման ցի ա-
նունը պիտի մի տեղ ձուլէր այն անթիւ-

աղդութիւնները, որոնք ապրում են սուլ-
թանի երկրում: Ներսէս պատրիարքը ոչ մի-
այն հաշտվում էր այդ մաքի հետ, այլ և
այնուհետև աւելորդ էր համարում հայերին
չնորհված սահմանադրական առանձին ինք-
նավարութիւնը, քանի որ երկրի բոլոր հար-
ցերը պիտի քննէ թիւրքական պարլամեն-
տը, ուր, ի հարկէ, պիտի լինէին և հայ պատ-
գամաւորները: Թիւրքիայի հայոց պատրիարքը
մնում էր լոկ կրօնական իշխանութիւն, որ
միայն եկեղեցու գործերի վրա ունէր իրա-
ւասութիւն: Ներսէսը այսպիսով, առանց նոյն
իսկ ստանալու աղգային ժողովի համաձայ-
նութիւնը, ինքնայօֆար կերպով հրաժարվում
էր այն դարաւոր արտօնութիւններից, որ
ունէին Կ. Պօլսի հայոց պատրիարքները...

Հիմնվելով այս փաստի վրա, Արծրունին
զրեց՝ «Ել չը կայ հայոց սահմանադրութիւն»
յառաջնորդող յօդուածը, որի մէջ անուանեց
Ներսէսին «գաւաճան»: Ինչպէս զիտենք, Արծ-
րունին մեծ նշանակութիւն չէր տալիս թիւր-
քահայոց սահմանադրութեան այն պատճա-
ռով, որ նա չէր կարողանում պաշտպանել
դաւառացի հայերին հարստահարութիւննե-
րից: Բայց սահմանադրութիւնը, այնուամե-
նայնիւ, մարմնացնում էր այն արտօնութիւն-
ներն ու իրաւունքները, որ ստացել էին

թիւրքիայի հայերը իրանց կառավարութիւնսից Եւ ահա այդ արտօնութիւնները, իրաւունքները թիւրքահայերը գիորցրին չնորհով իրանց հոգեոր հովեի դաւաճանութեան», առում էր Արծրունին:

Ներսէս պատրիարքի այդ քայլը անհեռատեսութեան, մահաւանդ թիւրքամոլութեան մի մեծ նշան էր: Ոչ ոք չէր հաւատում թէ օսմաննեան սահմանադրութիւնը մի լուրջ պետական ձեռնարկութիւնն է, որ կարող է երկար ապրել: Եւ Ներսէսը շտապում էր հայոց առանձին սահմանադրութեան վերջ տալ, քանի որ արդէն կար ընդհանուր օսմաննեան սահմանադրութիւնը: Արծրունուն վրդովեցնողը մանաւանդ այն էր, որ՝ այդ քայլը անվում էր ինքնազդուխ, առանց ժողովրդի ներկայացուցիչների համաձայնութեան:

Եթէ ամբողջ ազգը հրաժարվէր իր ունեցած իրաւունքներից, մենք Թէեւ այդ վարմունքը յիմսրութիւն կանուաննէինք, բայց այնու ամենայնիւ պէտք է ասէինք Թէ զա կախված է ազգի բարի կամքից... բայց ինչ պէտք է ասնք տեսնելով Թէ մի որ եւ է Ներսէս իրան իրաւունք է համարում կամայական կերպով շպրտել սովորանի ոտների տակ ամբողջ ազգի ամենաթանկագին իրաւունքները:

Արծրունին Ներսէսից գժղոհ լինելու ուրիշ պատճառներ էլ ունէր: Եւրօպական լրա-

զերները հազորդել էին որ գեսպանաժողովը զիմել էր նրան և հարց տուել թէ ինչ են ուզում հայերը, իսկ Ներսէսը պատասխանել էր թէ հայերը իրանց յոյսը թիւրքաց կառավարութեան վրա են դրել և նրանից են սպասում իրանց վիճակի բարւոքումը: Երեխ պատրիարքի այն ուզերձն էլ, որով չնշվում էր սահմանադրութիւնը, լոկ մի քազաքական ցոյց էր, որ մի կողմից պիտի մի լաւ զէնք դառնար նեղ հանգամանքների մէջ խեղդվող թիւրքաց կառավարութեան համար, իսկ միւս կողմից պիտի ընդգծէր հայերի հաւատարմութիւնը, որով և Ներսէսը կարելի էր համարում քաղցրացնել կառավարութեան աչքը գէպի հայերը: Բայց Արծրունին բացականչում էր:

Միթէ Թիւրքիայի հայերը այդ տեսակ սարսափելի դաւաճանութենից յետոյ պէտք է համեմեն որ Ներսէս եպիսկոպոսը պատրիարք մնայ...

Սակայն մենք պէտք է ասենք որ Ներսէսը անզործունեայ և անտարբեր չէր մի այնպիսի ժամանակ, երբ գաւառացինների գըժբախտութիւնները օրէցօր սաստկանում էին: Նա դիմումներ էր անում թիւրք կառավարութեան, աշխատում էր պատժել տալ յանշաւորներին: Երա բռնած ընթացքի հիմքը,

ուրեմն, այն էր որ պէտք է միայն թիւրքաց կառավարութիւնը ճանաչել, չը խառնվել միջազգային քաղաքականութեան մէջ։ Բայց այդ բարեացակամութիւնը դէպի թիւրքաց կառավարութիւնը ոչինչ օգուտ չէր բերում հայերին։ Դրութիւնը Հայաստանում գնալով ծանր կերպարանք էր ընդունում, իսկ հայոց պատրիարքի գիմումները լոկ թզթի վրա էին մնում։ Ներսէսը ստիպված եղաւ պատճառարանված հրաժարական տալ. բայց մեծ վէղիքը մի կոյտ խոստումներ արաւ, և նա էլի յևս վերցրեց իր հրաժարականը։

Բայց մօտենում էր արեւելեան հարցի ամենավճռական րօպէն։ 1877-ի ապրիլի 12-ին Ռուսաստանը պատերազմ՝ հրատարակեց թիւրքիայի գէմ։ Կովկասեան սահմաններից առաջ արշաւող զօրքը նորից յարուցեց գաւառացի հայ ժողովրդի հին յոյսերը. ամեն տեղ եկեղեցական հանդէսներով էին դիմաւորում ուռաներին։ Դէսքերը չուտով ցոյց տուին թէ որքան անսխալ էր ժողովրդի բը-նազդը։ Հայերի ահաւոր կոտորածը Բայազէտում, Շէյս-Զալաբէղինի արշաւանքը, Ալաշկերտից Տէր-Դուկասօմի զօրաբաժնի հետ Ռուսաստան գաղթած 3000 հայ ընտանիքները—այդ բոլորը տեղի ունեցաւ մի կարձ միջոցում, երկու կամ երեք ամսվայ ընթաց-

քում։ Իսկ թէ ինչեր էին կատարվում Թիւրքաց Հայաստանի այն տեղերում, որոնք հեռու էին պատերազմի բեմից,—հասկացողութիւն կարող է տալ այն ընդարձակ յիշատակարանը, որ կազմել էր Վանից Թիֆլիս եկած Մկրտիչ Փորթուգալեանը և որ տպագրվեց «Մշակի» մի քանի համարներում։

Սկզբունքով կարելի է համակրել կամ ըլ համակրել պատերազմին,—ասում էր Արծունին ուսւմնիւրական պատերազմի հրատարակութեան առիթով. —բայց մէկ բան չէ կարելի չը խոստովանել, որ կան ազգեր, որոնք ենթարկվում են նոր մտքերին, ընդհանուր մարդկային առաջադիմութեան անհրաժեշտութիւնը ընդունում են միայն սրի և հրացանի միջոցով հասցրած լինելով այդ անհրաժեշտութեանը։ Կան հարցեր, որոնք այլ կերպ չեն կարող վճոված լինել, եթէ ոչ պատերազմի միջոցով։

Թիւրքիան պատկանում է այդ տեսակ ազգերին, արեւելեան ինդիրը այդ տեսակ դժուար լուծելի խնդիրներից մինն է...

Ցանկանանք մեր զօրքերին աջողութիւն, որից կախված է արեւելքի պատութիւնը, նրա բնակիչների խաղաղ, ապահով դրութիւնը եւ երկար ժամանակ ճնշման տակ մնացած բրիստոնեայ ազգերի բարոյական, տնտեսական եւ մտաւոր վերանորոգութիւնը։

Իսկ մի ուրիշ յօդուածի մէջ նա բացատրում էր առհասարակ պատերազմի խորհուրդը։

Ի՞նչ զարմանալի փոփոխութիւններ, ի՞նչ աչքի ընկնող շարժողութիւններ է առաջացնում պատերազմը մի հասարակութեան կեանքի թէ ընդհանուր բնմացքի, թէ նորա ամենափոքր, նեղ շրջանի մէջ անդամ:

Գուցէ այժմեան բաղաբակրթված աշխարհի ինտելիգենցիայի մի մասը համոզված է որ պատերազմը առհասարակ կործանիչ, վնասակար, առաջադիմութեանը արգելը դնող մի երեւոյթ է, —բայց ուրիշ կողմից չէ կարեի հերքել որ պատերազմը եղել է միշտ, է եւ կը լինի պետութեան կազմակերպութեան եւ իրան հասարակութեան կեանքի բարոյական, մտաւոր եւ նիւթական ոյժերի մի խիստ քննութիւն:

Մեր կեանքի վերաբերմամբ էլ միանգամայն ճիշտ էր այդ բացատրութիւնը: Պատերազմը մի գրգիչ էր Կովկասի ներքին կեանքի համար. նա բերեց կենդանութիւն, ծնեցրեց մտաւոր հոսանքներ, եռանդ, գործունէութիւն հանդէս հանեց հասարակական առարկում: Հայերն էլ, իրեւ մէկը կովկասեան ազգերից, առանձին կենդանութիւն ստացան և պատերազմին հետեած երեք-չորս տարիները մեր կեանքի մէջ մի առանձին թարմ ու փայլուն շրջան են կազմում, որի նմանը հաղիւ թէ յետոյ կրկնված լինի:

Պատերազմի մասին խօսեց և Ասիացին իր առաջին ֆելիէտօնում: Դեռ անցեալ տարվանից Ասիացին ալսրութեան շեշտեր էր

մացրել իր ֆելիէտօնների մէջ. նա ասում էր թէ հանաք անելու, գուարձացնելու ոչ մի տրամադրութիւն չէ մնացել, քանի որ Փոքր-Ասիայից այսպիսի ցաւալի լուրեր են գալիս: Իսկ այժմ ահա ինչ էր նա գրում.

Այս բարեկարգ ինչ բանի վրա կարելի է խօսել, եթէ ոչ պատերազմի վրա: Ամենքի թերանից լսվում է այ առ ե թ ա զ մ խօսքը:

Եւ կրկին պատերազմի բնմը Հայաստանն է, հին, պատմական Հայաստանն է, որի վրայով այնքան ազգեր են անցկացել, ամենքը նրա հողի վրա իրանց եւ հայի արիւն են թափել, ամենքը իրանց հետքերը թողել...

Հայաստանը նման է մի կնոշ, որ անթիւ սիրականներ է ունեցել, բայց այդ իր սիրականներից խօսքէս ոչ մէկին անկեղծ սիրով չէ սիրել... Արգեօք կը սիրէ նա մի օր անկեղծ սիրով, կընծայէ նա իր սէրը մէկին անբաժան կերպով, կընտրէ նա վերջապէս մէկին, որին ամբողջութեամբ կը յանձնէ իր անձը, այդքան ցրված կեանք վարելոց յետոյ օրինաւոր կին, տանտիկին, մայր դառնալու համար...

Գտուար է նախապուշակին:

Առնասարակ այդ տեսակ կանանց կողմից ժամանակաւոր շնորհ վայելելը ամենքը ցանկանում են, —բայց կապվել այդ տեսակ էակի հետ ամբողջ կեանքի համար՝ ոչ ոք չի ցանկանայ... *):

*) Երկու - երեք տարուց յետոյ Բաֆֆին էլ իր «Թափական» գիրքում առաջին անգամ կապվել է միշտ այսպիսի նմանութիւն էր տա-

Եւ կարող է մէկը անկեզծ կերպով սիրել այդ էակին: Ասխացին թողնում է պատերազմը, այդ հարցն է արծարծում մի անխընայ խստութեամբ, որ ցաւալի ճշմարտութեան արդարացի պատկերացումն է:

Ցոյց տուեցէք ինձ մի ազգ,—ասում է նա, — մի մարդ աշխարհիս երեսին, որ հայերին սիրելիս լիներ, կամ գոնէ խօսէք հայերի մասին առանց արհամարհանքի եւ ատելութեան:

Այդ տեսակ ազգ, այդ տեսակ մարդ չը կայ աշխարհիս երեսին: Հային ամենքը արհամարհում են եւ մասնաւանդ ատում են: Եւ ինչպէս չատեն, երբ ինքն հայը հայերին ատում է...

Հայը միշտ ամազում է հայ անուանվել... Ամենամեծ գովասանք, որ կարող է անել Թիֆլիսի հայ կրին (հին սերունդին պատկանող) խօսելով մի աղջկայ վրայ, հնտեւեալն է՝ Հետի շնուրքով աղջիկ է, հնտի նատիլ ու վիրկենալ ունի, կօսիս վրացի աղջիկ ըլիս...

Ոչ մի ազգ աշխարհիս երեսին չը կայ որ ինքն իրան արհամարհէք որքան հայ ազգը... երկու հայ փողոցում հայերէն են խօսում, յանկարծ մի ծանօթ ուսւ կամ գերմանացի նրանց մօտով անց է կենում, — իսկոյն մեր հայերը թողնում են իրանց մայրենի

Փս չայաստանին, մի պոռնիկ կնոջ նմանութիւնը: Սա ապացոյց է թէ ողքան սերտ կապ կար Դրիգոր Արծը ունու գրուածքների և Բաֆֆիկի վէպերի մէջ:

Լեզուով խօսելը եւ անցնում են մի օտար լեզուին, — չը լինի՛ թէ օտար մարդը լսի որ հայերը հայերէն են խօսում...

Հայերս սովորութիւն ունենք գանգատվել թէ ոչ մի օտար ազգ մեզ չէ սիրում, ամենքը մեզ ատում եւ արհամարհում են... Ի՞նչպէս կարող են ուրիշները մեզ սիրել, երբ մենք ինքներս մեզ ատում ու արհամարհում ենք»:

Պատերազմը կլանում է Արծրունու ամբողջ ուշադրութիւնը: Շատ չեն այն յօդուածները, որոնց մէջ նա խօսում էր սովորական, առօրեայ հարցերի մասին. թերթելով 1877-ի «Մշակը», մեր առջև պատկերանում է նա, որպէս մի մարդ, որի մտածմունքը մի առարկայի վրա է կենտրոնացած, բայց որը, միակողմանի չը լինելու համար, հարկադրված է մի մի ուրիշ առարկաների վրա էլ նայելու, առարկաներ, որոնք, այսպէս ասած, սահում, փախչում են նրա գրչի տակից, առաջնութիւնը, կարևորութիւնը գլխաւոր, կենտրոնական առարկային տալով:

Ի՞նչ պիտի լինի հայերի վիճակը, ի՞նչ պիտի տայ պատերազմը թիւրքաց Հայաստանին: Արծրունին շատ յաճախ էր կանգ առնում այս հարցի առաջ: Նրա համար ստիպողական, անխուսափելի էր մնում միենոյնը, ինչ ասել էր 1876-ին.—«Այժմ կամ երբէք»: Եւ

նա շարունակ կրկնում էր թէ Հայաստանը պիտի միացնվի Ռուսաստանին. իսկ եթէ այդ անհնարին լինի, այն ժամանակ Ռուսաստանը պէտք է իր հովանաւորութեան տակ առնէ Հայաստանը՝ տարով այնտեղ ապրող քրիստոնեաներին կեանքի և գոյքի ապահովութիւն։ Որքան առաջ էր դնում ոռւս բանակը, այնքան Արծրունու համար անհրաժեշտ էր դառնում հարցի այդ տեսակ լուծումը։ Արտասահմանեան լրազիրները հաղորդում էին թէ Անդլիան երբէք չի թոյլ տայ որ Ռուսաստանը վերցնէ Հայաստանը։ Արծրունին անխղճութիւն էր անուանում Անդլիայի այդ քաղաքականութիւնը։ Անդլիան պահպանում է Թիւրքիան, սովորեցնում է թիւրքերին խորամանկութիւններ՝ Եւրօպան խարելու և քրիստոնեաների արդար պահաջները խեղդելու համար, Անդլիան գէնքի փող է տալիս Թիւրքիային՝ Ռուսաստանի դէմ կուելու համար և չէ էլ թոյլ տալիս որ Հայաստանն անցնի ոռւսաց ձեռքը։ Իսկ ինքը, Անդլիան, ի՞նչ պէտք է անէ հայերի համար։ Ոչինչ։ Բանից, ուրեմն, գուրս է դալիս որ Հայաստանը պէտք է թիւրքերի ձեռքին մնայ, որովհետեւ այդ շահաւէտ է Անդլիային։ Ի՞նչ անխղճութիւն։ Բայց հայերի յոյսը միայն Ռուսաս-

տանի վրա է, միայն Ռուսաստանից են նըրանք սպասում իրանց փրկութիւնը։

Երբ Մուխտար-փաշայի զօրքը ոչնչացրվեց Ալաջայի բարձրութիւնների վրա, երբ ոռւսները յաղթական արշաւանք սկսեցին գէպի երզրում և Ասիական Թիւրքիայի վերջին յոյսը, Կարսը ընկաւ ոռւսների ձեռքը, Արծրունին արդէն միանգամայն համոզվեց որ Հայաստանի ճակատագիրը վերջնականապէս կարգադրված է, նա կը դառնայ Ռուսաստանի մի մասը և այդպիսով կազատվի իր դարաւոր գմբախտութիւններից։ Իսկ եթէ ըան է, ինքը Ռուսաստանը չը կամենայ միայնել Հայաստանը իր կալուածներին, աւելորդ համարելով իր առանց այն էլ շատ տարածված սահմանների ընդարձակումը, այդ գէպում գարձեալ նրան է վերապահված կարգադրել Հայաստանի ճակատագիրը այնուհէս, որ հայերը ապահովութիւն գտնեն, ինքնավարութիւն ունենան։

Առհասարակ Արծրունին թէ պատերազմի ժամանակ և թէ յաջորդ երկու երեք տարիներում հաւատ չէր ընծայում անդլիական քաղաքականութեան և ամեն անդամ հաստատ համոզմունք էր յայտնում թէ Ռուսաստանն է միայն որ անշահասիրութեամբ և անկեղծութեամբ աշխատում է արեելեան

քրիստոնեաների իրական պաշտպանը դառնալ: 1877-ի ամառը, ինչպէս յայտնի է, թիւրքաց զէնքը աջողութիւններ ունեցաւ թէ եւ-րօպական և թէ ասիական պատերազմական բեմերում: Այդ հանգամանքը հարկադրում էր շատերին մտածել թէ արգեօք պատերազմը կը բերէ սպասած հետևանքը: Արծրունին այդ կամածների ժամանակ առում էր թէ միենոյն է, թիւրքիան եթէ այժմ էլ չը ջարդվի, պատերազմից յետոյ գարձեալ պիտի քայլայվի: Բայց ահա թիւրքիան միմեւանց ետեից մի շարք ահաւոր հարուածներ է ստանում, որոնք նրա վերջնական անկումն են ցոյց տալիս: Եւ Արծրունին, յիշելով թէ այդ ահեղ հարուածների մէջ մասնակից էին և հայ զօրապետներ, գրում է «Ազգութեան հանճարը» առաջնորդողը:

Մինչեւ վերջին ժամանակները—ասում է նա— հայոց ազգի մասին ամբողջ աշխարհը համոզված էր թէ այդ ազգը ունի խելք, ընդունակութիւններ, արդիւնագործական, առեւտրական ոգի եւ այլն,—բայց որ հայերը վախկու ժողովուրդ են եւ զուրկ են բոլորովին զինուորական յատկութիւններից: Այդ տեսակ համոզունք կազմած ունէր ամբողջ աշխարհը հայոց ազգի հանճարի մասին:

Ներկայ թիւրքաց-ուսաց պատերազմը ապացուցեց մեզ հակառակը: Այն ազգը, որ յայտնի էր

որպէս զինուորական ոգի կորցրած, առեւտրական, վախկու ժողովուրդ, —յանկարծ արդիւնաբերում է անթիւ քաջեր, սկսած հասարակ սօվատներից, միլիցիայի զինուորներից՝ մինչեւ զօրքի զիսաւոր առաջնորդները, մինչեւ առաջնակարդ զօրապետները:

Կարելի է արդեօք որ մի վախկու բնաւորութիւն ունեցող ազգից զուրս զայն անթիւ քաջեր, կարելի է արդեօք որ հետեւանքը ծնունդ առնէ առանց պատճառի, կարելի է արդեօք որ չուրը վազի առանց աղբիւրից զուրս զայն աղբիւրից զուրս զայլու... Անկարելի է:

Այն ազգը որ հարկաւոր ժամանակ ընծայում է այդրան թւով քաջ եւ ընդունակ զինուորականներ, ինչքան վերջին պատերազմում հայերը ընծայեցին ուսւաց զօրքին, —այդ տեսակ նշանաւոր, աչքի ընկնող երեւոյթ ակամայ ստիպուած ենք համարել մեր ազգի յատկութիւնը, մեր ազգութեան հանճարը»:

Այսուեղ կանգ առնենք մի հետաքրքրական հարցի առաջ: Մենք շարունակ տեսնում ենք Արծրունուն յարձակվելիս, մարակելիս, տեսնում ենք որ նա իր շուրջը վատութիւն, ապականութիւն է միայն գտնում: Ի՞նչ է սա ցոյց տալիս. արգեօք այն թէ Արծրունին մի անուղղելի յուսաես էր, թէ նա յուսահատվել էր իր ազգից, թէ միայն վատ, միայն բացասական յատկանութիւնների ընդունակ էր. նա համարում այդ ազգը:

Բատ երեսյթին այսպիսի կերպարանք ունէր Արծրունու գործունէութիւնը. և այդ երեսյթից օգուտ էին քաղում նրա հակառա-

կրտգները, ներկայացնելով նրան իրեն իր ազգի ուխտեալ, անհաշտ թշնամիք Բայց կարդալով Արծրունու ամենասիրատ, անողորմ, նոյն իսկ չափազանցութեան էլ հասցրած յարձակումները, իւրաքանչիւր ազնիւ մարդ կը մրոնէ որ այդ շանթահարող տողերի միջից երեւմ է սիրող սիրար, մի մարդ որ ուզում է իր ազգի բարեկալստութիւնը, բայց կրակու է, անհամբեր է, միշտ անրաւական և ուզում է որ միանդամից կերպարանափոխմի այդ ազգը, հսկայական քայլերով առաջ դընայ: Մի կողմ թողնելով այդ ներքին շեշտը, որ լսվում է ամեն տեղ, մենք ցոյց կը տանք հէնց այն, որ ինքը, Արծրունին, խոստովանում էր որ հայր պակասութիւններից չատերը յատուկ են բոլոր ազգերին, որ ամեն տեղ կան կեղեքովներ, շահամոլներ: Բայց միթէ դա նշանակում էր թէ չը սէտք է հարուածել այդ պակասութիւնները հայերի մէջ:—Ի հարկէ, ոչ:

Պատերազմի տարին անհրաժեշտ դարձաւ մի հանդամանք: Հայերին օտարները չէին ճանաչում, և Արծրունին սկսում է եռանդուն կերպով քարոզել որ հայ ինտելիգենցիան ծանօթացնէ հայերին օտար ազգերի հետ: Թող հիմնեն մի զուտ հայկական օրդան ոռուերէն լեզուով, թող հայ երիտասարդները դնան եւ-

քոպա, այնտեղ զրեն հայերի մասին, շիտակ և անկեղծ կերպով ներկայացնեն իրանց ազգը քաղաքակիրթ աշխարհին: Եթէ Արծրունին չունենար հաւատ գէպի իր ազգի բարոյական առաւելութիւնները, եթէ նա միայն վատութիւն տեսնէր նրա մէջ, կարող էր այդպիսի միտք քարոզել, կարող էր համոզված լինել որ քաղաքակիրթ ազգերի մօտիկ ծանօթութիւններ, և հայերի հետ կը վերացնէր շատ նախապաշարմունքներ, շատ թիւրիմացութիւններ, և հայերը միայն օգուտ կը ստանային այդ ծանօթութիւնից: «Օտարները և մենք» առաջնորդողի մէջ Արծրունին, խօսելով մի ֆրանսիական թղթակցի մասին, որ նկարագրել էր կովկասնեան հայերին, ասում է.

Ո՞րքան զարմացաւ այդ թղթակիցը, երբ գտաւ Անդրկովլիստում մի ազգ, որ իր բոլոր պակասութիւնների հետ միասին այնուամենայնիւ ներկայացնում է արեւելում եւրոպական տարր՝ իր գգտումներով, իր ոգով, իր բնաւորութեամբ, իր ընդունակութիւններով եւ կեանքի եղանակով:

Նա կարծում էր որ հայերը միայն վաճառականներ են,—յանկարծ նա իմանում է, նա տեսնում է, որ հայոց ազգի մեծ մասը երկրագործներ են: Նա հեռուելոց լսում էր որ հայերը վախկոտ, պատերազմական բոլոր յատկութիւններից զուրկ ժողովուրի են,—եւ յանկարծ համոզվում է որ հայերը համարվում են ուսւ զօրքի մէջ ամենաքաջ զի-

Նուռականների կարգում, իրանց միջից ընդունակ եւ տաղանդաւոր զօրապետներ են ընծայել ոռւսաց զօրքին։ Նա սպասում էր տեսնել մեղ մօտ խորին տղիտութիւն, — եւ յանկարծ տեսնում է հայոց ժողովրդական ուսումնաբանների հաշլից որ դպրոցների եւ աշակերտների պրօցենտը մեղանում բաւական նշանաւոր է։ Նա սպասում էր պատահել նարեմ, յանկարծ դտնում է եկրապական ընտանիք եւ օրիորդական դպրոցներ, որտեղ իրանք կանայք անգամ զասաւութիւն են անում։

Եւ այսպէս մի շարք առաւելութիւններ — բարձրագոյն ուսում, մամուլ, զրականութիւն, մշակվող լեզու և այլն։ Ահա թէ նրբան բաններ կային օտարներին ցոյց տալու համար Արծրունին այս բոլորը չէր մոռանում, ընդունում էր որ դրանք աշխատութեամբ ձեռք բերած կուլտուրական առաջադիմութիւն են։ Սակայն այդ գեռ չէր նշանակում լինել միանդամայն բաւական և ինքնագոհ, չը ցանկալ աւելի մեծ առաջադիմութիւն, չը ցոյց տալ պակասութիւնները և կրակով չայրել վէրքերը։

Բայց վերադառնանք պատերազմին։

Ցուլիս ամսին Երևանեան նահանդում տարածվեցին այն հազարաւոր թիւրքահայ ընտանիքները, որոնք Տէր-Ղուկասօվին նահանջող զօրքի հետ եկել էին Ալաշկերտից։

Երբ ոռւսները պարտութիւն կրեցին Զիվինի առաջ և գեներալ Տէր-Ղուկասօվը, Դրամդաղի նշանաւոր ճակատամարտը վաստակելուց յետոց ստիպված եղաւ յետ նահանջել դէպի ոռւսաց սահմանները, Ալաշկերտի հայ գիւղերը, շատ լաւ իմանալով թէ ինչ է իրանց սպասում ոռւսաց զինուորների հեռանալուց յետոյ, շատապով հաւաքեցին ինչ կարողացան և քրդերից ազատութիւն որոնեցին՝ փախչելով ոռւսաց հողը։ Գաղթականները, ի հարկէ, շատ չնշին բան կարողացան բերել իրանց հետ, այնպէս որ տեղ հասնելուն պէս՝ զգացվում էր մեծ կարիք այդ ահազին բազմութիւնը պատսպարելու և կերակրելու համար։ Հարկաւոր էր չուտ օգնութեան հասնել նրան։

Արծրունին սկսում է գրել գաղթականների մասին։ Թիվլիսում գումարներ են հաւաքիւմ նրանց օգնելու համար։ Բայց այդ կարիքը բաց է անում մեր առջե մի պակասութիւն, որի մասին Արծրունին գրում է «Ուշ ենք հասկացել» առաջնորդողը։ Այդանոց առաջին անգամ արծարծվում էր Թիվլիսում մի կենտրոնական բարեգործական ընկերութիւն հիմնելու հարցը։

Չէ կարելի չափսոսալ — ասում էր նա — որ մեղ հայերիս առհասարակ յատուկ է միայն այն ժամա-

նակ ծեռք տալ այդ տեսակ բարի գործերին (թը-շուառներին օգնելու համար փող հաւաքելուն), երբ, ինչպէս ասում են՝ դանակը ոսկորին է հասնում...

Բացատրելով այնուհետեւ որ ժողովրդական գժբախտութիւնները միշտ կարող են կրկնվել, որ հայերը պիտի իրար օգնութեան ձեռք մեկնեն, Արծրունին շարունակում է.

Մտածեցիր, ընթերցնող, ինչպէս լաւ կը լինէր, եթէ մենք փոքր առ փոքր, տարիներով հաւաքելով գումարները թէ նուիրատութեան միջոցով, թէ անդամակցական վճարքի ծեռով, վաղոց արդէն կազմած ունենայինք մի կենտրօնական ընկերութիւն (օրինակ Թիֆլիսում), Մարդասիրական Ընկերութեան պէս, միայն աւելի լայն, աւելի ընդարձակ պրօքրամայով, որ նշանաւոր գումարներ իր ծեռքումն ունենալով, կարող էր հարկաւոր ժամանակ օգնութիւն հասցնել հայոց հասարակութեան այս կամ այն տառապեալ մասին, նուիրել իր մայր գումարի տոկոսներից այս կամ այն տեղի հայ սովատանջներին, կամ հրդեհից վնասուածներին, օժանդակել այս կամ այն օգտաւէտ ծերնարկութեանը, պահպանել կատարեալ անկումից այս կամ այն ինչ ուսումնարամն...

Վաղոց հարկաւոր էր մտածել այդ տեսակ մի ընկերութիւն կամ մասնաժողով ունենալ. բայց եթէ մինչեւ այժմ ոչ որ այս բանի վրա չը մտածեց, — այդ չէ նշանակում որ այսուհետեւ էլ չը պէտք է մտածենք այդ տեսակ ծերնարկութիւնը իրագործելու:

Դա ժամանակի պահանջն էր, իրերի դը-րութիւնից բղխող միտք: Արծրունին առաջինը արտայայտեց նրան մամուլի մէջ, իսկ իրագործումը տեղի ունեցաւ տարիներից յետոյ, երբ Թիֆլիսում հիմնվեց Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը: Բայց ալաշկերտցի գաղթականների դրութիւնը անմիջական օգնութիւն էր պահանջում. „ԳՈԼՈՅ“ լրագիրը զարմանք էր յայտնում որ Թիֆլիսի հայերը մի յատուկ մասնաժողով չեն կազմում այդ խեղճերի համար: Արծրունին արձագանք տուեց այդ առաջարկութեան, կազմվեց մասնաժողով, որ հաստատվեց կառավարութեան կողմից և գործի կալաւ: Մասնաժողովի անդամը և քարտուղարը Արծրունին էր: Կարձ միջոցում բաւական խոչը գումար հաւաքվեց. մասնաժողովը Ալէքսանդրեան այդում մեծ ժողովրդական զրօսանք սարքեց, որ ահագին բազմութիւն դրաւեց և փառաւոր աջողութիւն ունեցաւ, տալով ընդհանուր մուտք մօտ 4500 բուբի: Աշխատել էին ազգաբնակութեան բոլոր դասակարգերը. կանայք առանձին եռանդ ցոյց տուին այդ գործի մէջ: Մասնաժողովը իր անդամներից մէկին ուղարկեց Երեանեան նահանգը՝ գաղթականների դրութիւնը տեղն ու տեղը ուսումնասիրելու համար: Այդ ման-

բամասն ուսումնասիրութիւնը ապազրվեց «Մշակում»։ Մի մասնաժողով էլ Երևանում կազմվեց։ Եւ այսպիսով ոռւսահայերը ոչյնչ չը խնայեցին իրանց տանջիված եղբայրակիցներին օգնելու և զաղթականութեան պէս մի ահաւոր դործի հետ կապված դժբախութիւնները կարելի եղածին չափ թեթեացնելու համար։ Երեսյթը բոլորովին նոր էր մեղանում։ Պատերազմը հարկադրում էր մեզ հասարակական եռանդու դործունէութիւն սկսել։ Իր արիւնուա հայրենիքից փախած թիւրբահայը մեղ զարթեցնում էր։

Ալաշկերտի զաղթականութիւնը միենոյն ժամանակ մեր պատմութեան մէջ անդադար կրկնվող դարաւոր երեսյթներից մէկն էր, երեսյթ, որ այնքան ահազին ազդեցութիւն է արել հայ ազգի ճակատագրի վրա, աղդային բնաւորութիւն է կազմել, ուղղութիւն տուել մեր հազարամեայ կեանքին։ Արծրունին այդ թարմ երեսյթի տապաւորութեան տակ փորձեց բացատրել մեր զաղթականութիւնների պատճառները և հետեանքը։ Հետաքրքրական է որ նա զաղթականութեան պատճառ համարում էր քրիստոնէական կրօնը։

Մի ժամանակ, ասում է նա «Կրօն և Գաղթականութիւն» առաջնորդողի մէջ, Հայ-

աստանը, իբրև լեռնային մի ապահով երկիր, ամեն կողմից գրաւում էր զանազան ազգերի զաղթականութիւններ, որոնք գալիս էին հաստատվում հայոց հողի վրա և ձուլվում էին բուն ազգաբնակութեան հետ։ Այդ որ ժամանակին էր։ Այն ժամանակ, երբ Հայաստանում տիրում էր զրադաշտական կրօնը։ Դա մի բնական, չօշափելի, մանկական կրօն էր, մատչելի շրջապատող ցեղերի համար։ Հայաստանի դիրքը, որ շատ նման է լեռնային նվեյցարիայի գիրքին, ապահովութիւն էր տալիս գաղթողներին, իսկ կրակապաշտութիւնը ձուլում էր գաղթողներին հայերի հետ։ Ազգը անդադար նոր տարրեր էր ընդունում դրսից, բազմանանում էր, ումեղանում։ Հեթանոսական Հայաստանը գօրեղ էր, բազմամարդ։

Քրիստոնէութիւնը մուտք է դործում Հայաստան և իրերի գրութիւնը միանդամից փոխվում է։ Հայաստանը սահմանափակվում է իր մէջ, կղզիանում, առանձնանում։ Քրիստոնէութիւնը այլ ևս այն պարզ, գիւրամատչելի կրօնը չէր, ինչպէս զրադաշտականութիւնը։ Քրիստոնէութեան բարձր, վերացական, շրջապատող տարրերի համար անմատչելի փիլիսոփայական սկզբունքները փակում են Հայաստանի դռները դրսի նոր ոյժերի

առաջ, կամաւոր գաղթականութիւնը դադարում է:

Անընդհատ հոսանքը ուրիշ ցեղերի, որոնք անդադար գաղթելով Հայաստան միանում էին հայոց հիմնական ազգութեան հետ, ծովում էին նրա մէջ, —այդ հոսանքը բրոստոնէութեան մեր երկիրը մըտնելոց յետոյ դադարեց, յետ մղվեցաւ, նոր կրօնը արգելք եղաւ հայոց ազգի անընդհատ մեծանալուն եւ բազմանալուն... Հայը իր մէջ սահմանափակվեց... ազգի բազմանալուն, մեծանալուն, հասակ առնելուն վերջ դրվեցաւ:

Առաջ, կրապաշտութեան ժամանակ, ով որ Հայաստանումն էր բնակվում, հայոց հողի վրա էր ապրում, — հայ էր: Քրիստոնէութենից յետոյ՝ նա որ լուսաւորչական չէր՝ հայ չէր: Մինչեւ այժմն էլ հայկաթօլիկը, հայ-յունադաւաննը, հայ-բորբականը, հայ-մամինեականը՝ հայեր չին համարվում...

Եւ անա այն օրից երբ հայը ընդունեց քրիստոնէութիւնը, նա շրջապատված լինելով թշնամիներով, իր կրօնի պատճառով սահմանափակվելով, ներ շրջանակի մէջ մոնելով, իրան առանձնացած զգալով Ասիայի մէջ, — դարձաւ ևսական, զարձաւ չափից դուրս անհատական... եւ զլաց իրան օտար ոչ թէ միայն Ասիայում, բայց եւ իր հայրենիքում...

Այն բօսէից սկսվեց հայի գաղթականութիւնը:

Նա գաղթում էր, եւ ուր որ զնում էր, իր հետըն էր տանում եւ իր բարոյական զանձը, իր սըրտումն էր պահում իր հայրենիքը... Այնուհետեւ Հայաստանը նրա համար երկրորդական հայրենիք էր դարձել, իսկ զիսաւոր հայրենիքը նրա համար եկեղեցին էր:

Հաղիւ թէ կարելի լինի ասել թէ մեր պատմութիւնը հաստատում է Արծրունու այս տեսութեան բոլոր կէտերը: Գաղթականութեան պատճառները աւելի բարդ են, բայց չէ կարելի ուրանալ որ գաղթող հայի համար հայրենիքի պահանջը, սէրը այնքան մեծ չէր, որ կարողանար պահել նրան երկրում: Որ Հայաստանի թուլութեան պատճառներից մէկը և գուցէ զլխաւորը քրիսնէութիւնն էր, այդ ապացուցանում է հէնց այն հանդամանքը, որ քրիստոնեայ Հայաստանը երբէք չը կարողացաւ քաղաքական մի այնպիսի միութիւն կազմել, ինչպէս էր հեթանոս Հայաստանը: Մենք չափազանց ծանր զրհեր տուինք եկեղեցուն, մենք, ճիշտ որ, կզզիացանք, թշնամական գիրք բանեցինք գէպի մեզ շրջապատող բոլոր ազգերը՝ մեր եկեղեցական յնքնուրոյնութիւնը պահպանելու համար: Արծրունին իր այդ յօդուածի մէջ չէր չօշափում այն բոլոր պատճառները, ուրոնք քաղաքական թուլութիւն և գաղթականական անվերջ հոսանքներ առաջացրին մեղանում, բայց նա շատ ճիշտ էր ըմբռնել գաղթականութեան եթէ կարելի է ասել, հոգեբանութիւնը: Ճիշտ է որ հայը օտարութեան մէջ որբ ու անհայրենիք չէր զգում, եթէ ունենում էր իր եկեղեցին, ճիշտ է որ եկե-

զեցին գաղթականի համար փոխարինում էր
հայրենիքը:

Բայց հարց է ծագում. միթէ Արծրունին դրանով ասում էր թէ լաւ կը լինէր, ևթէ Հայաստանը հեթանոս մնար, եթէ քրիստոնէութիւն չընդունէր: Այս հարցին նա պատասխանում է իր յաջորդ յօդուածում («Ի՞նչ է հետեանքը»): Արծրունին այդպէս չէր ասում, չէր կարող ասել: Այլ բան է պատմութեան փիլիսոփայութիւնը պարզելը. հետազօտել պատճառները, գուրս բերել բնական, արդարացի եղրակացութիւններ չէ նըշանակում քմահաճ վճիռներ կարգաէ, իր սըրտի ուղածը քարոզել: Եթէ քրիստոնէութիւնը զրկեց Հայաստանը քաղաքական ոյժից, դա չէ նշանակում թէ քրիստոնէութիւնը իրեն ուսում, իրեն վարդապետութիւն անհամեմատ բարձր չէ հեթանոսութիւնից: Արծրունին այդպէս էլ ասում է.

Մեզ համար ամենից բարձր, ամենից սուրբ են քրիստոնէական վարդապետութեան հիմնական գաղափարների յաւիտենական սկզբունքները, քրիստոնէութեանը յատուկ հաւասարութեան, եղբայրութեան եւ աղատութեան ողին, քրիստոնէութեան հասարակական, քաղաքական նշանակութիւնը: Բայց նոյն իսկ այն պատճառով որ քրիստոնէութիւնը անչափ առաջադէմ կրօն է, նրա սկզբունքները անչափ

բարձր, վերացական, իդէալական են,—այդ սկզբունքները անմատչելի պէտք է լինէին Հայաստանը Ջրջափառող կրապաշտ, դեռ իրանց զարգացման մանկութեան մէջ գտնված ազգիրին, երբ այդ բարձր փիլիսոփայական վարդապետութիւնը ընդունվեցաւ հայերից:

Ինչու համար էր Արծրունին այս պատմական երեսյթը բացատրում: Նա պատմագէտ չէր, անցեալով ապրող չէր, այլ ժամանակի, ներկայի, իրականութեան մարդ: Ինչու էր շարժում հնութեան հարցերը: Լոկ այն պատճառով որ ընդգծէ հայի բնաւորութեան մի յատկանիշը,—այն է՝ եկեղեցին փոխարինեց հայրենիքը, և հայրենիքի հասկացողութիւնը թուլացաւ, համարեա կորաւ: Այս պատճառով հէնց որ հայը հեռանում է իր եկեղեցուց, իսկոյն գագարում է հայ լինելուց:

Սհա ինչն է սխալը: Այդ սխալի մասին շատ էին խօսել մեր նախորդ առաջաւոր հըրապարակախօսները — Ստեփան Ռոկան և Ստեփանոս Նաղարեանց: Արծրունին էլ նոյն կղրակացութեան էր համում:

Մեր ազգի մոռաւոր զարգացման եւ բարոյական վերանորոգման զինաւոր զործիչը եւ շարժառիթը վերանորոգման զինաւոր զործիչը եւ լեզուն, —ասում է նա: պէտք է լինի մայր են ի լեզուն, —ասում է նա: —Թող ուսումը եւ կրթութիւնը իր ամենաբազմականի երեւոյթներով հիմնվի հայրենի նողի վրա, կողմանի երեւոյթներով հիմնվի հայրենի նողի վրա, Հայաստանում, մայրենի լեզուի հաստատ սկզբունք-

ների վրա,—եւ հայաստանցի հայը չի կլանվի ոչ
մահմեղականութենից, ոչ էլ մի որ եւ է այլ տարրից:

Այս դաւանանքը նոր չէր մեղանում: Բայց
ահազին աղմուկ էր հանում ամեն անդամ,
երբ հրապարակ էր հանվում մեր մամուլի
մէջ: Սակայն ոչ ոք այնքան կատաղի, եր-
կարատե կոփւ չէ մղել այդ սկզբունքի հա-
մար, ինչպէս Արծրունին: Մենք յետոյ կը
տեսնենք այդ կոփւը:

Պատերազմական դաշտում և նրա սահ-
մանակից տեղերում կատարվող եղելութիւն-
ները, որոնց մի արտայայտութիւնը Ալաշ-
կերտի մեծ դաղթականութիւնն էր, իրանց
աղդեցութիւնն ունեցան և կ. Պօլսի հայու-
թեան մէջ: Դրանք իրողութիւններ էին, ո-
րոնք չէին կարող խրատական չը լինել: Սկսում
էին հետզհետէ հասկանալ իրերի իսկական
դրութիւնը, այն դառն ճշմարտութիւնը՝ որ
սլաւօնական շարժումը, պատերազմը, սոսկա-
լի արիւնհեղութիւնները ինտրիգների, քմա-
հածութեան, փառասիրութեան գործեր չեն,
այլ արենելեան հարցի դարաւոր յուղմունք-
ների մի կրկնութիւնը:

Ամառը, մինչդեռ Հայաստանում քրդերը
տանջում էին հայերին, իսկ թիւրք գորքերը
նեղն էին դցել ոուսներին և պատերազմի

ելքը շատ անորոշ, կասկածելի էր երեսւմ,
Ներսէս պատրիարքը հրաւիրվեց Ելգրդ-քեօչկի
պալատը: Սուլթանը անձամբ խօսակցութիւն
ունեցաւ պատրիարքի հետ և «Times» լրա-
գրի թղթակիցը այսպէս էր արձանագրում
այդ խօսակցութիւնը:

Սուլթանը նստեցրեց Ներսէսին և ասաց
նրան:

—Ի՞նչպէս է ձեր առողջութիւնը, ես վա-
գուց է որ ցանկանում էի ձեզ տեսնել և
սպասում էի յարմար առիթի: Ես առանձին
համակրութիւն ունեմ դէպի ձեր անձնաւո-
րութիւնը: Համարեցէք որ դուք այստեղ ձեր
տանն էք գանգում, և եկէք ինձ մօտ, երբ
կամենում էք:

—Թագաւոր, մենք չենք մտածում մեր
մասին, մեր աղդի բոլոր մտածմունքները
ուղղված են դէպի ձեր մեծութիւնը և օս-
մանեան գորքը, և ձեզ համար մենք միշտ
աղօթում ենք:

—Ես անկեղծ կերպով ցաւում եմ, ասաց
սուլթան Համիդը, այժմեան տխուր ժամա-
նակների մասին: Ես որ կամաւոր կերպով
մի միջատ էլ չէի սպանի, այժմ պէտք է նայեմ
ինչպէս թափվում է անմեղների արիւնը:
Բայց Աստծուն յայտնի է որ ես պատասխա-
նատու չեմ այս պատերազմի համար:

—Դուք ճշմարիա ամենամեծ թագաւոր էք, դուք գերազանցեցիք ձեր նախորդներին, որոնք օսմանեան դահի վրա նստած էին ամենածաղկած ժամանակին, որովհետեւ օսմանեան դրօշակին փառք չուրինեցիք այս տեսակ դժուար և տառապանքներով լի ժամանակներում:

—Իմ գահը նստելու ժամից ես մի բօսէ հանգստութիւն ունեցած չեմ:

—Այն, դրա մէջ էլ երեսում է ձեր մեծութեան հզօրութիւնը: Ամբողջ ազգը գիշեր և ցերեկ ազօթում է որ ձեր մեծութեանը աշխղիք կատարել ձեր խոստացած վերանորոգութիւնները, որոնք բովանդակում են ձեր կայսերական փառաւոր հրովարտակների մէջ՝ երկրագործութեան, վաճառականութեան, արդիւնագործութեան և ժողովրդական լուսաւորութեան զարգացումը:

—Ես շատ գոն եմ իմ հայոց ազգից, պատասխանեց սուլթանը, և իմ կողմից շատ շնորհակալ եմ նրանից: Ես ցանկանում եմ որ գուք յայտնէք իմ կողմից հայոց ազգին դոհունակութիւնս և հաւատացնէք իմ՝ դէպի նրան ունեցած համակրութեանս մասին:

—Ես կարող եմ հաւատացնել ձերդ մեծութիւնը, որ ձեր փառաւոր տոհմի հայրական կառավարութիւնը յարուցանում է սէր

դէպի ձեր տոհմը ոչ միայն Թիւրքիայի հայերի մէջ, բայց և ուրիշ երկրների հայերի սրտում:

—Ծնորհակալ եմ և կրկնում եմ որ ես էլ բաժանում եմ այդ զգացմունքները: Խնդրում եմ ձեզ յայտնել այդ իմ զգացմունքը ժողովրդին: Ես նոյնպէս շատ գոն եմ այն հայերից, որոնք կառավարչական ծառայութեան մէջ են. նրանք միշտ հաւատարիմ կերպով են ծառայել: Ես գիտեմ որ հայոց ազգը շատ վիաներ կրեց այս պատերազմից, բայց թնդնա իմանայ որ կը տեսնէ աւելի երջանիկ օրեր և կը քաղէ իր հաւատարմութեան պըտուզները, որպէս վարձատրութիւն իր կրած զրկանքների համար: Ես սիրում եմ իմ բոլոր հապատակներին, բայց մանաւանդ իմ հայոց ազգը, որ այժմեան ծանր հանգամանքներում ցոյց տուեց իր անխախտելի հաւատարմութիւնը: Ես տարբերութիւն չեմ գնում մահմադականների և քրիստոնեանների մէջ. նրանք բոլորն էլ օսմաններ են: Հաւատը Աստուծուն է պատկանում:

Ներսէսը աղօթք կարգաց, սուլթանը իր ձեռքով տուեց նրան Օսմանիէ չքանչանի առաջին աստիճանը իբրև հաւաստիք իր սիրոյ գէպի հայերը: Ներսէսը նոյն իսկ սկսեց աղաչել սուլթանին որ նա զթայ այն բօլ-

գարներին, որոնք անհաւաստարմութիւն ցոյց տուին: Եւ դուրս գալով պալատից, հայոց պատրիարքը նկեղեցում մազթանք կատարեց բոլոր հոգեսորականների և ժողովրդի մեծ բազմութեան ներկայութեամբ:

Այդ տեսակցութիւնը տեղի ունեցաւ օգոստոսի 22-ին: Բայց նոյն տարվայ վերջում Կ. Պօլսի հայերը արդէն անհաւաստարիմ և դաւաճան էին հրատարակվում թիւրք լրագիրների կողմից: Ի՞նչ էր պատահել:

Պատերազմը սպառել էր թիւրքիայի ոյժերը: Կարսի առումից յետոյ Ասիական թիւրքիայում մի չնչին բանակ էր մնացել և Մուխտար-փաշան ստիպողարար նոր զօրքեր էր պահանջում Պօլսից: Կործանման ծայրին հասած թիւրք պետութիւնը լարեց իր վերջին ոյժերը: Նոյեմբերի կէսին հրատարակվեց սուլթանի իրագէն, որով զէնքի էին կանչվում բոլոր քրիստոնեաները 17—45 տարեկան հասակում: Այս կարգադրութիւնը մեծ յուղմունք պատճառեց քրիստոնեաներին: Հայոց և յունաց պատրիարքարանները հրաւէր սուսացան աջակցելու կառավարութեան այս դործի մէջ: Յունաց պատրիարքը կոնդակ հրատարակեց, որ, սակայն, ժողովրդի կատաղութիւնը զրգուց և մեծ ցոյցերի պատճառ դարձաւ:

Ներսէս պատրիարքը անձամբ կամենում էր որ կատարի կառավարութեան կամքը, բայց այնքան խոնեմ գտնվեց, որ ինքնազուխ կարգադրութիւն չարաւ և հարցը ենթարկեց Աղքային Ժողովի քննութեան: Նոյեմբերի 25-ին նշանակված էր Աղքային Ժողովի դուռնութեակ նիստը. չը նայած այդ հանգամանքին, մօտ 6000 հայեր մտան հկեղեցի, որպէս զի տեսնեն թէ ինչ վճիռ է ստանում հարցը: Առաջին անգամ հանդէս էր գալիս ընդհարում թիւրքաց ծառայութեան մէջ զըտնվող հայ պաշտօնեաների և ժողովրդի մէջ: Առաջինները, ի հարկէ, ամեն ջանք գործ էին դնում որ ընդունվի կառավարութեան առաջարկը. մինչդեռ ժողովրդի ներկայացաւցիչները, ունենալով իրանց ետեսում հաղարաւոր ամբոխ, գանում էին որ քրիստոնեաները զինուոր տալ չեն կարող, քանի որ հաւաքել զինուորական կարգերին անտեղեակ մարդկանց և ուղարկել նրանց պատերազմի դաշտը, նշանակում էր կոտորել տալ նրանց:

Հարցը վճիռ չը ստացաւ այդ նիստում: Խսկ պատերազմը աղէտ աղէտի ետեից էր բերում: Ընկաւ Պէտքան և թիւրքաց ամենաաջանի բանակը գերի ուղարկեց Ռուսաստան: Մահմեդական ամբոխը Կ. Պօլսում յուսահատութեան մէջ էր, անկարգութիւններ

Էր անում. քրիստոնեաները—յոյները և հայերը—ընդհակառակն, ուրախ էին և զեղեցիկ յոյներ էին փայփայում: Յաղթական Ռուսաստանը այժմ ամենքի համար սիրելի էր: Ժողովրդի այդ ընդհանուր արամագրութիւնը արձագանք դատաւ Ազգային Ժողովի այն նիստում, որ գումարվեց գեկտեմբերի 14-ին: Ազմկալից էր այդ ժողովը. հայ էֆէնդիները սաստիկ ընդհարում ունեցան երեսփոխանոների հետ: Դիմադրութեան ներկայացուցիչներն էին Խորէն Նարպէյ և Մատթէոս Իզմիրլեան Եպիսկոպոսները: Նարպէյի ճառը այնքան համարձակ էր, որ էֆէնդիները պահանջում էին Ներսէսից լոեցնել նրան: Իզմիրլեանն ասաց որ զինուորագրութիւնը ենթագրում է հպատակների հաւասարութիւն, մինչդեռ այս րօպէին Թիւրքիայում ամենավիրաւորական անհաւասարութիւն է տիրում քրիստոնեաների և մահմեդականների մէջ: Եւ երբ էֆէնդիները ցոյց տուին օամանեան սահմանագրութիւնը, Իզմիրլեանը պատասխանեց. «Սահմանագրութիւնը մինչև այժմը մեռած տառ է. Սաստած զիտէ, մի անդամ կը գործադրվի նա թէ չէ: Ո՛չ, ոչ, հաւասարութիւն չը կայ, մեզ առած խոստումներին հակառակ, սահմանագրութեան հըրա-

տարակած օրից մենք այնքան արտօնութիւն ունինք, որքան առաջ»:

Էֆէնդիները, տեսնելով ժողովի տրամադրութիւնը, զոնէ աջողեցրին այն, որ կառավարութեան առաջարկութիւնը քուէի չը դրվեց: Նուրեան էֆէնդին առաջարկեց որ պատրիարքին յանձնվի եկեղեցական համագումար ժողովի կազմել՝ Խառն Ժողովի հետ այդ հարցը կարգադրելու և Բ. Դրան պատասխան գրելու համար: Հրաւիրվեց այդ ժողովը, բայց նա մերժեց կառավարութեան առաջարկը այն հիման վրա, որ քրիստոնեայ մի եկեղեցուն անվայել է միանալ մահմեդականի հետ և կուել քրիստոնեաների դէմ: Այս էր ամենաազլիւորը. հայերը իրանց յոյները դրել էին Ռուսաստանի վրա. նրանք չէին կարող դէնք բարձրացնել Ռուսաստանի դէմ և հարուածել իրանց ակնկալութիւնները:

Ներսէսը այս շարժման մէջ էլ գեռ շարունակում էր թիւրքամոլ մնալ: Համագումար ժողովը պատրաստեց պատասխան, յանձնեց նրան որ Բ. Դուռը տանէ: Բայց Ներսէսը վախկոտութիւն ցոյց տուեց, նոյն իսկ հրաժարական ներկայացրեց: Մեծ վէղիր էղէմ-փաշան սաստիկ զայրացել էր հայերի վրա. անդիմական դեսպան Լայարդ համոզում էր զինուոր տալ, ասելով թէ Թիւր-

քիան վտանգից կաղատվի, եթէ քրիստոնեաւները զէնք վերցնեն: Բայց քրիստոնեաների և զլիաւորապէս հայերի յուղմունքը օրէցօր սաստկանում էր. չին ուղում ուռւների դէմ պատերազմ դուրս դալ և թիւրք կառավարութիւնը, ի հարկէ, անկարող եղաւ. իր կարգադրութիւնը դորձագրել:

Թէ որքան մեծ էր զայրոյթը հայերի ոռուսափրութեան դէմ, ցոյց է տալիս «Stamboul» անունով լրագրի (որի հրատարակիչը անդիմացի էր)՝ խիստ արշաւանքը հայերի դէմ: Լրագիրը անուանում էր հայերին ստոր, արհամարհելի, դաւաճան, ապերախտ: «Վերջապէս, ասում էր նա, հայերի այս արածը ապստամբութիւն է սուլթանի դէմ և կառավարութիւնը իրաւունք և պարտաւորութիւն ունի խստիւ պատժել այդ ապստամբութիւնը: Մենք աւելորդ ենք համարում պնդել այս կէտի վրա թէ որչափ գարշելի ապերախտութիւն է հայերի կողմից պաշտամնել չուզել իրանց հայրենիքը, մի երկիր, ուր ապրում են այսչափ երկար ժամանակից ի վեր, մի կառավարութիւն, որ այնչափ վեհանձն կերպով ընդունած է նրանց իր վարչական գործերի մէջ, որ իրանց ազգից շատերին միշոց է առւած մեծ հարստութիւններ ունենալու:

Լրագրին պատասխանեցին երկու հայ թերթեր—«Եոր Դար» և «Մանզումէի Էֆքիար»: Առաջինը իր պատասխանի համար էլ խավանվեց կառավարութեան կողմից. «Մանզումէն» աւելի մեղմ կերպով խօսեց, ակնարկներով պատասխանեց: Ի միջի այլոց ահա ինչ էր գրում նա. «Մեզ համար այնչափ հարկաւոր չէ պաշտօնատարի անունը կարապետ կամ Մէհմէտ կամ ծօրծի կամ Սվրամ լինելը, այլ մեզ հաբկաւոր և հետաքրքրական կէտը այն է որ պաշտօնատարները արժանաւոր անձեր լինին: Ի՞նչ օգուտ թէ մի բէզի, էֆէնդիի կամ փաշայի անուն հայերէն լինի, երբ ինք հայրենիքի կործանումին աշխատի»:

Ահա թէ որքան էր փոխվել տրամադրութիւնը Կ. Պոլսում: «Մասիս» լրագրի «կան և զեր»-ից մինչև այսպիսի խօսքեր արտասանելը ահազին առաջազիմութիւն էր: Եւ այդ փոփոխութիւնը ծննդնում էր սուսների յաղթական պատերազմը: Բալկանեան թերակըզգում թիւրք բանակները հալվում էին ոսւների առաջ, արգէն Բ. Դուռը իրան յաղթված համարելով, պետութիւնների միջնորդութեան էր դիմում, խօսում էին հաշտութեան պայմանների մասին: Շատ կարեոր, շատ փափուկ ժամանակամիջոց էր. այժմ ամեն ինչ կախված էր յաղթողի թելադրու-

թիւնից։ Անդիմական գիպլումատիան, իմանալով որ ուռւմները աչք ունեն հայաստանի մի մասի վրա, աշխատում էր հայերին գործիք դարձնել՝ այդ մտադրութեան առաջն առնելու համար։ Բայց հայերը զգոյշ, շրջանկատ էին. նրանք հրաժարվեցին ուռւմների առաջ որ և է արգելք, բարդութիւն յարուղանելու մտքից. Նրանք ուղղում էին որ յաղթողը միանդամայն ազատ լինի իր գործողութիւնների մէջ և իրանց յոյսը գրել էին նրա վեհանձնութեան վրա։

Այս ժողովրդական ուժեղ տրամադրութիւնն էր ստեղծվել Կ. Պօլսի հայերի մէջ 1877-ի վերջերում։ Ահա այդ իսկ տրամադրութեան մէջ ներսէս պատրիարքը յդացաւ նոր միտք, նոր ուղղութեան հետեւ սկսեց։ Նա հասկացաւ քօպէի ահազին նշանակութիւնը, հասկացաւ որ «այժմ կամ երբէք» և սկսեց գործունէութեան մի նոր շրջան, որ մոռագնել տուեց անցեալը և դարձեց այդ պատրիարքին քաջ ու աներկիւդ, իր հօախն անձնուէր մի հովիւ, որ պիտի հռչակվէր իրեւ հայութեան ամենանշանաւոր, նուիրական գործիչներից մէկը, մէկը այն մարդկանցից, որոնք հաղուագիւտ են մեր պատմութեանց։

Մեմբ պատմեցինք այս բոլորը, որպէսպի-

ընթերցողը աւելի լաւ կարողանայ որոշել «Մշակի» գերը այն անսմռանալի տարինեներում։ Մենք չենք ասի թէ Գրիգոր Արծրունին էր առաջացրել այն շարժումը, որ տիրում էր Կ. Պօլսի մէջ 1877-ի վերջերին։ Սյու շարժումը ժամանակի, հանդամանքների արտայայտութիւնն էր, իրերի ճշմարիտ և արդարացի ըմբռնումը։ Բայց նկատի առնենք որ Գրիգոր Արծրունին դեռ 1876-ից էր քարոզում այն ամենը, ինչ այժմ մի ընդհանուր հասկացողութիւն էր դարձել. քարոզում էր անվախ, մենակ, չը նայելով այն կատաղի թշնամութեան, որ կնքում էր նրան դաւաճան, ազգուրաց և այլ այսպիսի անուննեան, ազգուրաց և այլ այսպիսի անբնդհատ րով։ Այժմ, երբ տարի ու կէսի անբնդհատ ըլլուգանդան ազգի ընդհանրութեան համար իրէալ էր դարձել, սուրբ ճշմարտութիւն էր համարվում, Գրիգոր Արծրունին կարող էր համարձակ կերպով ասել որ ինկարու քը մարդարէ էր, ամենքից վաղ հասկացաւ թէ ինչ է լինելու և հայերը վերջ ի վերջոյ ինչ պէտք է անեն։

Ահա մի հրապարակախօսի կատարած դեռը, որի նման խոշոր բան մենք չենք գտնի մամուլի և գրականութեան ամբողջ պատմութեան մէջ…

Վերձ երկրորդ չափոր



«Ազգային գրադարան



NL0388425

մերջին ինսգ տարիների ընթացքում առանձին գրի-
տով լոյս են տեսել հեղինակի նկատեալ աշխատու-
թիւնները.

1. ՄԵԼԵՔԻ Ա.Դ.ԶԵԿԻ, պատմական վիպ.
1898 թ. (սպառված) — —
 2. ԳԱԼՈՎԱՏՈՆ, կենսագրութիւն. 1899 թ. — 80
 3. ՀՈՅԱԿՈՒՆ ՏՊՈ.ԳՐՈՒԹԻՒՆ, Առաջին
հատոր, 1901 (սպառված) — —
 4. ՀՈՅԱԿՈՒՆ ՏՊՈ.ԳՐՈՒԹԻՒՆ, Երկրորդ հա-
տոր, I մաս. 1902 1 50
 5. ՅՈՒ.ՍԼ.Փ ԿԱ.ԹՈՂ.ԼԻՈՍ Ա.Բ.ՌՈՒԹԻՒՆ,
կենսագրութիւն, 1902 60
 6. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱ.ԶՈ.ՐԵԱՆՑ, կենսագրու-
թիւն, երկու հատոր. 1902 1 50
 7. ԳՐԻԳՈՐ Ա.ԲԵՐԵԽԵՆԻ, կենսագրութիւն, Ա-
ռաջին հատոր. 1902. — —
-

զՈՒՏԱՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵ

ԳՐԻԳՈՐ ԱՐՃՐՈՒՆԻ

ԵՐՐՈՐԴ ՀԱՅՈՐ

Ամբողջ գործը բաղկացած է երեք հատորից:
Բաժանորդագինն է՝ առանց ճանապարհածախափ 3
րուբլի, ճանապարհածախափ 4 րուբլի. երեք կազ-
մերի մէջ՝ առանց ճանապարհածախափ 4 րուբլի,
ճանապարհածախափ 5 թ. 20 կոպէկ:

Դիմուլ Տիգրան, Պետական „ՄԻՇԱԿЪ“.

新一烟
52

69.143

89199.092143
2 - 38